Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝* ***http://www.armin.am***

*էլ. փոստ՝* ***info@armin.am***

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՏ. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԸ

Երրորդ հրատարակություն

ԴԱՍԱԳԻՐՔ
ԲՈՒՀԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1996

ԳՄԴ 63.2 (2Հ) գ 73
Մ—475

Խմբագիր՝ պատմ. գիտ. թեկնածու,
դոցենտ Գ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**Մելիք-Բախշյան Ստ. Տ.**

Մ 475 Հայոց պատմության աղբյուրագիտություն. Հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարի վերջը: Երրորդ հրատարակություն: Երևանի պետ. համալս.-Եր.: Երևանի համալս. հրատ., 1996, 336 էջ:

Գրքում ժամանակագրական կարգով ներկայացված են Հայաստանի պատմությանը վերաբերող և անմիջականորեն առնչվող հայկական ու օտար աղբյուրները, դրանց տեսակները, պատմագիտական արժեքավորումը, վերլուծությունը և այլն:

Նախատեսված է համալսարանի պատմության և բանասիրության ֆակուլտետների ուսանողների համար:

Մ 4702080000
704 (02)—96

ԳՄԴ 63.2 (2Հ) գ 73

ISBN 5—8084—0245—x

© Ստ. Տ. Մելիք-Բախշյան, 1996

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աղբյուրագիտությունը պատմական գիտության և գրականության պատմության օժանդակ առարկաներից մեկն է, որը մշակում, ուսումնասիրում է աղբյուրները և նրանց օգտագործման եղանակները:

Աղբյուրագիտության խնդիրն է տալ պատմական սկզբնաղբյուրների ծագումը, դասակարգումը, քննադատական վերլուծությունը, բացահայտել ուսումնասիրվող նյութի դասակարգային բնույթը, նրա արժանահավատությունն ու գիտական արժեքը: Գիտական աղբյուրագիտությունը ամեն մի սկզբնաղբյուր դիտում է որպես որոշակի ժամանակաշրջանի ու հասարակական որոշակի միջավայրի ծնունդ և, ըստ այդմ, արժեքավորում այն:

Սկզբնաղբյուրներն իրենց բնույթով և արժեքավորությամբ շատ բազմազան են և մտնում են գիտական ամենատարբեր առարկաների մեջ: Դրա համար էլ աղբյուրագիտությունը, որպես այդպիսին, լայնորեն օգտագործում է պատմական գիտության և գրականության պատմության մյուս օժանդակ առարկաների տվյալներն ու նյութերը: Այն, օրինակ, սերտորեն կապված է հնագրության (պալեոգրաֆիա), արձանագրագիտության (էպիգրաֆիկա), կնիքագիտության (սֆրագիստիկա), զինանշանագիտության (հերալդիկա), չափագիտության (մետրոլոգիա), տոմարագիտության (խրոնոլոգիա), դիվանագիտության (դիպլոմատիա, դիպլոմատիկա), ազգագրության (էթնոգրաֆիա), դրամագիտության (նումիզմատիկա), հնագիտության (արխեոլոգիա) և պատմական աշխարհագրության հետ: Այս առարկաները առանձին-առանձին ուսումնասիրում են հասարակատնտեսական բոլոր ֆորմացիաների նյութերը: Նոր և նորագույն ժամանակաշրջանների պատմության հարցերի մշակումը, սակայն, ասպարեզ է հանում իրենց տեսակով և որակով միանգամայն տարբեր աղբյուրներ: Հեղափոխական շարժումների պատմության ուսումնասիրության համար, օրինակ, մեծ նշանակություն

ունի հեղափոխական կազմակերպությունների, արհմիությունների, պետական իշխանության մարմինների (ժանդարմերիա, ոստիկանություն, պահնորդական բաժանմունքներ, բանտ, հետախուզություն, դատական, քննչական մարմիններ, բանակ և այլն) արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը: Այստեղ կարևոր տեղ են գրավում նաև հեղափոխական բովանդակություն ունեցող թռուցիկները, թերթիկները, կոչերը, գրքույկները, դրոշները, գաղտնի տպարանների սարքավորումները, զենքերը, առօրյա գործածության իրերն ու առարկաները և այլն: Իսկ վերջին շրջանի պատմության ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուր ծառայում են թերթերը, ամսագրերը, տպագիր գրականությունը, լուսանկարները, ձայնապնակները, մագնիտոֆոնային ժապավենները, տեսագրություններն ու փաստագրական կինոնկարները:

Աղբյուրները կարելի է բաժանել 5 հիմնական խմբի՝ նյութական, ազգագրական, լեզվական, բանավոր և գրավոր:

Նյութական աղբյուրների մեջ հիմնական տեղը գրավում են հնագիտական բնույթի նյութերն ու առարկաները, որոնց հանգամանալից ուսումնասիրությունը հետազոտողին երբեմն հնարավորություն է տալիս կատարելու գիտական շատ կարևոր ընդհանրացումներ ու եզրակացություններ: Հնագիտական նյութերը մեծապես լրացնում են նաև դասակարգային հասարակությունների ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ գրավոր աղբյուրների պակասը: Այսպես, օրինակ, միջնադարյան հայ հեղինակները շատ են խոսում հռչակավոր Անի քաղաքի մասին: Նրանց վկայություններից երևում է, որ Անին իր ժամանակին եղել է Մերձավոր Արևելքի խոշոր քաղաքներից մեկը, որ այնտեղ զարգացած են եղել մշակույթը, առևտուրն ու արհեստները: Սակայն Անիի մասին մեր գիտելիքներն անհամեմատ ավելանում են, երբ ծանոթանում ենք քաղաքի պեղումների արդյունքներին ու հնագիտական նյութերի հիման վրա արված եզրակացություններին: Նույնը կարելի է ասել նաև Դվինի և հնագիտական այլ վայրերի մասին: Պատմագիտության համար կարևոր նշանակություն ունեն նաև հին զենքերը, արդուզարդի առարկաները, արտադրության գործիքները, դրամները, անհատական գործածության իրերը, դամբարանները, հասարակական, անհատական ու կրոնական շինությունները և այլն: Դրանց միջոցով կարելի է, օրինակ, որոշել տվյալ ժամանակաշրջանի առևտրի ու արհեստագործության զարգացման աստիճանը, հասարակական շերտավորումն ու դասակարգային հարաբերությունները, հասարակության մտավոր ու մշակութային զարգացման աստիճանը և այլն:



Ազգագրական բնույթի նյութերը նույնպես կարևոր նշանակություն ունեն մարդկային հասարակության պատմության ուսումնասիրության համար: Ցուրաքանչյուր ժողովրդի ազգային սովորությունները պահպանվում են շատ երկար, և նրանց վերապրուկները երբեմն հասնում են մինչև մեր օրերը: Օրինակ, հայերի մոտ մինչև օրս էլ պահպանվում են հատուկ ակնածանքն ու համակրանքը ընտանիքի (գերդաստանի) ամենամեծահասակ կնոջ նկատմամբ, մանավանդ եթե մեծահասակ այրը վախճանված է լինում: Ընտանիքի մեծ մոր խորհուրդներն ու խրատները փոքրերի համար օրենքի ուժ ունեն: Սա, թերևս մայրիշխանության ժամանակաշրջանի վերապրուկ է: Դեռ անցյալ դարում Հայաստանում տեղ-տեղ պահպանվում էր հետևյալ սովորությունը. երաշտի ժամանակ գյուղի մեծահասակ կանայք լծվում էին արորին և վարում էին ցամաքած գետի հունը: Դրանով նրանք խորհրդանշում էին իրենց առաջին երկրագործ լինելը և փորձում էին շարժել երկնքի գութը: Անհիշելի ժամանակներից եկող տոտեմիզմի վերապրուկ պետք է համարել նաև Վասպուրականի Ս. Բարդուղիմեոս վանքում դեռ XIX դարում պահվող սրբազան եզների փաստը և այլն:

Իբրև պատմագիտական աղբյուր կարևոր նշանակություն ունեն նաև լեզվագիտական նյութերը: Մենք այսօր նաև լեզվագիտության տվյալներով ենք կարողանում բացատրել պատմական Հայաստանի աշխարհագրական անունների մի մասը: Օրինակ, Արարատ լեռան անունը, հավանաբար, առաջացել է հնագույն ժամանակներում նրա շրջակայքում ապրող ալարոդցեղի անունից, իսկ Երևանը՝ Արարատյան թագավորության (ուրարտական) Էրեբունի-ից և այլն:

Պատմական հնագույն դեպքերի և իրադարձությունների մասին մեզ տեղեկություն է տալիս սերնդե-սերունդ պատմվող բանավոր խոսքը՝ դյուցազներգության, հեքիաթների, առասպելների, գուսանական ու ժողովրդական երգերի, հանելուկների և այլ կարգի պատումների ձևով: Ժողովրդական բանավոր խոսքի մեջ թեև պատմական իրադրության իրական պատկերը, բնականաբար, աղավաղվում է, նրա մանրամասները կորչում,

անհետանում են, բայց խոսքը ընդհանրապես իր պատմական արժեքը չի կորցնում։ Հազար տարուց ավելի է, որ ժողովրդի բերանում տարբեր երանգներով պատմվող «Սասնա ծռեր»-ի պատմական արմատը չի փոխվում։ Այն արտահայտում է հայ ժողովրդի հերոսական պայքարը արաբ նվաճողների դեմ։ Կամ՝ որքան խորն են արտահայտում հայկական անտունիներն ու պանդխտության երգերը օտարների տիրապետության աղետալի ու կորստաբեր հետևանքները մեր երկրի համար։ Առասպելների, երգերի ու հանելուկների մեջ երբեմն շատ խորն ու իմաստալից են ընդգծվում հասարակական անարդարությունները, կրոնական ու ազգային խտրականությունը, սոցիալական անհավասարությունն ու դասակարգային պայքարը։

Սակայն նյութական, ազգագրական, լեզվագիտական և բանավոր սկզբնաղբյուրներից բացի, գոյություն ունեն նաև գրավոր սկզբնաղբյուրներ, որոնք հանդիսանում են պատմական հետազոտության հենքն ու հիմքը։ Գրավոր աղբյուրն այն ամենն է, ինչը մարդը կատարյալ թե անկատար նշաններով քանդակել է քարի, կավի, ոսկորի, փայտի, մետաղի կամ գրել պապիրուսի, մագաղաթի ու թղթի վրա, աշխատելով իր գիտելիքներն ու փորձը հաղորդել ինչպես իր ժամանակակիցներին, այնպես էլ հետագա սերունդներին։

Գրավոր աղբյուրների թվարկված տեսակներն ունեն իրենց առավելություններն ու թերությունները։ Այսպես, վիմագիր արձանագրությունների առավելությունն այն է, որ դրանք պահպանվում են անաղարտ ձևով, ուրիշների կողմից չեն կեղծվում, չեն աղավաղվում։ Սակայն այդ արձանագրությունների թերությունն այն է, որ մագաղաթյա կամ թղթե աղբյուրների համեմատությամբ համառոտ են ու ամփոփ, դրա համար էլ միայն այդ կարգի աղբյուրները բավական չեն պատմական իրադարձության կամ երևույթի բազմակողմանի ըմբռնման համար։ Մագաղաթյա կամ թղթե աղբյուրները, ընդարձակ ու բազմակողմանի տեղեկություններ հաղորդելու լայն հնարավորությունների հետ մեկտեղ, ունեն այն թերությունը, որ այդ կարգի աղբյուրներից իրենց բնագրերով քչերն են պահպանվել, դրանց մեծ մասը մեզ է հասել արտագրությունների և ընդօրինակությունների ձևով, իսկ ամեն մի արտագրող նյութի մեջ այս կամ այն չափով ներմուծել է իր իմացածը կամ այն ենթարկվել է իր ժամանակի ազդեցությանը։ Երբեմն



աղբյուրների մեջ ներմուծումներն ու միջամտություններն այնքան շատ են լինում, որ նրանք կորցնում են իրենց նախնական անաղարտ բովանդակությունը և դառնում նոր, իսկ ավելի որոշակի՝ աղավաղված աղբյուր։ Այս դեպքում մասնագետը պետք է կարողանա տարբերել աղբյուրի հարազատ ու ոչ հարազատ հատվածները և ըստ այդմ գնահատի այն իր ամբողջության մեջ։

***

Հաշվի առնելով, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների պատմության և բանասիրության ֆակուլտետներում օժանդակ մյուս առարկաների մի զգալի մասը (հնագիտություն, ազգագրություն, վիմագրություն, բանահյուսություն, հնագրություն, պատմական աշխարհագրություն, դրամագիտություն և այլն) դասավանդվում է առանձին-առանձին, ուսանողության համար ներկայացվող «Հայոց պատմության աղբյուրագիտություն» ներկա դասագիրքը, գոյություն ունեցող ծրագրի սահմաններում, ժամանակագրական կարգով ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև XVIII դարի վերջը եղած առավել արժեքավոր ու առարկայի հետ անմիջականորեն առնչվող հայ և օտար, հիմնականում պատմագիտական բնույթի, գրավոր աղբյուրները։ Դասագրքում գլխակարգությունը կատարված է ըստ առայժմ պահպանվող հասարակական-տնտեսական ֆորմացիաների։

«Հայոց պատմության աղբյուրագիտություն» դասագրքի ներկա հրատարակությունը նախորդների (1979 թ., 1989 թ.), վերամշակված տարբերակն է։ Մասնագիտական կարևոր դիտողությունները հաշվի առնելով՝ դասագրքում կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ և ուղղումներ։

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ-ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հայաստանի տարածքը համաշխարհային քաղաքակրթության սակավաթիվ կենտրոններից մեկն է, որտեղ հայտնաբերված հնէաբանական և հնագիտական նյութերը հասնում են մինչև երրորդական և մարդագոյացման արշալույսը՝ չորրորդական ժամանակաշրջանները։ Հայաստանում մարդկային ցեղի տարիքը մեկ միլիոնից ավելի է։ Այստեղ նույնպես նախնադարյան-համայնական հասարակության պատմությունը բաժանվում է քարի դարի, պղնձի-քարի դարի, բրոնզի դարի և երկաթի դարի ժամանակաշրջանների։ Քարի դարը իր հերթին բաժանվում է հին (պալեոլիթ), միջին (մեզոլիթ) և նոր (նեոլիթ) քարի դարի ժամանակաշրջանների։

Վաղնջական ժամանակներում՝ մերձարևադարձային ընդարձակ անտառները, մեղմ ու խոնավ կլիման ապրելու ամենանպաստավոր պայմաններ են ստեղծել Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների համար։ Մի քանի հարյուր հազար տարի տևած հին քարի դարի հարուստ նյութեր են հայտնաբերվել Հայաստանի Հանրապետության Արտենի լեռան շրջանում, Թալին քաղաքատիպ ավանի մոտ, Հրազդան գետի միջին հոսանքում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Ազոխ գյուղի մոտ՝ Ազոխի քարանձավում, Կարս, Մալաթիա քաղաքների շրջակայքում և այլուր։ Արտենի լեռան և հատկապես նրա Սատանի դար, Արեգունի և Հարավային բլուրների շրջանում հայտնաբերված քարե գործիքներն ու զենքերը ամենահներից են ամբողջ աշխարհում։ Այդ նյութերը պատկանում են հին քարի դարի ամենավաղ շրջանին՝ շելյան մշակույթին և ունեն ավելի քան 800.000 տարվա պատմություն։

Նեոլիթի կամ նոր քարի դարի ժամանակաշրջանում, որը տևել է մոտ 3000 տարի (9—8-րդ հազարամյակից մինչև 6-րդ հազարամյակ), մարդը աշխատանքային գործիքների ու զենքերի պատրաստման գործում կատարում է խոշոր առաջադիմություն։ Նախկին ծանր, խոշոր ու կոպիտ, պարզունակ զենքերի ու գործիքների փոխարեն այժմ հանդես են գալիս ավելի նպատակահարմար ու մասնագիտացված զենքեր ու գործիքներ, որոնցից շատ են հայտնաբերվել Հայկական լեռնաշխարհի ամենատարբեր մասերում (Թալին, Արարատյան դաշտ, Նոյեմբերյան, Նախիջևանի Քյուլթափա գյուղ և այլն)։ Հնագիտական այդ գտածոների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում կայծքարից, օբսիդիանից (սատանի եղունգ) և կրաքարից պատրաստված դանակները, կացինները, մուրճ-բրիչները, իլիկի գլուխները և այլ իրեր։ Նոր քարի դարի սկզբում Հայաստանում մարդը ստեղծում է նաև նետ ու աղեղը, որը զգալիորեն հեշտացնում է որսորդությամբ զբաղվելն ու մարդու պաշտպանությունը։ Այդ ժամանակաշրջանում վայրի կենդանիների ընտելացմամբ սկիզբ է դրվում նաև անասնապահությանը։ Հայաստանի նեոլիթյան քարայրներում ու քարանձավներում ընտանի կենդանիների՝ եզան, ոչխարի, այծի, խոզի, շան կմաղքների մնացորդներից բացի, գտնվել են նաև ոսկրից պատրաստված իլիկի գլուխներ, հերուններ, ասեղներ, որոնցից մշակվում էր կենդանիների բուրդն ու մազը։ Նեոլիթի վերջում, մեր թվականությունից մոտավորապես 6000 տարի առաջ, Հայկական լեռնաշխարհում մարդն սկսում է զբաղվել նաև երկրագործությամբ, որի ապացույցն են Արարատյան դաշտում, Վանա լճի ու Արածանի գետի ավազաններում հայտնաբերված ցորենի ու գարու մնացորդները, բազմաթիվ քարե ու ոսկրե բրիչները, մանգաղները, սանդերն ու աղորիքները։

Նախնադարյան-համայնական հասարակության պատմության ուսումնասիրության համար, վերևում նշված զենքերից ու այլ և այլ նյութերից պատրաստված գործիքներից բացի, որոշակի արժեք են ներկայացնում նաև մարդու կայանատեղերը, անմշակ ու խոշոր քարերից պատրաստված կացարանները, քարայրներն ու քարանձավները և նրանցում հայտնաբերված նյութերը։ Կավագործության ու խեցեգործության առաջացումով բարելավվում է ոչ միայն սննդամթերքի և հատկապես գյուղատնտեսական մթերքների ու որսամսի պահպանման գործը, այլև հնարավորություններ են ստեղծվում ուտելիքը տնտեսելու համար։

Քարի դարի շրջանում մարդիկ ապրում էին հոտերով, իսկ հետո՝ տոհմերով։ Վերջինիս գոյության հիմնական նախապայմանը արյունակցական կապն էր։ Այստեղ աշխատանքը և նյութական բարիքների բաշխումն ուներ միայն և միայն կոլեկտիվ բնույթ։ Նախնադարյան-համայնական հասարակության մեջ բացառվում էին մասնավոր սեփականությունը, շահագործումն ու դասակարգերի գոյությունը։ Տնտեսական կապերի զարգացման, ինչպես նաև պաշտպանվելու անհրաժեշտությունից ելնելով՝ արյունակից տոհմերը համախմբվելով կազմում էին ցեղեր ու ցեղային միություններ։ Այդ ժամանակ ստեղծվում են ցեղային լեզուները և շատերին հասկանալի ու մատչելի պաշտամունքն ու այլ ընդհանրություններ։ Մարդու միամիտ հասկացողությունները բնության ու նրա երևույթների նկատմամբ ծնում են նաև պաշտամունքի զգացողություն դրանց հանդեպ։ Քարի դարի մարդը իր գոյությունը հիմնականում բացատրում էր կենդանական տոտեմներով (ձի, արծիվ, ցուլ, արագիլ և այլն)։ Աշխարհայեցողության պարզունակության հետևանք էր նաև շար ու բարի ոգիների պաշտամունքը, երբ մարդը հավատում էր, որ մահվանից հետո հոգին տեղափոխվում է այլ աշխարհ, որտեղ հանգուցյալի գոյությունը դյուրացնելու նպատակով, նրա հետ թաղում էին զենքեր, զարդեր, գործիքներ, ուտելիք, ապա նաև կանանց, ծառաներին և ստրուկներին։ Դրա համար էլ պաշտամունքային և դամբարանային նյութերը նախնադարյան-համայնական հասարակության պատմության ուսումնասիրության համար ունեն շատ կարևոր արժեք ու նշանակություն։

Լեռնաշխարհի հարուստ ընդերքը և պղնձի, երկաթի ու անագի մեծ պաշարները պայմանավորել են մետաղի հնագույն մշակության զարգացումը Հայաստանում, որի սկիզբը դրվել է էնեոլիթի շրջանում (5—4-րդ հազարամյակ)։ Մետաղամշակության պատմության ուսումնասիրության համար բացառիկ արժեք են ներկայացնում Շենգավիթում, Կոտայքի, Արագածոտնի մարզերում, Ղարաբաղում, Նախիջևանում, Վանում, Կարինում և այլ վայրերում հայտնաբերված մեծ թվով պղնձե կացիններ, ուրագներ, դանակներ, մանգաղներ, կարթեր, գընդասեղներ, ապարանջաններ և այլն։ Այդ ժամանակաշրջանին վերաբերող փայլեցված սև ու կարմիր գույնի կավե իրերը, ինչոչ և տարբեր կենդանիների ու թռչունների արձանիկները



հաստատում են ոչ միայն Հայաստանի էնեոլիթի մարդու հմտությունը կավագործության մեջ, այլև նրա գեղագիտական զգացողությունն ու մտավոր պատկերացումները։

Պղնձից պատրաստված զենքերն ու գործիքները փափկության պատճառով շուտ էին շարքից դուրս գալիս։ Դրա համար էլ հետագայում պղնձի և անագի համաձուլվածքից ստացված նոր մետաղը՝ բրոնզն է սկսում կենսական մեծ դեր կատարել, որի հետևանքով էլ Հայկական լեռնաշխարհում 3-րդ հազարամյակում էնեոլիթին փոխարինելու է գալիս բրոնզի դարը, որը հարատևում է մինչև մ. թ. ա. 1-ին հազարամյակի սկիզբը։ Այդ ժամանակաշրջանում արդեն Հայաստանի տարածքը ավելի խիտ էր բնակեցված, որի լավագույն ապացույցը երկրի գրեթե բոլոր մասերում հայտնաբերված բրոնզեդարյան հարուստ հուշարձաններն են։ Պատմական և աղբյուրագիտական առումով ամենաբազմազան գործածության իրերի, գործիքների, զենքերի ու զարդերի հետ մեկտեղ, բացառիկ արժեք են ներկայացնում Մեծամորի և Զոդի մետաղների մշակման արհեստանոցները՝ ժամանակի մետաղաձուլական պահանջները բավարարող բոլոր հարմարություններով հանդերձ։

Բրոնզե գործիքները հեշտացնում էին մարդու աշխատանքը և բարձրացնում նրա արտադրողականությունը։ Զարգանում էր երկրագործությունը։ Հացահատիկի հետ մեկտեղ, մարդը սկսում է զբաղվել նաև խաղողի և պտուղ-բանջարեղենի մշակությամբ։ Երկրագործության ընդարձակմամբ առաջանում է նաև արհեստական ոռոգման անհրաժեշտությունը։ Արարատյան դաշտում, Արագածի, Գեղամա լեռների, Վանա լճի շրջանում կառուցվել են շատ ջրամբարներ, ջրանցքներ ու առուներ, որոնց անխափանության և ջրի առատության համար բրոնզեդարյան մարդիկ շատ տեղերում կանգնեցրել են վիթխարի քարակոթողներ՝ «վիշապներ»։

Մեր թվականությունից առաջ առաջին հազարամյակում երկաթը կիրառությունից դուրս է մղում բրոնզը, որով բրոնզի դարն իր տեղը զիջում է երկաթի դարին։ Հայաստանի տարբեր մասերում դամբարանների ու բնակավայրերի պեղումներից հայտնաբերված մեծ քանակությամբ երկաթե բահերը, կացինները, մանգաղները և առօրյա գործածության այլ իրերն ներկայացնում են երկաթի մշակման մեծ տարածվածությունը Հայկական լեռնաշխարհում։ Երկաթի մշակությունը

այստեղ ևս հասարակական մեծ հեղաշրջում է առաջացնում։ Երկաթի գործիքները մեծ չափով բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը։ Երկրագործական գործիքները (հատկապես երկաթե խոփով արորը) ավելացնում են ցանքատարածությունները, արագացնում նրանց մշակությունը և բարձրացնում բերքատվությունը։ Արտադրողական ուժերի զարգացումն արդեն բրոնզի և երկաթի դարերում սկսում է քայքայել նախնադարյան-համայնական հասարակությունը։ Անասունները, պարզ փոխանակությամբ ձեռք բերված իրերը, անձնական զենքերը, զարդերը, ապա նաև աշխատանքի գործիքները և նյութական բարիքները դառնում են մասնավոր սեփականություն։ Աշխատանքի արտադրողականության բարձրացման շնորհիվ հավելյալ կենսամթերքների ստացման հնարավորությունները մեծանում են՝ պայմաններ ստեղծելով ուրիշներին շահագործելու և ստրկացնելու համար։ Այսպես էլ Հայկական լեռնաշխարհի ցեղերի մեջ սկզբնավորվում են դասակարգային հարաբերությունները, առաջանում են շահագործողներ և շահագործվողներ։ Այդ ժամանակվա սոցիալական և դասակարգային անհավասարությունը ներկայացնող ամենալավագույն նյութերը հայտնաբերվել են Սևանա լճի ավազանում, Սյունիքում և Գուգարքում պեղված հնագույն դամբարաններում, որոնցից մեկում ապյլի վրա պառկած տոհմապետի դիակի ոտքերի տակ գտնվել են գլխատված մարդկանց գանգեր ու կմախքներ։ Դրան հակառակ, խիստ աղքատիկ ու սովորական պարունակություն ունեն շարքային մարդկանց գերեզմանները։

Տոհմատիրական կարգերից դասակարգային հասարակության անցման շրջանում, ցեղային միությունների տնտեսական ու էթնիկական ձուլումով կազմավորվում է ժողովուրդը, և շահագործվողներին ճնշելու, հպատակության մեջ պահելու համար ստեղծվում է նաև պետությունը։

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ՍՏՐԿԱՑԻՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

### 1. ԽԵԹԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Դասակարգային հասարակությունների և ցեղային միությունների առաջացումն ու ձևավորումը Հայկական լեռնաշխարհում տեղի է ունեցել մեր թվականությունից առաջ 2-րդ հազարամյակում կամ գուցե ավելի առաջ։ Նրանց մասին ամենահնագույն տեղեկությունները հաղորդում են քաղաքակրթության համեմատաբար ավելի բարձր մակարդակի վրա գտնված խեթերն ու խուռիները՝ իրենց լեզվով թողած սեպագիր և գաղափարագիր արձանագրություններում։ Դրանք, միտումնավոր լինելով հանդերձ, շատ կարևոր և ինչ-որ չափով նաև հավաստի տվյալներ են պարունակում Հայկական լեռնաշխարհի հատկապես հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան մասերի վերաբերյալ։ Այդ աղբյուրներից երևում է, որ հիշյալ ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի բնակչության հիմնական զբաղմունքները եղել են երկրագործությունն ու անասնապահությունը, որ ռազմաքաղաքական ու հոգևոր ավագանուց դուրս, հասարակության մեծամասնությունը կազմում էին ազատ համայնականներն ու ստրուկները։ Խեթական աղբյուրներից մենք իմանում ենք, որ XIX—XVII դարերում Հայկական լեռնաշխարհի հատկապես հարավային մասերում գերիշխանությունը հաջորդաբար անցել է Միտանիի թագավորությանը, Աշուրի պետությանը, Բաբելոնի Համմուրաբի թագավորին, կասսիտական ցեղերին և խուռիներին։

Մեր թվականությունից առաջ երկրորդ հազարամյակում Հայկական լեռնաշխարհում առաջատար դերը կատարում էր նրա արևմտյան տարածքներում բնակվող ցեղային միությունը, որին արևմուտքից նրանց հարևան խեթերը անվանում էին հայասներ, իսկ երկիրը՝ Հայասա-Ազզի։ Այստեղ հիշատակված

բավական թվով տեղանունների՝ Կումմախա (այժմ՝ Կամախ), Աննիակա (հետագայի Դարանաղի գավառի Անի քաղաք-ամրոցը), Բիթառիգա (այժմ՝ Բիթառիճ) ուսումնասիրությունների շնորհիվ հնարավոր է լինում խեթերի անվանած «Բարձր երկիրը» (այսինքն՝ Հայասա-Ազզին) տեղադրել հին հայկական Բարձր Հայք աշխարհի և Փոքր Հայքի տարածքներում, որտեղ մշտապես տեղի էին ունենում խեթա-հայասական ընդհարումներ, երկու կողմերի թագավորների միջև կնքվում էին հաշտության պայմանագրեր (խեթական թագավոր Սուպպիլուլիումասի և հայասա թագավոր Խուկաննասի միջև), կատարվում էին գերիների փոխանակություն, հաստատվում ամուսնական ու բարեկամական կապեր, վճարվում ռազմատուգանքներ և այլն։ Խեթական աղբյուրների տված այս կարգի տեղեկություններից կարելի է հանգել այն եզրակացության, որ Հայկական այս պետությունը նշված ժամանակաշրջանում այնքան ամուր միավորում էր, որ կարողանում էր դիմագրավել բավական հզոր խեթական թագավորությանը։

Խեթական աղբյուրների հնագույն տեղեկություններից մեկը Մուրսիլիս II-ի (1340—1320) թողած արձանագրության հաղորդումն է իր պապի՝ Թուդխալիաս III-ի (1400—1380) դեպի Հայաստան կատարած արշավանքի մասին։ «Թուդխալիասը,—ասում է նա,—իմ պապը, Հայասա երկրի հետիոտն զինվորներին և կառամարտիկներին հաղթեց»[1]։ Մի այլ տեղ շարունակում է. «Թշնամին՝ Հայասա երկրի հետիոտն զինվորները և կառամարտիկները, «Բարձր երկրի»[2] կողմից Իստիտինա քաղաքը[3] ավերել էր, իսկ Կաննուվարա քաղաքը[4] շրջապատել»[5]։

Մ. թ. ա. 2-րդ հազարամյակի կեսերին սկսված ցեղերի մեծ տեղաշարժի ժամանակ հիմնականում Բալկանյան թերակղզուց Փոքր Ասիա թափանցած Թրակա-փռյուգացիները (որոնց եգիպտական աղբյուրներում անվանում են «ծովի ժողովուրդներ») կարողացան գրավել ու հաստատվել Փոքր Ասիայի մի շարք շրջաններում։

[1] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 7 (թարգմանությունը խեթերեն բնագրից՝ Վ. Ն. Խաչատրյանի)։

[2] Երկրամաս, որը հավանաբար տարածվում էր Երզնկայի շրջանում։

[3] Քաղաք կամ երկիր, հավանաբար Երզնկա քաղաքից հարավ։

[4] Քաղաք Երզնկայի մոտակայքում։

[5] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 9—10։



Մ. թ. ա. XII դարում փռյուգական ցեղերի երկրորդ ներխուժման ժամանակ ասպարեզից դուրս եկավ խեթական պետությունը։ Փռյուգական այս նոր ցեղերը, Ալիս գետի հովտում և Անտիտավրոսի շրջանում միանալով վաղնջական ժամանակներից այստեղ բնակվող տեղաբնիկ հնդեվրոպացի արիմներին և անցնելով Եփրատը, ներխուժում են Արևմտյան Տիգրիսի հովիտը։ Արիմ ցեղանունը ժամանակի ընթացքում ստանում է արմեն (ἄρμενιοι) ձևը։ IX դարում Վանի թագավորները, գրավելով արմեններով բնակեցված երկրամասերը, իրենց արձանագրություններում ավելի հաճախ օգտագործում են արմեն անվանումը, որին խուռի-ուրարտական ini կամ մեդական ina վերջավորության հավելումով, առաջանում է նաև Արմենի-Արմինի-Արմինա անունը։ Արմինայից էլ առաջացել է Արմենիա երկրանունը և արմեն ժողովրդի անունը, որով օտարները անվանում են Հայաստանն ու հայերին։

## 2. ԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հայկական լեռնաշխարհի հնագույն երկրների ու ցեղերի մասին շատ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև ասորեստանյան գրավոր աղբյուրները։ Սալմանասար I-ը (1274—1245) մի արձանագրության մեջ պատմում է հյուսիսում իր կողմից ութ երկրների հպատակեցման մասին, որոնք կրում էին Ուրուատրի ընդհանրական անունը։ Այդ երկրները տարածվում էին Վանա լճի հարավ-արևելյան և Մեծ Զաբ գետի վերին հոսանքի շրջաններում։ Սալմանասար թագավորի արձանագրությունը պատմագիտությանը հայտնի ամենահին գրավոր աղբյուրն է, որտեղ առաջին անգամ հիշատակվում է Ուրարտու (Ուրուատրի) անունը։ Այստեղից մենք իմանում ենք, որ մ. թ. ա. XIII դարում Ուրարտուն դեռևս մեկ միասնական պետական միավոր չէր, այլ՝ ներքին տնտեսական ու քաղաքական թույլ կապերով առանձին ցեղային միությունների միավորում, որը, եթե հավատանք պարծենկոտ տիրակալին, ինքը կարողացել էր նվաճել «երեք օրում»։ Սալմանասարի արձանագրության մեջ կարդում ենք. «Երբ Աշշուրը՝ տերս, որպեսզի նրան երկրպագեն, Սևագլուխներին (ասորեստանցիներին—Ս. Մ.-Բ.) ղեկավարելու համար օրինավոր կերպով ընտրեց ինձ և տվեց գայիսոն, զենք և գավազան, պարգևեց ինձ տիրապետության

օրինակն թագը, այն ժամանակ՝ իմ գահակալության տարին, ուրուատրիներն ըմբոստացան իմ դեմ։ Ձեռք կարկառեցի Աշշուրին և մեծ աստվածներին՝ իմ տերերին։ Իմ զորքի հավաքը կազմակերպեցի (և) նրանց ամուր լեռնաշղթաները ես բարձրացա։ Խիմմե, Ուատկուն, Մաշգուն, Սալուլա, Խալիլա, Լուխա, Նիլիպախրի և Զինգուն՝ նրանց ուռ երկրներին և նրանց աշխարհազորներին ես հաղթեցի։ Նրանց 51 քաղաքները քանդեցի, այրեցի. նրանց ռազմավարը, նրանց ունեցվածքը հափշտակեցի. բոլոր ուրուատրիներին երեք օրում խոնարհեցրի իմ տիրոջ՝ Աշշուրի ոտքերի (առաջ)»[6]։

Մի փոքր ուշ, Սալմանասար I-ի որդու՝ Թուկուլթի-Նինուրտա I-ի (1244—1208) Աշշուրում թողած մեկ այլ սեպագիր արձանագրության մեջ Վանա լճի ավազանում, Տիգրիսի և Եփրատի վերին հոսանքների շրջանում բնակվող ցեղային միությունների հավաքական անունը հիշատակվում է «Նաիրի երկիր» ձևով, որի մեջ արդեն նախկին «ուռ երկրների» փոխարեն մատնանշվում են քառասուներեքը՝ իրենց, այսպես ասած, «թագավորներով» հանդերձ։ Այնուհետև ասորեստանյան սեպագրերը պատմում են դեպի Նաիրի իրենց թագավորների արշավանքների մանրամասները, խոսում նրանց կատարած կողոպուտների, ավերածությունների, գերեվարությունների ու կոտորածների մասին և այլն։ Որպես կանոն ասորեստանյան բոլոր աղբյուրները տառապում են միակողմանիությամբ, միտումնավորությամբ և ունեն միանման, միապաղաղ ու վերամբարձ ոճ։ Ըստ այդ արձանագրությունների՝ հաղթողները մշտապես ասորեստանցիներն են, իսկ պարտվողները՝ ուրարտացիներն ու նաիրցիները։ Դրա համար էլ հիշյալ աղբյուրները պետք է օգտագործել զգույշ և քննադատական մոտեցմամբ։

Որպես օրինակ ծանոթանանք Սալմանասար III-ի (858—824) «Բալավաթյան դարպասի» բրոնզե թիթեղների վրա թողած արձանագրությանը, որտեղ նա պատմում է ուրարտացի Արամի դեմ ձեռնարկած իր արշավանքի մասին. «Ուրարտացի Արամուն վախեցավ իմ հզոր զենքի դառնությունից և ուժեղ ճակատամարտից, լքեց իր քաղաքը...։ Նա բարձրացավ Ադդուրու լեռները. նրա ետևից բարձրացա և ես, լեռներում ես ուժեղ

[6] Նույն տեղում, հ. 1, էջ 14 (թարգմանությունը ասորեստանյան բնագրից կատարել է Հ. Մ. Ավետիսյանը)։



ճակատամարտ տվեցի, 3400 ռազմիկների ես իմ զենքով կոտորեցի, ինչպես Ադադը, հեղեղ տեղացի նրանց գլխին, լեռը կարմիր բրդի նման ներկեցի արյունով, գրավեցի նրա ճամբարը, նրա մարտակառքերը, հեծյալները, նիզակները, շորիները, ունեցվածքը և հարուստ ավար բերեցի ես լեռներից։ Արամուն փրկելով իր կյանքը, փախավ անմատչելի լեռան վրա. իմ հզոր ուժով, ինչպես վայրի ցուլ, ճզմեցի ես նրա երկիրը, բնակավայրերը ավերակների վերածեցի և հրկիզեցի»։

Աշշուրի ավերակներում հայտնաբերված արձանագրության մեջ, Սալմանասարը նույն պարծենկոտությամբ ասում է՝ «Դայաենի երկրի թագավոր Ասիան իմ ոտքերը գրկեց, հարկն ու տուրքը, (ինչպես և) ձիերը վերցրի, իմ թագավորական կոթողը կառուցեցի, նրա քաղաքի մեջտեղը կանգնեցրի։ Եփրատի ակունքից իմ վերադառնալու ժամանակ, դեպի Սուխնե երկիրը գնացի, (նրա) հինգ ամուր քաղաքները, նրանց շրջակայքի քաղաքների հետ նվաճեցի, կոտորած կազմակերպեցի, նրանց ռազմավարը հափշտակեցի։ Սուխնեից ես մեկնեցի, Էնզի երկրին մոտեցա, (նրա) երկու ամուր քաղաքները, նրանց շրջակայքի քաղաքների հետ միասին, նվաճեցի, նրանց կոտորածը կազմակերպեցի, նրանց ռազմավարը հափշտակեցի։ Էնզիից ես մեկնեցի, Եփրատին՝ Մելիդու երկրի դիմացը, ես մոտեցա (և) Լալլիի՝ Մելիդու երկրի (թագավորի) տուրքը՝ արծաթ, ոսկի, կապար և բրոնզ ես ստացա, իմ թագավորական կոթողը կառուցեցի Եփրատի ափին, կանգնեցրի»[7]։

XI—IX դարերի ասորեստանյան արձանագրություններում հյուսիսում ընկած հայկական երկրամասերին, առանց որոշակի սահմանազատման, տրվում են մերթ Ուրուատրի-Ուրարտու, մերթ Նաիրի անունները։

## 3. ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ (ՈՒՐԱՐՏԱԿԱՆ) ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Առանձին ցեղերի ու ցեղային միությունների ռազմաքաղաքական, տնտեսական և էթնիկական մերձեցման շնորհիվ մ. թ. ա. IX դարում ստեղծվում է Հայկական լեռնաշխարհի առաջին շատ թե քիչ կայուն, կենտրոնացված և հզոր Հայկական պետությունը՝ Արարատյան թագավորությունը, որը գրա-

[7] Նույնը, հ. 1, էջ 23—24։

ֆանության մեջ ասորեստանցիների անվանմամբ կոչվում է Ուրարտու։ Այդ նույն ժամանակներում, հայերը, ասորեստանյան սեպագրերի նմանությամբ, ստեղծում են նաև իրենց սեփական գրերը, որոնցով մեզ հասած արձանագրությունների թիվն այժմ 600-ից ավելի է։ Այդ արձանագրություններում նրանք իրենց երկիրն անվանում են Բիայնիլի, իսկ իրենց՝ բիայնացիներ։ Ընդհանուր առմամբ բնույթով և բովանդակությամբ հիշյալ սեպագրերը շատ նման են ասորեստանյանին։ Այստեղ նույնպես վերամբարձ ու փքուն ոճով նկարագրվում են թագավորների ռազմական արշավանքները, բերվում թվական տվյալներ կռիվներին մասնակցած հեծելազորի, հետևակի և ռազմակառքերի, վերցված գերիների, ավարի, կողոպուտի, կոտորածների և այլնի մասին։ Սակայն ռազմական արշավանքները նկարագրելուց բացի, սեպագիր արձանագրությունների մի որոշ մասն էլ ունի տնտեսական բովանդակություն։ Այս կարգի արձանագրություններում խոսվում են հայկական տիրակալների շինարարական աշխատանքների (քաղաքներ, բերդեր, ջրանցքներ), գյուղատնտեսական մթերքների ամբարման մասին և այլն։ Վանի թագավորության գրավոր աղբյուրների գոյությունը մեծ բարեբախտություն է գիտության և հատկապես Հայաստանի վաղ շրջանի պատմության ուսումնասիրության համար, որովհետև պատմական շատ հարցեր ու խնդիրներ հնարավոր է լինում պարզաբանել միայն Վանի կամ Արարատյան թագավորության աղբյուրների միջոցով։ Այդ աղբյուրներից մենք իմանում ենք, որ այն ժամանակ Արարատյան թագավորությունում բավական զարգացած են եղել մետաղամշակությունը, ռազմական ու շինարարական արվեստը, երկրագործությունը, այգեգործությունը, անասնապահությունը։ Այդ բանում համոզվելու համար ծանոթանանք Արգիշտի I-ի որդու՝ Սարդուր II-ի (760—730) Վանի քարաժայռի վրա թողած արձանագրության մի հատվածին. «Խալդյան մեծությամբ Սարդուրեն ասում է.—(ահա) ինչ տղամարդություն այնտեղ կատարեցի։ Վեց հազար չորս հարյուր երեսունվեց պատանի այնտեղից հանեցի, տասնհինգ հազար հինգ հարյուր հիսուներեք կին քշեցի։ Ընդամենը՝ քսանմեկ հազար ինն հարյուր ութսունինը մարդ (մեկ) տարում (քշեցի)։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Հազար վեց հարյուր տասներեք ձի (քշեցի), հարյուր տասնհինգ ուղտ (քշեցի), տասնվեց հազար հինգ հարյուր քսանինն անասուն քշեցի, երեսունյոթ հազար վեց հարյուր ութսունհինգ ոչխար քշեցի։ Սարդուրեն ասում է.—Խալդի փոխարեն (?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի»[8]։

Դեպի Ուրմիա լճի ավազանը ձեռնարկած միայն մեկ արշավանքի ժամանակ Մենուայի (810—786) 106 ռազմակառքերի, 9174 հեծյալ և 2704 հետևակ զինվորների հիշատակությունը վկայում է ռազմական արվեստի բարձր մակարդակի և հայկական բանակում հեծելազորային ուժերի նախապատվության փաստի մասին։

Արարատյան թագավորների շինարարական աշխատանքների մասին թողած արձանագրություններից բացառիկ արժեք ունի Արգիշտի I-ի (786—764) 782 թվականին վերաբերող արձանագրությունը Էրեբունի քաղաք-ամրոցի հիմնադրման մասին։ Արարատյան թագավորներն այդ կարգի ուրիշ արձանագրություններ էլ են թողել, սակայն Էրեբունիի հիմնադրմանը վերաբերողը շատ կարևոր մի վավերագիր է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի տարիքը ճշգրիտ թվագրելու համար։ Արգիշտին ահա թե ինչպես է ազդարարում Էրեբունիի հիմնադրումը. «Խալդյան մեծությամբ Արգիշթե Մինուայորդին[9] այս ամրոցը հոյակապ կառուցեց։ Հաստատեցի Երեբունե անունը՝ Բիաինիլե (երկրի) զորությունը լուլուական (=բարբարոսական) ցեղերի մեջ ամրապնդելու (համար)։ Արգիշթեն ասում է.—Հողը չոր (?) էր։ Կատարեցի մեծագործություններ հզոր այնտեղ»[10]։ Պակաս հետաքրքրություն չի ներկայացնում նաև Արմավիր քաղաքի «ծննդյանը» վերաբերող արձանագրությունը, որը նույնպես թողնվել է Արգիշտի I-ի կողմից մ. թ. ա. 776 թվականին։ Ահա այդ արձանագրությունը. «Խալդյան մեծությամբ Արգիշթե Մինուա որդին ասում է.—Ամրոց հոյակապ կառուցեցի, հաստատեցի Արգիշթեխինելե անունը։ Հողը չոր (?) էր, ոչ (մի) բան այնտեղ կառուցված (չէր)։ Գետից չորս ջրանցք անցկացրի, խաղողուտ (և) անտառ հիմնեցի, կատարեցի մեծագործություններ այնտեղ»[11]։

---

[8] Նույնը, հ. 1, էջ 78 (թարգմանությունը՝ պատմաբան Հ. Հ. Կարագյոզյանի)։

[9] Մինուա=Մենուա։

[10] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 55—56։

[11] Նույնը, էջ 56—57։

Արարատյան թագավորության արձանագրությունների մեջ կան նաև այնպիսիները, որոնք լույս են սփռում հայերի առօրյա զբաղմունքի, սովորությունների և նույնիսկ մարզական խաղերի վրա։ Այս տեսակետից շատ հետաքրքիր է Մենուայի Արծիբե, որն ամենայն հավանականությամբ հայերեն Արծվին է, անունով նժույգի թռիչքը։ «Խալդյան զորությամբ,—ասված է այնտեղ,—Մինուա Իշպուինորդին ասում է.—Հենց այս տեղից նժույգը՝ Արծիբե անուն(ով), Մինուայի տակ ցատկեց քսաներկու կանգուն»[12]։ Մարզական նետաձգության ժամանակ բացառիկ ռեկորդի է հասել Ռուսա I-ի (730—714) որդին՝ Արգիշտի II-ը (713—685)։ Վանում հայտնաբերված արձանագրության մեջ այդ հետաքրքիր իրադարձության մասին ասվում է այսպես. «Արգիշթե Ռուսայորդին նետը վերագցեց հենց այս տեղից՝ Գիլուրա (գյուղի) (?) անտառի առջև(ից), մինչև Իշպիլե Բատուորդու այգին՝ ինը հարյուր հիսուն կանգուն (այսինքն՝ 492 մետր,—Ս. Մ.-Բ.)»[13]։

Արարատյան թագավորության արձանագրությունների հայտնաբերման վայրերով և այնտեղ հիշատակվող բազմաթիվ տեղանունների պատմալեզվական քննությամբ հնարավոր է լինում որոշել Արարատյան թագավորության ընդգրկած մահմանները, բացատրել որոշ տեղանունների ծագումնաբանական արմատները և այլն։

Արարատյան թագավորության գրավոր աղբյուրների պակասը զգալի չափով լրացնում են նաև նյութական մշակույթի այն հարուստ մնացորդները, որոնք հայտնաբերվել են Արարատյան թագավորության քաղաքների ու բերդերի պեղումների ժամանակ։

Ներքին կենտրոնախույս ուժերի աշխուժացման և դրսից կիմմերների, սկյութների ու մարերի հարվածների տակ մ. թ. ա.

---

[12] Նույնը, էջ 52։ Թարգմանիչը ծանոթագրում է. «Կանգուն»—երկարության չափ, որը հավասար է 51,8 սմ։ Այս հաշվով Մինուայի նժույգը ցատկել է 11 մ. 39 սմ։ Պետք է նկատի ունենալ, որ նման մարզային ձևում նժույգի ցատկի ԽՍՀՄ-ի ռեկորդը՝ սահմանված 1947 թ.՝ 8 մ 20 սմ էր, իսկ համաշխարհային ռեկորդը՝ սահմանված մինչև 1914 թ.՝ 11 մ 28 սմ. այն պատկանում էր հունգարացի Զանգլերին։ Արծիբե նժույգի ցատկը մնացել է չգերազանցված, ընդհուպ մինչև 1975 թ. (այսինքն՝ 2800 տարի), երբ գերմանացի Կ. Բերգմանը իր Սվինգեր նժույգով ցատկեց 12 մ 16 սմ։

[13] Նույնը էջ 87։



590—80-ական թվականներին Արարատյան թագավորությունը պատմական ասպարեզից դուրս եկավ։ Այժմ գտնում են, որ եթե որոշ շրջաններ, ինչպես ասենք, Արարատյան հովտի կենտրոնում ընկած Ազա երկիրը Թեյշեբաինի կենտրոնով մինչև վերջ էլ մնում է Արարատյան թագավորության կազմում, ապա ծայրամասային երկրամասերը, հայկական ցեղերի ազդեցությունը հաջողությամբ տարածում էին ողջ Հայկական լեռնաշխարհում։

Արարատյան թագավորության արձանագրությունների ուսումնասիրման և հրատարակման գործում մեծ են Գ. Ա. Մելիքիշվիլու («Урартские клинообразные надписи», М., 1960, նույնի՝ «Урартские клинообразные надписи», II, տե՛ս «Вестник древней истории», 1971—№ 3, 4), Ի. Մ. Դյակոնովի («Урартские письма и документы», М.-Л., 1963), Ն. Վ. Հարությունյանի («Новые урартские надписи Кармир-Блура», Ер., 1966) և այլոց ջանքերը։

## 4. ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՎՐԱՑԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

Հին ժողովուրդներից շատերի նման հայերը ևս նախքան սեփական գիր ու գրականություն ստեղծելը ունեցել են հարուստ բանավոր գրականություն։ Առասպելների, գուսանական երգերի, ավանդությունների, վեպերի, դյուցազներգությունների՝ ընդհանրապես ժողովրդական բանավոր ստեղծագործությունների մեջ նրանք սերնդե-սերունդ փոխանցել են իրենց կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների պատմությունը։ Ժողովրդական այդ ստեղծագործությունները, վիպական ու առասպելական լինելով հանդերձ, ունեն նաև իրականությանը մոտ պատմական ակունքներ և, գրականից բացի, նաև պատմագիտական խոշոր արժեք։ Դրա համար էլ դրանք իրենց վրա են բևեռել ուսումնասիրողների հետաքրքրությունը։

Ժողովրդական ավանդություններն ու առասպելները բարձր գնահատողներից մեկը եղել է նաև Պատմահայր Մովսես Խորենացին, որը ոչ միայն գրի է առել, այլև մշակել ու գեղար-

վեստական կատարելության է հասցրել դրանցից մի քանիսը։ Խորենացու միջոցով մեզ հասած առասպելներից մեկն էլ «Հայկի ու Բելի» առասպելն է, որտեղ պատմվում է հայ ժողովրդի ծագման և Հայաստան անվան առաջացման մասին։ Աստվածներից ծնված հսկաների ցեղը, ասվում է այնտեղ, ատծուն հասնելու համար Բաբելոնում սկսում է մի բարձր աշտարակ կառուցել։ Աստված, զայրացած մարդկանց հանդգնությունից, ահեղ մի հողմով կործանում է անավարտ շինությունը և խառնում կառուցողների լեզուն, որպեսզի նրանք իրար չըհասկանան և գործը տապալվի։ Հետո Բաբելոնում իր իշխանությունն է հաստատում բռնակալ Բելը, որին չի հնազանդվում միայն Հայկը։ Նա իր ամբողջ տոհմով հեռանում է Բաբելոնից ու գնալով հյուսիս հաստատվում է Արարադի երկրում, մի դաշտում, որը կոչվում է Հարք։ Բելը զայրացած, Հայկին ուժով հպատակեցնելու համար արշավանքի է դուրս գալիս, սակայն մենամարտի ժամանակ սպանվում է քաջակորով Հայկի արձակած նետից, իսկ նրա զորքերը փախչում են իրենց երկիրը։ Ի նշանավորումն այդ հաղթանակի, ճակատամարտի վայրում Հայկը կառուցում է դաստակերտ և այն անվանում է Հայք, որից էլ, եզրակացնում է Խորենացին՝ «...աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք»։ Խորենացին Հայաստանի մի քանի տեղանունների ծագումը նույնպես կապում է Հայկի ժառանգների անունների հետ՝ Արամայիս—Արմավիր, Երասխ—Երասխ, Շարա—Շիրակ, Գառնիկ—Գառնի, իսկ Հայկի ծոռներից Արամի անունով օտարները հայերին կոչում են արմեն, իսկ երկիրը՝ Արմենիա։ Թեև այս առասպելի առանձին հատվածներ նախահայկական ծագում ունեն, առասպելն ինքն ամբողջությամբ ստեղծվել է հայ ժողովրդի կազմավորման ժամանակներում։ Մասնագետները ցույց են տվել, որ «Հայկի ու Բելի» առասպելի հերոսները իրական, պատմական անձնավորություններ չեն, այլ հայ ժողովրդի կազմավորմանը մասնակցած առանձին ցեղերի անհատականացված ու խտացված կերպարներ։

«Հայկի ու Բելի» առասպելը, որոշ փոփոխություններով, իր Պատմության մեջ է տեղավորել նաև Անանունը (VII դար), իսկ IX—X դարերում հայ և վրաց ժողովուրդների ռազմա-քաղաքական մերձեցման ժամանակ, թափանցելով վրացական



բանահյուսության մեջ, դարձել է առասպելի վրացական տարբերակի հիմքը։

Առասպելի վրացական տարբերակում ասվում է, որ հայերի, վրացիների, աղվանների, եգերացիների և կովկասյան մի քանի ժողովուրդների նախահայրը եղել է Թորգոմը, որը Բաբելոնի աշտարակաշինության ձախողումից հետո բնակություն է հաստատում Հայկական լեռնաշխարհում։ Թորգոմը աստիճանաբար իր տիրապետության սահմանները հասցնում է Պոնտական ծովից մինչև Կասպից ծով ու Կովկասյան լեռները։ Թորգոմն ուներ ութ որդի՝ Հաոս (Հայկ), Քարթլոս, Մովական, Էգրոս, Կովկաս և այլն։ Սրանց մեջ ամենաքաջը ավագ որդին՝ Հայկն էր, «որի նմանը ոչ ջրհեղեղից առաջ կար և ոչ էլ հետո»։ Թորգոմը մահից առաջ իր տիրապետությունը բաժանում է երկու մասի՝ կեսը տալիս է Հայկին, իսկ երկրորդ կեսը՝ մյուս յոթ որդիներին։ Թորգոմի որդիներն ապրում էին հաշտ ու համերաշխ, բայց անկախ ու ինքնուրույն չէին, այլ ենթարկվում էին բռնակալ Նեբրովթին։ Ազատության և անկախության ձգտումը թելադրում էր նրանց թոթափել օտարի լուծը։ Եվ ահա մի օր էլ Հայկը դիմում է իր եղբայրներին այսպիսի խոսքերով. «...լուարուք ինձ, հարազատք իմ, ահաւասիկ ետ մեզ Աստուած զօրութիւն և ժողովուրդ բազում. և արդ՝ վասն ողորմութեանն որ ի վերայ մեր՝ մի՛ ծառայեսցուք օտարի, այլ Աստուծոյ ճշմարտի»։

Դժվար չէ նկատել, որ վրացական առասպելը ձևավորվել է հայ և վրաց ժողովուրդների ռազմաքաղաքական համագործակցության երկարամյա պատմության ընթացքում, համագործակցություն, որն է՛լ ավելի ամրապնդվեց XI—XIII դարերում։ Երկու ժողովուրդների համատեղ պայքարը օտարերկրյա նվաճողների դեմ այն ժամանակաշրջանում այնքան շոշափելի ու դրական արդյունք ունեցավ, որ նրանց անկեղծ համագործակցությունը առիթ էր տալիս ժամանակակիցներին մտածելու, որ միայն հարազատ եղբայրների ժառանգները կարող են այդքան մոտ լինել միմյանց։ Կասկածից վեր է, որ առասպելն իր գաղափարականությամբ բարձր ու վեհ է հնչում նաև այսօր և ունի դաստիարակչական ու քաղաքական շատ կարևոր նշանակություն։

Մարդկության մշակութային խոշոր ստեղծագործություններից մեկը Աստվածաշունչն է, որը գրվել է տարբեր հեղինակ-

ների կողմից մ. թ. ա. XIII մինչև մ. թ. II դարն ընկած ժամանակամիջոցում։ Այն բաղկացած է Հին Կտակարանից՝ 39 գիրք և Նոր Կտակարանից՝ 27 գիրք։ Աստվածաշունչը, թեև հիմնականում արտացոլում է հրեական ու քրիստոնեական կրոնների էությունը, սակայն արժեքավոր աղբյուր է նաև հրեաների և արևելքի շատ ժողովուրդների պատմության, բանահյուսության, կենցաղային սովորությունների, վեպ ու վիպասանության, առասպելաբանության, իրավունքի, բարոյական նորմերի և բազմաթիվ այլ խնդիրների ուսումնասիրության համար։ Դրա համար էլ Աստվածաշունչը տարբեր ժամանակներում թարգմանվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով և իր վրա բևեռել ամենատարբեր բնագավառների մասնագետների ուշադրությունը։ Աստվածաշնչի հնագույն թարգմանություններից մեկն էլ հայերեն թարգմանությունն է, որը կատարել են Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը V դարի առաջին տասնամյակներում։ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը թարգմանական արվեստի գլուխգործոցներից է, դրա համար էլ այն համարվում է «թարգմանությունների թագուհին»[14]։ Աստվածաշնչի Հայաստանի հետ առնչվող հատվածները վերաբերում են մ. թ. ա. VIII դարի վերջերից մինչև VI դարի սկզբներն ընկած ժամանակներին։ Ուշադրության արժանի են հատկապես Երեմիայի մարգարեության մեջ պահպանված հատվածները, որոնք վերաբերում են հին հայկական պետական միավորումներին ու նրանց ունեցած դերին արևելքում ծավալված քաղաքական իրադարձությունների մեջ։ Այդտեղ, Երեմիայի մարգարեության 51-րդ գլխում բռնակալական Բաբելոնի կործանման համար օգնության կոչ է արվում նաև «Այրարատյան թագավորություններին և Ասքանազյան գնդին»։

Հակաբաբելոնյան շարժումը Պաղեստինում VI դարում (մ. թ. ա.) ծագել էր Ասորեստանի թագավոր Նաբուգոդոնոսոր II-ի (605—562 թթ., մ. թ. ա.) Պաղեստինից հրեական բնակչության զանգվածային բռնագաղթեցման հետևանքով։ Եվ ահա, Բաբելոնի դեմ ծավալվող շարժումը բորբոքողները Նսայի, Եզեկիել մարգարեներն էին, որոնցից Երեմիան իր կոչով ցանկանում էր Բաբելոնի դեմ ոտքի հանել նաև Արարատյան թագավորությանը։

Աստվածաշնչի հունարենից կատարված թարգմանության Երեմիայի գրքի համապատասխան բաժնում ասվում է այսպես. «Առէք նշան ի վերայ երկրիդ, փող հարէք ընդ ազգս ամենայն, հրաւիրեցէք ի վերայ դորա զունդս։ Պատուէր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն և Ասքանազեան գնդին. կանգնեցէք զնովաւ նետակալս...»[15]։ Եբրայական բնագրից թարգմանված է այսպես. «Կոչեցէք ի վերայ նորա զթագաւորութիւնս Արարատայ, Միննայ եւ Ասքենազայ», իսկ ասորականում՝ «Կոչեցէք ի վերայ նորա զթագաւորութիւնս Արարատայ և Արմինայ և Ասքենազայ»։ Ուսումնասիրողները (Ֆ. Դելիչ, Հ. Մանանդյան) գտնում են, որ «Ասքանազյան» կամ «Ասքենազյան» անվանումը վերաբերում է սեպագիր արձանագրություններում հիշատակվող «Աշգուզային», որով կոչում էին սկյութներին, երբ նրանք թափանցելով Անդրկովկաս ու Հայաստան, հաստատել էին իրենց իշխանությունը։ Սակայն Երեմիայի վկայության մեջ առավել հետաքրքրություն են ներկայացնում «Այրարատեան թագաւորութեանցն», «զթագաւորութիւնս Արարատայ, Միննայ» և «զթագաւորութիւնս Արարատայ և Արմինայ» արտահայտությունները, որոնք հաստատում են, որ այն ժամանակ Հայկական բարձրավանդակում գոյություն ունեցող Այրարատյան թագավորությունը (կամ թագավորությունները) և Արմինան արդեն կենտրոնացված, հզոր և Առաջավոր Ասիայում ճանաչում գտած պետական միավորումներ էին և Բաբելոնի դեմ պայքարի գործում նրանց ռազմական ուժերին շատ կարևոր տեղ էր հատկացվում հարևանների կողմից։

## 5. ԴԱՐԵՀ ՎՇՏԱՍՊԻ ԲԻՍԵԹՈՒՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արմենիայի և արմենների մասին հայտնի ու ճշգրիտ թվական ունեցող ամենահին գրավոր տեղեկությունները պահպանվել են մ. թ. ա. 520 թվականին պարսից Աքեմենյան տոհմի ներկայացուցիչ Դարեհ I Վշտասպի (522—486) կարգադրությամբ այժմյան Իրանի Քերմանշահ քաղաքի մոտ գտ-

[14] Հայերեն բազմաթիվ հրատարակությունների մեջ լավագույնը ցայսօր Վենետիկի 1805 թ. հրատարակությունն է, որը կատարել Հ. Զոհրաբյանը։ Աստվածաշունչը ունի նաև աշխարհաբար բազմաթիվ թարգմանություններ և հրատարակություններ։

[15] Աստվածաշունչ, հ. 3, Վենետիկ, 1805, էջ 628։

նրվող Բիսեթուն բարձրադիր ժայռի վրա թողնված արձանագրության մեջ։ Արձանագրությունը բաղկացած է ինը հսկայական սյունակներից. որոնցից հինգը գրված է հին պարսկերեն (76 պարբերություն, 515 տող), երեք սյունակը՝ էլամերեն (650 տող) և մեկ սյունակը՝ աքքադերեն (141 տող)[16]։ Արձանագրությունը ունի բարձրաքանդակ, որը պատկերում է Դարեհին՝ երկու ուղեկից զինվորներով։ Արքայի ետևից ընթանում են շղթայված և պարանոցներից իրար հետ կապկպված ինը մարդկային ֆիգուրներ, որոնք խորհրդանշում են Դարեհի դեմ ապստամբած և վերստին հպատակեցված ինը երկրները։

Երեքլեզվյան այս արձանագրությունը հայագիտության համար բացառիկ արժեք է ներկայացնում։ Ուշադրության արժանի է հատկապես այն հանգամանքը, որ պարսկերեն տեքստում ամենուրեք հիշատակվող Արմինան (Հայաստանը) բաբելերենում անվանվում է Ուրաշտու (Ուրարտու)։ Իսկ դրանից կարելի է հանգել այն եզրակացության, որ Ուրարտու պետության անվանումը հոմանիշ է Հայաստան անվանը։ Այնուհետև Բիսեթունյան արձանագրության պարսկերեն տեքստի երկրորդ սյունակի 29—63-րդ տողերում պատմվում է Արմինայում Դարեհի դեմ ծագած ապստամբությունների մասին։

Պարզվում է, որ Դարեհի թագավորության հենց սկզբում նրան ենթակա շատ երկրներ (Փարս, էլամ, Բաբելոն, Մեդիա և այլն) ապստամբել են պարսից լծի դեմ։ Ապստամբ երկրների թվում էր նաև Արմինան։ Արմինայի դեմ Դարեհը զորքեր է ուղարկում։ Նա կարգադրում է իր զորավարին՝ «գնա՛ և ջախջախի՛ր այդ ապստամբ բանակը, որը ինձ չի հպատակվում»։ Եվ թեև դեպի Արմինա ձեռնարկված յուրաքանչյուր արշավանքից հետո պարսից արքան հավաստում է, որ Ահուրամազդայի օգնությամբ նրա բանակը ապստամբներից բավական մարդ սպանեց, սակայն այս հայտարարությունները ամենևին էլ վստահություն չեն ներշնչում, որովհետև Դարեհի զորավարներից հայազգի Դադարշիշի երեք արշավանքներից հետո էլ Արմինայում դրությունը չի խաղաղվում։ Դրանից հետո իրադրությունն այնքան է բարդանում, որ պարսիկները ստիպված են լինում նոր օգնական ուժեր ուղարկել այնտեղ՝ զորավար Վաումիսայի գլխավորությամբ, որը, հավանաբար, Դադարշիշի ուժերի համագործակցությամբ, երկու նոր ճակատամարտերից հետո միայն կարողանում է դժվարին հաղթանակի հասնել։

Արձանագրությունից երևում է, որ արմենների ապստամբությունը երկարատև նախապատրաստության արդյունք էր և կապված էր հակապարսկական մյուս շարժումների, հատկապես՝ Բաբելոնում ծագած ապստամբության հետ, որը ղեկավարում էր Դարեհի ենթականերից մեկը՝ հայազգի Արախան։ Հ. Մանանդյանը մանրամասնորեն ուսումնասիրելով Բիսեթունյան արձանագրության մեջ հիշատակվող տեղանունները (Զուզա ավան, Տիգրա բերդ, Ույամա բերդ, Աուտիարա գավառ), գտնում է, որ դրանք հիմնականում տեղադրված էին Հայաստանի Աղձնիքի և Կորճայքի տարածքներում։ Բիսեթունյան արձանագրության առավելությունն այն է, որ այնտեղ, ռազմական գործողությունների թվականից բացի, ճշգրտորեն հիշատակվում են ամիսներն ու օրերը։ Հայաստանում կատարված դեպքերը, օրինակ, տեղի են ունեցել մ. թ. ա. 522 թ. դեկտեմբեր—521 թ. հունիս ամիսներին։

## 6. ՀՈՒՆԱԿԱՆ ԵՎ ՀՌՈՄԵԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հայաստանի և հայերի հնագույն շրջանների պատմության մասին հարուստ տեղեկություններ են պահպանվել նաև հունական և հռոմեական աղբյուրներում, որոնցից ամենանախնականը պատկանում է հույն նշանավոր պատմիչ Հերոդոտոսին (484—425)։ Հերոդոտոսը ծնվել է Փոքր Ասիայի հունական Հալիկառնաս քաղաքում և երկար ժամանակ ապրել Աթենքում։ Քաղաքական պայքարին ակտիվորեն մասնակցելու պատճառով հարկադրված դիմել է տարագրության և շրջագայել Եգիպտոսում, Փոյուգիայում, Բաբելոնում և Սև ծովի հյուսիսային կողմերում։ Այն կարծիքը, որ, իբր, հնարավոր է նաև Հերոդոտոսի Հայաստանում լինելը, անհավանական է, որովհետև, ինչպես կտեսնենք, Հայաստանի պատմական աշխարհագրության մասին նրա տված տեղեկությունները համենայն դեպս այդ երկրում եղած մարդու տեղեկություններ չեն։

Հերոդոտոսը իր շրջագայությունների ընթացքում ամենուրեք նյութեր է հավաքել վերևում նշված երկրների մասին, ո-

[16] Տե՛ս «Դարեհ Վշտապի Բիսեթունյան արձանագրությունը», թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Մ. Նալբանդյանի, Երևան, 1964։

ռոնք հետագայում հիմք են հանդիսացել նրա ինը գրքերից բաղկացած հանրահռչակ «Պատմության» համար։ Աշխատության առաջին մասերում հեղինակը պատմաաշխարհագրական և ազգագրական արժեքավոր ու հազվագյուտ տեղեկություններ է հաղորդում Պարսկաստանին ենթակա և հարևան երկրների՝ այդ թվում նաև Հայաստանի ու հայերի, և այնտեղ ապրող ժողովուրդների ու ցեղերի մասին։

Հերոդոտոսի տեղեկություններից ուսումնասիրողների ուշադրությունը ամենից շատ գրավել է 7-րդ գրքում զետեղված այն հատվածը, որտեղ հեղինակն ասում է. «Փռյուգացիներն ունեին պափլագոնականին շատ նման հանդերձանք, քիչ տարբեր դրանից։ Մակեդոնացիներն ասում են, թե փռյուգները, քանի դեռ բնակվում էին Եվրոպայում մակեդոնացիների հարևանությամբ, կոչվում էին բրիգներ. բայց Ասիա տեղափոխվելուց հետո, իրենց երկրի հետ փոխեցին նաև իրենց անունը (կոչվելով փռյուգներ)։ Արմենները ևս լինելով փռյուգիական վերաբնակիչներ՝ զինված էին փռյուգների նման։ Այս երկուսին առաջնորդում էր Արտոքմեսը, որն ամուսնացել էր Դարեհի դստեր հետ»[17]։

–Հայ ժողովրդի կազմավորման ընթացքում արիմ-արմենների խաղացած դերը բարձր գնահատողները հենվում են Հերոդոտոսի հենց այս վկայության վրա։ Կարևոր են նաև Հերոդոտոսի տեղեկությունները այն մասին, որ մ. թ. ա. V դարում Հայաստանը Աքեմենյան Պարսկաստանի կազմում բաժանված էր երկու վարչատարածքային միավորների։ Հայաստանի արևմտյան մասը, Պակտիկեի և հարևան երկրամասերի հետ մինչև Պոնտական ծով, մտնում էր 13-րդ սատրապության մեջ և արքայական գանձարանն էր մուծում տարեկան 400 տաղանդ հարկ, իսկ ալարոդները, որոնք պետք է որ բնակվելիս լինեին Արևելյան Հայաստանում, մատիենների և սասպեյրների հետ, կազմում էին 18-րդ սատրապությունը և վճարում 200 տաղանդ հարկ։

Հերոդոտոսը շատ հանգամանալից է նկարագրում նաև Դարեհ I-ի կառուցած «Արքայական պողոտան» և հաստատում, որ ստրատեգիական խիստ կարևոր նշանակություն ունեցող այդ

[17] Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Երևան, 1986, էջ 409 (թարգմանությունը Ս. Երկայնարյանի)։



ճանապարհի մի մեծ հատվածն էլ՝ 56,5 փարսախ (մոտավորապես 300 կմ) երկարությամբ անցնում էր Հայաստանով։ Հայաստանում նույնպես ճանապարհի երկայնքով ստեղծված էին հատուկ կայաններ (թվով՝ 15), որոնք ունեին հյուրատներ և համապատասխան վերահսկիչ ամրություններ։ Խոսելով Արաքս գետի մասին, նշում է, որ այն սկիզբ առնելով Հայաստանի լեռներից թափվում է Կասպից ծով։ Ճիշտ չեն նրա այն հաղորդումները, որ իբր Հայաստանի բոլոր գետերը նավարկելի են, որ Ալիս (Հալյուս) գետը սկիզբ առնելով Հայաստանից անցնում է Կիլիկիայով և այլն, և այլն։ Աշխարհագրական բնույթի այս և նման այլ սխալներով հանդերձ, Հերոդոտոսի տեղեկությունները Հայաստանի պատմության համար ունեն շատ կարևոր նշանակություն և արժեք։

Հայաստանի մասին պահպանված հնագույն սկզբնաղբյուրների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում հույն նշանավոր մտածող Քսենոփոնի «Անաբասիս» և «Կյուրոպեդիա», աշխատությունները, որովհետև այդ աշխատությունների հեղինակն առիթ է ունեցել անձամբ լինելու Հայաստանում և այն նկարագրել է ականատեսի աչքերով։

Որպես աթենացի հարուստ ստրկատիրոջ որդի, Քսենոփոնը (430—354) սոփեստների մոտ ստացել է բարձր կրթություն և աշակերտել նշանավոր Սոկրատեսին։ Քաղաքական համոզմունքներով նա դեմոկրատիայի հակառակորդ է և միապետական կարգերի պաշտպան։

Մ. թ. ա. V դարի վերջերին Աքեմենյան Արտաքսերքսես II Մնեմոնի (404—358) դեմ բռնկվում է ապստամբություն, որը գլխավորում էր նրա հարազատ եղբայր՝ Կյուրոս Կրտսերը։ Ապստամբության անհաջողությունից հետո, հույն շատ զինվորներ ու հրամանատարներ, որոնք որպես վարձկաններ ծառայում էին Կյուրոսի մոտ, Միջագետքում մատնվեցին բախտի քմահաճույքին։ Հույների միակ փրկությունը ապահով վայրերով հայրենիք վերադառնալն էր։ Եվ հենց այս որոշմամբ էլ նրանք Բաբելոնից շարժվելով հյուսիս, մտան Հայաստան ու անցնելով նրա կենտրոնական շրջաններով, հասան Սև ծով, իսկ այստեղից՝ իրենց հայրենիքը։ Ահա 401 թվականին տեղի ունեցած այս նահանջին մասնակից հրամանատարներից մեկն էլ Քսենո-

ֆոնն էր, որն իր բազմաթիվ գրառումները Արևելքի և Հայաստանի մասին հետագայում օգտագործեց «Անաբասիս» և «Կյուրոպեդիա» աշխատությունները շարադրելու համար։ Հեղինակն ընդհանրապես աչքի է ընկնում հարուստ լեզվով ու գեղեցիկ ոճով, և պատահական չէ, որ հին հունարենի դասագրքերում այժմ նույնպես առանձնահատուկ տեղ է տրվում Քսենոփոնի ստեղծագործություններին։ Իսկ Մերձավոր Արևելքի ու Աթենքի տնտեսական խնդիրներին վերաբերող նրա տված տեղեկությունները ժամանակին բարձր են գնահատվել Կ. Մարքսի կողմից և օգտագործվել «Կապիտալի» 1-ին հատորում և այլ աշխատություններում։

«Անաբասիսը», ի տարբերություն այլ աղբյուրների, Հայաստանի մասին տալիս է տնտեսական բնույթի տեղեկություններ։ Այստեղից երևում է, որ այն ժամանակ Հայաստանը բավական զարգացած գյուղատնտեսական երկիր էր, որ այստեղ հացահատիկի հետ մշակում էին նաև յուղատու բույսեր։ Տրնտեսության մեջ կարևոր տեղ էին գրավում անասնապահությունն ու այգեգործությունը։ Հայաստանը գյուղատնտեսական մթերքներով հարուստ ու բարեկեցիկ երկիր էր, դրա համար էլ Քսենոփոնն ու իր հայրենակիցները սննդամթերքների հայթայթման գործում առանձին դժվարությունների չէին հանդիպում։ Նրանք առատորեն գտնում էին մսացու անասուններ, կենդանական ճարպեր, քնջութի և նուշի յուղ, հաց, անասնակեր, անուշահամ գինիներ, մրգեր ու ընդեղեն և այլն։ «Անաբասիս»-ում պահպանված տեղեկություններից պարզվում է, որ արհեստագործության ու մետաղամշակության վաղեմի արհեստը հայերն այդ ժամանակ է՛լ ավելի էին զարգացրել, որ բարձր դասի առօրյա գործածության շատ իրեր ու պերճանքի առարկաներ ճաշակով ու վարպետությամբ պատրաստված էին ազնիվ մետաղներից։ Հետաքրքիր են Քսենոփոնի տեղեկությունները նաև հայերի կողմից պատրաստվող գարեջրի մասին։ «Այնտեղ (հայերի տներում—Ս. Մ.-Բ.) կար նաև ցորեն և գարի, և ընդեղեն, և կրատերների մեջ գարուց պատրաստած գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ. կրատերների մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր, առանց ծնկի։ Ծարավելու դեպքում մարդ պետք է այդ եղեգի ծայրը բերանին դներ ու ծծեր։ Եվ այն



շատ թունդ էր, եթե ջուր չխառնեին. իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ըմպելիք էր»[18]։

Քսենոփոնը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև հայերի հագուստի, բնավորության գծերի, կենցաղի ու ապրելակերպի մասին։ Նա ասում է, որ հայերը հյուրասեր են, խիզախ ու ինքնասեր, որ նրանք կարողանում են հաղորդակցվել պարսկերեն։ Հայաստանի կենտրոնական շրջաններում, լեռնալանջերին ու գետահովիտներում շատ գյուղերի ու գյուղախմբերի հիշատակությունը հաստատում է երկրի բավական խիտ բնակեցված լինելու հանգամանքը։ Նրա նկարագրությամբ այդ ժամանակ Հայաստանն իրենից ներկայացնում էր դասակարգային հասարակություն ունեցող երկիր, որտեղ բնակչության մյուս խավերից առանձնապես տարբերվում էին գյուղապետները, ավագները, կառավարիչները և վերջապես թագավորը։ Գիտական բարձր արժեք են ներկայացնում «Անաբասիս»-ում եղած այն նյութերը, որոնք վերաբերում են Հայկական լեռնաշխարհի էթնիկական վիճակին և Հայաստանի պատմական աշխարհագրությանը։ Քսենոփոնի այդ բնույթի նյութերով է հնարավոր լինում բացատրել աշխարհագրական որոշ անուններ (գետերի, բնակավայրերի, վարչական և էթնիկական միավորների և այլն), որոշել Հայաստանի աշխարհագրական սահմանները, հիշատակված ցեղերի տարածման վայրերը և այլն։

Քսենոփոնի մյուս աշխատությունը՝ «Կյուրոպեդիան» ևս արժեքավոր է Հայաստանի հնագույն շրջանի պատմության ուսումնասիրության համար։ Այս աշխատության մեջ հեղինակը խոսում է նաև Մարաստանի և Արմենիայի քաղաքական ու տնտեսական փոխհարաբերությունների մասին, որ հայերը այդ ժամանակ թեև ենթարկվում էին մարերին, սակայն օգտվում էին ներքին ինքնուրույնությունից և ունեին իրենց թագավորը, որ հայոց արքայազն Տիգրանն ու պարսից Կյուրոսը բարեկամական հարաբերությունների մեջ էին գտնվում և այլն։

– Հայաստանի վաղ շրջանին վերաբերող օտար սկզբնաղբյուրներից արժեքավոր է հույն պատմիչ Պոլիբիոսի (210 կամ 205—127) «Պատմությունը»։ Պոլիբիոսը զբաղեցրել է բարձր պաշտոններ, մասնակցել դիվանագիտական բանակցություն-

[18] Քսենոփոն, Անաբասիս, Երևան, 1970, էջ 97 (Թարգմանությունը Մ. Կիլիջարյանի)։

ների դեպի Եգիպտոս, Հունաստան և այլուր։ Հեղինակի կենսագրական, աշխարհագրական և ռազմագիտական աշխատություններից միայն հատվածներ են պահպանվել, իսկ 40 գրքից բաղկացած «Պատմությունից»՝ առաջին հինգը և առանձին պատառիկներ մյուս գրքերից։ Իր ստեղծագործություններում հեղինակը որոշակիորեն կանգնած է Հռոմեական սարկատիրական պետության արտաքին ու ներքին քաղաքականության պաշտպանության դիրքերում, արդարացնում է Հռոմի նվաճումները։ Հեղինակը միտումնավոր վերաբերմունք ունի իր նախորդների գործերի նկատմամբ և նրանցում ոչինչ դրական չի տեսնում։ Քաջ ծանոթ լինելով Հռոմեական պետության հետ առնչվող ասիական, աֆրիկյան և եվրոպական պետություններին, նա որոշ տեղեկություններ է հաղորդում նաև Հայաստանի մասին։ Ուշադրության արժանի են հատկապես նրա վկայությունները մ. թ. ա. III—II դարերի Հայաստանի քաղաքական վիճակի մասին։ Հույն հեղինակի հաղորդումներից հնարավոր է եզրակացնել, որ այդ ժամանակաշրջանում Մեծ և Փոքր Հայքերը, Ծոփքի հետ միասին, գրեթե ինքնիշխան պետություններ էին և չէին մտնում Սելևկյանների տիրապետության մեջ։ Պոլիբիոսը հայոց Արտաշես I-ին անվանում է «Արմենիայի մեծագույն մասի» տիրակալ։ Եթե Հայաստանի վարչաքաղաքական վիճակի մասին Պոլիբիոսի տեղեկությունները հիմնականում ճիշտ են ու վստահելի, ապա նույնը չի կարելի ասել նրա աշխարհագրական բնույթի վկայությունների մասին, որոնք, հետաքրքիր լինելով հանդերձ, պարունակում են անճշտություններ ու սխալներ։

Հայաստանի մասին քիչ, սակայն ուշադրության արժանի տեղեկություններ հաղորդում է նաև հույն պատմիչ Դիոդորոս Սիկիլիացին (90—23) իր համաշխարհային պատմության մեջ, որը կրում է «Պատմական գրադարան» վերնագիրը։ Հեղինակի 40 գրքերից (գլուխներից) բաղկացած աշխատության 1—5-րդ և 11—25-րդ գրքերն են ամբողջական ձևով պահպանվել։ Այստեղ նա շարադրում է Եգիպտոսի, Հունաստանի, Հռոմի և սրանց հետ այս կամ այն չափով առնչվող երկրների պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մ. թ. ա. 60—59 թթ.։

Դիոդորոս Սիկիլիացին իր գրքի համար օգտագործել է մեծ թվով աղբյուրներ, որոնց մեջ նաև այնպիսիները, որոնք



չեն պահպանվել։ Վերջինների մասին Սիկիլիացու հաղորդումները և առանձին դեպքերի մասին նրանց տված տեղեկությունների վերաշարադրումը, հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու կորած ու չպահպանված աղբյուրների մասին։

Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարան»-ի առաջին հինգ գրքերը վերաբերում են համաշխարհային պատմության ամենահնագույն՝ առասպելական շրջանին։ Այստեղ Ասիայի երկրներին վերաբերող մասերը շարադրելիս, նա մեծ չափով օգտագործել է մ. թ. ա. V—IV դարերի հայտնի հույն պատմիչ Կտեսիասի «Պերսիկա» («Պարսկականք») աշխատությունը։ Ինչպես Դիոդորոսի գրքի այս բաժնի շատ դեպքերը, այնպես էլ Հայաստանում կատարված իրադարձությունների նկարագրությունները առասպելախառն են և տառապում են ժամանակագրական խառնաշփոթություններով։ Եվ միայն մասնագիտական խմբագրման ու ճշգրտումների միջոցով է, որ հնարավոր է հաստատել Սիկիլիացու հաղորդումների պատմականությունը և օգտագործել դրանք հատկապես Հայաստանի պատմության ուսումնասիրության և եղած այլ աղբյուրների նյութերը հարստացնելու համար։

Ստորև բերում ենք Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարան» երկից երկու փոքրիկ հատվածներ.

«Այնուհետև, նա (Նինոսը—Ս. Մ.-Բ.) մեծ զորքով ներխուժելով Արմենիա և մի շարք քաղաքներ ավերելուց հետո կոտորեց տեղի բնակիչներին, ուստի և նրանց թագավոր Բարզանեսը, տեսնելով, որ ինքն ի վիճակի չէ նրա դեմ կռվելու, առատ նվերներով դիմավորեց նրան և ասաց, որ ինքը կկատարի նրա բոլոր հրամանները։ Իսկ Նինոսը նրան վերաբերվեց մեծահոգաբար և համաձայնվեց, որ նա տիրի Արմենիային և, մնալով որպես իր բարեկամը, զորք ուղարկի և միջոցներ՝ իր բանակի համար։ Եվ նա, առավել ևս հզորանալով, արշավեց Մեդիայի դեմ։ Եվ այս (երկրի) թագավոր Փառնոսը նշանակալից զորքով դուրս եկավ նրա դեմ, բայց պարտվելով, իր զինվորների մեծ մասին կորցրեց, իսկ ինքը ևս իր յոթ որդիների ու կնոջ հետ գերի վերցվելով, խաչ բարձրացվեց»[19]։

---

[19] Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան, Երևան, 1985, էջ 16 (Թարգմանությունը Ս. Երկյաշարյանի)։

«Սեմիրամիսը (Շամիրամը—Ս. Մ.-Բ.) Հայկական լեռներից մի քար կտրեց, երկարությունը 130 ոտնաչափ, իսկ լայնքը և հաստությունը՝ 25։ Նա ջորիների և եզների բազմաթիվ լծերով (այդ քարը) իջեցրեց դեպի գետը և այնտեղ բարձեց լաստի վրա ու դրանով հոսանքն ի վար բերելով մինչև Բաբելոնիա, այն կանգնեցրեց ամենաերևելի ճանապարհի կողքին, որպես զարմանալի տեսարան այնտեղից անցնողներին։ Ոմանք այն, իր ձևի պատճառով, անվանում են կոթող, որը և համարում են, այսպես կոչված, յոթ հրաշալիքներից մեկը»[20]։

Մ. թ. ա. II դարից մինչև մ. թ. սկզբներն ընկած ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական կացության և աշխարհագրության մասին բավական արժեքավոր տեղեկություններ են պահպանվել հույն նշանավոր աշխարհագետ Ստրաբոնի «Աշխարհագրության» մեջ։ Ստրաբոնը (մ. թ. ա. 63—մոտ. մ. թ. 20) ծնվել ու ապրել է Հայաստանին հյուսիս-արևմուտքից անմիջապես սահմանակից Պոնտոսի Ամասիա քաղաքում։ Հայաստանի մասին նրա հաղորդած տեղեկություններից շատերը եզակի են ու բավականին վստահելի։ Ստրաբոնը երբեմն այնքան ճշգրիտ ու պատկերավոր ձևով է նկարագրում Հայաստանի բնաշխարհն ու քաղաքները, որ թվում է, թե Հունաստանում, Աֆրիկայում երկար ժամանակ ճամփորդած հեղինակը այցելել է նաև մեր երկիրը։

Ստրաբոնի առաջին աշխատությունը՝ «Պատմական հիշատակարաններ» վերնագրով, որ կազմված է եղել 43 գրքերից, ցավոք, կորած է և մեզ չի հասել։ Գրեթե ամբողջությամբ պահպանվել է միայն հեղինակի «Աշխարհագրությունը», որը բաղկացած է 17 գրքից։ Հենց այստեղ էլ Ստրաբոնը բավական ճիշտ ներկայացնում է Հայաստանի զբաղեցրած տարածքը, որի հարավային սահմանը կազմում էր Տավրոսյան լեռնաշղթան, արևելյանը՝ Մարաստանն ու Ատրպատականը, հյուսիսում ապրում էին իբերներն ու աղվանները, իսկ արևմուտքում նա ընդգրկում էր Փոքր Հայքն ու Եփրատի հովիտը։ Այնուհետև հեղինակը մանրամասնորեն նկարագրում է Հայաստանի գետերը, լճերը, լեռնաշղթաներն ու լեռնագագաթները։ Նա նշում է, որ երկրի բազմաթիվ գետահովիտներում և լեռնադաշտերում բնակիչները հատկապես մշակում էին խաղող, որ բերրի ու արգավանդ է Արաքսի դաշտը (Արարատյան դաշտը), որի միջով հոսում է Արաքսն ու թափվում Կասպից ծովը։ Հույն հեղինակի ուշադրությունից չեն վրիպել նաև Հայաստանի ընդերքի հարստությունները։ Նա առանձնապես հիշատակում է Սպերում եղած ոսկու հանքերը։ Ստրաբոնը նույնպես օտար մի քանի հեղինակների նման նշում է, որ Հայաստանի Արտաշատ մայրաքաղաքը հիմնադրվել է կարթագենցի նշանավոր զորավար Հաննիբալի խորհրդով, որ քաղաքը կառուցված է Արաքսի «գետաթեքի կազմած թերակղզու վրա, նրա պարիսպները շուրջանակի պատում են գետը՝ բացի պարանոցից, իսկ պարանոցը շրջափակված է փոսով և պատնեշով»[21]։

Աղբյուրագիտական մեծ արժեք են ներկայացնում Ստրաբոնի տվյալները հայկական միասնական պետության ստեղծման և այդ գործում Արտաշես I-ի խաղացած դերի մասին։ Մեկ առ մեկ թվարկելով Հայոց թագավորության մեջ վերջինիս միավորած հայկական երկրամասերը, հեղինակը ավելացնում է, որ դրանից հետո երկրի բոլոր բնակիչները դառնում են միալեզու։ Անդրադառնալով հին հայկական պաշտամունքին, Ստրաբոնը գրում է, որ Անահիտի սրբավայրերը տարբեր վայրերում և հատկապես Ակիլիսենում (Եկեղյաց գավառ—Ս. Մ.-Բ.) հայերը պաշտում են առանձնահատուկ[22]։

Ստրաբոնը, որպես հույն մտածող, տուրք է տվել հույների ու հռոմեացիների տիրապետության տարածման, նրանց ազդեցության ընդարձակման և ընդհանրապես արևմտյան աշխարհի գերազանցությունը շեշտելու մտայնությանը։ Այս առումով բավական ուշագրավ են նրա այն տողերը, թե «...Հայերը և Կողքիսից վերև բնակվող Աղվաններն ու Իբերները պետք ունեն միայն հռոմեական կառավարչի ներկայության և լավ կզսպվեն»։

Ստրաբոնը բացահայտորեն արտահայտում է Արևելքի ժողովուրդների նկատմամբ հունահռոմեական աշխարհի գերազանցությունը շեշտելու գաղափարը, որի ակունքները գնում են ավելի վաղ ժամանակները։ Այս միտումնավոր գաղափարը, թափանցելով հունական առասպելների ու ավանդույթների մեջ,

---

[20] Նույնը, էջ 27։

[21] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 196 (թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի)։

[22] Նույնը, էջ 420։

հիմք է հանդիսացել նաև արևելյան մի քանի ժողովուրդներին հունական ծագում վերագրելու մտայնությանը, որը շատ ցայտուն կերպով իր արտացոլումն է գտել «Արգոնավորդների» առասպելի մեջ։ Ստրաբոնի օգտագործած այդ հնագույն առասպելը հավաստում է, որ արմենները ծագել են Թեսալացի Յասոնի զինակից Արմենոսից, որը Կոլխիդայից անցնելով Հայաստան, բնակություն է հաստատում Սպեր գավառի տարածքում և նրանից էլ իբր սերվում են հայերը, որոնք իրենց նահապետի անունով կոչվում են արմեններ, իսկ երկիրը՝ Արմենիա։ «Արգոնավորդների» առասպելը, իհարկե, արժանահավատ ըսկզբնաղբյուր չէ և նրանում հիշատակվող իրադարձությունները հայ ժողովրդի ծագման հարցի գիտական լուսաբանության համար էական արժեք ներկայացնել չեն կարող։

Հին հռոմեական պատմաբանների մեջ ամենից բեղմնավոր գրիչ ունեցողներից հայտնի է Պլինիոս Ավագը (23—79)։ Լինելով արտակարգ ընթերցասեր անձնավորություն՝ նա կարդում էր ամեն մի գիրք և գտնում, որ ոչ պիտանի գրքեր ընդհանրապես գոյություն չունեն և ամենաանպետք թվացող գրքից էլ մի բան կարելի է սովորել։ Պլինիոսը գրել է հռետորական, քերականական և պատմագիտական բովանդակությամբ ծավալուն աշխատություններ։ Սակայն պահպանվել է միայն նրա «Բնական պատմությունը», որը հանրագիտական բնույթի գործ է։ Այդ աշխատությունը գրելու համար Պլինիոսն օգտագործել է 2000 անուն գիրք՝ մեջբերումներ կատարելով 327 հույն և 146 հռոմեացի հեղինակներից։

Պլինիոսի մոտ պահպանվել են աղբյուրագիտական բացառիկ արժեքավոր տեղեկություններ նաև Հայաստանի մասին։ Ուշագրավ են նրա հաղորդումները Տիգրան Մեծի ժամանակաշրջանի վերաբերյալ։ Հեղինակը գրում է, որ Տիգրանն իր արշավանքների ժամանակ Միջագետքի վրանաբնակ արաբական ցեղերին տեղափոխում և բնակեցնում էր Օսրոենեի շրջանում, պատվիրելով նրանց հսկել առևտրական ճանապարհների ապահովությանը։ Նրա մոտ արժեքավոր տվյալներ կան նաև առաջին դարի Հայաստանի վարչական բաժանման մասին։ Ըստ նրա այդ ժամանակ Հայաստանը բաժանված էր 120 վարչական շրջանների, որոնք նա անվանում է ստրատեգիաներ. «Ստույգ է, որ Հայաստանը բաժանված է ստրատեգիաներ կոչված պրեֆեկտուրաների... Նրանք թվով 120 են»[28]։ Պլինիոսի հաղորդումներից պարզվում է նաև, որ Տիգրան Մեծը իր մատ ապաստան էր տալիս Հռոմեական կայսրությունից փախած քաղաքական վտարանդիներին։ Այդպիսիներից նա հիշատակում է հույն փիլիսոփա Մեթրոդորոս Սկեպսացուն, որն ապրում և ստեղծագործում էր Հայոց թագավորի արքունիքում։ Մենք Պլինիոս Ավագի միջոցով ենք իմանում, որ Մեթրոդորոսը ժամանակին գրել է Հայոց Տիգրան թագավորի գործունեության պատմությունը, սակայն, դժբախտաբար, այդ շատ արժեքավոր աշխատությունը չի պահպանվել։ Հռոմեացի պատմիչը կարևոր տեղեկություններ է հաղորդում նաև մեր թվականության առաջին դարի քաղաքական դեպքերի մասին։ Նա խոսում է հատկապես Տրդատ I Արշակունու Հռոմ ճանապարհորդելու մասին և տալիս նրա թագադրության մանրամասնությունները։

Պլինիոսի աշխատությունների մեջ հատուկ ուշադրություն են դրավում Հայաստանի տարածքի շատ աշխարհագրական անունների հիշատակություններ։ Նման դեպքերում հեղինակը հաճախ այս կամ այն տեղանվան մասին եղած տվյալներն ավելի հավաստի ներկայացնելու համար վկայակոչում է մի քանի հեղինակների հիշատակություններ և հետո միայն ասում իր կարծիքը։ Ինչ խոսք, Պլինիոս Ավագի այդ կարգի տեղեկությունները կարևոր են Հայաստանի պատմական աշխարհագրության ուսումնասիրության համար։

Մ. թ. ա. I և մ. թ. I դարերը համարվում են ոչ միայն հռոմեական պետության ռազմատնտեսական ու քաղաքական հզորացման, այլև մշակույթի զարգացման ժամանակներ։ Այդ ժամանակաշրջանի բարձրարժեք գեղարվեստական ստեղծագործությունների կողքին հրապարակ եկան նաև պատմագիտական այնպիսի գործեր, որոնք հռոմեական գրական միտքը հասցրեցին համաշխարհային ճանաչման։ Գրական ու պատմագրական արժեքավոր ստեղծագործություններն այդ ժամանակ գրվում էին արևմուտքում լատիներեն, արևելքում՝ հունարեն լեզուներով։

Հռոմեական պատմագրության այդ շրջանի նշանավոր ներկայացուցիչներից մեկն էլ հրեա պատմիչ Հովսեպոս Փլավիոսն է, որին կոչում են նաև Հովսեպոս Եբրայեցի։ Նա ծնվել է Ե-

[28] Նույնը, հ. 1, էջ 365 (թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի)։

գուսաղեմում 37 թ., քահանայի ընտանիքում։ Ստացել է ժամանակի ոգուն համապատասխան կրոնական դաստիարակություն ու կրթություն։ 66 թ. մասնակցել է հռոմեական իշխանության դեմ ուղղված հրեական ապստամբությանը։ Սակայն, շուտով, նա հեռացել է ապստամբությունից և դարձել Հռոմի երկրպագուն ու կայսրեր Վեսպասիանոսի, Տիտոսի ու Դոմիտիանոսի մտերիմ մարդը։ Նրան շնորհվել է հռոմեական քաղաքացու պատվավոր իրավունք, տրվել բարձր թոշակ ու կալվածք։ Հովսեպոս Փլավիոսը ապրել է մինչև II դարի առաջին տասնամյակները։ Պահպանված նրա ստեղծագործությունները չորսն են՝ «Հրեական պատերազմի մասին», «Հրեական հնախոսություն», «Կյանքը» և «Ընդդեմ Ապիոնի», որոնք գրված են հունարեն լեզվով։ Պատմիչի ստեղծագործություններին բնորոշ են հավաստիությունն ու փաստերի ճշգրտված շարադրանքը, որոնք, պայմանավորված են հատկապես պատերազմներին ու արշավանքներին մասնակցած հռոմեացի պաշտոնյաների զեկուցագրերն ու բացատրագրերը ձեռքի տակ ունենալով։ Պետք է նշել, որ հրեա պատմիչի տեղեկությունները Հայաստանի կամ հայերի մասին շատ էլ հարուստ ու ընդարձակ չեն։ Նրա տեղեկությունների մի մասը այլ հեղինակների պարզ կրկնություններն են։ Սակայն կան փաստեր, որոնք Հովսեպոսի մոտ շարադրված են գրեթե անկողմնակալ ձևով և որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հայագիտության համար։ Օրինակ՝ «Ընդդեմ Ապիոնի» գրքում Հայաստանն ակնարկվում է այսպես. «Ահա այս Բերոսոսը, հետևելով և տեղի ունեցած ջրհեղեղի, և դրա ժամանակ պատահած մարդկանց կործանման մասին եղած հնագույն տարեգրություններին, Մովսեսի նման ինքը ևս պատմել է տապանի մասին, որի մեջ Նոքոսը (Նոյ նահապետը—Ս. Մ.-Բ.), մեր ցեղի նահապետը, փրկվեց, երբ այն քշվեց և կանգ առավ Հայկական լեռների բարձունքներում»[24]։

«Հրեական պատերազմի մասին» աշխատության մեջ Փլավիոսը խոսում է Տիգրան Մեծի կողմից Սելևկյան թագուհի Կլեոպատրա Սելենեին Պտղոմայիս քաղաքում պաշարելու, Տիգրանի և Պոմպեոսի կռիվների, Արտավազդ II-ի գերի ընկնելու և Եգիպտոս տարվելու, ալանների դեմ Տրդատ I-ի մղած կռիվների մասին և այլն։ «Հրեական հնախոսության» մեջ՝ հենց սկզբից, պատմում է ջրհեղեղի և Նոյի ու նրա հետ եղողների փրկվելու մասին։ «Այնուհետև,—պատմում է Փլավիոսը,—երբ տապանը կանգ առավ Հայաստանում գտնվող մի լեռան վրա, Նոքոսը այս տեսնելով, բացեց (տապանը) և նրա շուրջը փոքր մի հողակտոր նկատելով, հույսը վերածնվեց նրա մեջ, և նա մնաց այնտեղ։ Իսկ քիչ օրեր անց, երբ ջուրն աստիճանաբար նահանջում էր, նա մի ագռավ արձակեց, իմանալու համար, թե արդյո՞ք երկրի որևէ մի այլ մաս ևս դուրս է եկել ջրից, որից հետո (տապանից) դուրս գալը անվտանգ կլիներ. բայց ամբողջ երկիրը դեռևս լճացած տեսնելով, ագռավը վերադարձավ Նոքոսի մոտ։ Իսկ յոթ օր հետո նա մի աղավնի արձակեց, իմանալու համար երկրի դրությունը։ Այն վերադարձավ ցեխոտված և միաժամանակ ձիթենու կանաչ ոստ բերելով, որից էլ Նոքոսն իմացավ, որ երկիրն ազատվել է ջրհեղեղից. ևս յոթ օր սպասելուց հետո նա բաց թողեց տապանի անասուններին, ինքն էլ իր գերդաստանով դուրս գալով, աստծուն զոհեր մատուցեց և խնջույք արեց ընտանիքի անդամների հետ։ Հայերը մինչև օրս այդ վայրը կոչում են իջնելու տեղ, քանի որ այնտեղ է (ջրհեղեղից) փրկվել տապանը, և մինչև օրս այդ վայրում ցույց են տալիս դրա բեկորները»[25]։ Այնուհետև շարունակելով խոսքը, պատմիչը բարեխղճորեն հայտնում է, որ այդ պատմության մասին հիշատակում են շատ հեղինակներ և նույնիսկ մեջ է բերում բաբելացի նշանավոր պատմիչ Բերոսոսից մի հատված։ Փլավիոսը դրանից հետո թվարկում է այն ժողովուրդներին, որոնք ի վերջո սերվեցին Նոյի ժառանգներից, վերջիններիս անունները մեծ մասամբ հարմարեցնելով հունարեն արտասանձևին։ Հրեա պատմիչի ասելով Հայաստանը հիմնում է Նոյի ժառանգորդներից Ուրոսը։ Պատմիչի «Հրեական հնախոսություն աշխատության մեջ շատ ուշագրավ է այն հատվածը, որտեղ նա վկայում է, թե Տիգրան Մեծը գտնվում էր Ասորիքում ու նոր էր գրավել Պտղոմայիս քաղաքը, երբ «...լուր հասավ Տիգրանին, թե Լուկուլլոսը, հետապնդելով Միհրդատին, չի կարողացել նրան բռնել, ...և (Լուկուլլոսը), ասպատակելով Հայաստանը, պաշարել է (մայրաքաղաքը)։ Տիգրանն այս մասին

[24] Հովսեպոս Փլավիոս, *Ընդդեմ Ապիոնի*, տե՛ս Հովսեպոս Փլավիոս և Դիոն Կասսիոս, Երևան, 1976, էջ 28 (թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի)։



[25] Հովսեպոս Փլավիոս, *Հրեական հնախոսություն*, նույն տեղում, էջ 54։

ֆմանալով, վերադարձավ իր երկիրը»[26]։ Այս հիշատակությունը կարևոր է նրանով, որ դրանով հիմնավորվում է հռոմեացի զորավարի նենգությունը, որն օգտվելով հայոց թագավորի իր երկրից բացակայելուց, աշխատում էր հանկարծակիի բերել նրան ու էժան հաղթանակի հասնել։ Փլավիոսը այս գրքում էլ կրկնելով հայոց թագավոր Արտավազդի եղերական վախճանի մասին պատմությունը, ավելացնում է, որ Անտոնիոսը իր հետ Եգիպտոս տարավ «...նաև (Հայաստանի—Ս. Մ.-Բ.) թագավորության ամբողջ զարդերը, որ հափշտակել էր այնտեղից»[27]։

Վաղ կայսրության շրջանի հռոմեական նշանավոր պատմիչներից է Կոռնելիոս Տակիտոսը (մոտ. 55—125), որի ստեղծագործական ծաղկման տարիները ընկնում են Տրայանոս կայսեր ժամանակներում։ Թեև ծագումով նշանավոր չէր, սակայն իր տաղանդի և ընդունակությունների շնորհիվ մեծ հռչակ ձեռք բերեց՝ հասնելով մինչև կոնսուլի և փոխարքայի պաշտոններին։ Նա գրել է հռետորական, կենսագրական և գերմանական ցեղերի մասին աշխատություններ, որոնք մասնագետների ասելով լուրջ ազդեցություն են ունեցել Եվրոպայի վերածընդի ժամանակաշրջանի գրականության և XVIII դարի ֆրանսիական լուսավորիչների վրա։

Տակիտոսի «Տարեգրությունները» հիմնականում ընդգրկում են 14—69, իսկ «Պատմությունը»՝ 69—96 թվականները։ Առաջիններում հեղինակը խոսում է Օկտավիանոս Օգոստոսի մահվանից մինչև Ներոնն ընկած ժամանակաշրջանի Հռոմի պատմության և նրա արևելյան արշավանքների մասին։ Հենց այս կապակցությամբ էլ Տակիտոսը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հայ-հռոմեական փոխհարաբերությունների մասին։ Խախտելով ժամանակագրությունը, հեղինակը այստեղ խոսում է նաև Արտավազդ II-ի գործունեության ու վախճանի մասին, պատմում է Արտավազդից հետո Հայաստանում ծավալված խառը իրադրությունների մանրամասնությունները և այլն։ Արժեքավոր են Տակիտոսի աշխատության հատկապես այն հատվածները, որոնք վերաբերում են հայ-պարթևական փոխհարաբերությունների զարգացմանը և Հայաստանում Արշակունիների քաղաքական ակտիվացմանը։ Տակիտոսը չի թաքցնում նաև 50-ական թվականներին հռոմեական զորավար Կորբուլոնի՝ Հայաստան կատարած ավերիչ արշավանքների պատմությունը։ Նա անբարյացակամ է տրամադրված և հաճախ չի թաքցնում իր թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ։

Հայ-պարթևական զինական դաշինքը 50—60-ական թվականներին Հռոմի համար այնպիսի ցնցող անակնկալներ բերեց, որ կայսրության բարձր շրջանների հետ կապված ու նրանց քաղաքականությունը «բարբարոս» Արևելքում գովերգող Տակիտոսը պատմության անողոք դասերից հարկադրված, այդ իրադրությունները նկարագրում է գրեթե անկողմնակալ ձևով։ Հեղինակը հայտնում է, որ պատմության այդ շրջանը շարադրելիս ինքն օգտագործել է անձամբ Կորբուլոնի գրառումները։ Դա է պատճառը, որ Տակիտոսի «Տարեգրությունների» հատկապես այդ հատվածներն աչքի են ընկնում ամենայն մանրամասնությամբ և ճշմարտացիությամբ։ Այստեղ նա հանգամանորեն պատմում է Կորբուլոնի արշավանքների մասին, նկարագրում Պետոսի ներխուժումը Հայաստան և նրա ջախջախումը հայ-պարթևական միացյալ ուժերի կողմից Հռանդեայի մոտ 62 թվականին։ Հռոմեացի հեղինակը չի մոռանում ասել, որ պարտված հռոմեացիներին հայերը հարկադրեցին անցնել իրենց նիզակների տակով, որը ամենամեծ նվաստացումն էր համարվում հին աշխարհում։ Դրանից հետո հռոմեական ջախջախված բանակը ցաքուցրիվ հազիվ կարողանում է հեռանալ դեպի հարավ։ Այս առիթով Տակիտոսը անտարբեր չի եղել նաև հայ-հռոմեական քաղաքական փոխհարաբերությունների հետագա ընթացքի նկատմամբ և պատշաճ կերպով է նկարագրել Տրդատ Արշակունու Հռոմ մեկնելն ու Ներոնի կողմից Հայոց գահի վրա հաստատվելը[28]։

Հայաստանի հին շրջանի պատմության մասին կարևոր և արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Պլուտարքոսը (մոտ. 45—127)։ Պլուտարքոսը ծագումով հին հունական հարուստ և նշանավոր տոհմից էր։ Ծնվել է Բեհովթիայի Քերոնեա քաղաքում։ Ուսումնառության համար մեկնել է Ալեքսանդրիա և Հռոմ։ Զբաղվել է փիլիսոփայության, քաղաքականության, բարոյախոսության ու գրականության հարցերով և իր ստեղ-

---

[26] Նույնը, էջ 67։

[27] Նույնը, էջ 75։

[28] Կ. Տակիտոս, Տարեգրություններ, Երևան, 1941 (թարգմանությունը Գ. Սուքիասյանի)։

ծագրծական ժառանգությամբ ազդել ուշ շրջանի եվրոպական գրականության վրա։

Պլուտարքոսը, որպես միապետության ու Հռոմեական կայսրության երկրպագու, իր նախորդների նման նույնպես ամեն կերպ մեծարում ու գովերգում է հռոմեացիների նվաճումները Արևելքում։ Դրա համար էլ Պլուտարքոսի տեղեկությունները հատկապես Հայաստանի մասին խիստ միակողմանի ու բացահայտ միտումնավոր են։ Դրանք կարելի է օգտագործել միայն գիտական անաչառ քննության ենթարկելուց հետո։

Պլուտարքոսի պատմագիտական աշխատությունը հայտնի է «Զուգահեռ կենսագրություններ» կամ «Զուգակշիռք» վերնագրով, որտեղ նա շարադրում է հույն և հռոմեացի շուրջ 50 ռազմական ու քաղաքական գործիչների կենսագրությունները։ «Զուգակշիռքը» ամենամանրամասն սկզբնաղբյուրն է Տիգրան Մեծի ու Արտավազդ II-ի ժամանակաշրջանների մասին։ Հռոմեական կայսրության նվաճողական քաղաքականությունը հովանավորող հեղինակն այդ քաղաքականությունն իրականացնող անձնավորություններին ոչ միայն ծայրահեղորեն իդեալականացնում է, այլև շատ հաճախ կեղծում է պատմական փաստերը։ Օրինակ՝ Տիգրանակերտի ճակատամարտի մասին խոսելիս, նա միտումնավոր հայկական զորքերի թիվը հռոմեականի համեմատությամբ շատ ավելի է ցույց տալիս կամ ընթերցողներին փորձում է համոզել, որ Լուկուլլոսը իր արշավանքի ամբողջ ընթացքում կորցրել էր մի քանի զինվոր։ Այսպես, օրինակ, նա գրում է, թե Տիգրանակերտի ճակատամարտի ժամանակ (մ. թ. ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին) հայերի «հետևազորից սպանվել էր տասը բյուրից (100.000—Ս. Մ.-Բ.) ավելի մարդ, իսկ այրուձիից համարյա ոչ մեկը կենդանի չէր մնացել։ Հռոմեացիներից վիրավորվել էին հարյուր մարդ ու սպանվել հինգը»[29]։ Ցավոք, այս հերյուրված թվական տվյալները համարյա նույնությամբ օգտագործել և գիտությանն են հրամցրել նաև եվրոպական պատմաբանները։ Օտար, չեզոք աղբյուրների համադրության միջոցով ակադ. Հ. Մանանդյանը իր «Տիգրան Բ և Հռոմը» աշխատության մեջ խիստ քննադատության ենթարկելով Պլուտարքոսի տեղեկությունները, միաժամանակ բացահայտել է եվրոպական պատմաբանների կեղծիքներն ու հակագիտական տեսակետները։ Պետք է, նշել, սակայն, որ հռոմեացի պատմիչին միշտ չէ, որ հաջողվում է քողարկել ճշմարտությունը։ Նա հաճախ հարկադրված է լինում շեղվել իր սկզբունքից և խոստովանել հռոմեացիների էժանագին հաղթանակների փաստերը։ Օրինակ, նա իր գրքում չի կարողանում թաքցնել, որ Տիգրանակերտը ընկավ քաղաքի հույն վերաբնակիչների դավաճանության պատճառով, որ դեպի Արտաշատ սկսած արշավանքի ժամանակ Տիգրան Մեծն այնքան էր ահաբեկել ու հյուծել Լուկուլլոսի զորքերին, որ վերջիններս բացահայտորեն հրաժարվում էին առաջ շարժվել ու պահանջում էին հետ գնալ[30]։ Պլուտարքոսը պատմում է նաև Պոմպեոսի արշավանքի և Տիգրանի հետ նրա կնքած պայմանագրի մասին։ «Զուգակշիռք» աշխատության մեջ մենք արժեքավոր նյութեր ենք գտնում նաև Կրասսոսի արշավանքների և Արտավազդ II-ի գործունեության մասին։ Հեղինակն այստեղ էլ խոստովանում է, որ Անտոնիոսին հաջողվեց միայն խաբեության միջոցով ձեռք գցել Արտավազդին ու տանել Եգիպտոս։

II—III դարերում Հռոմեական կայսրության համաշխարհային դերը էլ ավելի բարձրացավ և նրա տիրապետության սահմաններն անչափ ընդարձակվեցին։ Այդ ժամանակ կայսրության տարածքներում ապրող բոլոր ազատ բնակիչները, անկախ ազգությունից ու կրոնից, ստացան հռոմեական քաղաքացու իրավունքներ։ Ահա հենց այս պայմաններից էլ բխում էր հռոմեական համընդհանուր պատմություն գրելու անհրաժեշտությունը, որը փաստորեն համաշխարհային պատմության տեսք ուներ։

Հռոմեական պատմագրության այս եղանակի հետևորդը դարձավ Դիոն Կասսիոս Կոկկեյանոսը, որը ծնվել է Հունաստանի Նիկիա քաղաքում, հույն ազնվականի ընտանիքում ու ստացել իր ժամանակի ամենաբարձր կրթությունը։ Դիոն Կասսիոսի ապրած ժամանակը համարում են 155—235 թվականները։ Հայտնի է, որ ապագա պատմիչը 25 տարեկան հասակում դառնում է Հռոմի սենատի անդամ և իր ժամանակակից բոլոր կայսրերի օրոք վարում պետական բարձր պաշտոններ. երկու

[29] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 242 (թարգմանությունը ռուսերենից Պ. Հ. Հովհաննիսյանի)։



[30] Նույնը, էջ 248։

անգամ ընտրվում է Հռոմի կոնսուլ (211 և 229 թվականներին)։ Մահից քիչ առաջ, քաղաքական անբարենպաստ պայմաններից դրդված, նա վերադառնում է հայրենի Նիկիա քաղաքն ու մինչև կյանքի վերջը ապրում այնտեղ։ Նիկիայում նա շարունակում է գրել «Հռոմեական պատմություն» գիրքը։ Հունարեն գրված այդ գրքի վրա հեղինակը աշխատել է շուրջ երեսուն տարի։ Այն բաղկացած է եղել 80 գրքերից, այսինքն՝ գլուխներից, որից պահպանվել է միայն 24-ը։ Աշխատությունն ընդգրկում է Հռոմի ու նրա հետ առնչվող ժողովուրդների շուրջ 1000 տարվա պատմությունը՝ Հռոմի պատմության ամենահնամենի ժամանակներից մինչև 229 թվականը։ Համեմատաբար ճիշտ ու հավաստի են գրքի այն բաժինները, որոնք վերաբերում են հեղինակի ապրած ժամանակներին։ Գրքի այդ բաժինների աղբյուրագիտական արժեքը բարձր է նախ նրանով, որ հեղինակը բարձր պաշտոններ վարելով կայսրության զանազան շրջաններում, պատմական ու քաղաքական իրադարձություններին տեղյակ էր մոտիկից, ապա նաև նրա համար, որ նա իրեն անհրաժեշտ պաշտոնական փաստաթղթերը ձեռք էր բերում և օգտագործում անարգել։ Դիոն Կասսիոսի մասին նույնիսկ այդքան համառոտ ասածներից կարելի է կռահել, որ նրա շարադրանքի մեջ էլ պետք է զարգացվեին Հռոմեական կայսրության մեծապետական հայացքներն ու արհամարհանքը հատկապես արևելքի ու այնտեղ ապրող ժողովուրդների նկատմամբ։

Դիոն Կասսիոսի պատմությունը գրված է այն ժամանակ ընդունված ժամանակագրության կամ տարեգրության ձևով։ Պատմիչը քաղաքական դեպքերին հատուկ ուշադրություն դարձնելով, գրեթե ոչինչ չի ասում Հռոմի կամ նրա հետ շփվող երկրների ներքին՝ հասարակական-տնտեսական հարաբերությունների մասին։ Շատ բան տեսած ու շատ շատերի հետ շփված պատմիչն այնուամենայնիվ զերծ չէ ժամանակաշրջանի սահմանափակվածությունից. նա երբեմն հավատում է հրաշքներին, երազներին և այլն։ Այս թերությունները, սակայն, չեն նսեմացնում Դիոն Կասսիոսի պատմության գիտական արժեքը։ Այն առաջնակարգ ու կարևոր սկզբնաղբյուր է հին աշխարհի և, մասնավորապես Հայաստանի հին շրջանի պատմության ուսումնասիրության համար։

Դիոն Կասսիոսի պատմության մեջ ուշադրության արժանի են հատկապես մ. թ. ա. I մինչև մ. թ. II դարն ընկած ժամանակաշրջանին վերաբերող հատվածները, որոնք երբեմն պարունակում են այնպիսի դեպքեր ու իրադարձություններ, որպիսիք մենք չենք գտնում այլ հեղինակների գործերում։ Միհրդատ VI Եվպատորի և Տիգրան Մեծի Լուկուլլոսի դեմ մղած կռիվների առիթով, պատմիչը խոստովանում է, որ Տիգրանակերտի մոտ «...բարբարոսները նետաձգությամբ և (պաշարողական) մեքենաների վրա թափված նավթով մեծապես վնասեցին նրան։ Այս դեղանյութը կուպրաշատ էր և բոցավառվող, այնպես որ հրկիզում էր այն ամենը, ինչի կպչում էր, և ոչ մի հեղուկով հեշտ չէր այն հանգցնել։ Այս բանից Տիգրանը նորից սրտապնդվելով այնքան մեծ զորքով առաջ եկավ, որ նույնիսկ ծիծաղեց այնտեղ գտնվող հռոմայեցիների վրա...»[31]։ Այնուհետև Դիոն Կասսիոսը, փաստորեն կեղծելով պատմությունը, եզրակացնում է, թե իբր Լուկուլլոսին պաշտոնից հեռացրեցին «Տիգրանին չհետապնդելու համար», այնինչ, իրականում, հռոմեական զորավարը Հայաստանում խայտառակ պարտություն կրելով, ստիպված նահանջեց Կիլիկիա և դրանով էլ ավարտեց իր քաղաքական կարիերան։ Սակայն, Հռոմեական պետության հեղինակությանը նախանձախնդիր պատմիչը երբեմն թույլ է տալիս անզգույշ արտահայտություններ, որոնք ոչ միայն բացահայտում են եղելությունը, այլև բնորոշում Հռոմի ձեռք բերած հաղթանակների իրական պատկերը։ Այսպես, խոսելով Լուկուլլոսի կողմից հայոց մայրաքաղաք Տիգրանակերտի գրավման մասին, նա ասում է, որ վերջինս «...Տիգրանակերտը գրավեց այնտեղ բնակեցված օտարների ապստամբության հետևանքով։ Քանզի նրանց մեծ մասը կիլիկեցիներ էին, որոնք մի ժամանակ տեղահանվել էին իրենց երկրից և այժմ գիշերով հռոմայեցիներին ներս թողեցին»[32]։ Կամ մի այլ տեղ խոսելով հայերի և հռոմեացիների կռիվների մասին, խոստովանում է, որ «...թշնամիները որևէ վնաս չկրեցին, այլ նրանք նետ դառնալով և հետապնդողներին նետահարելով, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին։ Ու

---

[31] Դիոն Կասսիոս, Հռոմեական պատմություն, տե՛ս Հավսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, Երևան, 1976, էջ 125 (թարգմանությունը Ս. Մ. Կրկյաշարյանի)։

[32] Նույնը, էջ 126։

վերքերը ծանր էին ու դժվար բուժելի. քանզի նրանք գործածում էին երկծայր նետեր, և ծայրերը այնպես էին իրար ագուցված, որ նետերը թե մարմնի որևէ մասում մնալու և թե դուրս քաշվելու դեպքում, արագորեն սպանում էին, որովհետև երկաթյա ծայրերից մեկը, որը չէր ամրացված, մնում էր վերքի մեջ»[33]։ Խոսքն այստեղ, անշուշտ, վերաբերում է Արածանիի ճակատամարտին, որովհետև փաստորեն այդ ճակատամարտից հետո Լուկուլլոսը չշարունակեց իր ընթացքը դեպի Արտաշատ, որը նրա գլխավոր նպատակն էր, այլ սկսեց նահանջել։

«Հռոմեական պատմության» մեջ ուշագրավ ու արժեքավոր տեղեկություններ են տրվում նաև Պոմպեոսի ու Միհրդատի միջև եղած կռիվների մասին, որոնց շատ մանրամասն, հանգամանալից ու հաջորդական նկարագրությունները կասկած չեն թողնում, որ դրանց համար հռոմեական պատմիչն անպայման պետք է օգտագործած լիներ պաշտոնական զեկուցագրեր, ամփոփագրեր, օրագրեր և այլ նյութեր։ Այս դեպքերը շարադրելիս, Դիոն Կասսիոսը երբեմն խոսում է այնպիսի հարցերի մասին, որոնց մյուս հեղինակները գրեթե ուշադրություն չեն դարձրել։ Օրինակ, խոսելով Միհրդատի՝ Պոմպեոսից կրած պարտության մասին, նշում է, որ նա «...շտապեց դեպի Տիգրանը. բայց երբ նրա մոտ նախ բանագնացներ ուղարկեց, ոչ մի սիրալիրության չհանդիպեց, քանի որ (Տիգրանի) որդին Տիգրանը, ապստամբել էր (հոր) դեմ, իսկ սա կասկածում էր, որ Միհրդատը, լինելով նրա պապը, հրահրել էր այդ վեճը իր դեմ»[34]։ «Հռոմեական պատմության» համապատասխան գլուխներում հաջորդաբար խոսվում է Կրասոսի արևելյան արշավանքի, նրա խայտառակ պարտության ու անփառունակ վախճանի, Անտոնիոսի՝ Հայոց թագավոր Արտավազդ II-ի նկատմամբ վարած թշնամական, խարդախ ու խորամանկ քաղաքականության մասին, որի շնորհիվ, նա կարողացավ «ձերբակալելով նրան... մյուս գերիների հետ... (Արտավազդին, նրա կնոջն ու որդիներին, Ս. Մ.-Բ.) ևս իր առջևից Ալեքսանդրիա ուղարկելով իբր հաղթահանդեսի շքերթի համար... և բացի այդ ամենից, որ շնորհեց Կլեոպատրային, նրան բերեց ընտանյոք հանդերձ նաև Արմենին (Արտավազդին—Ս. Մ.-Բ.), որը ոսկե կապանքների

[33] Նույնը, էջ 128։

[34] Նույնը, էջ 139։



մեջ էր։ Իսկ (Կլեոպատրան) նստած էր բազմության մեջտեղ, արծաթապատ բեմում, ոսկեզօծ գահավորակի վրա։ Սակայն բարբարոսները ոչ աղերսեցին նրան, ոչ իսկ երկրպագեցին, թեպետև շատ էին ստիպում և շատ էին հուսադրում ազատություն խոստովանելով. ու որովհետև նրան պարզապես իր անունով կոչեցին, նրանք վեհամիտ մարդկանց համբավ շահեցին»[35]։

Դիոն Կասսիոսի գրքում արժեքավոր տեղեկություններ կան նաև Արտավազդ II-ի մահվանից հետո Հայաստանում սկսված հակահռոմեական պայքարի, պարթև Արշակունիների գահակալ Վաղարշ I-ի ու նրա եղբայր Տրդատի՝ հայերի հետ համատեղ հռոմեացիների դեմ մղած կռիվների պատմության, Հռանդեայի ճակատամարտի, Տրդատի Հռոմ մեկնելու, Ներոնի կողմից թագադրվելու և այլ հարցերի մասին։

Մ. թ. ա. II դ. սկսած մինչև մ. թ. առաջին հարյուրամյակներն ընկած ժամանաշրջանի մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև հույն հեղինակ Պոլինեոսը (II դար), հռոմեացի պատմիչ Սվետոնիոս Տրանկվիլը (I—II դար) և ուրիշներ։

## 7. ԱՐԱՄԵԵՐԵՆ, ԼԱՏԻՆԵՐԵՆ ԵՎ ՀՈՒՆԱՐԵՆ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խեթա-ասորեստանյան և Վանի թագավորության արձանագրություններից հետո հայոց պատմության գրավոր սկզբնաղբյուրների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում նաև արամեերեն, լատիներեն և հունարեն վիմագիր արձանագրությունները, որոնք պարբերաբար հայտնաբերվել ու այսօր էլ հայտնաբերվում են Հայաստանի տարածքում։ Եվ թեև այդ կարգի սկզբնաղբյուրները ընդհանրապես իրենց բնույթին հատուկ շատ սեղմ են և մեծ մասամբ մեզ են հասել եղծված ու ջարդված վիճակում, ոչ ամբողջական ձևով, որի հետևանքով էլ նրանց վերծանումն ու ընթերցումը լուրջ տարակարծությունների տեղիք է տալիս, այնուամենայնիվ, նրանք կարևոր աղբյուրներ են և ինչ որ չափով օգնում են պատմության կնճռոտ հարցերը լուսաբանելու։

1906 թվականից սկսած Սևանի ավազանում հայտնաբեր-

[35] Նույնը, էջ 186։

ված 5, ապա նաև 1961 թվականին Գառնիի հեթանոսական տաճարի շրջակայքում և 1964 թվականին Իշխանասարի (Սիսիան) ստորոտներում գտնված մեկական և Իջևանի շրջանի Թեղուտ գյուղում գտնված 2 արամեատառ արձանագրությունները անմիջապես իրենց վրա են բևեռել հին լեզուների մասնագետների ուշադրությունը ինչպես մեզ մոտ, այնպես էլ արտասահմանում։ Այս արձանագրությունները վերծանողներից ու մեկնաբանողներից առանձնապես լուրջ հաջողություններ են ունեցել Ա. Բորիսովը, Կ. Տրևերը և Ա. Փերիխանյանը, ըստ որոնց դրանք մինչև այժմ հայտնի արամեական արձանագրությունների փոքրասիական խմբի ամենաարևելյան նմուշներն են։ Գիտական կարևորագույն հետաքրքրություն են ներկայացնում Սևանի արձանագրությունները, որոնցում հնարավոր է կարդալ Զարեհի որդի Հայոց Արտաշես թագավորի անունը։ Ուսումնասիրողները ենթադրում են, որ նշված արձանագրությունները Մովսես Խորենացու հիշատակած հենց այն սահմանաքարերն են, որոնք հայոց Արտաշես I թագավորի հրամանով դրվում էին գյուղերի և ագարակների սահմանները որոշելու համար։ Սևանի արձանագրություններից մեկում որպես Արտաշեսի տոհմանուն նշվում է Երվանդական անունը։ Դրանով հայոց նոր թագավորատոհմի (Արտաշեսյան) հիմնադիրը ցանկացել է, նախկին Երվանդունիների հետ իրական թե ոչ իրական ազգակցությունը շեշտելով, իրավաբանորեն հիմնավորել իր տոհմի գահակալությունը։

Իշխանասարի արձանագրությունները նույնպես պատկանում են Արտաշես I-ի Սևանի ավազանում թողած խմբին։ Ուշագրավ են արձանագրության 3—6-րդ տողերը, որոնք ներկայացնում են Արտաշես I-ի տիտղոսը՝ դարձյալ Երվանդյան ծագման շեշտմամբ. «Արտաշես թագավոր, Երվանդյան Բարին՝ որդի Զարեհի»։ 7—9-րդ տողերում հիշատակվում է Հայոց թագավորի նեկփառ անունով պաշտոնյա, Ախշահրսարտի որդին, որը կրում էր «թագադիր» տիտղոսը։ Այստեղից կարելի է հանգել այն եզրակացությանը, որ հայոց արքունիքում հետագայում բազմիցս հիշատակվող և բավական ծանրակշիռ տեղ գրավող «թագադիր ասպետի» պաշտոնը գոյություն ուներ դեռևս մ. թ. ա. II դարում, Արտաշես I-ի ժամանակ և գուցե ստեղծվել էր հենց նրա կողմից։

Նախաերկրաշարժյան Սպիտակ քաղաքի տարածքում հայտնաբերվել է արամեերեն ևս մեկ արձանագրություն, որը պատկանում է Արտաշես I-ի թողած մեզ հայտնի սահմանաքարերի շարքին։ Արձանագրությունը լավ է պահպանվել և պատմում է այդ տարածքում հայոց թագավորի կատարած հողաբաժանման մասին։ Սպիտակի արամեատառ արձանագրությունը վերծանել է Գ. Տիրացյանը, ըստ որի այն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Արտաշես արքա Երվանդական Բարի, որդի Զարեհի, բաժանեց հողը (...?(միջև)?)»։ Արամեերենը, որ Աքեմենյանների տիրապետության ժամանակ պետական, գրասենյակային լեզու էր, լայն տարածում ուներ Եգիպտոսից սկսած, Փոքր Ասիայով մինչև Հնդկաստան։ Արամեերենի գործածությունը շարունակվեց նաև Աքեմենյանների անկումից հետո և օգտագործվում էր նույնիսկ այնպիսի վայրերում, որտեղ արամեական բնակչություն չկար, ինչպես, օրինակ Հայաստանում։ Սեփական գրերի բացակայության պայմաններում, Հայաստանում նույնպես պաշտոնական գրագրությունները հունարենի հետ միասին կատարվում էին նաև արամեերենով։

Հայաստանի արամեական արձանագրությունները նոր լույս են սփռում նաև իրանական լեզուների հյուսիս-արևմտյան խմբին պատկանող և քիչ հայտնի բարբառի՝ մարերենի ու նրա ազդեցությունների ուսումնասիրության հարցերի վրա։

Նախաարտաշեսյան և արտաշեսյան ժամանակաշրջանների Հայաստանի պատմության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, որոնք որոշ չափով լրացվում և ճշտվում են Արմավիրում 1911 և 1927 թվականներին հայտնաբերված երկու քարաբեկորների վրա պահպանված հունարեն 7 արձանագրություններով։

Ն. Սմիռնովից ու Ա. Բոլտունովայից հետո այդ արձանագրությունների վերծանումով և արժեքավոր ուղղումներով ու ընդհանրացումներով հանդես եկավ Հ. Մանանդյանը[36]։ Արմավիրի արձանագրությունները ենթարկելով խորազնին հետազոտման, նա հանգեց այսպիսի եզրակացությունների. բոլոր արձանագրությունները վերաբերում են մ. թ. ա. III—II դարերին, երբ Հայաստանում իշխում էին Երվանդյանները, և հաղորդում

[36] Հ. Մանանդյան. Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946։

են քաղաքական ու մշակութային արժեքավոր տեղեկություններ։ Պարզվում է, որ Երվանդյանների պետության կենտրոնը եղել է Արմավիրը, որտեղ գոյություն ունեցող հեթանոսական տաճարում դրված էին, հավանաբար Փոքր Ասիայից բերված, Արտեմիսի և Ապոլոնի արձանները։ Արմավիրում գոյություն են ունեցել ծառերի պաշտամունքի վերապրուկներ, որի մասին վկայություն ունի նաև Մովսես Խորենացին (սոսիների սոսափյունով քրմերը գուշակություններ էին անում)։ Երվանդյանների տապալումից հետո Արտաշես I-ը Արտեմիսի ու Ապոլոնի արձանները Արմավիրից տեղափոխում է Արտաշատ՝ իր կառուցած նոր մայրաքաղաքին առանձին շուք տալու համար։

III դ. վերջերին և II դ. սկզբներին Երվանդյանների դիրքերը թուլանում են, և Երվանդ Վերջինը ապահովության համար մայրաքաղաքը Արմավիրից տեղափոխում է նորակառույց Երվանդաշատ քաղաքը, որի մասին հիշատակում է Խորենացին։ Բայց մայրաքաղաքի փոխադրումը Արմավիրի դերը չի նսեմացնում, որովհետև դրանից հետո էլ Արմավիրը մնում է որպես Երվանդյանների կրոնական կենտրոններից մեկը։ Սակայն Երվանդյանների տոհմի վերջին ներկայացուցչի նախազգուշական միջոցառումները նրան չեն փրկում, և II դարի սկզբներին Երվանդյանների ու Արտաշեսյանների միջև սրված պայքարն ավարտվում է վերջինների հաղթանակով։ Երվանդաշատի համար մղվող կռիվներում իր իսկ զինվորի ձեռքով սպանվում է Երվանդը։ Հ. Մանանդյանը եզրակացնում է, որ Երվանդ Վերջինը թաղված է Արմավիրում, որի գերեզմանին կանգնեցված մահարձանի բաղադրիչ մասը 1927 թվականին հայտնաբերված քարաբեկորն է՝ հունարեն չորս արձանագրություններով հանդերձ։ Արմավիրի արձանագրությունների մասին միանգամայն ինքնատիպ եզրակացության է հանգել հայոց թատրոնի պատմության հմուտ մասնագետ Գ. Գոյանը։ Նրա ենթադրությամբ, արձանագրությունները, Արտավազդ II թագավորի հունարեն լեզվով գրած ողբերգությունների հատվածներն են։

Հայաստանի տարածքում հայտնաբերված հունարեն արձանագրություններից, իհարկե, ամենաուշագրավը Գառնիի արձանագրությունն է, որը 1954 թ. գյուղի գերեզմանոցում պատահաբար գտել է նկարիչ Մ. Մարյանը։ Արձանագրությունը, թեև համեմատաբար քիչ է վնասված և կարդացվում է ոչ մեծ



դժվարությամբ, այնուամենայնիվ բազմաթիվ ուսումնասիրողների մոտ լուրջ տարակարծությունների տեղիք է տվել։ Արձանագրության առաջին ընթերցողներից՝ Ս. Լիսիցյանից, Հ. Մանանդյանից և Ա. Աբրահամյանից հետո, նրա վերծանումով և գիտական խոր հետազոտումով զբաղվեց Կ. Տրևերը։ Գիտնականը պատմալեզվագիտական բազմաթիվ փաստարկումներով անհերքելիորեն ապացուցում է, որ այդ արձանագրությունը փորագրվել է 77 թվականին Հայոց Տրդատ I-ի գահակալության ժամանակ, ոչ թե անմիջապես թագավորի, այլ նրա մերձավորներից մեկի՝ Մենեսասի, կողմից, որին հանձնարարված է եղել իր միջոցներով կառուցել կամ վերակառուցել Գառնիի ամրոցի պարսպամասերից մեկը, որտեղ և հենց սկզբից տեղադրված պետք է լիներ այդ արձանագրությունը։ Իսկ ինչ վերաբերում է Մովսես Խորենացու հիշատակությանը Գառնիի բերդի շինարարության մասին, ապա Տրևերը գտնում է, որ Պատմահայրը տեղում ծանոթանալով կառույցին՝ թյուրիմացաբար է այն վերագրել Տրդատ III-ին։ Ուշադրության արժանի է Կ. Տրևերի կողմից արձանագրության մեջ հայերեն «սպարապետ», «ագարակ» և «տեղ» բառերի ընթերցումը, որով հաստատվում է, որ նախամաշտոցյան շրջանում հայերենի համար օգտագործվել է հունարեն գիրը։ Իր եզրակացությունները հիմնավորելու համար գիտնականը մեջ է բերում Խորենացու համապատասխան հիշատակությունը, որտեղ ասվում է, թե Գառնիի շինարարությունն ավարտելուց հետո, Տրդատը՝ «... գրեալ ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրով», միանգամայն իրավացիորեն «հելլենացի գրով»-ը ոչ թե հելլենների լեզվով հասկանալով, այլ ուղղակի հունարեն գրերով, ինչպես պատմիչի մոտ է։

1967 թվականին, հողային աշխատանքների ժամանակ, ՀՀ Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղում հայտնաբերվեցին լատիներեն երկու արձանագրություններ, որոնց վերծանումով զբաղվեց Բ. Առաքելյանը։ Պարզվում է, որ արձանագրությունները տեղադրված են եղել հին Հայաստանի մայրաքաղաք Արտաշատի շրջակայքում։ Դրանցից մեկը համեմատաբար լավ է պահպանվել։ Այնտեղ թվարկվում են հռոմեական կայսր Տրա-

յանոսի տիտղոսները, և հիշատակվում է ինչ-որ կառույց, որի վրա գրված է եղել արձանագրությունը, իսկ երկրորդը հռոմեական զինվորի տապանաքարի վրա թողնված արձանագրություն է։ Արտաշատի լատիներեն արձանագրությունները հաստատում են, որ 114 թվականին Տրայանոսը, նվաճելով Հայաստանը և Հայոց Պարթամասիր թագավորին գահընկեց անելով, երկրի տարբեր մասերում պահապան զորքեր էր թողել, որոնց կայատեղերից մեկն էլ Արտաշատն էր։ Արտաշատի կայազորային ուժերի մեջ էին մտնում իտալական I և սկյութական IV լեգեոնները[37]։

Առավել հետաքրքրություն ներկայացնող լատիներեն արձանագրություններից կարելի է հիշատակել 1879 և 1882—1883 թվականներին Խարբերդ քաղաքի մոտակայքում գտնվող Քեսրիկ և Կովանք հայկական գյուղերում հայտնաբերված երեք արձանագրությունները, որոնց ուսումնասիրությամբ այն ժամանակ զբաղվել են Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը և Թ. Մոմզենը, իսկ հետագայում դրանց անդրադարձել է նաև Կ. Տրևերը։ Այս երեք արձանագրություններն էլ ունեն համարյա միևնույն բովանդակությունը և ընթերցվում են ոչ մեծ դժվարությամբ։ Այնտեղ տրվում են Հռոմի կայսր Ներոնի, նրա զորավար Կորբուլոնի և այլ պաշտոնյաների անունները։ Ուսումնասիրողները, համարյա առանց տարաձայնության, այս արձանագրությունները վերագրում են Կորբուլոնին, որը 62 թվականին Հրանդեայում հայ-պարթևական ուժերից հռոմեացիների կրած խայտառակ պարտությունից հետո, հարկադրված նախազգուշական միջոցներ էր ձեռնարկել իր դիրքերը ամրացնելու համար։ Այդ միջոցառումներից մեկն էլ Եփրատի վրա նրա կառուցած կամուրջն էր, որի շինարարական աշխատանքներին էլ, հավանաբար, վերաբերում են հիշյալ արձանագրությունները։

Հունարեն և լատիներեն արձանագրությունները, իհարկե, վերևում թվարկվածներով չեն սահմանափակվում։ Այդպիսի արձանագրություններ հայտնաբերվել են նաև Տիգրանակերտում, Ապարանում, Էջմիածնում, և նույնիսկ հեռավոր Հռոմում, Երուսաղեմում, Հյուսիսային Կովկասի Դոխովկա ստանիցայում և այլուր, որոնք նույնպես կարևոր սկզբնաղբյուրներ են Հայաստանի քաղաքական ու մշակութային պատմության ուսումնասիրության համար։ Քանի որ այդ արձանագրությունները հայագիտական գրականության մեջ ժամանակին տարբեր հեղինակներ վերծանել, ճշգրտել ու արժեքավորել են, դրանց մանրամասն վերլուծությունը ներկա դասագրքում ծրագրից դուրս է։

---

[37] Տե՛ս Բ. Առաքելյան. Լատիներեն արձանագրությունները Արտաշատ մայրաքաղաքից, «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4։

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

## Ա. ՎԱՂ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆ

### 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

**Կորյուն**

Կորյունի մասին կենսագրական տեղեկությունները աղքատիկ ու կցկտուր են։ Հեղինակի հաղորդումներից իմանում ենք, որ նա եղել է Մեսրոպ Մաշտոցի աշակերտը։ Մի քանի ուրիշ երիտասարդների հետ, Հայաստանում որոշ գիտելիքներ ձեռք բերելուց հետո, ուղարկվել է Բյուզանդիա՝ ուսումը շարունակելու, եկեղեցական անհրաժեշտ գրականություն ձեռք բերելու և դրանցից ամենից կարևորները հայերեն թարգմանելու համար։ Կոստանդնուպոլսում նա ընկերացել է V դարի նշանավոր փիլիսոփա Եզնիկ Կողբացուն և Ղևոնդին։ Հունաստանում հայ երիտասարդները կատարելով տրված հանձնարարությունները վերադառնում են հայրենիք՝ իրենց հետ բերելով 431 թվականի Եփեսոսի եկեղեցական ժողովի կանոններն ու այլ գրքեր։

Հայրենիք վերադառնալուց հետո Կորյունը, որպես կրթված ու բանիմաց անձնավորություն, շատերի նման ուղարկվում է գավառները՝ ուսուցչություն անելու։

Մեսրոպ Մաշտոցի մահվանից հետո Կորյունը մտահոգված էր նրա հիշատակը հավերժացնելու խնդրով։ Եվ երբ մի այդպիսի աշխատություն գրելու որոշակի հանձնարարություն է ստանում կաթողիկոսի տեղապահ Հովսեփ Հողոցմեցուց (440—452), սկսում է գրի առնել Մեսրոպ Մաշտոցի կենսագրության ու գործունեության պատմությունը։

Կորյունի աշխատությունը փոքրածավալ մի գրքույկ է՝ «Պատմութիւն վարուց և մահուան առն երանելւոյ սրբոյն Մաշթոցի վարդապետի մերոյ թարգմանչի ի Կորիւն վարդապետէ



յաշակերտէ նորին» վերնագրով, որը ավելի շատ հայտնի է ուղղակի «Վարք Մաշտոցի» անունով։ Աշխատության վերնագիրն իսկ ցույց է տալիս, թե երախտապարտ աշակերտը ինչպիսի սեր ու համակրանք է ունեցել Մեսրոպ Մաշտոցի ու նրա հիշատակի հանդեպ։ Կորյունն իր գրքույկը գրել ու ավարտել է Մաշտոցի մահվանից հետո, հավանաբար 443—451 թվականներին, այսինքն՝ մինչև Ավարայրի ճակատամարտն ու քաղաքական իրադարձությունների բարդացումը Հայաստանում։

Մաշտոցի կենսագիրը կոչումով և զբաղմունքով եղել է հոգևորական և որպես այդպիսին իր աշխատությունը գրելու ժամանակ ավելի շատ անդրադարձել է իր ուսուցչի եկեղեցական ու կրոնական գործունեությանը և, ընդհակառակն, համեմատաբար քիչ է խոսել նրա կենսագրության մյուս կարևոր կողմերի մասին։ Սակայն, անկախ դրանից, Մեսրոպ Մաշտոցի մասին եղած սկզբնաղբյուրների մեջ առաջնությունը անպայման պատկանում է Կորյունի գրքին, իսկ ժամանակակից կամ հետագա հեղինակների հաղորդումները, չնչին բացառություններով միայն, նրա ասածների կրկնություններն են։

Ինչպես ամեն մի գրավոր սկզբնաղբյուր, այնպես էլ Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունը կարելի է ըստ արժանվույն գնահատել, եթե հաշվի առնվի այն հանգամանքը, թե հեղինակը որոշակի ինչ ծրագիր է ունեցել և ինչպես է այն գործնականում կատարել։ Այս խնդրում ուսումնասիրողները տարակուսանքներ ունենալ չեն կարող, որովհետև Կորյունը իր գրքի հենց առաջին տողերում որոշակիորեն հայտնում է, թե ինքը մտածում է գրել հայկական գրերի ու նրա ստեղծողի մասին։ Հեղինակը հենց սկզբից հայտնում է իր ծրագիրը։ «ԶԱստքանազեան ազգին և զՀայաստան աշխարհին զաստուածապարգեւ գրոյն, եթէ ե՛րբ և յորում ժամանակի մատակարարեցաւ և որպիսի՛ արամբ այնպիսի նորոգատուր աստուածեղէն շնորհս երեւեցաւ և վասն նորին լուսաւոր վարդապետութեան և հրեշտակաբար կրօնիցն առաքինութեան զմտաւ ածելով յիշատակարանս առանձին մատենանշան ծաղկեցուցանել»[1]։ Պետք է ասել, որ Կորյունը մինչև վերջ հաստատ է մնացել իր նպատակադրմանը և նրա սահմաններից դուրս չի եկել։ Մեսրոպ Մաշտոցի կենսագիրը կարողացել է ստեղծել մի այնպիսի աշխա-

[1] Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 22։

տություն, որը թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ ամբողջապես տարբերվում է V դարի հայկական պատմագիտական մյուս երկերից։ Կորյունը այդ ժամանակ համարձակորեն ոտք դրեց գրական-ստեղծագործական այն ուղու վրա, որը կոչվում է վարքագրություն։

Այս բոլորից հետո, իհարկե, Կորյունի աշխատության նրկատմամբ պատմագիտական բնույթի ավելի ընդարձակ պահանջներ ներկայացնել չի կարելի, որովհետև նա քաղաքական պատմության հարցերին անդրադարձել է այնքանով, որքանով որ դրանք առնչվում էին Մաշտոցի ու նրա գործակիցների աշխատանքների հետ։ Այսինքն՝ Հայաստանի քաղաքական պատմությունը գտնվելով հեղինակի ուսումնասիրության ոլորտից դուրս, նրա գրքում գրավել է երկրորդական տեղ։

Կորյունի գրքի երկրորդ հատվածը նույնպես առաջաբանի դեր է կատարում։ Այստեղ հեղինակը Աստվածաշնչից կատարած համապատասխան մեջբերումներով հիմնավորում է իր ձեռնարկումն այն իմաստով, որ ոչ միայն թույլատրելի է «գրրով նշանակել զվարս արանցն կատարելոց», այլև այդ անհրաժեշտ է, որպեսզի այդ «կատարյալ» մարդիկ «և հոգևոր, և մարմնավոր փայլով փայլեն»։

Մ. Աբեղյանը միանգամայն ճիշտ է նկատում, որ Մաշտոցի կենսագրի՝ իր մեծ ուսուցչի մասին արած դրվատանքի խոսքերն ու դրանք Աստվածաշնչի հեղինակավոր մեջբերումներով հաստատելը ոչ թե հեղինակի անձնական զգացմունքներն արտահայտելու համար էր, այլ ուղղված էր Մեսրոպ Մաշտոցի և նրա հետևորդների թշնամիների դեմ, այսինքն՝ հայ եկեղեցականների հետադիմական թևի ներկայացուցիչների դեմ, որոնց գործունեությունը նույնիսկ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի կենդանության օրոք շատ զգալի էր։ Ուրեմն, Կորյունը Մեսրոպին որպես կրոնավորի բարձրացնելով, աշակերտական ակնածանքից բացի, ունեցել է շատ ավելի կարևոր նպատակներ։ Նա հայոց եկեղեցու և մտավորականության նախապետին առաքյալների և նույնիսկ Հիսուսի հետևորդ համարելով ու նրան ներկայացնելով որպես ժամանակի ամենահեղինակավոր անձնավորություն, որին նա լիուլի արժանի էր, աշխատում էր կոծկել թշնամիների բերանը և հայոց դավանանքը զերծ պահել օտար, հատկապես ասորական եկեղեցու ազդեցություններից։ Այստեղից կարծեք պարզվում է նաև այն



հարցը, թե ինչու է Կորյունն իր գրքում ավելի շատ խոսել Մեսրոպ Մաշտոցի եկեղեցական գործունեության մասին։

Կորյունն իր գրքի երրորդ հատվածից անցնում է բուն նյութին և սկսում է պատմել Մեսրոպ Մաշտոցի ծննդյան ու գործունեության մասին։ Մենք Կորյունի գրքից իմանում ենք, որ Մեսրոպ Մաշտոցը որպես կրթված, գրագետ ու զինվորական գործի մեջ հմուտ երիտասարդ, պաշտոնավարել է հայոց Արշակունիների պալատում, հետո դարձել է հոգևորական ու շրջագայել Հայաստանի մի քանի գավառներում, ապա կաթողիկոսի ու թագավորի հանձնարարությամբ մեկնել Միջագետք՝ հայկական տառերը հորինելու համար։ Եդեսիայում նրան հաջողվում է լուծել այդ մեծ ու դժվարին խնդիրը և վերադառնալ հայրենիք։ Մեսրոպ Մաշտոցի վարքագիրը այնուհետև պատմում է, թե ինչպիսի հանդիսավորությամբ են ընդունել Մաշտոցին, ինչպես է նա անդադրում շրջագայել Հայաստանի արևելյան ու արևմտյան հատվածներում, կամքի անհողդողդ հաստատակամությամբ ինչպիսի դժվարություններ է հաղթահարել երկրի երկու մասերում դպրոցներ բանալու և հայ մանուկներին իր՝ արտասահմանում կրթություն ստացած առաջադեմ աշակերտների ձեռքով գրագիտությանը հաղորդակից դարձնելու համար։ Կորյունի գրքում Մեսրոպ Մաշտոցը հանդես է գալիս որպես մի ոչ սովորական անձնավորություն, որն օժտված է եղել անսպառ եռանդով և մեծ հեղինակությամբ, որի համբավը արդեն դուրս էր եկել Հայաստանի սահմաններից ու տարածվել նաև հարևան երկրներում։ Նրան հարգել ու մեծարել են Աղվանքում ու Վրաստանում և հրավիրել օգնելու վրացական ու աղվանական գրերի ստեղծման գործին։ Այս փաստը մեկ անգամ ևս հավաստում է հայ և վրացի ժողովուրդների մշակութային համագործակցությունը պատմական անցյալում։

Կորյունի երկը բավականին նյութ է պարունակում բորբորիտների աղանդավորական շարժման մասին, որը, ինչպես պատմիչն է վկայում, ընդգրկելով Արևելյան ու Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններ, լուրջ մտահոգություն էր պատճառում ինչպես հայկական, այնպես էլ բյուզանդական եկեղեցիներին։

«Վարք Մաշտոցի» աշխատությունն ավարտվում է Մեսրոպ Մաշտոցի մահվան և Օշականում թաղվելու մանրամասն նկարագրությամբ։ Կորյունը թեև ժամանակագրության վրա

քիչ է ուշադրություն դարձնում, բայց մեծ մասամբ տալիս է ճշգրտված թվականներ, եթե չհաշվենք, առանձին վրիպումներն ու սխալները, որոնք միգուցե կատարվել են ուշ ժամանակների արտագրողների մեղքով։ Մեր այս հեղինակի լեզուն ճոռոմ է ու ավելորդություններով, բարդություններով խճողված։

Կորյունի աշխատությունը հրատարակվել է մի քանի անգամ։ Գիտահամեմատական լավագույն հրատարակությունը համարվում է 1941 թվականին Երևանում լույս տեսածը, որը կատարել է Մ. Աբեղյանը։ Կորյունի երկը թարգմանվել է նաև աշխարհաբար, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն և անգլերեն։

**Ագաթանգեղոս** Ագաթանգեղոս հունարեն նշանակում է բարի, լավ լրաբեր կամ հրեշտակ։ Նրա կենսագրության մասին մենք որոշակի ոչինչ չգիտենք, իսկ այն, ինչ հեղինակն է իր մասին հաղորդում, լուրջ տարակուսանքների տեղիք է տալիս։ Այսպես, Ագաթանգեղոսը իր գրքի առաջաբանում գրում է. «Արդ՝ հրաման հասեալ առ իս ոմն Ագաթանգեղոս, որ ի քաղաքէ ի մեծն Հռովմայ, և վարժեալ հայրենի արուեստիւ, Հռոմայերէն և Յունարէն ուսեալ դպրութիւն, և ոչ կարի ինչ անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրաց. և ի վերայ այսուցիկ հասեալ ի դուռն Արշակունւոյ, յամս քաջի և առաքինւոյն, ուժեղ և պատերազմողն Տրդատայ...»[2] և այլն։ Ստացվում է, որ Ագաթանգեղոսը Հռոմից էր, լավ տիրապետում էր լատիներեն և հունարեն լեզուներին, եկել էր Հայաստան և ծառայության մտել Տրդատ Արշակունու (խոսքը Տրդատ III-ի մասին է) պալատում։ Հեղինակը շարունակության մեջ ասում է, որ ինքը Տրդատի կողմից պատվեր է ստանում գրելու նրա հոր՝ Խոսրովի և իր ժամանակաշրջանի հայոց պատմությունը։ Այսպես, հավատալով Ագաթանգեղոսի ասածներին, մինչև XIX դարը նրան համարում էին IV դարի հեղինակ և իր ընդգրկած պատմության ժամանակակիցը։ Սակայն, XIX դարից Ագաթանգեղոսի ապրած ժամանակի հարցի շուրջը կասկածանքներ առաջացան, որոնք անպայման հիմնվում էին լուրջ փաստարկների վրա։ Այդ փաստարկների կրկնությունը համարելով մեր ընթերցողներից դուրս,

[2] Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Կանայանց, Տփղիս, 1909, էջ 9—10։



նշենք դրանցից միայն մի քանիսը։ Մասնագետները գտնում են, որ Գրիգոր Լուսավորչի «տեսիլքի» մեջ բերված կրոնական հալածանքների և հավատուրացությունների պատմությունը փաստորեն վերաբերում է ոչ թե IV, այլ V դարին, քանի որ IV դարում նման հալածանքներ չեն եղել, եղածներն էլ այնպիսի չափերի չէին հասնում, որ գրառման կարիք ունենային։ Այնուհետև Ագաթանգեղոսի Պատմության մեջ կան բազմաթիվ հատվածներ, որոնք բառացիորեն վերցված են V դարի հեղինակ Կորյունից։ Այդ փոխառություններն այնքան շատ են ու ակնբախ, որ ոմանք նույնիսկ ենթադրել են, թե Կորյունն ու Ագաթանգեղոսը նույն հեղինակի տարբեր անվանումներն են։ Ուշադրությունից չէր կարող վրիպել նաև այն պարզ փաստը, որ Տրդատի կողմից պատվեր ստացողը իր Պատմության մեջ չէր կարող Հայոց թագավորին խոզ դարձնել և այլն։

Այս և նման փաստարկները կարծեք թե վերջնականապես հիմնավորում են Ագաթանգեղոսի V դարի անձնավորություն լինելը։ Իսկ ինչ վերաբերում է նրա և Կորյունի աշխատությունների նմանություններին, ապա դրանց մեղքը ընկնում է հետագայում Ագաթանգեղոսի գիրքը խմբագրողի վրա, որն իր խմբագրական աշխատանքի ընթացքում ոչ միայն լայնորեն օգտագործել է Կորյունին, այլև Ագաթանգեղոսի երկից շատ հատվածներ ուղղակի դուրս է հանել, որոնք սակայն կան ու պահպանվել են այդ աշխատության հնում կատարված հունարեն և արաբերեն թարգմանություններում։

Ագաթանգեղոսի աշխատության մեջ, որը սկզբնապես անվանվել է «Պատմութիւն և վարք Սրբոյն Գրիգորի», նկարագրվում են III դարում Հայաստանում ծավալված քաղաքական դեպքերը։ Հեղինակը մանրամասն պատմում է Հայոց Խոսրով թագավորի դեմ Սասանյան Արտաշիրի կազմակերպած դավադրության և Անակի ձեռքով նրա սպանության մասին։ Այնուհետև խոսվում է այն մասին, թե ինչպես հայերը վրեժխնդրությամբ լցված, բնաջնջում են Անակի ողջ տոհմը, որից փրկվում և Կեսարիա է տարվում փոքրիկ Գրիգորը։ Հետո նույն ձևով պարսիկներն են ոչնչացնում Խոսրովի տոհմը, իսկ նրա որդուն՝ Տրդատին փախցնում են հռոմեացիների մոտ։ Հետագայում երբ Տրդատը ձեռք է բերում հորենական գահը և իմանում է իր մոտ ծառայության մտած Գրիգորի ով լինելը, սրան նաև որպես քրիստոնեական կրոնը տարածողի՝ նետում է Արտաշատ

մայրաքաղաքի խորվիրապը տանջամահ անելու համար։ Տարիներ շարունակ մթության ու խավարի մեջ օձերի ու կարիճների ընկերակցությամբ Գրիգորը, իբր, կենդանի մնաց քրիստոնյա լինելու պատճառով։ Հետագայում նույնպես Ագաթանգեղոսն իր գրքում բերած այլ և այլ առասպելներով ու լեգենդներով փորձում է ընթերցողներին համոզել քրիստոնեական կրոնի առավելությունները հեթանոսականի համեմատությամբ։ Այս բոլորից կարելի է անել այն եզրակացությունը, որ Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոցը» հետապնդել է քաղաքական շատ լուրջ նպատակներ, այսինքն՝ քրիստոնեական կրոնի պրոպագանդումն ու մասսայականացումը։ Այսպիսով, հայոց եկեղեցու պատմությունից բացի, այդ աշխատությունը շատ կարևոր սկզբնաղբյուր է նաև ընդհանրապես քրիստոնեական եկեղեցու պատմության ուսումնասիրության համար։ Եվ հենց այդ է պատճառը, որ Ագաթանգեղոսի երկը դեռևս միջին դարերում թարգմանվել է հունարեն, արաբերեն, վրացերեն, հաբեշերեն, սլավոներեն, լատիներեն, իսկ հետագայում՝ նաև եվրոպական մի քանի լեզուներով։ Այդ աշխատության ու նրա հեղինակի մասին գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ։

Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոցը» բաղկացած է «Յառաջաբանից» և երեք մասից՝ «Վարք և պատմութիւն Սրբոյն Գրիգորի», «Վարդապետութիւն Սրբոյն Գրիգորի» և «Դարձ փրկութեան աշխարհիս Հայաստան» վերնագրերով։ Հեղինակի աշխատության տարբեր մասերն ունեն պատմական ու գրական տարբեր արժեք։ Առասպելական ու կրոնական գունավորում ունենալու հետ միասին, որպես պատմական սկզբնաղբյուր, անհամեմատ բարձր են գնահատվում Գրիգոր Լուսավորչի գործունեությանը, քրիստոնեության տարածմանը և հեթանոսության դեմ ծավալված անզիջում պայքարին վերաբերող հատվածները։ Այստեղ շատ արժեքավոր տեղեկություններ կան նաև Հայաստանի պատմական աշխարհագրության, նախարարական կարգի, հին հայկական հեթանոսական պաշտամունքի և ընդհանրապես երկրի ներքին կյանքին վերաբերող հարցերի մասին։ Ագաթանգեղոսի գրքի արժեքը, սակայն, չի սահմանափակվում միայն նրանով, որ նա պատմական սկզբնաղբյուր է։ այդ աշխատությունը միաժամանակ նշանակալից գրական մի երկ է վիպական տարրերով։



Ագաթանգեղոսի գրքում շատ ինքնատիպ ու միջնադարյան հայ պատմագրության համար հազվագյուտ տվյալներ կան Գրիգոր Լուսավորչի ու ավերված հեթանոսական տաճարների տեղում կառուցված քրիստոնեական եկեղեցիներին Տրդատ III-ի նվիրաբերած կալվածքների ու գյուղերի մասին։ Գրիգոր Լուսավորչին տրված գյուղերից մի քանիսի ռազմական ուժերի թվական հիշատակությունը հեղինակի կողմից որոշ հնարավորություններ կարող է տալ ուսումնասիրողներին՝ վիճակագրական բնույթի հաշվումներ կատարելու համար։

Ագաթանգեղոսի Պատմության քննական բնագիրը հրատարակել են Գ. Տեր-Մկրտչյանը և Ստ. Կանայանցը Թիֆլիսում 1909 թվականին, իսկ աշխարհաբար թարգմանությունը, որը կատարել է Ա. Տեր-Ղևոնդյանը, լույս է տեսել Երևանում 1983 թվականին։

**Փավստոս Բուզանդ**

Միջնադարյան մի քանի հայ հեղինակների նման Փավստոս Բուզանդը և նրա «Պատմութիւն Հայոցը» նույնպես տեղիք են տվել աղբյուրագիտական ու պատմագիտական բնույթի վեճերի։

Փավստոս Բուզանդի ու նրա աշխատության շուրջը ծագած վեճերը հիմնականում վերաբերում են այս հարցերին. ազգությամբ ո՞վ է Փավստոսը, ե՞րբ և ինչ՞ լեզվով է գրել նա իր գիրքը, Փավստոսի Պատմությունը արդյոք ամբողջությա՞մբ է մեզ հասել, թե՞ կիսատ է։ Ուսումնասիրողներից Մ. Չամչյանը, Մ. Էմինը, Ն. Բյուզանդացին, Ն. Ադոնցը, Ա. Սեն-Մարտենը և ուրիշներ հակված են ապացուցելու, որ «Պատմութիւն Հայոցի» հեղինակը նրանում մի քանի տեղ հիշատակված հույն եպիսկոպոս Փավստոսն է, որը հայոց կաթողիկոս Ներսես Մեծի (353—373) խորհրդականն էր։ Մ. Չամչյանը և մյուսները գրում են, որ «Պատմութիւն Հայոցը» գրել է հենց այդ հույն եպիսկոպոսը IV դարի վերջերին հունարեն լեզվով և միայն V դարում այն թարգմանվել է հայերեն։

Հայագետների մյուս խումբը (Ղ. Ինճիճյան, Հ. Տաշյան, Հ. Գելցեր, Ստ. Մալխասյանց, Մ. Աբեղյան և ուրիշներ) գրում է, որ այս Պատմության հեղինակը հայ է և իր աշխատությունը գրել է հայերեն, սակայն գրքին ավելի մեծ հեղինակություն տալու համար և այլ նպատակներով այն վերագրել է իր նկարագրած դեպքերի ժամանակակից հույն հոգևորական

Փավստոսին։ Այս հարցի մասին եղած մանրամասնություններից խուսափելով, նշենք, միայն, որ այժմ գերիշխող կարծիքը վերջինն է։

«Պատմութիւն Հայոցի» հեղինակը իր աշխատության մեջ մեծ տեղ է տվել ժողովրդական բանահյուսությանը։ Եվ քանի որ ժողովրդական ստեղծագործությունների մեջ կային նաև այնպիսի պատումներ, որոնց արմատները գնում էին հեթանոսություն կամ իրենց բովանդակությամբ հակասում էին եկեղեցու սկզբունքներին, ուստի աշխատության հեղինակը, հետապնդումից ու հալածանքից խուսափելու համար, իր գիրքը վերագրել է ուրիշ անձնավորության[3]։

Փավստոս Բուզանդը կրթությունն ստացել է հայրենիքում։ Նա V դարի մյուս մատենագիրների նման ուսումը շարունակելու համար արտասահման չի գնացել։ Ուսումը ավարտելուց հետո նա եռանդուն կերպով սկսում է գրի առնել ժողովրդական ավանդություններն ու առասպելները։ Բուզանդի առանձնահատկությունն այն է, որ նա իր լսած ժողովրդական պատումները գրի է առել համարյա նույնությամբ, առանց ակտիվ միջամտության։ Եվ այսպես, ժամանակի ընթացքում նրա մոտ կուտակվել է ահագին նյութ, որը մշակելով ու դասավորելով, դարձրել է մի գիրք։ Այն մատենագրության մեջ հայտնի է «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց» կամ «Բուզանդարան պատմութիւնք» անուններով։

Որպես կանոն, թե՛ հին և թե՛ նոր ժամանակներում պատմիչի Բուզանդ անունը մեկնաբանվել է բյուզանդացի կամ Բյուզանդիայում կրթություն ստանալու իմաստով։ Սակայն ավելի հավանական է ակադ. Ստ. Մալխասյանցի բացատրությունը։ Նա գտնում է, որ բուզանդ կամ բյուզանդ բառն ունի հնդեվրոպական երկու արմատ՝ «բու» և «զանդ», որ նշանակում է եղելության, զրույցների բացատրիչ, մեկնիչ, ուրեմն և «...Բուզանդ բառը ոչ թե անձի հատուկ անուն է այլ աշուղական կոչում»։ Այստեղից հետևում է, որ բուզանդարան նշանակում է բուզանդների ժողովածու, զրույցների ժողովածու, մեկնությունների ժողովածու և այլն[4]։

---

[3] Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, 1944, էջ 168—169։

[4] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 309—310։



Փավստոս Բուզանդի գիրքը մեսրոպատառ հայերենով գրված առաջին գրքերից է, որ կրում է «Պատմութիւն Հայոց» վերնագիրը։ Այդ աշխատությունը բաժանվում է չորս մասերի, որոնց հեղինակն անվանել է դպրություններ՝ երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ դպրություն։ Առաջին երկու դպրությունների բացակայությունը տեղիք է տվել վիճաբանությունների։ Ոմանք գտնում են, որ դրանք գրված են եղել, բայց հետագայում կորել են, իսկ ոմանք էլ պնդում են, թե հեղինակը ընդհանրապես այդ մասերը չի գրել Ագաթանգեղոսին չկրկնելու համար, որովհետև այն, ինչի մասին ինքը պետք է գրեր առաջին երկու դպրություններում, Ագաթանգեղոսի կողմից արդեն գրված էին։ Բուզանդի գրքի դպրություններն իրենց հերթին բաժանվում են վերնագրեր ունեցող առանձին գլուխների։ Գիրքն ունի նաև առաջաբան։

Իր ժամանակի մյուս հեղինակների նման, Բուզանդը ևս իր գրքի համար օգտագործել է գրավոր և բանավոր սկզբնաղբյուրներ։ Ամենից առաջ նշենք, որ Փավստոս Բուզանդը որպես բարեպաշտ քրիստոնյա, եկեղեցուց և քրիստոնեությունից դուրս ուրիշ հեղինակություն չի ընդունում։ Այդ պատճառով էլ նրա համար առաջնակարգ սկզբնաղբյուր են հանդիսացել Աստվածաշունչը և եկեղեցական այլ գրքեր, որոնցից պատմիչը հաճախակի է մեջբերումներ կատարում։ Սակայն կրոնական գրականությունից բացի, Փավստոսն օգտվել է նաև հայկական պատմագիտական բնույթի գրականությունից։ Այժմ ապացուցված է, որ Փավստոս Բուզանդը լայնորեն է օգտագործել հատկապես Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոցը» և Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունը։ Հենց այս հանգամանքն էլ իրավունք է տվել պնդելու, որ Բուզանդի գիրքը հանդես է եկել Ագաթանգեղոսի ու Կորյունի գրքերից հետո՝ V դարի 70-ական թվականներին։ Ինչպես տեսնում ենք, մեր պատմիչի օգտագործած գրավոր աղբյուրներն այնքան էլ հարուստ չեն, դրա համար էլ նա իր նյութի պակասը լրացրել է բանավոր աղբյուրներով՝ ժողովրդական ստեղծագործություններով։ Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ Բուզանդը իր գրքում ավելի մեծ տեղ է հատկացրել բանավոր աղբյուրներին։ Դժվար է

ասել, թե դրա պատճառը միայն գրավոր սկզբնաղբյուրների սակավությունը կամ եղածների անմատչելիությունն էր։ Ինչ իմանանք, գուցե հեղինակը հենց գիտակցաբար է առաջնությունը տվել ժողովրդական խոսքին ու հին ժամանակներում կատարել բանահավաքի պատվավոր ու դժվարին գործը։

Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոցը» զուտ պատմագիտական երկ չէ, ինչպես, օրինակ, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու և մյուսների երկերը։ Այն ավելի շուտ նման է Զենոբ Գլակի և Հովհան Մամիկոնյանի աշխատություններին, որոնց մեջ նույնպես գերակշռում են ժողովրդական զրույցները, և որոնք շարադրված են վիպագրելու եղանակով։ «Պատմութիւն Հայոց»-ի հեղինակը հավաքել և որոշ մշակման ենթարկելուց հետո շարադրել է իր լսած ու իրեն մատչելի ժողովրդական այն զրույցներն ու պատմությունները, որոնք բովանդակում էին Հայաստանի ու հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող IV դարի հերոսական դեպքերը։

Եթե հիշենք, որ V դարում Հայաստանի համար ստեղծված քաղաքական ծանր իրադրությունը, հայկական ինքնուրույն պետականության ոչնչացումից հետո, մեծ վտանգ էր ստեղծում հայ ժողովրդի ֆիզիկական գոյության համար, ապա ավելի հասկանալի կլինի, որ Բուզանդի գիրքը, իր ժամանակի մյուս հեղինակների աշխատությունների նման, կոչված էր ժողովրդի մեջ հայրենասիրական զգացմունքներն ու ազգային ոգու անաղարտությունը պահպանելու մեծ ու ազնիվ գործին։

Փավստոս Բուզանդի գիրքն ընդգրկում է պատմական փոքր ժամանակաշրջան՝ 330-ական թվականներից մինչև 387 թվականը, այսինքն՝ մինչև Հայաստանի առաջին բաժանումը Հռոմի ու Պարսկաստանի միջև։ Գիրքը հարուստ է բացառիկ արժեքավոր տեղեկություններով IV դարի ֆեոդալական Հայաստանի քաղաքական պատմության ու ներքին կյանքի, նախարարական կարգի, դասակարգային ու ներդասային պայքարի ու փոխհարաբերությունների, եկեղեցական ու կրոնական հարցերի, կենցաղի ու սովորությունների, հավատալիքների ու բազմաթիվ այլ հարցերի մասին։

Բուզանդի գրքում որոշակիորեն առաջադրված են մի քանի թեմաներ, որոնցից յուրաքանչյուրի նկատմամբ պատմիչը ցուցաբերել է առանձնակի մոտեցում և վերաբերմունք։ Նրա ուշադրությունը հիմնականում կենտրոնացել է եկեղեցու և հոգևորականության, Արշակունիների և երկրի կյանքում առաջատար դեր խաղացող Մամիկոնյան նախարարական տան վրա։ Մի խոսքով Բուզանդի պատմության մեջ ասպարեզ են հանվում ժամանակի եկեղեցական ու աշխարհիկ բոլոր գլխավոր դեմքերն իրենց դրական ու բացասական հատկանիշներով և ուսանելի ու պախարակելի կողմերով։

Հայոց եկեղեցու և եկեղեցական գործիչների մասին խոսելիս, Փավստոս Բուզանդը մեծ տեղ է տալիս հատկապես կաթողիկոս Ներսես Մեծին։ Ներսեսը Փավստոսի մոտ հանդես է գալիս որպես հոգևորականի մի կատարյալ տիպար։ Նա է աղքատների ու հիվանդների հովանավորը, երկրի օրենսդիրը, ամուսնական սովորությունների կարգավորողը, հեթանոսական սովորությունների ու բարքերի ոչնչացնողը, հունարեն և ասորերեն լեզուներով դպրոցներ բաց անողը և այլն։ Ինչպես այլ դեպքերում, այստեղ նույնպես Բուզանդը հանդես է գալիս որպես եկեղեցու հիմքերի ամրապնդման ջատագով, եկեղեցու և հոգևորականության իրավունքների պաշտպան։ Հենց դրանից էլ բխում է նրա անհանդուրժողությունը պետական ու քաղաքական այն գործիչների նկատմամբ, ովքեր, թեկուզ հանուն հայկական ֆեոդալական պետության կենտրոնացման ու ամրապնդման, փորձում էին որոշ չափով սահմանափակել եկեղեցու և հոգևորականության իրավունքները։ Մեր պատմիչի նմանօրինակ մոտեցումը հարցերին կարող է հասկանալի դառնալ, եթե հաշվի առնենք ժամանակաշրջանը։ Չէ՞ որ Բուզանդը մեկն էր շատերից, որը տեսնում էր Պարսկաստանի նվաճողական և ձուլողական քաղաքականության հետևանքները, մի քաղաքականություն, որը խարսխվում և հովանավորվում էր զրադաշտական կրոնի կողմից։ Ուրեմն, Փավստոսը վերջինիս պետք է հակադրեր հայկական քրիստոնեական գաղափարախոսությունը, թեկուզ այդ գաղափարախոսության աչքի ընկնող գործիչներին իդեալականացնելու գնով։ Հասկանալի է, որ քրիստոնեության նշանակությունն ու ազդեցությունը մեծացնելու համար պատմիչը չէր էլ կարող խուսափել դեմքերի ու դեպքերի վիպականացումից ու չափազանցություններից։

Մովսես Խորենացու գրի առած վեպերից հետո հայկական ժողովրդական ամենախոշոր վեպը վաղ միջնադարում «Պարսից պատերազմն» է, որը մեզ է հասել Փավստոս Բուզանդի շնորհիվ։ Սակայն պետք է նշել, որ ի տարբերություն Խորենա-

ցու միջոցով պահպանված ժողովրդական վեպերի, որտեղ դժվար է սահման դնել պատմականի և ոչ պատմականի միջև, «Պարսից պատերազմի» ամբողջ առանցքը հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի պատմությունն է Սասանյան Պարսկաստանի դեմ: Այն, ստեղծված լինելով պատմիչի ապրած ժամանակաշրջանից մեկ դար կամ մի քիչ ավելի ժամանակ առաջ, իր մեջ բովանդակում է IV դարի պատմական իրականությունը, որը դեռ լրիվ չէր առասպելականացել: Դրա համար էլ այստեղ երկրի ներքին կյանքին վերաբերող փաստերն ու գործող անձինք իրական են ու պատմական:

Փավստոս Բուզանդի մոտ եկեղեցական պատմության կենտրոնական դեմքը Ներսես Մեծն է, իսկ հայկական արքունական տան պատմության գլխավոր հերոսը՝ Արշակ II-ը: Բուզանդի հերոսներից ամենից շատ Արշակն է հագեցված խոր դրամատիզմով: Բուզանդի գրչի տակ Արշակը դարձել է կեսիրական, կես-վիպական մի անձնավորություն, որը, որպես Հայաստանի գերագույն իշխանավոր, մարմնավորում է հայ ժողովրդի ազատագրական պայքարը նենգամիտ ու դավադիր թշնամու դեմ: Արշակը քաջ է ու կորովի, նրա քաջությունն ու անվեհերությունը ոգևորում և մարտի էր տանում զորքին: Այդ է պատճառը, որ ազատագրական պայքարի դրվագներով հորինվող ժողովրդական զրույցներն ու պատմությունները բնականաբար պետք է մեծ մասամբ վերաբերեին սիրված դյուցազնին՝ Արշակին, նրան դարձնեին ժողովրդական վեպի կենտրոնական դեմքը: Արշակ II-ի կերպարի վիպականացման համար, անշուշտ, որոշակի դեր են խաղացել նաև նրա անձնական բարեմասնությունները: Չէ՞ որ Արշակը հայ Արշակունի թագավորների մեջ այն քչերից մեկն էր, որը հսկայական ջանքեր գործադրեց երկրում ֆեոդալական մասնատվածությունը վերացնելու և ուժեղ, կենտրոնացված պետություն ստեղծելու համար: Արշակ II-ի այդ կարգի ձեռնարկումները ժամանակի համար անվերապահորեն ունեին առաջադիմական մեծ նշանակություն: Իր այդ համապետական նշանակություն ունեցող ձեռնարկումների ընթացքում Արշակը որոշ հանգամանքներում հենվում էր նաև ժողովրդի վրա ու նրան պաշտպանում կենտրոնական իշխանության հակառակորդ նախարարների կամայականություններից: Այստեղից էլ պարզ է, թե ինչու IV—V դարերում հենց Արշակը պետք է դառնար ժողովրդական բանահյուսության, վեպի ու վիպասանության հերոսը:



Բուզանդի մոտ, ուրեմն և բուն ժողովրդական բանահյուսության մեջ, Արշակ II-ը հանդես է գալիս խորապես մարդկային գծերով և ընդգծված կամքի ուժով: Նրա շուրջը ստեղծված ամբողջ պատմությունը հանգեցնում է տրամաբանական այն եզրակացության, որ Արշակը քաջ էր ու հերոս, որովհետև նրա հետ էր հայրենիքն ու ժողովուրդը, որը խորապես գիտակցելով իր պայքարի արդարացիությունը, գնում էր իր հերոսի ետևից ու ահեղ պայքարում հաղթում թշնամուն: Հերոսի ու ժողովրդի, հերոսի ու հայրենիքի այդ անխախտ կապը բանահյուսության մեջ հասցված է գեղարվեստական ու գաղափարական կատարելության:

Բանակցությունների համար Պարսկաստան կանչված Հայոց թագավորի իսկական մտադրություններն իմանալու համար, Շապուհը հանդիպման համար պատրաստված հարկաբաժնի հատակի կեսը գաղտնի պատել է տալիս Հայաստանից բերված հողով ու ջրով: Եվ բանակցությունների ժամանակ, երբ Արշակը կանգնում է պարսից հողի վրա, խեղճանում, թուլանում է, իսկ երբ կանգնում է Հայաստանի հողով ծածկված հատակին, ուժ է առնում ու սպառնում Շապուհին: Գազազած Շապուհը դրանից հետո, դժելով իր արքայական խոստումը, շղթայել է տալիս Արշակին և ցմահ բանտարկում Անհուշ բերդում: «Պարսից պատերազմը» վեպի Արշակին և Վասակին վերաբերող հատվածը ոչ միայն հայկական, այլև համաշխարհային գրականության մեջ կարելի է համարել ժողովրդական ստեղծագործության անգնահատելի գոհարներից մեկը, որովհետև այն հագեցված է ամենաջերմ հայրենասիրությամբ և փայլում է խորապես մարդկային վսեմ ու բարձր գաղափարներով: Վեպում, հակառակ Շապուհի, որ հանդես է գալիս որպես չարության ու հետադիմական ուժերի խտացված տիպար, Արշակը արդարամիտ է, ազնիվ ու հերոս: Եվ ընթերցողի համակրանքը վերջինիս կողմն է:

«Պարսից պատերազմը» վեպում բազմաթիվ հերոսների մեջ առաջատար դեր կատարող միակ կին հերոսը Փառանձեմ թագուհին է: Հայկական մատենագրության մեջ առաջին անգամ Բուզանդի մոտ ենք հանդիպում մի կնոջ, որին կյանքում հատկացվում է տղամարդուն հավասար տեղ: Հայ կնոջ դրական բա-

բեմասնությունների խտացված պատկերը ներկայացնող Փառանձեմ թագուհին միայն պալատական անհոգ ու շռայլ կյանքը վայելող չէ։ Նա այն անձնավորությունն է, որը դժբախտության ու վտանգի պահին չի հուսահատվում ու չի ենթարկվում ճակատագրի քմահաճույքներին, այլ կամքի մեծ ուժով խեղդելով իր մեջ անձնական ծանր վշտի զգացումը, դուրս է գալիս թշնամու դեմ ու ղեկավարում հայրենասիրական ուժերի պայքարը և այդ պայքարում էլ ընկնում որպես հերոս։

«Պարսից պատերազմի» պատմագիտական առումով ամենաարժեքավոր մասերից մեկն էլ Պապ թագավորի ճյուղն է, չնայած ինքը՝ Պապը վեպում ներկայացվում է շատ մռայլ գույներով։ Որպեսզի այս հանգամանքի պատճառը հասկանալի լինի, անհրաժեշտ է գոնե ընդհանուր գծերով ծանոթանալ Արշակ II-ի արժանավոր հետնորդի՝ Պապի, պետական գործունեությանը։ Հայտնի է, որ Պապը, տակավին երիտասարդ տարիքում իր ձեռքը վերցնելով իշխանությունը, մեծագույն համարձակությամբ առաջ էր շարժվում այն ճանապարհով, որ հարթել էր հայրը՝ Արշակը։ Նա, ելնելով հայրենիքի ու ժողովրդի շահերից, երկրի ներսում վարում էր պետության խիստ կենտրոնացման քաղաքականություն։ Հայկական թագավորության հիմքերն ամրապնդելու համար Պապը որոշակի քաղաքականություն էր վարում նաև եկեղեցու և հոգևորականության նկատմամբ։ Բանն այն էր, որ համեմատաբար պատմական շատ կարճ ժամանակամիջոցում եկեղեցին, իր ձեռքում կենտրոնացնելով հողային ընդարձակ տարածություններ, դարձել էր ֆեոդալական մի ուժեղ կազմակերպություն։ Հենվելով իր տնտեսական հզորության վրա, եկեղեցին արդեն IV դարում որոշակի քայլեր էր կատարում ղեկավար դեր ստանձնելու համար նաև աշխարհիկ իշխանության բնագավառում, որը նկատելիորեն սրում էր աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների փոխհարաբերությունները։ Հասկանալի է, որ այսպիսի պայմաններում Պապը, որպես աշխարհիկ գործերի գերագույն իշխանավոր, պետք է գործնական քայլեր կատարեր պետության իրավունքները պաշտպանելու և ամրապնդելու համար։ Եվ ահա, 370-ական թվականներին Պապը մեծ հաստատակամությամբ սկսեց արմատապես սահմանափակել եկեղեցու և հոգևորականության իրավունքները։ Բուզանդը վկայում է, որ հայոց երիտասարդ թագավորը նախ բռնագրավեց եկեղեցական հողերի յոթ բաժ-



նից հինգը։ Նա վերացնել տվեց եկեղեցուն տրվող տասանորդ հարկը, խստորեն կրճատեց հոգևորականության թիվը, փակել տվեց բազմաթիվ վանքեր, մենաստաններ, կուսանոցներ և հոգևոր բնույթի այլ հաստատություններ, որոնց շուրջը ժամանակի ընթացքում հավաքվել էին չարտադրող, բայց նյութական բարիքները խժռող, հանրօգուտ աշխատանք չկատարող, ծույլ ու անբան մարդիկ։ Նշված հաստատություններից արտաքսվածների մի մասին ուղարկում էին բանակ, իսկ մյուսներին պարտադրում աշխատելու։ Պապն իր այս ձեռնարկումներով ոչ միայն ամրացրեց թագավորի և աշխարհիկ ֆեոդալական սիստեմի իրավունքները, այլև մի քանի անգամ ավելացրեց պետության եկամուտները։ Պապ թագավորի այս ձեռնարկումները իր ժամանակին, ինչ խոսք, ունեին առաջադիմական նշանակություն և ամբողջությամբ ելնում էին պետության ու ժողովրդի շահերից։ Այս բոլորից հետո, մեզ թվում է, որ սխալ չի լինի, եթե ասենք, որ Պապի շուրջը ստեղծված վեպի մշակմանը վճռականորեն միջամտել է եկեղեցին և խեղաթյուրել վերջինիս կերպարը՝ օժտելով նրան բացասական գծերով։ Իսկ վիպագրող Բուզանդը, հավատարիմ մնալով իր սկզբունքին և զուցե մի փոքր էլ գոհ վեպի այսպիսի ընթացքից, չի փոխել նրա բովանդակությունը և այն շարադրել է իր լսածի պես։

Մոտիկից ծանոթանալով Փավստոս Բուզանդի Պատմությանը, կարելի է անել այն հետևությունը, որ մեր հեղինակն իր գիրքը գրել է Մամիկոնյան նախարարներից որևէ մեկի պատվերով։ Սակայն պետք է նաև նշել, որ հայկական բազմաթիվ նախարարություններից պատմիչի առանձնահատուկ համակրանքը Մամիկոնյանների նկատմամբ ուներ նաև իր հիմնավոր դրդապատճառը։ Օտար նվաճողների և ներքին պառակտիչների դեմ իրենց անձնազոհ պայքարով, երկրի միասնության համար իրենց ուժերը չխնայող Մամիկոնյանները հայկական մյուս նախարարությունների մեջ վաղուց էին շահել առաջնությունը, որի պատճառով էլ Մամիկոնյաններին վերաբերող պատումները անառարկելիորեն պետք է ավելի պայծառ ու գունագեղ լինեին։ Բուզանդի մոտ Մամիկոնյան տոհմի բոլոր զավակները գրեթե իսկական դյուցազուններ են, որոնց շուրջն էլ հյուսվում են այդ տոհմին վերաբերող վեպի առանձին ճյուղերը։ Մամիկոնյանները համարյա բոլորն էլ հանդես են գալիս որպես իսկական հայրենասերներ, մարդասեր ու վեհանձն

մարդիկ։ Նրանց համար չկա ավելի բարձր բան, քան կռվելը հայրենիքի համար։ Մանվել Մամիկոնյանը հիվանդության ժամանակ մեծ վիշտ էր ապրում ու դժգոհում իր ճակատագրից, որ ինքը մեռնում է տանը և ոչ պատերազմի դաշտում։ Վշտացած զորավարը բաց անելով իր մարմինը և ցույց տալով ճակատամարտերում ստացած վերքերի բազմաթիվ սպիները, դառնությամբ ասում է. «...ես ի մանկութենէ համակ սնայ ի պատերազմունս, և մեծաւ քաջութեամբ զամենայն վէրս յանձն իմ առի. և ընդէ՞ր ոչ եհաս ինձ մեռանել ի պատերազմի, քան զօրէն անասնոյ մեռելոյ եղէ։ Զի լաւ էր ինձ եթէ ի պատերազմի մեռեալ էի ի վերայ աշխարհի զի մի՛ զեկեղեցիս և մի՛ զուխտ աստուծոյ առ ոտն կոխեցին։ Սակայն և ի վերայ Արշակունեաց բնիկ տէրանց աշխարհիս, և ի վերայ կանանց, և ի վերայ որդւոց մերոց, և ի վերայ աստուածապաշտ մարդկանս և ի վերայ եղբայրութեան և մտերիմ բարեկամութեանն զի էր թէ հասեալ էր ինձ մեռանել. թէպէտ շատ զանձնս յանդուգն վարեցի, զվատթար մահս մահճացս եհաս ինձ մեռանել»[5]։

«Պարսից պատերազմ» վեպում Մամիկոնյանները հանդես են գալիս որպես քաջարի զինվորականներ, պատրաստ կատարելու թագավորի հրամանները և պաշտպանելու նրա անձը, հեղինակությունն ու պատիվը։ Այս հանգամանքը առանձնապես շեշտվում է հետևյալ դեպքի ժամանակ։ Մի անգամ, երբ Արշակ II-ը հատուկ հրավերով գտնվում էր Պարսկաստանում, Շապուհի ախոռապետը համարձակվում է անարգել ու վիրավորական խոսքեր շպրտել հայոց թագավորի հասցեին։ Վասակ սպարապետը, որ Արշակի անբաժան ուղեկիցն էր նման դեպքերում, չի կարողանում հանդուրժել այդ անպատվությունը և սուրը մերկացնելով, տեղն ու տեղը գլխատում է ամբարտավանին։

Ֆեոդալիզմի ժամանակաշրջանի և ֆեոդալական գաղափարախոսության արդյունք պետք է համարել Բուզանդի մոտ բազմաթիվ առիթներով ներկայացվող թագավորի՝ որպես «տիրոջ» և ազնվականության՝ որպես «ծառայի» փոխհարաբերությունների արտացոլումը։ Տիրոջ և ծառայի կամ ֆեոդալական աստիճանականության նմանօրինակ փոխհարաբերություններ

[5] «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Պետերբուրգ, 1883, էջ 217։



գոյություն ունեին նաև հայկական եկեղեցու և հոգևորականության շրջանում։ Եթե թագավորը աշխարհիկ կյանքում ամենամեծ հողատերն ու ֆեոդալն էր, ապա եկեղեցական բնագավառում ամենախոշոր հողատերը կաթողիկոսն էր։ Բուզանդի մոտ էլ կան դրվագներ, որոնք ներկայացնում են անհավատարիմ ծառաներին պատժելու ահավոր տեսարաններ՝ ընդհուպ մինչև նախարարական ամբողջ տոհմերի բնաջնջում։ Հայ նախարարների մեծագույն մասը և Մամիկոնյանները մասնավորապես փայլում են հոգու մաքրությամբ, ազնվությամբ ու բարությամբ, որը երբեմն դրսևորվում է նույնիսկ ամենաանարգ թշնամու հանդեպ։ Սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի կողմից Շապուհի կանանց ազատումն ու ետ ուղարկելը, սակայն, չպետք է համարել մեկ մարդու անձնական բարձր զգացմունքների հրապարակային ցուցադրում միայն, դա փաստորեն մի ամբողջ ժողովրդի՝ հայ ժողովրդի բարոյական բարձր ոգու արտահայտությունն էր։

Փավստոս Բուզանդն իր գրքում ներկայացնում է նաև դավաճանների, մորթապաշտների, փառասերների, ստոր ու նվաստացուցիչ ձևերով հարստություն կուտակող անձնավորությունների։ Եթե առաքինի, ազնիվ ու քաջ մարդկանց նկատմամբ պատմիչն արտահայտում է իր սերն ու համակրանքը, ապա Մերուժանի, Հոհան եպիսկոպոսի ու նրանց նմանների նկատմամբ նա ատող է ու անհանդուրժող։ Ե՛վ առաջինների, և՛ երկրորդների նկատմամբ գրքի շարադրանքի մեջ գույներն այնքան են խտացված, որ ընթերցողն անմիջապես անցնում է հեղինակ Բուզանդի կողմը ու համակվում նրա և՛ սիրով, և՛ ատելությամբ։ Փավստոս Բուզանդի լեզուն սքանչելի է։ Մ. Աբեղյանի և Ն. Ակինյանի կարծիքով Բուզանդի գիրքն ունի չափածո կտորներ։ Բուզանդի պատմության բնագիրը հրատարակվել է ութ անգամ, լավագույնը Պետերբուրգի 1883 թ. տպագրությունն է։ Այն թարգմանվել է նաև գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն լեզուներով։ Աշխարհաբար թարգմանությունը լույս է տեսել Երևանում 1947 թվականին։

**Եղիշե**

V դարի հայկական պատմագիտական գրականության գանձարանում իր պատվավոր տեղն ունի նաև մի գիրք, որը կոչվում է «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» կամ՝ շատ ավելի ընդհանրացած ձևով՝ «Վարդանանց պատմու-

թիւն»։ Այդ երկի հեղինակը V դարի տաղանդավոր պատմիչ Եղիշեն է։ Ցավով պետք է նշենք, որ միջնադարյան շատ հայ հեղինակների նման Եղիշեի կենսագրության մասին նույնպես շատ քիչ բան գիտենք։ Եղած կես-ավանդական, կես-իրական տեղեկությունները գրանցվել են մի հին «Ճառընտիրի» մեջ՝ անանուն գրչի կողմից։ Այդ տվյալներից մենք իմանում ենք, որ Եղիշեն նույնպես եղել է Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի աշակերտը, որը հավանաբար հայրենիքում որոշ կրթություն ստանալուց հետո, դեռևս Մաշտոցի կենդանության օրոք, ուրիշ երիտասարդների հետ ուղարկվում է արտասահման՝ ուսումը շարունակելու և հատկապես լեզուներ սովորելու ու թարգմանության արվեստի մեջ հմտանալու համար։ Եղիշեն, ըստ ավանդության, իր դասընկերներ Մովսես Խորենացու, Դավթի, Մամբրեի և մյուսների հետ ընդունվել է Ալեքսանդրիայի իմաստասիրական աշխարհահռչակ դպրոցը։ Ուսումնասիրողների կարծիքով, աշակերտների այս խումբը արտասահման պետք է մեկնած լինի 434 թվականին։ Եթե ընդունենք, որ Եղիշեն այդ ժամանակ առնվազն 20—25 տարեկան պետք է լիներ, ուրեմն նրա ծննդյան մոտավոր թվականը կարելի է համարել 410—415-ը։

Եղիշեն, հաջողությամբ ավարտելով Ալեքսանդրիայի դպրոցը, իր ընկերների հետ վերադառնում է հայրենիք ու դառնում ժամանակի մեծ զորավար, հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի գրագիրն ու քարտուղարը։ Սակայն 451 թվականից հետո նա թողնում է քաղաքական ասպարեզը ու իրեն նվիրում ճգնավորական կյանքի։ Պետք է ենթադրել, որ Ավարայրի ճակատամարտից հետո, Եղիշեի հոգեկան աշխարհի վրա շատ էին ազդել հատկապես իր սիրելի զորավարի ու նրա քաջարի զինակիցների նահատակությունը։ Եվ զգայուն սրտի տեր պատմիչը փնտրում էր մի հանգիստ վայր՝ ինքն իր խոհերի հետ մենակ լինելու և տեսածն ու լսածը գրքին հանձնելու։ Անանուն կենսագիրը այնուհետև հավաստում է, որ Եղիշեն քաշվում է Մոկաց աշխարհն ու հաստատվում մարդկանցից հեռու մի այրում, որը հետո կոչվում է Եղիշեի այր։ Ավանդությունն ասում է, որ Եղիշեն հենց այստեղ էլ գրել է իր աշխատությունները, ի թիվս որոնց նաև հանրահռչակ «Վարդանանց պատմությունը»։ Պատմիչն իր վերջին տարիներն անց է կացնում Ռշտունյաց գավառի Ծովեզրյա այրերում, որտեղ և կտրվում է նրա կյանքի թելը, հավանաբար 470—475 թվականներին։ Եղիշեի գերեզմանը, որ գտնվում է Ոստան գավառում, Վանա լճի ափի Զաղար կամ Զարահան Ս. Նշան վանքում, մինչև հայոց մեծ եղեռնը շրջակայքի բնակչության ամենանվիրական ուխտատեղերից մեկն էր համարվում։



Պետք է ասել, որ երբ անցյալում հայ բանասերների և օտար հեղինակների շրջանում առաջացած բուռն հետաքրքրության հետ միասին դրսևորվեցին հիվանդագին կասկածանքներ այս կամ այն հեղինակի ու նրա ստեղծագործության նկատմամբ, Եղիշեն բացառություն չկազմեց։ Որոշ հետազոտողներ ոչ միայն փորձում էին Եղիշեին տեղահան անել ու բերել հասցրնել VI դարը, այլև հախուռն կերպով նրա գիրքը համարում էին մի թույլ երկ, որը, իբր, ոչ մի լուրջ քննադատության չի դիմանում։ Այս կարգի ուսումնասիրողների մեջ կարելի է նշել հատկապես Գր. Տեր-Պողոսյանին, Բ. Կյուլեսերյանին, Աբ. Զամինյանին, Ն. Ակինյանին և ուրիշների։ Այստեղ տեղը չէ մեկ առ մեկ անդրադառնալու Եղիշեի ու նրա «Վարդանանց պատմությունը» գրքի վերաբերյալ բանասիրական վեճերում առաջ քաշված փաստարկներին, մանավանդ որ այժմ արդեն դրանք ոչ միայն մերժվում, այլև հիմնավորապես ժխտվում են։ Սակայն ավելորդ չի լինի վերը նշված ուսումնասիրողների «փաստերից» մեկը բերել որպես օրինակ։ Եղիշեի դեմ տրամադրված մասնագետները գտնում են, որ նա անվերապահորեն կրել է Փիլոն Եբրայեցու ազդեցությունը։ Եվ որովհետև այդ հեղինակները, առանց հաստատուն հիմքերի, Փիլոնի երկերի հայերեն թարգմանությունները դնում են V դարի վերջերին և VI դարի սկզբներին, ուստի Եղիշեին էլ համարում են հիշյալ թարգմանություններից օգտվող հեղինակ, որը կարող էր ապրել ու ստեղծագործել հենց V դարի վերջերին և VI դարի սկզբներին։ Եղիշեի շահերը պաշտպանող ուսումնասիրողները շատ հիմնավոր կերպով մերժելով Փիլոնի հայերեն թարգմանությունների հետ նրա ունեցած անմիջական կապը, արդարացիորեն առաջ են քաշում տրամաբանական այն հարցը, թե արտասահմանում կայուն գիտելիքներ ձեռք բերած, հունարեն, ասորերեն և այլ լեզուներ սովորած Եղիշեն ինչո՞ւ չէր կարող Փիլոնի երկերն օգտագործել իրենց բնագրերով ինքնուրույնաբար։ Հետաքրքիրն այն է, որ վերջին փաստարկի հաղթանակն ավարտվեց նրանով, որ Փիլոնի երկերի հայերեն նոր օրինակ-

ները վերջնականապես ապացուցեցին դրանց ոչ թե VI, այլ V դարում թարգմանված լինելը։

Պարզված է, որ Եղիշե պատմիչի գրչին պատկանում են մեկ տասնյակից ավելի ստեղծագործություններ, որոնց մեծ մասն ունի կրոնական բովանդակություն։ Սակայն նրա աշխատություններից միայն «Վարդանանց պատմությունն» է, որ իր բնույթով ու բովանդակությամբ տարբերվում է մյուսներից ու համարվում է պատմիչի գրական ժառանգության թագն ու պսակը և նրան միջնադարյան հայկական մատենագրության փայլուն համաստեղության մեջ անմահացնողը։ Եղիշեին իր այս երկը գրելու համար խոշոր չափով խրախուսել է նրա անմիջական պատվիրատուն ու մեկենասը՝ Մամիկոնյան Դավիթ երեցը, որի մասին, դժբախտաբար, մենք ուրիշ ոչ մի տեղեկություն չունենք, բացի մեր պատմիչի առաջաբանում եղածներից։ Այստեղ, պատմիչի մոտ իր հովանավորի ու պատվիրատուի մասին եղած «քաջ» (պետք է հասկանալ նաև առաքինի իմաստով) և «երկրավոր առատ գիտությամբ» օժտված արտահայտությունները գուցե իրավունք տան մեզ ենթադրելու, որ Դավիթ Մամիկոնյանը իր ժամանակի առաջադեմ ու բարձր կրթություն ունեցող անձնավորություններից մեկն էր։ Մենք որոշակիորեն չգիտենք, թե Եղիշեն երբ է ձեռնարկել իր աշխատությունը գրելը, սակայն ենթադրվում է, որ այն պետք է ավարտած լինի 458—464 թվականների ընթացքում։

Եղիշեի ստեղծագործությունը չի ընդգրկում Հայաստանի պատմության մի որևէ ընդարձակ ժամանակաշրջանը, այն վերաբերում է միմիայն 440-ական թվականների վերջերի և 450-ական թվականների սկզբների հայ-պարսկական փոխհարաբերությունների պատմությանը և դրա հետ սերտորեն կապված իրադարձությունների լուսաբանմանը։ Ուրեմն, ինքնըստինքյան հասկանալի է, որ մենք պատմիչին իր ընտրած հարցի սահմաններից դուրս պահանջներ ներկայացնելու իրավունք չունենք, այլ նրա աշխատությունը պետք է արժեքավորենք իր իսկ ընտրած թեմայի շրջանակներում։ Հենց սկզբից պետք է նշել, որ «Վասն Վարդանայ» աշխատության, որպես պատմական սկզբնաղբյուր, գրական արժանիքն այն է, որ նրա հեղինակն իր նկարագրած դեպքերի ժամանակակիցը լինելուց բացի, պաշտոնի բերումով, շատ մոտ հարաբերությունների մեջ էր գտնվում Հայոց սպարապետի հետ, մի հանգամանք, որը նը-



բան, անշուշտ, մեծ հնարավորություն է տվել գրքի համար ձեռք բերելու ավելի ճշգրիտ ու հավաստի նյութեր։ Եվ ընթերցողին վստահություն ներշնչելու համար Եղիշեն ավելորդ չի համարում իր գրքում բազմաթիվ առիթներով նշելու, որ ինքը նկարագրված դեպքերի ժամանակակիցն ու ականատեսն է եղել։ Աշխատության սկզբի մասում այս հանգամանքը շեշտելու հետ միասին, հեղինակը միաժամանակ դիմելով իր մեկենասին, նշում է, որ շատ էլ հաճելի չէ գրի առնել իր ժողովրդի տառապանքների ու թշվառությունների պատմությունը։ «Արդ,— ասում է նա,— որովհետև ընկալաք զհրաման պատուիրանի յաննախանձ քոյոց բարուց բնութեանդ, սկսցուք ուստի արժանի է սկսանել. թէպէտ և ոչ յօժարիցեմք զթշուառութիւն ազգիս մերոյ ողբալ։ Ահա ոչ ըստ կամաց արտօսրալիր ողբովք ճառագրեմք զբազում հարուածս՝ յորում պատահեցաք և մեք իսկ ականատես լինելով»[6]։

Եղիշեն, անշուշտ, ծանոթ էր հայ և օտար մատենագրությանը, սակայն իր այս աշխատության համար նա կարիք չի ունեցել օգտագործելու իրենից առաջ կամ իր ժամանակներում ապրող հեղինակների գործերը, որովհետև նրա ընտրած թեմայի մասին դեռևս ոչ ոք չէր գրել։ Ուստի Եղիշեն ուրիշների ստեղծագործությունները չէր կարող դարձնել սկզբնաղբյուր։

Եղիշեի աշխատությունը, համառոտ առաջաբանից հետո, բաժանվում է յոթ գլուխների՝ եղանակների, և երկու հավելվածների։ Առաջին եղանակի սկզբի մի քանի տողերում խոսելով հայ Արշակունիների թագավորության անկման և Հայաստանի (նկատի ունի Հայաստանի մեծագույն մասը) պարսկական տիրապետության տակ ընկնելու մասին, պատմիչը որպես կարևոր հանգամանք նշում է, որ թեև դրանից հետո հայերը հարկատու դարձան պարսից արքունիքին, «...սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»[7]։ Այսինքն՝ հայ նախարարները տակավին պահպանում էին իրենց զինվորական իրավունքները և կռիվներին մասնակցում էին սեփական հեծյալ գնդերով։ Այս հան-

---

[6] «Եղիշէի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 5։

[7] Նույնը, էջ 6։

գամանքը որոշակի հնարավորություններ էր տալիս հայ ժողովրդին, անհրաժեշտության դեպքում, միավորելու իր զինական ուժերը և պայքարի ելնելու օտարերկրյա լծի դեմ։

Եղիշեի գրքի երկրորդ եղանակը հիմնականում վերաբերում է Հազկերտ II-ի և պարսից արքունիքի կողմից հայ ժողովրդին պարտադրված կրոնափոխության առաջարկությանը, այս բովանդակությամբ Հայաստանի հոգևոր և աշխարհիկ առաջնորդներին ուղարկված հրովարտակին. Արտաշատի ժողովին և հայոց մեծամեծների ստորագրությամբ պատասխան նամակ կազմելուն, որով հիմնավորապես մերժվում էր կրոնափոխության առաջարկությունը։ Չորրորդ եղանակում հեղինակը պատմում է Հայաստանի մարզպան Վասակ Սյունեցու և նրա համախոհների պառակտիչ գործունեության մասին, մի գործունեություն, որն արմատապես հակադրվում էր Արտաշատի ժողովի որոշմանը և ընթանում կրոնափոխության առաջարկության ընդունման ուղղությամբ։ Ավարայրի ճակատամարտի մանրամասն նկարագրությունը Եղիշեն շարադրել է իր գրքի 6-րդ եղանակում, իսկ վերջին մասերում հեղինակը պատմում է պատերազմի ծանր հետևանքների, Պարսկաստան տարված հայ գերիների անտանելի վիճակի և այլնի մասին։ Եղիշեի գիրքն ավարտվում է գերության մեջ տառապող հայ փափկասուն կանանց ծանր դրության աննման նկարագրությամբ, որը հեղինակի գեղարվեստական խոսքի գլուխգործոցն է։

Եղիշե պատմիչը որպես գրող ու քաղաքացի, հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող այս ժամանակաշրջանում կանգնած էր ակտիվ պայքարի դիրքերի վրա։ Ամենից առաջ նշենք, որ նա կտրականապես մերժում է պարսիկների առաջարկությանը մի կերպ հարմարվողների քաղաքական գիծն ու հաստատակամորեն պաշտպանում Վարդան Մամիկոնյանին։ Նա իրավացի է, երբ դավանափոխության առաջարկության ընդունումը կորստաբեր է համարում հայ ժողովրդի համար։ Միանգամայն հարազատ մնալով պատմական ճշմարտությանը, Եղիշեն գեղարվեստական մեծ վարպետությամբ է կերտել թե՛ Վասակի և թե՛ Վարդանի կերպարները, մեկին ներկայացնելով որպես հայրենադավ, մյուսին՝ հայրենասեր։ Վասակի մասին իր ասածները պատմիչն ամփոփում է հետևյալ խոսքերով՝ «Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա. զի ա-



մենայն՝ որ զայս լուեալ գիտասցէ, նզովս ի հետ արկցէ, և մի՛ լիցի ցանկացող նորա»[8]։ Սպարապետ Վարդան Մամիկոնյանը Եղիշեի մոտ ներկայանում է որպես հայրենասեր, քաջ ու համարձակ մի անձնավորություն։ Նա հայ ժողովրդի արդար պայքարի կազմակերպիչն է, որը հանուն ազատության պատրաստ էր զոհաբերելու նաև իր կյանքը։ Եղիշեն իր գրքում մեջ է բերում Ավարայրի ճակատամարտից առաջ Վարդանի հայրենասիրական շնչով արտասանած ճառը, որի մեջ շեշտվում է մեծ զորավարի անվեհերությունը, համեստությունն ու իր գործին անհունորեն նվիրված լինելը։ Դիմելով իր զինվորներին, նա ասում է՝ «Ի բազում պատերազմունս մտեալ է իմ, և ձեր ընդ իս է ուրեք՝ զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է ուրեք՝ զի նոքա մեզ յաղթեցին. և բազում այն է՝ որ յաղթող գտեալ եմք և ոչ յաղթեալք...

Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ նիզակակիցք իմ. մանաւանդ զի բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ... Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն, և մի՛ յահագին սրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուսցուք. ...և եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք»[9]։

Քաղաքական երկու գործիչների՝ մարզպան Վասակի և սպարապետ Վարդանի ու նրանց քաղաքականության հակադրությունը շեշտելով, Եղիշեն հետապնդել է մեկ հիմնական նպատակ՝ իր ժամանակակիցներին և հետագա սերունդներին դաստիարակել ջերմ հայրենասիրության ոգով։

Եղիշեն, որպես պատմիչ և որպես աստվածաբանությունը խորապես տիրապետող անձնավորություն, իր ասածները շատ հաճախ, որպես կանոն, հաստատում է Աստվածաշնչից և եկեղեցական գրականությունից կատարած մեջբերումներով։ Որպես հոգևորական, պատմիչը, 451 թվականի հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի շրջանակները նեղացնում ու հանգեցնում է միայն դավանափոխության և կամ Հազկերտ II-ի անձնական շարությանն ու հակումներին։ Պատմիչը չի նկատել, որ դավանափոխությունը լոկ միջոց էր Պարսկաստանի

---

[8] Եղիշե, էջ 140։

[9] Նույնը, էջ 100—102։

շատ ավելի հեռուն գնացող քաղաքական նպատակների համար, որոնք ի վերջո պետք է հանգեցնեին հայ ժողովրդին ֆիզիկապես ձուլելու և ոչնչացնելու փաստին։

Հայ պատմիչների գործերից ամենից շատ հրատարակություններ ունեցողը Եղիշեի գիրքն է։ Այն հայերեն, գրաբար կամ աշխարհաբար թարգմանությամբ, լույս է տեսել ավելի քան 30 անգամ։ Եղիշեի աշխատությունը թարգմանվել է նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն։ Հեղինակի ու նրա գործի մասին գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ։

Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» աշխատության գիտահամեմատական լավագույն հրատարակությունը 1957 թվականին Երևանում լույս տեսածն է, որը կատարել ու ծանոթագրել է Ե. Տեր-Մինասյանը։

**Ղազար Փարպեցի**

Ղազար Փարպեցու կյանքի ու գործունեության մասին եղած տեղեկությունները մենք քաղում ենք հենց իր՝ հեղինակի գործերից։ Սակայն այդ տեղեկությունները, որոնք ցրված են նրա աշխատություններում, սակավ են ու կցկտուր։

Ենթադրվում է, որ Ղազար Փարպեցին ծնվել է 441—443 թվականներին։ Նրա ծննդավայրը Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի Փարպի գյուղն է (այժմ՝ Աշտարակի մոտ), որտեղից էլ հեղինակի մականունը՝ Փարպեցի։

Այն հանգամանքը, որ Ղազար Փարպեցին դեռ մանուկ հասակից մոտիկ հարաբերությունների մեջ է գտնվել Մամիկոնյան, Կամսարական և Արծրունի նախարարական տների հետ և, ինչպես ինքն է վկայում, մանկության օրերն անց է կացրել Վահան Մամիկոնյանի ընկերակցությամբ՝ Աշուշա բդեշխի ապարանքում, խոսում է այն մասին, որ եթե Փարպեցու ընտանիքը բարձր դասից չէր սերվում, ապա գոնե ազնվականական տոհմերի հետ շփվելու ինչ-որ եզրեր ուներ։ Անշուշտ Ղազար Փարպեցու ընտանիքի հետ ունեցած ամենամտերմական կապերը միայն կարող էին Մամիկոնյանների շրջանում հոգատարության առանձնահատուկ զգացմունքներ առաջացնել ապագա պատմիչի նկատմամբ։ Մամիկոնյանների՝ Փարպեցու նկատմամբ ունեցած հոգատարությունը դրսևորվեց հետևյալ պայմաններում։



Ավարայրի ճակատամարտից հետո, 450-ական թվականների կեսերին Վահան Մամիկոնյանի այրիացած մայրը՝ Զվիկ իշխանուհին որդիների և եղբայրների հետ միասին տեղափոխվում է Ցուրտավ, իր քրոջ՝ Անուշվռամի մոտ, որի ամուսինը՝ Աշուշա բդեշխը, նոր էր վերադարձել Պարսկաստանից, ուր նա գտնվում էր որպես պատանդ մեծ դեպքերի օրերից ի վեր։ Նա իր հետ Վրաստան է տանում նաև մեր ապագա պատմիչին։ Ղազար Փարպեցու դաստիարակության գործում որոշակի դեր է կատարում Բյուզանդիայից նոր վերադարձած և իր ժամանակի ամենակրթված ու ամենազարգացած անձնավորություններից մեկը՝ Վահան Մամիկոնյանի քեռին՝ Աղան Արծրունին։ Պատանի Ղազարն իր ընդունակություններով ու համեստությամբ անմիջապես արժանանում է հմուտ ուսուցչի ուշադրությանը և ուսումն ավարտելուց հետո նրա կողմից հոգևորական ձեռնադրվելով, մոտավորապես 465—466 թվականներին մեկնում է Բյուզանդիա կրթությունը շարունակելու։

Բյուզանդիայում Փարպեցին սովորելով հունարեն և այլ լեզուներ ու մոտիկից ծանոթանալով անտիկ մտածողների աշխատություններին, ապա նաև եկեղեցական հարուստ գրականությանը, վերադառնում է հայրենիք ու բնակություն հաստատում Շիրակում՝ Կամսարականների մոտ։ Ղազար Փարպեցին Բյուզանդիայից պետք է վերադարձած լինի մոտավորապես 470-ական թվականների առաջին կեսերին։

Ղազար Փարպեցին Շիրակում մնում է բավական երկար, մինչև 484 թվականը, երբ Նվարսակի պայմանագրով Հայաստանում ստեղծվեց խաղաղության մի տևական շրջան։ Կրոնական ու եկեղեցական գործերի հետ միասին, նա Շիրակում, հավանաբար, զբաղվում էր նաև դպրոցական ու կրթական գործերով և շարունակում մեծ Մաշտոցի ավանդները։ 484—486 թվականներին Փարպեցուն մենք տեսնում ենք Սյունիքում, ուր նա գնացել էր դարձյալ եկեղեցական ու կրթական գործերով։

Նվարսակում 484 թվականին կնքված հայ-պարսկական հաշտության պայմանագիրը նշանակալից դեր կատարեց Հայաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում։ Այդ պայմանագրի անմիջական արդյունքն էր նաև 486 թվականին Վահան Մամիկոնյանի Հայաստանի մարզպան դառնալը, մի հանգամանք, որը ավելի մեծ հնարավորություններ էր ընձեռում նրան՝ ծավալելու երկրում շինարարական ու բարե-

նորոգչական աշխատանքներ։ 480-ական թվականների կեսերին նա սկսում է Վաղարշապատի Կաթողիկե եկեղեցու հիմնական վերակառուցման աշխատանքները, քանդել է տալիս հին անշուք եկեղեցին և նրա տեղում կառուցում քարակերտ մի հոյակապ շինություն, որն այսօր էլ համարվում է միջնադարյան հայ ճարտարապետության զարդը։ Այնուհետև Վահան Մամիկոնյանը վանքի միաբանությունը համալրում է տարբեր տեղերից հրավիրված գործունյա ու եռանդուն հոգևորականներով։ Ահա հենց այդ ժամանակ էր, որ հայոց մարզպանը Սյունիքից Վաղարշապատ է կանչում նաև իր մանկության ընկերոջը, ուսյալ ու ճանաչված Ղազար Փարպեցուն և նշանակում Վաղարշապատի վանքի առաջնորդ։ Օգտվելով Վահան Մամիկոնյանի բարյացակամ վերաբերմունքից ու հովանավորությունից, Ղազար Փարպեցին Վաղարշապատում սկսում է ծավալել բեղմնավոր գործունեություն։ Նա բարեկարգում է վանքի շինությունները, կարգավորում վանքի ու միաբանության գործերը։ Նա շուտով ձեռք է բերում մեծ հեղինակություն և հռչակվում որպես կրթված, գիտակ ու շնորհալի անձնավորություն։ Վաղարշապատյան գործունեության ընթացքում նրան մեծ օգնություն և աջակցություն էին ցույց տալիս նաև Վահան Մամիկոնյանի եղբայրներն ու հարազատները, Կամսարական իշխանները և հայոց մարզպանին մոտ կանգնած այլ անձինք։

Սակայն որքան տարածվում էր Ղազար Փարպեցու համբավը, այնքան գրգռվում ու զայրանում էին նրա թշնամիներն ու հակառակորդները։ Նրանց սկզբում հաջողվում է հաղթանակի հասնել։ Փարպեցու շուրջը հյուսվող դավերն ու բամբասանքներն ավելի են ուժեղանում Հովհան Մանդակունի կաթողիկոսի մահվանից հետո (490 թ.), երբ կաթողիկոսական աթոռը գրաված Բաբգեն Ա Ութմսեցին (490—516), շարաբանությունները սանձահարելու փոխարեն, իր անտարբերությամբ ավելի է բորբոքում կրքերը։ Օգտվելով կաթողիկոսի գրաված դիրքից, Ղազարի հակառակորդները կարողանում են նույնիսկ իրենց զրպարտություններն ու բամբասանքներն արտահայտել Վահան Մամիկոնյանի մոտ։ Այս խարդավանքներին հակահարված տալ չկարողանալով, Փարպեցին ստիպված է լինում թողնել Վաղարշապատն ու հեռանալ Ամիդ։ Այստեղ նա շարադրում է իր հայտնի «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» նամակը, որը մարզպանին է հասցնում Համազասպ Մամիկոնյանը։ Այս



փաստաթղթի մեջ հեղինակը կուռ տրամաբանությամբ մերկացնում է իր հակառակորդներին, վեր հանում նրանց տգիտությունն ու նենգամտությունը և ապա բանավիճելու մեծ վարպետությամբ ու հիմնավոր փաստարկումներով հերքում իր դեմ հարուցված բոլոր մեղադրանքները։

Ինչպես երևում է, Ղազար Փարպեցու «Թուղթը» շատ մեծ ազդեցություն է ունեցել Վահան Մամիկոնյանի վրա։ «Թուղթը» կարդալուց հետո Վահանը ոչ միայն անհապաղ իր մոտ է հրավիրում Ղազարին, այլև հանձնարարում է նրան գրելու Հայոց պատմությունը, որն ավելի պատասխանատու, բայց միաժամանակ պատվավոր մի առաջադրանք էր։

Փարպեցու Ամիդ գնալու և վերադառնալու ճշգրիտ թվականը չգիտենք։ Ենթադրաբար միայն կարելի է ասել, որ դա տեղի է ունեցել 490—492 թվականներին։ Ուրեմն Փարպեցին Հայոց պատմություն գրելու առաջադրանքն ստացած պետք է լինի 493 թվականին։ Եվ որովհետև մի այդպիսի աշխատություն հնարավոր էր ավարտել ամենաքիչը 3—5 տարում, ուստի այդ հանձնարարությունը նա կատարած պետք է լինի V դարի վերջերին։ Դրանից հետո, ըստ երևույթին, Ղազար Փարպեցին երկար չի ապրում և մահանում է V դարի վերջերին կամ VI դարի սկզբներին։ Ավանդությունն ասում է, որ նա թաղված է Փարպիի ձորի վերին մասերում՝ Լազրևան գյուղի հարավային կողմում գտնվող մի հին ու քանդված եկեղեցու մոտ։ Ավանդության մեկ այլ տարբերակում ասվում է, որ նա թաղված է Մուշի Առաքելոց կամ Ղազարու վանքում։

«Թուղթ առ Վահան Մամիկոնեան» և «Պատմութիւն Հայոց» աշխատություններից բացի, Ղազար Փարպեցին, ըստ երևույթին, ուրիշ ստեղծագործություններ չի ունեցել։ Սակայն այդ երկուսն էլ բավական են եղել միջնադարյան հայ դասական հեղինակների շարքում նրան պատվավոր տեղ ապահովելու համար։

Փարպեցու «Թուղթը» իրականում մի արժեքավոր վավերագիր է, որը շոշափում է հեղինակի ապրած ժամանակաշրջանի պատմական ու հասարակական խնդիրները։ Այն հրապարակախոսական-քննադատական մի երկ է, որտեղ հեղինակի անձնականին ու կենսագրականին վերաբերող հատվածները փաստորեն ունեն երկրորդական նշանակություն, առաջնայի-

նը ընդհանուր, հասարակական-քաղաքական ու եկեղեցական խնդիրների վերլուծությունն է, որը տրվում է տրամաբանական ու վերլուծական հզոր ուժով։ «Թուղթը» առաջնակարգ ու վավերական աղբյուր է, որտեղ իրական գույներով ներկայացված են V դարի հայկական եկեղեցու, եկեղեցական գործիչների ու մտավորականության շրջանում գոյություն ունեցող հակադրություններն ու նրանց միջև մղվող անհաշտ պայքարի դրվագները։

Ղազար Փարպեցու «Թղթից» մենք իմանում ենք նաև, որ միայն ինքը չի հալածանքների ու զրպարտանքների ենթարկվել։ Այդ հալածանքներն ընդհանրապես ուղղված են եղել հայ առաջավոր մտավորականների ու եկեղեցականների դեմ, որոնք, պատմիչի, վկայությամբ, ավելի վատթար վիճակի մեջ են ընկել, քան ինքը։ Հանձինս անձնական թշնամիների, Փարպեցին իրականում մերկացնում է Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի մահվանից հետո իր գործունեությունն ուժեղացրած հետադեմ կղերականության մտավոր ու բարոյական ապատները։

Փարպեցու այս աշխատությունն աչքի է ընկնում նաև հին դարերում այնքան տարածված բանավիճելու և հրապարակախոսական հնարքներով. այստեղ հեղինակը դրսևորում է ընթերցողին համոզելու, նրա վրա ներգործելու արտակարգ շնորհք ու վարպետություն։

«Թուղթը» որպես պատմական սկզբնաղբյուր ժամանակին շատ բարձր է գնահատել հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը, որը և այն թարգմանել է աշխարհաբար (Պետերբուրգ, 1868 թ.)։

Պատմական ու գիտական առումով ավելի մեծ արժեք ունի Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկը։ Այդ աշխատության մեջ եղած ակնարկներից երևում է, որ Վահան Մամիկոնյանը ոչ միայն պատվիրել, այլև Ղազարին տվել էր գրելիք գրքի ծրագիրն ու նպատակը։ Մարզպանն առաջարկել է շարունակել Փավստոս Բուզանդին և շարադրել IV դարի վերջերի ու V դարի Հայաստանի քաղաքական ու եկեղեցական պատմությունը՝ մեկ հիմնական նպատակով. «Որպէսզի զհոգևորացն զբարի վարսն լուեալ բազմութեան ժողովրդոցն՝ նմանողք լինել ցանկասցին մարդիկ ճգնութեանց նոցա, և քաջքն լսելով զայլոց զգործսն յառաջագոյն քաջացելոցն՝ յաւելեալ



յանձանց քաջութիւն՝ անուանի յիշատակ թողցեն զկնի իւրեանց՝ անձանց և ազգի։ Իսկ ծոյլքն և վատքն հայելով յանձինս և լսելով զայլոց զպարսաւանս՝ ի բարի նախանձն կրթեալք ջանասցեն լաւանալ»[10]։

Ղազար Փարպեցին տրված առաջադրանքն իրագործելու համար ամենից առաջ պետք է լուրջ նախապատրաստական աշխատանք կատարեր, ծանոթանար կարևոր սկզբնաղբյուրներին ու դրանցից ընտրեր իր համար առավել անհրաժեշտ նյութերը։ Այս առումով, իհարկե, նրա ուշադրության կենտրոնում նախ և առաջ պետք է լինեին հայկական գրավոր սկզբնաղբյուրները։ Փարպեցին իր աշխատության առաջաբանում հիշատակում է Ագաթանգեղոսին և Փավստոս Բուզանդին, տալիս է նրանց աշխատությունների համառոտ բովանդակությունը, ցուցաբերում քննադատական մոտեցում և ապա արժեքավորում դրանք։ Ագաթանգեղոսի ու Փավստոսի գրքերը անվանելով առաջին և երկրորդ պատմություն, իր աշխատությունը համարում է երրորդը և նշում, որ ինքը շարունակում է նրանց։ Փարպեցու նման հեղինակը, որ ամենայն լրջությամբ գիտակցում էր իր կատարած գործի կարևորությունն ու նշանակությունը, չէր կարող բավարարվել միմիայն հայերեն գրավոր սկզբնաղբյուրների օգտագործումով։ Նա, հետևելով իր ժամանակի առաջավոր պատմագրության սկզբունքներին, օգտագործում է նաև կողմնակի աղբյուրներ, որոնում, գտնում է հասարակական-քաղաքական դեպքերի աչքի ընկնող մասնակիցներին ու ականատեսներին և նրանց պատմածներից քաղում անհրաժեշտ ու գրավոր աղբյուրները լրացնող տեղեկություններ։ Պետք է նշել, նաև, որ այս դեպքում Ղազար Փարպեցին կուրորեն չի արձանագրում ամեն պատմած ու ամեն լսած, այլ դրանք ուշադրությամբ քննում ու ստուգում է, պարզում նրանց հավաստիությունն ու ճշտությունը և նոր միայն սկսում նյութի շարադրանքը։ Սակայն բոլոր պատմողներն ու ականատեսները չեն, որ ամեն ինչ հիշում կամ դրանք ճշտությամբ կարողանում են վերարտադրել։ Նման դեպքում Փարպեցին ցավ է հայտնում ու ընթերցողներին զգուշացնում, որ եղած թերությունների նկատմամբ ներողամիտ լինեն, որովհետև ուրիշների մեղքով է, որ ինքը չի կարողացել այս կամ այն տե-

[10] «Ղազարայ Փարպեցւոյ պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Տփղիս, 1904, էջ 5։

զեկությունը լիովին ստուգել ու պարզաբանել։ Փարպեցին իր գրքի առաջաբանում պարզ ու որոշակի գրում է, որ պատմաբանը ոչ չեղածը պետք է ավելացնի և ոչ էլ եղածն անհոգաբար կրճատի ու պակասեցնի, այլ ամեն ինչ պետք է շարադրի բարեմիտ զգուշությամբ ու պարտաճանաչության զգացումով. «Պիտոյ են յարմարութիւնք բանից, որոշեալ կարգադրութիւնք՝ ըստ հրամանի կանոնեալ գիտութեանն, բերել պատկառելով ստուգագրութիւն անպարսաւ յականջս իմաստասէր լսողաց. չյաւելուլ զանեղեալսն՝ յընդունայն աճմանս բանից. չնուազեցուցանել զեղեալսն և կարճակտուր պատմել բանիւք անփութութեամբ. այլ զբնաւն ողջախոհ զգուշութեամբ բերել ի յայտնութիւն»[11]։

Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ը բաղկացած է երեք մասերից, որոնք հեղինակի կողմից անվանված են դրվագներ։ Գիրքն ունի նաև մի փոքրիկ առաջաբան։

Ինչպես առաջաբանից, այնպես էլ գրքի սկզբի մասերից երևում է, որ հեղինակը մտադրություն ունենալով շարադրելու իր հայրենիքի քաղաքական պատմությունը, ընդգրկելու է թեև ոչ մեծ, բայց որոշակի մի ժամանակաշրջան։ Նա շարադրանքը սկսում է այնտեղից, որտեղ ընդհատել էր Բուզանդը, այսինքն՝ 387 թվականից, երբ Հայաստանն առաջին անգամ բաժանվեց Պարսկաստանի և Հռոմի միջև։

Իր գրքի առաջին դրվագում Ղազար Փարպեցին հաջորդաբար և մանրամասնորեն շարադրում է IV դ. վերջերի հայոց թագավորության քաղաքական պատմությունը։ Այստեղ Հայաստանի համար ծանր ու ավերիչ պարսկա-հռոմեական պատերազմների նկարագրությունից և 387 թվականի բաժանման համադոտ ակնարկից հետո պատմիչը ներկայացնում է Արևելյան Հայաստանում տնօրինություն անող Սասանյանների նենգ ու դավադիր քաղաքականության դրվագները, քաղաքականություն, որը հանգեցնում էր հայ հոգևոր և աշխարհիկ իշխանավորների պառակտմանն ու անմիաբանությանը և հայկական կիսանկախ պետության քաղաքական ու տնտեսական թուլացմանը։ Այս քաղաքականության միջոցով է, որ պարսկական արքունիքին հաջողվում է հայոց մեծամեծներից ոմանց ոտքի հանել նույնիսկ Արշակունյաց տոհմի գահակալների՝

[11] Ղազար Փարպեցի, էջ 6։



Աշշակի, Խոսրովի և մյուսների դեմ։ Փարպեցու պատմածներից երևում է, որ Սասանյանները նույն կերպ, նույն հաջողությամբ պառակտում և թուլացնում էին նաև հայոց հոգևոր իշխանությունը՝ կաթողիկոսությունը։ Հենց IV դարի վերջում և V դարի սկզբում էր, որ հայոց կաթողիկոսական աթոռից զրկպարտությամբ ու սադրանքով հեռացված Սահակ Պարթևին իբար ետևից փոխարինում են բանսարկու և դավադիր Սուրմակ Արծկեցին, իսկ ապա նույնիսկ ասորի կրոնավորներ Բրքիշոն ու Շամուելը։ Պատմության առաջին դրվագն ավարտվում է հայկական Արշակունի հարստության անկման (428 թ.) և Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի մահվան (439 և 440 թթ.) հետ կապված դեպքերի նկարագրությամբ։

Գրքի երկրորդ դրվագի նյութը նույնն է, ինչ արդեն գրել էր Եղիշե պատմիչը։ Այստեղ Փարպեցին անդրադառնում է Վարդանանց պատերազմին և նրան նախորդող ու հաջորդող իրադարձությունների մանրամասնություններին։

Եղիշեի և Փարպեցու աշխատությունների՝ Վարդանանց պատերազմին վերաբերող բաժիններն իրար նման են և, բնականաբար, ունեն շատ ընդհանրություններ։ Սրա հիմնական պատճառը, իհարկե, եղել է հեղինակների գրեթե ժամանակակից և նկարագրվող դեպքերին ականատես լինելու հանգամանքը։ Թեև Փարպեցին Վարդանանց պատերազմի մասին շատ բան չի ավելացնում Եղիշեի գրածների վրա, այնուամենայնիվ, նա անդրադարձել է այդ իրադարձություններին՝ ելնելով իր ծրագրից։

Երրորդ դրվագում հեղինակը պատմում է Սասանյան Պարսկաստանի՝ հայերի նկատմամբ սկսած նոր քաղաքականության մասին, որը կենսագործվում էր ավելի խորամանկ և ավելի խարդախ եղանակներով։ Վարդանանց ժամանակների ուժի և բռնության քաղաքականության փոխարեն, պարսիկները ըսկըսել էին ներքուստ պառակտել ու թուլացնել Հայաստանը։ Դրա համար էլ նրանք ամեն կերպ խրախուսում և ասպարեզ էին տալիս թույլ, կեղծավոր ու անձնապաշտ տարրերին, իսկ հայրենասեր ու ողջախոհ նախարարներին ամեն կերպ աշխատում էին ասպարեզից հեռացնել կամ չեզոքացնել։

Սակայն 460-ական թվականներից սկսած Հայաստանում քաղաքական իրավիճակը փոխվում է հօգուտ հայրենասեր ու-

ժերի։ Այս կամ այն ձևով ապատվում և հայրենիք են վերադառնում դեռևս Վարդանանց կռիվների ժամանակ աքսորված նախարարները։ Փարպեցին վկայում է, որ այդ ժամանակներից սկսած երկրի քաղաքական կյանքին տոն տվողները դառնում են հենց այս ուժերը, որոնց գլխավորում էր եկեղեցական խոշոր գործիչ Գյուտ կաթողիկոսը (461—478)։ Գյուտի նախաձեռնությամբ էր, որ հայերը գաղտնի բանակցություններ են սկսում Բյուզանդիայի հետ, ապագա ապստամբության ժամանակ նրանից օգնություն ստանալու ակնկալություններով։ Սակայն հայրենասեր ուժերի նմանօրինակ գործողություններն աննկատ չեն մնում պարսիկներից։ Քոռ և դավաճան անձինք այս դեպքերի մասին անմիջապես տեղեկացնում են պարսկական իշխանություններին, որի արդյունքը լինում է Գյուտին կաթողիկոսական աթոռից զրկելը և քաղաքական ասպարեզ նոր իջած Վահան Մամիկոնյանին զրպարտելը։ Բայց Վահանը երկու անգամ Տիզբոն գնալով, իր ճարպկությամբ ու հեռատեսությամբ կարողանում է փարատել պարսից արքա Պերոզի կասկածանքները ու ստանալ Հայաստանի հաղթահավաքության իրավունքը։

481 թվականին Արևելյան Վրաստանում ծավալված հակապարսկական ապստամբական շարժումները նոր լիցք են տալիս նաև հայերին։ Հենց նույն թվականին Հայաստանի մարզպան Ատրվշնասպը հրաման է ստանում Վրաստան արշավելու, սակայն նրա հրամանատարության տակ գտնվող հայ զինվորականները որոշում են չենթարկվել և հարմար առիթն օգտագործել ապստամբելու համար։ Նրանք իրենց որոշման մասին հայտնում են Վահան Մամիկոնյանին, իսկ վերջինս միավորելով հայկական զինված ուժերը, հարձակվում է Դվինի վրա, պարտության մատնում պարսիկներին, գրավում քաղաքն ու կազմում կառավարություն՝ մարզպանության պաշտոնը տրվում է Սահակ Բագրատունուն, իսկ սպարապետությունն ստանձնում է Վահանը։

481—482 թվականների ձմեռը Վահան Մամիկոնյանը, մեկընդմեջ պարսիկների դեմ կռիվներ մղելու հետ միասին, նախապատրաստական մեծ աշխատանքներ է կատարում հետագա անակնկալներին դիմագրելու համար։ Այս ընթացքում Վահանի ջանքերով ապստամբության մեջ ընդգրկվում են նորանոր նախարարություններ և ժողովրդական, աշխարհազորային



զանգվածներ։ 482 թվականի գարնանը հայերը շախշախելով պարսկական ուժերին, շահում են նաև Ներսեհապատի ճակատամարտը, որից հետո Վահան Մամիկոնյանի հեղինակությունն ավելի է մեծանում։

Երրորդ դրվագի կարևոր հատվածներից մեկն էլ հայ և վրաց ապստամբական ուժերի՝ պարսիկների դեմ միատեղ հանդես գալուն նվիրված մասերն են։ Թեև բախումը պարսիկների հետ Կուրի ափին՝ Ճարմանայի դաշտում 482 թվականին, վերջացավ դաշնակիցների պարտությամբ, սակայն դա չհուսահատեցրեց ո՛չ Վահան Մամիկոնյանին և ո՛չ էլ ապստամբության սրբազան գործին անձնուրացաբար նվիրված նրա զինակիցներին։ Որքան աճում էր Պարսկաստանի ճնշումը Հայաստանի վրա, այնքան տարածվում էր ապստամբական շարժումը։ Վահան Մամիկոնյանն իր քաջարի զինակիցների հետ փոխել էր կռվի տակտիկան։ Նա պարտիզանական փոքր խմբերով ամենուրեք հետապնդում ու ոչնչացնում էր թշնամուն։ Վահան Մամիկոնյանի վրիժառուները քայլ առ քայլ հետապնդելով ու հարվածելով հակառակորդին, ոչ միայն հյուծում էին պարսիկների ուժերը, այլև սարսափի մեջ էին գցում նրանց, որի հետևանքով թշնամին արագորեն կորցնում էր իր մարտունակությունը և հաղթանակի նկատմամբ մի ժամանակ ունեցած հավատը։

484 թվականը ժողովրդազատագրական ապստամբության շրջադարձային տարին դարձավ։ Հեփթալները պարսիկներին արևելքում ավելի ծանր հարվածներ հասցրին։ Այս կռիվներում սպանված Պերոզին փոխարինած Վաղարշն ստիպված է լինում բանակցություններ սկսել Վահան Մամիկոնյանի հետ ու կնքել Նվարսակի հաշտության պայմանագիրը։ Փարպեցու պատմածից երևում է, որ թեև այս պայմանագրով Հայաստանն ամբողջապես չթոթափեց պարսկական լուծը, բայց հայերը կարողացան հարկադրել Սասանյաններին՝ հրաժարվելու կրոնական և քաղաքական հալածանքներից ու ճանաչելու հայ ազնվականության իրավունքները։ 481—484 թվականներին հայ ժողովրդի ձեռք բերած ռազմական ու քաղաքական հաղթանակի արդյունքն էր նաև մարզպանության պաշտոնի հանձնումը Վահան Մամիկոնյանին, որի առթիվ երկրում տեղի ունեցած համաժողովրդական ցնծության և ուրախության նկարագրությամբ էլ ավարտվում է Ղազար Փարպեցու «Պատմությունն Հայոց»։

Փարպեցու աշխատությունը հայ մատենագրության մեծարժեք պատմագիտական երկերից է։ Հայրենասեր պատմիչի գրքով բազմաթիվ սերունդներ են դաստիարակվել։ Պակաս արժեքավոր չէ այն նաև իբրև գրական հուշարձան։ Հեղինակը իր խոսքը կառուցում է տրամախոսություններով, հակադրություններով, բնության գեղեցկությունները պատկերում է ճաշակով ու նուրբ արվեստով։ Արաբատյան դաշտի նկարագրությունը ոչ միայն նրա Պատմության, այլև հայոց միջնադարյան գրականության ամենագեղեցիկ էջերից մեկն է։

Ղազար Փարպեցու հաղորդած տեղեկությունները միանգամայն վստահելի են։ Նրա աշխատությունը բացառիկ արժեք ունի ոչ միայն հայ ժողովրդի, այլև վրաց ու աղվանից ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար։ Ղազար Փարպեցու Պատմությունը հրատարակվել է մի քանի անգամ։ Լավագույնը Թիֆլիսի 1904 թվականի քննական հրատարակությունն է, որ կատարել են Գ. Տեր-Մկրտչյանը և Ստ. Մալխասյանցը։ Այն թարգմանվել է նաև օտար լեզուներով, ինչպես նաև աշխարհաբար, որ կատարել է Բ. Ուլուբաբյանը (Երևան, 1982)։

**Մովսես Խորենացի**

Միջնադարյան հայ պատմագրության ամենաականավոր ներկայացուցիչը Մովսես Խորենացին է, որին ամենայն իրավամբ անվանում են Պատմահայր։ Խորենացին իր մասին շատ քիչ տեղեկություններ է հաղորդում, իսկ հետագա հեղինակները առանձնապես նոր բան չեն ավելացնում եղածի վրա։ Այդ է պատճառը, որ Խորենացու և նրա ստեղծագործությունների վերաբերյալ նույնպես բանասիրական լուրջ վեճեր են ծավալվել։

Մովսես Խորենացին ծնվել է Տուրուբերան աշխարհի Տարոն գավառի Խորոնք գյուղում, հավանաբար 410—415 թվականներին։

Խորենացին Տարոնի դպրոցներից մեկում կրոնի, գրչության արվեստի, թվաբանության, տոմարի և այլ գիտությունների մասին նախնական գիտելիքներ ձեռք բերելուց հետո, մեկնում է Վաղարշապատ, որն այն ժամանակ ոչ միայն Հայաստանի մայրաքաղաքն էր, այլև մշակույթի կարևորագույն կենտրոններից մեկը։ Վաղարշապատում Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և մյուս առաջավոր մտավորականների անմիջական հսկողության ու հոգատար վերաբերմունքի մթնոլորտում ապագա պատմիչը շարունակում է իր ուսումը հատկապես կրոնի, փիլիսոփայության և հունարենի ու ասորերենի ուսումնասիրության ուղղությամբ և ձեռք է բերում կայուն գիտելիքներ։

V դարի 30-ական թվականներին Հայաստանի մշակութային կենտրոններում և հատկապես Վաղարշապատում Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի ջանքերով հսկայական աշխատանք էր կատարվում մեսրոպատառ գրերով հայ նոր գրականության ստեղծման ուղղությամբ։ Հայ մշակույթի երախտավորները միաժամանակ եռանդուն կերպով ձեռնարկում էին նաև հունարենից և ասորերենից կրոնական ու գիտական բովանդակություն ունեցող գրականության թարգմանությունը։ Օտար գրականության նկատմամբ եղած մեծ պահանջը բավարարելու և առաջին անհրաժեշտության գրքերը հայերեն թարգմանելու գործը արագացնելու նպատակով, Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը Վաղարշապատի դպրոցի ընդունակ և խոստումնալից պատանիներին ընտրելով, ուղարկում էին արտասահման՝ բարձրագույն կրթություն ձեռք բերելու և ստեղծագործական ու թարգմանական արվեստին տիրապետելու համար։ Մովսես Խորենացին, որն իր ընդունակություններով հենց սկզբից գրավել էր մեծ ուսուցիչների ուշադրությունը, եղավ արտասահման ուղարկվողներից մեկը։ Նա հայ ուսանողների խմբի հետ արտասահման է մեկնում Եփեսոսի 431 թ. եկեղեցական ժողովից հետո։

Մովսես Խորենացին իր ընկերների հետ առաջին կանգառը կատարում է Ասորիքի Եդեսիա քաղաքում, ծանոթանում է Արևելքի այդ խոշոր գիտական կենտրոնին, լինում նրա հարուստ գրադարաններում, հետո անցնում է Երուսաղեմ, իսկ այնտեղից էլ՝ Ալեքսանդրիա, որը և դառնում է հայ ուսումնատենչ երիտասարդների ուսումնառության հիմնական հանդրվանը։ Ահա թե ինչպես է արտահայտում Մովսես Խորենացին իր առաջին տպավորությունները հեքիաթային Եգիպտոսի և նշանավոր Ալեքսանդրիայի մասին. «Ես... մտաք յԵգիպտոս, յաշխարհն համբաւատենչ, յանչափից հրաժարեալ ի ցրտոյ և ի տօթոյ, ի հեղեղաց և յերաշտից, ի գեղեցկումն մասին երկրի զդիրն ունելով, ամենազան պտղովք աւլցեալ, և անձեռա-

գործ պարապեալ նեղոսի. որ ոչ պահպանութիւն միայն, այլ և կերակուր նմա բաւական մատուցանել բնաւորեաց յինքեանէ, և առատմամբ տէր զոլ պատահեաց և շորութեան և խոնաւոյ՝ առ երկրին գործաւորութիւն. և զանեղեն ի նմա դիւրածել գետոյն բերիւք՝ հանգիստակ կղզւոյ առատագիւտս առնէ, շուրջ պարունակելով և ընդ ամենայն հոսելով, որոհմամբ երկոտասանից վտակաց։ Ցորում բարեյարմար մեծն Աղեքսանդրիայ է շինեալ քաղաք բարեժամանակ ի մէջ ծովուն, և ձեռագործ լիճ կառուցեալ. յորոց օդոցն քաղցրախառնութիւն փչեցեալ, որ ի լճէն բերանք արձակին ի ծովն, և որք ի ծովէքն մօտի ելոյ որ ելանեն ստէպ ստէպ սղողք օդոյ, անօրուանք այն որ ի ծովէն, և թանձանք որ ի լճէն. որոց խառնուածն առողջագոյն զհաստատութիւն կենաց գործէ»[12]։

Ալեքսանդրիան այն ժամանակ, քրիստոնեական գաղափարախոսության գերիշխանության պայմաններում նույնիսկ, դեռևս պահպանում էր իր աշխարհահռչակ գիտական կենտրոնի դերը և 5—6 տարվա ուսման շրջանը միանգամայն բավական էր Մովսես Խորենացու նման խելք ու ընդունակ երիտասարդի համար, որպեսզի նա կարողանար ձեռք բերել այն, ինչ իրեն անհրաժեշտ էր։ Մենք չգիտենք, թե հայ երիտասարդները Ալեքսանդրիայում որոշակի ո՞ր դպրոցում կամ ո՞ւմ մոտ են սովորել։ Սակայն Խորենացու ակնարկը, թե իր ուսուցիչներից մեկը փիլիսոփայության նեոպլատոնականության ուղղությանն էր պատկանում, հնարավորություն է տալիս ենթադրելու, որ մեր պատմիչը չէր կարող անմասն մնալ ուսուցչի գաղափարներից։

Ալեքսանդրիան, որ այն ժամանակ գիտությունների ամենաբազմազան ճյուղերի զարգացման ու տարածման կենտրոններից մեկն էր աշխարհում, շատ կարևոր դեր է կատարում Խորենացու ու նրա ընկերների մտավոր զարգացման, նրանց գիտելիքներ տալու գործում։ Խորենացին այստեղ կատարելագործում է հունարեն և սորերեն լեզուները, տիրապետում քրիստոնեական արվեստին, հունական մատենագրությանն ու դիցաբանությանը, ծանոթանում փիլիսոփայությանը, աստվածաբանությանը, ճշգրիտ գիտություններին և այլն։ Եվ այս-

[12] «Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, էջ [illegible]—345։



պիսով, ուսումը հաջողությամբ ավարտելով և գիտական մեծ պաշարով Մովսես Խորենացին իր ընկերների հետ, ծովային ճանապարհով, վերադառնում է Աթենք։ Սակայն ալեկոծությունն ու հակառակ հոսանքները նրանց նավը քշում տանում են Իտալիայի ափերը, որը և մի բարեպատեհ առիթ է դառնում հայ ուսյալների համար՝ ծանոթանալու աշխարհահռչակ Հռոմին ու նրա հարուստ մշակույթին։ Խորենացին գալիս է Աթենք, իսկ այստեղից էլ Կոստանդնուպոլսի վրայով վերադառնում է հայրենիք 440 թվականից հետո, երբ իր ուսուցիչները՝ Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցն արդեն մահացել էին։

Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի մահից հետո համեմատաբար ազատ գործելու ասպարեզ են ստանում տգետ ու խավարամոլ եկեղեցականները, որոնք հնարավոր բոլոր միջոցներով սկսում են պայքարել Մաշտոցի և Սահակի առաջավոր ավանդների և այդ ավանդները սրբությամբ պահպանող ու շարունակող կրթված ու զարգացած մտավորականների դեմ։ Եվ ահա հայրենիքում Խորենացին ու իր ընկերները նույնպես չեն կարողանում խուսափել հետադիմական ուժերի հալածանքներից։ Մովսես Խորենացին իր դրքի վերջում դառնությամբ արձանագրում է, որ վերադարձից հետո ոչ միայն իրենց չեն հարգում, ասպարեզ չեն տալիս, այլև ենթարկում են ծաղր ու ծանակի և անարգում։ «Ո՞վ այսուհետև զմերս յարգեսցէ զուսումն,—բացականչում է պատմիչը,—ո՞վ ուրախասցի ընդ յառաջադիմութիւն աշակերտիս. ո՞վ զհայրական բարբառեսցի զուարճութիւն, մասամբ ինչ յաղթահարեալ յորդւոյս։ Ո՞վ կարկեսցէ զյանդգնութիւն ընդդէմ առողջ վարդապետութեան հակառակ յարուցելոցն, որք ամենայն բանիւ քակտեալք և քաջքեալք՝ յոլովս փոփոխեն վարդապետս և բազում դիրս, որպէս ասաց ոմն ի հարցն. առ ամենայն բան նմանապէս դժուարին, և շար օրինակ անձանց գրեն զայն՝ զծիծաղելն զմեօք և զարհամարհելն իբրև զանհաստատունովք, և որ ինչ պիտանացու ունիցի արուեստս։ Ո՞վ զնոսա ըմբերանեսցէ սաստելով, և զմեզ ոգեսցէ գովելով, և չափ ցնիցէ բանի և լռութեան»[13]։

Մովսես Խորենացին, սակայն, այդ մռայլ ու թշնամական միջավայրում անգամ չի հուսահատվում և իր մեջ ունենալով նրանք մեծ ուժ, կարողանում է արհամարհել բոլոր խավարա-

[13] Նույնը, էջ [illegible]։

մոլներին ու մեծամեծ դժվարություններ հաղթահարելով, դրպրոց է բաց անում և հատուկ նվիրվածությամբ սկսում մանուկներին հաղորդել իր անբավ գիտելիքները։ Ուսուցչության հետ մեկտեղ, Խորենացին անդուլ կերպով զբաղվում է նաև գիտական-ստեղծագործական աշխատանքով, կատարում է թարգմանություններ, հորինում տասնյակ հոգևոր երգեր ու երաժշտություն, գրում այլ գործեր, որոնցից դժբախտաբար մեզ քիչ բան է հասել։ Սակայն այդ քչերի մեջ էլ ի հայտ են գալիս Խորենացու գիտական մեծ պատրաստվածությունն ու լայն աշխարհայացքը։ Այդ է պատճառը, որ տարիների ընթացքում Մովսես Խորենացին ոչ միայն կարողանում է ձեռք բերել մեծ հեղինակություն և ջերմ համակրանք, այլև նրա մասին սկսում են ավանդություններ հորինել։ Վերջապես խավարի շղարշը պատռվում է և ժամանակի ականավոր ռազմաքաղաքական գործիչ Սահակ Բագրատունին մեծ վստահությամբ նրան հանձնարարում է գրել հայոց պատմությունը, իսկ Գյուտ I կաթողիկոսը իր դպրոցական ընկերոջը շնորհելով եպիսկոպոսի աստիճան, նշանակում է Բագրևանդի թեմի առաջնորդ։ Ու թեև այդ վերափոխումները տեղի ունեցան Խորենացու կյանքի վերջին տարիներին, պատմիչը, դրանից շատ ոգևորվեց և եռանդուն կերպով ձեռնամուխ եղավ հանձնարարված աշխատանքները կատարելու։ Թե հոգեկան ինչպիսի բերկրանք էր առաջացել Խորենացու մեջ Սահակ Բագրատունու առաջարկությունը ստանալուց հետո, այդ երևում է իշխանին հղած նրա թղթի հենց առաջին տողերից, որտեղ պատմիչը հրճվալից բացականչում է. «Զանսպառ խաղացմունս ի քեզ աստուածայնոցն շնորհացն և զանդուլ հոգւոյն ի վերայ քոց իմացուածոցդ զշարժմունս ծանեայ ի ձեռն գեղեցիկ խնդրոյս, յառաջ քան զմարմնոյդ՝ զհոգւոյդ ընկալեալ զծանօթութիւն. որ և սիրելի իսկ իմոց ախորժակացս է, առաւել ևս սովորութեանցս։ Վասն որոյ ոչ միայն գովել արժան է զքեզ, այլ և ի վերայ քո աղօթել՝ առ ի լինել քեզ միշտ այսպիսի»[14]։ Սրանք, իհարկե, մոռացության մատնված պատմիչի՝ իր մեկենասի հասցեին ասված հաճոյական խոսքեր չէին, այլ խոշոր գիտնականի անկեղծ շնորհակալությունը այն մարդուն, որը պետական գործերով անչափ զբաղված լինելով հանդերձ, հասկանում ու գնահատում էր

[14] Նույնը, էջ 5։



գիտությունը։ Խորենացու թղթից հետևում է, որ նա իր Պատմությունն ավարտած պետք է լինի 480-ական թվականների սկզբներին։ Սահակ Բագրատունու զոհվելուց առաջ, որը տեղի է ունեցել 482 թվականին, Ճարմանայի ճակատամարտում։

Սահակ Բագրատունու հանձնարարությունը ստանալով, Խորենացին ակամայից զուգահեռներ է անցկացնում Հայաստանի ու Հունաստանի միջև և գովելով հույն թագավորներին ու իշխաններին գիտության, արվեստների ու պատմության նկատմամբ նրանց ցուցաբերած սիրո և հովանավորության համար, միաժամանակ խիստ քննադատում է հայ միապետներին ու իշխանավորներին որպես անբան, թուլամիտ, վայրենի տղամարդիկ, որոնք գրեթե ոչինչ չեն արել գիտության զարգացման և գիտնականների գործունեությանը նպաստելու համար։ Սակայն դրա հետ միասին, պատմիչը հայրենասիրական ջերմ զգացմունքով շատ բարձր է գնահատում հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը և առանց պարծենկոտության բացականչում է. «Զի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի, զոր և ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել»[15]։ Հենց այսպիսի հայրենասիրական ջերմ զգացմունքներով էլ նա շարադրում է իր «Պատմութիւն Հայոց»-ը։

Խորենացին առաջին հայ պատմիչն էր, որ ձեռնարկում էր գրել Հայաստանի ամբողջական պատմությունը ամենահնագույն ժամանակներից սկսած մինչև իր օրերը։ Նման մի աշխատանք հաջողությամբ գլուխ բերելը ինքնըստինքյան կապված էր գրեթե անհաղթահարելի դժվարությունների հետ։ Մանավանդ Հայաստանի պատմության հնագույն ժամանակների մասին հատ ու կենտ առասպելներից ու զրույցներից բացի, ոչինչ չէր մնացել, իսկ օտար աղբյուրներում պահպանված միջանկյալ տեղեկություններն այնքան ցրված էին այս ու այն հեղինակի գործերում, որ նրանց հավաքելն անգամ անհնար էր, էլ չենք ասում, թե այդպիսի նյութերը մշակելն ու մեկ ընդհանուր հայաբարի բերելը ինչպիսի ջանք ու աշխատանք

[15] Նույնը, էջ 10։

պնդոք է պահանջեին պատմիչից։ Հենց այդ ի նկատի ունենալով է, որ Խորենացին սրտի ցավով քննադատում է հայ մեծավորներին, որ նրանք ժամանակին չեն հավաքել ու գրադարաններում չեն կենտրոնացրել Հայաստանի պատմության մասին եղած գրավոր նյութերը և գիտնականներին գրել են ծանր ու անելանելի դրության մեջ։ Ուրեմն, հասկանալի է, որ Հայաստանի ամբողջական պատմության ստեղծումը մի լուրջ և ծանր աշխատանք էր, որին ձեռնարկողը գիտելիքներով, բազմակողմանի զարգացմամբ ու կամքի մեծ ուժով պետք է իր ժամանակակիցներից շատ բարձր կանգնած լիներ, որպեսզի կարողանար հաջողությամբ ավարտել տրված առաջադրանքը։ Բարեբախտաբար, Մովսես Խորենացին օժտված էր այն բոլոր բարեմասնություններով, որոնք անհրաժեշտ էին «Պատմութիւն Հայոցը» գիտական բարձր մակարդակով շարադրելու համար։

Մովսես Խորենացու աշխատությունը բաղկացած է երեք մասերից. Գիրք առաջին—«Ծննդաբանութիւն Հայոց մեծաց», Գիրք երկրորդ—«Բան միջակ պատմութեան մերոցն նախնեաց» և Գիրք երրորդ—«Աւարտաբանութիւն մերոց հայրենեաց»։ Աշխատության առաջին գրքի համար նրա օգտագործած հեղինակներից կարելի է հիշատակել Մար Աբաս Կատինային, Բերոսոսին և ուրիշների։ Երկրորդ գրքի շարադրանքի ժամանակ պատմիչը օգտվում է Հերոդոտից, Ողյումպ քուրմից, Մանեթոսից, Պոլիկրատեսից, Բարդածանից, Հովսեպոս Փլավիոսից։ Երրորդ գրքի համար նա օգտագործել է հայ պատմիչներ Ագաթանգեղոսի և Փավստոս Բուզանդի գրքերը։ Վերևում թվարկվածներով իհարկե չի սահմանափակվում Խորենացու օգտագործած գրավոր աղբյուրների հեղինակների ցանկը։ Նա իր հետազոտությունների ընթացքում օգտվել ու նյութեր է քաղել ավելի քան 40 օտար հեղինակների գործերից, որոնք գրված են մեծ մասամբ հունարեն և ասորերեն լեզուներով։ Պատմիչը բարեխղճորեն հիշատակում է իր օգտագործած բոլոր հեղինակներին։

Մովսես Խորենացին, որպես կանոն, սկզբնաղբյուրներից քաղած նյութերը զգուշորեն համեմատում է իրար հետ, քննում նրանց արժանահավատությունը, որոշում ճիշտն ու սխալը, առասպելականն ու պատմականը և հետո միայն անում իր ծանրակշիռ հետևությունները։ Հենց աղբյուրների նկատմամբ ցուցաբերած քննադատական մոտեցմամբ էլ նա որոշակիորեն



տարբերվում է սովորական պատմիչներից ու հանդես գալիս որպես լուրջ գիտնական-հետազոտող։ Մեծ գիտնականին հատուկ բծախնդրությամբ, Խորենացին, այնուամենայնիվ, չի բավարարվում օտար ու հայկական գրավոր աղբյուրներով։ Նա հայ պատմագրության մեջ առաջին անգամ գրավոր աղբյուրների հետ մեկտեղ, իր գրքում խոշոր տեղ է հատկացնում նաև բանավոր պատումներին, մեկիկ-մեկիկ հավաքում է ժողովրդական ավանդությունները, առասպելները, վեպերն ու վիպերգությունները, որոնք պատմում ու ժողովրդի մեջ տարածում էին մեծ մասամբ գողթան երգիչները։ Խորենացուն ծանոթ են եղել նաև Հայաստանում պահպանված օտարալեզու արխիվային վավերագրերը, վիմական արձանագրությունները և այլն։ Նա այնպիսի ճշգրտությամբ է նկարագրում Վանի ուրարտական միջնաբերդը, Գառնիի հեթանոսական տաճարն ու այնտեղ թողնված հունարեն արձանագրությունը կամ Արտաշես I-ի սահմանաքարերը, որ ոչ մի կասկած չի մնում, որ պատմիչը լոկ մեկուսացած ստեղծագործող չէր, այլ շրջագայել ու շատ լավ է ճանաչել իր հայրենիքը։ Ուրեմն, ինչպես տեսնում ենք, թեև պատմիչի աղբյուրները մեծ ու բազմազան ընդգրկում են ունեցել, այնուամենայնիվ, նա եղածից շատ էլ գոհ չէ և դիմելով ընթերցողին, համեստորեն ասում է՝ «մի՛ զմեզ այպանեալ պարսաւեսցես», որովհետև պակասությունները իր մեղքով չեն, այլ աղբյուրներում եղած անբավարար տվյալների հետևանք։

Ժողովրդական վեպերն ու ավանդությունները օգտագործելով որպես պատմական սկզբնաղբյուր, Խորենացին այնքան միամիտ չէր, որ դրանք բոլորն ընդուներ որպես անառարկելի ճշմարտություն։ Առասպելների հիմքում տեսնելով պատմականը, նա միաժամանակ, իրավացիորեն գտնում է, որ հավատի պատմությունք առասպելներ են դարձնում մարդիկ՝ ժամանակի, անունների փոփոխություն մտցնելով նրանց մեջ։ Այս եզրակացությամբ էլ Խորենացին օգտագործել է Հայկի ու Բելի, Արա Գեղեցիկի ու Շամիրամի, Տորք Անգեղի, Վահագնի ու մյուս առասպելները։ Սակայն պատմիչ-գիտնականի մեծությունը չի սահմանափակվում միայն ժողովրդական ստեղծագործությունների մեջ պատմականը նկատելով։ Խորենացին հասկացել ու բարձր է գնահատել նաև դրանց գեղարվեստական-գեղագիտական արժեքը և ոչ միայն լոկ հավաքել ու նաև նյութեր քաղել

բել, այլև մշակել ու գեղարվեստական կատարելության է հասցրել առասպելները և գրի առնելով փրկել է անվերապահ կորստից։ Մենք Խորենացուն շատ ենք պարտական ժողովրդական ստեղծագործությունների գոհարների թեկուզ այդ փշրանքների պահպանության համար։

Վերլուծելով Խորենացու գիրքը, մենք նկատում ենք նաև այն կարևոր հանգամանքը, որ գիտնականը փաստորեն հայ ժողովրդի պատմությունը առաջին անգամ ենթարկել է պարբերացման՝ 1. բուն հայկական իշխանների գահակալության, 2. օտարերկրյա նվաճողների տիրապետության, 3. Երվանդյան դինաստիայի իշխանության, 4. ներքին կռիվների և Արշակունիների դինաստիայի թագավորության ժամանակաշրջաններ։ Եվ թեև այս պարբերացման համար, ինչպես տեսնում ենք, հեղինակը հիմք է ընդունել երկրի քաղաքական պատմությունը, այնուհանդերձ այն իր ժամանակին լուրջ առաջադիմություն էր հայ պատմագրության համար։

Խորենացին Հայաստանի բուն պատմությունը սկսում է հայ ժողովրդի կազմավորումից՝ այն կապելով Հայկի և Արամի հետ։ Հայ ժողովրդի ծագման Խորենացու մեկնաբանությունում գլխավորը հարցադրման ազգային-քաղաքական կողմն է, որի գիտակցմանը հասել էր պատմիչը։

Այնուհետև Պատմահայրը ժողովրդական առասպելների հիման վրա շարադրում է հայ առաջին նահապետների ու իշխանների պատմությունը։ Ըստ Խորենացու, առաջին հայ թագավորը եղել է Պարույր Սկայորդին, որի պատմական անձնավորությունն լինելը հաստատվում է նաև կողմնակի այլ աղբյուրներով։ Պարույր Սկայորդին ապրել ու գործել է մ. թ. ա. VII դարի վերջերին։ Այստեղ առանձին գլուխներով հեղինակն անդրադարձել է նաև հայերի ու հարևան ժողովուրդների ռազմաքաղաքական փոխհարաբերություններին։ Հայ ժողովրդի պատմության հնագույն շրջանի մասին խոսելիս Խորենացին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Երվանդյանների դինաստիայի մասին։ Ուշագրավ է, որ Խորենացու տեղեկությունների մի մասն այժմ հաստատվում է Հայաստանում հայտնաբերված հունարեն արձանագրություններով։

Մովսես Խորենացու երկրորդ գիրքը թեև սկսվում է Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքներով, սակայն նրա հիմնական բովանդակությունը վերաբերում է Արտաշեսյան և



Արշակունի թագավորական դինաստիաներին։ Պետք է միայն ափսոսալ, որ պատմիչը հաճախ այդ երկու դինաստիաների ներկայացուցիչներին շփոթում է իրար հետ և թույլ է տալիս ժամանակագրական սխալներ։ Արտաշես I-ի, Տիգրան Մեծի, Արտավազդ II-ի, Տրդատ I Արշակունու (որին նա անվանում է Վաղարշակ) մասին խոսելուց հետո, Խորենացին հատուկ տեղ է տալիս հայ-պարսկական հարաբերություններին և Սասանյանների գահակալությանը։ Երկրորդ գրքում խոսվում է նաև Հայաստանում քրիստոնեության պաշտոնական կրոն դառնալու և Տրդատ III-ի ու Գրիգոր Լուսավորչի գործունեության մասին։

«Հայոց պատմության» երրորդ մասում նույնպես խոսելով Արշակունիների ժամանակաշրջանի մասին, Խորենացին երկրի քաղաքական պատմությունը ավարտում է Արշակունիների դինաստիայի անկումով և Հայաստանի անկախության վերացումով։ Հետո պատմում է իր ուսուցիչների՝ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մահվան մասին ու գիրքն ավարտում իր նշանավոր «Ողբ»-ով։ Այստեղ նա համարձակորեն քննադատում է Հայաստանի ֆեոդալական հասարակարգի արատավոր կողմերը, հոգևորականության որոշ գործիչների տգիտությունը, աշխարհիկ իշխանների ագահությունը, դատավորների խարեբայությունը, կաշառակերությունը, օրինազանցությունը և այլն։ Մովսես Խորենացին չէր կարող և չի էլ ցույց տալիս աշխատավորական զանգվածների վիճակի բարելավման կամ ֆեոդալական հասարակարգի վերափոխման ուղիներն ու միջոցները։ Մենք այդ բանը պատմիչից պահանջելու իրավունք էլ չունենք, որովհետև նա վերջիվերջո մնում էր որպես իր ժամանակի ծնունդը, որի ճշմարտության չափանիշը դարձյալ Ս. Գիրքն էր, իսկ նպատակը հակամետ դասակարգերի համերաշխ գոյակցությունը։ Այս բոլորով հանդերձ, մենք բարձր ենք գնահատում նրա մտքի խորաթափանցությունը, որով կարողանում էր ուրիշ շատ շատերի կողմից չնկատվածն ու չտեսածը ոչ միայն տեսնել, այլև ներկայացնել իր Պատմության մեջ։

X դարի պատմիչ Թովմա Արծրունու տեղեկության համաձայն, Խորենացու Պատմությունն ունեցել է նաև վերջին՝ չորրորդ գիրքը, որն ավարտվել է բյուզանդական Զենոն կայսեր ժամանակներով, այսինքն՝ 470—490-ական թվականներով։ Դիպուկ է արդյոք Թովմա Արծրունու վկայությունը, թե ոչ, առայժմ որոշել հնարավոր չէ։

Մովսես Խորենացու Պատմության գիտական արժեքը բարձրը է նաև նրա համար, որ այն ունի իր հաստատուն գիտական ժամանակագրությունը։ Հայ պատմագրության մեջ առաջինը Խորենացին է սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությամբ կազմել քաղաքական ու եկեղեցական պատմության ժամանակագրություն։ Ավելին, Խորենացին գտնում էր, որ առանց ժամանակագրության չկա ճշգրիտ պատմություն։

Խորենացին գրել է նաև ինքնուրույն և թարգմանական այլ աշխատություններ։ Նրա սկզբնական շրջանի աշխատություններից է «Գիրք պիտոյիցը», որն ունի ճարտասանական բովանդակություն և ծառայել է որպես դասագիրք գեղեցիկ խոսելու ու գրելու արվեստը դպրոցներում սովորեցնելու համար։ Պահպանվել են նաև Խորենացու մի քանի փիլիսոփայական գործերը, որոնք տակավին մնում են չուսումնասիրված վիճակում։ Մասնագետների շրջանում «Պատմութիւն Հայոցից» հետո լայն ճանաչում ունի Խորենացու գրած մեկնությունը մ. թ. ա. II դարի նշանավոր հեղինակ Դիոնիսիոս Թրակացու Քերականության մասին։ Մեզ են հասել նաև Խորենացու հունարենից կատարած մի քանի թարգմանություններ, որոնք ունեն աշխարհիկ ու կրոնական բովանդակություն։

Խորենացին իր ստեղծագործություններով միջնադարյան հայ գրականության ասպարեզում խոշոր երևույթ էր։ Նրա Պատմությունը շարադրված է ճոխ ու գեղեցիկ լեզվով։ Իր ժամանակին այն ամենատարածված և ամենից շատ կարդացվող գրքերից էր։ Խորենացին իր երկով հետապնդում է ընթերցողների մեջ հայրենիքի, ազատության, արվեստների, գիտության, ու շինարարության նկատմամբ սեր արթնացնելու նպատակը։ «Պատմութիւն Հայոցը», ընդհուպ մինչև XVIII դարը ծառայել է որպես դասագիրք։ Այն թարգմանվել է տասը օտար լեզուներով, ունեցել է հայերեն 24 հրատարակություններ։ Հեղինակի մասին գրվել են շատ ու շատ ուսումնասիրություններ։ Մովսես Խորենացու Պատմության առաջին տպագրությունը կատարել է Թովմաս Նուրիջանյան Վանանդեցին Ամստերդամում 1695 թվականին, իսկ գիտահամեմատական օրինակը բազմաթիվ ձեռագրերի համեմատությամբ, ընդարձակ առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակել են Մ. Աբեղյանն ու Ս. Հարությունյանը Թիֆլիսում 1913 թվականին։



**Զենոբ Գլակ և Հովհան Մամիկոնյան**

Հայկական միջնադարյան պատմական սկզբնաղբյուրներից հայտնի է նաև «Պատմութիւն Տարօնոյ» գիրքը։ Այդ աշխատության մեջ, ինչպես նաև նրան կցված հիշատակարանում, գրքի հեղինակների մասին եղած տեղեկություններն այնքան քիչ են, որ շատ հարցեր տակավին մնում են չլուսաբանված։ Ըստ այդ տեղեկությունների, Զենոբ Գլակը ազգությամբ ասորի է, նրան Հայաստան էր հրավիրել Գրիգոր Լուսավորիչը և նշանակել Տարոնի Գլակա (Ս. Կարապետ) վանքի վանահայր ու Մամիկոնյանների նախարարական տան եպիսկոպոս։ Նա պատմությունը գրել է Գրիգոր Լուսավորչի պատվերով։ Հովհան Մամիկոնյանը նույնպես վարել է Մամիկոնյանների տան եպիսկոպոսի պաշտոնը, միայն թե նա ապրել է Զենոբ Գլակից հետո՝ VII դարում և պատմությունը գրել է բյուզանդական Հերակլ կայսեր ու Հայոց իշխան Վահանի ժամանակներում։ Այսպես էլ ուսումնասիրողները հիմնականում Զենոբին համարում են IV, իսկ Հովհան Մամիկոնյանին՝ VII դարի հեղինակներ։

«Պատմութիւն Տարօնոյ» աշխատության և նրա հեղինակի հարցի վերաբերյալ վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված աշխատության Երևանի Մատենադարանում պահպանվող ավելի քան երկու տասնյակ ձեռագրերը մեկ ամբողջական աշխատանք են առանց որևէ բաժանման։ Պարզվում է, որ նշված աշխատությունը կամայականորեն երկու մասերի են բաժանել վենետիկյան հրատարակիչները. առաջին կեսը վերագրելով Զենոբին, երկրորդը՝ Հովհան Մամիկոնյանին։ Այնուհետև, «Պատմութիւն Տարօնոյ» արժեքավոր աշխատությունը նամակների, պատմությունների, ժամանակագրությունների մեկ ընդհանուր ժողովածու է, որը ստեղծվել է տարբեր ժամանակներում ապրած ոչ թե մեկ կամ երկու, այլ ավելի շատ հեղինակների ձեռքով[16]։ Զենոբ Գլակը եղել է այդ հեղինակներից մեկը, իսկ Հովհան Մամիկոնյանը կազմել ու խմբագրել է ժողովածուն, որը, սակայն, ամբողջական վիճակում մեզ չի հասել, ինչպես նաև չի պահպանվել այն օրինակը, որն իր ժա-

[16] Հովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխատասիրությամբ և առաջաբանով Ա. Աբրահամյանի, Երևան, 1941։

մանակին թզուագործել ու հիշատակում է X դարի պատմիչ Ուխտանեսը։

Զենոբ Գլակն ու Հովհան Մամիկոնյանը հայագիտության մեջ երկար ժամանակ մոռացված ու թերագնահատված հեղինակներ են եղել, իսկ նրանց աշխատությունը դիտվել է որպես երկրորդական բնույթի մի գործ։ «Պատմութիւն Տարօնոյ» աշխատության առաջին դրական գնահատողը եղավ Մ. Աբեղյանը։

Տարոնի պատմությունը սկզբից մինչև վերջ ներծծված է չերմ հայրենասիրությամբ և օտար նվաճողների դեմ պայքարի անսասան ուժով։ Ժողովածուի մեջ հանդես եկող բոլոր հերոսները կարծեք լցված են թշնամուն հաղթելու անսահման մեծ ուժով ու համոզմունքով։ «Պատմութիւն Տարօնոյ» ժողովածուի այդ կողմը ցուցադրող շատ օրինակներից բերենք մեկը. Պարսկաստանից Սուրեն անունով մի զինվորական գալիս է հայոց իշխան Սմբատի մոտ հայերի հետ կռվում սպանված իր եղբոր՝ Վահթանգի կնոջը և որդուն գերությունից ազատելու նպատակով։ Նա Սմբատի սիրտը շահելու համար իր հետ բերում է մեծարժեք նվերներ՝ 100 հազար դահեկան փող, 2000 ուղտ, 5000 պարսկական ընտիր նժույգ և պատշաճ կերպով մատուցում նրան։ Սմբատը այդ բոլոր ընծաներն ստանալուց հետո, սրամտորեն դիմում է Սուրենին հետևյալ խոսքերով. «Հաւանեալ եմ տրոցս, բայց հարիւր ութսուն հազար դահեկանի լուր փայտ են տաբեալ ի Քարքէոյ, և Դռ (4000) դահեկանի խոտ են կերեալ ի դաշտէդ, և Իռ (20.000) դահեկանի, որ զեզն և զեղջերուն և զնապաստակ զիմ երկրիս որսացեալ են, զհացի և զջրոյ գինն թողում ձեզ։ Բայց որ երկու տարի զխառանայ գինին և զԱսորոց և զՄուրհայի արբեալ են, զայն թող տան։ Եւ զվեց գաւառին հարկն, զոր առեալ են, և զքաղաքին մուտն, զոր կերեալ են՝ Դռ (4000) դահեկան զայն թող տան... և իւրեանքդ քեզ»[17]։

Մի ուրիշ տեղ պատմվում է պարսիկների դեմ Գայլ Վահանի հաղթական կռվի մասին։ Վահանը հաղթելով թշնամուն, պարսից զորավար Միհրջանի գլուխը կտրել է տալիս և ուղարկում թագավորին՝ հետն էլ այսպիսի մի գրություն. «Այս մարզպան յորժամ եկն յերկիրս մեր, և զարքն հակառակեալ միմեանց՝ զունդ խնդրեցին և ոչ կարացին գտանել. ապա՝ զի

[17] Նույնը, էջ 202—203։



ձայնք ձեր թշնամիք էին, ի նոսա ոչ իշխեցաք գնալ. և ձեզ ընդ յակամբ էաք, և ձեր զարացդ զունդ ոչ կայր. ապա կտրեցաք զգլուխդ զայդ և խաղացաք։ Արդ, լուաք, եթէ ի Շահաստանէ եկեալ էք ի Բաստր քաղաք՝ յերկիր տափարակ և տաշտաձև, և գիտեմք, որ գնդի խաղայք. առէք զգլուխ քեռորդոյդ ձերոյ և եղիցի ձեզ զունդ ազգաց յազգս»[18]։

Այստեղ, ինչպես տեսնում ենք, շատ ուժեղ է հնչում թշնամու հանդեպ հաղթողի ծաղրը, որը հագեցված է ժողովրդական հումորի ուժով։ Տարակույս չկա, որ աշխատության մեջ նմանօրինակ դրվագներում ի հայտ է գալիս հենց ժողովրդական և ոչ թե առանձին հերոսի սրամտությունն ու արհամարհանքը օտար նվաճողների նկատմամբ։ Պատմության մեջ ներկայացված բոլոր հայ հերոսները ոչ միայն ուժեղ են, հզոր, այլև իմաստուն ու հեռատես։ «Պատմութիւն Տարօնոյ» աշխատությունը հայկական պատմական մյուս աղբյուրների համեմատությամբ կարծեք ազատ է քրիստոնեական բարոյախոսության կաշկանդվածությունից և քիչ է ենթարկվում պաշտոնական պատմագրության օրենքներին։ Թերևս հենց գլխավոր պատճառներից մեկն էլ այդ է եղել, որ այդ երկը հարկ եղած ուշադրության չի արժանացել ինչպես միջնադարյան, այնպես էլ ուշ ժամանակների հեղինակներից շատերի կողմից։

Զենոբ Գլակի և Հովհան Մամիկոնյանի Պատմության կարևոր արժանիքներից մեկն էլ այն է, որ այստեղ մանրամասն տեղեկություններ են հաղորդվում Հայաստանում քրիստոնեության և հեթանոսության սուր պայքարի մասին, որոնք զգալի չափով լրացնում են Ագաթանգեղոսի ասածները։

«Պատմութիւն Տարօնոյ» աշխատությունը հայերեն հրատարակվել է մի քանի անգամ։ Նրա գիտահամեմատական տեքստը, առաջաբանով և ծանոթագրություններով լույս է ընծայել Ա. Աբրահամյանը Երևանում 1941 թվականին։ Այդ աշխատությունը թարգմանվել ու հրատարակվել է նաև ֆրանսերեն։

Հայկական մատենագրության մեջ Զենոբ Գլակի և Հովհան Մամիկոնյանի աշխատությունից հետո երկրորդը «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գիրքն է, որը վերաբերում է հայկական մեկ այլ ընդարձակ

**Մովսես Կաղանկատվացի**

[18] Նույնը, էջ 201—202։

հերկրամանի՝ Հայոց Արևելից կողմանց պատմությանը։ Ուսումնասիրողները ցույց են տալիս, որ այս աղբյուրը հայ հեղինակներին թեև ծանոթ է եղել VIII դարից, սակայն առաջինը նրա մասին հիշատակում են X դարում Անանիա Մոկացի կաթողիկոսը (943—967) և Ուխտանեսը՝ առանց աշխատության հեղինակի անունը տալու։ Նույն ձևով է վարվում նաև XII դարում Մխիթար Անեցին, որն իր ժամանակագրության մեջ «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գիրքը տեղադրում է Սեբեոսից հետո (VII դար) և Ղևոնդից առաջ (VIII դար)։ Առաջին անձնավորությունը, որ նշում է հիշյալ Պատմության հեղինակի անունը՝ Մխիթար Գոշն է։ Գոշը և նրա աշակերտ Վանական վարդապետը «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գրքի հեղինակ են համարում Մովսես Դասխուրանցի անունով (X դար) մի անձնավորության։ Իսկ նույն ժամանակներում Կիրակոս Գանձակեցին Աղվանքի պատմության հեղինակին ուղղակի անվանում է Կաղանկատվացի։ Ուսումնասիրողներն արդարացի կերպով գտնում են, որ հմուտ պատմիչը այդպես է վարվել ի նկատի ունենալով Աղվանից պատմության II գրքի ԺԱ գլխում Կաղանկատուք գյուղի կապակցությամբ հեղինակի ասած «յորմէ և ես»[19] խոսքերը։

Այսպիսով, XIII դարից սկսած Մովսես Կաղանկատվացին ճանաչվում է որպես «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի հեղինակ։ Եվ ահա այդ աշխատության և նրա հեղինակի մասին մատենագրության մեջ պահպանված ոչ միանման տեղեկությունների հետևանքով ուսումնասիրողների շրջանում առաջացել են բանասիրական կարգի տարաձայնություններ, որոնք առանձնապես բորբոքվել են հեղինակի ապրած ժամանակի հարցը որոշելու կապակցությամբ։ Այդ պատճառով ոմանք Մովսես Կաղանկատվացուն համարել են X, ոմանք՝ VII դարի հեղինակ։ Եվ այժմ բավական հիմնավոր կերպով գերիշխում է այն կարծիքը, որ հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին ապրել ու իր գիրքը գրել է VII դարում, իսկ X դարում այն լրացրել, խմբագրել ու վերջնական տեսքի է բերել Մովսես Դասխուրանցին։ Հարկ է նշել, որ նման եզրահանգման համար բավա-

[19] Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 137։



կան հաստատուն տվյալներ մենք գտնում ենք հենց Պատմության մեջ։ Այսպես, գրքի երկրորդ հատորի ԺԴ գլխում հեղինակը, հանգամանորեն շարադրելով 628 թվականին Շաթի՝ Աղվանքում կատարած ասպատակությունների և Աղվանից կաթողիկոս Վիրոյի՝ այդ բռնակալի զորակայանը գնալու մանրամասնությունները, օգտագործում է «այն օրերը այսպես վրա հասան մեզ», «մեր երկրի վերաբնակիչներից», «այնտեղ տեսանք», «մեզ վերաբերվում էին ինչպես սիրելի եղբայրների» և նման արտահայտություններ, որոնք կարող էին արվել միայն և միայն ժամանակակցի ու Վիրոյի հետ բանակցություններին մասնակցած անձնավորության կողմից։ Հեղինակը ժամանակակցի ու ականատեսի նույնանման նկարագրություններ և արտահայտություններ ունի նաև նշված հատորի ԻԸ գլխում։ Այն հանգամանքը, որ Մովսես Կաղանկատվացին մոտիկ հարաբերությունների մեջ է եղել Հայոց Արևելից կողմանքի հոգևոր ու աշխարհիկ բարձրաստիճան անձնավորությունների (կաթողիկոս Վիրո, մեծ իշխան Ջվանշիր) հետ, գուցե հնարավորություն տա ենթադրելու, որ այդպիսի պատվի նա կարող էր արժանանալ իր գիտելիքների, մեծ հեղինակության և գուցե նաև կրոնական բարձր տիտղոս ունենալու համար։ Ահա այն սուղ կենսագրական տվյալները, որ հայտնի են Աղվանից պատմության հեղինակի մասին։

Այս աշխատությունը հայկական մյուս պատմագրական երկերի նման մշտապես գտնվել է ընթերցողների ուշադրության կենտրոնում, դրա համար էլ հետագայում տարբեր անձնավորություններ նրան կցել են Աղվանից հայ կաթողիկոսների ցուցակը, լրացրել են Արցախի ու Ուտիքի պատմություններով և այլն։

«Պատմութիւն Աղուանից աշխարհի» գիրքը բաղկացած է երեք մասերից, որոնց հեղինակն անվանում է առաջին, երկրորդ և երրորդ հատորներ։ Այդ հատորները համապատասխանաբար բաժանվում են 30, 52 և 24 գլուխների, որոնք բոլորն էլ ունեն իմաստավորված վերնագրեր։ Առաջին և երկրորդ հատորները հիմնականում վերաբերում են VII դարի իրադարձություններին, որոնց մի մասին Մովսես Կաղանկատվացու ականատես լինելը զգալիորեն բարձրացնում է գրքի այդ բաժինների արժանահավատությունը որպես պատմական սկզբնաղբյուր։

Աշխատության առաջին հատորը սկսում է Ադամից մինչև Նոյը ծննդաբանական համառոտ ակնարկով և հետո անցնում հիմնական նյութի շարադրանքին՝ IV—V դարերի կրոնական ու քաղաքական դեպքերին, որոնք տեղի են ունեցել գլխավորապես Հայաստանում ու նրան հարևան և անգամ հեռավոր երկրներում։ Աղվանքի պատմության ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ նրա հեղինակի՝ Մովսես Կաղանկատվացու ուսումնասիրած հիմնական աղբյուրները մայրենի հայերեն լեզվով արդեն գոյություն ունեցող բավական հարուստ պատմագիտական գրականությունն է։ Հեղինակն իր գրքի համար հատկապես մեծ չափով օգտագործել է Բուզանդի, Ագաթանգեղոսի, Եղիշեի, Մովսես Խորենացու երկերը, «Գիրք թղթոց» ժողովածուն, Հայսմավուրքը և հայկական այլ աղբյուրներ։ Մովսես Կաղանկատվացու գրքում շատ մեծ տեղ է հատկացվում նաև կրոնական առասպելներին, հրաշապատումներին, նահատակություններին ու տեսիլքներին, որոնց միջոցով հեղինակն աշխատում է բարձրացնել Արևելից կողմանքի եկեղեցու հեղինակությունը և ցույց տալ, որ այն կազմում է հայ եկեղեցու ամբողջական և անբաժանելի մասը։ Պահպանելով իր նախորդների և ընդհանրապես հայկական մատենագրության ավանդական սկզբունքը, Կաղանկատվացին գրքի ամբողջ շարադրանքի մեջ իր այս կամ այն միտքը հաստատում է Աստվածաշնչից կամ եկեղեցական հեղինակների գործերից առատորեն արված մեջբերումներով։ Այս հանգամանքը կարող է մեկ անգամ ևս թույլ տալ ենթադրելու, որ Կաղանկատվացին ստացած է եղել իր ժամանակի անհրաժեշտ կրթությունը և ունեցել է կրոնական ատոիճան։

Կաղանկատվացու Պատմության հատկապես սկզբի մասերում այնքան ուժեղ է նախորդ հեղինակների ազդեցությունը, որ որոշ ուսումնասիրողներ նրա առաջին և երկրորդ հատորները համարում են այլ և այլ նյութերի հավաքածու, որը քիչ է նման հետևողականորեն շարադրված և ամբողջական պատմագիտական աշխատության։

Առանձին նախարարությունների կամ ֆեոդալական ինքնամփոփ երկրամասերի պատմությունը գրող հայ մյուս հեղինակների նման, Կաղանկատվացին նույնպես իր հայրենիքի՝ Հայոց Արևելից կողմանց ու նրա աշխի ընկնող գործիչների գրվերգողն է։ Եվ այդ զգացողության բուռն ազդեցության տակ պատմիչը երբեմն մեղանչելով ճշմարտության և օբյեկտիվության դեմ, առանձին անհատների ներկայացնում է իդեալականացված գույներով, չնկատելով նրանց մոտ բացասական և ոչ մի գիծ։ Օրինակ՝ Ջվանշիրը քաջ ու խիզախ էր, նրա առաջ գլուխ էին խոնարհում նույնիսկ թագավորները, որոնք հարգանք ու պատիվ էին մատուցում նրան։

Այս թերություններով հանդերձ, Աղվանքի պատմությունը ունի այն առավելությունը, որ այստեղ Հայաստանի հյուսիս-արևելյան մի ընդարձակ երկրամասի պատմությունը ոչ թե ներկայացվում է առանձին ու շրջապատից կտրված վիճակով, այլ ճիշտ հակառակը։ Մովսես Կաղանկատվացին Ուտիքի, Արցախի և ընդհանրապես Հայոց Արևելից կողմանց պատմությունը շարադրում է բուն Հայաստանի պատմության հետ շաղկապված ու միահյուսված ձևով, մի հանգամանք, որը հեղինակի ու նրա գրքի կարևոր արժանիքը պետք է համարել։ Կարելի է ավելին ասել՝ Մովսես Կաղանկատվացին Հայաստանի ընդհանուր պատմությունը նույնպես կապում է շրջակա երկրների ու ժողովուրդների պատմության հետ։ Անշուշտ, հարուստ փոխելիքների և օտար երկրների պատմությանը տեղյակ լինելու շնորհիվ է նա կարողանում իր հայրենիքի պատմության առանձին դրվագներն ու դեպքերը կապել Հռոմի, Բյուզանդիայի, Պարսկաստանի, Արաբական խալիֆայության և մյուս երկրների պատմության համանման իրադարձությունների հետ և անել երբեմն ճիշտ ու համոզիչ եզրակացություններ։

Մովսես Խորենացին, Եղիշեն և մյուսները շատ կարևոր դեր են խաղացել Կաղանկատվացու նաև գեղարվեստական խոսքի և ճաշակի ձևավորման գործում։ Այս առումով անչափ պարզ, բնական ու գունագեղ է, օրինակ, Ջվանշիրի մոտ հեղինակի տեսած փղի ու թութակի նկարագրությունը։

Աղվանից պատմության մեջ առանձնապես արժեքավոր են այն հատվածները, որոնք վերաբերում են քրիստոնեության տարածման պատմությանը, Մեսրոպ Մաշտոցի խաղացած կարևոր դերին, բուն աղվանական գրերի ստեղծման գործում և այլն։ Մանրամասն են նկարագրվում նաև VII դարի սկզբներին տեղի ունեցած պարսկա-բյուզանդական կռիվները։ Գրքի շարունակության մեջ, որը, ինչպես ասվեց, կատարել է Մովսես Դասխուրանցին, ուշադրության արժանի են 914 թվականին

(ոմանց կարծիքով 944 թ.) ռուսական մի զորաջոկատի կողմից Պարտավ քաղաքի գրավման նկարագրությունը, ռուսների, որպես քաջ ու խիզախ ռազմիկների, հասցեին ասված դրվատանքի խոսքերը, Հայոց Արևելից կողմանքի իշխանների ու կաթողիկոսների ցուցակները և այլ նյութեր։

«Պատմութիւն Աղուանից աշխարհի» գիրքը հրատարակվել է մի քանի անգամ։ Քննական բնագիրը առաջաբանով և ծանոթագրություններով լույս է տեսել Երևանում 1983 թվականին։ Աշխարհաբար թարգմանությունը հրատարակվել է 1969 թվականին, ռուսերենը՝ 1984-ին Երևանում։ Գիրքը թարգմանվել և հրատարակվել է նաև ֆրանսերեն, գերմաներեն և անգլերեն։

**Սեբեոս**

VII դարի հեղինակ Սեբեոսի մասին եղած կենսագրական տեղեկությունները նույնպես պարզ ու հստակ չեն, թեև այդ կարգի տեղեկությունների հիմնական աղբյուրը հենց ինքը՝ պատմիչն է։

Սեբեոսից պահպանվել ու մեզ է հասել «Պատմութիւն»-ը, որը կրում է «Պատմութիւն ի Հերակլն» վերնագիրը։ Սեբեոսը այն հայ հեղինակներից է, որի անձնավորությունը, ստեղծագործությունը և ապրած ժամանակաշրջանը բանասիրության մեջ տարակարծիքությունների տեղիք չեն տվել։

Սեբեոսը ոչ միայն բարձրաստիճան հոգևորական էր, այլև Հայաստանի քաղաքական ու հասարակական-եկեղեցական դյանքի աչպարեզում այն ժամանակ բավականին կշիռ ունեցող Թագրատունիների նախարարական տոհմի եպիսկոպոսը։ Այս հանգամանքը, անշուշտ, կարևոր նշանակություն է ունեցել պատմիչի համար ազդեցիկ դիրք ու հեղինակություն ձեռք բերելու տեսակետից։

Իր ժամանակակիցներից շատ շատերի նման Սեբեոսը հայոց դավանանքի ու կրոնի ջերմ պաշտպանն էր։ Նա ամենահաշտ վերաբերմունքն ուներ քաղկեդոնականության և մուսուլմանական կրոնի նկատմամբ ոչ լոկ նրա համար, որ ինքը ջերմեռանդ քրիստոնյա էր, այլ այն պատճառով, որ ի դեմս կրոնական այդ ուսմունքների նա տեսնում էր գաղափարական այն ուժերին, որոնք ամեն ձևով հովանավորում և խրախուսում էին հույներին ու արաբներին՝ Հայաստանին տիրելու և հայ ժողովրդին կեղեքելու գործում։ Ուրեմն Սեբեոսի



մոտ նույնպես հակադրությունը օտար դավանանքներին, կրոնականից բացի ուներ նաև քաղաքական շատ կարևոր նշանակություն, որը մեծապես պայմանավորված էր հայ-բյուզանդական և հայ-արաբական ուժերի փոխհարաբերություններով։ Այս բոլորի հետ մեկտեղ, սակայն, պետք է նկատել նաև, որ Սեբեոսը թեև քաղկեդոնականության ամենահետևողական հակառակորդն էր, քաղաքական կողմնորոշմամբ կարծեք ավելի հակված էր դեպի Բյուզանդիան և ատում էր Պարսկաստանն ու Արաբական խալիֆայությունը։

Հակաքաղկեդոնականության մեջ Սեբեոսի հաստատակամությունն ու հետևողականությունը դրսևորվել է առանձնապես մի դեպքի կապակցությամբ, որը տեղի է ունեցել 652—653 թվականների ձմռանը Դվինում։ Բյուզանդական Կոստանդին V կայսրը զայրացած 652 թ. հայ-արաբական պայմանագրի կնքումով, մեծ բանակով ներխուժեց Հայաստան։ Կայսրը այդ ժամանակ Դվինի ս. Գրիգոր եկեղեցում կազմակերպեց կիրակնօրյա շքեղ մի պատարագ՝ քաղկեդոնական ծիսակատարությամբ, որի ժամանակ, ինչպես վկայում է Սեբեոսը՝ «...հաղորդեցաւ թագաւորն և կաթուղիկոսն և ամէն եպիսկոպոսունքն, որ կամաւ և որ ակամայ...»[20]։ Պատարագի կազմակերպման և հատկապես հայ բարձրաստիճան հոգևորականությանը հարկադրական ձևով հաղորդություն տալու գործում առանձին ակտիվություն էր ցուցաբերում կաթողիկոս Ներսես III Տայեցին (641—661), որը միայն ահաբեկման և մահվան սպառնալիքի տակ կարողացավ հայ եպիսկոպոսներին ընդունել տալ հունական հաղորդությունը։ Սեբեոսը ուղղակի ասում է, որ կաթողիկոսը «...մատնէր զմի մի յեպիսկոպոսացն, և բեկանէր ահիւ։ Մինչ զի առ մահուն երկիւղիւ ամենեքեան զհրամանսն հաղորդութեանն կատարէին»[21]։ Այս ծիսակատարության ժամանակ եպիսկոպոսներից միայն մեկը համարձակվեց չենթարկվել հարկադրանքին և առանց հաղորդությունն ընդունելու, ցուցադրաբար վայր իջավ եկեղեցու բեմից ու խառնվեց ամբոխին։ Որոշ գիտնականներ կարծում են, որ այդ հանդուգն հոգևորականը Սեբեոսն էր, որը չվախեցավ նաև ժամերգությունից հետո կայսեր առաջ համարձակ ու անվախ բացատրություն տա-

---

[20] տես կայսեր առաջ համարձակ ու անվախ բացատրություն տա-

[21] նույն տեղում։

լուց իր արարքի համար։ Սեբեոսի կենսագրության և գործունեության մասին մեզ այլևս ոչինչ հայտնի չէ։

Սեբեոսի գիրքը բաղկացած է 52 գլուխներից, որոնք համապատասխանաբար հրատարակիչների կողմից վերնագրված են։ Հեղինակի աշխատության տարբեր մասերը տարբեր ձևով են գնահատվում։ Պարզ է, որ նրա տեղեկությունները Հայկի ու Բելի առասպելի, պարթևների ու սելևկյանների, Հայաստանի առաջին Արշակունի թագավորների, Պերոզի ժամանակաշրջանի և այլնի մասին աղբյուրագիտական մեծ արժեք ներկայացնել չեն կարող, որովհետև այդ հարցերը նախորդ հեղինակների գործերում ավելի հանգամանորեն են շարադրված։ Ճիշտ հակառակը կարելի է ասել Սեբեոսի գրքի այն հատվածների մասին, որոնք ընդգրկում են VI դարի կեսերից մինչև 661 թվականը, այսինքն՝ ավելի քան հարյուր տարվա պատմություն։ Եթե գրքի սկզբի մասերում պատմիչը լավագույն դեպքում կբրկնում է իր նախորդներին, ապա հաջորդ մասը նա շարադրում է որպես դեպքերին ժամանակակից ու ականատես, ինքնուրույն, շատ բան անձամբ ստուգած ... ճշտած հեղինակ։ Եվ գերագնահատած չենք լինի, եթե ասենք, որ Սեբեոսի Պատմության վերջին մասերը Հայաստանի VI—VII դարերի պատմության գրեթե միակ և վստահելի սկզբնաղբյուրն է։ Սեբեոսի գիրքը հայկական հարուստ մատենագրության մեջ առաջին ժամանակակից աղբյուրն է, ուր խոսվում է արաբների հզորանալու, նրանց հրոսակախմբերի Հայաստան թափանցելու և Մերձավոր Արևելքում քաղաքական գերիշխանության հասնելու մասին։

Որպես հոգևորական անձնավորություն, Սեբեոսն իր գրքում որոշակի տեղ է հատկացնում նաև եկեղեցական հարցերին, կրոնական աշխարհի ընկնող կենտրոններին ու նրանց շինարարությանը և այլն։ Սեբեոսը բարեխիղճ է հատկապես իր ժամանակների դեպքերի ու նրանց թվականների հիշատակության նկատմամբ։ Նա թվականների հետ մեկտեղ, երբեմն հաղորդում է նույնիսկ կարևոր իրադարձությունների ամսաթվերն ու օրերը։ Սեբեոսի Պատմության վերջին մասերի ժամանակագրության տվյալները հաճախ հաստատվում են օտար աղբյուրների և, մասնավորապես, արաբական աղբյուրների հիշատակություններով։ Հեղինակի ոճը թեթև ու աշխույժ է, սակայն պատմելու եղանակով նա զգալիորեն զիջում է իր նախորդներին։ Գրքում, շարադրանքի մեջ, երբեմն նյութը դասավորվում է հետ ու առաջ, խախտվում ժամանակագրական հաջորդականությունը և այլն։ Սեբեոսի աշխարհայացքը սահմանափակ է և կաշկանդված կրոնական մտածողության շրջանակներով։

Սեբեոսի աշխատության գիտահամեմատական տեքստը, ընդարձակ առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակվել է Երևանում, 1979 թվականին։ Այս գիրքը թարգմանվել ու հրատարակվել է նաև ֆրանսերեն, գերմաներեն ու ռուսերեն լեզուներով։

**Ղևոնդ պատմագիր**

Մինչև այժմ մեզ ծանոթ հայ պատմագիրները, գրեթե առանց բացառության, իրենց աշխատություններում հիմնական ուշադրությունը դարձրել են երկրի քաղաքական պատմությանը։ Հայկական մատենագրության համար արդեն ընդհանուր դարձած այս ուղուց որոշ չափով առաջին շեղվողը եղավ Ղևոնդը, որը քաղաքականի հետ մեկտեղ, լուրջ ուշադրություն է դարձնում նաև Հայաստանի ներքին կյանքին և սոցիալական վիճակին վերաբերող հարցերին։

Ղևոնդն իր գիրքը գրել է VIII դարում, մեզ տակավին անծանոթ Շապուհ Բագրատունու պատվերով։ Մեզ հայտնի չէ նաև, թե հեղինակն իր գիրքը ինչպես է անվանել։ Հետագայում այն կոչել ու հրատարակել են «Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց» ձևով։

Ղևոնդ պատմիչի գիրքն ընդգրկում է պատմական համեմատաբար փոքր ժամանակաշրջան՝ 620-ականից մինչև 780-ական թվականները։ Աշխատությունը գրելու համար հեղինակն օգտագործել է իրենից առաջ ապրած գրեթե բոլոր հայ մատենագիրների գործերը։ Նա քաջ ծանոթ է եկեղեցական գրականությանը, ըստ երևույթին օգտագործել է նաև օտար աղբյուրներ, որովհետև նրա հաղորդումները երբեմն համընկնում և համապատասխանում են հատկապես արաբական հեղինակների տվյալներին։ Ոճի և շարադրանքի մեջ Ղևոնդի առաջին ուսուցիչը հանդիսացել է Եղիշեն, որից նույնիսկ առանձին հատվածներ համարյա նույնությամբ նա տեղավորել է իր գրքի տարբեր մասերում։ Որոշ հարցերում պատմիչն ի հայտ է բերում վերլուծական լուրջ կարողություններ, որոնք աներկբայելի բարձրացնում են նրա գրքի գիտական արժեքը։

Ղևոնդի գրքում առանձնապես պատմական մեծ արժեք են ներկայացնում Արաբական խալիֆայության առաջացման ու հզորացման, արաբների վարած հարկային դաժան քաղաքականության, հայ ազնվականության և զինվորական վերնախավի ոչնչացման, Հայաստանում արաբական քոչվոր ցեղերի բնակեցման և այլ հարցերին նվիրված բաժինները։

Ղևոնդը իր «Պատմութիւն»-ը սկսում է մուսուլմանական կրոնի հիմնադիր Մուհամեդի մահվան հիշատակությամբ, հետո պատմում է, թե ինչպես արաբներն իրենց առաջին երեք խալիֆների օրոք նվաճում են Պաղեստինը, Ասորիքն ու Պարսկաստանը և տարբեր ուղղություններով մտնելով Հայաստան, ավերում են երկիրը, գերեվարում խաղաղ բնակիչներին ու մեծ ավարով ետ վերադառնում։ Պատմիչը դառնությամբ է նշում, որ այս արշավանքների ընթացքում Բյուզանդական կայսրությունը լքում է հայերին և վերջիններս միայն սեփական ուժերով են կազմակերպում թշնամուն դիմադրելու գործը։ Ղևոնդը ցույց է տալիս, որ արաբական տիրապետության ժամանակ Հայաստանը ոչ միայն ավերվում ու կողոպտվում էր, այսպես ասած, պաշտոնական անձանց կողմից, որոնց իշխանությունները տրամադրում էին զորք և տալիս հատուկ լիազորություններ, այլև առանձին մեծ ու փոքր հրոսակախմբեր օգտագործելով հարմար առիթները, ներխուժում էին Հայաստան, կողոպտում, ավերում էին երկիրը և գերիներով ու ավարով ետ վերադառնում։

Քանի որ Արաբական խալիֆայության տնտեսական քաղաքականության մեջ նույնպես հիմնական տեղը գրավում էր հարկային, որով և պայմանավորվում էր արաբների պետության գոյությունը, ուստի հարկային քաղաքականության վերաբերյալ այն բոլոր նյութերը, որոնք Ղևոնդը տրամադրում է ընթերցողին, ստանում են աղբյուրագիտական առումով շատ բարձր արժեք ոչ միայն VIII դարի Հայաստանի, այլև Արաբական խալիֆայության ընդհանուր պատմության ուսումնասիրության համար։ Այս տեսակետից Ղևոնդի Պատմությունը համեմատվելու ընդհանուր եզրեր կարող է ունենալ նույն ժամանակներում ապրած արաբական հայտնի օրենսգետ Աբու-Յուսուֆի «Քիթաբ ալ-խարաջ» («Գիրք խարաջի մասին») ստեղծագործության հետ։

Ղևոնդի գիտելիքները արաբների հարկային քաղաքակա-



նության մասին այնքան խորն են ու բազմակողմանի, որ այդ քաղաքականության հետ կապված առանձին հարցերի շարադրման ժամանակ պատմիչը հանդես է բերում նույնիսկ տնտեսագիտական բնույթի իմացություններ։ Այսպես, անդրադառնալով արաբների կողմից մթերայինի փոխարեն դրամական ռենտայի կիրառմանը, պատմիչը նշում է, որ այդ քաղաքականությունը այն աստիճանի էր նեղը գցում հարկատուներին, որ «... բազումք ինքնակամութեամբ թողուին զհօտս և զանդեայս, և գնային փախստական վասն ոչ բերելոյ զծանրութիւն աղետիցն»[22]։ Հետո պատմիչը նշում է, որ դրամը և թանկարժեք իրերը կենտրոնանում էին հարուստների և վաշխառուների ձեռքում, որի հետևանքով հրապարակի վրա պակասում էր շրջանառու արծաթ դրամը։ Այս հանգամանքը անխուսափելիորեն և ինքնաբերաբար բարձրացնելով դրամի գինը, գցում էր ապրանքի արժեքը։ Գյուղացին հարկադրված, մուծվող հարկերը դրամով վճարելու սպառնալիքի պայմաններում, ստիպված էր լինում ավելի շատ մթերք ու ունեցվածք վաճառել, սնանկանում և քայքայվում էր։ Սակայն այս պայմաններում էլ հարկատուները հպատակվում էին իրենց ճակատագրին, որովհետև «Զար կտտանօք, գելարանօք և կախաղանօք և դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան։ Յորմէ փախստեայ եղեալ բազում յայրս և ի փապարս երկրի զօղեալ թագչէին. և ոմանք ձիւնահեղձ և գետավէժ լինէին վասն անտանելի աղետիցն»[23]։ Այնուհետև պատմիչը շարունակելով ասում է, որ թեև ժամանակ առ ժամանակ արաբական իշխանություններն ավելացնում էին շրջանառու արծաթ դրամի քանակը, սակայն, այդ միջոցառումներն էլ ոչնչով չէին թեթևացնում հարկատուների վիճակը, որովհետև դրամի ավելացման հետ զուգընթաց, բազմապատկվում էին դրամական հարկերի չափերը։

Ղևոնդը հետևելով Մովսես Խորենացու սկզբունքներին, իր գրքում շատ կարևոր տեղ է հատկացնում ժամանակագրությանը։ Բավական է ասել, որ նա Մոավիայից (661—680) մինչև Հարուն ալ-Ռաշիդը (786—809) հիշատակում է բոլոր արաբ խալիֆներին ու տալիս նրանց իշխանության տարեթվերը, ո-

---

[22] «Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց», Պետերբուրգ, 1887, էջ 168։

[23] Նույնը, էջ 135։

ռոնք մեծ մասամբ ճիշտ են ու վստահելի։ Նա այդպես է վարվում նաև Հայաստանի ոստիկանների ու հայ իշխանների պատմությունը շարադրելիս։ Ղևոնդի լեզուն պարզ ու գեղեցիկ է, իսկ նկարագրությունների մեջ նա երբեմն հասնում է գեղարվեստական խոսքի վարպետության։ Այդ բանը նկատվում է առանձնապես գրքի այն մասերում, որտեղ խոսվում է արաբների հարկային քաղաքականության և տիրողների դեմ բռնկված ժողովրդական-ազատագրական ապստամբությունների մասին։ Ղևոնդը, որպես հայրենասեր պատմիչ, զգայուն ու կարեկից է իր ժողովրդի ու հայրենիքի տառապանքների նկատմամբ։ Եվ թեև այդ հողի վրա արաբ նվաճողների հանդեպ նրա մեջ կուտակված է անհուն ատելություն և թշնամանք, սակայն բռնակալական լծի դեմ ակտիվ պայքարի խնդրում նա ընդհանուր առմամբ զգուշավոր ու անհամարձակ է և կարծեք ավելի շատ հակված է նախընտրելու Բագրատունիների քաղաքական գիծը, քան Մամիկոնյաններինը, որոնք ամեն ինչ ձգտում էին լուծել ուժով և պայքարի ճանապարհով։ Սակայն պատմիչը, երբեմն հայրենասիրական բուռն զգացմունքների ազդեցության տակ շեղվելով իր սկզբունքներից, շատ ջերմ ու խրախուսանքի խոսքեր է ասում ազատագրական պայքարի ու նրա քաջարի մարտիկների հասցեին։ Թեև իր նախորդներից շատերի նման Ղևոնդը նույնպես ունի ժամանակաշրջանին հատուկ կրոնական սահմանափակվածություն, որի հետևանքով երևույթները հաճախ բացատրում է մարդկանց մեղքերով ու նախախնամության ուժով, խախտում է դեպքերի հաջորդականությունը, նրա գիրքը, այնուամենայնիվ, մնում է որպես լավագույն սկզբնաղբյուրը VIII դարի Հայաստանի, և ոչ միայն Հայաստանի, պատմության ուսումնասիրության համար։

Ղևոնդի աշխատության լավագույն հրատարակությունը կատարվել է Պետերբուրգում 1887 թվականին։ Այն լույս է տեսել նաև աշխարհաբար (Երևան, 1982), ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն։

## 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայկական գրերի ստեղծումից անմիջապես հետո, ինքնուրույն գրականության բազմակողմանի զարգացմանը զուգահեռ, Հայաստանում բուռն թափով սկսում է ծավալվել նաև թարգ-



մանական գործը, որի մշակութային արժեքը, ինչպես ճիշտ կերպով նշում են մասնագետները, դուրս գալով զուտ ազգային շրջանակներից, համաշխարհային գրականության ու գիտության գանձարանում գրավում է առաջնակարգ տեղ։

Թարգմանական աշխատանքը, որը մեծ եռանդով ծավալվում էր Հայաստանում, V—VI և հետագա դարերում, ամենից առաջ վկայում է Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի ու նրանց ավանդները շարունակող թարգմանիչների՝ հայ նորաստեղծ գրականության զարգացման համար մյուս ժողովուրդների գրականության նշանակության գիտակցման մասին։ Հարցի կարևորության հենց այսպիսի ըմբռնումով է, որ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը հայ երիտասարդներին խումբ-խումբ ուղարկում էին արտասահման՝ հունարեն և ասորերեն լեզուներ սովորելու և թարգմանական արվեստին տիրապետելու համար։

Քանի որ այն ժամանակ գաղափարախոսության բոլոր բնագավառները գտնվում էին քրիստոնեական եկեղեցու ձեռքում, դրա համար էլ օտար լեզուներով եղած գրքերից ընտրվում և թարգմանվում էին առաջին հերթին այնպիսիները, որոնք պետք է օգնեին նոր կրոնի գաղափարների տարածման և հայոց եկեղեցու հասարակական-քաղաքական հիմքերի ամրապնդման գործին։

Քրիստոնեական եկեղեցու հիմքը և նրա կարևորագույն աղբյուրը Սուրբ գիրքը՝ Աստվածաշունչն էր, որի միջոցով ոչ միայն պրոպագանդում, այլև ուսուցանում էին քրիստոնեության սկզբունքները։ Ուրեմն Աստվածաշունչը այն ժամանակ մարդկանց նաև գրագիտություն սովորեցնող մի ձեռնարկ էր։ Հետևապես զարմանալի չէ, որ հայկական ֆեոդալական հասարակարգի տիրապետող գաղափարախոսության շահերից ելնելով՝ Մեսրոպ Մաշտոցը տառերը հորինելուց հետո, դեռևս Սամոսատում եղած ժամանակ, անմիջապես ձեռնամուխ եղավ Աստվածաշնչի թարգմանության գործին, սկսելով նրա «Սողոմոնի առակները» բաժնից։ Աստվածաշնչի թարգմանությունը Մեսրոպ Մաշտոցը Սահակ Պարթևի հետ հիմնականում ավարտում է 405—408 թվականներին։ 432—433 թվականներին, երբ Եզնիկ Կողբացին, Կորյունը, Հովսեփ Պաղնացին և Ղևոնդը ուրիշ գրքերի հետ հայրենիք են բերում նաև Աստվածաշնչի հունարեն թարգմանության լավագույն օրինակը, Սահակն ու Մեսրոպն իրենց աշակերտների հետ, նրա հիման վրա, վերջնակա-

նապես խմբագրում են Աստվածաշնչի թարգմանությունը, որը իր կատարելությամբ համարվում է «թարգմանութեանց թագուհին»։ Եթե Աստվածաշունչը մի կողմից հսկայական ազդեցություն ունեցավ միջնադարյան հայ մտավոր կյանքի վրա, ամրապնդելով քրիստոնեական գաղափարախոսությունը, ապա մյուս կողմից էլ նա կարևոր դեր կատարեց հայ գրական լեզվի մշակման և մտավոր զարգացման գործում։

Սակայն միայն Աստվածաշնչի թարգմանությամբ հայ հոգևոր աշխարհը լիակատար բավարարություն ստանալ չէր կարող։ Նրա մութ ու շատ տեղերում անհասկանալի հատվածները ընթերցողներին մատչելի դարձնելու համար հարկ եղավ կարևոր տեղ տալ նաև ասորա-հունական աշխարհում արդեն լայն ճանաչում գտած մեկնողական գրականությանը (հերմենևտիկա)։ Անունն ինքը ասում է, որ այդ բնույթի գրքերում հեղինակներն ավելի հասկանալի, մատչելի լեզվով ու օրինակներով մեկնաբանում և պարզաբանում էին Ս. Գրքի տարբեր հատվածները։ Եվ հենց V դարի կեսերին հայ հեղինակների ջանքերով թարգմանվեցին հռչակավոր եկեղեցական մեկնիչների՝ Բարսեղ Կեսարացու, Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու, Աթանաս Աղեքսանդրացու, Գրիգոր Աստվածաբանի, Կյուրեղ Աղեքսանդրացու և շատ ուրիշների երկերը։ Նշված հեղինակների գործերի բարձրարվեստ թարգմանությունները կարևոր դեր են կատարել հայ հին գրականության ու լեզվի զարգացման գործում։ Նրանք ունեն նաև համաշխարհային նշանակություն, որովհետև նրանց մի մասի հունարեն ու ասորերեն բնագրերը կորել և մեզ չեն հասել[24]։

V—VI դարերի հայ թարգմանական գրականության մեջ աչքաթող չեն արվել նաև Արիստիդես Աթենացին, Հիպոլիտոսը, Մեթոդիոս Օլիմպիացին, Եպիփան Կիպրացին և մյուսները, որոնք հանդիսանում են այսպես ասած շատագովական գրականության ստեղծողները։ Այս հեղինակները քրիստոնեական փիլիսոփայության դիրքերից պախարակում էին հեթանոսությունը և պաշտպանում քրիստոնեությունը բոլոր տեսակի հարձակումներից և հիմնավորում ու արդարացնում նրա սկզբունքները։ Քրիստոնեական գրականության շատագովները, հակադրվելով անտիկ փիլիսոփայությանը, մերժում և հերքում էին հատկապես նրա մատերիալիզմն ու աթեիզմը։ Սրանց ազդեցությունը բավական նկատելի է հատկապես Մեսրոպ Մաշտոցի և Եղնիկ Կողբացու ինքնուրույն ստեղծագործությունների մեջ։

V դարի կեսերին հայ գրականությունը չսահմանափակվեց միայն սեփական կամ թարգմանական կրոնական ու եկեղեցական գրականության շրջանակներում։ Հայ հին գրականությունը հենց այդ ժամանակ բռնեց իր զարգացման լայնահուն ճանապարհը, երբ եկեղեցականից ու թարգմանականից բացի, ստեղծվեցին նաև փիլիսոփայության, պատմագիտության և ճշգրիտ գիտություններին վերաբերող արժեքավոր շատ աշխատություններ, որոնք համաշխարհային գրականության շարքում գրավում են պատվավոր տեղ։

V դարի կրոնական կամ պատմագիտական բովանդակություն ունեցող թարգմանությունները և ինքնուրույն ստեղծագործությունները բավարարելով ժամանակի հոգևոր պահանջմունքները, միաժամանակ կարևոր դեր էին կատարում թշնամական տերությունների ոտնձգությունների դեմ հայերի մղած գաղափարական պայքարի գործում։

V դարի երկրորդ կեսերին այդ պայքարի ոլորտներում հիմնական խնդիրը դարձավ միաբնակության և երկաբնակության բուռն հակադրությունը, որը թեև արտաքինից կրում էր դավանաբանական բնույթ, ներքուստ հետապնդում էր քաղաքական նպատակներ և ծառայում Բյուզանդական կայսրության նվաճողական շահերին։ Բյուզանդական արքունիքը քաղկեդոնական դավանանքը դարձնում էր մյուս ժողովուրդներին քաղաքական ճնշման ենթարկելու և իրեն հպատակեցնելու կարևոր միջոց։ Բյուզանդիայի նմանօրինակ քաղաքականությանը հակադրվելու և արտաքին ագրեսիայից պաշտպանվելու համար հայերն էլ իրենց հերթին պետք է ձեռք բերեին փիլիսոփայական ու տրամաբանական կայուն գիտելիքներ, իմանային կրոնների պատմությունը, տիրապետեին վիճելու, ճարտասանելու կանոններին և այլն։ Այս անհրաժեշտությամբ էլ պայմանավորված էր փիլիսոփայական և այլ աշխարհիկ գիտական գրականության առաջացումը հայ իրականության մեջ, որի ստեղծմանը ձեռնամուխ եղան Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի կրտսեր աշակերտները V դարի 60-ական թվականներին։

[24] Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Հայ հին թարգմանական գրականություն, Երևան, 1984։

թարգմանության հետքերը։ Իսկ սա նշանակում է, որ հայ թարգմանիչները «Քրոնիկոնի» թարգմանությանը տվել են ավելի մեծ ու կարևոր նշանակություն, քան սովորական թարգմանչական գործ կատարելիս։ Եվ թեև Կեսարացու այդ գիրքը հին թե նոր ժամանակներում թարգմանվել է նաև այլ լեզուներով, սրանց մեջ լավագույնը համարվում է հայոց լեզվով թարգմանությունը։ Բացի այդ, քանի որ այդ աշխատության հունարեն բնագիրը կորել ու չի պահպանվել, հայերենը փաստորեն փոխարինում է բնագրին և որպես այդպիսին գիտական աշխարհում շատ բարձր է գնահատվում։ Ստացվում է, որ հայերեն թարգմանությունը Եվսեբիոսի գրքին գոյատևելու հնարավորություն է տվել, որով հայերեն նմուշի արժեքը ավելի է մեծանում։ Հարկ է նշել, նաև, որ թեև միջին դարերում «Քրոնիկոնից» օգտվել և հիշատակել են շատ հայ հեղինակներ, նրա հայերեն թարգմանությունը մինչև XVIII դարը չէր հայտնաբերվել։ Այդ աշխատության պահպանված միակ հայերեն ձեռագիրը հայտնաբերել է Գևորգ Դպիր Պայատացին։ Գրքի զրաբար բնագիրը լատիներեն թարգմանության և մեզ հասած հունարեն հատվածներով հրատարակել է Մ. Ավգերյանը Վենետիկում 1818 թվականին։ Եվսեբիոսի գրքի հայերեն թարգմանության այդ միակ ընդօրինակությունը XIII դարի է և պահպանվում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում։

Հունաբան դպրոցի առաջավոր ներկայացուցիչները շատ բարձր գնահատելով անտիկ շրջանի փիլիսոփայության և այլ գիտությունների հսկայական ժառանգությունը՝ ձգտում էին այն ներմուծել հայ գրականության մեջ՝ ի նպաստ հայրենի գիտության զարգացման։

Հայ հունաբանները ևս կրթության նախապայմանը համարում էին առաջին հերթին քերականությունը և հայոց լեզվի քերականության ստեղծման համար V դարի երկրորդ կեսերին սկսեցին թարգմանել այդ կարգի աշխատություններ։ Այդ գործի լավագույն օրինակը եղավ հունական քերականագիտության հռչակավոր ներկայացուցիչ, մ. թ. ա. II դարի հեղինակ Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» գիրքը, որը հայոց լեզվի, ոճի, քերականության զարգացմանը նպաստելուց բացի, կարևոր դեր խաղաց նաև փիլիսոփայական տերմինաբանության մշակման համար։ 470-ական թվականներին հայ



Թարգմանիչների նախորդ սերունդը, ինչպես տեսանք, մոտահոդված էր հիմնականում աստվածաբանական խնդիրներով և մի քանի տասնամյակի ընթացքում արդեն կարողացել էր ստեղծել ինքնուրույն կամ թարգմանական պատշաճ մի գրականություն, որի ավելացման կամ բազմապատկման հրատապ անհրաժեշտությունը այդ ժամանակ այլևս չէր զգացվում։ Դրա համար էլ թարգմանիչների երկրորդ սերունդը հիմնականում իր ուշադրությունը բևեռում է աշխարհիկ գրականության և կրոնի ու եկեղեցու, այսպես ասած, վերահսկողությունից հեռու գտնվող գիտական այլ դիսցիպլինների վրա։ Այդ խնդիրը իրագործելիս հունական գիտական կենտրոններում բարձր կրթություն ստացած հայ թարգմանիչները թարգմանությունների ժամանակ հայերենի ձևաբանական ու շարահյուսական կանոնները հարմարեցնում կամ ձևում էին հունարենով ստեղծված բառերի ու դարձվածքների օրինակով, ստեղծում նոր բառեր բառապատճենման եղանակով։ Այս հանգամանքը զգալիորեն նպաստեց ինչպես հայերենի բառապաշարի հարստացմանը, այնպես էլ մասնագիտական տերմինների և հայոց գիտական լեզվի ստեղծմանը։ Հայ հին գրականության մեջ առաջացած այս ուղղությունը ընդունված է անվանել «հունաբան դպրոց» կամ «հունաբան ուղղություն»։

V դարում կատարված թարգմանությունների մեջ իր ուրույն տեղն ու արժեքն ունի հույն պատմագիր Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը»։

Եվսեբիոս Կեսարացին ծնվել ու ապրել է 260—339 թվականներին Պաղեստինի Կեսարիա քաղաքում։ Նա 311 թվականից վարել է հայրենի քաղաքի եպիսկոպոսություն։ Հեղինակը իր «Քրոնիկոնը» գրել է 301—325 թվականներին։ Հայերենում այդ գիրքը անվանվում է նաև «ժամանակագրական կանոններ»։ «Քրոնիկոնը» համաշխարհային պատմության բնույթ ունի, գրված ժամանակագրության ձևով։ Նրանում դեպքերի հաջորդական շարադրանքը հասցվում է մինչև 325 թվականը։ Հենց սրանից էլ հասկանալի է, թե ինչ արժեք էր ներկայացնում հույն հեղինակի աշխատությունը գիտության ու պատմագրության համար և ինչու պատմագրական երկերից առաջիններից մեկը հայերը այդ երկը թարգմանեցին։ Եվսեբիոս Կեսարացու գիրքը հայերեն է թարգմանվել V դարում հունարեն բնագրից, որը կրում է նաև աշխատության սարքերեն

թարգմանիչները նույն հաջողությամբ թարգմանեցին հիմնականում Ափտոնիոսի ճարտասանական գրվածքից կազմված «Պիտույից գիրքը» և Թեոն Աղեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց» երկը, որոնք խթանեցին հայ ճարտասանական արվեստի զարգացմանը և առաջընթաց լիցք հաղորդեցին նաև փիլիսոփայությանն ու արվեստաբանությանը։ Հաջորդ քայլը փիլիսոփայական երկերի թարգմանությունն էր։

470—480-ական թվականներին թարգմանվեցին I դարի խոշոր փիլիսոփա Փիլոն Եբրայեցու երկերը, որոնցից շատերը պահպանվել են հենց միայն հայերեն թարգմանություններով («Յաղագս նախախնամութեան», «Վասն լինելիութեանն», «Լուծումունք ելիցն» և այլն)։ Փիլոնի երկերը, մասնագետների ասելով, զգալի ազդեցություն են թողել հայ այնպիսի հեղինակների ստեղծագործությունների վրա, ինչպիսիք են Եղիշեն, Մովսես Խորենացին, Անանիա Շիրակացին, Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Իմաստասերը և ուրիշներ։

490-ական թվականներին հունաբան դպրոցի ներկայացուցիչները փիլիսոփայական-տրամաբանական երկերի թարգմանական աշխատանքը սկսում են նեոպլատոնյան հայտնի փիլիսոփա Պորփյուր Փյունիկացու «Ներածութիւն ստորոգութեանցն Արիստոտելի» երկից, որով զգալիորեն հարստացվում է հայերենի փիլիսոփայական տերմինաբանությունը։ Թարգմանիչները հունարեն տերմինի դիմաց, հունարենի բառակազմության սկզբունքով (նախդիր, արմատ, վերջավորություն) ստեղծում են նրա հայերեն համարժեքները։ Զեռք բերելով արդեն բավական փորձ և ունենալով փիլիսոփայական տերմինների անհրաժեշտ պաշար, հունաբան հեղինակները համարձակորեն ձեռնամուխ եղան Արիստոտելի և նրա ստեղծագործություններին նվիրված աշխատությունների թարգմանությանը։ Այդ ժամանակ թարգմանվեցին Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» և Անանունի «Մեկնութիւն «Ստորոգութեանցն» գրքերը։

Փիլիսոփայական բնույթի երկերի թարգմանությունը շարունակվում է նաև VI դարում, երբ հայ թարգմանիչները մայրենի լեզվով ներկայացնում են Պլատոնի աշխատությունները («Տիմեոս», «Եվտիփրոն», «Մինոս», «Սոկրատի պաշտպանություն», «Օրենքներ»)։

Պորփյուրի, Արիստոտելի և Պլատոնի աշխատությունների թարգմանությունները և Դավիթ Անհաղթի ինքնուրույն ստեղծագործությունները հայ փիլիսոփայական գրականությունը էությամբ ու բովանդակությամբ աշխարհականացնում են[25]։

Ինքնուրույն և թարգմանական գրականության շնորհիվ, գրերը ստեղծելուց ընդամենը մեկ հարյուրամյակ հետո, հայ մշակույթը և հայոց լեզուն բարձրանում են այն ժամանակվա ամենազարգացած լեզուների ու մշակույթների մակարդակին։

V—VIII դարերում Հայաստանում մեծ հետաքրքրություն է առաջանում նաև բնական գիտությունների նկատմամբ, և հայ թարգմանիչները աչքաթող չեն անում նաև այդ բնագավառը։ Դրա լավագույն ապացույցը կարող են լինել Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» և Գրիգոր Նյուսացու «Յաղագս մարդոյ կազմութեան» բնափիլիսոփայական, մարդակազմական բովանդակությամբ երկերի հայերեն թարգմանությունները, որ 712 թվականին իրականացրել էր անվանի գիտնական Ստեփանոս Սյունեցին։ Այս թարգմանություններով ըստեղծվում և հղկվում են նաև հայ բժշկագիտական և բնափիլիսոփայական տերմինները։

V—VIII դարերի հայկական թարգմանությունները հայ մշակույթի բաղկացուցիչ մասն են կազմում։ Նրանք իրենց կատարողական արվեստով ամբողջ միջնադարում մնացին որպես չգերազանցված օրինակներ։

## 3. ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ՃՇԳՐԻՏ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հայ մտավոր կյանքի ու մշակույթի պատմության ուսումնասիրության համար շատ կարևոր նշանակություն ունեն փիլիսոփայական և ճշգրիտ գիտություններին վերաբերող սկզբնաղբյուրները։

Փիլիսոփայությունը հին ավանդներ ունենալով հանդերձ, զարգացման լայն հնարավորություններ ստացավ վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, գրերի ստեղծումից անմիջապես հետո։ Այդ ժամանակ փիլիսոփա մտածողները հիմնականում իրենց ստեղծագործություններով ձգտում էին ամրապնդել ֆեոդալական հասարակարգի գաղափարախոսության՝ քրիստոնեա-

[25] Ս. Արեշատյան, Հնագույն հայկական թարգմանությունները, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 1, 1973, էջ 35։

կան կրոնի հիմքերը և պաշտպանել նրան այլևայլ կրոնների հարձակումներից։ Սկզբնական շրջանում գիտական իմաստով նույնիսկ այսպիսի նեղ ու սահմանափակ նպատակադրումով փիլիսոփայությունը նշանակալից դեր է կատարել օտարերկրյա նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարում։ Եվ զարմանալի չէ, որ այդ պայքարի առաջամարտիկը դարձավ հենց հայկական գրերի ստեղծողը՝ Մեսրոպ Մաշտոցը։

**Մեսրոպ Մաշտոց** Մեսրոպ Մաշտոցը ծնվել է 360—361 թթ. Տուրուբերան աշխարհի Տարոն գավառի Հացիկ կամ Հացեկաց գյուղում։ Նրա հոր անունը Վարդան էր։ Ավարտելով Հայաստանում գործող օտարալեզու դպրոցներից մեկը՝ Մեսրոպ Մաշտոցը հատկապես հմտանում է հունարեն և ասորերեն լեզուների մեջ և ծառայության մտնում Վաղարշապատի արքունի դիվանատանը՝ զինվորական գրագրի պաշտոնով։ Այստեղ պալատական գրատներում ու մատենադարաններում երիտասարդ Մաշտոցը հնարավորություն է ունենում էլ ավելի խորացնելու իր գիտելիքները և ձեռք է բերում մեծ հեղինակություն։ Վաղարշապատում Մեսրոպ Մաշտոցը դառնում է կրոնավոր և 390-ական թվականների սկզբներին մի խումբ աշակերտներով մեկնում Փողին գավառը քրիստոնեական ուսմունքը պրոպագանդելու համար։ Նա այստեղ ակտիվ պայքար է ծավալում նաև հեթանոսական պաշտամունքի մնացորդների և աղանդավորական շարժումների դեմ։ Փողինում ծավալած իր գործունեության ընթացքում Մաշտոցը համոզվում է, որ ասորա-հունական ազդեցությունների, հեթանոսական ուսմունքի ու հայոց եկեղեցու հակառակորդների դեմ հիմնավոր պայքար ծավալելու համար անհրաժեշտ է ունենալ սեփական տառերով գրված սեփական գրականություն։ Այս մտորումներով նա վերադառնում է Վաղարշապատ և խորհրդակցում այն ժամանակվա հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի և Վռամշապուհ թագավորի հետ, որոնք հանձն են առնում ամեն կերպ աջակցել Մեսրոպ Մաշտոցին՝ հայկական այբուբենի հորինման գործում։ Այդ ուղղությամբ, սակայն, առաջին քայլը կատարողը լինում է Վռամշապուհը, որի կողմից Միջագետք գործուղված Վահրիճը ասորի եպիսկոպոս Դանիելի մոտից Հայաստան է բերում ինչ-որ տառերի նմուշներ, որոնք, սակայն, պակասավոր էին և ուսուցումն այդ տառերով շարունակելը հնարավոր չէր։ Այդ պատճառով էլ նոր



լիարժեք գրեր ստեղծելու խնդիրը սպասում էր իր վճռողին։ Այս պայմաններում հարցի վերջնական լուծումն իր ձեռքն է վերցնում Մեսրոպ Մաշտոցը, որը 390-ական թվականների վերջերին թագավորի և կաթողիկոսի հանձնարարականներով, մի խումբ աշակերտների հետ ուղևորվում է Միջագետք՝ այն ժամանակվա նշանավոր գիտական ու մշակութային կենտրոնների գրադարաններում որոնումներ և ուսումնասիրություններ կատարելու և հայկական տառեր ստեղծելու համար։ Ամիդից և Եդեսիայից հետո Մաշտոցը իր հիմնական աշխատանքները կենտրոնացնում է Սամոսատում, որտեղ նրան ամեն կերպ օգնում և աջակցում էին տեղի մտավորականները։ Մեսրոպ Մաշտոցի քրտնաջան աշխատանքը վերջապես պսակվում է հաջողությամբ և 405 թվականին նա կարողանում է ստեղծել նոր և միանգամայն կատարյալ հայկական այբուբեն ու վերադառնում է հայրենիք, որտեղ նրա ջանքերով բաց են արվում դպրոցներ և հայ մանուկներին ուսուցանում գրագիտություն։

Մեսրոպ Մաշտոցն ապրեց 80—81 տարի։ Նա վախճանվել է 440 թվականի փետրվարի 17-ին Վաղարշապատում և թաղվել Արագածոտն գավառի Օշական գյուղում, որտեղ մինչև այժմ մեծ սրբությամբ պահպանվում է նրա գերեզմանը։

Մեսրոպ Մաշտոցը թեև իր կյանքի մեծ մասը տրամադրել է հայկական նոր տառերի ստեղծման, դպրոցներ բաց անելու և գրագիտություն տարածելու գործին, սակայն դրա հետ մեկտեղ նա մեծ եռանդով զբաղվել է նաև թարգմանական աշխատանքով և ինքնուրույն ստեղծագործություններով։ Նրա ինքնուրույն աշխատանքներից պահպանվել է միայն մեկը, որը հայտնի է «Ցանկապատում ճառք» վերնագրով։ Թեև այդ աշխատության Մեսրոպ Մաշտոցի գրչին պատկանելու մասին որոշակի հիշատակություն ունի Մաշտոցի կենսագիր Կորյունը, բայց հայ պատմիչ Ագաթանգեղոսը ըստ երևույթին այդ գործին ավելի մեծ հեղինակություն տալու դիտավորությամբ, այն վերագրել է Գրիգոր Լուսավորչին։ Այս հակասական տեղեկություններն էլ պատճառ են դարձել «Ցանկապատում ճառքի» հեղինակի հարցի շուրջը ծավալված երկարատև վեճերի, որոնք այժմ կարծեք թե վերջնականապես լուծվել են Մեսրոպ Մաշտոցի օգտին։

Մեսրոպ Մաշտոցի «Ցանկապատում ճառքը» կազմված է 38 ինքնուրույն ճառերից, որոնք բոլորն էլ ունեն կրոնաբարո-

յախոսական և կրոնափիլիսոփայական բովանդակություն։ Դրա համար էլ այդ աշխատությունը դարեր շարունակ օգտագործվել է ժողովրդին քրիստոնեական ոգով դաստիարակելու համար։ Ոմանք ենթադրում են, որ «Յաճախապատում ճառքը» հայերեն տառերով ստեղծված առաջին ինքնուրույն գործն է։

Մեսրոպ Մաշտոցը նաև փիլիսոփա գիտնական է։ Նրա կարծիքով ամեն ինչի սկիզբն ու արարիչը Աստվածն է, որն անսկիզբ, անվախճան և հավիտենական է։ Աստված որդու և սուրբ հոգու հետ կազմում է սուրբ երրորդությունը։ «Մի բնութիւն է նոցա,—ասում է հեղինակը,—և մի անփոփոխ իսկութիւն և մի արարչութիւն, մի աստուածութիւն և մի զօրութիւն, և չիք ուստեք եկամուտ և զօդուած կամ յաւելուած յանսկիզբն երրորդութիւնն, այլ նա է աղբիւր և ի նմանէ բաժանումն ընդ ամենայն արարածս»։ Աստծուն ամեն ինչի արարիչը համարելով, Մեսրոպ Մաշտոցը շատ կարևոր տեղ է հատկացնում նաև մարդուն։ Մարդը ըստ նրա երկրորդ աստվածն է, որն իր հանճարի շնորհիվ կարողանում է ակտիվ ներգործություն ունենալ բնության վրա և վերափոխել այն իր համար։ Այս մտքերը Մեսրոպ Մաշտոցը շնայած վերցրել է Աստվածաշնչի Ծննդոց գրքից, սակայն կուրորեն չի կրկնել դրանք, այլ տրամաբանական զարգացման շնորհիվ վերացականից հանգել է մարդու ստեղծագործական հանճարի ճանաչմանը։ Մաշտոցը գտնում է, որ մարդը աշխատանքի միջոցով է հասնում իր հանճարի գագաթնակետին։ Սրանից պարզ երևում է, որ նա իր ժամանակի տիրապետող գաղափարախոսության՝ քրիստոնեական դոգմունքի կրողն է։ Բոլոր փիլիսոփաների նման, նա գտնում է, որ մարդն ունի հոգի, առանց որի նա առհասարակ կկորցնի իր բանական հատկությունները։ 14-րդ ճառում կրկնելով հին մտածողներին, թե բոլոր երևացող և չերևացող արարածները շրջապատող բնության հետ միասին կազմված են չորս տարրերից՝ հողից, ջրից, կրակից և օդից, Մեսրոպ Մաշտոցը հանգում է այն մտքին, որ Աստված ոչնչից է ստեղծել ամեն ինչ։

«Յաճախապատում ճառք»-ի հեղինակը շոշափում է նաև չարի (սատանայի) և բարու (աստծո) փոխհարաբերության հարցը և հանգում այն ճիշտ եզրակացությանը, որ բացարձակ չար և բացարձակ բարի հասկացություններ գոյություն չունեն։ Գնահատելով մարդու դրական կողմերն ու առաքինությունները և պախարակելով նրա վատ արարքները՝ Մաշտոցը քրիստոնեական-Աստվածաշնչյան գաղափարախոսության դիրքերից զարգացնում է չարին չդիմադրելու ավետարանական սկզբունքը՝ մարդու բարոյական ամենաբարձր հատկանիշը համարելով հեզությունը, համեստությունը, համբերությունը։ Այստեղից նույնպես հետևում է, որ մարդիկ պետք է աշխատեն փոխադարձաբար իրար զիջել, ապրեն հաշտ ու խաղաղ աշխատանքային, ստեղծագործական հոգսերով ու նպատակներով։

**Եզնիկ Կողբացի**

V դարի հայ մշակույթի և գիտական մեծ շարժման ականավոր ներկայացուցիչներից մեկը Եզնիկ Կողբացին էր, որը պատկանում էր Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի աշակերտների ավագ սերնդին։ Եզնիկի ծննդյան և մահվան թվականները հայտնի չեն։ Գիտենք միայն, որ նրա ծննդավայրը եղել է Այրարատ աշխարհի Ճակատք գավառի Կողբ ավանը, որի անունով էլ ինքը կոչվում է Կողբացի։

Եզնիկը դեռևս իր ուսուցիչների կենդանության ժամանակ ուղարկվում է Եդեսիա (Միջագետք) սովորելու և ասորերենից թարգմանություններ կատարելու համար։ Իրեն տրված առաջադրանքը հաջողությամբ կատարելուց հետո, նա շուտով մեկնում է Կոստանդնուպոլիս, որտեղ խորացնում է իր գիտելիքները և է՛լ ավելի հմտանում թարգմանական արվեստի մեջ։ Կոստանդնուպոլսում եղած տարիներին Եզնիկը մշտապես հետևում էր Բյուզանդիայում տեղի ունեցող եկեղեցական ու քաղաքական իրադարձություններին և դրանցից հույժ կարևորների մասին տեղեկություններ ուղարկում Հայաստան՝ իր ուսուցիչներին։ Կոստանդնուպոլսում որոշ ժամանակ մնալուց հետո Եզնիկ Կողբացին իր ուսանող ընկերների հետ վերադառնում է հայրենիք՝ հետը բերելով Աստվածաշնչի հունարեն թարգմանության լավագույն օրինակը և Նիկիայի ու Եփեսոսի եկեղեցական ժողովների կանոնները, որոնցով այն ժամանակ շատ էին հետաքրքրվում հայոց եկեղեցու առաջնորդները։ Այն տեսակետը, որ 449 թվականի Արտաշատի ժողովի մասնակիցների թվում

Եղիշեի և Ղազար Փարպեցու կողմից հիշատակվող Բագրևանդի եպիսկոպոս Եզնիկը հենց Եզնիկ Կողբացին է, միանգամայն հավանական է, մանավանդ եթե հիշենք, որ այդ բարձր մակարդակի ժողովը քննում էր հայերի դավանափոխության և քրիստոնեության ու զրադաշտականության խնդիրները, որոնց իմացության բնագավառում Եզնիկից հմուտը Հայաստանում չկար։

V դարի առաջին կեսի հայ հասարակական ու եկեղեցական կյանքի ակտիվ գործիչը լինելուց, բացի, Եզնիկ Կողբացին իր ուսուցիչների և ընկերների հետ միասին գործուն մասնակցություն է ունեցել նաև թարգմանական գրականության ստեղծմանը։ Սակայն Եզնիկի մատուցած ծառայությունները հայ մշակույթին միայն դրանով չեն սահմանափակվում։ Նա կատարել է նաև ինքնուրույն գիտական-ստեղծագործական բեղմնավոր աշխատանք, որի լավագույն օրինակը «Եղծ աղանդոց» («Աղանդների հերքումը») գիրքն է, որից, ցավոք, մեզ է հասել միայն մեկ ձեռագիր (պահպանվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում)։ Այդ գիրքը տարբեր խորագրերով, ավելի քան երկու հարյուր տարվա ընթացքում, հրատարակվել է մի քանի անգամ։ Այն լույս է տեսել նաև աշխարհաբար (Երևան, 1970), ռուսերեն (Երևան, 1968), ֆրանսերեն, գերմաներեն, պարսկերեն։

Կրոնավոր լինելով հանդերձ Եզնիկ Կողբացին պատկանում էր իր ժամանակի հայ մտավորականության ամենաառաջավոր թևին, որը գլխավորում էին Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը։ Նա նույնպես գտնում էր, որ օտար ժողովուրդների հետ ձուլվելու վտանգի դեմ կռվելու կարևոր միջոցներից մեկն էլ մայրենի լեզվով բարձրարվեստ գրականությունն է։ Բայց դրա հետ մեկտեղ, որպես ուսյալ ու բարձրաստիճան հոգևորական, Եզնիկը համոզված էր, որ այդ պայքարում հաղթելու հիմնական նախապայմանը հայոց քրիստոնեական կրոնին հավատարիմ մնալն է։ Դրա համար էլ Կողբացին իր «Եղծ աղանդոց»-ում տեսական ու գաղափարական պայքար է մղում հայոց դավանանքին ու եկեղեցուն սպառնացող օտար դավանանքների և, առաջին հերթին, զրադաշտականության դեմ, որի միջոցով Սասանյան Պարսկաստանը ձգտում էր ոչնչացնել նաև հայ ժողովրդի ինքնուրույնությունը և ընդարձակել իր տիրապետության սահմանները։ Այստեղից անմիջականորեն բխում է այն



հեռանկարը, որ զրադաշտության բռնի պարտադրումն ու տարածումը միայն արտաքինից էր կրոնական կերպարանք կրում։ Ըստ էության, սակայն, այդ երևույթը հետապնդում էր շատ ավելի լուրջ և հեռուն գնացող քաղաքական նպատակներ։ Դրա համար էլ Եզնիկ Կողբացու պայքարը զրադաշտական ուսմունքի դեմ նույնպես քաղաքական պայքար էր և արտացոլում էր հայ ժողովրդի համընդհանուր շահերը։ Այսքանն էլ բավական է, որպեսզի Եզնիկը դասվի իր ժողովրդի ու հայրենիքի կենսական շահերը խորապես գիտակցող և այդ շահերի համար ակտիվ պայքարի ելած այն ժամանակվա աշխարհիկ ու եկեղեցական մյուս նշանավոր գործիչների շարքը։

Եզնիկը զրադաշտական կրոնի գաղափարական հիմքերի քննադատության առաջին հարվածն ուղղում է նրա երկվության (դուալիզմ) դեմ, որովհետև պարսկական կրոնն ընդունելով շարության և բարության աստվածությունների համատեղ գոյությունը, հանգում է նաև նյութի ինքնուրույն լինելու ընդունմանը, որը արմատապես հակասում էր քրիստոնեական միաստվածության գաղափարին։ Եվ վերջին հարցը անվերապահորեն հաստատելու համար Եզնիկ Կողբացին իր փաստարկումներն ուղղում է մատերիալիզմի դեմ։ Սակայն այստեղ միաստվածության և զրադաշտականության երկվության հարցի բացատրության փիլիսոփայական կողմը չէ կարևոր, այլ այն, որ, ինչպես մասնագետներն են գտնում, այդ հակասությունները նա օգտագործում է պարսկական տերության գաղափարական հիմքերը սասանելու և թուլացնելու համար։

Եզնիկ Կողբացին, որպես փիլիսոփա իդեալիստ, հոգու և նյութականի փոխհարաբերությունը լուծում է հօգուտ առաջինի։ Սակայն դրա հետ մեկտեղ՝ Կողբացին հանգում է այն եզրակացության, որ աստվածն էլ սկզբնական և միակ սուբստանցիան չէ, այլ նրա հետ միասին գոյություն ունի նաև նյութը, այսինքն՝ արարչագործության առարկան։ Սրանով հայ փիլիսոփան ակամայից հանգում է դուալիզմի, որի դեմ ինքը պայքարում էր։ Հետագայում արարիչ համարելով աստծուն՝ Եզնիկը գտնում է, որ աշխարհի հիմքը կազմում են բնության չորս տարրերը՝ ջուրը, օդը, հողը և կրակը, որով մեր հեղինակը ընդհուպ մոտենում է հույն անտիկ մտածող էմպեդոկլեսին և ցուցադրում նրանից կրած լուրջ ազդեցությունը։ Ընդունելով վերևում նշած բնության չորս տարրերի անհայտ ուժի ներգոր-

ծությամբ շարժման մեջ դրվելը և հիմնականում համաձայնելով Պլատոնի հետ՝ միաժամանակ նա հեռանում է Պլատոնից, գտնելով, որ բոլոր նոր իրերն առաջանում են տարրերի մեխանիկական միախառնումից։

Անդրադառնալով շարի և բարու փոխհարաբերությանը՝ Եզնիկը նախ շարիք է համարում այն բոլոր գործողությունները, որոնք մարդկանց համար վնասակար հետևանքներ են ունենում և հետո հարցադրման տեսակետից գործնականին անցնելով, գտնում է, որ ուժերը լրիվ ու նպատակահարմար օգտագործելու դեպքում, հայերը կարող են զրադաշտության պարտադրման առաջն առնել և հաղթահարել այդ շարիքը։ Այս դեպքում Եզնիկ Կողբացին ճակատագրի քմահաճ վերաբերմունքի զոհը չէ, այլ նրա բացասական կողմերի դեմ ակտիվ պայքար մղող մարտիկ։

Եզնիկն իր ստեղծագործություններով ոչ միայն առաջընթաց լիցք հաղորդեց հայ փիլիսոփայական մտքի զարգացմանը, այլև խոշոր ազդեցություն ունեցավ այդ բնագավառի հետագա ներկայացուցիչների վրա։ Պարզ ու հստակ լեզուն, կուռ տրամաբանությունը և վիճաբանելու հզոր արվեստը նրա «Եղծ աղանդոցը» դարձրել են գրաբարի դասական ստեղծագործություններից մեկը, որի առանձնահատուկ հմայքը պահպանվում է նաև մեր օրերում, իսկ նրա համապատասխան հատվածները զարդարում են գրաբարի դասագրքերի էջերը, ուսուցանելով նոր սերնդի մտածողներին Եղիշեի, Խորենացու և մյուսների լեզուն։

**Դավիթ Անհաղթ**

Հայաստանի վաղ միջնադարի գիտությունների պատմության ուսումնասիրության համար բացառիկ արժեք ունեն Դավիթ Անհաղթի ստեղծագործությունները։ Դավիթ Անհաղթն առաջինն էր հայ իրականության մեջ, որ, ժառանգելով անտիկ շրջանի տարբեր դպրոցների լավագույն ավանդները, մեծապես նպաստեց աշխարհիկ փիլիսոփայության զարգացմանը։ Հայ փիլիսոփայական միտքը, որի հիմքերը դրել էին Մեսրոպ Մաշտոցը, Եզնիկ Կողբացին, Եղիշեն և մյուսները, զգալիորեն հարստացել և դաղափարապես հագեցվել էր բազմաթիվ օտար հեղինակների գործերի հայերեն թարգմանության շնորհիվ և արդեն V դարի վերջերին հաստատուն հիմքեր էր ստեղծել գիտության այդ ճյուղի նոր առաջադիմության



համար։ Այդ բնագավառում շատ շոշափելի դեր են կատարել հատկապես հունաբան դպրոցի ներկայացուցիչները, որոնք և հին հայկական գրականության ու գիտության մեջ աշխարհիկ ուղղության զարգացման հիմքը դնելով, կարողացան կամաց-կամաց հայ մշակույթը բարձրացնել մյուս քաղաքակիրթ ժողովուրդների մշակույթի մակարդակին։

Դավիթ Անհաղթը ապրել ու ստեղծագործել է V դարի երկրորդ կեսերից մինչև VI դարի սկզբները։ Նա ծնվել է մոտավորապես 470-ական թվականներին Տարոնի Ներգին գյուղում։ Բարձրագույն կրթությունը ստացել է Ալեքսանդրիայի այն ժամանակվա նշանավոր փիլիսոփայական դպրոցում։ Նրա ուսուցիչը եղել է Ալեքսանդրիայի նեոպլատոնական դպրոցի ականավոր ներկայացուցիչ Օլիմպիոդորոս Կրտսերը։ Արտասահմանյան գիտության ու մշակույթի կենտրոններում Դավիթ Անհաղթը ճանաչված անձնավորություն էր։ Աթենքի և Կոստանդնուպոլսի փիլիսոփաների դեմ իր հաջող ելույթների ու հակաճառությունների համար հայ հեղինակը արժանացել էր «երիցս մեծարեալ» և «անյաղթ փիլիսոփայ» պատվավոր մականուններին։ Նրա ստեղծագործություններից հայտնի են՝ «Սահմանք իմաստասիրութեան», «Վերլուծութիւն «Ներածութեան» Պորփիւրի» և այլն։

Հայրենիք վերադառնալով՝ Դավիթ Անհաղթը սկսում է լուսավորական լայն գործունեություն ծավալել և պրոպագանդել ու տարածել աշխարհիկ փիլիսոփայական գիտելիքներ հայ կրթված խավերի շրջանում։ Սակայն հետագա ժամանակների հեղինակների վկայությամբ նրա այդ գործունեությունը հանդիպում է նաև լուրջ խոչընդոտների, և նրան սկսում են հալածել ու հետապնդել հետամնաց ու խավարամիտ տարրերը։ Այս վիճակը այնքան է վտանգում Դավիթ Անհաղթի դրությունը, որ նա հարկադրված հեռանում է Հայաստանի ծայրագավառներից մեկը։ Սակայն նախքան այդ, Դավիթ Անհաղթը իր ստեղծագործությունները տարածելու միջոցով կարողանում է լուրջ ազդեցություն ունենալ հայկական փիլիսոփայական մտքի ձևավորման վրա։ Դավիթ Անհաղթի գործունեությունը, ինչպես մասնագետներն են գտնում, կարևոր դեր է կատարում նաև հայ փիլիսոփայության մեջ հելլենիզմի ոգու երկար ժամանակ

պահպանմանը։ Դավիթ Անհաղթն իր աշխատությունները գրել է և՛ հայերեն, և՛ հունարեն լեզուներով։ Անգամ այն կարծիքը, կա, որ մեծ գիտնականը սկզբնապես գրում էր հունարեն և հետո ինքն էլ թարգմանում էր հայերեն։

Դավիթ Անհաղթի ստեղծագործությունների ամենաբնորոշ կողմերից մեկն այն է, որ նա մշտապես կապված էր հունական անտիկ փիլիսոփայության հետ։ Այդ ժամանակ ինչպես Մերձավոր Արևելքում և Միջերկրական ծովի ավազանում, այնպես էլ Հայաստանում, քրիստոնեական եկեղեցին ապրում էր այսպես ասած հելլենականացման պրոցես։ Այդ երևույթը արտահայտվում էր եկեղեցական գրականությունից բացի նաև փիլիսոփայական, բնական գիտությունների, պատմագրության և արվեստների մեջ։ Այնպես որ Դավիթ Անհաղթի ստեղծագործությունները և նրա նեոպլատոնական աշխարհայացքը նույնիսկ օգնում էին հայոց եկեղեցուն իր կրոնա-քաղաքական հիմքերի ամրապնդման գործում։ Դավիթ Անհաղթի նեոպլատոնական փիլիսոփայության առաջադիմական նշանակությունը, սակայն, այն է, որ նա հայ փիլիսոփայական մտքի զարգացման հիմքում դնում էր աշխարհիկը, հունական անտիկ փիլիսոփայության սերմերը, որոնք այնքան եռանդուն կերպով մերժվում ու հալածվում էին քրիստոնեական սխոլաստիկ գաղափարախոսների կողմից։

Նեոպլատոնական ուղղության Ալեքսանդրիայի դպրոցը, որին պատկանում էր նաև Դավիթ Անհաղթը, կարողացավ ոչ միայն այն ժամանակվա խիստ պայմաններում ըստ արժանվույն գնահատել անտիկ փիլիսոփայությունը, այլև նրա լավագույն և գիտության համար շատ կարևոր նշանակություն ունեցող կողմերը փոխանցել միջնադարին ի ժառանգություն։ Ալեքսանդրիայի դպրոցը և Դավիթ Անհաղթը իրենց ստեղծագործություններում հատկապես մեծ տեղ էին հատկացնում բնական գիտություններին և մաթեմատիկային, հենվում էին Արիստոտելի տրամաբանության և իմացաբանության վրա, որտեղ թերևս մատերիալիստական և գիտական միտումներն ավելի պարզորոշ էին դրսևորվում[26]։

Նեոպլատոնականությունը հատուկ գաղափարական ուղղություն էր փիլիսոփայության մեջ III—VI դարերում, որն իր առաջ նպատակ էր դրել համակարգել Պլատոնի փիլիսոփայության հակասական տարրերը՝ միացնելով դրանք Արիստոտելի գաղափարներին։ Թե ի՛նչ տվեց նեոպլատոնականությունը և ինչպիսի՛ նոր ուղղություններով հարստացրեց Դավիթ Անհաղթը հին Հայաստանի փիլիսոփայական գիտությունը, բավական է ասել, որ մեր հեղինակն իր ստեղծագործություններում ընդգրկում էր այն ժամանակվա փիլիսոփայական մտքի համարյա բոլոր բնագավառները՝ գոյաբանությունը (օնտոլոգիա), իմացաբանությունը (գնոսեոլոգիա), ուսմունքը հոգու մասին, լոգիկան, էսթետիկան։ Բնագավառներ, որոնց թեև այս կամ այն ձևով անդրադարձել էին Դավիթ Անհաղթի նախորդներ Մեսրոպ Մաշտոցը, Եզնիկ Կողբացին, Եղիշեն, Մովսես Խորենացին և մյուսները, սակայն Անհաղթը փիլիսոփայության մեջ գերազանցեց իր նախորդներին ինչպես լուսաբանվող պրոբլեմների մասնագիտական առաջքաշման, այնպես էլ նրանց ընդգրկման ու ծավալի տեսակետից։

Դավիթ Անհաղթը առաջինն է, որ կարողացավ որոշել փիլիսոփայական գիտության մեջ մտնող պրոբլեմների շրջանակները, տվեց փիլիսոփայության դիֆերենցացիան, սահմանեց նրա խնդիրներն ու նպատակները։ Այս տեսակետից առավել բարձր արժեք ունի հայ փիլիսոփայի «Սահմանք իմաստասիրութեան» աշխատությունը, որտեղ նա, քննադատելով ագնոստիցիզմը և սկեպտիցիզմը, կարողացավ «ապացուցել ոչ միայն աշխարհի ճանաչելիության հնարավորությունը, այլև այդ գիտության անհրաժեշտությունը ինտելեկտուալ և բարոյական կատարելության հասնելու համար»[27]։

Փիլիսոփայության հիմնական հարցը Դավիթ Անհաղթը լուծում է օբյեկտիվ իդեալիզմի դիրքերից։ Աստված, ըստ նրա, սկիզբն ու պատճառն է ամեն ինչի։ Խոսելով գիտակցության ձևերի մասին, Դավիթ Անհաղթն առաջ է քաշում գիտությունների հետևողական ուսումնասիրության անհրաժեշտության հարցը, առաջին տեղում դնելով ֆիզիկան, ապա մաթեմատիկան և հետո միայն աստվածաբանությունը (թեոլոգիան)։ Այս աշխատության մեջ Անհաղթը սուր քննադատության է ենթարկում բոլոր սոփեստներին, ագնոստիկներին, ռելյատիվիստնե-

[26] Տե՛ս Давид Анахт, Сочинения, вступительная статья С. Аревшатяна, 1975, էջ 10:

[27] Նույնը, էջ 11։

ին և սկեպտիկներին, որոնք ժխտում էին աշխարհի ճանաչելիությունը։ Ապացուցելով գոյի ճանաչողության հնարավորությունը, նա ցույց է տալիս նաև գոյի մասին գիտության, այսինքն՝ փիլիսոփայության գոյության հնարավորությունն ու օրինաչափությունը։

Դավիթ Անհաղթը մատերիալիստական վերաբերմունք ունի տարբեր գիտությունների առաջացման հարցի նկատմամբ։ Նա գտնում է, որ, օրինակ, թվաբանությունն ու երկրաչափությունը առաջացել են մարդկանց գործնական կարիքների պատճառով։ «Երկրաչափությունը,—ասում է Դավիթ Անհաղթը,—անհրաժեշտությունից դրդված ստեղծել են եգիպտացիները», քանի որ Եգիպտոսում Նեղոսի հեղեղումների ժամանակ խառնվում էին հողային կալվածքների սահմանները»[28], իսկ «թվաբանությունը ստեղծել են փյունիկեցիները, որոնք վաճառականներ լինելով համարողական արվեստի կարիքն ունեին՝ հաշվումներ կատարելու համար»[29]։

Դավիթ Անհաղթը իր մյուս աշխատություններով, ինչպես նաև Արիստոտելից, Պորփյուրից և ուրիշներից կատարած բարձրարժեք թարգմանություններով վճռական ազդեցություն է ունեցել ինչպես Հայաստանում, այնպես էլ տրամաբանական մտքի վրա ունեցած իր ազդեցությամբ ամբողջ միջնադարում։ Դավիթ Անհաղթի տրամաբանությանը հատուկ է մատերիալիստական ուղղությունը։ Նա գտնում է, որ մտքի կապակցությունները օբյեկտիվ են և արտահայտում են առարկաների ու երևույթների կապը, որը գոյություն ունի մարդու մտածողությունից անկախ։

Դավիթ Անհաղթի ստեղծագործությունները Հայաստանի վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանի հոգևոր մշակույթի գագաթը հանդիսանալով, հսկայական ազդեցություն են ունեցել այդ բնագավառի հետագա մտածողների վրա։ Որպես փիլիսոփայության նեոպլատոնականության ուղղության ականավոր ներկայացուցիչ, Դավիթ Անհաղթը մինչև այժմ էլ իր վրա է բևեռում ուսումնասիրողների ուշադրությունը։ Նրա գործերը հրատարակվել են բազմիցս։ Լույս են տեսել Անհաղթի փիլիսոփայական երկերի համահավաք քննական բնագրերը (Երևան, 1980), դրանց աշխարհաբար (Երևան, 1980) և ռուսերեն (Մոսկվա, 1980) թարգմանությունները, որոնք իրականացրել է Ս. Արևշատյանը։ Դավիթ Անհաղթի առանձին աշխատություններ լույս են տեսել հունարեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, լեհերեն, ռումիներեն և այլն։

1980 թ. Միավորված ազգերի կազմակերպության հանձնարարությամբ՝ ՅՈՒՆԵՍԿՈ-ի միջոցով, աշխարհով մեկ նշվեց հայ գիտնականի և մեծ մտածողի ծննդյան 1500-ամյակը։

**Անանիա Շիրակացի**

Միջնադարյան հայ մշակույթի ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկը Անանիա Շիրակացին է, որի թողած ստեղծագործությունները հսկայական նշանակություն ունեն ճշգրիտ գիտությունների պատմության ուսումնասիրության համար։ Շիրակացին հայ հեղինակներից միակն է, որը զբել և մեզ է թողել իր ինքնակենսագրությունը՝ «Վասն որպիսութեան կենաց իւրոյ» վերնագրով, որից և մենք որոշակի տեղեկություններ ենք քաղում նրա կյանքի և գործունեության մասին։

Շիրակացին ծնվել է Այրարատ աշխարհի Շիրակ գավառի Շիրակավան կամ Անանիա գյուղում 605—610 թվականների միջև, շինական Հովհաննեսի ընտանիքում։ Նախնական կրթությունը ստանում է Շիրակավանի հռչակավոր դպրոցում, որտեղ կրոնից բացի ծանոթանում է նաև հայ մատենագրությանը, ճարտասանությանը, գրչության արվեստին, մանրանկարչությանը և օտար լեզուներին։ Սակայն ձեռք բերած գիտելիքները նրան չեն գոհացնում, որովհետև նա հատուկ ձգտում ուներ հանդեպ «համարողական արվեստը», այսինքն՝ մաթեմատիկան։ Եվ մաթեմատիկական կրթություն ստանալու համար Շիրակացին սկսում է շրջագայել. նա լինում է Կարինում, ապա անցնում Չորրորդ Հայք, իսկ հետո որոշում է գնալ Կոստանդնուպոլիս, բայց ճանապարհին, Սինոպ քաղաքում հանդիպած հայրենակիցների խորհրդով որոշումը փոխում, մեկնում է Տրապիզոն և ընդունվում հույն գիտնական Տյուքիկոսի մոտ սովորելու, որը քաջ ծանոթ էր նաև հայոց լեզվին ու դպրությանը։ Շիրակացու ուսումնառության համար հսկայական դեր է կատարում նաև իր ուսուցչի հարուստ գրադարանը, որից նա ազատ օգտվելու իրավունք ուներ։ Տրապիզոնում Շիրակացին սովորում է ութ տարի։ Այստեղ նա խոր ու կայուն գիտելիքներ

[28] Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980, էջ 111։
[29] Նույնը, էջ 110։

է ձեռք բերում մաթեմատիկական առարկաներից, սովորում է տիեզերագիտություն, տոմար, աշխարհագրություն, պատմություն, փիլիսոփայություն և հետ վերադառնում հայրենիք։ Սակայն այստեղ նա հանդիպում է սառն ընդունելության, որի մասին գրում է այսպես. «Ես արդ՝ ես տրուպս Հայաստանեաց ուսայ ի նմանէ (Տյուքիկոսից—Ս. Մ.-Բ.) զհզալր արուեստս զայս, որ թագաւորաց է ցանկալի և բերի յաշխարհս մեր՝ առանց ուրուք լինելոյ ձեռնտու, միայն ջանիւ իմոյ անձինս... թէպէտ և ոչ ոք եղև շնորհակալ և մեծարաւղ իմոյ աշխատութեան»[30]։ Մի ուրիշ տեղ նա գանգատվում է, որ «ծուլները, ձանձրացնողները, սընափառները, ցուցամոլները և տգետները» իրեն անվանարկում և բամբասում են։ Սակայն հաղթահարելով դժվարությունները Շիրակացին ձեռնամուխ է լինում դպրոցներ բանալու գործին։ Կարճ ժամանակում Հայաստանի տարբեր մասերից նրա մոտ են գալիս շատ հայ պատանիներ և սկսում սովորել այն գիտությունները, որոնք մեծ հաճույքով դասավանդում էր Շիրակացին։ Շուտով Շիրակացու դպրոցի հռչակը տարածվում է ամեն տեղ, իսկ ինքը արժանանում է «մեծահանճար ուսուցչապետ» մականվանը։

VII դարի 40—70-ական թվականներին Անանիա Շիրակացին գիտահետազոտական լուրջ ուսումնասիրություններ է կատարում և գրում մի շարք բարձրարժեք աշխատանքներ տոմարի, թվաբանության, աստղաբաշխության, աշխարհագրության, օդերևութաբանության և այլ գիտությունների մասին։ Իր աշխատություններում մաթեմատիկայից բացի Շիրակացին քննարկում է նաև երաժշտությանը և փիլիսոփայությանը վերաբերող շատ հարցեր։

Ի պատիվ հայոց եկեղեցու՝ Շիրակացին իր գիտական ընդհանրացումների համար չէր հալածվում։ Նրա մեզ հասած շուրջ 25 աշխատությունները աչքի են ընկնում բարձր գիտականությամբ և ժամանակին ունեցել են գործնական լայն կիրառում։ Շիրակացին իր ուսումնասիրությունները գրելիս, օգտվել է օտար աղբյուրներից՝ ցուցաբերելով ինքնուրույն և քննադատական մոտեցում։ Շիրակացին իր աշխատություններով հաստատուն հիմքերի վրա է դրել ճշգրիտ գիտությունների ուսումնա-

[30] Ա. Գ. Աբրահամյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 208։



սիրությունը։ Հայաստանում և հայ մտավորականությանը տեսականորեն զինել օտար ազդեցությունների դեմ պայքարելու համար։

Անանիա Շիրակացու թվաբանության դասագիրքը մեզ հասածների մեջ ամենահինն է աշխարհում։ Նրա մաթեմատիկական աշխատություններն իրենց գիտական խորաթափանցությամբ և ինքնատիպությամբ արժեքավոր ներդրում են գիտությունների պատմության մեջ ընդհանրապես։ Մեծ գիտնականի մաթեմատիկական աշխատություններից ամենից կարևորը նրա թվաբանության դասագիրքն է, որի մաթեմատիկական աղյուսակները համարվում են ամենահինը եղածների մեջ։ Այստեղ հաշվումները կատարվում են մինչև իննսուն միլիոնը, այն դեպքում, երբ հին հունական նույնանման աղյուսակների վերջնակետը ինը միլիոնն է։ Մեզ հասած երկու այլ աղյուսակներում Շիրակացին կիրառել է թվաբանական և երկրաչափական պրոգրեսիաներ, կեսի հասկացողությունը, որ արտահայտել է լատիներեն C տառի նշանով և այլն։ Իր դասագրքի խնդիրների բաժնում Շիրակացին այլ մեթոդներով լուծել է այնպիսի խնդիրներ, որոնք եգիպտական ու հունական հայտնի եղանակներով հնարավոր չէր լուծել։ Մաթեմատիկայի պատմության համար ուշագրավ են նաև Շիրակացու «խրախճանականները»։ Դրանք հետաքրքրաշարժ ու սրամիտ մաթեմատիկական խնդիրներ են, որոնց լուծումը մասսայական հանդեսներում ու հավաքույթներում մասնակիցներին մեծ բավականություն էին պատճառում, ինչպես երգը, պարն ու երաժշտությունը։

Գիտական խոշոր արժեք են ներկայացնում տիեզերագիտության ու տոմարի հարցերին նվիրված աշխատությունները, որոնց մեջ նա քննության է առնում արևի, լուսնի, երկնային համաստեղությունների և աստղերի հետ կապված շատ հարցեր։ Տիեզերքի և գնության մասին Շիրակացու տված բացատրությունների հիմքում նույնպես ընկած է հին մտածողների չորս տարրերի մասին հայտնի դրույթը։ Շիրակացին գտնում է, որ երկինքը, երկիրը և նրանց միջև գոյություն ունեցող բոլոր մարմինները բաղկացած են չորս տարրերից՝ հողից, ջրից, օդից և կրակից։ Տիեզերագիտական աշխատություններում նա փորձել է բացատրել անձրևը, եղյամը, ձյունը, երկրաշարժը, քամին և բնական այլ երևույթներ։ Շիրակացին որոշել է նաև աստղերի տեղաբաշխումը, նրանց հեռավորությունը երկրից։ Այս բաղ-

մաթիվ խնդիրները տեսականից բացի ունեին նաև գործնական այն նշանակությունը, որ դրանք մտցված էին Շիրակացու կազմած դասագրքերի մեջ և դասավանդվում էին հայկական դպրոցներում։

Անանիա Շիրակացու տիեզերական համակարգը, թեև երկրակենտրոն (գեոցենտրիկ) համակարգ է, այնուամենայնիվ, տիեզերական մարմինների մասին նրա պատկերացումները հիմնականում ճիշտ են ու գիտական։ Քննելով երկրագնդի ձևի հարցը, Շիրակացին հանգում է միանգամայն ճիշտ եզրակացության, որ այն կլոր է, գնդաձև։ Չպետք է մոռանալ, որ մեծ գիտնականը իր այս խիզախ մտքերը այն էլ գրավոր ձևով հայտնում էր VII դարում, եկեղեցու և կրոնի բացարձակ գերիշխանության պայմաններում, որի համար նրան կարող էին ենթարկել ամենադաժան ու ամենասոսկալի հալածանքների։ Միանգամայն ճիշտ ըմբռնելով երկրի կլորության գաղափարը, Շիրակացին ճիշտ է պատկերացրել նաև ցերեկվա ու գիշերվա առաջացման պատճառները։ Նա գտնում է, որ ցերեկն առաջանում է արևից և նրա լույսից, իսկ գիշերը՝ լույսի պակասից։ Երբ երկրի ստվերն ընկնում է երկրագնդի մեկ երեսի վրա, այնտեղ գիշեր է լինում[31]։ Շիրակացին քննարկել է նաև տիեզերքում երկրագնդի այսպես ասած կանգուն լինելու հարցը և հանգել այն եզրակացության, որ երկրագնդին հավասարակշռություն տվողը բնության մեջ գործող հակադիր ուժերն են. երկիրն իր ծանրությամբ հակում ունի ներքև իջնելու, իսկ հողմը նրան հրում է դեպի վեր և այս երկու ուժերի հակազդեցության շնորհիվ ապահովվում է երկրագնդի հավասարակշռությունը։

Շիրակացին մերժելով Ծիր կաթնի մասին եղած առասպելները, հերքում է դրանք և տալիս գիտական միանգամայն ճիշտ բացատրություն, որ Ծիր կաթինը «հեռավոր խիտ աստղերի բազմություն է, խիստ աղոտ լույսով, դրա համար էլ նրա լույսը թույլ և միաձույլ է երևում»։ Մեծ գիտնականից հազար տարի հետո միայն, XVII դարում, Գալիլեյը հեռադիտակի օգնությամբ հաստատեց Շիրակացու եզրակացությունը։

Շիրակացին իր «Տիեզերագիտություն և տոմար» աշխատության մեջ անդրադարձել է նաև արեգակի և լուսնի խավարումների հարցին և դրան տվել գիտական ճիշտ բացատրություն։

[31] Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979, էջ 109։



Արեգակի խավարումը գիտնականը վերլուծում է այսպես. «Արեգակի լույսի պակասելը, որին մենք խավարում ենք անվանում, առաջանում է այն պատճառով, որ լուսինը, որը կանգնած է արեգակի դեմ հանդիման, արգելակում է դեպի մեզ եկող, արեգակի լույսը... Լուսինն է արեգակի խավարման պատճառը, ինչպես որ արեգակը՝ լուսնի, որն անթափանցելի է երկիր ուղարկվող ճառագայթի համար. ստվերով ծածկվում է երկիրը և լուսինն առանց լույսի է երևում»։

Շիրակացին գտնում է, որ երկիրն ու լուսինը իրենց սեփական լույսն ու ջերմությունը չունեն, նրանք այն ստանում են արեգակից։ Նա միանգամայն ճիշտ կերպով լուսնի փուլերի հետ է կապում ամպամածությունը, մակընթացությունը, տեղատվությունը, փոթորիկները և բնական մի շարք երևույթներ, իսկ արևի շարժումից, ասում է նա, փոփոխվում են եղանակները։ Ըստ Շիրակացու արեգակն անընդհատ շարժման մեջ է և մեկ լրիվ շրջան կատարում է 365 օր և 5 ժամում։ Այսպիսով աստղերի նկատմամբ արեգակի դիրքի վերականգնման պարբերության Շիրակացու սխալը ընդամենը կազմում է մոտ մեկ ժամ։

Մեծ են նաև Շիրակացու ծառայությունները տոմարագիտությանը։ Այդ բնագավառի նրա ամենից արժեքավոր աշխատությունը 532 տարիների համար կազմած համեմատական աղյուսակն է, որը կոչվում է նաև «ՇԼԲ աղյուսակ»։ Այս աշխատությունը պարունակում է հայկական շարժական և հռոմեական անշարժ 532 տարիների տոմարների համեմատական ցանկը։ Իր մեկ այլ աշխատության մեջ, որը կոչվում է «Պատճէն տօմարի», Շիրակացին զուգահեռաբար խոսում է հայկական և տասից ավելի ուրիշ ժողովուրդների տոմարական հաշվումների մասին, որը վկայում է մեծ գիտնականի տոմարական լայն ու բազմակողմանի գիտելիքների մասին։ Այս աշխատության մեջ առանձնապես ուշագրավ ու արժեքավոր է աղվանական ամսանունների ցանկը։

Հայ մատենագրության մեջ մեզ հասած աշխարհագրական ամբողջական ու ամփոփ առաջին աշխատությունը Անանիա Շիրակացու «Աշխարհացույցն» է, որի համար հեղինակն օգտագործել է օտար սկզբնաղբյուրներ և զանազան քարտեզներ։ Նրա օգտագործած հեղինակների մեջ առաջին տեղը գրավում են Պտղոմեոսը և Մովսես Խորենացին։ Շիրակացու «Աշխարհա-

ցույցը» բաղկացած է երկու մասերից։ Առաջինը ընդհանուր երկրագիտական մասն է, իսկ երկրորդը վերաբերում է ժամանակի հայտնի երկրների համառոտ նկարագրությանը։ Հեղինակն այստեղ խոսում է երկրի մեծության, նրա ձևի, բնակելի երկրի սահմանների, կլիմայական գոտիների, գլխավոր ծովերի, ցամաքի ու ջրային տարածությունների, նրանց մեծության և այլ հարցերի մասին։ Խոսելով Եվրոպայի, Լիբիայի (Աֆրիկա) և Ասիայի մասին, Շիրակացին նկարագրում է նրանց դիրքն ու սահմանները, նշում այնտեղ բնակվող ժողովուրդներին, քաղաքները, լեռները, գետերը, ծովերը, բուսական աշխարհը, հանքային հարստությունները և այլն։ «Աշխարհացույցը» իր բնույթով ոչ թե քաղաքական աշխարհագրություն է, այլ ֆիզիկական-աշխարհագրական բնույթի ուսումնասիրություն է, դրա համար էլ նրանում չի խոսվում այն ժամանակվա պետական այնպիսի խոշոր միավորումների մասին, ինչպիսիք են Բյուզանդական կայսրությունն ու Պարսկաստանը։

Հեղինակն իր այդ աշխատության մեջ մի առանձին մանրամասնությամբ ու խնամքով է ներկայացնում իր հայրենիքը՝ Մեծ Հայքը և նրա սահմանները։ Այստեղ արդեն Շիրակացին Մեծ Հայք ասելով, ֆիզիկաաշխարհագրականի հետ, հասկանում է նաև որպես քաղաքական միավոր I—V դարերի վիճակով, որտեղ իր պատմությունն է կերտել հայ ժողովուրդը։ Շիրակացին Մեծ Հայքը բաժանում է 15 առանձին երկրամասերի, որոնց նա տալիս է «աշխարհ» անունը։ Ուսումնասիրողները գտնում են, որ Մեծ Հայքի մասին Շիրակացու հաղորդած տվյալները մի զգալի չափով ձեռք են բերվել հեղինակի անձնական շրջագայությունների և հատուկ ուսումնասիրությունների միջոցով, դրա համար էլ այդ տվյալները բավական ճշգրիտ ու վստահելի են և ունեն գիտական մեծ արժեք։

Անանիա Շիրակացու աշխարհագրական բնույթի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մենք գործ ունենք իր ժամանակաշրջանի խոշորագույն մասնագետի հետ։

Անանիա Շիրակացին չի սահմանափակվել միայն ճշգրիտ գիտություններ շրջանակներով, նա գրել է նաև պատմագիտական բնույթի մի ժամանակագրություն, որն ընդգրկում է Հայաստանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 685 թվականը։ Հենց այն հանգամանքը, որ մեծ գիտնականը պատմությունը գրել է ժամանակագրության ձևով, ցույց է տալիս,



որ նա հետևելով Մովսես Խորենացուն, պատմության համար մեծ տեղ է հատկացնում ժամանակագրությանը։ Շիրակացու այդ աշխատությունը կարևոր ճշտումներ է մտցնում հայ ժողովրդի պատմության հետ կապված որոշ իրադարձությունների թվագրման մեջ։

Տիեզերքի, նրանում տեղի ունեցող երևույթների, տիեզերական մարմինների ուսումնասիրության ու մաթեմատիկայի հետ մշտապես գործ ունեցող գիտնականը իր երկերում անդրադարձել է նաև փիլիսոփայական մի շարք հարցերի և հանգել իր ժամանակի համար միանգամայն առաջադիմական ու դիտական ճիշտ ու հիմնավոր եզրակացությունների։ Եվ եթե այդ առիթով Շիրակացին աստծու և բնության հարաբերակցության հարցերում կանգնած է իդեալիստական դիրքերի վրա և նախնականը, առաջնայինը համարում է աստծուն, ապա հնարավոր է, որ նա այդ անում է ապահովագրության, եկեղեցուն հակադրվելուց խուսափելու և իր իսկական հայացքները քողարկելու համար։ Այլ կերպ ինչպես կարելի է բացատրել մեծ մտածողի այն եզրահանգումը, թե տիեզերքում ամեն ինչ շարժվում, ամեն ինչ փոփոխվում է և անշարժ ու անփոփոխ ոչինչ գոյություն չունի։ Բնությանը վերագրելով ստեղծարար մեծ ուժ, Շիրակացին շարժումն է համարում ստեղծագործական ուժի աղբյուր։ Մարմինների շարժվելով և փոփոխվելով, ասում է նա, բնության մեջ ոչինչ չի կորչում, այլ մի ձև կամ որակ փոխվում է մեկ այլ ձևի ու որակի։ Այս միտքը ահա թե ինչպիսի հստակությամբ ու համոզվածությամբ է ձևակերպում Շիրակացին. «Զի լինելութիւնն իցէ սկիզբն ապականութեան, և ապականութիւն դարձեալ անդրէն իցէ սկիզբն լինելութեան։ Զի այսմ անվնաս հակառակութենէ՝ աշխարհ առցէ զտևողութիւն»։

Վերջին տասնամյակներում Անանիա Շիրակացու անձնավորության ու ստեղծագործությունների մասին հայ և օտարազգի հեղինակները գրել են տասնյակ աշխատություններ, որոնց շնորհիվ նա, հասնելով համաշխարհային լայն ճանաչման, այսօր դասվում է միջնադարի խոշոր մտածողների շարքը։ Անանիա Շիրակացու երկերի քննական բնագրերը «Անանիա Շիրակացու մատենագրությունը» խորագրով հրատարակվել են 1944 թ. Երևանում։ Նրա շատ աշխատություններ թարգմանվել են ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն։

## 4. ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հռոմեական կայսրության թուլացման ու անկման պայմաններում, գիտության ու մշակույթի մյուս ճյուղերի հետ մեկտեղ, հետին շարքերն է մղվում նաև պատմագրությունը։ Այժմ արդեն, վաղ ֆեոդալիզմի շրջանում, կուլտուր-քաղաքական առաջնությունը աստիճանաբար անցնում է բյուզանդական աշխարհին, իսկ նախկին հունա-հռոմեական պատմագրությանը փոխարինում է իր դերով ու նշանակությամբ ոչ պակաս բյուզանդականը։

Սոցիալ-քաղաքական բնույթի լուրջ տեղաշարժերի ժամանակաշրջանի հռոմեական վերջին պատմիչներից հայտնի է Ամմիանոս Մարկելինոսը, որի հաղորդած տեղեկությունները զգալիորեն լրացնելով հայկական աղբյուրների պակասը, հնարավորություն են տալիս ավելի որոշակիություն մտցնելու հայ ժողովրդի IV դարի կեսերի պատմության մի շարք հարցերի ուսումնասիրության մեջ։

Ամմիանոսը հույն է, ապրել է 330—400-ական թվականներին։ Տակավին երիտասարդական հասակում նա մասնակցել է Հռոմի մղած պատերազմներին Արևմուտքում և Արևելքում։ Երկար տարիներ ապրել է նաև Անտիոքում։ Այս հանգամանքը կարևոր նշանակություն է ունեցել պատմիչի համար՝ մեծ մասամբ ճշտված ու ստուգված տեղեկություններ ձեռք բերելու իր գրքի համար, որը հայտնի է «Պատմություն» կամ «Գործունեություններ» վերնագրով։ Ամմիանոսը նպատակ է ունեցել իր գիրքը դարձնելու Տակիտոսի «Տարեգրությունների» և «Պատմության» շարունակությունը։ Ամմիանոսի գիրքը բաղկացած է եղել 31 հատորներից։ Այդ մեծածավալ աշխատության միայն 18 հատորներն են պահպանվել, որոնց մեջ ներկայացվում է 350—370 թվականների՝ համեմատաբար շատ փոքր մի ժամանակաշրջանի պատմությունը՝ կապված պարսիկների, գոթերի և այլ ժողովուրդների դեմ Հռոմի մղած պատերազմների հետ։

Շարադրելով պարսկա-հռոմեական պատերազմների պատմությունը, Ամմիանոսը դեպքերին անձամբ մասնակցի աչքերով է անդրադառնում նաև հայ-հռոմեական ու հայ-պարսկական փոխհարաբերություններին։ Նա իր գրքում ուրվագծում է պարսկա-հռոմեական կռիվների ընթացքում տնտեսապես ու



քաղաքականապես թուլացող Հայաստանի պատկերը։ Պատմիչը թեև կապված էր հռոմեական իշխանությունների հետ, այնուամենայնիվ տեղ-տեղ դառնում է արդարամիտ ու ճշտախոս։ Ամմիանոսը իր գրքում պատմում է հայոց թագավոր Արշակ II-ի և կայսր Կոստանդիոսի (337—361) միջև ձեռք բերված բարեկամության մասին, որը էլ ավելի ամրապնդվեց կայսեր ազգականուհու՝ Օլիմպիայի ամուսնությամբ հայոց թագավորի հետ։ Ամմիանոսը արդահատանքով է խոսում «վախկոտ» Հովիանոս կայսեր կողմից 363 թվականին պարսիկների հետ կնքված պայմանագրի մասին նշելով, որ «...պայմանագրում արվեց շատ ավելի ծանր ուխտազանց մի հավելում, ըստ որի, այդ համաձայնությունից հետո, այլևս օգնություն չպիտի տրվեր մեր մշտական և հավատարիմ բարեկամ Արշակին ընդդեմ պարսիկների, եթե նա այդ մեզանից խնդրելու լիներ... Եվ դրա հետևանքով էր, որ հետագայում, երկպառակությունների և խռովությունների ժամանակ, այս Արշակը կենդանի գերի վերցվեց պարսիկների կողմից, և խլվեց Հայաստանից ընդարձակ մի երկրամաս, որը սահմանակից էր Մեդիային»[82]։

Ամմիանոսը փաստորեն մերկացնում է նաև հռոմեացիների նենգամիտ ու խարդախ քայլը Հայոց Պապ թագավորի նկատմամբ, որին Կիլիկիայի Տարսոն քաղաքում վնասել չկարողանալուց հետո, չհանգստացան և սկսեցին տենդագին պատրաստել մի նոր դավադրություն, որի իրականացումը կայսրը հանձնարարել էր Տերենտիոսին, որի նենգ ու խարդախ աշխատանքի պատկերը այսպես է ներկայացնում պատմիչը. «Տերենտիոսի՝ Պապ թագավորի մասին հաճախակի արած բամբասանքների, ինչպես և Պապին Տարսոն կանչելու ու բռնելու անհաջող փորձի հետևանքով, սաստկացավ կայսեր անհաշտ ատելությունը Պապի նկատմամբ. սկսեցին անընդմեջ նորանոր նենգություններ հորինել՝ նպատակ ունենալով զրկել նրան կյանքից։ Այս (դավադրությունը) գլուխ բերելու գործը գաղտնի գրությամբ հանձնարարվեց Տրայանոսին, որն այն ժամանակ Հայաստանում հռոմեական զորքերի հրամանատար էր նշանակված։ Աշխատելով նենգադավ խորամանկությամբ, սա մեկ նրան էր հանձնում Վաղեսի նամակները՝ հավատացնելով նրա

[82] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 481։

բարյացակամ վերաբերմունքը, մեկ ինքն էր գալիս Պապի մոտ ճաշկերույթի և, վերջիվերջո, երբ դավադրությունը լիովին կազմակերպվեց, շատ քաղաքավարի ձևով Պապին հրավիրեց իր մոտ ճաշի։

Թագավորը ոչ մի վտանգ չզգալով, եկավ և նստեց իրեն տրամադրված պատվավոր տեղում։ Մատուցվեցին ընտիր կերակուրներ։ Ընդարձակ դահլիճը դղրդում էր լարային ու փողային գործիքների հնչյուններից։ Երբ գինին տաքացրեց գլուխները, ինքը՝ հրավիրող Տրայանոսը, դուրս գնաց բնական կարիքը բավարարելու պատրվակով։ Ապա ներս եկավ ահեղատես մի բարբարոս, որը կոչվում է սուպրե։ Վայրենին սպառնացող հայացքով, թափահարելով պատյանից հանած սուրը, մոտեցավ երիտասարդ թագավորին, որ սպանի նրան, որի առջև փակված էին դուրս պրծնելու բոլոր ճանապարհները։

Թագավորը նրան տեսավ այն ժամանակ, երբ փոքր-ինչ թեքված էր բազկաթոռում։ Վեր կացավ և հանեց դաշույնը, որպեսզի, որքան կարող է, պաշտպանի իր կյանքը, սակայն նա վայր ընկավ կրծքից խոցված որպես ամոթալի մի զոհ։ Նա հոշոտվեց կրկին հասցված հարվածներից։ Ահա այսպիսի նենգությամբ խարդախվեց դյուրահավատությունը։ Հյուրընկալության ժամանակ օտարականի արյունը թափվեց շքեղ սեղանածածկոցների վրա՝ աստծո հյուրասիրության դեմ հանդիման, մի բան, որը նույնիսկ Նվքսինյան Պոնտոսի կողմում խղճմիտ երկյուղածության արժանի վարմունք է համարվում։ Այնուհետև, ճաշկերույթի մասնակիցները, շփից դուրս հագեցած պատահարից, սարսափահար դուրս փախան»[33]։

Բյուզանդական կայսրության ռազմաքաղաքական հզորության շրջանի խոշորագույն պատմիչը Պրոկոպիոս Կեսարացին է, որը ծնվել է V դարի վերջում կամ VI-ի սկզբում Պաղեստինի Կեսարիա քաղաքում։ Պատմիչի կենսագրական ոչ ամբողջական տեղեկությունները պահպանվել են նրա իսկ աշխատություններում, որոնցից իմանում ենք, որ 520-ական թվականներին Պրոկոպիոսը Միջագետքի դուքս, նշանավոր զորավար Բելիսարիոսի խորհրդականն էր և պարսկա-բյուզանդական, իսկ հետո Աֆրիկայի նվաճման համար մղվող պատերազմների մասնակիցը։ Նա եղել է նաև Իտալիայում, հետո

[33] Նույնը, հ. 1, էջ 506—507։



եկել Կոստանդնուպոլիս ու մասնակցել պարսկա-բյուզանդական երկրորդ պատերազմին։ Պրոկոպիոս Կեսարացին մահացած պետք է լինի 560-ական թվականների կեսերին։ Պատմիչի ռազմական ու գիտական ստեղծագործական եռուն գործունեությունն ընթացել է նշանավոր կայսր Հուստինիանոս I-ի գահակալության տարիներին (527—565)։

Պրոկոպիոս Կեսարացու մի շարք աշխատություններից հայ ժողովրդի և Հայաստանի պատմության համար առաջնակարգ նշանակություն ունի հատկապես «Պատերազմների մասին» երկը, որ բաղկացած է ութ մասից։ Այս աշխատության տարբեր մասերում, ինչպես նաև մյուս աշխատություններում, խորագետ պատմիչը անդրադառնալով Հուստինիանոսի նվաճողական քաղաքականությանը, ընդգծում է, որ նա իր զավթած երկրները ձեռքում պահելու համար ամենուրեք կառուցում էր բերդեր ու ամրոցներ և պահում մեծ քանակությամբ զինված ուժեր։ Այդ միջոցառումները կատարվում էին նաև կայսրությանը ենթակա Արևմտյան Հայաստանի տարածքում։ Հուստինիանոսի ռազմական կառուցումներն ու ամենօրյա պատերազմները շատ ծանր էին նստում հայ ժողովրդի արևմտյան հատվածի աշխատավորական զանգվածների վրա։ Չդիմանալով հունական կեղեքիչների բռնություններին, Արևմտյան Հայաստանի աղքատացած գյուղացիները նույնպես փախչում էին իրենց բնակության վայրերից կամ զանգվածաբար տեղափոխվում քաղաքները, իրենց գոյությունը այնտեղ մի կերպ պահպանելու համար։ Այս երևույթը, բնականաբար, քայքայում էր Արևմտյան Հայաստանի տնտեսությունը, որի կանխման համար կայսեր հրապարակած բազմաթիվ օրենքները դրական ոչ մի արդյունք չէին տալիս։ Պրոկոպիոսը բերում է բազմաթիվ փաստեր կաշառակերության լայն տարածվածության մասին նաև հայկական շրջաններում։ Աշխատավոր ժողովրդի դժգոհություններն այդ ժամանակ արտահայտվում էին տարբեր տեսակի աղանդավորական քողի տակ մղվող պայքարով, որն ընդգրկել էր ամբողջ կայսրությունը։ Հուստինիանոսն իր բռնապետությունը և իրեն անձամբ պաշտպանում էր անձնապահական զորքերով, որոնք, ինչպես պատմիչն է հաստատում, հիմնականում կազմվում էին հայ քաջարի ռազմիկներից։ Պատմիչը հիշատակում է երկու տասնյակի չափ անվանի զորահրամանատարների, որոնք այդ ժամանակ Բյուզանդական կայսրության ռազմաքաղաքական կյան-

քում շատ կարևոր ու վճռական դեր էին կատարում։ Մյուս կողմից կայսրության ճնշվող ու հարստահարվող բազմաթիվ ժողովուրդների մեջ դարձյալ հայերն էին, որոնք հարմար առիթներ գտնելով, ապստամբելու և նույնիսկ կայսրին սպանելու փորձեր էին կատարում։ Ու թեև այդ փորձերն ավարտվում էին անհաջող և ունենում էին ողբերգական հետևանքներ, դրանք այնուամենայնիվ, վկայում են հայ ժողովրդի առաջավոր հատվածների՝ բռնության նկատմամբ ունեցած անհանդուրժողական վերաբերմունքի և ստրկական կապանքներից ազատվելու նրանց վճռական ցանկության մասին։

Եթե Պրոկոպիոս Կեսարացին «Պատերազմների մասին» և այլ աշխատությունները գրել է, այսպես ասած, լեզալ ձևով և հասկանալի պատճառներով այնտեղ չի կարողացել իր իսկական, անաչառ վերաբերմունքը ցույց տալ կայսեր ու կայսրության նկատմամբ, ապա մեկ այլ աշխատության մեջ նա միանգամայն ազատ է եղել իր վերաբերմունքն անկեղծորեն արտահայտելու։ Կեսարացու այդ հայտնի աշխատությունը կոչվում է «Անեկդոտա» կամ «Գաղտնի պատմություն», որը գիտական ասպարեզ ելավ միայն XVII դարում, երբ նրա ձեռագիր մեկ օրինակը հայտնաբերվեց Վատիկանի գրադարանում։ Ուսումնասիրողները գտնում են, որ «Անեկդոտան» գրվել է 550 թվականին։

«Գաղտնի պատմության» մեջ հեղինակը մերկացնում է Հուստինիանոսի վայրագ քաղաքականությունը, նրա անձնական կյանքը և ընդհանրապես ներքուստ փտած ու այլասերված կայսրության այլանդակ պատկերը[34]։

Պրոկոպիոս Կեսարացին իր աշխատությունները գրելիս, բացի անձնական դիտողականությամբ ձեռք բերած նյութերից, օգտագործել է նաև նախորդ ժամանակների հարուստ պատմագրությունը։ Նրան քաջ ծանոթ են Հերոդոտոսը, Արիստոտելը, Ստրաբոնը և ուրիշ շատ հեղինակներ։ Առանձնապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ բազմակողմանիորեն զարգացած պատմիչը հունա-հռոմեական աղբյուրների հետ միասին, օգտագործել է նաև «Հայոց պատմությունը», որի մասին նա իր գրքում հիշատակում է մի քանի անգամ։ Ցավոք, մենք չենք կարողանում որոշել, թե հեղինակը հայկական ո՞ր աղբյուրը նկատի ունի։ Ուսումնասիրողներից ոմանք հակված են կարծելու, որ բյուզանդացի հեղինակի օգտագործած հայերեն աղբյուրը Փավստոս Բուզանդի գիրքն է եղել։ Կեսարացին իր աշխատությունները շարադրում է օգտագործվող աղբյուրների նկատմամբ քննադատական մոտեցմամբ միայն, մի հանգամանք, որը զգալիորեն բարձրացնում է նրա ստեղծագործությունների գիտական արժեքը։

Պրոկոպիոս Կեսարացու «Պատերազմների մասին» գիրքը՝ գրեթե ամբողջությամբ, և մյուս աշխատությունների հայագիտական նշանակություն ունեցող կարևոր հատվածները բնագրերից հայերեն է թարգմանել ու մեկ գրքով հրատարակել Հ. Բարթիկյանը 1967 թվականին Երևանում՝ «Պրոկոպիոս Կեսարացի» խորագրով։

[34] Տե՛ս Պրոկոպիոս Կեսարացի, Գաղտնի պատմություն (թարգմանությունը հին հունարեն բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), Երևան, 1987։



## Բ. ԶԱՐԳԱՑԱԾ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆ

### 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

**Անանուն Զրուցագիր (Կարծեցյալ Շապուհ Բագրատունի)**

Շապուհ Բագրատունու անձնավորության և նրա կողմից «Պատմութիւն» գրած լինելու մասին որոշակի հիշատակություններ ունեն Հովհաննես Դրասխանակերտցին, Ուխտանեսը, Ստեփանոս Ասողիկը և Սամուել Անեցին։ Թվարկված հեղինակներից Հովհաննես Դրասխանակերտցին մանրամասնելով իր խոսքը, գրքում ուղղակի մի քանի անգամ նշում է, որ Աշոտ I Բագրատունու և նրա հաջորդի՝ Սմբատ I-ի մասին մանրամասնորեն գրել է իր ժամանակակից Շապուհ Բագրատունին։ Ենթադրվում է, որ վերը հիշատակված հեղինակները Շապուհ Բագրատունուն ճանաչել են հենց Հովհաննես Դրասխանակերտցու միջոցով։ Այսպիսով, Շապուհ Բագրատունին IX—X դարերի հեղինակ է, սերում է Բագրատունիների տոհմից և ի տարբերություն գրական շատ գործիչների, աշխարհիկ անձնավո-

բություն էր։ Դրա համար էլ Հովհաննես Դրասխանակերտցին հեգնում է Շապուհին, որովհետև նա գրել է գեղջկական ոճով ու լեզվով և չի տիրապետում քերթողական արվեստին, իսկ հետագայի մյուս պատմիչներն ուղղակի խուսափել են նրա պատմությունը որպես սկզբնաղբյուր օգտագործելուց։

Մինչև այժմ էլ Շապուհ Բագրատունու անձնավորության հարցը չի ճշտված։ Ոմանք կարծում են, որ նա Սպերի իշխան Աշոտ Բագրատունու որդին է (որը պետք է ապրած լինի 838—920 թթ.), իսկ Մ. Աբեղյանը նրան ուղղակի համարում է Աշոտ I Բագրատունի թագավորի տղան։

Այսպես, ուրեմն, երկար ժամանակ հայտնի էր, որ միջնադարյան հայ պատմիչների շարքում եղել է նաև Շապուհ Բագրատունին, որի գրած «Պատմութիւն»-ը թեև այն ժամանակ ծանոթ է եղել ուրիշներին, սակայն կորել ու մեզ չի հասել։ Եվ երբ 1917 թվականին Արևմտյան Հայաստանից փրկված ու էջմիածին բերված հայերեն բազմաթիվ ձեռագրերի մեջ հայտնաբերվեց նաև ոչ մեծածավալ, սակայն բովանդակությամբ շատ հետաքրքիր մի ձեռագիր պատմություն, հայագետներ Ղ. Տեր-Մկրտչյանն ու Մ. Տեր-Մովսիսյանն այն ընդունեցին որպես Շապուհի գիրք և 1921 թ. Վաղարշապատում հրատարակեցին «Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ» խորագրով։ Սակայն հրատարակված այս գրքի վերաբերյալ հենց այն ժամանակ արվեցին շատ լուրջ դիտողություններ և նրան ծանոթացած հեղինակները ցույց տվեցին, որ վերոհիշյալ աշխատությունը ամենևին էլ Շապուհինը չէ, այլ ուրիշ մի հեղինակի գործ, որը վերաբերում է Վասպուրականի և Արծրունի իշխանների պատմությանը։ Եվ քանի որ այս առարկությունը բավականին հիմնավոր էր, դրա համար էլ այժմ վերոհիշյալ աշխատության հեղինակին պայմանականորեն անվանում են Անանուն Զրուցագիր։ Հարցն այն է, որ 1917 թվականին էջմիածնում գտնված ձեռագիրը «Պատմութեան» ամբողջական օրինակը չէր, որը նույնպես դժվարացնում էր հարցի անմիջական կողմնորոշվելուն։ Առանց այդ էլ ոչ մեծ ծավալի հիշյալ ստեղծագործության սկզբի և վերջի մասերը պակասում էին։

Վերոհիշյալ «Պատմութեան» երկրորդ հրատարակությունը, ռուսերեն թարգմանության հետ միասին, լույս է տեսել Երևանում 1971 թվականին։ Թարգմանությունը, առաջաբանն ու ծանոթագրությունները կատարել է Մ. Դավթինյան-Մելիքյանը, ը-



ստ ցանքերով էլ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում գտնվող մեկ այլ ձեռագրից հայտնաբերվել ու լրացվել է Անանուն Զրուցագրի գրքի սկզբի մասը։

Մեր այս հեղինակը իր գրքում ժամանակագրական կարգով ու հաջորդաբար պատմում է Մուհամեդի գործունեության և նրա գաղափարախոսության սկզբնավորության, արաբական առաջին խալիֆների տիրապետության, ապա նաև այդ ժամանակաշրջանի հայ նախարարների մասին։ Գրքում խոսվում է նաև Վասպուրականի իշխան Դերեն Արծրունու և հայոց թագավոր Սմբատ I Բագրատունու գործունեությունների և Հայաստանի ընդհանուր վիճակի մասին։ Հեղինակն իր գիրքը շարադրել է միանգամայն ազատ ու անկաշկանդ եղանակով։ Դրա համար էլ այն համեմված է բազմապիսի առասպելաբանություններով, որոնց հավաստիությունն ու պատմականությունը ամենևին չի քննում հեղինակը։ Անանունը ուշադրություն չի դարձնում պատմության ժամանակագրության հարցերին և գրեթե չի հիշատակում ոչ մի թվական։ Նա չի մատնանշում նաև իր օգտագործած աղբյուրներն ու հեղինակներին, մեջբերումներ չի անում նույնիսկ Աստվածաշնչից և կամ կրոնական այլ աղբյուրներից։ Դրանով էլ նա շատ բանով զիջում է նախորդ և իրենից հետո ապրած հեղինակներին։ Եթե Անանունի «Պատմութեան» սկզբի մասերը առանձին արժեք չեն ներկայացնում, ապա գրքի վերջին հատվածները վավերական են ու վստահելի, որովհետև այդ հատվածները հեղինակը շարադրել է պատմական անցուդարձերի ու թարմ հիշողությունների տպավորության անմիջական ազդեցությամբ։ Այստեղ աղբյուրագիտական առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Արծրունիների տոհմագրության ու ճյուղագրությանը, 910-ական թվականներին Վասպուրականում տեղի ունեցած միջֆեոդալական կռիվների և այլ դեպքերի մասին հեղինակի հաղորդումները։ Անանունի մոտ, օրինակ, Գրիգոր Դերեն Արծրունին ներկայանում է իբրև խորապես անհատականացված կերպար։ Այդ կենսախինդ, ազնիվ ու մեծահոգի իշխանը ինքնասածի տեր մարդ էր։ Նա կարող էր հակադրվել ընդունված կարգ ու կանոններին և երբեք չէր դավաճանում իր սկզբունքներին։ Սրան հակառակ, Սմբատ Բագրատունին ներկայացված է իբրև դաժան և միաժամանակ հաստատակամ քաղաքական գործիչ, որը պատրաստ էր ամեն գնով սանձահարել կամ նույնիսկ ոչնչաց-

նել իր քաղաքական հակառակորդներին՝ հանուն Բագավորական իշխանության ամրապնդման։ Հեղինակը նույն այդ սկզբունքով էլ խոսում է մյուս պատմական անձնավորությունների մասին ու հատկապես ընդգծում Բագրատունիների և Արծրունիների հակամարտությունը։

**Հովհաննես Դրասխանակերտցի**

897 թվականին, Մաշտոց I Եղվարդեցի կաթողիկոսի կարճատև աթոռակալությունից և մահվանից հետո, նրան փոխարինում է Հովհաննես Դրասխանակերտցին, որը նրա ոչ միայն աշակերտը, այլև «ազգակիցն ու հարազատն էր»։ Ապագա պատմիչի կենսագրության և եկեղեցական-քաղաքական գործունեության մասին համեմատաբար հարուստ տեղեկություններ ստանում ենք իր իսկ գրած «Պատմությունից», որի որոշ հատվածներ ունեն նաև ինքնակենսագրական բնույթ ու բովանդակություն։

Հովհաննեսը ծնվել է Դրասխանակերտ դաստակերտում, որը գտնվում էր Դվինի մոտ և աննշան մի բնակավայր էր։ Հետագա հեղինակները նման վայրերում ծնված հայտնի գործիչներին մոտակայքի նշանավոր բնակավայրերի անուններով կոչելու սովորությամբ, պատմիչին անվանում են Գառնեցի կամ Դվնեցի։

Դրասխանակերտցին ծնվել է 845—850 թվականների միջև ընկած ժամանակահատվածում։ Հիմնական կրթությունը «ի մանկութենէ» ստացել է Սևանի կղզու վանքում, Մաշտոց Եղվարդեցու հսկողության ներքո։ Այստեղ նա կրոնի և աստվածաբանության հետ միասին ձեռք է բերում նաև կայուն գիտելիքներ պատմագրությունից, քերականական ու հռետորական արվեստներից և փիլիսոփայությունից։ Դրասխանակերտցին հավանաբար կրոնավորի իր համեստ վարքագծի և ունեցած տեսական լուրջ պատրաստության շնորհիվ, արդեն Սևանում եղած ժամանակ հասել էր եպիսկոպոսի աստիճանի, իսկ Մաշտոցի կաթողիկոս դառնալուց հետո նրա մոտ վարում էր բարձրը ու պատասխանատու պաշտոններ։ Դրա համար էլ կաթողիկոսի մահվանից հետո, Սմբատ I Բագրատունի թագավորի և եկեղեցական բարձր դասի ներկայացուցիչների միահամուռ ցանկությամբ նրան են նշանակում կաթողիկոս, որը հայոց կաթողիկոսներից հիսուներորդն էր, իսկ հերթականությամբ՝ Հովհաննես V-ը։



Հովհաննես Դրասխանակերտցու կաթողիկոսության տարիները (897—929) ընթացել են Հայաստանի համար քաղաքական տեսակետից շատ բարդ իրադրության պայմաններում։ Այդ ժամանակ մի կողմից միջֆեոդալական պայքարի օրըստօրե խորացման ու ծավալման հետևանքով երկիրը բաժան-բաժան էր լինում մեծ ու փոքր ֆեոդալական միավորների, որի հետևանքով թուլանում ու մասնատվում էին ազգային հավաքական ուժերը, իսկ մյուս կողմից հարևան մուսուլմանական իշխանությունները, օգտագործելով առիթը, իրենց արշավանքներով ու ասպատակություններով Հայաստանին պատճառում էին նորանոր դառնություններ ու վիշտ։ Ահա այսպիսի պայմաններում, ինքնըստինքյան, պաշտոնի բերումով ընդարձակվում էին կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցու նաև քաղաքական գործունեության շրջանակները, մեծանում էր նրա հասարակական դերը։ Դրասխանակերտցին մեկ անգամ չէ, որ ակտիվ միջամտություն է ցույց տվել գժտված ու թշնամացած նախարարներին հաշտեցնելու գործին։ Հտանգի ենթարկելով իրեն, նա նույնիսկ հանձն է առնում մեկնել Ատրպատականի ամիրա Յուսուֆի մոտ, որտեղ նրան բանտարկում, պահում են «շրջապատեալ բազում պահնակօք» և ենթարկում ծանր տանջանքների ու խոշտանգումների։ Ի վերջո Յուսուֆը 911 թվականին Դրասխանակերտցուն ազատում է գերությունից և հենց այդ ժամանակվանից էլ սկսվում են պատմիչի թափառումների տարիները, որովհետև Յուսուֆի մարդիկ դրամ և հարստություն կորզելու նպատակով անընդհատ հետապնդում ու անհանգստացնում էին նրան։ Հայոց Արևելից կողմերում և Գուգարքում որոշ ժամանակ դեգերելուց հետո, Հովհաննես Դրասխանակերտցին անցնում է Տարոն, հետո՝ Դերջան։ Այդ ընթացքում նա, չհավատալով բյուզանդական կայսեր անկեղծությանը և գուցե նաև չար լեզուների բամբասանքներից խուսափելու համար, քաղաքավարի հրաժարվում է Կոստանդնուպոլիս այցելելու հրավերից, չի միանում Աշոտ II Երկաթի պատգամավորությանը ու գալիս է Դվին։ Սակայն արաբները նորից են սկսում հալածել ու հետապնդել նրան։ Վերջապես հայոց կաթողիկոսը մի փոքր ազատ շունչ է քաշում այն ժամանակ, երբ Գագիկ Արծրունուց հրավեր է ստանում տեղափոխվել Վասպուրական, որտեղ և նա վախճանվում է 929 թվականին։

Հովհաննես Դրասխանակերտցու հեղինակությամբ հայտնի

են «Շաքիք հայրապետաբան Հայոց» և «Պատմութիւն Հայոց» աշխատությունները։ Առաջինը ընդամենը տպագրական հինգ էջանոց մի փոքրածավալ և շատ համառոտ ժամանակագրություն է նվիրված հայոց կաթողիկոսներին՝ Գրիգոր Լուսավորչից սկսած մինչև իր աթոռակալությունը։ Այս աշխատությունը փոքրածավալ լինելու հետ մեկտեղ, չունի նաև ինքնուրույն հեղինակային դիմագիծ, որովհետև այն, ինչի մասին պատմում է Դրասխանակերտցին, ավելի մանրամասնորեն վերարտադրված է նախորդ հայ պատմիչների գործերում։ Սակայն այդ աշխատությունը պատմաբանասիրական որոշ հետաքրքրություն ներկայացնում է, որովհետև այն «...հնարավորություն է տալիս երբեմն շտկելու ինչ-որ տեղ խախտված ժամանակագրությունը, զատորոշելու շփոթված անուններ, վերականգնելու կաթողիկոսների մերթ ընդմիջված հաջորդականությունը և այլն»[35]։

Հովհաննես Դրասխանակերտցու մյուս աշխատությունը՝ «Պատմութիւն Հայոց»-ը անհամեմատ ավելի բարձրարժեք երկ է և արժանի կերպով դասվում է հայկական լավագույն սկզբնաղբյուրների շարքին։ Այդ աշխատությունը ընդգրկում է պատմական շատ մեծ ժամանակաշրջան։ Այն սկսվում է հնագույն առասպելական ժամանակներից և ավարտվում 924 թվականի դեպքերի նկարագրությամբ։ Ենթադրվում է, որ պատմիչի մեկենասները եղել են սկզբում Աշոտ II Բագրատունին, իսկ հետո՝ Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունին։

Հեղինակն իր աշխատությանը կցած համառոտ առաջաբանից հետո անցնում է բուն նյութի շարադրանքին որպես մեկ միասնական տեքստ, առանց ներքին գլխակարգության և վերնագրային բաժանումների։ Այդ է պատճառը, որ մասնագետները ստիպված «Պատմութիւն Հայոց»-ը արհեստականորեն բաժանել են երկու մասի և ըստ այդմ էլ գնահատել դրանք որպես պատմական սկզբնաղբյուր։ Պատմության առաջին բաժինը գրելու համար Դրասխանակերտցին մեծ մասամբ օգտվել է Մովսես Խորենացուց և նրանից հետո հանդես եկած հայ հեղինակներից։ Նրան ծանոթ է նաև իր ժամանակակից Շապուհ Բագրատունին։ Դրասխանակերտցու Պատմության սկզբի մասերը լինելով մի տեսակ կրկնությունը նախորդ հեղինակների գործերի և չունենալով հանդերձ առաջնակարգ սկզբնաղբյուրի արժեք, այնուամենայնիվ օգնում են հետազոտողներին Հայոց պատմության հիշյալ ժամանակաշրջանին վերաբերող դեպքերի մեջ ճշտումներ մտցնել և անել ավելի հաստատուն եզրակացություններ։ Միանգամայն հակառակ գնահատականի է արժանի այդ աշխատության վերջին մասը, որն ընդգրկում է Հայաստանի շուրջ 25 տարիների պատմությունը։ Այստեղ արդեն հեղինակն ինքն իր սկզբնաղբյուրն է և ուրիշ սկզբնաղբյուրներ օգտագործելու անհրաժեշտությունը չի զգում։ Հասկանալի է, որ գրքի այդ հատվածը անհամեմատելիորեն հավաստի ու վստահելի է նաև նրա համար, որ այն գրված է ոչ միայն դեպքերին ժամանակակից հեղինակի, այլև Հայաստանի քաղաքական կյանքում որոշակի դեր ու կշիռ ունեցող մի այնպիսի անձնավորության կողմից, ինչպիսին կաթողիկոսն էր։ Այստեղ համառոտակի պատմելով Աշոտ I Բագրատունու ժամանակաշրջանի մասին, պատմիչն անցնում է նրա հաջորդին՝ Սմբատ I-ին որն իր թագավորության առաջին տասնամյակում հսկայական դեր է խաղում ցրված ուժերը միավորելու, երկրի ներքին ու արտաքին թշնամիների դեմ հաջող պայքար մղելու և ժողովրդի հավաքական գոյությունը մեկ միասնական պետության մեջ ամփոփելու համար։ Սմբատ Բագրատունին կարողանում է ճկուն դիվանագիտությամբ բարեկամական կապեր հաստատել Բյուզանդական կայսրության և հարևան մուսուլմանական իշխանությունների հետ։ Քաղաքական այս գիծը ապահովելու համար հայոց թագավորը թեև երբեմն-երբեմն ժողովրդի հաշվին անում էր նաև նյութական շատ մեծ զոհողություններ (բարձրացնելով հարկերը), բայց և հնարավորության սահմաններում զբաղվում էր երկիրը շենացնելու և նոր կառուցումներ անելու խնդիրներով։ Պատմիչը Սմբատ Բագրատունուն դիտում է որպես հայրենիքի քաղաքական անկախության հզոր հենարան, որը մինչև իր ողբերգական կյանքի վերջը հերոսաբար պայքարեց օտարերկրացիների դեմ ու այդ պայքարում էլ զոհվեց ու դարձավ նահատակ։ Սմբատ Բագրատունու հանդեպ ունեցած խոր համակրանքից էլ բխում է պատմիչի ատելությունը նրա թշնամիների ու հայրենի երկիրը պառակտողների նկատմամբ։ Դրա համար էլ մի տեղ իր գրքում Դրասխանակերտցին մերժելով Վասպուրականի քաղաքական անջատումը Բագրատունիներից, Գագիկ Արծրունուն արհամարհանքով անվա-

---

[35] Ֆ. Անթապյան, Հովհաննես Դրասխանակերտցի, տե՛ս «Հայ մշակույթի նշանավոր գործիչները» գրքում, Երևան, 1976, էջ 142։

նում է «թագակերպեալ իշխանն Գագիկ»։ Եվ թեև հետագա հատվածներում նույն գործչին նա կոչում է նաև «թագաւորն Հայոց Գագիկ», ապա դա միայն պատմիչի քաղաքավարական ժեստն էր իր նոր մեկենասի ու հովանավորի նկատմամբ, որն ամենևին էլ չէր փոխում նրա ընդհանուր վերաբերմունքը։

Դրասխանակերտցին մի առանձին հմայքով է պատմում նաև Աշոտ Երկաթի, նրա բազում քաջագործությունների և հայրենի երկրամասերը օտար նվաճողներից ու պառակտիչ, դավաճան իշխաններից ազատագրելու մասին։

Պատմիչ Դրասխանակերտցու ընդհանուր թերությունն այն է, որ նա շատ քիչ է ուշադրություն դարձնում դեպքերի ժամանակագրությանը։

«Պատմութիւն Հայոց»-ում սարսափելի գույներով են նկարագրվում նաև ահավոր սովը, հիվանդությունները և երկրի տնտեսական կյանքի քայքայումն ու անկումը։ Աշխատության հատկապես վերջին հատվածներում ամենուրեք երևում է իր հայրենիքի վիշտն անձամբ ապրող զգայուն մարդու հուզմունքն ու կարեկցանքը։ Դրասխանակերտցին հպանցիկ ակնարկներ ունի նաև Հայաստանում այն ժամանակ սրվող դասակարգային ներհակությունների ու սոցիալական ընդվզումների մասին։ «...նուազունքն,—ասում է նա,—քան զմեծամեծսն ձեռներէց լինել ջանային, և ծառայքն ...զտեարս տրեխաւորեալ՝ ի գետնի գնացուսցեն և ինքեանք ելցեն յերիվարս ահիպարանոցս և առաթուր հարողս՝ խրոխտացեալք և սոնքացեալք մեծաւ ապըստամբութեամբ»[36]։ Այստեղ խոսքն անշուշտ վերաբերում է գյուղացիներին և պավլիկյան-թոնդրակյան գաղափարներով տոգորված աշխատավորներին, որոնք ապստամբելով իրենց տերերի դեմ, նրանց ցած էին բերում ձիերից ու տրեխներ հագցնելով՝ ստիպում ոտքով քայլել։

Դրասխանակերտցին տիրապետելով հայ հեղինակներին հատուկ քերթողական արվեստին՝ իր աշխատությունը տեղ-տեղ զարդարում է հարուստ դարձվածքներով ու պատկերավոր արտահայտություններով. «Հէնք իսմայէլեան ասպատակացն իբրև զհրդեհս յանտառս և ի շամբս վառեալ,—ասում է նա,—այսպէս սփռեալ տարածեցին զճարակս բոցոյ ի մէջ ժողովրդոց

[36] «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 258—259։



մերոց, և գտաւ ամենայն գլուխ ի ցաւս և ամենայն սիրտ ի տրտմութիւն», «Եւ բազում զաշխարհս իբրև զանապատ՝ անկոխ անջրդի ցուցեալ տապալէին. և գրեթէ իբրև զերկիր, որ ոչ անց մարդ ընդ նա և ոչ բնակեցաւ ի նմա որդի մարդոյ՝ այնպէս զապատն անապատ առնէին»։

Պատմիչն իր հայրենիքի ու ժողովրդի դժբախտությունը բացատրում է երկու հիմնական պատճառներով. առաջին օտար նվաճողների՝ Հայաստանի նկատմամբ վարած նենգամիտ ու թշնամական քաղաքականությունն էր, իսկ երկրորդը, նրա կարծիքով, ներքին անհամաձայնությունն ու ազգային միասնության բացակայությունը։ Նա գիտակցում է, որ եթե հայերը համերաշխ լինեն ու կարողանան համախմբել իրենց ուժերը, նրանք անպայման կհաղթեն արտաքին թշնամիներին։ Դրասխանակերտցու պատմահայեցողությունը այս հարցում ընդհանուր առմամբ ճիշտ լինելով հանդերձ, ունի նաև խոցելի կողմեր, որովհետև նա, չգիտակցելով ֆեոդալական հասարակարգի առանձնահատկությունները, չի կարողանում թափանցել դրանցից անմիջականորեն բխող պառակտման ու անջատողական ձգտումների սոցիալ-քաղաքական պատճառների մեջ։ Ժամանակաշրջանի տիրող աշխարհայացքի սահմանափակվածության որոշակի ազդեցությունը հնչպես միջին դարերի բոլոր հեղինակների, այնպես էլ Դրասխանակերտցու վրա ուժեղ էր։ Գրքի վերջում պատմիչը քրիստոնեության բարոյախոսության սկզբունքներով մեկ անգամ ևս խորհուրդ է տալիս իր հայրենակիցներին՝ եղբայրասպան չլինել, լսել իրար, միաբանվել և այն ժամանակ ոչ թե թշնամիները կհաղթեն, այլ հայերը։

Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց»-ը հրատարակվել է մի քանի անգամ։ Լավագույնը Թիֆլիսի 1912 թվականի հրատարակությունն է։ Այն թարգմանվել է նաև ֆրանսերեն (Փարիզ, 1841), վրացերեն (Թբիլիսի, 1965), ռուսերեն (Երևան, 1986)։

**Թովմա Արծրունի**

IX դարում Բագրատունիների գլխավորությամբ հայկական կենտրոնական և քաղաքականապես անկախ պետականության ստեղծումը հսկայական նշանակություն ունեցավ ֆեոդալական հարաբերությունների զարգացման համար։

Սոցիալ-տնտեսական հարաբերությունների այդ նոր փուլում առանձին խոշոր երկրամասերում՝ Սյունիքում, Վասպու-

բականում, Գուգարքում իշխող նախարարությունները ոչ միայն սկսեցին աստիճանաբար ընդարձակել իրենց սեփականատիրական և ռազմական իրավունքները, այլև ցուցադրել կենտրոնական իշխանությունից անջատվելու և անկախ ֆեոդալական միավորումներ ստեղծելու բացահայտ ձգտում։ Եվ եթե այդ երևույթները IX դարի վերջերին միայն անորոշ կերպով ուրվագծվում էին խոշոր նախարարական տոհմերի փոխհարաբերությունների մեջ, ապա X դարում, դժբախտաբար, դարձան անողոք իրականություն։

Այդ ժամանակ Հայաստանի քաղաքական կյանքում ազդեցիկ դիրք ձեռք բերած Բագրատունիներին գրեթե զուգահեռ գործում էին հատկապես Արծրունիները, որոնք իրենց բացարձակ գերիշխանությունն էին հաստատել Վասպուրականի նման ընդարձակածավալ երկրամասում։ Արծրունիներն իրենց քաղաքական ակտիվությունն ուժեղացրին հատկապես Գրիգոր-Դերենիկի և նրա որդու՝ Գագիկի ժամանակ, երբ Վասպուրականն անջատվեց Բագրատունիներից և դարձավ առանձին ֆեոդալական թագավորություն (908 թ.)։ Հայաստանի և հայ ժողովրդի պատմության հետ ընդհանուր առնչություններ ունենալով հանդերձ, Վասպուրականն այսուհետև բռնեց զարգացման ինքնուրույն ուղի, իսկ նրա գահակալները, որոնք երբեմն-երբեմն իրենց համարում էին հայկական կենտրոնական թագավորության օրինական տերեր, ամեն ջանք գործադրում էին Արծրունիների տոհմի այսպես ասած մեծությունն ու առաջնությունը շեշտելու համար։ Հենց տոհմական այսպիսի նախանձախնդրությունից էլ բխում է Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» գրքի հանդես գալը։

Թովմա Արծրունու մասին կենսագրական տեղեկությունները նույնպես շատ աղքատիկ են։ Բացի այն, որ պատմիչը պատկանում է Արծրունիների տոհմին, գիտենք նաև, որ նա ապրել ու ստեղծագործել է IX դարի կեսերից մինչև X դարի առաջին տասնամյակներում։ Նրա պատվիրատուն հանդիսացել է Վասպուրականի իշխան Գրիգոր-Դերենիկը, որը սպանվել է 880-ական թվականների կեսերին։ Դրանից կարելի է եզրակացնել, որ Թովման իր գիրքը սկսել է շարադրել 880-ական թվականների սկզբներից։ Եվ քանի որ պատմիչը այլ առիթներով իր գրքի տարբեր մասերում որպես պատվիրատու հիշատակում է



նաև Գրիգոր-Դերենիկի որդու՝ Գագիկ Արծրունու անունը, ուրեմն Գրիգոր-Դերենիկի մահվանից հետո Թովմա Արծրունու մեկենասի դերը ստանձնում է Գագիկը։ Այստեղից հետևում է նաև, որ պատմիչը իր գիրքը շարադրել է բավական երկար ժամանակահատվածում՝ 25—30 տարում։ Անշուշտ, Թովմա Արծրունին եղել է իր ժամանակի կրթված, բանիմաց ու աչքի ընկնող հոգևորականներից, որ իրենց երկրամասի ու տոհմի պատիվը բավական բարձր գնահատող երկու նշանավոր իշխաններ նրան են հանձնարարել գրել Արծրունիների պատմությունը՝ սկզբից մինչև իրենց ժամանակները։

Ինչպես միջնադարյան մյուս հեղինակները, այնպես էլ Թովմա Արծրունին իր գիրքը շարադրելու ընթացքում հանդիպել է լուրջ դժվարությունների։ Հատկապես անհրաժեշտ աղբյուրների որոնման, հայթայթման և ընտրության գործում նա շատ է չարչարվել։ Իր գրքի սկզբի մասերը շարադրելիս Թովման հիմնականում օգտվել է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»։ Նրան ծանոթ են նաև Կորյունը, Եղիշեն և ուրիշ հեղինակներ։ Արծրունին սակայն չի բավարարվել միայն հայկական սկզբնաղբյուրներով։ Նա իր գրքի համար օգտագործել է նաև օտարազգի հեղինակների գործերը, որոնք, ըստ երևույթին, կարդում էր բնագրերով՝ հունարեն։ Այդ հեղինակներից նա հատկապես լավ գիտի Հերոդոտոսին, Եվսեբիոս Կեսարացուն և ուրիշների։ Ի տարբերություն շատ հեղինակների, Թովմա Արծրունու առավելությունը նաև այն է, որ նա իր օգտագործած աղբյուրների նկատմամբ ընդհանուր առմամբ ցուցաբերում է քննադատական մոտեցում։

Թովմա Արծրունու Պատմության առաջին մասերը, որոնք ընդգրկում են Հայաստանի պատմության ամենանախնական ժամանակներից մինչև IX դարի կեսերը, ինքնուրույն չեն։ Աշխատության երկրորդ դպրության 5-րդ գլխից սկսվում են Պատմության այն մասերը, որոնք անմիջապես վերաբերում են նրա ժամանակներին։ Հիշյալ հատվածներն, ուրեմն, անհամեմատ հավաստի են ու վստահելի, մանավանդ որ, ինչպես ինքն է ասում, շատ դեպքեր ու փաստեր գրավոր սկզբնաղբյուրներով շարադրելուց առաջ, նա դրանք ճշտել է դեպքերին անմիջապես մասնակցած ու ականատես ծերունիների պատմածով։ Արժե նշել նաև այն հանգամանքը, որ պատմիչի գրքի վերջին մասե-

ռում շարադրված որոշ հարցեր հաստատվում ու հիմնավորվում են օտար սկզբնաղբյուրների տվյալներով։

«Պատմութիւն տանն Արծրունեաց» աշխատության երկրորդ դպրության 5-րդ գլխից սկսվում են աղբյուրագիտական առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնող 840-ական թվականներից մինչև 860-ական թվականների դեպքերի՝ Աբուսեթի՝ Յուսուֆի, Բուղայի Հայաստան կատարած արշավանքների, արաբների վարած հարկային ու հողային քաղաքականության, օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած անհավասար ու հերոսական պայքարի, արաբական իշխանությունների թուլացման և հայկական ֆեոդալական մի քանի նախարարությունների հզորացման և այլ ու այլ հարցերի մասին եղած մանրամասն նկարագրությունները։

Արծրունին թեև ունի տոհմական որոշ սնապարծություն, որի պատճառով էլ երբեմն գերագնահատում կամ աշխատում է սքողել իր տոհմակիցների՝ Արծրունյաց տան ներկայացուցիչների վատ արարքները, մանավանդ երբ խոսքը վերաբերում է Արծրունիների և մյուս նախարարների փոխհարաբերություններին, տեղ-տեղ էլ քննադատում և պախարակում է վախկոտներին, անհեռատեսներին, դավաճաններին։ Չնայած կրթված ու հայրենասեր պատմիչ լինելուն, Թովմա Արծրունու վրա նույնպես ուժեղ է ժամանակի տիրապետող աշխարհայացքի ազդեցությունը։ Նա ևս, ինչպես իր նախորդները, ամեն ինչ փորձում է բացատրել կրոնական տեսանկյունից և Աստվածաշնչի սկզբունքներով։ Հեղինակը թեև իր աշխատության մեջ քիչ ուշադրություն է դարձնում ժամանակագրության հարցերին, սակայն հիշատակված թվականները մեծ մասամբ ճիշտ են ու վստահելի, իսկ շատերն էլ հաստատվում են օտար աղբյուրների տվյալներով։

Բարձր են նաև «Պատմութիւն տանն Արծրունեաց» գրքի գեղարվեստական արժանիքները։ Թովմա Արծրունին հավատարիմ մնալով միջնադարյան հայկական պատմագրության ավանդներին, ինքն էլ է իր գիրքը շարադրում գեղարվեստական շնչով ու երանգավորումներով, հատկապես այն պահերին, երբ խոսքը վերաբերում է հայ ժողովրդին հարստահարողներին, հայերի մղած հերոսական կռիվներին ու առանձին հերոսների։ Հեղինակի գրքի այդ հատվածներում անժխտելիորեն զգացվում է հատկապես Եղիշեի ոճական ազդեցությունը։



Թովմա Արծրունու Պատմությունը շարունակել է մեզ անծանոթ հեղինակ, որին ընդունված է անվանել Անանուն Արծրունի։ Թովմայի Պատմության լավագույն հրատարակությունը կատարվել է Կոստանդնուպոլսում 1852 թվականին։ 1874 թվականին այն հրատարակվել է Պետերբուրգում ֆրանսերեն լեզվով, որի թարգմանությունը իրականացրել է արևելագետ Մ. Բրոսսեն։ 1985 թվականին Երևանում լույս է տեսել Թովմայի Պատմության բնագրի նոր հրատարակությունը՝ Վ. Վարդանյանի աշխարհաբար թարգմանությամբ հանդերձ։

## Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ

X դարի կեսերին Հայաստանի մի ընդարձակ մասում Բագրատունիների ռազմաքաղաքական հզորացման շնորհիվ առժամանակ դադարել էին օտար նվաճողների ասպատակությունները, մեղմացել միջֆեոդալական պայքարը։ Երկրի համեմատաբար խաղաղ կյանքը նպաստում էր նաև մշակույթի, դպրության և շինարարության զարգացմանը, որի արտացոլումը մենք գտնում ենք Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի հեղինակությամբ մեզ հասած «Պատմութիւն տիեզերական» աշխատության մեջ։

Ստեփանոս Տարոնեցու կենսագրության մասին նույնպես շատ քիչ բան է հայտնի։ Տարոնեցի անվանումը ցույց է տալիս միայն, որ նա ծնվել է Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Տարոն գավառում։ Հայտնի չեն նաև պատմիչի ծննդյան և մահվան թվականները։ Իր գրքի «Երրորդ հանդեսում» խոսելով ժամանակակից մի քանի նշանավոր անձնավորությունների և հատկապես կաթողիկոս Անանիա Նարեկացու (943—965) մասին, Ստեփանոս Տարոնեցին թեև ասում է. որ «Զոմանս ի սոցանէ ի ծերութեան իւրեանց՝ ի տղայութեան մերում տեսաք աչօք մերովք, ճաշակելով ի քաղցր ճաշակաց բանից նոցա»[37], սակայն այդ ակնարկը նրա ծննդյան թեկուզ մոտավոր ժամանակը որոշելու հնարավորություն չի տալիս։ Նույնը վերաբերում է նաև պատմիչի մահվան ժամանակին, որը ուսումնասիրողներից ոմանք փորձել են որոշել Գրիգոր Մագիստրոսի այն հիշատակությամբ, թե իր ժամանակներում Ստեփանոս Տարոնեցին արդեն «ծայրագույն» ծերության տարիքում էր գտնվում։ Հենց կենսագրական բնույթի այսպիսի ոչ հաստատուն տվյալ-

[37] «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 178։

ների պատճառով է, որ ուսումնասիրողները վարանելով՝ մի դեպքում նրան 90, մի ուրիշ դեպքում 117—122 տարվա կյանք են բաշխում։ Եթե այս հարցի որոշակիության սահմանները ընդգծելուց առայժմ հրաժարվենք, ապա նրա մոտավոր սահմանները կարող ենք դնել X դարի կեսերից մինչև XI դարի սկզբները։

Միջնադարյան հայ հեղինակներ Գրիգոր Մագիստրոսը և Վարդան Արևելցին նրան կոչում են նաև Ասողիկ կամ Ասողնիկ, որը, ինչպես ուսումնասիրողներն են գտնում, վկայում է Տարոնեցու հմուտ երաժիշտ լինելը։

Ստեփանոս Տարոնեցու մոտիկ ծանոթությունը հայ և օտար պատմագրության ականավոր ներկայացուցիչներին, որոնց գործերը նա հմտորեն օգտագործել է իր գրքի շարադրանքի ընթացքում, ապա նաև խոր գիտելիքները աստվածաբանության բնագավառում, վկայում են նրա կրթված ու զարգացած լինելու մասին։

Ստեփանոս Տարոնեցին իր կրթությունը ստացել է Անիում։ Ժամանակի ընթացքում այնքան է առաջադիմել, որ հասարակ հոգևորականից հասել է վարդապետի աստիճանի ու արժանացել իր շրջապատի հոգևորականության և ուսումնական մարդկանց հարգանքին։ Կրթված ու շրջահայաց Ստեփանոսը չի վրիպում նաև Սարգիս Սևանեցի կաթողիկոսի (992—1019) ուշադրությունից, որը, հաշվի առնելով նրա ունակությունները, հանձնարարում է գրել պատմություն։ Կաթողիկոսի տված հանձնարարության և իր կողմից այն կատարելու մասին պատմիչը իր գրքի վերջում թողած հիշատակարանում համեստորեն ասում է հետևյալը. «Այս ամ երեքտասան է հայրապետութեան Տեառն Սարգսի, տիեզերափայլ և մեծաշնորհ հովուապետի, զորոյ զհրամանն ընկալեալ՝ ի վեր քան զկար իմ՝ զհնազանդութեան օրէնսն կատարելով՝ աղքատիմաց բանիւք զբանս յիշատակից գրեցի»[38]։

Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի երկի «Պատմութիւն տիեզերական» վերնագիրը լիովին համապատասխանում է նրա բովանդակությանը, որովհետև իր ժամանակաշրջանի Հայոց պատմությունից բացի, այն ընդգրկում է նաև հարևան երկրների ու ժողովուրդների մոտիկ ու հեռավոր ժամանակների պատմությունը։ Հասկանալի է, որ այսպիսի ընդգրկումով պատմություն գրելու և հայոց կաթողիկոսի պահանջները բավարարելու համար պատմիչը պետք է շատ աշխատեր և օգտագործեր համապատասխան սկզբնաղբյուրներ։ Հենց վերջին այս պայմանը այն ժամանակվա հնարավորությունների սահմաններում բավարար չափով կատարելով է, որ հեղինակը կարողացել է հաջողությամբ ավարտել իրեն տրված հանձնարարությունը։ Ասողիկը օտար աղբյուրներից ամենից շատ օգտագործել է Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնը և իրենից առաջ եղած գրեթե բոլոր հայտնի հայ հեղինակների գործերը, որոնց մեկ առ մեկ բարեխղճորեն հիշատակում է գրքի հենց սկզբի մասում։ Հայ հեղինակներից նրան ծանոթ են Ագաթանգեղոսը, Մովսես Խորենացին, Եղիշեն, Ղազար Փարպեցին, Փավստոս Բուզանդը, Սեբեոսը, Անանիա Շիրակացին, Ղևոնդը, Շապուհ Բագրատունին և Հովհաննես Դրասխանակերտցին։ Պատմագիտական հայտնի երկերից բացի, Տարոնեցին օգտագործել է նաև ձեռագրեր ու արխիվային փաստաթղթեր, որոնք, անշուշտ, հեղինակի ու նրա գրքի լուրջ արժանիքներն են[39]։ Օգտագործած աղբյուրների մասին իր խոսքը Տարոնեցին ավարտում է այսպես. «Արդ յամենեցունց ի սոցանէ, իբր ի լայնալիր մարգաց և ի հովտային լերանց՝ հաւաքեալ ծաղիկս հեշտալի աչաց հայելոյ գեղեցկագոյն գունովքն և անուշահամ հոտովքն՝ բերեալ ընծայ մատուցանեմ աստուածասէր անձինդ և հարցասիրական խորհրդոց քոց»[40]։

«Պատմութիւն տիեզերականը» բաժանվում է երեք մասի, որոնք հեղինակի կողմից անվանվում են առաջին, երկրորդ, երրորդ հանդեսներ։ Առաջին հանդեսը բաղկացած է հինգ վերնագրված գլուխներից։ Այստեղ ժամանակաշրջանի կրոնական մտայնության շրջանակներից դուրս չգալով, հեղինակը խոսում է աշխարհի արարչության, Եգիպտոսի Պտղոմեոսյանների տիրապետության ժամանակաշրջանի, հրեաների առաջնորդների ու թագավորների, հռոմեական կայսրերի, Պարթև թագավորների ու Ալեքսանդր Մակեդոնացու ձեռքով նրանց իշխանության ոչնչացման մասին։ Առաջին հանդեսում Ստեփանոս Տարոնե-

---

[38] Նույնը, էջ 285։

[39] Ս. Քոլանջյան, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, տե՛ս «Հայ մշակույթի նշանավոր գործիչները» գրքում, էջ 186։

[40] Ստեփանոս Ասողիկ, էջ 7։

ցին անդրադառնում է նաև II—I դարերի (մ. թ. ա.) հայ-հռոմեական փոխհարաբերություններին և ավարտում պատմությունը հայոց առաջին Արշակունիների ժամանակաշրջանի համառոտ շարադրանքով։

Երկրորդ հանդեսը բովանդակում է վեց գլուխ, որոնք նույնպես ունեն համապատասխան վերնագրեր։ Այս բաժնում հեղինակը շարունակելով պատմությունը, ավելի ու ավելի է իր խոսքը կոնկրետացնում Հայաստանի շուրջը և շարադրում նրա պատմությունը Տրդատ III-ից մինչև Արշակունիների անկումը (428 թ.) և ամփոփում Աշոտ Բագրատունու գահակալության ժամանակներով։ Այս բաժնում նա տալիս է նաև Գրիգոր Լուսավորչից մինչև Սահակ Հարթևը աթոռակալած հայոց կաթողիկոսների գործունեության համառոտ պատմությունը և չխախտելով, այսպես ասած, տիեզերական պատմության սկզբունքները, ներկայացնում է նաև Սասանյան թագավորների, արաբական խալիֆների ու բյուզանդական կայսրերի հաջորդական աղյուսակները՝ ժամանակագրությամբ հանդերձ։ Ճիշտ է, Ստեփանոս Տարոնեցու Պատմության առաջին և երկրորդ հանդեսների պարունակած նյութերը հայկական պատմագրության համար նորություն չեն, քանի որ նախորդ հեղինակները դրանք իրենց գործերում ներկայացրել են ավելի ընդարձակ ձևով, այնուամենայնիվ, գրքի նշված բաժինները որոշակի հետաքրքրություն ունեն և աղբյուրագիտական առումով բարձր են գնահատվում։ Պետք է ասել, որ Ստեփանոս Տարոնեցին խորապես կրելով մեծն Մովսես Խորենացու անմիջական ազդեցությունը, իր գրքի առաջին երկու բաժիններում նույնպես շատ մեծ տեղ է հատկացնում ժամանակագրության հարցերին և աշխատում է անհատ բոլոր գործիչների թվականները տալ, որոնց մի մասը, անշուշտ, ճիշտ է ու ստույգ։ Երկրորդ, ապրելով X դարում, Տարոնեցին, բնականաբար, օգտագործել է իր ժամանակներում պահպանվող նախորդ հեղինակների աշխատությունների բնագրերը կամ էլ դրանց ավելի մոտ ու հարազատ ընդօրինակությունները։ Եվ Ասողիկի Պատմության միջոցով մենք որոշ հրնարավորություններ ենք ստանում ճշտումներ և ուղղումներ կատարելու մեր ձեռքը հասած մյուս հեղինակների ավելի ուշ ժամանակներում արտագրված օրինակներում։

Հայ ժողովրդի զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության համար, որպես սկզբնաղ-



բյուր, անժխտելիորեն ավելի բարձր արժեք ունի «Պատմութիւն տիեզերականի» երրորդ հանդեսը, որի 48 գլուխների մեջ ամփոփվում է 117 տարիների պատմությունը՝ երբեմն-երբեմն առանձին մանրամասնություններով հանդերձ։ Եվ եթե հեղինակը առաջին երկու հանդեսների համար ասում էր, որ ինքը իր նախորդներից հավաքելով է պատմությունը շարադրում, ապա երրորդ հանդեսը նա ուղղակի վերնագրում է «Պատմութիւն ժամանակաց ինքնախօսութեան», շեշտելով նրա ինքնուրույն և հավաստի լինելը։

Գրքի այս բաժնում Տարոնեցին ընդհանուր գծերով շարադրելով Աշոտ I-ի և Սմբատ I-ի պատմությունը, այնուհետև անդրադառնում է Աշոտ II-ին, Աբասին, Աշոտ III-ին, Սմբատ II-ին և Գագիկ I-ին։ Երրորդ հանդեսը ավարտվում է 1004 թվականով։ Նրա մեջ ընդգրկված հատկապես վերջին 80 տարիների պատմությունը հեղինակը շարադրել է արդեն որպես դեպքերին ժամանակակից և ականջալուր անձնավորություն։

Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի արժանիքներից մեկն էլ այն է, որ նա Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը չի կտրում ընդհանուր պատմությունից, այլ շարադրում է նրա հարևան երկրների ու ժողովուրդների պատմության ֆոնի վրա։ Դրա համար էլ «Պատմութիւն տիեզերականը» շատ կարևոր ու արժեքավոր սկզբնաղբյուր է Պարսկաստանի, Արաբական խալիֆայության, Բյուզանդիայի և մյուս երկրների պատմության ուսումնասիրության համար։ Ստեփանոս Ասողիկը ի տարբերություն շատ հայ հեղինակների, երկրի քաղաքական պատմության հետ միասին, անդրադարձել է նաև նրա մշակութային կյանքին։ Պատմիչը արժեքավոր շատ տեղեկություններ է հաղորդում տասից ավելի խոշոր վանքերի (Կամրջաձոր, Հոռոմոս, Նարեկ, Հաղպատ, Սանահին և այլն) հիմնադրման, նրանց գրչության կենտրոնների, անվանի գիտնականների և հոգևոր առաջնորդների գործունեության մասին։ Հայ միջնադարյան արվեստի ու ճարտարապետության համար կարևոր են պատմիչի այն տեղեկությունները, որոնք վերաբերում են եկեղեցական շինարարությանը և Անի քաղաքի պարիսպների կառուցման մանրամասնություններին։ Այստեղ է, որ Ասողիկը պատմելով Տրդատ ճարտարապետի Հայաստանում կառուցած շքեղ շինությունների մասին, անդրադառնում է նաև նրա գործունեությանը Բյուզանդիայի մայրաքաղաքում՝ Կոստանդնուպոլսում, որ-

տեղ ահեղ երկրաշարժից զգալիորեն վերից վար տուժել էր Ս. Սոֆիայի հռչակավոր տաճարը, որը հնարավոր եղավ վերակառուցել և ավելի փառահեղ ու գեղեցիկ դարձնել միայն Տրդատի նախագծով ու անմիջական ղեկավարությամբ։ Այդ մասին պատմիչը իր գրքի համապատասխան բաժնում ասում է հետևյալը. «Եւ զկնի սակաւ աւուրց շարժեցաւ աշխարհն Յունաց ահաւոր դղրդմամբ, մինչև կործանել բազում քաղաքաց և գիւղից և գաւառաց, ...մինչև ի նոյն ինքն ի Թագաւորական քաղաքին Կոստանդնուպոլսի մեծաշուք և բազմապայծառ զարդ հրաշատեսիկ սեանց և պատկերաց և եկեղեցեաց մեծամեծաց կործանեալ փյուզանիւր, և նոյն ինքն Սոփիայն, որ կաթողիկէն է՝ հերձանիւր պատառմամբ վերուստ ի վայր։ Վասն որոյ բազում ջան եղև արհեստաւոր ճարտարացն Յունաց առ ի վերստին նորոգել։ Այլ անդ դիպեալ ճարտարապետին Հայոց Տրդատայ քարագործի՝ տայ զօրինակ շինուածոյն, իմաստուն հանճարով պատրաստեալ զկաղապարս կազմածոյն և սկզբնաւորեալ զշինելն. որ և գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան զառաջինն»[41]։ Ս. Սոֆիայի տաճարի հատկապես գմբեթը, որի տրամագիծը 31 մետրից ավելի է, հիմնավոր վերանորոգման համար լուրջ դրժվարություններ կարող է հարուցել նույնիսկ մեր օրերում։ Տրդատ ճարտարապետի անգերազանցելի հմտության գրավականը բյուզանդական կառույցողական արվեստի գլուխգործոցի՝ վերանորոգումից հետո հազարամյա աներեր գոյությունն է։

Ստեփանոս Ասողիկը նաև ջերմ հայրենասեր է։ Նա մերժում է Հայաստանի քաղաքական մասնատումը և կենտրոնացած միասնական պետության կողմնակից է։ Հեղինակի ու նրա գրքի բարձր արժանիքներով միայն կարելի է բացատրել այն հանգամանքն ու ակնածանքը, որ ունեն հետագա ժամանակների գրեթե բոլոր հայ պատմիչները նրա նկատմամբ։ Ասողիկը ըստ երևույթին գրել է նաև այլ աշխատություններ։ Նրա Պատմության լավագույն հրատարակությունը, Ստ. Մալխասյանցի առաջաբանով ու արժեքավոր ծանոթագրություններով լույս է տեսել 1885 թվականին Պետերբուրգում։ Այն լույս է տեսել նաև ռուսերեն, գերմաներեն և ֆրանսերեն թարգմանություններով։

[41] Նույնը, էջ 250—251։



**Արիստակես Լաստիվերտցի**

XI դարի Հայաստանի քաղաքական պատմության ելևէջներով հարուստ ժամանակներում է ապրել Արիստակես Լաստիվերտցին։ Նրա հայրենի բնակավայրը Լաստիվերտն էր, որը պետք է գտնվելիս լիներ Բարձր Հայքի Արծն քաղաքի մոտ, որին նա անվանում է «քաղաքս մեր»։ Արիստակեսն էլ ուրիշ հեղինակների նման իր ծննդավայրի անունով կոչվում է Լաստիվերտցի։ Նրա ծննդյան, մահվան և ընդհանրապես կենսագրության մասին մեզ այլևս ոչինչ հայտնի չէ։ Ենթադրվում է, որ պատմիչն ապրել է երկար և «պատկառելի տարիքում» էլ գրել է իր Պատմությունը։

Արիստակես Լաստիվերտցու գիրքը համեմատաբար փոքրածավալ աշխատություն է և ընդգրկում է 1001—1072 թվականների դեպքերը՝ Տայքի իշխան Դավիթ Կյուրապաղատի սպանությունից մինչև սելջուկյան սուլթան Ալփ-Ասլանի մահվան տարին։ Աշխատությունը գրված պետք է լինի 1072—1087 թվականների միջև ընկած տարիներին։ Այն կրում է «Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ վարդապետի վասն անցիցն անցելոց ի յայլասեռն ազգաց որք շուրջ զմեզ են» խորագիրը[42], որտեղ «վարդապետ» կոչումը կարող է նշանակել հեղինակի և՛ կրոնավոր, և՛ սովորական ուսուցիչ լինելը։ Սակայն քանի որ հեղինակն իր գրքում շատ հաճախ է հենվում Աստվածաշնչի վրա, տեղ-տեղ էլ մեջբերումներ անում նրանից՝ ցուցաբերելով խոր գիտելիքներ աստվածաբանության բնագավառում, ուստի նրա կրոնավոր լինելը, թվում է, ավելի հավանական է դառնում։ Պատմությունից բացի Լաստիվերտցուն են վերագրվում նաև մի քանի կրոնադավանաբանական բնույթի աշխատություններ[43], որոնք աղբյուրագիտական առանձին արժեք չունեն։

Արիստակես Լաստիվերտցու մտածելակերպի ու դատողությունների վրա նույնպես մեծ է քրիստոնեական աշխարհայացքի ազդեցությունն ու կրոնական սահմանափակվածությունը։ Իր նախորդների նման նա էլ ամեն ինչի պատճառը համա-

[42] Արիստակես Լաստիվերտցի, Պատմություն, Երևան, 1963, էջ 21։

[43] «Повествование вардапета Аристакэса Ластивертци», перевод К. Юзбашяна, М., 1968, էջ 14, նույնի՝ Արիստակես Լաստիվերտցի, տե՛ս «Հայ մշակույթի նշանավոր գործիչները» գրքում, էջ 213։

բում է մարդկանց մեղքերը և նախախնամությունը։ Սակայն այս հանգամանքը մեզ չպետք է խանգարի, որովհետև տվյալ դեպքում կարևորը ոչ թե հեղինակի գնահատականներն ու կրոնի շրջանակներում նրա արած սահմանափակ եզրակացություններն են, այլ այն հարուստ նյութը, որ մատուցում է նա ընթերցողին։ Իսկ այդ նյութերն իրոք որ հարուստ են։

Արիստակես Լաստիվերտցին ապրել է Բագրատունիների թագավորության հզորացման վերջին շրջանում, ականատես եղել հայ և վրաց ժողովուրդների քաղաքական մերձեցմանը, դառնացել Բյուզանդիայի՝ հայերի նկատմամբ վարած երկդիմի քաղաքականությունից ու հայկական երկրամասերի բռնագրավումներից, վշտացել ու խոցվել է իր հայրենիքի անկախության ոչնչացման համար, ամբողջապես ճաշակել սելջուկ-թուրքական խորշակի ամեն ինչ ոչնչացնող ուժը, սոցիալական շարիքները, անարդարությունը, ժողովրդի կեղեքումը ներքին ու արտաքին հարստահարողների կողմից, Հայաստանի քաղաքների ու բնակավայրերի ավերվելը, ժողովրդի դարավոր մշակույթի ոչնչացումը և այլն, և այլն։ Առաջին հայացքից թվում է, թե այսքան շատ և մեկը մյուսից կարևոր հարցերի շարադրանքը տալը մեկ հեղինակի համար չափից ավելին է ու դժվարին։ Սակայն, ի պատիվ Լաստիվերտցու, պետք է ասել, որ նրա հրմուտ գրչի տակ բոլոր հարցերն էլ ստացել են գոհացուցիչ պատասխան։ Լաստիվերտցին կարողանում է մեծ վարպետությամբ երբեմն մի քանի բառերով ոչ միայն խոր միտք արտահայտել, այլև հմայել ընթերցողին։

«...Ցոր յաւուրս մեր զարթեան պատերազմունք
ի չորից կողմանց՝
Ցարևելից սուր, յարևմտից սպանումն,
Ի հիւսիսոյ հուր, ի հարաւոյ մահ.
Բարձան ուրախութիւնք յերկրէ,
Լռեցին ձայնք քնարաց,
Լռեցին բոմբիւնք թմբկաց,
Բարձրացան աղաղակք լալեաց...»[44]։

Պատմության սկզբի մասերում չափածո հանգերով արտահայտած այս խոսքերից հետո պատմիչն առաջնորդում է ընթերցողին, ասելով. «...բայց ժամ է մեզ ի գլուխ պատմութեանդս ընթանալ, և աստի սկիզբն առնել, որպէս զի դիւրածան լիցի մեզ բանս» և 25 ոչ ընդարձակ գլուխների մեջ ամփոփում իր ասելիքը։ Գլուխներից յուրաքանչյուրն ունեն իրենց համապատասխան վերնագրերը, որոնք ընդհանուր առմամբ արտահայտում են շարադրանքի բովանդակությունը։ Լաստիվերտցին որպես իր ժողովրդի զավակը, հավասարապես ատում է նրա բոլոր թշնամիներին՝ և՛ սելջուկ-թուրքերին, և՛ բյուզանդացիներին։ Նկարչական գունագեղությամբ նկարագրելով Արծն քաղաքը, նրա գեղեցիկ դիրքը, հարստությունները ու իր ներքին չար ու բարիով ապրող կյանքը, Լաստիվերտցին պոռթկացող ատելությամբ ու անսահման զայրույթով է ներկայացնում սելջուկյան հրոսակախմբերի ձեռքով նրա հիմնահատակ ավերումը, կողոպուտն ու բնակիչների զանգվածային կոտորածը։ Ամենաանտարբեր ընթերցողի մոտ նույնիսկ պատմիչի կերտած պատկերները այսօր էլ առաջացնում են խոր զայրույթ ընդհանրապես բոլոր ավերիչների ու ոչնչացնողների նկատմամբ։ «Բայց զքաղաքիս մերոյ,—ասում է նա,—զբազմադիմի և զանհընարին չարիս ընդ գրով ով կարասցէ արկանել... հասին ի վերայ անօրինացն ժողովք իբրև շուն քաղցեալք, ...և սուր առն ի վերայ եղեալ հնձեցին մինչև անջատեցաւ ի կենդանւոյ քաղաքս... զի ամենայն քաղաքն լի էր դիակամբք անկելոցն, վաճառոյ փողոցք և նրբափողոցք և ընդարձակ սրահք»[45]։ Մի ուրիշ տեղ, Վասպուրականը ավերելու կապակցությամբ, պատմիչը Թուրքերին անվանում է «քաղցած ու անհագուրդ գայլեր»։ Մի կողմ թողնելով պատմիչի արդարացի զայրույթը, ասենք, որ նրա տեղեկությունները սելջուկների կռվելու եղանակների, որոշ չափով նաև սովորությունների մասին շատ կարևոր են նրանց ազգային նկարագիրը ամբողջականացնելու համար։ Մենք, օրինակ, Արիստակես Լաստիվերտցու Պատմությունից ենք իմանում, որ սելջուկ-Թուրքերը գտնվելով բարբարոսության աստիճանի վրա, միայն ավերում ու ոչնչացնում էին ամեն ինչ և առանձին հակում չունեին հաստատվելու նվաճված վայրերում։

Իր հայրենիքի թշվառության համար մղկտացող պատմիչը պարսավանքի խոսքեր է ասում նաև Բյուզանդիայի հասցեին,

---

[44] Արիստակես Լաստիվերտցի, էջ 22։

[45] Նույնը, էջ 78։

որը բարեկամ ձևանալով, իր կեղծավոր ու երկդիմի քաղաքականությամբ, նպաստում էր Հայաստանի անկախության ոչնչացմանը։ Թե ինչ ծանր ու կործանարար հետևանքներ ունեցան բյուզանդացիների հարձակումները Անիի վրա, Լաստիվերտցին նկարագրում է այսպես. «Յայսոսիկ յաւուրս հետամուտ եղեալ զօրքն Հոռոմոց, չորս անգամ զկնի միմեանց մտին յաշխարհն Հայոց, մինչև մարդաթափ արարին զերկիրն ամենայն սրով և հրով և գերութեամբ։ Զորոյ զնշանակ չարեացն յորժամ զմտաւ ածեմ՝ յիմարի անձն իմ և ափշին միտք իմ, և յահագին զարհուրանացն զդողի առեալ ձեռինս՝ զոճ տողիս ոչ կարեմ յառաջ խաղացուցանել. զի դառն է պատմութիւնս, և բազում ողբոց արժանի։

Աշխարհ՝ որ երբեմն ժամանակաւ իբրև զդրախտ տնկախիտ առաջի իւր, կանաչագեղ, տերևալից, պտղաբեր, գեղեցկաշուք և երջանիկ անցաւորացն ցուցանիւր»[46]։

Պատմագիտական խոշոր արժեք ունեն նաև Արիստակես Լաստիվերտցու գրքի այն հատվածները, որոնք վերաբերում են երկրի ներքին կյանքին, սոցիալական շարժումներին ու զանգվածային ընդվզումներին։ Պատմիչը իրեն հատուկ դիտողականությամբ նկատում ու դառնությամբ խարազանում է վաշխառությունը՝ օտարների ու աղքատների հաշվին մեծատունների հղփանալը, ավազակների հետ նրանց ընկերակցելը և այլն։ Լաստիվերտցին ներքին անարդարությունների դեմ իր զայրույթը արտահայտում է 1064 թ. սելջուկների կողմից հռչակավոր Անի քաղաքի ավերածության առիթով և ուրիշ ելք չգտնելով, կարծեք նաև հոգեպես հանգստանում է, որ քաղաքի փրլատակների տակ արժանի կերպով թաղվում են ամեն վատ արարքները։ Լաստիվերտցին այս մասին գրում է. «Այլ և ի ճարպոյ անիրաւութեան ի նմա գործելոցն տոչորեցաւ բարձրաշէն և գեղեցկայարմար ապարանքն, և եղև ամենայն բնակութիւնն իբրև հողաբլուր և վաշխն և նենգութիւնն որ ի նմա՝ խափանեցաւ։

Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս արեամբ օտարաց, և ի քրտանց տնանկաց փարթամանան, և ի վաշխից և յանիրաւութեանց զտունս իւրեանց ամրացուցանեն. և ինքեանք զմիտս իւրեանց անողորմ ունելով առ աղքատս և

[46] Նույնը, էջ 58։



տնանկս՝ միայն հեշտութեան և փափկութեան սպասեն, և ի գործոց աղտեղութեան ոչ խորշին, այլ միայն արբեալ լինին ի ցանկութեանցն որ զնոսա ըմբռնեալ ունի»[47]։ Այստեղ Լաստիվերտցին հանդես է գալիս որպես հոգևորականության շափավոր թևի ներկայացուցիչ, որի համար անհանդուրժելի էին աշխարհիկ և հոգևոր իշխանավորների գործած հանցավոր արարքները։ Լաստիվերտցին ավելին անել չէր կարող։ Նա ի վիճակի չէր թափանցելու սոցիալական անհավասարության էության մեջ, առավելապես չէր էլ կարող դրանից ազատվելու ուղիներ ցույց տալ։ Դրա համար էլ նա իր գրքի 22, 23-րդ գլուխներում խոսք է բացում թոնդրակյան շարժման մասին և այդ շարժումը ներկայացնում թշնամական դիրքորոշումով։ Սակայն թոնդրակյանների մասին Լաստիվերտցու հաղորդումները մեզ օգնում են պատկերացնելու այդ շարժման ընդգրկած մոտավոր սահմանները, որոշել նրա դասակարգային ու դասային կազմը և այլն։ Հենց այնքանով, որքանով Արիստակես Լաստիվերտցին սոցիալական հակասությունների առաջ իր աչքերը չի փակել, այլ համարձակորեն խոսել է դրանց մասին, որպես գրող ու մտածող կանգնում է իր ժամանակակիցներից շատերից բարձր։

Արիստակես Լաստիվերտցու Պատմության բնագիրը լույս է տեսել մի քանի անգամ։ Լավագույնը քննահամեմատական հրատարակությունն է, որը կատարել է Կ. Յուզբաշյանը (Երևան, 1963)։ Պատմությունը լույս է տեսել նաև աշխարհաբար (Երևան, 1971), ռուսերեն (Մոսկվա, 1968), ֆրանսերեն, վրացերեն և անգլերեն թարգմանություններով։

**Մատթեոս Ուռհայեցի**

XII դարում հայ պատմագրության մեջ հանդես է գալիս ժամանակագրությունը կամ տարեգրությունը, որն այն ժամանակ բավական տարածված էր նաև միջնադարյան Եվրոպայում։ Ժամանակագրությունը, ինչպես ցույց է տրված մասնագետների կողմից, առանձին գրական պատրաստություն չէր պահանջում։ Պատմիչները գրի էին առնում պատմական դեպքերը ժամանակագրական կարգով, առանց լուրջ ուշադրություն դարձնելու նրանց ներքին կապակցության վրա։ Այս մտայնությունը, ինչպես նշում է Մ. Աբեղ-

[47] Նույնը, էջ 136։

յանը, ժամանակի աշխարհայացքի ազդեցության հետևանք էր, որին ամենևին էլ ձեռնտու չէր պատմական իրադրությունների խոր ու բազմակողմանի մատուցումը ընթերցող հասարակայնությանը։

Եթե ժամանակագրությունները կամ տարեգրությունները ունեին այն առավելությունը, որ այստեղ հատուկ ուշադրություն էր դարձվում տարեթվերի հերթականության վրա, այսինքն՝ դեպքերի կատարման ժամանակը մատնանշելը դառնում էր մի տեսակ պարտադիր կանոն, ապա մյուս կողմից այդ կարգի սկզբնաղբյուրներն ունեին նաև լուրջ թերություններ, որովհետև նրանցում չէր տրվում իրադարձությունների ընդարձակ շարադրանքը, էլ չենք ասում, որ հեղինակները իրենց ճաշակով կամ հատուկ նախասիրությամբ շատ հաճախ տվյալ թվականին տեղի ունեցած միանգամայն երկրորդական դեպքերը հիշատակելով, աչքաթող էին անում կարևորներն ու գլխավորները։

Եվ ահա ժամանակագրության առաջին կիրառողներից մեկն էլ հայ պատմագրության մեջ հանդիսացավ Մատթեոս Ուռհայեցին։ Իր տված սուղ տեղեկությունների համաձայն, Ուռհայեցին ծնվել է Կիլիկիայի սահմանագլխին գտնվող Ուռհա կամ Օդեսիա քաղաքում։ Նա եղել է կրոնավոր և ապրել ու ստեղծագործել է գերազանցապես հայրենի քաղաքում։ Ուռհայեցին իր աշխատությունը անվանում է «Ժամանակագրութիւն», որն ընդգրկում է 952—1136/37 թվականների դեպքերի հաջորդական շարադրությունը։ Ուռհայեցին, շատ համեստ կարծիքի է իր գիտական պատրաստության մասին։ Մի տեղ, օրինակ, խոսելով իր աշխատության մասին, նա ասում է. «Եւ արդ ահա այս վարդապետաց և կորովի գիտնականաց էր գործ և ոչ մերում տկարութեանցս և կամ սակաւ գիտութեանցս...»[48]։ Սակայն միաժամանակ իրեն համեմատելով մեզվի հետ, նա արդարացիորեն ասում է։ «...զի ի տկարաց և ի նուազից գործ ինչ պիտանացու պահանջէ. ...և տկարութիւնս մեր համարձակութիւն էառ և առաջի հռետորաց և իմաստնոց հզօրաց և խորին հանճարեղաց և քաջակիրթ քննողաց խօսեցաք զայս և յանձին արարաք զմատենագրութիւնս մեր նոցա...»[49]։ Պատմիչը չվախենալով «հանճարեղների», «գիտնականների» և «իմաստունների» քննադատությունից, միաժամանակ իր կատարած աշխատանքը իրավացիորեն բարձր է գնահատում, ասելով, որ «...անհնար է եթէ այլ կարող լինի զայս գտանել և կամ հաւաքումն առնել միահամուռն ազգաց և թագաւորաց, հայրապետաց և իշխանաց զամենայն ժամանակս թուականութեամբ ի գիր հաւաքել, վասն զի վճարեալ հատան առաջինքն, որք ականատեսք էին ամենայն ժամանակացն։ Արդ զայս ոչ ոք է կարող առնել, զոր ինչ մեք արարաք, զի զոր ինչ գրեցաք՝ գրեցաւ, զի զամս հնգետասան ունէաք զայս գործ քննութեանս, զոր ի մատենագրութիւնս ընթերցեալ գտանէաք զթուականսն ժամանակացն ի յիշատակարանս գրոցն և ընդ ծերսն ի քննութիւն մտեալ դեգերէաք անդադար քննութեամբ՝ և հաւաքեալ գրեցաք ի գիրս զայս ինչ»[50]։ Վերջին տողերը կասկած չեն թողնում ընթերցողի մոտ, որ պատմիչը իր ձեռնարկած գործի նկատմամբ ունեցել է մեծագույն պատասխանատվության զգացում, որովհետև իր գիրքը նա ստեղծել է երկարամյա քրտնաջան աշխատանքով, չսահմանափակվելով միմիայն իրեն ծանոթ ու պիտանի գրավոր սկզբնաղբյուրների շրջանակներում, այլ դուրս է եկել այդ նեղ շրջանակներից և ընդգրկել նաև ծերունիների և ականատեսների պատմածները։ Հենց այստեղ պատմիչը միաժամանակ մեզ հավաստում է, որ ինքը աղբյուրներն օգտագործել է «անդադար քննութեամբ», որը, անշուշտ, պետք է հասկանալ քննադատելու, այլ աղբյուրների հետ համեմատելու իմաստով։ Նշված արժանիքներից ելնելով է, որ մասնագետները Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութիւնը» համեմատում են բյուզանդական լավագույն ժամանակագիրներից Թեոփանես Խոստովանողի ստեղծագործության հետ և գտնում, որ այն իր տեսակի մեջ եզակի նմուշ է[51]։

Մատթեոս Ուռհայեցին հանդես է եկել փոթորկալի մի ժամանակաշրջանում, երբ արաբական երկարամյա լուծը թոթափած և քաղաքական անկախություն նվաճած հայ ժողովուրդը ապրում էր տնտեսական և մշակութային առաջընթաց, որը

[48] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 278։

[49] Նույնը, էջ 278—279։

[50] Նույնը, էջ 280։

[51] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ XIII, XXIV (Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի)։

սակայն, շուտով խանգարվեց Բյուզանդիայի նվաճողական և նենգամիտ քաղաքականության, ապա նաև՝ Հայաստան ներխուժած սելջուկ-Թուրքերի կողմից։ Այս ահեղ ու գիշատիչ ուժերի Հայաստանին ու հայ ժողովրդին պատճառած անհուն տառապանքներն իրենց խոր ազդեցությունն են ունեցել պատմիչի վրա ու նրա զգայուն ներաշխարհում մշակել որոշակի վերաբերմունք և՛ մեկի, և՛ մյուսի նկատմամբ։

Հայաստանում Բյուզանդիայի վարած նենգամիտ ու դավաճանական քաղաքականության հետևանքով էր, որ, ասում է պատմիչը, սելջուկ-Թուրքերը անպաշտպան երկիրը արագորեն նվաճելով հասան մինչև Կոստանդնուպոլիս։ Միանգամայն ճիշտ ըմբռնելով պատմական դեպքերի զարգացման ընթացքը, Ուռհայեցին սելջուկ-Թուրքերի աննախընթաց հաջողությունները բացատրում է Բյուզանդիայի անհեռատես քաղաքականությամբ և բացականչում. «Ո՞վ կարասցէ մի ըստ միոջէ պատմել զկորուստ բարկութեանն և զլաց ապաշաւանաց տանս Հայոց, զօր յանօրէն և յարեանարբու գազանացն զօրացն Թուրքաց կրեաց յանտիրութենէ, ի սուտ պահպանացն, ի տկար և ի թուլամորթ վատ ազգին Յունաց. վասն զի մի առ մի քակեալ հանին զքաջ զզօրականսն ի տանէն Հայոց, զորս հանին յարկաց և ի գաւառաց և բարձեալ խափանեցին զաթոռ թագաւորութեանն Հայոց. քակեցին զցանկ պահպանութեանն զօրաց և զօրավարաց. և ազգն Հոռոմոց իւրեանց անուն քաջութեան զանդարձ փախչելն արարին պարծանք. նմանեցան վատ հովուացն, որ յորժամ զգայլն տեսանէ՝ փախչի»[52]։ Բյուզանդական կայսրությանը տված այս արժանի գնահատականը միանգամայն տեղին է, որովհետև այն սկսած XI դարից ամբողջապես հաստատվում է պատմական դեպքերի զարգացման ընթացքով։

Ուռհայեցին ականատես լինելով սելջուկ-Թուրքերի արշավանքներին, հենց սկզբից ատելությամբ է լցվում մարդկությանը անհուն տառապանքներ, վիշտ ու աղետ բերող այս նվաճողների նկատմամբ։ Նա իր գրքի բազմաթիվ էջերում մի առանձին պատկերավորությամբ է նկարագրում սելջուկների դաժանությունները։ «Ընդ աւուրսն ընդ այնոսիկ,—ասում է պատմիչը,—զօրաժողով լինէին խուժադուժ ազգն անօրինացն, որք անուանեալ կոչին Թուրք, և հասեալ մտանէին յաշխարհն Հայոց ի Վասպուրական գաւառին և անողորմ ի բերան սրոյ կոտորէին զհաւատացեալքս Քրիստոսի։ ...Իսկ մինչեւ յայնմ ժամանակի չէին բնաւ տեսեալ Թուրք զօրք հեծելոց. և ի հանդիպիլն նոցա՝ տեսին այլակերպ զնոսա. աղեղնաւորս և հերարձակս իբրեւ զկանայս...»[53]։

Մատթեոս Ուռհայեցին, սակայն, Հայաստանի և հայ ժողովրդի ողբերգությունը միայն արտաքին թշնամիների ներխուժումներն ու նվաճումները չի համարում։ Նա, անդրադառնալով իր հայրենիքի ներքին կյանքին, խոր կսկիծով է արձանագրում հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալների, իշխանազունների ու մեծատունների, մի խոսքով՝ շահագործող դասակարգի ներկայացուցիչների անօրինականությունները, չարաշահումները, կաշառակերությունը, ընչաքաղցությունը, հոգեկան ու բարոյական անկումը։ Պատմիչը այս առթիվ ժամանակի նշանավոր գիտնական Հովհաննես Կոզեռնի բերանով դառնացած ասում է. «...իշխանք յարենան ի գողս և յաւազակս և յափշտակողս, դատաւորք ի կաշառս և յանիրաւ դատաստանս. կրօնաւորք թողուն զանապատս և զմենաստանս և յաշխարհի զբաղմունս դեգերին և շրջին ընդ փողոցս և ի մէջ կանանց, ատեն զաղօթս և թողուն զկարգս կրօնաւորութեան իւրեանց, սիրեն զվարս աշխարհի և զհետ երթան գովեստից մարդկան...»[54]։ Կրոնավոր լինելով հանդերձ, Ուռհայեցին չի հանդուրժում իր դասակիցների արատավոր կողմերը, ասելով, թե «...Հայրապետք և եպիսկոպոսունք և քահանայք և կրօնաւորք արծաթասէրք առաւել քան աստուածասէրք»[55]։ Ուռհայեցին այնուհետև շեշտում է, որ ղեկավար խավերը այն աստիճան հղփացել ու սանձարձակ են դարձել, որ հասարակության տականքներին ու թափթփուկներին անգամ քահանա են դարձնում կամ առաջնորդ կարգում։ Այսպես շարունակ քննադատելով և պախարակելով տիրող դասակարգի արատավոր կողմերը, Ուռհայեցին հասնում է նաև սոցիալական անհավասարության ու անարդարության գիտակցությանը։ Նա ասում է, որ անբարոյականության ախտի մեջ թաղված իշխաններն ու դատավորները մեծարելով գողերին ու

---

[52] Մատթեոս Ուռհայեցի, էջ 135։

[53] Նույնը, էջ 47։

[54] Նույնը, էջ 53։

[55] Նույնը, էջ 54։

մատնիչներին, անխրավաբար հափշտակում են աշխատավորների ունեցվածքը։ Հեղինակի նեղ, կրոնական, սահմանափակ աշխարհայացքը, իհարկե, հնարավորություն չէր տալիս տեսնելու, որ սոցիալական անհավասարություն և սոցիալական չարիքներ հարուցողը ֆեոդալական հասարակարգն է, և առաջարկելու այդ հասարակարգը վերափոխելու պահանջ։ Քրիստոնեության ոգով դաստիարակված և նրա բարեպաշտ հետևորդը ավելին ասել չէր կարող։ Ուստի հենց այնքանով, որքանով որ Ուռհայեցին ֆեոդալիզմի դարաշրջանում նկատում ու գիտակցում էր սոցիալական անհավասարությունն ու դասակարգային շահագործումը, նրան կարելի է համարել իր ժամանակի առաջավոր մտածողներից մեկը, որն անկեղծորեն ցավում էր իր հայրենիքի դառն ճակատագրի համար։

Մատթեոս Ուռհայեցին իր «Ժամանակագրությունը» բաժանել է երեք մասի. առաջինն ընդգրկում է 952—1051 թվականների դեպքերը, երկրորդը հասցվում է մինչև 1101 թվականը, իսկ երրորդը վերջանում է 1136 թվականով։ Եթե առաջին և երկրորդ մասերը գրելիս Ուռհայեցին մեծ չափով օգտագործել է իր նախորդների (այդ թվում հավանաբար նաև օտար լեզուներով) գրավոր աշխատանքներն ու դեպքերի ականատեսների պատմածները, ապա աշխատության երրորդ մասը նա գրել է մեծ մասամբ իր իսկ տեսածի հիման վրա։ Այդ է պատճառը, որ աշխատության երրորդ հատվածի գիտական արժեքը, որպես սկզբնաղբյուր, շատ ավելի մեծ է։ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը» գրեթե նույն ոճով շարունակել է Գրիգոր Երեցը և հասցրել մինչև 1162—1163 թվականները։ Հետագայում հայ մատենագրերից ամենից շատ «Ժամանակագրությունից» օգտվել է Սմբատ Սպարապետը (Գունդստաբլ) իր «Տարեգրքի» մեջ։

Ուռհայեցին կարևոր տեղեկություններ է տալիս նաև իր ժամանակ տեղի ունեցած երկնային լուսատուների խավարումների, սովի, համաճարակների, և այլ արհավիրքների ու բնական աղետների մասին, որոնք որոշ դեպքերում հաստատվում են այլ աղբյուրներով ու տոմարական հաշվումներով։ Պատմիչի լեզուն ընդհանուր առմամբ պարզ ու անզարդ է, գրեթե ժամանակի խոսակցականը, երբեմն համեմված ազդեցիկ ու գունեղ պատկերներով։

Ամբողջությամբ վերցրած Ուռհայեցու «Ժամանակագրությունը» արժեքավոր տեղեկություններ է պարունակում նաև Հայաստանի հարևան երկրների ու ժողովուրդների պատմության վերաբերյալ։ Այս տեղեկությունները, անշուշտ, վկայում են պատմիչի բազմակողմանի գիտելիքների մասին և պայմանավորում այն մեծ հետաքրքրությունը, որ սկսած դեռևս XIX դարի սկզբներից առաջացել է հայ և օտար հեղինակների մոտ նրա աշխատության նկատմամբ։

Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը» առաջին անգամ հրատարակվել է 1869 թվականին Երուսաղեմում, իսկ հետո 1898 թվականին Վաղարշապատում։ Կան նաև այդ երկի ֆրանսերեն (Փարիզ, 1858), գերմաներեն (Բեռլին, 1860) և թուրքերեն (Անկարա, 1962) ամբողջական և այլ լեզուներով հատվածական թարգմանություններ։ Ուռհայեցու աշխատության մասին գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ հայ և օտար հեղինակների կողմից։ 1973 թվականին Երևանում լույս է տեսել Ուռհայեցու «Ժամանակագրությունը» աշխարհաբար թարգմանությունը՝ Հ. Բարթիկյանի աշխատասիրությամբ։

**Սամուել Անեցի**

Սամուել Անեցին հայ նշանավոր պատմիչ-ժամանակագիրներից է։ Նրա կենսագրության մասին շատ քիչ տեղեկություններ են հայտնի։ Հոգևոր կոչումով քահանա էր։ Իր գրքում մի երկու տեղ թռուցիկ կերպով միայն նշում է, որ նեղ է ապրել և հասել է խոր ծերության։ Ենթադրում են, որ Սամուել Անեցին ծնված պետք է լինի Անիում կամ նրա մոտակայքի բնակավայրերից մեկում։ Դրա համար էլ այն ժամանակվա սովորությամբ՝ ինքն էլ կոչվել է Անեցի։ Նա ապրել է մոտավորապես 1100—1190 թվականներին։ Սամուել Անեցու պատմագիտական միակ աշխատությունը հայտնի է «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» վերնագրով։ Ըստ երևույթին նա գրած պետք է լինի նաև կրոնա-մեկնողական բնույթի գործեր, որոնց մասին առայժմ ստույգ ոչինչ ասել հնարավոր չէ։

Սամուել Անեցին իր գիրքը գրել է ժամանակագրության ձևով։ Նա շարադրանքը սկսում է Ադամից և բերում հասցնում է մինչև 1180 թվականը։ Գրքի պատվիրատուն եղել է Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղան (1173—1193)։ Ըստ երևույթին այս աշխատությունը հնում բավական ճանաչված և ընդունելի գործ է եղել որ այլևայլ հեղինակներ նույն սկզբունքներով շարունակել են ու հասցրել մինչև 1665 թվականը։ Սամուել Անեցին

կրթված ու շրջահայաց անձնավորություն է, նա իր գրքի համար կարողացել է օգտագործել ինչպես հայկական, այնպես էլ օտար սկզբնաղբյուրներ։ Հայ շատ հեղինակների և առաջին հերթին Մովսես Խորենացու օրինակով նա իր գրքի հենց սկզբում բարեխղճորեն թվարկում է այն հեղինակներին, որոնց գործերը ինքը օգտագործել է։ Այդ հեղինակներն են՝ Եվսեբիոս Կեսարացի, Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Եղիշե, Ղազար Փարպեցի, Սեբեոս, Շապուհ Բագրատունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ։

Սամուել Անեցու ժամանակագրության սկզբի մասերը, որոնք վերաբերում են նախապատմական, առասպելական շրջանին, առանձին արժեք չունեն։ Այստեղ գրեթե բացակայում են ինքնուրույն դատողությունները և հեղինակը բավարարվում է լոկ, այսպես ասած, իրողությունները ներկայացնելով։ Ճիշտ հակառակը կարելի է ասել գրքի մյուս հատվածների ու հատկապես իրեն մոտ և անմիջապես իր ապրած ժամանակաշրջանների մասին, որովհետև դրանք նա արդեն շարադրել է իր ձեռքի տակ եղած առավել հավաստի ու ստույգ տեղեկություններ պարունակող աղբյուրների հիման վրա։ Եթե դրան ավելացնենք նաև այն հանգամանքը, որ Անեցու օգտագործած աղբյուրների այն ժամանակվա ընդօրինակությունները ավելի մոտ են եղել իրենց բնագրերին, որոնց միջից որոշ բաներ հետագա արտագրող գրիչները դուրս են թողել կամ աղավաղել են, ապա մեր այս հեղինակի աշխատության արժեքը է՛լ ավելի կբարձրանա։

Սամուել Անեցու ժամանակագրությունը հիմնականում ընդգրկելով հայ ժողովրդի պատմությունը, արժեքավոր նյութեր է պարունակում նաև Կիլիկիայի և հարևան երկրների ու ժողովուրդների մասին։

Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» աշխատության լավագույն հրատարակությունը՝ տարբեր ձեռագրերի համեմատությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով, կատարել է Ա. Տեր-Միքելյանը Վաղարշապատում, 1893 թվականին։ Այդ աշխատությունը երկու անգամ (Միլան, 1818 և Հռոմ, 1839) հրատարակվել է լատիներեն Ա. Մայի թարգմանությամբ։ Սամուել Անեցու «Հաւաքմունքը» թարգմանվել է նաև ֆրանսերեն, որն իրականացրել է արևելագետ Մ. Բրոսսեն (Պետերբուրգ, 1876)։



**Վարդան Արևելցի**

Միջնադարյան հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչներից Վարդան Արևելցին հայտնի է որպես պատմագիր, աշխարհագրագետ, գրող, փիլիսոփա, թարգմանիչ ու մանկավարժ։ Նա ծնվել է 1198—1200, ոմանց կարծիքով՝ 1200—1210 թվականներին Գանձակի գավառում (հին Փառիսոս գավառ)։ Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա Նոր Գետիկի վանքում՝ նշանավոր իրավագետ Մխիթար Գոշի մոտ։ Հետո նա աշակերտել է նաև մեծ մտածող Հովհաննես Իմաստասերին՝ Տավուշ գավառի Խորանաշատի վանքում։ Վարդան Արևելցին XIII դարի 30 և 50-ական թվականներին մանկավարժական աշխատանք է կատարել Կայենաբերդի իր իսկ հիմնած Ս. Անդրեի վանքում։ Հենց այստեղ էլ նա գրել է «Մեկնութիւն Հնգամատեանի» մեկնողական աշխատությունը և մի քանի մանր գործեր։ Ենթադրվում է, որ Վարդան Արևելցին եղել է նաև Հաղպատի վանքում։ 1239—1240 թվականներին Երուսաղեմ կատարած ուխտագնացությունից վերադառնալիս, Վարդանը որոշ ժամանակ կանգ է առնում Կիլիկիայում և միայն 1245 թվականին հետ գալիս հայրենիք։ 1248 թվականին նա երեք-չորս տարով նորից է մեկնում Կիլիկիա, որտեղ ընդգրկվում է ինչպես մշակութային, այնպես էլ հասարակական ու եկեղեցական գործունեության մեջ։ Կիլիկիայում նա Հեթում I-ի խնդրանքով գրում է իր «Ժղլանք», «Յաղագս մեկնութեան քերականին» և մի քանի փոքր աշխատություններ, կատարում է թարգմանություններ և այլն։ Այստեղ Վարդան Արևելցին գործուն մասնակցություն է ցույց տվել նաև բյուզանդական և հռոմեական եկեղեցիների դեմ մղվող պայքարին։ Արևելցին իր կյանքի վերջին տարիներն անց է կացրել Խորվիրապի վանքում, որտեղ նրա հիմնած բարձրագույն դպրոցը դեպի իրեն էր ձգում ուսումնատենչ շատ երիտասարդների։ Վարդան Արևելցու սաներից առավել աչքի ընկնողներն էին՝ Հովհաննես Երզնկացին, Գևորգ Սկևռացին, Ներսես Մշեցին և ուրիշներ։ Պատմիչի գիտական-ստեղծագործական եռուն շրջանը հենց կապվում է Խորվիրապի հետ, որտեղ նա գրել է «Մեկնութիւն Դանիէլի», «Հաւաքումն պատմութեան», «Աշխարհացոյց», մի քանի ճառեր, շարականներ և այլն։ Հավանաբար պատմիչն այստեղ էլ

խմբագրել ու լրացրել է հայկական եկեղեցական ծիսական ժողովածուն՝ «Տօնապատճառը»։

Վարդան Արևելցին 1264 թ. մեկնում է Թավրիզ՝ Հուլավու ղանի մոտ, ուր նա արժանանում է հանդիսավոր ընդունելության։ Ըստ երևույթին մեծ գիտնականը իր գիտելիքներով ու խելքով բռնակալի վրա խոր տպավորություն է թողնում, որովհետև Արևելցին կարողանում է ձեռք բերել մի հատուկ յառլիկ, որով ղանը հրամայում էր իր գործակալներին՝ Հայաստանում մեղմացնել հարկային քաղաքականությունը։

Վարդան Արևելցին մահացել է 1271 թվականին (ոմանց կարծիքով՝ 1269) և թաղվել Խորվիրապում։ Նա դեռևս իր կենդանության ժամանակ լայն ճանաչում ուներ։ Դրա ապացույցը «Նոր լուսավորիչ», «եռամեծ», «արդյունական» մականուններն էին, որ տալիս էին նրան ժամանակակիցները։

Վարդան Արևելցին բազմաժանր ստեղծագործող էր. նա հաջողությամբ գրել է և կանոնագրական բնույթի գործեր, մեկնություններ, և քերականական, աշխարհագրական աշխատություններ, պատմություն, կատարել թարգմանություններ հունարենից, ասորերենից և այլն։ Որպես մեծ հայրենասեր և իր ժողովրդի ճակատագրով ապրող մարդ, Վարդան Արևելցին նույնիսկ ներբողների ու կրոնա-եկեղեցական ստեղծագործությունների մեջ ներարկել է սոցիալ-քաղաքական ու հայրենասիրական մոտիվներ, ամեն անգամ ցուցաբերելով իր խոր գիտելիքները հայ ժողովրդի անցյալի և իր ժամանակների պատմության նկատմամբ։ Այս տեսակետից առանձնապես աչքի են ընկնում Գրիգոր Լուսավորչին ու նրա ժառանգներին և հայոց գրերի գյուտին նվիրված ներբողները։ Հպարտությամբ ներկայացնելով Հայաստանի՝ երբեմնի հզոր պետության պատմությունը, նա որպես հայրենասեր գիտնական, միաժամանակ ցավով ու դառնությամբ է արձանագրում ազգային անկախության կորուստը։ Նա իր դարի մյուս առաջավոր մտածողների նման ամեն ինչ անում էր, որպեսզի ժամանակակից սերունդը պահպանի և ամրապնդի ազգային ինքնագիտակցությունն ու հայրենասիրությունը։ «Վարդան Արևելցու ճառերն ու խրատները... հետաքրքիր և արժեքավոր նյութ են մատակարարում միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ու իրավական



հարաբերությունների, մասամբ քաղաքային կյանքի և կենցաղային սովորությունների վերաբերյալ»[56]։

Վարդան Արևելցու գիտական-ստեղծագործական ժառանգության մեջ ծանրակշիռ տեղ են գրավում մեկնողական աշխատությունները, որոնք նվիրված են Հին Կտակարանին։ Այստեղ է, որ ի հայտ են գալիս պատմիչի խոր գիտելիքները բնափիլիսոփայության, սոցիալ-տնտեսական, բուսական ու կենդանական աշխարհի, հայ ժողովրդի կյանքի ու կենցաղի, հոգեբանության հարցերի վերաբերյալ։

Նախապես ծանոթ լինելով բյուզանդական և ասորական մտածողների ստեղծագործություններին, Վարդան Արևելցին իր «Ժղլանք» (ժողովրդական ժղլել, զրուցել բառից) ժողովածուում շոշափում է բազմազան հարցեր, որոնք առնչվում են բնության, երկնային մարմինների, մարդկային կյանքի, բուսական աշխարհի, շարժման ու դադարի, կրոնի, արվեստի, քերականագիտության, հասարակական-քաղաքական և այլ ու այլ հարցերի հետ։

Վարդան Արևելցուց պահպանվել է քերականագիտական երկու աշխատություն՝ «Վասն բանին մասանց» և «Մեկնութիւն քերականին» վերնագրերով։ Մասնագետների կարծիքով դրանցից առաջինը հայոց լեզվի համառոտ շարահյուսության նախատիպն է։ Արևելցին իր այս աշխատությունները համեմում է կենդանի օրինակներով, առակներով ու զրույցներով, շարադրում պարզ, հասկանալի, գրեթե ժամանակի խոսակցական լեզվով։ Երկրորդ աշխատությամբ նա հանգամանորեն ներկայացնում է մ. թ. ա. II դարի հույն հռչակավոր քերականագետ Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» հայերեն թարգմանության մանրամասն մեկնությունը։ Հեղինակը այստեղ այլ և այլ խնդիրների հետ մեկտեղ ուշագրավ մտքեր ու փաստեր է հաղորդում նաև հայ բարբառների մասին։

Վարդան Արևելցու «Աշխարհացույցը» իր արժեքով երկրորդն է միջնադարյան գրականության մեջ։ Աշխարհացույցի պարունակած նյութերը որոշակի հետաքրքրություն են ներկայացնում աշխարհագրական-տեղագրական, ապա նաև տնտեսական-ազգագրական հարցերի ուսումնասիրության համար։

---

[56] Ֆ. Անթաղյան, Վարդան Արևելցի, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1972, 4, էջ 61։

Այստեղ խոսվում է հին և հեղինակի ապրած ժամանակների Հայաստանի աշխարհագրական վիճակի, վարչատարածքային, բաժանումների, քաղաքների, գյուղերի, վանքերի և այլ օբյեկտների տեղադրության մասին։ Հեղինակը ընթերցողներին թյուրիմացություններից ազատելու համար հիշատակում է տեղանունների հին և նոր անունները, նշում նրանց փոփոխությունների ընթացքը և այլն։ Աշխատության գիտական արժեքը բարձրանում է նաև այն պատճառով, որ նրա հեղինակը շատ է շրջագայել Հայաստանում և անձամբ ծանոթացել երկրի աշխարհագրական վիճակին[57]։

Վարդան Արևելցու պատմագիտական երկը կոչվում է «Հաւաքումն պատմութեան»։ Այն գրված է ժամանակագրության ձևով և շատ նման է Մատթեոս Ուռհայեցու և Սամուել Անեցու աշխատություններին։ Արևելցու Պատմությունն սկսվում է այսպես ասած արարչագործությունից և հասցվում մինչև իր ժամանակները (1267 թ.)։ Հեղինակը որպես սկզբնաղբյուր օգտագործել է ինչպես հայ մատենագիրների, այնպես էլ օտար հեղինակների գործերը։ Գրավոր մատենագրական աղբյուրներից բացի, Վարդան Արևելցին դիմել է նաև վիմական արձանագրություններին, հայ և օտարազգի ժողովրդական բանավոր զրույցներին։ Իր գրքի մեջ պատմիչը բերում է նաև ժամանակի տեսությունը լեզուների մասին, ըստ որի մարդիկ սկզբում խոսել են մեկ լեզվով, հետո առաջացել են տարբեր լեզուներ, որոնց զարգացումը, սակայն, տանում է նորից ողջ մարդկության համար մեկ համընդհանուր լեզվի ստեղծում։

Վարդան Արևելցու Պատմության XII—XIII դարերին վերաբերող հատվածները ամենաարժեքավորն են այն պարզ պատճառով, որ դրանք շարադրված են արդեն ականատեսի և ժամանակակցի ձեռքով։ Արևելցու Պատմության մեջ հարուստ ու արժեքավոր տեղեկություններ են հաղորդվում ոչ միայն Հայաստանի և Կիլիկիայի հայկական պետության պատմության, այլև պարսիկների, բյուզանդացիների, մոնղոլների, խաչակիրների, Անդրկովկասի ժողովուրդների և քոչվոր ցեղերի անցյալի ու ներկայի մասին։ Եթե ի նկատի ունենանք, որ մեր պատմիչը պատմաքաղաքական դեպքերի հետ միասին որոշ չափով

[57] «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», քննական հրատարակություն Հ. Պերպերյանի, Փարիզ, 1960։



անդրադառնում է նաև սոցիալ-տնտեսական, առևտրական, մշակութային և ազգագրական խնդիրներին, ապա առանց վարանելու կարող ենք ասել, որ Վարդան Արևելցու Պատմությունը մի արժեքավոր սկզբնաղբյուր է ոչ միայն միջնադարյան Հայաստանի, այլև շատ երկրների ու ժողովուրդների անցյալի ուսումնասիրության համար։ Սակայն այդ բոլորի հետ մեկտեղ պետք է նշել, որ «Հաւաքումն պատմութեանը» ունի նաև թերություններ և պակասավոր կողմեր։ Ամենից առաջ այդ աշխատությունը չունի կուռ ու հետևողական կառուցվածք։ Հեղինակը մեծ մասամբ չի կարողանում բացահայտել երևույթների և իրադարձությունների ներքին պատճառական կապերը, նա ունի որոշ պարզամտություն և մեծ գիտնական լինելով հանդերձ, չի փայլում որպես առաջատար պատմիչ ու պատմագիտական սկզբունքների տեր անձնավորություն։

Վարդան Արևելցու Պատմությունը առաջին անգամ հրատարակվել է Մոսկվայում 1861 թ. և սխալմամբ վերագրվել Վարդան Բարձրբերդցուն։ Երկրորդ հրատարակությունը կատարվել է Վենետիկում 1862 թ.։ 1861 թվականին այն Մ. Էմինը հրատարակել է նաև ռուսերեն՝ Մոսկվայում։ Վարդանի Պատմությունը հատվածաբար ֆրանսերեն են թարգմանել Է. Դյուլորիեն (Փարիզ, 1860, 1869), Ժ. Միլերմանսը (Փարիզ, 1927), թուրքերեն՝ Հ. Անդրեասյանը (Անկարա, 1937)։ Արևելցու և նրա ստեղծագործությունների մասին գրվել են շատ ուսումնասիրություններ։ Նրա նկատմամբ հետաքրքրությունը շարունակվում է նաև մեր ժամանակներում[58]։

**Կիրակոս Գանձակեցի**

Միջնադարյան հայ հեղինակներից քչերից մեկն էլ Կիրակոս Գանձակեցին է, որ իր մասին որոշ կենսագրական տեղեկություններ է հաղորդում։ Դրանց ավելացնելով նաև ժամանակակիցների թռուցիկ վկայությունները, հնարավոր է լինում ինչ-որ չափով ընդհանուր պատկերացում կազմել այն ժամանակվա հայ անվանի մտավորականի կյանքի ուղու մասին։ Այժմ վերջնականապես պարզված է, որ պատմիչի Գանձակեցի մականուն-ազգանունը ոչ թե նշանակում է նրա անպայման Գանձակ քաղաքից, այլ «յաշխարհէն Գանձա-

[58] Տե՛ս Փ. Աբրապյան, Վարդան Արևելցի. կյանքն ու գործունեությունը, Երևան, 1987։

կայ» լինելը, որի մասին հեղինակն ուղղակիորեն մատնանշում է իր գրքում։ Ցավոք Կիրակոսի ծննդավայրի որոշակի տեղի մասին մենք դրանից բացի այլևս ոչ մի ուրիշ տեղեկություն չունենք։ Նշենք նաև, որ մատենագրության մեջ երբեմն-երբեմն հիշատակվող Կիրակոս Գետիկցին և Կիրակոս Արևելցին, նույն ինքը՝ պատմիչ Կիրակոս Գանձակեցին է[59]։

Կիրակոսը ծնվել է 1200—1202 թվականներին, ըստ երևույթին՝ հասարակ շինականի ընտանիքում։ Մինչև 1220-ական թվականների կեսերը, ինչպես ինքն է ասում, նա ապրել ու կրթություն է ստացել Մխիթար Գոշի հիմնադրած հռչակավոր Նոր Գետիկ վանքում։ Հետո իր ուսուցիչ Վանական վարդապետի հետ տեղափոխվում է Տավուշի Խորանաշատի վանքը։ Սակայն 1225 թ. միջինասիական հրոսակախմբերի պարագլուխ Ջալալ էդ-Դինի և 1236 թ. մոնղոլների արշավանքները խախտում են նաև Կիրակոսի խաղաղ կյանքը։ Վերջին դեպքերի ժամանակ նա գերի է ընկնում մոնղոլների ձեռքը, ծառայում նրանց մոտ թրև գրագիր, իսկ հետո փախչում և ապաստանում է դարձյալ Նոր Գետիկ վանքում, որտեղ մնում է բավական երկար։ 1260-ական թվականներին Գանձակեցին այցելում է Կիլիկիա և մի քանի տարի շարունակ Սիս մայրաքաղաքում զբաղվում գիտական-ստեղծագործական աշխատանքով։ Նա Կիլիկիայից վերադառնում է 1268—1269 թվականներին։ Վախճանվել է Նոր Գետիկում 1271 թվականին և, հավանաբար, այնտեղ էլ թաղվել։

Կիրակոս Գանձակեցու գրական-ստեղծագործական ժառանգությունը մեծ չէ։ Նա թողել է «Պատմութիւն Հայոց» աշխատությունը, մի քանի թղթակցություններ իր ժամանակակիցների հետ և կրոնաեկեղեցական բնույթի ուրիշ գործեր։ Մասնագետները գտնում են, որ նա լրացրել է նաև հայկական եկեղեցական ընդարձակ ժողովածուներից մեկը՝ «Յայսմաւուրքը», ավելացնելով նրա մեջ 112 (մեկ այլ ձեռագրում՝ 170) տոնականներ[60]։ Նա իր ուսուցիչ Վանական վարդապետի և ընկերոջ՝

---

[59] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Սեանջանյանի, Երևան, 1961, էջ ԺԱ։

[60] Հայսմավուրք գրաբար անվանումը բառացի նշանակում է «այսօր» կամ ավելի ճիշտ՝ «այս օրը», «այս օրերի մեջ» հիշատակվող տոների գիրք։ Տե՛ս Մայիս Ավդալբեկյան, «Յայսմաւուրք» ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը, Երևան, 1982, էջ 9։



Վարդան Արևելցու հետ մեծ գործ է կատարել նաև ուսումնամանկավարժական բնագավառում։

Կիրակոս Գանձակեցու հեղինակած գործերի մեջ, սակայն, ամենակարևորը և պատմագիտական տեսակետից բարձր արժեք ներկայացնողը նրա «Պատմութիւն Հայոց»-ն է, որը, ի դեպ, ձեռագրերում և բազմաթիվ հրատարակություններում կրում է այլևայլ անվանումներ։ Գանձակեցու Պատմությունը առաջաբանից բացի, ունի երկու հիմնական բաժիններ, որոնք ամփոփված են 65 գլուխների մեջ և ընդգրկում են Հայաստանի պատմության մի շատ մեծ ժամանակաշրջան՝ Գրիգոր Լուսավորչից սկսած (III դար) մինչև 1266 թվականը։ Աշխատությունը ավարտված ու ամփոփված չէ, հավանաբար, պատմիչի առողջական վիճակի վատթարացման կամ մեկ այլ պատճառով, որը մեզ հայտնի չէ։

Կիրակոս Գանձակեցին իր Պատմությունը սկսել է գրել 1241 թվականից, հետևաբար նա այդ երկի վրա աշխատել է շատ երկար ժամանակ՝ շուրջ 25 տարի։

Պատմության առաջաբանում Կիրակոս Գանձակեցին սովորականի նման խոսում է գրության հանգամանքների մասին, իսկ հետո անցնում Պատմության բուն նյութի շարադրանքին՝ իր նախորդների նման օգտագործելով ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր սկզբնաղբյուրները։ Որպես ժամանակի հայ հոգևորականության ներկայացուցիչ, վարդապետ Կիրակոս Գանձակեցին ևս իր Պատմության մեջ գրավոր սկզբնաղբյուրների շարքում լայնորեն օգտագործում է Աստվածաշունչը և օտար ու հայրենի հեղինակավոր դեմքերի՝ Հովհան Ոսկեբերանի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթևի, Հովհան Օձնեցու և այլոց ստեղծագործությունները։ Գրքի գաղափարական կողմը ապահոված լինելու և գուցե նաև նրան, իր կարծիքով, մեծ հեղինակություն տալու համար Գանձակեցին շատ հաճախ մեջբերումներ է կատարում եկեղեցական գրականությունից կամ իր ասածները անառարկելիորեն հաստատելու համար ուղղակի վկայակոչում է այս կամ այն ճանաչված անձնավորությանը։

Կիրակոս Գանձակեցու օգտագործած գրավոր սկզբնաղբյուրների մեջ, բնականաբար, առանձնահատուկ տեղ են գրավում հայ պատմիչներն ու նրանց գործերը, որոնց նա ամենայն բարեխղճությամբ անվանապես հիշատակում է իր գրքի առա-

ջաբանում։ Այդ հեղինակներն են՝ Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Եղիշեն, Ղազար Փարպեցին, Մովսես Կաղանկատվացին, Սեբեոսը, Ղևոնդը, Թովմա Արծրունին, Շապուհ Բագրատունին, Հովհաննես Դրասխանակերտցին, Ուխտանեսը, Մատթեոս Ուռհայեցին, Ստեփանոս Ասողիկը, Արիստակես Լաստիվերտցին և Սամուել Անեցին։ Կիրակոսը մեծ ակնածանքով է հիշատակում նաև իր ուսուցիչ՝ «հանճարեղ Վանական» վարդապետին, որի պատմագիտական երկը դրժբախտաբար չի պահպանվել։

Շարադրելով Հայաստանի, ապա նաև Կիլիկիայի հայկական պետության քաղաքական ու եկեղեցական պատմությունը III դարից սկսած մինչև XII դարի վերջերը, հիմնականում վերոհիշյալ պատմիչների երկերի հիման վրա, Կիրակոս Գանձակեցին օգտագործում է նաև մեզ անծանոթ որոշ բնագրեր և անում ճշտումներ, որոնք, անշուշտ, հայագիտության համար աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունենալով հանդերձ, անտարակույս զիջում են նրա գրքի այն մասերին, որոնք ընդգրկում են XII դարի վերջերից մինչև 1260-ական թվականների դեպքերը։ Գրքի այս մասը Կիրակոս Գանձակեցին շարադրել է որպես իրադարձություններին ականատես ու ականջալուր հեղինակ, ուստի այն մեզ համար ունի առաջնային ու կարևոր նշանակություն։ Պատմության այս հատվածները շարադրելու ժամանակ հեղինակը օգտագործել է նաև ուրիշների բանավոր ասածները, ժողովրդական զրույցները, ավանդությունները, ամեն անգամ շեշտելով «Զոր լուաք ականջօք մերովք և տեսաք աչօք» կամ այլ արտահայտություններ՝ ընթերցողին հավաստելու դրանց ճշմարիտ ու ստուգապատում լինելը։ Տեղ-տեղ էլ պատմիչը ուղղակիորեն տալիս է նրանց անունները, ովքեր իրենց տեսածների կամ լսածների մասին պատմել են իրեն։

Կիրակոս Գանձակեցին իր ուշադրությունը կենտրոնացնելով հիմնականում մոնղոլների տիրապետության շրջանի պատմության վրա՝ հանգամանորեն է պատմում նաև XII դարի վերջերում Կիլիկյան հայկական պետության և Հայաստանի հարևան Վրացական թագավորության կենտրոնացման ու ռազմաքաղաքական հզորացման մասին։ Պատմիչը առանձին հաճույքով ու հպարտությամբ ներկայացնում է նաև հայ-վրացական զինակցական կապերի ամրապնդման և երկու ժողովուրդ-



ների ուժերի համախմբման գործում Գեորգի III-ի, Թամար թագուհու և Զաքարյան եղբայրների անգնահատելի վաստակի պատմությունը։ Գանձակեցին պատմում է նաև Զաքարյանների և հայ-վրացական ռազմական ուժերի հաղթական կռիվների մասին՝ Հայաստանը տակնուվրա անող թուրք-սելջուկյան հրոսակախմբերի դեմ և օտար հարստահարիչներից իր հայրենիքի մի զգալի հատվածի ազատագրության մասին։ Հետո անդրադառնում է հայկական ազատագրված երկրամասերում սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի աշխուժացման հարցերին և այլն։

Աշխատության մեջ Գանձակեցին նույն մանրամասնությամբ շարադրում է նաև խորեզմական հրոսակախմբերի 1220-ական թվականներին Հայաստանում և Անդրկովկասում կատարած խժդժություններին, մոնղոլների արշավանքների և նրանց ծանր տիրապետության առաջին տասնամյակների պատմությունը։ Այստեղ պատմիչը բավական լայն տեղ է հատկացրել օտարերկրյա նվաճողների դեմ հայերի մղած հերոսական կռիվներին, Հայաստանի սոցիալ-տնտեսական, իրավահասարակական և մշակութային կյանքին։ Գիտական մեծ արժեք են ներկայացնում Գանձակեցու բոլոր այն տվյալները, որոնք վերաբերում են մոնղոլների հարկային քաղաքականությանը, Հայաստանի քաղաքների, ավանների, բնակավայրերի ու մշակութային կենտրոնների հիմնահատակ ավերմանը, առևտրի ու արհեստների քայքայմանը և երկրի տնտեսական կյանքի փլուզմանը։ Այս ծանր պայմանների հարկադրանքի տակ էր, որ շարունակվում էր Հայաստանից բնավեր հայության զանգվածային արտագաղթը։ Իրենց հայրենիքը թողնում հեռանում էին հատկապես քաղաքների և խոշոր բնակավայրերի բնակիչները և առևտրաարհեստավորական խավերը։

Շրջահայաց պատմիչը, կարճատև գերության ժամանակ և հետագայում մոնղոլական տիրապետության հաստատման օրերին ոչ միայն իր գիտեցած պարսկերենին ավելացրել էր նաև մոնղոլերենն ու սելջուկերենը, այլև իրեն հատուկ նրբանկատությամբ ուսումնասիրել էր մոնղոլների նիստուկացը, կենցաղը, սովորությունները, որոնց մասին նրա տված տեղեկությունները մոնղոլագիտության համար ունեն բացառիկ նշանակություն։ Դրանում համոզվելու համար հետևենք Կիրակոս Գանձակեցու Պատմության համապատասխան հատվածին.

«էին... ակն նեղ և արագատես, ձայնն նուրբ և սուր, բազմակեացք և տեղք։

Յորժամ անկանէր, յաճախ ուտէին և ըմպէին անյագ, և յորժամ ոչ անկանէր, ժուժկալք էին։ Ուտէին զամենայն կենդանիս՝ զսուրբս և զանսուրբս, և զմիս ձիոյ առաւել մեծարէին, անդամ անդամ յօշեալ և եփեալ կամ խորովեալ առանց աղի, և ապա մանր կոտորեալ և թացեալ յաղաջուր, այնպէս ուտէին. ոմանք ի գուռս՝ ըստ նմանութեան ուխտուց և կէսք նստելով ուտէին, և յուտելն հասարակ բաշխէին տէրանց և ծառայից, և յըմպելն զղմուզ կամ զգինի, առեալ մի ոմն մեծ ամանով ի ձեռս իւր և փոքր բաժակով առեալ ի նմանէ՝ ցանէր ընդ երկինս, և ապա յարևելս, յարևմուտս, ի հիւսիս և ի հարաւ, և ապա իւր իսկ ցրուողին զայն սակաւ մի ըմպեալ ի նմանէ՝ մատուցանէր աւագագունին։ Եւ թէ ոք բերէր նոցա կերակուրս կամ ըմպելիս, նախ՝ բերողին տային ուտել և ըմպել, և ապա՝ ինքեանք ուտէին և ըմպէին, զի մի ի մահացու դեղոց ինչ դժրիցին։

Որչափ և կամէին՝ կանայս առնէին, բայց զպոռնիկս ամենևին ոչ ապրեցուցանէին ընդ կանայս իւրեանց., բայց ինքեանք՝ ուր և հանդիպէին այլազգեաց, անխտիր խառնակէին։ Եւ գողութեան ատելիք էին, մինչ զի չարաչար մահուամբ սպանանէին»[61] և այլն։

Կիրակոս Գանձակեցին իր գրքում մի հատուկ գլուխ էլ նըվիրում է Հայոց Արևելից կողմանքին, տեղ-տեղ նշելով իր սկզբնաղբյուրը՝ Մովսես Կաղանկատվացուն։

Կիրակոս Գանձակեցին պատմական դեպքերի և դեմքերի վերաբերյալ իր վերաբերմունքն անմիջականորեն արտահայտող հեղինակ է։ Նա որքան անհունորեն ատում է իր հայրենիքը ստրկացնող և հարազատ ժողովրդին տառապանքներ պատճառող օտարերկրյա նվաճողներին ու ներքին թշնամիներին, նույնքան էլ հպարտանում է հայ ռազմական, քաղաքական ու մշակութային նշանավոր գործիչներով, որոնք պայքարում են թշնամիների դեմ կամ նոր ստեղծագործություններով հարստացնում հայ մշակույթի հոգևոր գանձարանը։ Սակայն լինելով իր ժամանակի և հայ հոգևորականության ներկայացուցիչը, Գանձակեցին ևս պատմության ողջ ընթացքը, մարդկությանը բաժին ընկած չարիքն ու բարիքը կապում է աստծո ողորմածության և նրա կողմից նախօրոք սահմանված լինելու հետ, որը պատմիչի համար նույնպես անքննադատելի է ու մահկանացու մարդու միջամտությունից դուրս։ Կիրակոս Գանձակեցու առավելությունը, սակայն, իր ժամանակակիցներից շատերի համեմատությամբ այն է, որ նա այդ մռայլ ժամանակներում անձամբ ճաշակելով ու ականատես լինելով հազար-հազարների գառնություններին, չի հուսահատվում, չի ընկճվում, այլ հետագա սերունդների լավ ապագայի նկատմամբ ցուցաբերում է լավատեսական խոր համոզվածություն ու բացականչում՝ «վասընզի յօժարեցաք մեզ յիշատակ թողուլ յազգս՝ որ գալոց են, քանզի ակն ունիմք մեք յուսով փրկութեան ի նեղութենէ աստի, որ պաշարեալս է զմեզ...»։

Վերևում ասվածներից կարելի է եզրակացնել, որ Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ը մի արժեքավոր սկզբնաղբյուր է ոչ միայն Հայաստանի, այլև Կիլիկիայի, Վրաստանի, Աղվանքի և մոնղոլների պատմության ուսումնասիրության համար։ Այդ է պատճառը, որ նրա պատմագիտական արժեքը դուրս գալով զուտ հայագիտական շրջանակներից, անվերապահորեն ձեռք է բերում համընդհանուր ճանաչում։

Կիրակոս Գանձակեցու Պատմության բնագիրը լույս է տեսել մի քանի անգամ։ Գիտահամեմատական հրատարակությունը, ընդարձակ առաջաբանով ու ծանոթագրություններով, կատարել է Կ. Մելիք-Օհանջանյանը (Երևան, 1961)։ Պատմությունը ունի նաև ֆրանսերեն (Ս. Պետերբուրգ, 1870), ռուսերեն (Մոսկվա, 1976) և աշխարհաբար թարգմանություններ (Երևան, 1982)։

**Գրիգոր Ակներցի**

Գրիգոր Ակներցին XIII դարի հեղինակ է, Վարդան Արևելցու և Կիրակոս Գանձակեցու դասընկերը։ Սրանք երեքն էլ նշանավոր գիտնական Վանականի սաներն էին և իրենց ուսումը հիմնականում ստացել են նրա մոտ։ Գրիգոր Ակներցու ծննդավայրի և կենսագրության մասին մեզ շատ բան հայտնի չէ։ Գիտենք միայն, որ նա իր վանական ու գիտական գործունեությունը ծավալել է Կիլիկիայի նշանավոր Ակներ վանքում (կառուցված 1198—1203 թվականներին), որ սկզբնաղբյուրներում հիշատակվում է որպես «ականավոր» և «գերահռչակ» գրչության կենտրոն։ Հենց այստեղ էլ հավանաբար 1270-ական

[61] Կիրակոս Գանձակեցի, էջ 271—272։

թվականների կեսերին, խոր ծերության հասակում Գրիգոր Ակներցին կնքում է իր մահկանացուն։ Մեզ հայտնի չեն նաև այն շարժառիթները, որոնց թելադրանքով Գրիգորը Արևելյան Հայաստանից տեղափոխվել ու հաստատվել է Կիլիկիայում։

Միջնադարյան հայկական պատմագիտական սկզբնաղբյուրների շարքում որոշակի հետաքրքրություն ներկայացնողներից մեկն էլ Գրիգոր Ակներցու «Պատմութիւն վասն ազգին Նետողաց» վերնագիրը կրող աշխատությունն է, որն անցյալում թյուրիմացաբար հրատարակվել է ոմն Մաղաքիա աբեղայի անունով[62]։

Գրիգոր Ակներցու համար պատմություն գրելու առիթը ծագել է 1273 թվականին Ակներում նրա կողմից ասորի հեղինակ Միխայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն թարգմանությունն ընդօրինակելը։ Իր թողած հիշատակարանում, որը կցված է Միխայել Ասորու «Ժամանակագրության» Երուսաղեմի 1871 թվականի հրատարակությանը, Գրիգոր Ակներցին նախ հայտնում է, որ այդ «Ժամանակագրությունը» ավարտվում է 1229 թվականով, հետո նշում, որ հիշյալ ձեռագիրը ինքն ընդօրինակել է 1273 թվականին, ապա խոստանում է շարունակել այն և իր հեղինակությամբ լրացնել 1229—1273 թվականների, այսինքն՝ մնացած 44 տարիների պատմությունը։ Գրիգորի հիշատակարանում այդ մասին կարդում ենք հետևյալը. «... և այժմ է թիւս Հայոց ՉԻԲ (1273), որ գրեցաւ գիրքս ձեռամբ տառապեալ Գրիգորոյ. զոր կամաւքն Աստուծոյ գրեսցուք և մեք զպակասութիւն սորա ամաց քառասուն և չորից»[63]։ Սակայն Գրիգորը այստեղ կատարում է մի փոքր սխալ, կարծելով, որ Միխայել Ասորին իր «Ժամանակագրությունը» հասցնում է մինչև 1229 թվականը։ Իրականում ասորի հեղինակի աշխատությունը ավարտվում է 1196 թվականով, որից երեք տարի հետո՝ 1199 թվականին մահանում է ինքը՝ Միխայել Ասորին, մի բան, որին Գրիգոր Ակներցին, կարող էր տեղյակ չլինել։ Իսկ թյուրիմացությունն էլ առաջացել էր պարզապես նրանից, որ Գրիգորն իր ձեռքի տակ ունեցել էր «Ժամանակագրության»

[62] Մանրամասնությունները տե՛ս Ս. Մելիք-Բախշյան, Ակների գրչության դպրոցը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 3, էջ 142։

[63] «Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի», Երուսաղեմ, 1871, էջ 526։



1248 թվականին Իշոխ քահանայի կատարած հայերեն թարգմանությունը, որի մեջ 1196-ից մինչև 1229 թվականը շարունակել ու լրացրել էր Վարդան վարդապետը[64]։ Մեզ համար այստեղ կարևորն այն է, որ վերոհիշյալ հիշատակարանում Գրիգորը խոստանում է գրել 1229—1273 թվականների 44 տարիների պատմությունը, և նա իրականացնում է իր խոստումը, երբ Ակների վանքի առաջնորդ Ստեփանոսը նրան տալիս է այդ գործը կատարելու պաշտոնական հանձնարարություն։ Ահա ինչ է ասում այդ մասին գրքի պատվիրատուն Գրիգոր Ակներցու երկրորդ հիշատակարանում. «Արդ՝ ես նուաստս յամենայնի Ստեփաննոս հայր Ականց անապատիս, ետու գրել զպատմութիւն տեառն Միխայելի պատրիարքի Ասորւոց, զոր է գրել ծայրաքաղ յԱդամայ մինչեւ ի ծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. և ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ի Հայոց թուականին ՈՀԸ (1229). և զպատմութիւն Տաթարին, այսինքն՝ նետողաց ԽԴ (44) ամաց գործելոց մինչեւ առ մեզ»[65]։ Դրանից հետո Գրիգորը, չնայած վատառողջությանը, այդ աշխատանքը ավարտում է և իր թողած հատուկ հիշատակարանում խնդրում ուրիշների հետ հիշել նաև՝ «զպատուական քահանայն զՅովհաննէս, որ զվերջին տետրս գրեաց, զի մեք էաք յոյժ տկար և անխել»[66]։

«Պատմութիւն վասն ազգին նետողացը», ինչպես տեսնում ենք, ընդգրկում է փոքր ժամանակաշրջան՝ ընդամենը 44 տարիների դեպքերը և հիմնականում վերաբերում է մոնղոլներին, որոնց այն ժամանակ հայ հեղինակները հաճախ են անվանում «ազգն նետողաց»։ Սակայն, չնայած իր փոքրածավալությանը, Գրիգոր Ակներցու աշխատությունը չափազանց հետաքրքիր և արժեքավոր սկզբնաղբյուր է XIII դարի կեսերի Հայաստանի և Կիլիկիայի պատմության ուսումնասիրության համար։ Այստեղ հեղինակը մեկ միասնական շարադրանքով խոսում է մոնղոլների ծագման, Չինգիզ-խանի զորավարների կատարած արշավանքների ու ասպատակությունների մասին, պատմում է մոնղոլների կողմից Հայաստանի նվաճման, նրանց կատարած կեղեքումների ու հարկային քաղաքականության մասին։ Գրը-

[64] Ստ. Մելիք-Բախշյան, նշվ. աշխ., էջ 144—145։

[65] Միխայել Ասորի, նույն տեղում՝ «Յիշատակարան երկրորդ», էջ 44։

[66] Նույնը, էջ 45։

քում արժեքավոր տեղեկություններ կան մոնղոլների մարտավարության, նրանց արտաքին տեսքի և նույնիսկ լեզվի ու սովորությունների մասին։ Հասկանալի է, որ հատկապես մոնղոլներին վերաբերող տվյալները, մի զգալի չափով լրացնելով Կիրակոս Գանձակեցու ասածները, ունեն պատմական կարևորագույն արժեք նաև մոնղոլագիտության համար։ Գրիգոր Ակներցին իր գրքում զգալի տեղ է հատկացնում նաև Կիլիկիային, պատմում է հայ-եգիպտական փոխհարաբերությունների մասին, անդրադառնում Կիլիկիայի ներքին կյանքի հարցերին և այլն[67]։ Եթե դրան ավելացնենք նաև այն, որ «Պատմութիւն վասն ազգին Նեստորաց»-ը շարադրված է շատ մատչելի, գրեթե խոսակցական լեզվով, ապա պարզ կլինի, որ այն պատմական կարևոր սկզբնաղբյուր լինելուց բացի, բավական նյութ կարող է տալ այն ժամանակի հայերենի ուսումնասիրության համար։

Գրիգոր Ակներցու «Պատմութիւն վասն ազգին Նեստորաց»-ի լավագույն հրատարակությունը իրականացրել է Ն. Պողարյանը (Երուսաղեմ, 1974)։ Այն լույս է տեսել նաև ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն և վրացերեն թարգմանություններով։

**Սմբատ Սպարապետ**

XIII դարի պետական ու ռազմական նշանավոր գործիչ, պատմաբան ու իրավագետ Սմբատ Սպարապետը էմբրոնի (Կիլիկիա) Հեթումյան իշխանական տոհմից էր, որի ներկայացուցիչները բարձր պաշտոններ գրավելով Ռուբինյանների արքունիքում արդեն XII—XIII դարերում լայն ճանապարհ էին հարթել իրենց համար Կիլիկյան հայկական թագավորության մտավոր ու քաղաքական կյանքի ամենաբազմազան ոլորտներում։ Հենց Հեթումյանների և նրանց տոհմապետ՝ Կիլիկիայի հայկական զորքերի սպարապետ Կոնստանտին պայլի գլխավորությամբ չեզոքացվեցին և մասամբ ոչնչացվեցին օտար ու օտարամոլ այն տարրերը, որոնք 1219 թվականին Լևոն II Ռուբինյանի մահվանից հետո փորձում էին գրավել Կիլիկիայի թագավորական գահը։

1226 թվականին Կոնստանտին պայլի որդու՝ Հեթում I-ի գահակալումից սկսած, Կիլիկիայի ռազմաքաղաքական հիմքերը էլ ավելի ամրապնդվեցին։ Եվ երբ 1243 թվականին մոնղոլները ջախջախելով Իկոնիայի սելջուկյան սուլթանության ուժերը, ընդհուպ մոտեցան Կիլիկիայի հյուսիսային սահմաններին, Հեթումը մի պատվիրակություն ուղարկեց մոնղոլական զորքերի հրամանատար Բաչու Նոյոնի մոտ՝ խաղաղության դաշն կնքելու համար։ Պատվիրակությունը գլխավորում էր Կոնստանտին պայլը իր մյուս որդու՝ Սմբատի հետ միասին։ Ավելորդ է բացատրել, թե որքան մեծ ու կենսական նշանակություն ուներ ողջ Արևելքը սասանող մոնղոլական վտանգը կանխելը Կիլիկիայի համար։ Հայկական պատվիրակության գիվանագիտական առաքելությունը ավարտվեց հաջողությամբ և կողմերի միջև խաղաղություն հաստատվեց։ Հայ-մոնղոլական դիվանագիտական ու ռազմաքաղաքական կապերի ստեղծումն ու հետագա ամրապնդումն էլ դարձավ այն երաշխիքը, որի շնորհիվ Կիլիկիան իր անկախության գրեթե ողջ ընթացքում զերծ մնաց մոնղոլների ներխուժումներից։

Պատմական խոշոր նշանակություն ունեցող այս իրադարձությունների մեջ իր ավանդն ուներ նաև Սմբատ Սպարապետը։

Սմբատը, մի ձեռագրի տվյալով, ծնվել է 1208 թվականին («Ի թուին ՈՇԷ ծնաւ Սմբատ Գունդուստապլն թարգմանող պատմութեանս»)։ Նա դեռ պատանեկան տարիներին աչքի է ընկնում իր ընդունակություններով և թագավորից պարգևներ ստանում։ Փոխարինելով հորը և ստանձնելով Կիլիկիայի հայկական թագավորության զորքերի սպարապետի, կամ ինչպես այն ժամանակ ընդունված էր անվանել՝ գունդստաբլի պաշտոնը, նրան ուղղակի կոչում են Սմբատ Սպարապետ կամ Գունդստաբլ։

Սմբատ Սպարապետը իր պաշտոնավարության ամբողջ ժամանակաշրջանում հաստատակամորեն և քաջաբար կռվում էր Կիլիկիայի վրա հարձակվող թշնամական հորդաների դեմ և հենց այդ կռիվներից մեկում էլ՝ 1276 թվականին զոհվեց։

Սմբատ Սպարապետը միաժամանակ հմուտ ու ճկուն դիվանագետ էր, որի ջանքերով կանոնավորվում էին Հայոց թագավորության արտաքին հարաբերությունները ինչպես արևմտյան տերությունների, այնպես էլ մոնղոլական իշխանությունների հետ։ Սմբատ Սպարապետն էր, որ իր եղբոր՝ Հեթում I-ի հանձնարարությամբ հայոց պատգամավորության գլուխն անցած՝ 1246 թվականին մեկնեց Կարակորում, մոնղոլական Գույուկի մոտ ու նրա հետ կնքեց Կիլիկիայի ինքնուրույ-

[67] Գրիգոր Ակներցի, Պատմութիւն թաթարաց, Երուսաղեմ, 1974։

նությունը երաշխավորող մի նոր պայմանագիր։ Այդ պայմանագիրը դիվանագիտական ուժ և հաստատում ստացավ Մանգու ղանի կողմից, 1253 թվականին, երբ Հեթումն անձամբ Սմբատ Սպարապետի ուղեկցությամբ մեկնեց նրա մոտ՝ Մոնղոլիա։

Մեծ ու բազմազան է նաև Սմբատ Սպարապետի վաստակը գիտության բնագավառում։ Նա թողել է պատմագիտական, իրավագիտական և գրական արժեքավոր ժառանգություն, որի նկատմամբ խոր հետաքրքրությունը շարունակվում է մինչև այսօր ինչպես հայ, այնպես էլ օտարազգի մասնագետների շրջանում։ Կարելի է զարմանալ Սմբատ Սպարապետի մեծ եռանդի ու աշխատասիրության վրա, որ նա կարողանում էր այն անհանգիստ ժամանակներում, պետական գործերով արտակարգ ծանրաբեռնված լինելով, զբաղվել նաև մատենագրությամբ։

Սմբատ Սպարապետը գրել է փիլիսոփայական և պատմական բովանդակությամբ մի շարք պոեմներ, որոնցից երևում է, որ նա ծանոթ է եղել հայկականից բացի նաև հունական (Արիստոտել) և այլ փիլիսոփայական աշխատությունների, որոնք անպայման կարդում էր բնագրերով։ Բնորոշ է, որ Սմբատը, ինչպես իր գրական, այնպես էլ պատմաիրավագիտական ստեղծագործությունները գրել է Կիլիկիայի իր ժամանակի խոսակցական լեզվով։ Դրա համար էլ նրա երկերը մասսայական ընթերցանության և մատչելիության շատ մեծ հնարավորություններ ունեին։ Դրանք արժեքավոր սկզբնաղբյուրներ են նաև հայոց լեզվի պատմության և հատկապես միջին հայերենի ուսումնասիրության համար։

Սմբատ Սպարապետի գրական ու գիտական հարուստ ժառանգության մեջ որոշակի տեղ է գրավում նրա «Տարեգիրքը»։ 1849 թվականին էջմիածնի մատենադարանում պահպանվող «Տարեգրքի» երկու ընդօրինակությունների մասին արևելագետ Բրոսսեի արած հաղորդումից հետո, այն երկու անգամ լույս ընծայվեց՝ 1856 թվականին Մոսկվայում և 1859-ին Փարիզում։ Վերջերս Վենետիկի մատենադարանում հայտնաբերվեց այդ աշխատության մինչ այդ տակավին անծանոթ ձեռագիրը՝ գրված 1315 թվականին, որը ծավալով երկու անգամ մեծ է մինչ այդ հայտնի ու հրատարակված օրինակից և պարունակում է ավելի հարուստ նյութ։ Պետք է ենթադրել, որ այս ձեռագիրը



ընդօրինակված լինելով Սմբատ Սպարապետի մահվանից ընդամենը երեսուն տարի հետո, ավելի մոտ ու հարազատ պետք է լինի հեղինակի բնագրին կամ նույնիսկ արտագրված լինի ղրանցից։ Վենետիկյան օրինակի հրատարակությունը առաջաբանով ու համապատասխան ծանոթագրություններով իրականացրել է հայագետ Սերոբե Ագրյանը 1956 թվականին։

«Տարեգիրքը» Սմբատ Սպարապետը գրել է կիլիկյան խոսակցական լեզվով, համեմելով լատիներեն, հին ֆրանսերեն, արաբերեն, պարսկերեն, հունարեն շատ բառերով ու արտահայտություններով։ «Տարեգիրքը» գրելու համար Սմբատը լայնորեն օգտագործել է իրեն ծանոթ մի քանի հայ և օտար հեղինակների գործերը։ Պարզվում է, որ նա ամենից շատ օգտվել է Մատթեոս Ուռհայեցու, Սամուել Անեցու և Միխայել Ասորու ժամանակագրություններից և իր գիրքն էլ հենց շարադրել է ժամանակագրության ձևով։ Տեղ-տեղ առանձին դեպքերի շարադրությունը բառացի համընկնում է Ուռհայեցու հետ։ Սակայն քանի որ մեր հեղինակը Մատթեոս Ուռհայեցու անունը չի հիշատակում, ենթադրում են, որ նրանք երկուսն էլ իրարից անկախ օգտագործել են միևնույն արխիվային նյութերը, որոնք այդ ժամանակ գտնվելով Կիլիկիայի արքունիքում կամ գրչության կենտրոններում, միանգամայն մատչելի էին Սմբատ Սպարապետի նման մեծ պաշտոնյայի համար։

«Տարեգիրքը» ընդգրկում է 951—1271 թվականների ժամանակաշրջանը, այսինքն՝ 320 տարվա պատմություն։ Մինչև XII դարի երկրորդ կեսերը տրվող պատմության մասին Սմբատ Սպարապետը միայն առանձին դեպքերում է նորություններ ավելացնում իր նախորդների ասածների վրա, իսկ դրանից հետո, մինչև 1271 թվականը, նրա «Տարեգիրքը» ինքնուրույն գործ է և շատ արժեքավոր սկզբնաղբյուր ոչ միայն հայ, այլև հարևան ժողովուրդների պատմության համար։ Կարևոր է նշել, որ Սմբատ Սպարապետը XIII դարի պատմական անցուդարձի ոչ միայն լոկ ականատեսը և ժամանակակիցն է, այլև ի պաշտոնե շատ դեպքերի մասնակիցն ու դրանց ամենից մոտ կանգնած անձնավորությունը, հետևաբար, այդ ժամանակաշրջանի մասին եղած սկզբնաղբյուրներից գուցե և ոչ մեկը այնքան վստահելի չէ, որքան Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը»։

Սմբատ Սպարապետը հայ ժողովրդի պատմությունը չի

անջատում շրջակա երկրների ժողովուրդների պատմությունից։ Ընդհակառակն, նա ամբողջ Մերձավոր Արևելքի պատմաքաղաքական դեպքերի զարգացման ֆոնի վրա էլ հյուսում է իր պատմությունը։ Նրա գրքում մենք հանդիպում ենք արժեքավոր տեղեկությունների հայերի հետ սելջուկյան իշխանությունների, Վրաստանի, Բյուզանդիայի և արևմտյան պետությունների փոխհարաբերությունների մասին։ «Տարեգրքում» կարևոր տեղ է հատկացված նաև խաչակիրներին ու նրանց արշավանքներին և Կիլիկիայի հայկական իշխանությունների ու նրանց փոխհարաբերություններին։ Պատմիչը խոսում է նաև Մեծ Հայքից հայերի զանգվածային արտագաղթի և Կիլիկիայի հայկական պետության ստեղծման ու հայ ժողովրդի մի զգալի հատվածի ուժերի համակենտրոնացման գործում նրա կատարած կարևորագույն դերի մասին։ Հանգամանորեն ներկայացնելով Կիլիկիայի և մոնղոլական պետության ռազմական ու քաղաքական կապերի պատմությունը, Սմբատն, իր «Տարեգիրքն» ավարտում է խաչակիրների թագավորության անկումով և եվրոպական գաղութարարների մնացորդների արտաքսումով Մերձավոր Արևելքից։

Պատմական թվականներն ու դեպքերը մեծ մասամբ ճշմարտացի ներկայացնելով և պատմահրավագիտական խոր գիտելիքներ ունենալով հանդերձ՝ Սմբատ Սպարապետին նույնպես հատուկ է ժամանակի սահմանափակությունը։ Նա երբեմն-երբեմն պատմական կարևոր իրադարձությունների հաջող կամ անհաջող ընթացքը բացատրում է թեթևակիորեն կամ դրանք վերագրում է աստվածային ուժերին, հավատում է հրաշքներին, ընկնում չափազանցությունների մեջ և այլն։ Որպես տիրող դասակարգի ներկայացուցիչ, պատմիչը առանձնահատուկ հարգանք և նվիրվածություն ունի հոգևոր ու աշխարհիկ իշխանավորների նկատմամբ որոնց նա մեծ մասամբ ներկայացնում է գունազարդված ձևով։

Սմբատի Տարեգիրքը թարգմանվել է ռուսերեն (Երևան, 1974), մի քանի անգամ ֆրանսերեն, որոնցից լավագույնը՝ Ժ. Դեդեյանի հրատարակածն է (Փարիզ, 1980)։

**Հեթում Պատմիչ**

Կիլիկիայի հայկական պատմագրության դպրոցի հայտնի ներկայացուցիչներից է Հեթում պատմիչը, որին անվանում են նաև Կոռիկոսցի։ Հեթումը պատկանում էր Կիլիկիայի Հեթումյան թագավորական տոհմին։ Նրա ծննդյան և մահվան ժամանակը հայտնի չէ։ Հեթումը 1294—1305 թվականներին վարել է Կիլիկիայի հայկական զորքերի սպարապետության (գունդստաբլ) պաշտոնը և մի շարք ճակատամարտերում փայլուն հաղթանակ տարել հարևան մուսուլմանական և հատկապես Կիլիկիա ներխուժած եգիպտական մամլուկների հրոսակախմբերի դեմ։ Հեթումը թագավորական արքունիքի հանձնարարությամբ հաջողությամբ է կատարել նաև դիվանագիտական բնույթի ուղևորություններ։ 1305 թվականին Հեթումը սպարապետությունը հանձնելով իր որդի Օշինին, թողնում է աշխարհիկ կյանքը, ընդունում կաթոլիկություն և մեկնելով Կիպրոս՝ դառնում է կրոնավոր։

Հեթումը պատմագրության մեջ հայտնի է իր «Պատմության թաթարաց» աշխատությամբ, որը նա գրել է 1307 թ. Կղեմես V պապի (1305—1314) հանձնարարությամբ։ Աշխատությունը գրվել է միջնադարյան ֆրանսերենով։ Անհավանական չէ նաև, որ գիրքը սկզբում կարող էր գրված լինել հայերեն։

Հռոմի պապի՝ Հեթումին տված հանձնարարությունը բխում էր կաթոլիկական եկեղեցու և նրա հովանու տակ գտնվող արևմտյան մեծ ու փոքր տերությունների այն ժամանակ Արևելքի նկատմամբ ունեցած ռազմաքաղաքական հետաքրքրություններից։ Մյուս կողմից, կաթոլիկական եկեղեցու պարագլուխ հատկապես հայ հեղինակին արած այդ բավական պատասխանատու առաջարկությունը խոսում է Հեթումի գիտական լուրջ ու բարձր տվյալների, Արևելքում կաթոլիկական եկեղեցու և եկեղեցականների մեջ նրա աչքի ընկած լինելու ու նման հանձնարարությունը գլուխ բերելու կարողությունների մասին։

Հեթում պատմիչի գիրքն ընդգրկում է պատմական ոչ փոքր ժամանակաշրջան՝ 1076—1307 թվականները։

Հայրենիքում ստացած բարձր կրթությունը մի կողմից, օտար լեզուների խորն իմացությունը և Արևելքում ու Արևմուտքում բազում անգամ շրջագայություններով ձեռք բերած գիտելիքները մյուս կողմից, նրան հնարավորություն են տվել օգտվելու լատիներեն, ֆրանսերեն, ասորերեն, հունարեն, մոնղոլերեն և այլ լեզուներով եղած անհրաժեշտ աղբյուրներից և ականատեսների պատմածներից, որոնց մի մասի հայթայթման գործում հավանաբար կարևոր դեր են կատարել Կղեմեսս V-ը կամ նրա հանձնակատարները։

«Պատմութիւն թաթարաց»-ը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Կիլիկիայի, Մեծ Հայքի և Արևելքի 14 երկրների, պետությունների և իշխանությունների, այնտեղ ծավալված քաղաքական կարևոր իրադարձությունների, սոցիալ-տնտեսական հարաբերությունների և այլ հարցերի մասին։ Այստեղ կարևոր են հատկապես այն հատվածները, որոնք վերաբերում են խաչակիրներին, խաչակրաց արշավանքներին ու առաջինների փոխհարաբերություններին Բյուզանդիայի, Կիլիկիայի և մոնղոլական իշխանությունների հետ։ Եթե դրանց ավելացնենք նաև այն, որ գրքի հեղինակը, որպես ժամանակակից և պետական բարձրաստիճան պաշտոնյա, շատ դեպքերին անձամբ մասնակցել է կամ դրանց մոտիկից ծանոթ է եղել ու ձեռքի տակ ունեցել կարևոր նշանակություն ունեցող փաստաթղթեր ու վավերագրեր, ապա պարզ կլինի, թե ինչպիսի մեծ գիտական արժեք ունի նրա գիրքը որպես պատմական գիտության և պատմական աշխարհագրության կարևորագույն սկզբնաղբյուր։ Այս տեսակետից Հեթումի աշխատության հետ կարելի է համեմատել մեծ ճանաչում ունեցող և բազմաթիվ լեզուներով թարգմանված վենետիկցի ճանապարհորդ Մարկո Պոլոյի «Ճանապարհորդությունները»։

Հեթումի գրքի առաջնակարգ աղբյուր լինելու օգտին է խոսում նաև նրա բազմաթիվ լեզուներով հրատարակված լինելը։ Այս աշխատությունը լատիներեն և միջնադարյան ֆրանսերեն լույս է տեսել 1532 թվականին, որոնք հետագայում վերահրատարակվել են մի քանի անգամ, թարգմանվել իտալերեն, իսպաներեն, անգլերեն, հոլանդերեն և այլ լեզուներով՝ «Ծաղիկ Արևելքի երկրների պատմութեանց» խորագրով։ Հեթումի գրքի գրաբար թարգմանությունը լատիներենից կատարել է Մ. Ավգերյանը, այն լույս է տեսել 1842 թվականին Վենետիկում։ Հեթում պատմիչի գրչին է պատկանում նաև ֆրանսերենից հայերեն թարգմանված «Պատմութիւն քրոնիկոն»-ի աշխատությունը, որն ունի ժամանակագրության բնույթ և ընդգրկում է մեր թվականության 1-ից մինչև 1294 թվականների իրադարձությունների նկարագրությունը։ Այստեղ 1173 թվականից ըսկըսած ավելացված են նաև Կիլիկիայի հայկական թագավորությանը վերաբերող դեպքերը։



**Ստեփանոս Օրբելյան**

Գիտնական-պատմիչ, եկեղեցական և քաղաքական գործիչ, բանաստեղծ Ստեփանոս Օրբելյանի կյանքի ու գործունեության մասին պահպանվել են համեմատաբար հարուստ տեղեկություններ հենց իր աշխատություններում։ Օրբելյանը «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության 66-րդ գլխում Օրբելյանների տոհմի ծագումնաբանության ու պատմության առնչությամբ խոսում է նաև իր մասին՝ որպես Սյունիքի միտրոպոլիտ ու հոգևոր առաջնորդ։ Հավանաբար, Օրբելյանը նույնպես մեր անցյալի շատ հեղինակների նման իր մասին շատ բան չասեր , եթե պաշտոնի բերումով միջամուխ չլիներ այն երկրամասի քաղաքական անցուդարձերին, որի ընդարձակ պատմությունը գրել է ինքը։

Օրբելյանը փոքրուց որդեգրվելով իր հորեղբոր՝ Սյունիքի ամենաականավոր իշխաններից մեկի՝ Սմբատի կողմից, ստանում է հիմնավոր կրթություն։ 1273 թվականին Սմբատ Օրբելյանի մահվանից հետո, Սյունիքի իշխանության հետ միասին, մեր ապագա պատմիչի բախտի տնօրինությունը անցնում է իր հորը Տարսայիճին։ 1280 թվականին Նորավանքում հրավիրված եկեղեցական ժողովում Ստեփանոս Օրբելյանը ձեռնադրվում է քահանա։ Եթե ընդունենք, որ այդ ժամանակ Օրբելյանը պետք է լիներ 25—30 տարեկան, ուրեմն նրա ծննդյան ժամանակը մոտավորապես ընկնում է 1250-ական թվականներին։ Ինչպես երևում է, իր գիտելիքների և ընդունակությունների շնորհիվ, Ստեփանոս Օրբելյանը նոր կոչման մեջ շատ է աչքի ընկնում ու առաջադիմում, որովհետև դրանից ընդամենը հինգ տարի անց, 1285 թվականին նա մեկնում է Կիլիկիա՝ եպիսկոպոս ձեռնադրվելու։ Մի քանի ամիս Կիլիկիայում մնալուց և Կոստանդին II կաթողիկոսի կողմից եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո, նա վերադառնում է Սյունիք՝ միտրոպոլիտի լիազորություններով։

Իր աթոռակալության ամբողջ ընթացքում նա մեծ ուշադրություն է դարձրել Սյունիքի գրչության կենտրոններին, նրանց նյութական ապահովության համար նույնիսկ հատկացումներ անելով անձնական կալվածքներից ու գյուղերից։

1297 թ. Սյունիքի միտրոպոլիտն ավարտում է նաև Տաթևի վանքի վերակառուցումը, որը, ինչպես ինքն է ասում, մինչև հատակը փլված էր։ Մեծ թվով գիտնականներ ու արվեստա-

գետներ ունեցող Վայոց ձորը 1280 թվականին ծնունդ տվեց Գլաձորի համալսարանին, որի բարգավաճմանը մասնակցել է նաև Ստեփանոս Օրբելյանը։ Նրա հաղորդումներից պարզվում է, որ Գլաձորի համալսարանն ու Սյունիքի առաջավոր մտավորականությունը չէին սահմանափակվում միայն եկեղեցական ու գիտական խնդիրների շրջանակներով, այլև վճռական դեր էին կատարում ամբողջ հայ ժողովրդի շահերը շոշափող հարցերի լուծման ժամանակ։ Երկրի քաղաքական ու եկեղեցական կյանքում առանձնապես մեծ է եղել Ստեփանոս Օրբելյանի դերը, որն իր հետևողականության ու հաստատակամության շնորհիվ հաղթանակ տարավ հոգևորականության այն թևի դեմ, որը ձգտում էր հայոց եկեղեցին ենթարկել Հռոմի պապի գերիշխանությանը։ Պատմիչ Օրբելյանը խոր կսկիծով հիշատակելով այդ փաստը, առանձնապես երկյուղ էր կրում, որ այդ հողի վրա Կիլիկիայի և Մայր Հայաստանի միջև կարող են ստեղծվել անցանկալի հակադրություններ, այն էլ այնպիսի ժամանակներում, երբ երկու հայաշխարհներն էլ տարուբերվում էին մահաբեր փոթորիկների մեջ։ Օրբելյանի և նրա համախոհների այս պայքարն ուներ առաջադիմական նշանակություն։

1305 թ., դեռ չբոլորած իր կյանքի վաթսուն տարին Ստեփանոս Օրբելյանը վախճանվեց։ Նրա գերեզմանը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Նորավանքի տարածքում։

Ստեփանոս Օրբելյանը ժամանակի ամենազարգացած անձնավորություններից մեկն էր։ Նա ոչ միայն գիտեր աստվածաբանություն ու երաժշտություն, այլև խորապես ուսումնասիրել է իր հայրենիքի՝ Հայաստանի պատմությունը, հաղորդակից էր Վրաստանի, Կիլիկիայի հայկական թագավորության, մոնղոլական իշխանությունների և Մերձավոր Արևելքի երկրների ու ժողովուրդների կյանքին ու պատմությանը։

Օրբելյանը եկեղեցական ու քաղաքական գործունեությունից բացի զբաղվել է նաև գիտական ստեղծագործական աշխատանքով։ Նրանից պահպանվել ու մեզ են հասել իրենց բնույթով ու պատմագեղարվեստական արժեքով տարբեր երեք աշխատություններ՝ «Պատմութիւն նահանգին Սիսական», «Ողբ ի սուրբ կաթողիկէն», «Ժամանակագրութիւն» վերնագրերով։ Առավել կարևորը Պատմությունն է։



Սյունիքի և Օրբելյանների տոհմի պատմությունը գրելու մտահղացումը պատմիչը հիմնավորում ու պատճառաբանում է նրանով, որ ինքը աշխատել է կորստից փրկել Սյունիքի իշխանության և իր նախնիների պատմական հիշատակարանները։ Շարադրելով Սյունիքի պատմությունը նախնական ժամանակներից մինչև իր օրերը, պատմիչը իր հիշատակարանում այդ նպատակադրումը հատկապես շեշտում է, հավանաբար, այն դիտավորությամբ, որպեսզի ընթերցողները այլևայլ պահանջներ չներկայացնեն։ Եվ իրոք, հեղինակը հավատարիմ է մնացել նպատակադրմանը և այն իրագործելու համար կարողացել է հաղթահարել մեծամեծ դժվարություններ։ Հետևելով հայ պատմագրության ավանդույթներին, նա իր տոհմի ծագումը ևս տանում է հեռուները, չմոռանալով նաև գրի առնել ժամանակի ընթացքում հորինված ավանդություններն ու պատմությունները, որոնք շատ նման են հայկական առավել աչքի ընկած նախարարությունների՝ Բագրատունիների, Մամիկոնյանների, Արծրունիների և մյուսների շուրջը ստեղծվածներին։ Ինչ վերաբերում է Օրբելյանների տան պատմության հետագա ժամանակներին, ապա այստեղ պատմիչը հանդես է գալիս որպես արժանահավատ ու վստահելի հեղինակ՝ ժամանակագրորեն մոտ լինելու և օգտագործած աղբյուրների հարստության ու բազմազանության առումով։

Ստեփանոսը իր երկը շարադրելու համար օգտագործել է ամենատարբեր բնույթի սկզբնաղբյուրներ։ Եվ հենց աղբյուրների ճանաչման, նրանց ընտրության և օգտագործման եղանակով է, որ Օրբելյանը հանդես է գալիս որպես միջնադարյան հայ մատենագրության ամենախոշոր ներկայացուցիչներից մեկը։ Պետք է ասել, որ նա հնագույն ժամանակների պատմությունը շարադրելիս, այնուամենայնիվ, ցուցաբերում է գիտակցված հավասարակշռություն և չի ցանկանում նախնական ժամանակներից սկսած, անուն առ անուն գրել Սյունիքի իշխանության պատմությունը, հասկանալով, որ այդ բանն անել հնարավոր չէ, իսկ եթե ինքը այդպես վարվելու լինի, պետք է իրենից անկախ ընկնի առասպելաբանության մեջ ու հեռանա պատմական իրականությունից։

Ստեփանոս Օրբելյանը սկզբում պրպտումներ է կատարում օտար աղբյուրներում, որտեղ Սյունիքի մասին ոչինչ չգտնելով, դիմում է հայ պատմիչներին։ Նա ամենայն բարեխղճու-

թյամբ ծանոթացել և շատ կամ քիչ չափով օգտագործել է իրենից առաջ կամ իր ժամանակների շատ հայ մատենագիրների ու գրական գործիչների աշխատությունները։ Մեր պատմիչին քաջ ծանոթ են Ագաթանգեղոսը, Զենոբ Գլակը, Եղիշեն, Ղազար Փարպեցին, Մովսես Խորենացին, Ղևոնդը, Ուխտանեսը և շատ ուրիշներ։ Սակայն «Ի հին և նոր պատմագրաց հայոց» երկերով չբավարարվելով, նա սկսում է բնագրերով ուսումնասիրել նաև վրացական սկզբնաղբյուրները։ Այդ էլ նրան չի բավարարում, և նա մեծ աշխատանք է կատարում շատերի կողմից անուշադրության մատնված ու մոռացված նյութերի ուսումնասիրության ուղղությամբ։ Պատմիչը որոնումներ է կատարում Սյունյաց բարձրաստիճան հոգևորականների շրջաբերականներում, գավառների եկեղեցական հարկացուցակներում, եկեղեցիների կալվածագրերում, Տաթևի վանքի արխիվներում, ձեռագրերի հիշատակարաններում, հայոց թագավորների, կաթողիկոսների, ապա նաև եպիսկոպոսների ու իշխանների նամակներում, վիմական արձանագրություններում, ժողովրդական ավանդություններում, երգերում, հիշողություններում և այլն։ Այս կարգի բազմապիսի աղբյուրների հմուտ օգտագործման շնորհիվ է, որ Ստեփանոս Օրբելյանը կարողացել է ստեղծել բարձրարժեք պատմագիտական մի ստեղծագործություն, որը նրան շարքային պատմիչից բարձրացրել է պատմաբան գիտնականի աստիճանին։

Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը, իհարկե, իր տեսակի մեջ առաջինը չէր։ Սակայն Հայաստանի առանձին ֆեոդալական տների կամ «աշխարհների» պատմություններից և ոչ մեկը ընդգրկած նյութերով, օգտագործած աղբյուրների բազմազանությամբ ու հարստությամբ, կառուցվածքով և գիտականությամբ չի կարող համեմատվել այս աշխատության հետ։

Ժամանակագրական առումով Օրբելյանի Պատմությունն ընդգրկում է Տրդատ Առաջինից մինչև իր օրերը՝ XIII դարը ներառյալ։ Հետևելով սովորությանը, նա ևս իր գրքի սկզբում խոսում է արարչագործության մասին, այն տարբերությամբ, որ Օրբելյանն այս հարցը շատ չի ձգձգում ու առանց երկարաբանելու անցնում է Սյունիքի վավերական պատմության շարադրմանը։ Օրբելյանը գտնում է, որ Սյունիքի նախարարությունը ևս հաստատվել է Տրդատ Առաջինի ժամանակներում։



Հենց այդ ժամանակներից էլ նա ներկայացնում է իր հայրենի երկրամասի նախարարների, իշխանների ու եպիսկոպոսների, ապա նաև հայոց կաթողիկոսների ժամանակագրությունը։ Այս և ուրիշ առիթներով ժամանակագրության հարցերին մեծ տեղ տալը ինքնըստինքյան խոսում է այն մասին, որ հեղինակը խորապես գիտակցել է նրա նշանակությունն ու դերը գիտական պատմագրության ստեղծման գործում։

Պատմիչի տեղեկություններից երևում է, որ Սյունիքի մի քանի տասնյակ վանքեր այն ժամանակ բավական հարուստ ֆեոդալական տնտեսություններ էին, ունեին իրենց գյուղերը, ձիթհանքերը, ջրաղացները, վարելահողերը, արոտավայրերը, այգիներն ու արհեստանոցները։ Պատմագիտական առումով շատ արժեքավոր է Օրբելյանի գրքում եղած Սյունիքի ամենանշանավոր՝ Տաթևի վանքի հին հարկացուցակը, որտեղ ըստ գավառների, թվարկվում են այդ վանքին հարկատու բոլոր բնակավայրերը և վերջիններից գանձվող հարկի չափը։ Տաթևի վանքը IX—XIII դարերում Հայաստանի ամենախոշոր ֆեոդալական հաստատություններից մեկն էր, որի դեմ էլ X դարում տեղի ունեցան Ցուրաբերդ, Հավանաբար նաև Տամալեկ, Ցողունի, Հարժիս և մյուս բնակավայրերի գյուղացիների համարձակ ելույթները[68]։

Պատմության մեջ ընդարձակ տեղ են գրավում Սյունիքի մշակույթին վերաբերող հիշատակությունները։ Պատմիչը խոսում է ճարտարապետական ամենաբազմազան շինությունների ու կոթողների, մատենագրության, երաժշտական արվեստի ու դպրոցների մասին։ Որպես հոգևորական և Սյունիքի միտրոպոլիտ, Օրբելյանը մի առանձին սիրով է խոսում վանքերի մասին, տալիս է նրանցից շատերի պատմությունը, վերանորոգումների ու վերակառուցումների նկարագրությունը, շինությունների պատմաճարտարապետական բնութագիրը և այլն։ Նմանօրինակ տեղեկությունների պատմական ու ճարտարապետական արժեքը մեծ է, մանավանդ, որ նկարագրված շինությունների մի մասն այժմ կամ չկա, կամ կիսավեր է, և մենք այդ կոթողների նախնական տեսքը պատկերացնելու համար հիմնականում հենվում ենք Օրբելյանի նկարագրությունների

[68] Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 229—230, 247—252։

վրա։ Ցավոք, նույնը չի կարելի ասել քաղաքացիական կառույցների մասին, որոնց Օրբելյանը անդրադառնում է թռուցիկ։

Օրբելյանը մեծ հաճույքով ու խանդավառությամբ է խոսում նաև Սյունիքի մատենագրության, նրա օջախների, այստեղ ստեղծագործող գիտնականների ու արվեստագետների մասին։ Հեղինակը ցույց է տալիս, որ Սյունիքի գրեթե բոլոր վանքերն ունեին իրենց մատենադարանները, որտեղ ձեռագրերից բացի, պահվում էին նաև այլ վավերագրեր։ Այդ տեսակետից առաջնությունը պատկանում էր Տաթևի վանքին։ Հայ ժողովրդի կրթության և մշակույթի խնդիրների ուսումնասիրության համար բացառիկ արժեք ունեն Սյունիքի վանքերին կից գործող դպրոցներին, երաժշտանոցներին ու երաժշտական խմբերին վերաբերող տեղեկությունները։ Պատմիչի աչքից չեն վրիպել նաև Սյունիքի բնական պայմանները, հանքային հանածոները, գավառաբաժանումը, տարերային աղետները և այլն։ Նա, թվարկելով Սյունիքի 12 գլխավոր գավառները, փորձում է տալ նրանց անունների ծագումն ու ստուգաբանությունը։ Գավառների թվարկումից հետո Օրբելյանն անցնում է նահանգի գլխավոր ու անառիկ բերդերի հիշատակությանը։

Ստեփանոս Օրբելյանը իր հայրենի երկրամասի պատմությունը ներկայացնելիս պատշաճ ուշադրություն է դարձնում ինչպես բովանդակ Հայաստանի, այնպես էլ Կիլիկիայի պատմությանը։ Վերջինիս տնտեսական, մշակութային ու քաղաքական կյանքին վերաբերող նյութերի մի մասը հավաքել է տարբեր աղբյուրներից, իսկ մի մասն էլ ձեռք է բերել անձամբ Կիլիկիայում եղած ժամանակ։

Օրբելյանը հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Զաքարյանների իշխանության, հայկական մյուս ֆեոդալական տների, Խորեզմի սուլթան Ջալալ էդ-Դինի ու մոնղոլական արշավանքների, հատկապես մոնղոլների կողմից Սյունիքի նվաճման, Հայաստանում մոնղոլների տիրապետության և նրանց վարած քաղաքականության, Հուլավյան մոնղոլական պետության ներսում տեղի ունեցած իրադարձությունների մասին։ Նրա «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը վստահելի սկզբնաղբյուր է և ունի ճանաչողական մեծ արժեք։

Օրբելյանի Պատմությունը թեև գրված է տոհմասիրական



դիրքերից, սակայն ընդհանուր առմամբ նա հանդես է գալիս իբրև ջերմ հայրենասեր, որը որպես համահայկական միասնական պետության ջատագով, գովերգել է օտար բռնակալների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը և ամբաստանել բոլոր նրանց, ովքեր, ջլատելով ժողովրդի ուժերը, վնասել են նրա հայրենասիրական ձեռնարկումներին, չխնայելով նաև իր հայրենակից սյունեցիներին։

Ստեփանոս Օրբելյանին է վերագրվում պատմագիտական մեկ այլ աշխատություն ևս «Ժամանակագրութիւն» վերնագրով։ Այս աշխատությունը փաստորեն ձեռնարկել է XII դարի հայ պատմիչ-ժամանակագիր Սամուել Անեցու նույնանման աշխատությունը շարունակելու և լրացնելու նպատակով։ Սամուել Անեցու նշված երկի հնագույն օրինակն ավարտվում է 1176 թվականով։ Սակայն Ժամանակագրության հեղինակն իր ձեռքի տակ է ունեցել Անեցու շարադրանքի մի այնպիսի օրինակ, որտեղ պատմությունը հասցվում է մինչև 1193 թվականը։ Ահա այստեղից էլ սկսվում է Օրբելյանին վերագրվող Ժամանակագրությունը և ավարտվում 1290 թվականով, Ստեփանոս Օրբելյանի հոր՝ Տարսայիճի մահվան ու Նորավանքում թաղվելու հիշատակումով։ Ուսումնասիրողները ենթադրում են, որ ժամանակագիրն իր աշխատության հիմնական մասը գրել է 1277 թվականին, իսկ մյուս մասերը շարունակել է հետո։

Որպես պատմական սկզբնաղբյուր, Ժամանակագրությունը, իհարկե, չի կարող համեմատվել Օրբելյանի Պատմության հետ։ Սակայն անկախ դրանից, նա ևս իր տեսակի մեջ արժեքավոր է հայ և մյուս ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար։ Փոքրածավալ այդ աշխատությունը իր պարունակած փաստերով ու թվականներով կարևոր ճշտումներ և լրացումներ է մտցնում նրա ընդգրկած տարիների պատմության մեջ[69]։

Ստեփանոս Օրբելյանը հանդես է եկել նաև իբրև բանաստեղծ։ Նա իր հայրենասիրական գաղափարներն ու ձգտումները ավելի խտացված ու ընդգծված ձևով արտահայտել է «Ողբ» քերթվածի մեջ, որը գրել է իր մահից մի քանի տարի առաջ՝ 1300 թվականին։ Այն գրելու հորդորողներից առաջինը եղել է ժամանակի նշանավոր գիտնական ու բանաստեղծ Խաչատուր Կեչառեցին։

[69] «Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի», Երևան, 1942։

Եթե մի ակնարկ գցենք XIII դարի երկրորդ կեսի և XIV դարի սկզբների Հայաստանում ու Կիլիկիայում տեղի ունեցած և հայ ժողովրդի համար այնքան աղետաբեր քաղաքական իրադարձությունների վրա, ապա կտեսնենք, որ զգայուն ու հայրենասեր պատմիչը չէր կարող անտարբեր լինել դրանց նկատմամբ։ Իսկ ինչ դրություն էր տիրում Հայաստանում և Կիլիկիայում «Ողբի» ստեղծման ժամանակ։

1289 թվականին, Կիլիկիայի թագավոր Լևոն III-ի մահվանից հետո, զրպարտանքի ու դավադրության միջոցով կաթողիկոսական աթոռից զրկվեց ու բանտարկվեց նաև Կոստանդին կաթողիկոսը։ Այդ նույն ժամանակներում եգիպտական մամլուկները իրար ետևից տապալելով հարևան մանր իշխանությունները, ներխուժում են Կիլիկիա և 1292 թ. գրավում ու ավերում են Հռոմկլա բերդը։ Այդ թվականից էլ Հռոմկլան դադարում է հայոց կաթողիկոսանիստը լինելուց։ Հաջորդ տարին նորընտիր կաթողիկոս Գրիգոր Անավարզեցին (1293—1307) նստավայրը տեղափոխում է Սիս։ Սակայն մամլուկների հարձակման ամենօրյա վտանգին ավելանում է նաև դավանաբանական վեճը, որի բորբոքողը, դժբախտաբար, ինքը՝ կաթողիկոսն էր, որը կարծում էր, թե հայոց եկեղեցին հունա-հռոմեականին միացնելով կապահովի արևմտյան քրիստոնյա տերություններից Կիլիկիայի քաղաքական և ռազմական օգնություն ստանալն ու նրանց հովանավորությունը։ Եվ ահա Ստեփանոս Օրբելյանը նկատելով Կիլիկիայի հայկական թագավորության և հայոց կաթողիկոսության վտանգված դրությունը՝ իր «Ողբի» մեջ հեռատեսորեն զարգացնում է այն միտքը, որ կաթողիկոսական աթոռը պետք է տեղափոխել Հայաստան։ Կարևորն այն է, որ Օրբելյանը այդ խնդիրը չի դիտում որպես լոկ կրոնական քայլ, այլ դրան տալիս է ամենից առաջ քաղաքական նշանակություն, արտահայտելով այն ժամանակվա հայ առաջավոր մտավորականության հայրենասիրական իղձերն ու մտորումները։

Ստեփանոս Օրբելյանը իր գաղափարներն ու մտքերը արտահայտում է դիմառնաբար. Կաթողիկեի բերանով ողբում է Հայաստանի քաղաքական անկախության կորուստը, օտարների տիրապետությունը, երկրի անկյալ վիճակը և այլն, վերջում կոչ է անում ցաքուցրիվ հայությանը՝ վերադառնալ հայրենիք և խնամել նրան որպես զավակը ծերացած ծնողին։ Հեղինակը հավատացած է, որ ժողովրդի վիշտն ու տառապանքը անպայման վերջ կունենան։ Օրբելյանի «Ողբը» ըստ էության մի կոչ էր՝ ուղղված ամբողջ հայ ժողովրդին, հագեցված նրա պետական անկախության վերականգնման բուռն ցանկությամբ[70]։

Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը հրատարակվել է մի քանի անգամ։ Լավագույնը Փարիզի 1859 թվականի Կ. Շահնազարյանցի հրատարակությունն է։ Աշխարհաբար թարգմանությունը, որ կատարել է Ա. Աբրահամյանը, լույս է տեսել Երևանում, 1986 թվականին։ Մ. Բրոսսեն Պատմությունը թարգմանել է նաև ֆրանսերեն (Պետերբուրգ, 1863), հատվածաբար թարգմանվել է ռուսերեն (Մոսկվա, 1883) և վրացերեն (Թբիլիսի, 1962)։

## 2. ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հայաստանի միջին դարերի պատմության լավագույն սկզբնաղբյուրներից են նաև բյուզանդական աղբյուրները, որոնք հարուստ և բազմազան տեղեկություններ են հաղորդում։ Սակայն այդ աղբյուրների հեղինակները կրոնական և քաղաքական սահմանափակությունից բացի, իրենց ստեղծագործություններում ամեն կերպ աշխատել են վեր դասել բյուզանդական եկեղեցին և արդարացնել նրա բոլոր գործողությունները մյուս ժողովուրդների կրոնների նկատմամբ։ Հենց այդ մոտայնությամբ էլ նրանք, հիմնականում, օրինակ, անդրադառնում են պավլիկյանների կրոնաաստվածաբանական դրույթներին և գիտակցաբար շրջանցում սոցիալականը, որպեսզի անուղղակիորեն չնպաստեն իրենց հակառակորդների գաղափարների տարածմանը։ Սակայն պավլիկյանների նույնիսկ կրոնաաստվածաբանական դրույթների մեջ աչքի է ընկնում շարժման հակաեկեղեցական ու հակաֆեոդալական բովանդակությունը։ Դրա համար էլ բյուզանդական սկզբնաղբյուրները այս տեսակետից արժեքավոր ու առաջնային նշանակություն ունեն[71]։

Պավլիկյան շարժման պատմության և գաղափարական դրույթների մասին ամենաարժեքավոր տեղեկություններ հաղոր-

---

[70] Ստեփանոս Օրբելյան, Ողբ ի սուրբ Կաթողիկէն, Տփղիս, 1885։

[71] Պավլիկյան շարժման մասին բյուզանդական աղբյուրները, տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. 1, էջ 737—812։

դող բյուզանդական հեղինակը Պետրոս Սիկիլիացին է։ Նա 868—869 թվականներին, որպես Բարսեղ I-ի դեսպանության անդամ, եղել է պավլիկյանների կենտրոն Տլրիկում, որտեղ, ինչպես ինքն է ասում, հաճախ զրուցելով պավլիկյանների հետ, կարողացել է որոշակի տեղեկություններ հավաքել նրանց մասին և հետագայում զետեղել իր գրքի համապատասխան բաժիններում։

Պետրոս Սիկիլիացու «Պիտանի պատմության» 21—43-րդ գլուխներում շատ թե քիչ հանգամանորեն խոսվում է պավլիկյանների քաղաքական պատմության և գաղափարախոսության մասին։ Ենթադրվում է, որ պատմիչը Տլրիկում եղած ժամանակ, բանավոր հարցազրույցից բացի, ծանոթացել է նաև պավլիկյանների գրավոր աշխատանքներին։ Սակայն որպես կայսեր վստահված անձնավորություն և նրա հանձնարարությամբ գրող հեղինակ, նա խիստ թշնամաբար է տրամադրված պավլիկյանների նկատմամբ և ամեն կերպ աշխատում է ծաղրել, պախարակել ու զրպարտել նրանց։ Պետրոս Սիկիլիացու «Պիտանի պատմությունը» որպես եղածների մեջ առավել արժանահավատ սկզբնաղբյուր, հետագայում օգտագործվել է շատ հեղինակների կողմից։ Այդ գիրքը հիմք է ծառայել նաև Պետրոս Սիկիլիացուն ժամանակակից Փոտի «Պատմություն մանիքեցիների կրկին վերաճման մասին» աշխատության համար։

Փոտը ազգությամբ հայ էր։ Նա իր քեռու՝ Արշավիր պատրիկի միջոցով շատ մոտ հարաբերությունների մեջ էր հայազգի կայսրուհի Թեոդորա Մամիկոնյանի եղբոր՝ Վարդ Մամիկոնյանի հետ։ Վարդն այն ժամանակ բյուզանդական արքունիքում գրավում էր պետության առաջին մինիստրի ու կեսարի բարձր պաշտոնները և հռչակված էր որպես մեծ զորավար։ Ապագա պատմիչն ու եկեղեցական գործիչը, որը Բյուզանդիայի մայրաքաղաքում աշխարհիկ զբաղմունքի տեր մարդ էր, 858 թ. Վարդ Մամիկոնյանի աջակցությամբ նշանակվելով Պոլսի պատրիարք (858—867, երկրորդ անգամ՝ 878—886), անմիջապես ընդգրկվում է երկրի աշխարհիկ ու եկեղեցական գործերի թոհուբոհի մեջ և դառնում այդ ժամանակաշրջանի կայսրության ամենաեռանդուն գործիչներից մեկը։

Փոտ պատրիարքի վերոհիշյալ աշխատությունը բաղկացած է չորս գրքերից, որի սկզբի մասերում խոսվում է պավլիկյանների պատմության և գաղափարախոսության մասին,



իսկ հետո փորձ է արվում քաղկեդոնականության դիրքերից հերքել իր հակառակորդների բոլոր դրույթները։ Որպես պաշտոնական եկեղեցու ներկայացուցիչ, Փոտը նույնպես շարադրանքի ընթացքում խեղաթյուրելով իր հակառակորդների գաղափարները և ճգնելով նրանց ներկայացնել ամենամռայլ ու ամենաբացասական գույներով, նպատակ է ունեցել զրպարտելու և վարկաբեկելու պավլիկյաններին։

Պավլիկյանների պատմության և IX դարի կեսերին տեղի ունեցող հայ-բյուզանդական կռիվների մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև X դարի բյուզանդական պատմիչ Հովսեփ Գենեսիոսը, որը նույնպես հայկական ծագում ուներ։ Գենեսիոսն իր «Թագավորություններ» գրքում գրավոր սկզբնաղբյուրների հետ մեկտեղ, մեծ չափով օգտագործել է նաև բանավոր հուշեր։ Որպես հայ, Գենեսիոսն իր ազգակիցների նկատմամբ երբեմն ցուցաբերում է կողմնակալ վերաբերմունք։ Բյուզանդական մյուս հեղինակների նման, Գենեսիոսը նույնպես հանդես է գալիս որպես պաշտոնական պատմագրության ներկայացուցիչ և կանգնած է պավլիկյանների հակառակորդների կողմում։

Գենեսիոսի ժամանակակիցն է Կոստանդին Սիրանածինը, որը Բյուզանդիայում Հայկական (Մակեդոնական) դինաստիայի հիմնադիր Բարսեղ I-ի թոռն էր։ Կոստանդին Սիրանածինը ապրել է 905—959 թվականներին, մի ժամանակաշրջան, երբ բուռն թափով ծավալվում էին հայ-բյուզանդական փոխհարաբերությունները և օրի-օրի վրա ավելի բացահայտ էր դառնում կայսրության ախորժակը հայկական հողերի նկատմամբ։

Կոստանդին Սիրանածինը, որը Բյուզանդիայի պատմության մեջ հռչակված է որպես գրական խոշոր դեմք, թողել է մի քանի աշխատություններ, որոնք ունեն պատմագիտական մեծ արժեք։ Այդ աշխատություններից ամենից առաջ ուշադրության արժանի է «Կայսրության կառավարման մասին» գիրքը, որը հեղինակը գրել է հատուկ իր որդու համար, որպեսզի տրված ցուցմունքներով ու առաջադրանքներով նա կարողանա իրենից հետո կառավարել երկիրը։ Այս աշխատության համար Կոստանդին Սիրանածինը Թեոփանես Խոստովանողի և Գեորգիոս Վանականի «Ժամանակագրություններից» ու Ստեփանոս Բյուզանդացու աշխարհագրական բառարանից բացի, օգտագործել

է նաև իր գրաձաղրության տակ գտնվող արքունի դիվանատան փաստաթղթերը։ Հեղինակի թերությունն այն է, որ նա աղբյուրներն օգտագործում է գրեթե անքննադատ ձևով։

«Կայսրության կառավարման մասին» գիրքը բաժանվում է 53 գլուխների։ Հայաստանի և հայ ժողովրդի մասին նյութերը հիմնականում զետեղված են 43—46-րդ գլուխներում։ Այստեղ հեղինակը հատկապես արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Տարոնի հայկական իշխանության ու նրա ներքին անկայուն դրության մասին, որը պայմանավորված էր երկրամասը երկու խոշոր մրցակիցների՝ բյուզանդացիների և արաբների միջև գտնվելու և մեծ մասամբ սրանց գործուն միջամտությամբ Տարոնում բորբոքվող ներքին անհամաձայնությամբ ու պայքարով, որն ի վերջո հանգեցրեց Տարոնի գրավմանը Բյուզանդիայի կողմից։ Իր գրքի վերոհիշյալ գլուխներում Կոստանդին Միրանածինը պատմում է նաև Ապահունիքի կայսիկ ամիրայության մասին, որը արդեն Աշոտ I Բագրատունու ժամանակներում վասալական կախման մեջ էր գտնվում հայոց թագավորից և հարկատու էր նրան։ Հեղինակը պատմում է այնուհետև, որ Սմբատ I-ի ողբերգական մահվանից հետո հայկական այդ երկրամասը նույնպես ընկավ Բյուզանդիայի տիրապետության տակ։ Դրանից հետո, 949 թ. բյուզանդացիները գրավեցին նաև Կարինը (Թեոդոսուպոլիս)։ Ուշագրավ են Կոստանդին Միրանածինի վերոհիշյալ աշխատության նաև մյուս մասերը, որտեղ եղած նյութերով հնարավոր է պարզել կայսրության արևելյան շրջաններում հայերի տարածման ոլորտները և նրանց խաղացած ռազմաքաղաքական դերի մանրամասնությունները։ Այստեղից պարզվում է, որ հայերը շատ գործուն մասնակցություն են ունեցել նաև բյուզանդական ռազմական նավատորմիզում և հասել նույնիսկ ծովակալի բարձր աստիճանի։

Աղբյուրագիտական առումով լուրջ հետաքրքրություն է ներկայացնում նաև Կոստանդինի գրած մյուս գիրքը՝ նվիրված իր պապի՝ Բասիլ I-ի կենսագրությանը («Երանելի կայսր Վասիլի կյանքի և գործունեության պատմությունը, որ նրա թոռ՝ կամավն աստուծո հռոմայեցիների կայսր Կոստանդինը ջանասիրությամբ քաղեց զանազան շարադրանքներից և վստահեց գրչին»)։ Շատ թերություններով հանդերձ, այդ աշխատությունը հույժ կարևոր սկզբնաղբյուր է Բասիլ I-ի քաղաքական գործունեության պատմությունը ուսումնասիրելու համար։ Աշխատությունը կարևոր է նաև հայկական գաղթօջախների և առաջին հերթին Ադրիանապոլսի ու նրա շրջակայքի գաղթօջախների պատմության ուսումնասիրության տեսակետից։ Այստեղ հեղինակն ամեն առիթով շեշտում է, որ հայերը օտարության մեջ նույնիսկ անաղարտ էին պահում ազգային դեմքը, որ Բասիլ կայսեր նախնիները թեև խնամիանում էին տեղացիների հետ, բայց և մեկուսացած տոհմի նման էին ապրում։ Թվարկելով իր պապի մերձավոր ազգականներին ու համախոհներին և հատկապես շեշտելով, որ նրանք խոսում էին «իրենց լեզվով», Կոստանդին Միրանածինը ցույց է տալիս, որ Բյուզանդիայում ապրող հայերը ամենևին էլ չէին ապազգայնացել, այլ պահպանելով իրենց ազգային դիմագիծը, համախմբված ու հավաքական ուժ էին կազմում, որի շնորհիվ էլ կարողանում էին ձեռք բերել ամենաբարձր պաշտոններ և տոն տալ կայսրության ներքին ու արտաքին կյանքին։

Արևմտյան Հայաստանի, նրա պատմական աշխարհագրության և ռազմավարչական դրության պատմության ուսումնասիրության համար արժեքավոր նյութեր կան նաև Կոստանդին Միրանածինի «Բանակաթեմերի մասին» և այլ աշխատությունների մեջ։

Կոստանդին Միրանածինի նշված աշխատությունները հայերեն լույս են տեսել Երևանում, 1970 թվականին, Հ. Բարթիկյանի աշխատասիրությամբ։

Միջնադարյան բյուզանդական աղբյուրների մեջ հայտնի է «Համառոտություն պատմությանց» վերնագիրն ունեցող մի երկ, որի հեղինակ երկար ժամանակ համարում էին Գեորգիոս Կեդրենոսին։ Սակայն իրականում Կեդրենոսը իր ընդարձակածավալ աշխատության մեջ, որը սկսվում է աշխարհի արարչությունից, 811—1057 թվականների պատմությունը բառացի արտագրել է մեկ այլ հեղինակի՝ այն է Հովհաննես Սկիլիցեսի գրքից։ Այս անարդարության պատճառներից մեկը հավանաբար այն էր, որ Հովհաննես Սկիլիցեսի գիրքը լույս է տեսել շատ ուշ՝ 1973 թվականին, այն դեպքում, երբ դրանից ավելի շուտ, առաջին անգամ 1566 թվականին Բազելում, այն, որպես Կեդրենուսի ժամանակագրության բաղկացուցիչ մաս, ունեցել է բազմաթիվ հրատարակություններ։

Չնայած «Համառոտություն պատմությանց»-ը XI—XII դարերի բյուզանդական աղբյուրների մեջ համարվում է ամե-

նալավերից մեկը, որի հեղինակը որպես ժամանակի հայտնի ընտանիքի անդամ, կայսրության ոլորտներում վարել է զինվորական բարձր պաշտոններ, մենք նրա կենսագրության մասին համարյա ոչինչ չգիտենք։ Հովհաննես Սկիլիցեսի ապրած ժամանակը ենթադրաբար համարում են XI դարի կեսերից XII դարի առաջին տասնամյակը։ Սկիլիցեսը նույնպես իր ժամանակակիցներից շատերի նման սնոտիապաշտ է, տեսիլքներին, երազներին ու ճակատագրի կանխորոշված լինելուն հավատացող։ Սակայն վերոնշվածները չեն խանգարում նրա երկը բարձր գնահատելուն ու առաջնակարգ սկզբնաղբյուրների շարքը դասելուն։

Սկիլիցեսի պատմության սկզբի մասերը, այսինքն՝ 811 թվականից մինչև X դարի կեսերն ընկած ժամանակաշրջանն ընդգրկող բաժինը, նորություն չէ և առանձին արժեք չի ներկայացնում, որովհետև այն մեկ այլ աշխատության վերաշարադրությունն է, որ հայտնի է «Թեոփանեսի Շարունակող» անունով։ Ճիշտ հակառակ գնահատականն է տրվում Հովհաննես Սկիլիցեսի գրքի երկրորդ մասին, որը X—XI դարերի Բյուզանդիայի պատմության լավագույն սկզբնաղբյուրն է համարվում և նրա հետ մեկ այլ աղբյուր համեմատել չի կարելի։

«Համառոտություն պատմությանց»-ը Թեոփանես Խոստովանողի հայտնի ժամանակագրության շարունակությունն է և սկսվում է 811 թվականից ու հասցվում մինչև 1057 թվականը, որից հետո այդ պատմությունը շարունակվել է մինչև 1081 թվականը կամ հենց իր Սկիլիցեսի, կամ էլ մեկ այլ անծանոթ անձնավորության կողմից։ Սկիլիցեսը իր աշխատության մեջ օգտագործած ոչ մի հեղինակի անուն չի տալիս և մեջբերումներ չի կատարում։ Իրեն ծանոթ հեղինակների մասին նա խոսում է միայն գրքի առաջաբանում, որից երևում է, որ նրա վրա լուրջ ազդեցություն են թողել Գեորգիոս Վանականը և Թեոփանես Խոստովանողը։ Հենց վերջինիս երկն էլ, ինչպես ասվեց, շարունակում է Սկիլիցեսը։

«Համառոտություն պատմությանց»-ը մի արժեքավոր աղբյուր է, որտեղ կարևորագույն տեղեկություններ են հաղորդվում ոչ միայն Հայաստանի X—XI դարերի քաղաքական, այլև սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին։ Այն կարող է օգտակար լինել նաև Հայաստանի պատմական աշխարհագրության և ազգագրության առանձին հարցերի ուսումնասիրության համար[72]։ Ուշադրության արժանի է նաև Սկիլիցեսի գրքի մեկ այլ դրական կողմը, այն, որ հեղինակը անհամեմատ հարուստ ու բազմակողմանի տեղեկություններ է հաղորդում այն հայ գործիչների մասին, որոնք Բյուզանդական կայսրության հասարակական, քաղաքական ու ռազմական կյանքում կարևոր դեր են խաղացել։ Խոսքը այստեղ դժբախտաբար վերաբերում է միայն, այսպես ասած, նշանավոր անհատներին, որոնք թեև թվապես շատ էին, սակայն, սրանք չէին կարող ներկայացնել կայսրության տարածքներում ապրող հայկական աշխատավորական հոծ զանգվածներին և ոչ էլ ընդհանրապես բյուզանդական հայկական գաղթօջախների բնակիչներին, որոնց մասին շատ հեղինակների նման, Սկիլիցեսը նույնպես ոչինչ չի հաղորդում։ Սկիլիցեսը և նրա Շարունակողը հիշում են շուրջ հարյուր հայ բարձրաստիճան գործիչների, որոնց բացարձակ մեծամասնությունը ծանոթ չէ նույնիսկ միջնադարյան հայ հեղինակներին։ Հույն հեղինակին ծանոթ հայ գործիչների մեջ կան ամենացածրաստիճան զինվորականներից մինչև կայսերական գահին ու Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռին հասած անձնավորություններ։ Հեղինակը իր գրքում խոսում է նաև բյուզանդական բանակի կազմում եղած հայկական զորամասերի մասին և շեշտում, որ հայ զինվորները կրում էին միմիայն ազգային՝ հայկական համազգեստ և ամեն ինչով տարբերվում հույներից։ Եվ թեև հայերն այդ ժամանակ շատ մեծ դեր էին կատարում Բյուզանդիայի ներքին և արտաքին կյանքում, բայց նրանց նկատմամբ այնտեղ ընդհանրապես տիրում էր անբարյացակամ վերաբերմունք, որը գուցե հայերի ակտիվության, գործունյա լինելու ու դավանանքի տարբերության հետևանք էր։ Եթե այս եզրակացությունը ճիշտ է, ապա ճիշտ է նաև այն, որ հայերը իրենց տոկունության ու ազգային ընդգծված հատկանիշների շնորհիվ օտարության մեջ նույնիսկ կարողացել էին պահպանել իրենց կրոնական և ազգային կերպարը և չէին ձուլվել հույներին։ Նման անհանդուրժողականություն, բնականաբար, ունեին նաև հայերը հույների նկատմամբ։ Հայ-հունական այդօրինակ հակա-

[72] Մանրամասնությունները տե՛ս Հովհաննես Սկիլիցես, Թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Երևան, 1979։

մարտությունն արտահայտող բազմաթիվ փաստեր բերվում են Սկիլիցեսի գրքի տարբեր բաժիններում։ Ինչպես վերևում ասվել է, բյուզանդական այս հեղինակի գործում շատ տեղեկություններ կան նաև Հայաստանի պատմական աշխարհագրության մասին։ Սկիլիցեսի գրքում հայկական աշխարհագրական անունները կամ ուղղակի տեղանունները բազմազան են՝ քաղաքներ, գավառներ, երկրամասեր, բերդեր, ամրոցներ և այլն, որոնք հեղինակը համապատասխանաբար ներկայացնում է ոչ միայն պատմական Հայաստանի, այլև Կիլիկիայի հայկական իշխանության ողջ տարածքում։ Այստեղ Սկիլիցեսը խոսում է այնպիսի անունների մասին և երբեմն այնպիսի մանրամասնությամբ, որ այլ աղբյուրներում և նույնիսկ հայկականում չենք հանդիպում։ Օրինակ, Սկիլիցեսից ենք իմանում, որ Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը անվանվել է նաև Վերին Մարաստան, որ Ծամնդավը մեծ ու հարուստ քաղաք էր։ Երևանի մոտի Ծիծեռնակաբերդի մասին առաջին հիշատակությունը ընդհանրապես հաղորդում է Սկիլիցեսը և այլն, և այլն։ Սկիլիցեսը բավական օբյեկտիվությամբ է նշում, նաև, որ Հայաստանի արևմտյան շրջաններում, Փոքր Հայքում և Հյուսիսային Միջագետքում հայերը տիրապետող մեծամասնություն էին կազմում։

Հովհաննես Սկիլիցեսի «Համառոտություն պատմությանց»-ը հայերեն լույս է տեսել 1979 թվականին Երևանում՝ Հ. Բարթիկյանի թարգմանությամբ։

Հայաստանի ֆեոդալիզմի ժամանակաշրջանի բյուզանդական սկզբնաղբյուրները թվարկվածներով չեն սպառվում։ Այստեղ ներկայացվեցին միայն նրանցից գլխավորներն ու կարևորները։

## 3. ԱՐԱԲԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Միջնադարյան Հայաստանի պատմության շատ հարցերի մասին հարուստ տեղեկություններ են պահպանվել նաև արաբական սկզբնաղբյուրներում։

Ինչպես Արաբական խալիֆայության, այնպես էլ հետագա ժամանակներում արաբ կամ արաբերեն գրող համարյա բոլոր հեղինակները, աշխարհագիրներն ու ճանապարհորդները, իրենց երկերում այս կամ այն չափով անդրադարձել են նաև Հայաստանին ու հայ ժողովրդին։ Սակայն, քանի որ հիշյալ հեղինակները մեծ մասամբ ծագելով բարձր խավերից կամ սերտ հարաբերությունների մեջ գտնվելով խալիֆայական իշխանության պաշտոնական շրջանների հետ, իրենց ստեղծագործություններում հիմնականում հանդես են եկել որպես արաբական պետության շահերի ու հետաքրքրությունների պաշտպաններ, դրա համար էլ նրանց հաղորդած տեղեկությունները ինչպես հպատակ մյուս երկրների, այնպես էլ Հայաստանի մասին տոգորված են միակողմանիությամբ և տիրողներին հատուկ միտումով։

Արաբական տիրապետության ժամանակաշրջանի ներքին սոցիալ-տնտեսական հարաբերությունների, իրավական նորմերի և հարկային համակարգի ուսումնասիրության լավագույն սկզբնաղբյուրը «Քիթաբ ալ-խարաջ» (Գիրք խարաջի մասին) աշխատությունն է։ Այս աշխատության հեղինակը Աբու-Յուսուֆ իբն-Իբրահիմ ալ-Անսարին է, որը գիտական գրականության մեջ հայտնի է Աբու-Յուսուֆ անունով։ Նա ծնվել է 731 թվականին։ 782—783 թվականներին Մուհամեդ էլ-Մեհդի (775—785) խալիֆի կողմից նշանակվելով Բաղդադի դատավոր, Աբու-Յուսուֆը սկսում է արագորեն վեր բարձրանալ և Հարուն ալ-Ռաշիդի ժամանակ (786—809) դառնում է խալիֆի ամենամտերիմ ու հավատարիմ անձնավորությունը, որի ցանկությամբ ու հանձնարարությամբ էլ գրում է իր վերոհիշյալ աշխատությունը։

Աբու-Յուսուֆի գիրքը փաստորեն VIII—IX դարերում Արաբական խալիֆայության մեջ գործող օրենքների մի ժողովածու է, որի բազմաթիվ դրույթներով փորձ էր արվում երկրի ներսում կանոնավորելու առաջին հերթին հարկային, հողային և կրոնական հարաբերությունները այն հաշվով, որպեսզի բոլոր դեպքերում և ամենուրեք ապահովվի արաբական պետության և իսլամի գերիշխանությունն ու առաջնությունը։ Հեղինակն իր բոլոր դրույթները, որպես կանոն, աշխատում է հիմնավորել Ղուրանի, Մուհամեդի և նրա հետևորդների ասույթներով և, ի վերջո, գրքի ստեղծման շարժառիթները բացատրում նրանով, որ «Ուղղահավատների տիրակալի այդ պահանջը բացարձակապես առաջացել է իր հպատակներին ճնշումից ազատելու և նրանց բարեկեցությունը ապահովելու ցանկությունից»։ Սակայն այդ խոսքերը միայն հաճոյական արտահայ-

տություններ էին գրքի պատվիրատուի հասցեին և երբեք, մանավանդ հպատակեցված ժողովուրդների նկատմամբ, չէին գործադրվում։ «Քիթաբ ալ-խարաջը» փաստորեն կոչված էր իրավաբանորեն հիմնավորելու արաբական բռնակալության տիրապետությունը հպատակ ժողովուրդների վրա և բազմապատկելու խալիֆայության եկամուտները, որոնց նկատմամբ պահանջները անընդհատ աճում էին։

VIII—IX դարերում Հայաստանում գործող հողային, հարկային և կրոնական հարցերը ուսումնասիրելիս, Աբու-Յուսուֆի աշխատությունը արժանի է ամենամեծ ուշադրության։ Իրավունքի հարցերին և իրավական նորմերին արաբներն անդրադարձել են նաև հետագայում՝ նույնիսկ Արաբական խալիֆայության թուլացման ու անկման շրջանում։ Աբու-Յուսուֆից հետո արաբական մատենագրության հիշյալ բնագավառի ոչ անհայտ հեղինակներից մեկն էլ Ալ-Մավերդին է (XI դար)։ Պատմագիտական առումով արժեքավոր է նրա «Քիթաբ ալ-ահքամ աս-սուլթանիա» (Գիրք իշխանությունների օրենքների) աշխատությունը, որը վերաբերում է Արաբական խալիֆայության պետական կառուցվածքի տեսական հարցերին և հողային ու հարկային բնագավառներում գործող օրենքներին։

IX—X դարերից սկսած պատմական դեպքերի մասին առանձին հեղինակների գործերում պահպանված հիշատակությունները միացվում, լրացվում և դարձվում են այսպես ասած համաշխարհային պատմություններ։ Մատենագրության հիշյալ ճյուղի հիմնադիրը արաբական գրականության մեջ Բալաձորին է։ Նա ծագումով պարսիկ է, ծնվել է Եգիպտոսում։ Նրա ծննդյան թվականը հայտնի չէ։ Մահացել է 892 թվականին։ Բալաձորին եղել է Մուհամեդ ալ-Մութազ-Բիլլահ խալիֆի (866—869) որդու դաստիարակը, որի համար էլ հավանաբար երբեք դասագիրք գրել է իր «Գիրք երկրների նվաճման» հայտնի աշխատությունը, որը արաբական նվաճումների համառոտ տեսությունն է սկզբից մինչև իր օրերը։ Բալաձորիի հիշյալ աշխատության մի բաժինն էլ վերնագրված է «Արմենիայի նվաճումը», որտեղ հեղինակը խոսում է Արաբական խալիֆայության ձեռնարկած առաջին արշավանքների, Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի նվաճման, Արմենիայի ժողովուրդների ապստամբական շարժումների ու ըմբոստությունների և այլ հարցերի մասին։ Նա իր նյութերը դասավորել է խնամքով և ժամանակագրական հաջորդականությամբ։ Բալաձորիի հիշատակությունների մեջ առանձնապես վստահելի են Հայաստանում կատարված պատմական կարևոր իրադարձությունների թվականները, որոնք երբեմն համընկնում են հայկական աղբյուրների տվյալներին։ Հեղինակի աշխատությունը այս տեսակետից, վստահություն է ներշնչում մանավանդ նրա համար, որ ինքն անձամբ եղել է Հայաստանում և հարցուփորձ արել ծերունիներին ու գրի առել նրանց պատմածները։ Հեղինակի վերոհիշյալ աշխատության բաժիններից մեկն էլ վերաբերում է Արաբական խալիֆայության հողատիրության կարգին։

Բալաձորիի աշխատությունը արժեքավոր է նրանով, որ այնտեղ օգտագործված են այնպիսի աղբյուրներ, որոնք մեծ մասամբ չեն պահպանվել։ Հեղինակը իր օգտագործած նյութերի նկատմամբ ցուցաբերում է քննադատական մոտեցում և շարադրանքի ընթացքում չի սահմանափակվում գրքի վերնագրի շրջանակներով; այլ շոշափում է նաև տնտեսական, մշակութային և սոցիալական բնույթի հարցեր ու բոլոր դեպքերում էլ հանդես է գալիս որպես կրթված ու գիտակ անձնավորություն։ Դրա համար էլ Բալաձորիին համարում են մուսուլմանական աշխարհի առաջնակարգ հեղինակներից, որից ազդվել ու օգտվել են հետագայի շատ գրողներ։ Կապված լինելով խալիֆայության բարձր խավերի հետ, Բալաձորին նվաճողի աչքերով է նայում հպատակեցված ժողովուրդներին և ամեն առիթով արդարացնում արաբների ծանր ու դաժան քաղաքականությունը նրանց նկատմամբ։ Դրա համար էլ Բալաձորիի տեղեկությունները կարելի է օգտագործել միայն քննադատական մոտեցմամբ։

IX դարի արաբ պատմագիր-աշխարհագիրներից հայտնի է նաև Ալ. Յակուբին։ Նրա ծննդյան թվականը հայտնի չէ։ Երիտասարդական տարիներին Յակուբին, շատ է ճանապարհորդել Արևելքում։ Նա եղել է Պարսկաստանում, Հնդկաստանում, իսկ հետո հաստատվել Եգիպտոսում, որտեղ և վախճանվել է 897 թվականին։ Յակուբիից պահպանվել են ինչպես պատմագրական, այնպես՝ էլ աշխարհագրական բնույթի աշխատանքներ։ Նրա «Քիթաբ ալ-բուլդանը» (Գիրք երկրների) արաբական պատմաաշխարհագրական գրականության վիճակագրության ուղղությանն է պատկանում։ Շարադրանքի ընթացքում արաբ ճանա-

պարհորդների տեղեկություններից և պետական, պաշտոնական վավերագրերից բացի հեղինակը օգտագործել է նաև անձամբ ձեռք բերած նյութեր։ Նա ինքնուրույն, արժանահավատ և մեծ մասամբ վստահելի հեղինակ է։ Մուսուլմանական կրոնի ներքին հարցերում էլ Յակուբին անկողմնակալ է։

Արաբական այս հեղինակը իր ճանապարհորդությունների ընթացքում այցելել է նաև Հայաստան և մնացել այստեղ մինչև 873 թվականը։ Հայաստանում նա հնարավորություն է ունենում ծանոթանալու երկրին, նրա տնտեսական ու քաղաքական վիճակին և հավաքելու նոր, թարմ նյութեր իր աշխատության համար։ Յակուբին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Հայաստանի քաղաքական պատմության ու տնտեսական դրության մասին։ Նկարագրում է քաղաքները, ճանապարհները, նշում արաբներին տրվող հարկերի չափը, խոսում առևտրի և արհեստագործության մասին։ Յակուբիի տվյալներով իր ժամանակ Հայաստանում կար 18000 բնակավայր։

Արաբական խալիֆայության տիրապետության ժամանակաշրջանի Արմենիայի վարչական համակարգի, քաղաքական ու տնտեսական դրության, ճանապարհների, կարևոր քաղաքների ու բնակավայրերի, նրանց միջև հեռավորությունների, հարկային համակարգի ու հարկերի չափերի մասին հետաքրքիր ու արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև միջնադարյան արաբ հեղինակ Իբն-Խորդադբեհ (մոտ 820—912)։ Խորդադբեհն ծագումով պարսիկ էր և բարձր պաշտոնյայի զավակ։ Նա գրել է տարբեր բնույթի աշխատություններ, որոնցից համառոտ տարբերակով պահպանվել է «Քիթաբ ալ-մեսեդիք վա-լ-մեմալիք»-ը (Գիրք ճանապարհների և թագավորությունների)։ Խորդադբեհի գիրքը հետագայում օգտագործել են արաբական այլ հեղինակներ։ Ընդհանրապես պետք է նկատել, որ արաբական հեղինակները, որպես կանոն, իրենց երկերում կարևոր տեղ են հատկացնում Հայաստանի ու հարակից շրջանների աշխարհագրությանը, տնտեսությանն ու հարկերին, որից կարելի է հանգել այն եզրակացության, թե նվաճված երկրները նրանց ամենից առաջ հետաքրքրել են իրենց հարստություններով և ունեցվածքով։ Արաբական պատմիչները, աշխարհագիրները և ճանապարհորդները նույնպես Հայաստանը դիտել են որպես իրենց կողմից կողոպտվող ու հարստահարվող երկիր։ Ահա թե ինչու նրանց տեղեկություններն ընդհանուր առմամբ տոգորված են Արաբական խալիֆայության նվաճողական քաղաքականությունն ամեն կերպ արդարացնելու և նվաճվածներին նսեմացնելու ձգտումով։

Հայաստանի և հայ ժողովրդի պատմության վերաբերյալ կարևորագույն սկզբնաղբյուրներ են նաև XIII դարի արաբ հեղինակներ Յակուտ ալ-Համավիի «Աշխարհագրական բառգիրք»-ը («Քիթաբ Մուջամ ալ-Բուլդան») և Աբդուլ-Ֆիդայի «Ժամանակագրություն» աշխատությունները[78]։

## 4. ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հայաստանի միջին դարերի պատմությանը վերաբերող սկզբնաղբյուրները, ինչպես ասել ենք, զգալի չափով ունեն միակողմանի բնույթ, որովհետև հայ և օտար պատմագիտական աշխատությունների հեղինակները իրենց հիմնական ուշադրությունը կենտրոնացրել են քաղաքացիական պատմության վրա և չեն անդրադարձել կամ հպանցիկ ձևով են ներկայացրել երկրի ու ժողովրդի ներքին կյանքի, սոցիալ-տնտեսական ու հասարակական հարաբերությունների հարցերը, որոնց համակողմանի ուսումնասիրությամբ է միայն հնարավոր լինում արդի պատմագիտության պահանջների մակարդակով մշակել ու շարադրել նաև հայոց պատմությունը։ Ահա պատմագիտական սկզբնաղբյուրների այդ շատ կարևոր բացը մի զգալի չափով լրացնում են հայկական եկեղեցական ժողովների հաստատած կանոնները և իրավագիտական բնույթի սկզբնաղբյուրները։

Մինչև VIII դարի սկզբները հայկական իրականության մեջ գործադրվում էին դեռևս IV դարից հաստատված եկեղեցական կանոններն ու բարձրաստիճան կրոնական գործիչների սահմանած օրենքները։ Սակայն քանի որ այդ կանոններն ու օրենքները, ստեղծված լինելով տարբեր ժամանակներում, ցրված էին ու մի տեղ հավաքված չէին, դրա համար էլ անհրաժեշտության դեպքում նրանց բոլորի ըստ հարկին օգտագործումը գրեթե անհնար էր։ Այս հանգամանքը լուրջ խոչընդոտներ էր հարուցում ոչ միայն եկեղեցական կանոնների ու օրենքների գործ-

[78] Տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Բ. Խաչատրյան, Երևան, 1965։

նական կիրառության հարցում, այլև գցում էր հայոց եկեղեցու և բարձրաստիճան եկեղեցականների հեղինակությունը, այսպես ասած, չգործադրվելիք օրենքներ հաստատելու համար։ Եվ ահա միայն VIII դարում հնարավոր եղավ հայկական եկեղեցական կանոնները ի մի հավաքել։ Կանոնների ընտրության, դասավորության և ամբողջականացման գործում առաջին խոշոր աշխատանքը կատարել է հայոց կաթողիկոս Հովհան Օձնեցին (717—728). Նրա նախաձեռնությամբ էր, որ կազմվեց հայկական եկեղեցական կանոնագիրքը։ Օձնեցին փաստորեն դարձավ այդ աշխատության առաջին գիտական խմբագիրը։ Նա իր ձեռքի տակ եղած կանոնները դասավորել է ժամանակագրական կարգով, տվել համապատասխան գլխակարգություն և կատարել կանոնների հերթական համարակալում, որն անհամեմատ հեշտացնում է «Կանոնգրքից» օգտվելը։ Մասնագետները միանգամայն իրավացիորեն գտնում են, որ «Կանոնգրքի» խմբագիրը այդ աշխատանքը կատարելու ընթացքում, անպայման ձեռքի տակ ունեցել է հունական նույնատիպ կանոնագրքերը և Հուստինիանոսի օրենքների ժողովածուն (VI դար)։ Օձնեցու «Կանոնգիրքը» արժեքավոր սկզբնաղբյուր է նաև իր հնությամբ։ Բավական է ասել, որ նույնանման ժողովածուներ Եվրոպայում սկսել են կազմել միմիայն IX դարից։

Հովհան Օձնեցու աշխատանքը «Կանոնգրքում» հասնում է մինչև 37-րդ գլուխը և իր մեջ ամփոփում է 1207 կանոն։ Օձնեցուց հետո հաստատված կամ նրա կողմից դուրս թողնված մյուս կանոնները, բնականաբար, «Կանոնգրքի» մեջ են մտցվել տարբեր ժամանակներում, տարբեր անձնավորությունների կողմից։

«Կանոնգիրքը» պարունակում է բազմաթիվ հոդվածներ, որոնք վերաբերում են դավանանքին, ծիսակատարություններին, ընտանիքին, կենցաղին, դասերին ու դասակարգերին, նրանց առանձին ներկայացուցիչների գործած հանցանքներին ու զանցանքներին, սահմանված պատիժներին, պատժաչափերին և այլն, և այլն։ Այդ կանոնները մեծ մասամբ կրոնաբարոյախոսական, խրատական և հասարակական համակեցությանը վերաբերող օրենքներ են, դրա համար էլ արտահայտում են Հայաստանի ներքին կյանքի միայն որոշ կողմերը, որոնք այն ժամանակ հետաքրքրում էին առաջին հերթին երկրի աշխարհիկ ու հոգևոր իշխանություններին։ Քանի որ «Կանոնգիրքը»



կազմվել է ֆեոդալական հասարակարգի ու նրա գաղափարախոսության՝ քրիստոնեության գերիշխանության պայմաններում հենց ֆեոդալական հաստատությունների կամ տիրող դասակարգի ներկայացուցիչների ձեռքով, գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների շահերի պաշտպանության և ամրապնդման համար, այդ պատճառով էլ նրանում բացահայտորեն ընդգծվում է դասակարգային խտրականությունը։ Շատ են, օրինակ, այնպիսի կանոնները, որոնք միևնույն հանցանքի կամ զանցանքի համար պատժի կամ ապաշխարության համեմատաբար մեղմ հոդվածներ են սահմանում հոգևոր ու աշխարհիկ իշխանավորների նկատմամբ և, ընդհակառակն՝ ավելի խիստը աշխատավորական խավերի ներկայացուցիչների համար։ Այնուամենայնիվ «Կանոնգրքի» արժեքը չի կարելի չափազանցել։ Այն «...միջնադարյան հայ հասարակության ներսում «ազատ»-ների ձեռքին հանդիսացել է տվյալ ժամանակաշրջանում իրենց հուզող հարցերի լուծման ղեկավար լծակ, և ոչ հասարակության ներքին կյանքի բոլոր կողմերն արտահայտող մի ամբողջական օրենսդրական հուշարձան»[74]։ «Կանոնգիրքը» հայ իրավագիտական գրականության մեջ իրավագիտական ակտերի առաջին պաշտոնական ժողովածուն է, որովհետև այն հաստատված էր Հայաստանում օրենսդրական և դատավարական իրավունքը դարեր շարունակ իր ձեռքում պահող եկեղեցու ու կաթողիկոսի կողմից և որպես այդպիսին՝ նրա կիրառումը պարտադիր էր հասարակության բոլոր անդամների համար, առանց դասակարգային ու դասային բացառությունների։ Հայկական «Կանոնգրքի» լիակատար ու գիտական-համեմատական հրատարակությունը, ընդարձակ առաջաբանով ու ծանոթագրություններով իրականացրել է Վ. Հակոբյանը՝ երկու հատորով (Երևան, 1964 և 1971)։

Միջին դարերում հայ իրավագիտական միտքը, սակայն, չսահմանափակվեց միայն եկեղեցական կանոնների ու որոշումների շրջանակներում։ Այդ ժամանակ Հայաստանում հասարակական հարաբերությունների և իրավական նորմերի կարգավորմամբ սկսեցին զբաղվել նաև մշակույթի բնագավառի մարդիկ, որոնց առաջին ներկայացուցիչը հանդիսացավ Դա-

[74] «Կանոնագիրք հայոց», հ. Ա, աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ XII։

Դավիթ Ալավկա Որդին, որի մասին հիշատակում են Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Մխիթար Այրիվանեցին, Ստեփանոս Օրբելյանը և ուրիշներ, ասելով, որ նա հորինում է «գեղեցկայարմար», «պիտանցու» և «դիւրահաս» կանոններ։ Սակայն այս հեղինակը անցյալի նույնիսկ նշանավոր հայագետների կողմից (Մ. Չամչյան, Հ. Տաշյան) ըստ արժանվույն չի գնահատվել, իսկ նրա կանոնները համարվել են «խառնիխուռն» և «անիմաստ»։ Նման աննպաստ կարծիքի դեմ առաջինը հանդես եկավ բանասեր Կ. Կոստանյանցը և ցույց տվեց, որ Դավթի կանոնները շատ կարևոր աղբյուր են իր ժամանակաշրջանի կենցաղային սովորույթներն ուսումնասիրելու համար։ Դավիթ Ալավկա Որդու և նրա կանոնների մասին դրական են արտահայտվել նաև Ղ. Ալիշանը, Բ. Սարգիսյանը և հետագայի շրջանի մասնագետները։

Դավիթ Ալավկա Որդին ծնվել է XI դարի 70—80-ական թվականներին Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Գանձակ քաղաքում։ Նա Հաղպատում Հովհաննես Իմաստասերի հետ ստացել է իր ժամանակի համար բարձր կրթություն։ Ժամանակակից հիշատակագիրներից մեկը Դավիթ Ալավկա Որդուն համարում է «անվանի» մարդ, որն ուներ շատ աշակերտներ ու ընկերներ։ Նա մեծ հեղինակություն էր վայելում նաև հայոց եկեղեցու բարձրաստիճան հոգևորականության շրջանում և ակտիվ մասնակցություն էր ցույց տալիս կարևոր իրադարձություններին։ Դավիթ Ալավկա Որդին մահացած պետք է լինի 1139 թվականին։ Հեղինակի պատվիրատուն Արքայությունն անունով քահանան է։

Դավիթ Ալավկա Որդու Կանոնները, որոնք զետեղված են «Կանոնական օրենսդրութիւն» խորագիրը կրող ժողովածուում, թվով շատ չեն, ընդամենը՝ 97 կանոն։ Այդ կանոնների ստեղծումը հիմնականում պայմանավորված լինելով ժամանակի կենցաղային հարաբերությունների ու սովորությունների կարգավորման անհրաժեշտությամբ՝ կարևոր հիմք է հայ իրավունքի պատմության ուսումնասիրության համար։

Դավիթ Ալավկա Որդին իր կանոնները կազմելիս հաճախ օգտվել է եկեղեցական հայրերի կամ ժողովների կազմած կանոններից ու ժողովրդական սովորություններից։ Նրա կանոնները ունեն ավելի շատ խրատական, մարդկանց համոզելու ձև։ Ինչպես Կ. Կոստանյանցն է ասում, Դավթի կանոնները հայ



գրականության մեջ իրենց տեսակով եզակի են։ Հեղինակը իր ժամանակաշրջանի կյանքը ներկայացնում է այնպես, ինչպես կա։ Դավիթ Ալավկա Որդին որպես իր ժամանակաշրջանի առաջադեմ անձնավորություններից մեկը պայքարել է ապականված բարքերի ու սովորությունների դեմ և առաջարկել դրանք ուղղելու ռացիոնալ միջոցներ, որոնք անպայման ունեին կենսական կարևորություն։ Այդ կանոնների ուսումնասիրությունը պարզում է միջնադարյան Հայաստանի կենցաղային, մտավոր ու բարոյական վիճակի, ժողովրդի սովորությունների ու բարքերի շատ կողմեր։ Նրա կանոնները ժամանակի արտացոլումն են գիտական գրականության մեջ։ Այսպես, օրինակ, Դավիթը ունի կանոններ այն մասին, թե ինչպես պետք է վարվել սնընդամթերքների ապականման, կեղտոտման ժամանակ և ինչ միջոցներ պետք է կիրառել մթերքները մաքուր վիճակում պահելու, կեղտոտվածները մաքրելու համար։ Կան նաև կանոններ, որոնք պատիժներ են սահմանում ամուսնական սրբապղծության, սպանության, գողության, հայհոյանքի, վաշխառության, կախարդության և այլնի համար։ Հատուկ կանոններով Դավիթը խարազանում է հատկապես ընչաքաղց հոգևորականներին, արգելում քահանաներին՝ հափշտակել ժողովրդի ունեցվածքը, առանց քահանայական կոչման քահանայություն անել և այլն։ Կանոններից մեկով հեղինակն արգելում է տեղ-տեղ գոյություն ունեցող այն ապօրինի կարգը, երբ քահանաները օրինական ամուսիններին բաժանում են իրարից և թույլատրում ուրիշների հետ ամուսնանալ և փոխարենը կաշառք են վերցնում։ Հետևանքը լինում է՝ «Կնոջ և առն բաժանումն, զաւակաց ցրումն, ընչից առումն, տանց աւերումն, ի հայրենեաց ելումն, ի դատաւորս և յատեանս բազում քարշումն... այլ և յոլով բճախեղդութիւն»։ Դավիթ Ալավկա Որդին հատուկ ուշադրություն է դարձնում մարդկանց աշխատանքի անվտանգության պաշտպանության խնդիրներին և հատուկ կանոնով պահանջում, որ աշխատանքի համար ստեղծվեն ապահով ու անվտանգ պայմաններ։ «Կանոնական օրենսդրութեան» լրիվ տեքստը առաջին անգամ լույս է տեսել Ա. Գ. Աբրահամյանի աշխատասիրությամբ «Էջմիածին» ամսագրում (1953)։ Ջ. Դաուսեթը այն թարգմանել և հրատարակել է անգլերեն (Լուվեն, 1961)։

Դավիթ Ալավկա Որդու Կանոնները կազմել են Հայկական

առաջին դատաստանագիրքը, որից հետագայում օգտվել է նաև Մխիթար Գոշը։

Մխիթար Գոշը նույնպես Գանձակեցի է, Դավիթ Ալավկա Որդու հայրենակիցը։ Նա ծնված պետք է լինի XII դարի 20—30-ական թվականներին։ Հենց սկզբից ծնողների հսկողության ներքո դարձել է գրաճանաչ և սովորել Ս. Գիրքը։ Հետագայում ձեռնադրվել է կուսակրոն քահանա։ Նա եղել է իր ժամանակի հայտնի դեմքերից մեկի՝ Հովհաննես Տավուշեցի վարդապետի աշակերտը։ Հետագայում, ստանալով վարդապետի աստիճան, ուսումը շարունակելու համար Գոշը մեկնում է Կիլիկիայի նշանավոր Սև լեռան վանքը։ Այստեղ ուսումնառությունը ավարտելուց հետո նա վերադառնում է հայրենիք, որտեղ կարճ ժամանակում ձեռք է բերում մեծ ուսումնականի համբավ։ Հենց այդ ժամանակ էր, որ Գոշը, սելջուկների հետապնդումներից խուսափելու համար, ապաստանում է Խաչենում, Հաթերքի իշխան Վախթանգի մոտ։ Մի քանի տարի հետո նա վերադառնում է Կայեն գավառը և հաստատվում Աղստև գետի աջ ափին գտնվող Գետիկ վանքում։ Երբ մի ուժեղ երկրաշարժից Գետիկը քանդվում է, Իվանե աթաբեկ Զաքարյանի թույլտվությամբ, նրա միաբանները հաստատվում են Տանձուտաձոր վայրում և շինում Նոր Գետիկի վանքը։ Վանքի կառուցման աշխատանքներին մեծ օգնություն են ցույց տալիս Զաքարե ու Իվանե եղբայրները և Հաթերքի իշխան Վախթանգը։

Մխիթար Գոշը Նոր Գետիկում ուսուցչական աշխատանքից բացի եռանդուն զբաղվում է նաև մատենագրությամբ։ Նա վախճանվել է 1213 թվականին, խոր ծերության հասակում և թաղվել Նոր Գետիկի վանքում, որն այժմ գտնվում է ՀՍՍ Դիլիջան քաղաքից ոչ հեռու՝ Գոշ գյուղում։

Մխիթար Գոշը գրել է կրոնաբարոյագիտական, գեղարվեստական և իրավագիտական շատ աշխատություններ, որոնցից հայ մշակույթի պատմության համար առանձնահատուկ արժեք են ներկայացնում նրա առակները և «Դատաստանագիրքը», որոնք արժեքավոր ու բազմապիսի նյութեր են մատակարարում Հայաստանի ներքին կյանքի, նրա սոցիալ-տնտեսական ու հասարակական հարաբերությունների մասին։

Մինչև XII դարը հայկական իրականության մեջ աշխարհիկ բնույթի իրավագիտական գործերը եզակի էին։ Այն ժամանակ Հայաստանում մեծ մասամբ գործադրվել են եկեղեցական



կանոնները և սովորութական իրավունքը։ Ուսումնասիրողներից ոմանք այդ հանգամանքը բացատրում են Հայաստանի պետական անկախության ոչ հարատևությամբ և երկրում իշխող ֆեոդալական ցրվածությամբ։ Դավիթ Ալավկա Որդին իր «Կանոններով» միայն առաջին փորձը կատարեց աշխարհիկ օրենսդրության ստեղծման ասպարեզում, իսկ Մխիթար Գոշը իր նախորդի սկսածը հանճարեղորեն ավարտեց։ Դրա համար էլ մինչև Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հանդես գալը Հայաստանում դատարանական ասպարեզում տիրում էր մի տեսակ անկայուն և անորոշ վիճակ, երբ դատաքննչական ասպարեզի մարդիկ սխալների, կամայականությունների ու անարդարությունների հետ մեկտեղ, զբաղվում էին նաև կաշառակերությամբ ու շարաշահումներով։ Մխիթար Գոշի ժամանակ Զաքարյանների կողմից ազատագրված հայկական շրջաններում ֆեոդալական հարաբերությունների զարգացումը հրամայաբար պահանջում էր նաև ամրապնդել դրանք։ Այս տեսակետից Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» իր ժամանակի ծնունդն էր և պայմանավորված էր սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունների զարգացման նոր ընթացքով։ «Դատաստանագիրքը» ֆեոդալական հասարակարգի իրավունքները օրինականացնող վավերագիրն էր։

Մխիթար Գոշը իր աշխատության առաջաբանում բերում է մի քանի շարժառիթներ, որոնք ստիպել են իրեն գրելու «Դատաստանագիրքը»։ Առաջինը դրանցից այն է, որպեսզի այլազգիները չբամբասեն ու չասեն, թե քրիստոնյաները օրենքներ չունեն, իսկ երկրորդը՝ որպեսզի կրոնավորները և աշխարհիկ իշխանավորները չաղավաղեն ճշմարտությունը և չզբաղվեն կաշառակերությամբ[75]։ Եվ թեև ժամանակի քաղաքական իրադարձությունների ազդեցության տակ Գոշի աշխատության մեջ որոշ չափով նկատելի են կրոնական և ազգային խտրականության պահեր, սակայն դրանք, անշուշտ, դարավոր ստրկությունից իր անկախությունը նվաճած ժողովրդի զգացմունքների արդյունքն էին, որոնք ամենևին չեն ազդում «Դատաստանագրքի» որակի ու նշանակության վրա։

Մխիթար Գոշը իր «Դատաստանագիրքը» գրել է Հայոց

---

[75] Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, աշխատասիրությամբ՝ Ե. Թորոսյանի, Երևան, 1975, էջ 1—2։

Արևելից կողմանց կաթողիկոս Ստեփանոսի հանձնարարությամբ։ Աշխատությունը բաղկացած է երեք մասից՝ «Նախադրություն», որն ունի 11 գլուխ, «Եկեղեցական կանոնք»՝ 124 գլուխ և «Աշխարհական օրէնք»՝ 130 գլուխ։ Աշխատության հենց սկզբում Գոշը արդարացիորեն գանգատվում է սկզբնաղբյուրների պակասությունից, բայց, այնուամենայնիվ, նա այդ դժվարությունը հաղթահարել է։ Նա իր աշխատությունը գրելու համար օգտագործել է օտար աղբյուրներ, սակայն չի մոռացել նաև հայկական դարավոր սովորութական իրավունքն ու ավանդությունները։ Գոշը «Դատաստանագիրքը» սկսել է գրել 1184 թվականին ու թեև այն քաղաքացիական իշխանությունների կողմից չի հաստատվել ու պաշտոնապես չի ընդունվել որպես գործող օրենսգիրք, բայց, անկախ դրանից, այնպիսի ճանաչման է արժանացել, որ Հայաստանից բացի գործադրվել է նաև հայկական գաղթավայրերում՝ շուրջ 700 տարի։

Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» որոշակի ազդեցություն է ունեցել նաև սլավոնական և վրացական օրենքների վրա։ Այդ աշխատությունը լայն չափով օգտագործել է նաև Սմբատ Սպարապետը իր Դատաստանագիրքը կազմելու ժամանակ։

Մխիթար Գոշի դատաստանագրքի առաջին գիտաքննական հրատարակությունը իրականացրել է Վ. Բաստամյանցը 1880 թ., վերջինը, լավագույնը՝ հրատարակել է Խ. Թորոսյանը (Երևան, 1975)։ Այն լույս է տեսել նաև լատիներեն, լեհերեն, վրացերեն և ռուսերեն (Երևան, 1954) լեզուներով։

Սմբատ Սպարապետը իրավագիտական բնագավառի երկրորդ խոշոր դեմքն է։ Նրա առաջին իրավագիտական գործը «Անտիոքի ասիզների» թարգմանությունն էր հին ֆրանսերենից։ Բնորոշ է, որ XIII դարում խաչակիրների տիրապետության ժամանակաշրջանում Անտիոքի լատինական իշխանության շրջանակներում գործող իրավագիտական այս կարևորագույն աշխատության բնագիրը չի պահպանվել և Սմբատ Սպարապետի թարգմանածը այսօր բնագրի դեր է կատարում[76]։

Սակայն որքան էլ Կիլիկիան և Անտիոքի ֆեոդալական իշխանությունը այդ ժամանակ սոցիալ-տնտեսական և քաղաքա-

[76] Տե՛ս «Ассизы Антиохийские», «Բանբեր Մատենադարանի», № 4, Երևան, 1958, էջ 329—375 (ռուսերեն թարգմանությունը Ա. Պապովյանի)։



կան բնույթի ընդհանրություններ ունենային, Անտիոքում գործող օրենքները չէին կարող լիակատար կերպով բավարարել իր զարգացման բարձր մակարդակին հասած Կիլիկիայի հայկական թագավորության պետական ու քաղաքական պահանջները։ Այս խնդիրը ամենից լավ էր հասկանում հենց ինքը՝ Սմբատ Սպարապետը, որը որպես պետական բարձր պաշտոնյա և Հեթում թագավորի եղբայրը, առանձնապես մտահոգված էր օրենսդրության հարցերը կարգավորելով և պետության իրավական հիմքերը ավելի հաստատուն օրենքներով ամրապնդելով։

Ահա հենց այս շարժառիթներից ելնելով էլ 1265 թվականին Սմբատը ձեռնամուխ է լինում օրինակելի դատաստանագրքի ստեղծմանը, որի նպատակն էր՝ «...ամրապնդել պետական իշխանությունը, սանձահարել ինքնակամ հայ ֆեոդալներին և նրանց զինված ուժերը պայքարի ուղղել թշնամական պետությունների դեմ... հայկական պետության ամբողջականությունն ու անկախությունը պաշտպանելու համար»[77]։ «Դատաստանագրքի» առաջաբանում իր նպատակների մասին հեղինակը համեստորեն գրում է հետևյալ տողերը. «Եւ արդ գրեցի զսա վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ եւ գոյանալոյ երկրի և ապա վասն աշխարհական դատաւորաց եւ թագաւորաց։ Եւ զսիրտ բանիցն առեալ եդի համառաւտաբար։ Զորս աղաչեմ անմեղադիր լինել իմոյ նուաստութեանս. վասն զի չէր իմ բան. եւ ձեռաւք իմովք աշխատեցայ եւ փոխեցի զսա ի չար եւ ի դառն ժամանակի»[78]։

«Դատաստանագիրքը» կազմված է երկու գլխավոր մասերից և պարունակում է 202 ընդարձակ հոդվածներ, որոնք հատկապես վերաբերում են թագավորական և իշխանական, ապա նաև պետական իրավունքի նորմերին իրենց ամենաընդարձակ իմաստով վերցրած։ Այստեղ համապատասխանաբար տեղ են գտել նաև ժառանգականության, ընտանեկան, գրավի, առևտրական, կտակի, քրեական իրավունքները, ծառաների, ճորտերի իրավական դրությունն իրենց տերերի նկատմամբ արտահայտող

[77] Смбат Спарапет, Летопись, перевод с древнеармянского А. Галстяна, Ереван, 1974, с. XXIX.

[78] Смбат Спарапет. Судебник, составление текста, перевод с древнеармянского, предисловие и примечания А. Галстяна, Ереван, 1958, с. 4.

օրենքները և այլն, և այլն։ Սմբատ Սպարապետը կյանքի գրեթե բոլոր բնագավառներն ընդգրկող մի այսպիսի դատաստանագիրք ստեղծելու համար լայնորեն օգտագործել է Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», օգտվելով նաև իր ժամանակ գործող հայ և օտար իրավագիտական սկզբնաղբյուրներից։

Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը» որպես Կիլիկիայի իրավաքաղաքական վիճակը ճշմարտացի արտացոլող փաստաթուղթ, անգնահատելի սկզբնաղբյուր է։ Այն իր ձևով, նյութերի դասավորության կարգով և համակարգված շարադրանքով մի իսկական օրենսգիրք է, որն ունի դասակարգային խոր բովանդակություն և արտահայտում է տիրող աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների արտոնյալ վիճակը հասարակության մեջ և դասակարգային ու դասային անհավասարությունն ընդհանրապես[79]։ Եվ որովհետև Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը» լիովին արտահայտում էր Կիլիկիայի պետության շահերն ու համապատասխանում նրա զարգացման ընթացքին, դրա համար էլ այն որպես պաշտոնական օրենսգիրք գործադրության մեջ մնաց ավելի քան հարյուր տարի և որպես այդպիսին ասպարեզից դուրս եկավ միայն Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո (1375 թ.)։

## 5. ՀԱՅԿԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հայաստանի անկախության պայմաններում՝ X—XI դարերում մշակույթի լայն ճանապարհ հարթողներից մեկը Գրիգոր Պահլավունի Մագիստրոսն էր, որն իր քաղաքական ու գիտամանկավարժական մեծ ու բազմակողմանի գործունեությամբ բարձրացրեց ոչ միայն Պահլավունիների վաստակաշատ տոհմի հեղինակությունը, այլև դարձավ այն ժամանակվա հայ մտավորականության երևելի ներկայացուցիչը և իր ստեղծագործություններով որոշակի ազդեցություն ունեցավ հետագա հեղինակների վրա։ Գրիգոր Մագիստրոսը մյուսներից տարբերվում է նաև նրանով, որ նա առաջին աշխարհական հայ գիտնականն ու փիլիսոփան է ողջ միջնադարում։

Գրիգոր Մագիստրոսը ծնվել է մոտավորապես 990 թվա-

[79] Տե՛ս «Судебник Смбата Спарапета (Гундстабля)», перевод с древнеармянского А. Сукиасяна, Ереван, 1971, էջ 24։



կանին, Անիում։ Նա նշանավոր զորավար Վահրամ Պահլավունու եղբոր՝ Վասակի որդին էր։ Հորեղբոր՝ Վահրամի հատուկ հոգատարությամբ, Գրիգորը հենց Անիում էլ ստանում է իր բարձրագույն կրթությունը, ուսումնասիրում հատկապես քերականություն, ճարտասանություն, փիլիսոփայություն, երաժշտություն, աստղաբաշխություն, մաթեմատիկա, երկրաչափություն ու բժշկություն, որոնք այն ժամանակ մեկ ընդհանուր անունով կոչվում էին «արտաքին» գիտություններ։ Արդեն իսկ Անիում Գրիգոր Մագիստրոսը ամենատարբեր գիտությունների գծով ձեռք բերելով հիմնավոր գիտելիքներ, հանդես է գալիս որպես իր ժամանակի հանրագետը (էնցիկլոպեդիստը)։ Անիում նա խորապես տիրապետում է նաև ռազմական արվեստին, դառնում իր հոր ու հորեղբոր արժանավոր հետնորդը։ Գրիգոր Մագիստրոսը քաջատեղյակ էր նաև կրոնների պատմությանը։ Գերազանց տիրապետելով հունարենին, նա Կոստանդնուպոլսում ուսումը շարունակելու տարիներին այն աստիճան է հրմտանում հին հունական ու բյուզանդական գրականության ու փիլիսոփայության մեջ, որ հետագայում իր ստեղծագործություններում հաճախակի է մեջբերումներ կատարում հույն հեղինակներից ու քննարկում գիտական ամենաբազմազան խնդիրներ։

Լինելով մեծ հայրենասեր, Գրիգոր Մագիստրոսը խոշոր դեր էր կատարում հայ ժողովրդի թշնամիների՝ սելջուկ-թուրքերի և բյուզանդացիների դեմ մղվող կռիվներում։ Նա հայրենիքի շահը վեր էր դասում ամեն ինչից։ Եվ թեև Պահլավունի իշխանը ինչ-ինչ պատճառներով գժտված էր Գագիկ II Բագրատունու հետ, բայց մոռանալով այդ, որպես հայկական անկախ պետականության ջատագով, անմիջապես մեկնում է Կոստանդնուպոլիս՝ Հայոց թագավորին օգնելու։ Բագրատունիների թագավորության անկումից հետո Գրիգոր Մագիստրոսը բյուզանդացիների կողմից նշանակվում է Միջագետքի, Վասպուրականի ու Տարոնի կուսակալ և ստանում դուքսի կոչում։ Որպես հայ ֆեոդալականության ներկայացուցիչ, նա ֆեոդալական դասակարգի շահերի ջերմ պաշտպանն էր և օգտագործելով իր ուժն ու իշխանությունը՝ գաղափարական և գործնական անհաշտ պայքար էր մղում թոնդրակյանների սոցիալական շարժման դեմ։

Մեծ է եղել Գրիգոր Մագիստրոսի դերը Հայաստանում դպրոցներ բաց անելու և գիտության ամենաբազմազան ճյուղերը պրոպագանդելու գործում։ Նա, որպես միջնադարյան տիպի հայկական բարձրագույն դպրոցների ամենաճանաչված դասախոս ու գիտնական, հատուկ ուշադրություն էր դարձնում անտիկ հունական փիլիսոփայության և ճշգրիտ գիտությունների վրա, հոգ տանում, որպեսզի դրանք դասավանդվեն հայոց լեզվով։ Նրա ջանքերով Հայաստանի տարբեր մասերում կառուցվել են բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ, որոնց կից դպրոցներում (Կեչառույք, Հավուց Թառ և այլն) ստեղծագործում էին գիտության ու գրչության արվեստի մշակները։

Գրիգոր Մագիստրոսը շատ բարձր գնահատելով դեռևս V—VI դարերում Հայաստանում լայն ուշադրության արժանացած «յոթ ազատ արվեստների» ուսուցումը (քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն, թվաբանություն, երկրաչափություն, աստղաբաշխություն, երաժշտություն), ամեն ջանք գործադրում էր նրա նկատմամբ հետաքրքրությունը ուժեղացնելու համար։ Հենց այս առիթով էլ «նա լայն նամակագրական կապեր է հաստատում Հայաստանի տարբեր մասերում ապրող գիտնականների, կրոնական գործիչների, իր համախոհների ու նախկին ուսուցիչների հետ, դառնալով կապող օղակ մտավոր գործիչների միջև և կրթական կյանքին ուղղություն տվող գիտության կազմակերպիչ»[80]։ Գրիգոր Մագիստրոսի բազմաթիվ նամակների՝ թղթերի մեջ էլ արտացոլվում են նրա բազմակողմանի գիտելիքները։ Նամակների միջոցով գիտական ու քաղաքական հարցերի քննարկումը հայ գրականության մեջ նորություն էր, նոր ձև, որի ստեղծողը ինքը՝ Գրիգոր Մագիստրոսն էր.

Գրիգոր Մագիստրոսի թղթերը, սակայն, չի կարելի դիտել լոկ որպես թղթեր կամ նամակներ, այս բառերի ուղղակի իմաստով։ Դրանք խորհուրդներ են, հորդորներ և ընդհանրապես գիտական կամ գործնական խնդիրներին վերաբերող լուրջ մտորումներ, որոնց նմանները շատ տարածված էին հին Հռոմում։ Այդպիսի բնույթ ունեին, օրինակ, Սալյուստիոսի

[80] Ս. Արեշատյան, Գրիգոր Մագիստրոս, տե՛ս «Հայ մշակույթի նշանավոր գործիչները», էջ 206։



«Նամակներ Կեսարին» երկասիրությունը, Կիկերոնի ճառերը և այլն։

Գրիգոր Մագիստրոսը գրել ու թարգմանել է շատ աշխատություններ, սակայն, դժբախտաբար, դրանցից քչերն են մեզ հասել։ Նրա թողած ժառանգությունից ուշադրության արժանի է «Քերականության մեկնությունը», որը վերաբերելով Դիոնիսիոս Թրակացու քերականությանը՝ միաժամանակ ծառայել է իբրև դասագիրք հայկական բարձր տիպի դպրոցների համար։ Մագիստրոսի այդ աշխատանքը հայկական միջնադարյան քերականագիտական գործերի շարքում գրավում է աչքի ընկնող տեղ։ Նա գրել է նաև չափածո գործեր, որոնց մեջ հայտնի է Աստվածաշնչի չափածո վերարտադրությունը «Հազարտողյան» անունով (1016 տող), որը հեղինակն ավարտել է ընդամենը չորս օրում և հաղթող ճանաչվել Կոստանդնուպոլսում իր հետ վեճի բռնված արաբ աստվածաբան Մանուչեի նկատմամբ։ «Հազարտողյանը» աչքի է ընկնում ոչ այնքան իր գեղարվեստական կողմով, որքան տաղաչափության արվեստով և միջնադարյան հայ բանաստեղծության մեջ և որպես այդպիսին գրավում է աչքի ընկնող տեղ։

Գրիգոր Մագիստրոսի թարգմանություններից պահպանվել է միայն Եվկլիդեսի «Երկրաչափության» մի մասը։ Մեզ չեն հասել նաև Պլատոնի տրամախոսությունների և ուրիշ հույն ու ասորի հեղինակների գործերի թարգմանությունները, որոնց մասին իր նամակներում հիշատակում է Մագիստրոսը։

Գրիգոր Մագիստրոսը, որպես հունական մշակույթի ու անտիկ փիլիսոփայության երկրպագու, շատ բարձր էր գնահատում նաև Դավիթ Անհաղթին ու նրա կողմից նոր պլատոնականության գաղափարախոսության տարածումը Հայաստանում, մի գաղափարախոսություն, որը թեև ֆեոդալիզմի զարգացման ժամանակաշրջանում վերակենդանանալու և տարածվելու պայմաններ այլևս չուներ, սակայն սնունդ պետք է տար նոր ուղղություններին, որոնք ավելի էին համապատասխանում տվյալ ժամանակաշրջանի տիրապետող դասակարգի շահերին ու ճաշակին։ Գրիգոր Մագիստրոսը, կրելով Դավիթ Անհաղթի ազդեցությունը, նկատելիորեն հակվում է դեպի փիլիսոփայության ռացիոնալիզմն ու բնափիլիսոփայությունը և չմերժելով արտաքին աշխարհի ճանաչման զգայական միջոցը, հիմնականը համարում էր բանական ճանաչողությունը։ Գրիգոր Մագիստրոսն

էլ, ինչպես Դավիթ Անհաղթը, գտնում էր, որ աստծուն հնարավոր է մերձենալ նրա ստեղծած բնությունը ճանաչելով, իսկ վերջինս կարելի է ճանաչել բնագիտության և մաթեմատիկայի միջոցով։ Գրիգոր Մագիստրոսը իր ստեղծագործություններով կրկին վերակենդանացրեց հայ աշխարհիկ փիլիսոփայական միտքը, որը է՛լ ավելի բարձր մակարդակի հասցրին նրա ավանդները պահող և նրանից մեծ ազդեցություն կրած հետագա հեղինակները։ Գրիգոր Մագիստրոսի Թղթերի միակ հրատարակությունը իրականացրել է Կ. Կոստանյանցը (Այեքսանդրապոլ, 1910)։

Միջնադարյան փիլիսոփայական մտքի ականավոր ներկայացուցիչ, Տաթևի համալսարանի հիմնադիր ու նրա առաջին ռեկտոր Հովհան Որոտնեցին ծնվել է 1315 թվականին, Սյունիք աշխարհի Ծղուկ գավառի Վաղանդի գյուղում (այժմ Վաղուդի՝ ՀՀ Սյունիքի մարզում)։ Թովմա Մեծոփեցին հաստատում է, որ Հովհանը Սյունիքի իշխան Իվանեի որդին էր։

Հովհան Որոտնեցու ապրած ժամանակներում թեև Հայաստանը վաղուց արդեն նվաճվել էր մոնղոլների կողմից, սակայն Սյունիքը համեմատաբար ապահով վիճակում էր գտնվում, որովհետև Հայաստանի այդ խոշոր և խիտ բնակչություն ունեցող երկրամասի նախարարները, Օրբելյանների տոհմի ղեկավարությամբ, կարողացել էին մոնղոլական իշխանությունների հետ հաշտ ու խաղաղ քաղաքականություն վարելու միջոցով, նրանցից ստանալ այնպիսի արտոնություններ ու իրավունքներ, որոնցով հնարավոր եղավ կանխել Սյունիքի ավերածությունն ու կողոպուտը։ Եվ Սյունիքում տիրող հարաբերական այդ հանգստությունն ու անդորրությունն էլ հնարավորություն տվեցին ասպարեզ գալու մտավորականության այն նոր սերընդին, որի կարկառուն ներկայացուցիչներից մեկն էլ հանդիսացավ Հովհան Որոտնեցին։

Որպես իշխանական տոհմի ներկայացուցիչ, Հովհանը հենց սկզբից ստանում է անհրաժեշտ կրթություն և պատանեկան տարիներին դառնում հոգևորական։ Սյունիքի տնտեսական և մշակութային վերակենդանացման ժամանակ երկրամասի կրթական ու գիտական խոշոր կենտրոններ դարձան Գլաձորի ու Տաթևի համալսարանները։ Հովհան Որոտնեցին, որ դեռ պատանեկան տարիներից իրեն նվիրել էր գիտությանը, շուտով գալիս է Գլաձոր՝ ուսանելու, որի ռեկտորը (ուսուցչապետ) նշանավոր գիտնական Եսայի Նչեցին էր։ Այստեղ Հովհանը աստվածաբանությունից բացի ծանոթանում է հին հունական մտածողների՝ Պլատոնի, Արիստոտելի, Պորփյուրի և ուրիշների ստեղծագործություններին, սովորում է քերականություն, ճարտասանություն, մաթեմատիկա, բնագիտություն։ Գլաձորում Հովհան Որոտնեցին ձեռք է բերում կայուն բազմակողմանի գիտելիքներ, և երբ 1338 թվականին քաղաքական անբարենպաստ պայմանների ու Եսայի Նչեցու մահվան պատճառով փակվում է Գլաձորի համալսարանը, նա մի քանի տարի հետո կարողանում է Գլաձորի օրինակով Տաթևում հիմնել նոր համալսարան ու դառնալ նրա ռեկտորը։

Հովհան Որոտնեցին իր խոր ու բազմակողմանի գիտելիքներով և արտակարգ մեծ հեղինակությամբ ներգործուն դեր էր կատարում նաև Սյունիքի հասարակական-քաղաքական կյանքում և ղեկավարում պայքարը Հռոմի պապի գործակալ ունիթորների դեմ, որոնք ձգտում էին ոչնչացնել հայկական եկեղեցու ինքնուրույնությունը և այն ենթարկել պապին։ Այդ պայքարը բարեբախտաբար ավարտվեց հայոց եկեղեցու հաղթանակով։

Հովհան Որոտնեցին մահացել է 1386 թ. և թաղվել Երնջակի Ս. Գևորգ վանքում։

Հովհան Որոտնեցու թողած գիտական բազմազան ստեղծագործությունների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում փիլիսոփայական աշխատությունները, որոնք, ինչպես մասնագետներն են գտնում, Տաթևում և Ապրակունիսի դպրոցներում նրա կարդացած դասախոսություններն են։ Այդ աշխատությունները հետագայում մշակվել ու խմբագրվել են Գրիգոր Տաթևացու կողմից։ Հովհան Որոտնեցու աշխատություններից առանձնապես բարձր են գնահատվում հետևյալները՝ «Վերլուծութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի», «Լուծմունք Պերի արմենիաս գրոցն (Արիստոտէլի)», «Համառօտ վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի», «Հաւաքումն Յայտնաբանութեան ի Փիլոնէ իմաստնոյ» և «Յաղագս տարերաց» ոչ մեծածավալ, բայց արժեքավոր տրակտատը։

Հովհան Որոտնեցին որպես հոգևորական թեև աշխատել է փիլիսոփայությունը ենթարկել աստվածաբանությանը, բայց փաստորեն նրա մոտ փիլիսոփայական խնդիրները ներկայացվում են անկախ ու ինքնուրույն ձևով։ Նրա մոտ նկատելի է

նաև հակումը դեպի մատերիալիզմը։ Հովհան Որոտնեցին նույնպես անվերապահ կերպով ընդունում է, որ աշխարհը, բնությունը և մատերիան ոչնչությունից ստեղծել է աստված, որի մտքում նախօրոք եղել է ցանկացած ձևը։ Գոյաբանության խնդրում Հովհան Որոտնեցին մատերիային առաջնություն չի տալիս։ Բնությունը, որպես աստվածային ստեղծագործություն, նման է աստծուն նրանով, որ ինքն էլ ունի ստեղծագործելու կարողություն, և նա ստեղծում է ձևեր մատերիայի հիման վրա, իսկ մատերիայի արարիչը աստված է։ Հովհան Որոտնեցին նույնպես, ուրիշ մտածողների նման, ողջ բնության հիմքում դնում է հանրահայտ չորս տարրերը, որոնցից ստեղծվում են բոլոր իրերը. դրանք գոյություն ունեն ժամանակավորապես, որովհետև նրանք հավիտենականապես առաջանում ու ոչնչանում են, այսինքն՝ ունեն սկիզբ ու վերջ։ Մինչդեռ տարրերը, որոնք իրերի գոյության նյութական սուբստանտն են, անապական են և ունեն միայն սկիզբ, իսկ աստված, որ տարրերի արարիչն է, ոչ սկիզբ ունի և ոչ էլ վերջ։ Ինչպես տեսնում ենք, աշխարհի ստեղծմանը Որոտնեցին տալիս է իդեալիստական բացատրություն։ Նրա մոտ, սակայն, ի հայտ են գալիս նաև մատերիալիստական մտածողության սաղմեր, երբ արտաքին աշխարհի գոյությունը համարում է առաջնային, իսկ մարդու զգայություններն ու հասկացությունները՝ երկրորդային։ Այսինքն, Որոտնեցին ռեալ աշխարհի գոյությունը ընդունում է զգայությունից դուրս և անկախ։ Հովհան Որոտնեցին իր այդ շատ ուշագրավ միտքը ձևակերպում է այսպես. «Զգայութիւնն ընդ մարմնոյն է եղեալ և է ի մարմնի, որպէս աչքդ։ Իսկ զգալին նախ է քան զքո մարմինդ։ Եւ տես ի յԱդամ, զի նախ ամենայն զգալիքն եղեն և յետոյ մարդն կազմեցաւ։ Արդ՝ ի բառնալ ամենայն զգալեաց բառնի և քո մարմինդ և ընդ մարմնոյդ բառնի և զգայութիւնդ. ապա թէպէտ բառնաս զգայութիւնդ՝ դեռևս մարմինդ է, և թէ զմարմինդ բառնաս՝ զգալիքն ամենայն գոն»[81]։

Ընդունելով մարդու զգացողությունից անկախ աշխարհի գոյությունը, Որոտնեցին դրականորեն է լուծում նաև նրա ճանաչելիության հարցը։ Միտքն ու զգայությունը կոնկրետ իրերի

[81] Ս. Արևշատյան, Հովհան Որոտնեցի, տե՛ս «Հայ մշակույթի նշանավոր գործիչները», էջ 401։



արտացոլումն են, նրանք արտաքին աշխարհից անկախ ու ինքնին ոչ մի բովանդակություն չունեն, հետևաբար և գոյություն չունեն։ Որոտնեցին բնության ճանաչողության պրոցեսում շատ կարևոր տեղ է հատկացնում զգայությանը։ Բանականությունը ըստ նրա, զգայությունների միջոցով հաղորդվածի շնորհիվ ճանաչում է իրերի էությունը։

Հովհան Որոտնեցին իր աշխատություններում քննարկում է նաև տրամաբանական կատեգորիաների, ունիվերսալիաների, այսինքն՝ ընդհանուր հասկացությունների, եզակիի և ընդհանուրի, տեսակի ու սեռի և փիլիսոփայական ուրիշ շատ հարցեր։ «Ընդհանուրն, ըստ Որոտնեցու, ճանաչողության կարևորագույն արդյունքն է, ընդհանուրի ըմբռնման միջոցով միտքը ճանաչում է իրերի և երևույթների ամենաէական կողմերը, որոնք գրանցվում են տեսակի և սեռի հասկացությունների մեջ, դառնալով իրերի էությունն արտահայտող անուններ (nominae, այստեղից էլ nominalism, նոմինալիզմ—անվանապաշտություն տերմինը)»[82]։

Նոմինալիզմը կարևոր դեր է խաղացել Որոտնեցու ճանաչողությանը մատերիալիստական երանգ հաղորդելու համար։

Հովհան Որոտնեցու փիլիսոփայությունը տեսականից ու գիտականից բացի, իր ժամանակին գործնական մեծ նշանակություն է ունեցել նաև հայոց եկեղեցու գաղափարական հակառակորդների դեմ պայքարելու համար։ Հովհան Որոտնեցին իր ստեղծագործություններով հայ փիլիսոփայության մեջ ուժեղացրեց մատերիալիստական միտումները։ Այդ բոլորով հանդերձ, նա այնուամենայնիվ, մնաց սխոլաստիկայի շրջանակներում և չկարողացավ փիլիսոփայությունը հակադրել աստվածաբանությանը։ Սակայն մեծ գիտնականի նոմինալիզմն ու մատերիալիստական մտածողության հակումները հայ փիլիսոփայական մտքի լուրջ հաջողություններն էին, որոնք նրան բարձրացրին ժամանակաշրջանի առաջավոր ուսմունքների մակարդակին։

Հովհան Որոտնեցու գործի շարունակողը եղավ նրա աշակերտ Գրիգոր Տաթևացին, որի ստեղծագործություններն ընդգրկելով փիլիսոփայությունից բացի նաև սոցիալ-քաղաքական մտքի ոլորտները և շատ հարցերի տալով մատերիալիստական

[82] Նույնը, էջ 403—404։

պատասխաններ, իրենց ամբողջության մեջ հանդիսացան ֆեոդալական Հայաստանի փիլիսոփայական մտքի զարգացման բարձրակետը։

Գրիգոր Տաթևացին ծնվել է Թմկաբերդ քաղաք-ամրոցում, 1346 թվականին (այժմ Վրաստանի Ասպինձայի շրջանի Թմոգվի գյուղի մոտ)։ Նրա հայրը Արճեշից գաղթած արհեստավոր էր, իսկ մայրը՝ փարպեցի գեղջկուհի։ Գրիգորի ծնվելուց հետո, ընտանիքը տեղափոխվում և բնակություն է հաստատում Սյունիքում, որն այն ժամանակ, ինչպես ասվել է, ավելի ապահով վայր էր նվաճողներից ամենուր հալածվող աշխատավոր հայ մարդու համար։ Ծնողները, շուտով նկատելով իրենց որդու հատուկ ընդունակությունները և սերը դեպի ուսումը, նրան տալիս են Տաթևի դպրոցը՝ Հովհան Որոտնեցու մոտ սովորելու։ Այնուհետև Գրիգոր Տաթևացին դառնում է Հովհան Որոտնեցու օգնականն ու քարտուղարը մինչև իր ուսուցչի մահը։ Իսկ Հովհան Որոտնեցին մահվանից առաջ նրան է հանձնում ոչ միայն իր ողջ գիտական ժառանգությունը, այլև Տաթևի համալսարանի ղեկավարությունն ու ուսուցչապետության պաշտոնը։ Այսպիսով, 1386 թվականից սկսած, հիմնականում Տաթևում է ծավալվում Գրիգոր Տաթևացու գիտամանկավարժական գործունեությունը, որի ստեղծագործությունների արդյունքը հանդիսացող բազմաթիվ հատորները հայ հոգևոր միտքը մղեցին դեպի նոր բարձունքներ։ Սակայն Տաթևացու օրոք Սյունիքի համար էլ արհավրալից ժամանակներ սկսվեցին։ Հայաստանի մյուս շրջանների նման, այժմ Սյունիքը տակնուվրա էին անում թուրքմենական ցեղերի և Լենկթեմուրի հրոսակախմբերը, որոնց հետապնդումներից խուսափելու համար, նա հաճախ ընդհատում էր դասերն ու գիտական աշխատանքները, ձեռագրերը թաքցնում ապահով գաղտնարաններում, իր աշակերտների հետ փախչում ուր որ հնարավոր էր և մի փոքր հանգստություն գտնելով, մեծագույն զրկանքների պայմաններում, կրկին վերսկսում ընդհատված գործերը։

Գրիգոր Տաթևացին մեծագույն եռանդի ու անսահման աշխատասիրության տեր մարդ էր, օժտված գիտնականի, նկարչի ու գեղագրի հատուկ շնորհքով և վարչական ղեկավարի հազվագյուտ հատկանիշներով։ Տաթևի հետ միասին նա ղեկավարում էր նաև Ասլրակունիսի Ս. Կարապետի դպրոցը, ժամանակ



գտնում ու այցելում հայկական գրչության մյուս կենտրոնները, դասախոսություններ կարդում այնտեղ սովորող աշակերտների, հոգևորականների ու աշխարհիկ մարդկանց համար, անհաշտ ու հետևողական պայքար մղում հայոց եկեղեցու հակառակորդների ու թշնամիների դեմ և այլն, և այլն։ Գրիգոր Տաթևացին իր ուսուցիչ Հովհան Որոտնեցու և այն ժամանակվա առաջավոր մտավորականության հետ միասին, պայքարում էր հայկական կաթողիկոսությունը Կիլիկիայից Մայր Հայաստան տեղափոխելու համար։ Գրիգոր Տաթևացու այդ ուղղությամբ գործադրած հայրենասիրական ջանքերը շարունակվեցին հետագայում և իրականացվեցին նրա արժանավոր գաղափարակիցների կողմից 1441 թվականին։

Գրիգոր Տաթևացին մահացել է 1409 թվականին, Տաթևում։ Շատ չանցած, այն դժնդակ օրերին դադարեց նաև Տաթևի համալսարանի գործունեությունը։ Սակայն հայ ժողովրդի ու նրա մշակույթի համար ստեղծված այդ կործանարար ժամանակներում նույնիսկ մեծ ուսուցչապետի բազմաթիվ աշակերտներ թեև չար ճակատագրից հալածված ցիրուցան եղան երկրով մեկ, այնուամենայնիվ, այս ու այն տեղերում իրենց հոգեվարքն ապրող գրչության կենտրոններում մինչև XV դարը շարունակում էին անշեջ պահել հայ մշակույթի բեկբեկվող ճրագը։

Գրիգոր Տաթևացու քսանից ավելի աշխատություններից գիտական առանձնահատուկ արժեք ունեն հետևյալները. «Գիրք հարցմանց», «Գիրք քարոզութեան», «Գիրք որ կոչի Ոսկեփորիկ», «Լուծմունք համառօտ ի տեսութիւն Դաւթի», «Համառօտ տեսութիւն ի գիրս Պորփիւրի» և «Մեկնութիւն Յովհաննու աւետարանի»։

Խոսելով փիլիսոփայության հետաքրքրող՝ հավատի և գիտության փոխհարաբերության հարցի մասին, Տաթևացին ասում է, որ գիտությունը չպետք է միջամտի հավատի հարցերին, հավատն էլ՝ գիտության գործերին, որովհետև նրանց բընագավառները տարբեր են. գիտությունը, այդ թվում նաև փիլիսոփայությունը, գործ ունի բնության, իսկ աստվածաբանությունը՝ հավատի, պաշտամունքի հետ։ Նա մի կողմից տեսնում, ընդունում է ճանաչողության բնագավառում բանականության ուժը, իսկ մյուս կողմից չի ուզում, որ մարդն այդ միջոցով ճանաչի հավատը։ Բայց հենց թեկուզ այնքանով, որքանով որ Տաթևացին սահմանազատում էր աստվածաբանու-

թյունը բանական ճանաչողությունից, նա ակամայից հնարավորություն էր տալիս գիտություններին՝ ազատագրվելու կրոնի վերահսկողությունից և զարգանալու նրանից անկախ։

Գրիգոր Տաթևացին իր ուսուցչի և դարաշրջանի շատ մտածողների նման, դարձյալ իդեալիստ էր։ Նա նույնպես գտնում է, որ բոլոր երևացող և չերևացող առարկաների, ներառյալ նաև բնության գոյության հիմքը կազմող չորս տարրերը, ըստեղծողն ու արարիչը Աստված է։ Սակայն այս մեծ մտածողի համար բնորոշը նաև այն է, որ «Իմացաբանության, տրամաբանության, հոգեբանության և սոցիոլոգիայի բնագավառում նա զարգացրել է մի շարք խոր մտքեր, իր ժամանակի համար առաջավոր հայացքներ, որոնցից շատերն ունեն ակնհայտ մատերիալիստական բնույթ և մոտ են նոր ժամանակի գաղափարներին»[88]։

Փիլիսոփայության, իմացաբանության բնագավառում Գրիգոր Տաթևացին արտահայտում է այնպիսի մտքեր, որոնք շատ կետերում հարազատ էին XVII—XVIII դարերի եվրոպական մտածողների դրույթներին։ Այսպես, օրինակ, նա գտնում է, որ մարդը իրեն շրջապատող բնությունն ընկալում է բանական ճանաչողության միջոցով։ Տաթևացին նույնպես օբյեկտի և սուբյեկտի հարաբերակցության հարցի քննարկման ժամանակ, իր ուսուցչի նման, ընդունում է օբյեկտիվ իրականության առաջնությունը և նրա՝ մարդկային գիտակցությունից անկախ գոյությունը։ Շրջապատող աշխարհի ընկալումը, ասում է նա, կատարվում է մարդու զգայարանների միջոցով։ Այդ ճանապարհով է մարդկային գիտակցության և արտաքին աշխարհի մեջ կապ հաստատվում։ Սակայն Տաթևացին էլ գիտե, որ ճանաչողության լիակատարության համար զգայություններից զատ, գոյություն ունի նաև բանական ճանաչողությունը, և այս երկուսի միջոցով է իրերի էությունը ըմբռնվում, որոշվում նրանց անցյալն ու ապագան։ Գրիգոր Տաթևացին նոմինալիզմի դիրքերից է լուծում նաև ընդհանուր հասկացությունների (ունիվերսալիաների) բնույթի հարցը։ Նա գտնում է, որ եզակին, անհատը գոյություն ունի ընդհանուրից առաջ և վերջինս էլ գոյություն ունի, որովհետև եզակին ու անհատը նախապես կան։

[88] Ս. Արեշատյան, Գրիգոր Տաթևացի, տե՛ս «Հայ մշակույթի նշանավոր գործիչները», էջ 409։



Ընդհանուր հասկացություններին և օբյեկտիվ աշխարհի ճանաչողության համար զգայական ու բանական եղանակներին տված ճիշտ մեկնաբանություններով էլ բնորոշվում է Գրիգոր Տաթևացու փիլիսոփայության մատերիալիստական երանգավորումը։

Չափազանց բարձր ու ինքնատիպ են Գրիգոր Տաթևացու մանկավարժական ու հոգեբանական հայացքները, որոնց մեջ աչքի են զարնում նույնիսկ Վերածննդի դարաշրջանին հատուկ ուսմունքի սաղմերը։ Տաթևացին երեխայի կրթության գործում մեծ տեղ է հատկացնում դաստիարակին և գտնում, որ բարոյական դաստիարակության հետ, մեծ ուշադրություն պետք է դարձնել նաև մարդու ֆիզիկական դաստիարակությանը։ Ըստ տեղեկությունների Գրիգոր Տաթևացին իր մանկավարժական ամբողջ աշխատանքի ընթացքում աճեցրել է 300 աշակերտներ, որոնցից շատերը հետագայում դարձան անվանի մարդիկ։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Տաթևացու տնտեսագիտական գաղափարները, որոնք նրան բնորոշում են իբրև արտադրության ֆեոդալական եղանակի տեսաբանի ու պաշտպանի։ Տաթևացին նաև նկարիչ էր ու երաժիշտ-տեսաբան։

Գլաձորի, Տաթևի և Հայաստանի XIII—XV դարերի հայ մշակույթը և փիլիսոփայական միտքը, անկասկած, նոր և է՛լ ավելի բարձր մակարդակի կհասնեին, եթե օտարերկրյա նվաճողները իրենց ծանր ու կործանարար տիրապետությունը չըհաստատեին Հայաստանում։ XV դարից սկսվում են ֆեոդալական հարաբերությունների և տնտեսական կյանքի շրջադարձային անկման ժամանակները, որոնք, ի դժբախտություն Հայաստանի և հայ ժողովրդի, շարունակվեցին մի քանի դար։

## 6. ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմագիտության համար գրավոր սկզբնաղբյուրների մեջ իրենց առանձնահատուկ տեղն ունեն նաև վիմագրերը, որոնց ուսումնասիրությամբ զբաղվում է գիտության այն ճյուղը, որը անվանվում է արձանագրագիտություն կամ էպիգրաֆիկա։

Վիմագրական արվեստը Հայաստանում տարածված էր դեռևս մեր թվականությունից մի քանի հարյուրամյակ առաջ, երբ մարդիկ գրում էին սեպագրերով, արամեերեն, հունարեն և

շատիներեն գրերով։ Սակայն վիմագրությունը զարգացավ ու սկսեց տարածվել հայերեն մեսրոպատառ գրերի ստեղծումից հետո՝ 5-րդ դարից սկսած։

Հայերեն վիմագրերը թողնվել են մեծ մասամբ կրոնաճարտարապետական հուշարձանների, գերեզմանաքարերի, խաչքարերի, մահարձանների և այլ կառույցների վրա։ Նրանցում խոսվում է հուշարձանի կառուցման մասին, հիշատակվում են կառուցման, վերանորոգման թվականները, ճարտարապետի, պատվիրատուի, քանդակագործի կամ խաչքարի տակ թաղված մարդկանց անունները և այլն։ Այս կարգի տեղեկություններին շատ հաճախ համառոտ ավելացվում են նաև քաղաքական դեպքերի պատմությունները, նվիրատվական կամ առ ու ծախի գործարքները, տարերային աղետների նկարագրությունները, հարկերի, նրանց տեսակների ու չափերի մասին տեղեկությունները և այլն, և այլն։ Դժվար չէ նկատել, որ հայերեն վիմագրերի նմանօրինակ բովանդակությունը լրացուցիչ ինչպիսի հսկայական աղբյուրագիտական նյութ է ավելացնում մատենագրության տվյալների վրա։ Վիմագրերի աղբյուրագիտական արժեքը անհամեմատ բարձր է նախ և առաջ նրա համար, որ նրանք գրավոր մյուս նյութերի համեմատությամբ մնայուն են ու անաղարտ, որովհետև նրանք շատ շատ կարող են ջարդվել, քերվել, եղծվել, բայց դրանց բովանդակությունը ոչ ոք կեղծել կամ փոփոխել չի կարող։

Մեզ հասած հայերեն հնագույն վիմագիր արձանագրությունը, որը վերաբերում է V դարի կեսերին, Շիրակում գտնվող Տեկորի տաճարի պատի վրա քանդակած արձանագրությունն է[84]։

Քանի որ Հայաստանի բարձրագույն դպրոցների մասնագիտական ֆակուլտետներում հնագրության, դրամագիտության և մի քանի օժանդակ առարկաների հետ, հայկական վիմագրությունը նույնպես որպես առանձին առարկա դասավանդվում է, ուստի աղբյուրագիտության սույն դասագրքում նպատակահարմար չէ նրա մասին մանրամասն խոսել։ Դրան հակառակ, այստեղ անհրաժեշտ է ծանոթանալ Հայաստանի տարածքում պահպանված օտարալեզու վիմագիր արձանագրություններից վրացերեն արձանագրություններին, որոնք պարսկերենի ու արաբերենի նման բավական շատ են և որպես սկզբնաղբյուր, կարևոր նշանակություն ունեն միջնադարյան Հայաստանի պատմության և մշակույթի ուսումնասիրության համար։ Հայաստանում գտնվող վրացերեն վիմագրերի հավաքման, ուսումնասիրության և հրատարակության աշխատանքը սկսվել է դեռևս անցյալ դարի կեսերից։ Այդ գործի առաջին ձեռնարկողները եղել են Մխիթարյան միաբանության անդամ Ն. Սարգիսյանը, արևելագետ Մ. Բրոսսեն, Ն. Մառը, Ա. Շանիձեն, Լ. Մելիքսեթ Բեկը։ Վերջին տարիներին այդ ուղղությամբ շնորհակալ գործ է կատարում Պ. Մուրադյանը, որը ի մի է հավաքել Հայաստանի բոլոր վրացերեն արձանագրությունները, գիտական ուսումնասիրության ենթարկել դրանք, ճշգրտումներ մտցրել ընթերցման մեջ, դասակարգել և համապատասխան ծանոթագրություններով ու ընդարձակ առաջաբանով հրատարակել առանձին գրքով[85]։

Վրացերեն վիմագրերը պահպանվել են Հայաստանի Զաքարյանների կողմից ազատագրված տարածքներում (Անի, Կարս, Վաղարշապատ, Քոբայր, Հաղպատ, Սանահին և այլն), մի հանգամանք, որը պայմանավորված էր XII—XIII դարերում Վրացական թագավորության ռազմաքաղաքական հզորացմամբ ու նրա ազդեցության մեծացումով Զաքարյանների Հայաստանի վրա։ Դրա համար զարմանալի չէ, որ արձանագրությունների մի զգալի մասը հենց առնչվում է Զաքարյանների նախարարական տոհմի հետ ու պատմում նրանց ներկայացուցիչների շինարարական ձեռնարկումների կամ նվիրատվությունների մասին։ Այդ արձանագրությունների մի մասն էլ տապանագրեր են։

Հայաստանի վրացերեն արձանագրությունները հարյուրից ավելին են։ Դրանցից ամենահինը 1022 թվականի արձանագրությունն է։ Եվ թեև կան նաև ուշ, մինչև իսկ XIX դարի արձանագրություններ, սակայն պատմագիտական և աղբյուրագի-

[84] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 1, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Սրբելի, Երևան, 1966, պրակ 2, Գառիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Գ. Կարախանյան, Երևան, 1960, պրակ 3, Վայոց ձոր, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, պրակ 4, Գեղարքունիք, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1973, պրակ 5, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, պրակ 6, Իշխանի շրջան, կազմեցին Ս. Ա. Ավշյան և Հ. Մ. Հանֆոլոզյան, Երևան, 1977։

[85] Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1978։

տական արժեք ներկայացնողները X—XIII դարերի վիմագրերն են։ Վրացերեն լեզվով վիմագրերի հանդես գալը թուրք-սելջուկներից ազատագրված հայկական շրջաններում հետևանք էր ոչ թե վրացական պետության քաղաքական ազդեցության մեծացման, այլ վրացական քաղկեդոնական դավանանքի դերի բարձրացումով, և արձանագրություններն էլ վրացերեն էին գրվում քաղկեդոնական հայերին ներկայացրած լինելու համար։ Թե՛ հայ, թե՛ վրացի ուսումնասիրողները միանգամայն հիմնավոր կերպով գտնում են, որ այդ ժամանակ, այսինքն՝ XI—XIII դարերում, վրացերեն բառերը արձանագրությունների մեջ օգտագործվել են գրեթե որպես հոմանիշներ, և վրացի անվանումը, համարյա առանց բացառության, իմաստավորել է ոչ թե ազգությունը, այլ դավանանքը, այսինքն՝ քաղկեդոնականությունը։ Շինարարական, վերանորոգչական (խոսքը վերաբերում է կրոնական, եկեղեցական շինությունների վերանորոգմանը) և այլ խնդիրներին վերաբերելուց բացի, վրացերեն վիմագրերը որոշ դեպքերում արժեքավոր տվյալներ են տալիս նաև Հայաստանի օտարների լծից ազատագրված շրջանների ներքին կյանքի, նրա սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին։ Այստեղ տեղեկություններ են տրվում դասակարգային ներհակությունների, հարկերի, նրանց տեսակների, չարաշահումների և անարդար գործողությունների մասին, որոնք թույլ էին տրվում հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալների կողմից։ Վերջապես վրացերեն վիմագրերը (այդ թվում նույնիսկ տապանագրերը) օգնում են ճշգրտումներ մտցնել Հայաստանի և հարակից շրջանների պատմական աշխարհագրության, իշխանական տների տոհմագրության, պատմական հուշարձանների կառուցման ու վերանորոգման ժամանակին, կառուցող ու վերանորոգող և կամ նկարազարդող վարպետների անունները պարզաբանելու հարցերի մեջ։ Այդ արձանագրությունները կարևոր աղբյուր են նաև հայերեն ու վրացերեն լեզուների ուսումնասիրության համար։ Այս բոլորով հանդերձ, ինչպես Հայաստանում այլ լեզուներով եղած, այնպես էլ վրացերեն վիմագրերը, որպես պատմական աղբյուր չի կարելի գերագնահատել, դրանք բոլորն էլ ունեն աղբյուրագիտական օժանդակ դեր ու նշանակություն և նրանց արժեքը մեծանում է միայն այն դեպքում, երբ այդ տվյալները խելացիորեն համա-



գրվում են պատմագիտական այլևայլ աղբյուրների հետ ու արվում գիտական հետևություններ։

Միջնադարյան Հայաստանի պատմության շատ հարցերի ուսումնասիրության համար արժեքավոր են նաև արաբական վիմագիր արձանագրությունները։ Հայաստանի տարածքում հայտնաբերվել են շուրջ 500 արաբական արձանագրություններ, որոնք վերաբերում են VIII—XVI դարերին։ Արաբական արձանագրությունները հատկապես կարևոր տեղեկություններ են պարունակում Հայաստանի արաբական ամիրայությունների վերաբերյալ։ Դրանք հաճախ եզակի տեղեկություններ են հաղորդում սոցիալ-տնտեսական կյանքի, առանձնապես արհեստների և առևտրի վերաբերյալ[86]։

## Գ. ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՆԿՄԱՆ ՇՐՋԱՆԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

### 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ/

**Թովմա Մեծոփեցի**

Մոնղոլական տիրապետության հատկապես վերջին շրջանը շատ ծանր ու ավերիչ հետևանքներ ունեցավ Հայաստանի հասարակական ու տնտեսական կյանքի համար։ Նվաճողների դաժան քաղաքականության հետևանքով XIV դարից սկսած երկրի այս ու այն վայրերում դեռևս մի կերպ իրենց գոյությունը պահպանող հայկական ֆեոդալական միավորումների ոչնչացումից կամ թուլացումից հետո, գերիշխանությունն ամբողջապես անցնում է նոր ձևավորվող մուսուլմանական իշխանություններին, որոնց տնտեսական ու քաղաքական կշիռը է՛լ ավելի է մեծանում թուրքմենական քոչվոր ցեղերի, իսկ քիչ հետո՝ նաև ասպարեզ եկած և Հայաստանի տարածքներում գերիշխանություն ձեռք բերած պարսիկների և օսմանցի թուրքերի տիրապետության ժամանակ։ Օտարերկրյա նվաճողների կամայականու-

[86] Մանրամասն տե՛ս А. А. Хачатрян, Корпус арабских надписей Армении VIII—XVI вв., выпуск I, Ереван, 1987, էջ 5—10։

թյուններն ու սանձարձակ բռնությունները ոչ միայն վերջնականապես քայքայեցին ֆեոդալական հարաբերությունները և կասեցրին նրա բնականոն զարգացումը, անկման եզրին հասցրին երկրի տնտեսությունը, այլև ծանր ու կործանարար հետևանքներ ունեցան հայ ժողովրդի մշակութային կյանքի համար։ Մի կողմից ավերիչ պատերազմները, մյուս կողմից՝ ամենօրյա ասպատակությունները, կողոպուտն ու սպանությունները մեկընդմիշտ ամայության մատնեցին մշակույթի բազմաթիվ կենտրոններ։ Տասնչորսերորդ և հետագա դարերում արդեն երկրի համատարած խավարի մեջ հազիվհազ իրենց գոյությունն էին պահպանում միայն մի քանի վանքեր ու եկեղեցիներ, որտեղ հայ գրչության անխոնջ մշակներն իրենց սրտերում սեղմելով հայրենիքի ու ժողովրդի վիշտն ու տառապանքները, անհուն զրկանքների գնով, կարողանում էին մի կերպ վառ պահել նախնիներից ժառանգություն ստացած լուսավորության ջահը։

Ահա, հայ ժողովրդի պատմության այս մռայլ ժամանակաշրջանի առաջին պատմիչը Թովմա Մեծոփեցին է։

Թովմա Մեծոփեցին ծնվել է 1378 թվականին Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Քաջբերունիք գավառի Աղի գյուղում։ Նա իր կրթությունը ստացել է հիմնականում հայրենի գավառի այն ժամանակ ամբողջ Հայաստանում հայտնի Մեծոփա վանքում, իսկ հետո աշակերտել մեծ մտածող Գրիգոր Տաթևացուն։ Իր ուսուցչի նկատմամբ ունեցած անհուն երախտագիտությունից ու սիրուց դրդված՝ Թովմա Մեծոփեցին հետագայում՝ 1410 թ., Երևանում ընդօրինակում է նրա Քարոզգիրքը։

Թովման լոկ կրոնավոր ու վանքի խուցերում պարփակված եկեղեցական չէր։ Նա իր ժամանակի եկեղեցական ու քաղաքական կյանքին ակտիվորեն մասնակցող անձնավորություն էր և շատ կարևոր ու եռանդուն մասնակցություն է ցույց տվել 1441 թ. Հայոց կաթողիկոսական աթոռը Կիլիկիայից Էջմիածին տեղափոխելու աշխատանքներին, որը այն ժամանակ ողջ հայության համար ուներ առաջին հերթին քաղաքական կարևորագույն նշանակություն և նպաստելու էր ազգահավաքման գործին։ Թովման վախճանվել է 1446 թվականի մայիսի 15-ին։

Թովմա Մեծոփեցու աշխատությունը կոչվում է «Պատմութիւն Լանկ Թամուրայ և յաջորդաց իւրոց»։ Հայաստանի պատմությունը նա սկսում է 1386 թվականից, երբ մոնղոլական



հրոսակախմբերը մտնում և ավերում են Սյունիքը։ Պատմիչը այնուհետև մեկ առ մեկ պատմում է 1387 թ. Լենկթեմուրի կոտորածների և ավերածությունների մասին Հայաստանի տարբեր շրջաններում, նշում բոլոր այն վայրերը, ուր թափանցել են նրա ջարդարար ոհմակները։ Մեծոփեցին հետո ավելի մանրամասնորեն պատմում է Թեմուրի 1388 թվականի արշավանքի մասին Թուրքմենական կարակոյունլու բարբարոս ցեղերի դեմ և նկարագրում նրա կրած ծանր պարտությունը Ճապաղջրում ու Սասունում։ Պատմիչը այս առիթով նշում է, որ ինքը անձամբ ականատես է եղել վերոհիշյալ դեպքերին և ժողովրդի անհուն տառապանքները նկարագրում է այսպես. «Բայց ո՞վ կարէ պատմել զթիւ գերեացն և զսպանումն անմեղացն... զի լցաւ աշխարհ ամենայն գերութեամբ հայոց. մեռան քահանայք և աշխարհականք, հաւատացեալք և անհաւատք... Ավա՜ղ և եղուկ ամենայն հայոցս՝ զի աւերեցաւ ամենայն երկիրս. զի յԱրճիշոյ մինչև ի տունն Վրաց և մինչև ի Կուր գետն Աղուանից շաղախեցաւ արեամբ անմեղաց երկիր ամենայն շարշարանօք, սպանմամբ և գերութեամբ։ Եւ յետ գնալոյ նորա յաշխարհէս մերմէ եկն սով սաստիկ յաշխարհս մեր և տարածեցաւ յամենայն տեղիս... Զի ոչ կարեմ պատմել զդառնութիւնս մեր զոր տեսաք աչօք և լուաք ականջօք. զի չնչեցաւ մարդկութիւնս, մանաւանդ Հայկազեան գաւառիս»[87]։

Մեծոփեցին նույնպիսի մանրամասնությամբ և է՛լ ավելի տոսկալի գույներով նկարագրում է նաև մոնղոլների 1395, 1401, 1402 թվականների արշավանքների տեսարանները, երբ Հայաստանը ծայրեծայր՝ Սեբաստիայից ու Էրզրումից մինչև Սուրմալու ու Բասեն, տակնուվրա եղավ՝ տալով հազարավոր ու հազարավոր անմեղ զոհեր։

Հայաստանի ու հայ ժողովրդի դառնաղետ վիճակը չի փոխվում նաև Լենկթեմուրի մահվանից հետո։ Նրա հաջորդ Շահ Ռուհի և կարակոյունլուների հրոսակախմբերի կռիվների ու բախումների հիմնական թատերաբեմը դարձյալ մնում էր Հայաստանը, և հայ ժողովուրդը հարկադրաբար կրում էր ճակատագրի բոլոր դառնությունները, մշտապես ենթակա լինելով նաև բնական աղետների՝ սովի ու համաճարակի արհավիրքներին։

Թովմա Մեծոփեցին հայ ժողովրդի ծանր օրերի պատմու-

[87] Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն..., Փարիզ, 1860, էջ 57։

թյունը ավարտում է 1440 թվականով։ Այս շատ արժեքավոր աշխատությունը, որը հսկայական նյութ է պարունակում նաև ուրիշ ժողովուրդների ու ցեղերի պատմության մասին, դժբախտաբար մինչև այժմ հրատարակվել է միայն մեկ անգամ՝ 1860 թվականին, Փարիզում։

Թովմա Մեծոփեցու երկրորդ աշխատությունը նրա «Հիշատակարանն» է, որը նույնպես կարևոր ու արժեքավոր սկզբնաղբյուր է հատկապես կաթողիկոսական աթոռը Էջմիածին տեղափոխելու մանրամասնություններին ծանոթանալու տեսակետից։ Քաղաքական այս կարևոր իրադարձության պատմությունը տալու հետ միասին, հեղինակը միաժամանակ նշում է այն հիմնական պատճառները, որոնք անհրաժեշտ էին դարձնում այդ քայլի կենսագործումը։ Որպես կարևոր պատճառ, Մեծոփեցին նշում է հայոց եկեղեցուն Արևմուտքի ազդեցությունից ազատելու և նրա ինքնուրույնությունը մայր հայրենիքում ապահովելու խնդիրը, որը ակնառու դեր կարող էր խաղալ նաև հայ ժողովրդին ցիրուցան լինելուց փրկելու և իր հողին ամրացնելու գործում։ Որպես իր ժամանակի հայ մտավորականության առաջավոր թևի ներկայացուցիչ, Մեծոփեցին իր փոքրիկ Հիշատակարանում իրական գույներով է ներկայացնում նաև հոգևորականության հետադիմական ուժերին։ Առանց քաշվելու ու թաքցնելու մերկացնում է նրա արատավոր վարքագիծը, բարոյական քայքայվածությունը, ընչաքաղցությունը, զեղծարարությունը, կաշառակերությունը, ցոփ ու շվայտ կենցաղավարությունը և այլն, և այլն։ Հիշատակարանը մի յուրահատուկ սկզբնաղբյուր է XV դարի հայոց եկեղեցու և եկեղեցական դասի պատմության ուսումնասիրության համար։ Թովմա Մեծոփեցու հիշյալ աշխատանքը հրատարակվել է Թիֆլիսում, 1892 թվականին, բանասեր Կ. Կոստանյանցի կողմից։

**Գրիգոր Դարանաղցի**

Գրիգոր Դարանաղցու մասին կենսագրական տեղեկությունները բավական շատ են, որոնք հաղորդում է հենց ինքը՝ հեղինակը, իր գրած ժամանակագրության մեջ։ Նա ծնվել է Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Դարանաղի գավառի Կամախ քաղաքում 1576 թվականին և հետագայում



իր հայրենիքի անունով կոչվել Դարանաղցի կամ Կամախեցի։ Դարանաղցուն տվել են նաև Բուք մականունը։ Հոր անունն էր Գրիգորիս, մոր անունը՝ Կուլվարդ։ Փոքր հասակում զրկվելով ծնողներից, ութ տարեկան որբուկը այնքան ճարպկություն է ունենում, որ մոտակա Սեպուհ լեռան Ծնանառճի Ս. Աստվածածին վանքում խաշնարածություն անելով, մի կերպ կարողանում է պահպանել իր գոյությունը։ Մանկության դառն օրերի մասին նա հետագայում թախիծով գրում է այսպես. «Թէ զմեր որպէս թշուառութիւնն որ ի ծննդենէն ի վեր՝ գրեմք՝ թէ զորբութեամբ սնանիլն, թէ զանտերունչ լինելն եւ անայցելու եւ անխնամակալ ի վանորայսն, ոչ ուսուցանող եւ ոչ խրատտու, որ թէ գրեմք մի ըստ միոջէ, նա անհաւատալի կու թուի բազմաց»[88]։ Ճիշտ է ասում Դարանաղցին, որ Սեպուհ լեռան բազմաթիվ վանքերում «ուսուցանող» և «խրատատու» չկար, որովհետև այն ժամանակ օսմանցի թուրքերի վայրագությունների հետևանքով Արևմտյան Հայաստանի վանական շատ հաստատություններ ավերվել ու ոչնչացվել էին, իսկ կանգուն մնացածները մեծ մասամբ գտնվում էին ծույլ ու ապաշնորհ հոգևորականների ձեռքին, որոնք ավելի շատ մտածում էին իրենց գրպանի և լոկ ֆիզիկական գոյության, քան գիտություն ու կրթություն տարածելու մասին։

1590 թ. Գրիգոր Դարանաղցու կյանքում միանգամայն պատահականորեն բեկում է տեղի ունենում։ Նա ծանոթանալով կրթության նկատմամբ սեր ունեցող մի ճգնավորի հետ, հենց նույն թվականին աբեղա է ձեռնադրվում և այնուհետև մինչև 1597 թվականը մնում վերոհիշյալ անձնավորության խնամակալության տակ ու նրանից էլ ստանում իր առաջին գիտելիքները։ 1597 թ. Գրիգոր Դարանաղցին մեկնում է Բաբերդ և ուսումը շարունակում է Վահանաշեն գյուղի Ս. Ստեփանոս վանքի առաջնորդ Սրապիոն վարդապետի մոտ, որն իր շրջապատում «քաջ հռետորի» համբավ ուներ։ Սակայն այստեղ նրան վիճակված չէր խաղաղ կյանք վայելել։ 1598 թ. Արևմտյան Հայաստանի շատ շրջանների հետ, Բաբերդն ու նրա շրջակա գավառները նույնպես ենթարկվում են ջալալի կոչվող մուսուլմանական ավազակախմբերի վայրագություններին։ Այս

[88] «Ժամանակագրութիւն Գրիգորի Վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղեցւոյ», Երուսաղեմ, 1915, էջ Ժ։

արհավիրքի պակասը լրացնում է 1599 թ. սոսկալի երաշտը, որի հետևանքով հայության հսկայական զանգվածներ բռնում են տարագրության ճամփան ու ցրիվ գալիս դեպի Կոստանդնուպոլիս, Ղրիմ ու Լեհաստան։ Այդ աղետին հաջորդում է 1600 թվականի սովը, որը ընդգրկել էր գրեթե ամբողջ Արևմտյան Հայաստանը։ Դժոխք դարձած հայրենի երկրից հեռացողների մեջ էր նաև Գրիգոր Դարանաղցին, որը անցնելով Կարս՝ հաստատվում է Այրարատ աշխարհի Սաղմոսավանքում ու մնում այստեղ մինչև 1603 թվականը։ Այդ, համեմատաբար կարճ, ժամանակամիջոցում Գրիգոր Դարանաղցին կարողանում է ընդարձակել իր ծանոթության շրջանակները և անգամ միջամուխ լինելով էջմիածնի խառը գործերին, 1602 թ. նվիրակի պարտականություններով մեկնում է Հին Ջուղա։ Մեկ տարի հետո վերադառնալով Բաբերդ, իր խնամակալ Սրապիոնի ձեռքով ձեռնադրվում է վարդապետ։ Մինչև 1605 թվականը մնալով Բաբերդում, Գրիգոր Դարանաղցին ամբողջությամբ ճաշակում է ջալալիների հասցրած դառնությունները և միայն բարի մարդկանց աջակցությամբ խուսափելով նրանց հետապնդումներից, գաղթականների նոր խմբերի հետ, Տրապիզոնի վրայով, մի կերպ կարողանում է անցնել Ղրիմ, իսկ այստեղից էլ՝ Կոստանդնուպոլիս։ 1605—1606 թվականներին Դարանաղցին լինում է Եգիպտոսում ու Երուսաղեմում, իսկ 1607 թվականին նորից վերադառնում ու հաստատվում է Կոստանդնուպոլսում։ Կոստանդնուպոլսում անցկացրած նրա տարիները սկզբում շատ դառն ու ծանր էին։ Ջար ու նախանձ կրոնավորներն, անգամ Պոլսի պատրիարքի գլխավորությամբ, ամեն տեսակ խարդախություններով ու անօրինականություններով զայրացնում ու համբերությունից հանում էին համեստ ու եկեղեցականի կարգը հարգող Դարանաղցուն։ Օսմանյան կայսրության մայրաքաղաքի հայկական միջավայրի այս թոհուբոհի մեջ նրա միակ մխիթարությունն ու նեցուկը իր հայրենակիցները, ծանոթներն ու հարազատներն էին, որոնք նույնպես մահաբեր փոթորիկներից քշվել, բերվել էին Մարմարայի անծանոթ ափերը։

Հայրենակիցների գործադրած մեծագույն ջանքերի միջոցով Գրիգորը 1608 թ. պատրիարքի կողմից նշանակվում է Թուրքիայի եվրոպական մասի հայոց եկեղեցու առաջնորդ և տեղափոխվում Ռոդոստո քաղաքը։ Սակայն քիչ հետո, երբ սուլթանական իշխանությունների գործադրած միջոցների շնորհիվ ջալալիները զսպվել էին և կառավարական հրամանով կարգադրված էր Պոլսում ապաստանած գաղթական հայերին վերադառնալ իրենց ծննդավայրերը, Գրիգոր Դարանաղցին էլ նրանց հետ 1609 թ. գալիս է Հայաստան։ Բայց Թուրքիայում ո՞ր օրենքն ու հրովարտակն էր գործադրվել, որ այս մեկը գործադրվեր։ Այդ օրենքները, մանավանդ, երբ դրանք վերաբերում էին հայերին, ունեին միայն ձևական ուժ։ Այնպես որ Գրիգորը մի քանի տարի զուր ջանքեր էր գործադրում բարելավելու իր հայրենակիցների դրությունը և անելանելի վիճակի մեջ ընկնելով, 1612 թվականին նորից վերադառնում է Կոստանդնուպոլիս և մեծ դժվարություններով վերահաստատվում իր պաշտոնում։ Գրիգոր Դարանաղցին վախճանվում է Ռոդոստոյում 1643 թվականին, 67 տարեկան հասակում և թաղվում Ս. Փրկիչ եկեղեցու բակում։ Ժամանակակիցները մեծ գովեստով են խոսում Դարանաղցու մասին, նրան անվանելով «քաջ հռետոր և արիաջան բարունապետ», «մեծ և անվանի և ամենայն իմաստություններով լի» վարդապետ։

Գրիգոր Դարանաղցու կյանքի պատմությունը իր ժողովրդի և հայրենակիցների ապրած դառն օրերի ու թշվառությունների պատճենն է։ Զարմանալի է, որ այսքան զրկանքների, հալածանքների ու անարգանքների պայմաններում նա կարողացել է կրթել ու դաստիարակել որոշ թվով աշակերտների, մեծ շնորհքով ու ճաշակով արտագրել մի քանի ձեռագրեր և վերջապես շարադրել իր սեփական աշխատությունը, որը անվանվում է «Ժամանակագրութիւն»։ Դարանաղցու աշխատությունը իր ժամանակների հայ ժողովրդի դաժան ճակատագրի տխուր նկարագրությունն է։

Գրիգոր Դարանաղցին այն հազվագյուտ հայ հեղինակներից է, որի աշխատությունը մեզ է հասել հեղինակի ձեռագրով և այժմ պահպանվում է Երուսաղեմի հայկական ձեռագրերի մատենադարանում, որից և կատարվել է նրա միակ ու լավագույն հրատարակությունը Երուսաղեմում, 1915 թվականին (հրատարակիչ՝ Մ. Նշանյան)։ Աշխատությունն ունի ընդարձակ առաջաբան ու ծանոթագրություններ։

Ժամանակագրությունը հեղինակի կողմից բաժանված է երկու մասի։ Առաջին մասի սկիզբը ժամանակագրական մի ցանկ է, որ ընդգրկում է 1018—1539 թվականների պատմական կարևորագույն դեպքերի համառոտ նկարագրությունը։ Այս հատ-

վածի վերջում հեղինակը գրում է, որ ինքը դրա համար օգտագործել է այլևայլ հեղինակների գործեր և ավարտել է «բազում աշխատանօք եւ մեծաւ ջանիւ»։ Գրքի վերոհիշյալ հատվածից հետո հեղինակը 1539 թվականից միանգամից անցնում է 1595 թվականին և առաջին մասն ավարտում 1634 թվականով։ 1539—1595 թվականները բաց թողնելու մասին Գրիգոր Դարանաղցին իր գրքում ոչ մի բացատրություն չի տալիս։

Գրիգոր Դարանաղցու ժամանակագրության առաջին մասի վերջին հատվածները ընդգրկելով 39 տարիների պատմություն՝ շարադրված են ավելի ընդարձակ ձևով, քան պահանջում է ժամանակագրությունը ընդհանրապես, և շոշափում են այն ժամանակվա հայ ժողովրդի պատմության բազմաթիվ ու մեկը մյուսից կարևոր հարցեր, որոնք պատմագիտության համար հատուկ հետաքրքրություն են ներկայացնում։ Այստեղ հեղինակը կենսագրական տեղեկություններից բացի, անդրադառնում է նաև հատկապես ազգային-եկեղեցական խնդիրներին և քաղաքական անցուդարձին։ Դարանաղցու ժամանակագրության երկրորդ մասը սկսվում է Դավիթ, Մելիքսեդեկ և Ավետիս կաթողիկոսների ժամանակաշրջանի խառը դեպքերի նկարագրություններով։ Այստեղ տրվում են հայոց կաթողիկոսության Կիլիկիայից էջմիածին տեղափոխելու, Երուսաղեմի հայոց պատրիարքության վիճակի նկարագրությունները և Հայաստանում ու նրանից դուրս եղած հայաշատ վայրերում ապրող ու ստեղծագործող հեղինակների գործունեության պատմությունը՝ մինչև 1640 թվականը։ Այս ժամանակագրությունը ընդհանրապես հարուստ ու բազմակողմանի նյութեր է պարունակում XVII դարի առաջին տասնամյակների Կոստանդնուպոլսի ներքին կյանքի, ենիչերիների խռովությունների ու անօրինականությունների, սուլթանների մայրաքաղաքի շրջակայքում թափառական ու գաղթական հայության ծանր օրերի, Պոլսի եկեղեցական կյանքում տեղի ունեցող օրինական ու ապօրինի պայքարի և այլ ու այլ հարցերի մասին։ Դարանաղցին հազվագյուտ տեղեկություններ է տալիս նաև հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական ու քաղաքական չարքաշ կյանքի մասին և նշում այն ուղղությունները, որոնցով հայ գաղթականների մեծ զանգվածները արտագաղթում էին օտար երկրներ։



Գրիգոր Դարանաղցու լեզուն և ոճը շատ էլ հարթ չեն։ Նա գրում է համարյա ժամանակի խոսակցական լեզվով և տեղին ու անտեղի գործածում շատ օտար բառեր ու դարձվածքներ։ Դարանաղցին իր աշխարհայացքով նույնպես ետ է մնում նախորդ սերունդների առաջավոր մտածողներից։ Նա անվերապահորեն հավատում է գերբնական ուժերին, դրա համար էլ չի կարողանում թափանցել պատմական իրադարձությունների խորքերը և ամեն ինչ բացատրում է հայ ժողովրդի հասցեին եղած անեծքով և այլն։

**Առաքել Դավրիժեցի**

Ուշ միջնադարի հայկական պատմագրական ստեղծագործություններից մեկը Առաքել Դավրիժեցու «Պատմութիւն»-ն է, որը սելջուկ-թուրքերի և մոնղոլների ավերիչ տիրապետությունից ի վեր ստեղծագործական լուրջ երևույթ էր հայ մատենագրության մեջ։

Դավրիժեցու մասին կենսագրական տեղեկությունները մենք քաղում ենք նրա գրքից և կից եղած հիշատակարանից, որոնք, պետք է խոստովանել, շատ աղքատիկ ու կցկտուր են։

Առաքել Դավրիժեցին ծնվել է մոտավորապես 1590-ական թվականներին, Պարսկաստանի Թավրիզ քաղաքում, որը հայ հեղինակների մոտ հաճախ անվանվում է յուրովի՝ Դավրեժ։ Հետագայում նա տեղափոխվում է էջմիածին և որպես նրա միաբանության անդամ՝ իր ամբողջ կյանքը գրեթե անց է կացնում այնտեղ։ Էջմիածնում էլ, ինչպես ինքն է ասում, նա ստանում է համապատասխան կրթություն և ձեռք բերում այն ժամանակվա համար անհրաժեշտ գիտելիքները։ Առաքելի ուսուցիչը եղել է Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսը (1633—1651)։ Հայոց եկեղեցական կենտրոնում Առաքել Դավրիժեցին ստանում է նաև վարդապետի հոգևոր կոչում։ Ժամանակակիցները միաբերան վկայում են, որ Դավրիժեցին իր գիտելիքներով շրջապատում վայելում էր մեծ հեղինակություն և նրան բոլորը ճանաչում էին իբրև «պատմիչ Առաքել»։ Այն հանգամանքը, որ պատմիչը որպես էջմիածնի նվիրակ հաճախ կաթողիկոսության հանձնարարությամբ այցելում էր հայրենիքից դուրս եղած հայաշատ վայրերը և բարեխղճորեն կատարում տրված հանձնարարությունները, գալիս է հաստատելու նրա հասցեին ժամանակակիցների արած դրվատանքի խոսքերի ճշմարտությունը։ Հունաստանում, Պարսկաստանում և Արևմտյան Հայաստանի

շատ վայրերում նա հնարավորություններ է ունենում զբաղվելու նաև իր գործերով։ Ճամփորդությունների ընթացքում հավաքում է բազմապիսի նյութեր Պատմության համար, արտագրում է ձեռագրական հիշատակարաններ, զրուցում դեպքերին մասնակից կամ ժամանակակից անձնավորությունների հետ և անում համապատասխան գրառումներ, ծանոթանում է պատմական վայրերին և այլն։ Հասկանալի է, թե ինչ դրական նշանակություն են ունեցել վարդապետ Դավրիժեցու գիտելիքների բազմապատկման և մտահորիզոնի ընդլայնման համար այդ շրջագայությունները։ Եվ երբ Փիլիպոս կաթողիկոսի մոտ միտք է հղանում գրի առնելու այդ ժամանակաշրջանի հայ ժողովրդի դառն ճակատագրի պատմությունը, նա անվարան կերպով այդ աշխատանքի համար որպես հեղինակ ընտրում է իր երբեմնի աշակերտ Առաքել Դավրիժեցուն[89]։ Սակայն նման մի հանձնարարության իրագործման ծանրությունը զգալով, ապա ծերության և գուցե նաև վատառողջության պատճառով՝ Դավրիժեցին սկզբում հրաժարվում է ընդունել այդ առաջարկությունը։ Սակայն հարցը այսպես չի փակվում, որովհետև դրան անմիջապես հետևում է կաթողիկոսի պաշտոնական հրամանը, որին ենթարկվելով, Դավրիժեցին 1651 թ. ձեռնարկում է պատմություն գրելու աշխատանքը։

1651 թվականին մահանում է Փիլիպոս կաթողիկոսը, և Դավրիժեցու աշխատանքը գրքի վրա ժամանակավորապես ընդհատվում է, մինչև որ նոր կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին (1655—1680) թախանձագին խնդրում է նրան աշխատանքը շարունակել և ավարտել։ Եվ այսպես, 1658 թվականին Առաքելը շարունակելով Պատմության շարադրանքը, այն ավարտում է 1662 թվականին։

Դավրիժեցին վախճանվել է 1670 թվականին և թաղվել Վաղարշապատի Ս. Գայանե վանքի գերեզմանոցում։ Նա այն եզակի հայ մատենագիրն է, որի աշխատությունը հրատարակվել է կենդանության օրոք։ Այդ գիրքը առաջին անգամ լույս է տեսել Ամստերդամի հայկական տպարանում 1669 թվականին։

Հրատարակվելուց հետո թեև Դավրիժեցու գիրքը խիստ թշնամաբար ընդունվեց հատկապես Լվովի հայ գաղութի լատինամոլ ու կաթոլիկ հոգևորականության կողմից, հեղինակի հակապապական լինելու պատճառով, բայց և մեծ ընդունելություն գտավ ընթերցողների մոտ և հետագայում երկու անգամ վերահրատարակվեց Վաղարշապատում (1884 և 1896 թթ.)։ Լույս են տեսել նաև Դավրիժեցու Պատմության ամբողջական ֆրանսերեն (Պետերբուրգ, 1874), ռուսերեն (Մոսկվա, 1973), և աշխարհաբար (Երևան, 1988) թարգմանությունները։

Առաքել Դավրիժեցու «Պատմութիւնը» ընդգրկում է պատմական համեմատաբար փոքր ժամանակահատված՝ 1600 թվականից մինչև 1662 թվականը։ Սակայն պարտադիր չէ, որ սկզբնաղբյուրները գնահատվեն անպայման երկար ժամանակաշրջան ընդգրկելու համար։ Մեզ հետաքրքրող պատմական այս երկի արժեքը նախ և առաջ այն է, որ վերաբերում է 17-րդ դարի առաջին կեսերի բազմազան իրադարձություններով ու դեպքերով հարուստ ժամանակաշրջանին, որոնց լուսաբանությունը՝ այսօր գիտականից բացի, ունի նաև ճանաչողական և քաղաքական մեծ նշանակություն։ Դավրիժեցու Պատմության արժեքը մյուս կողմից էլ բարձր է նրա համար, որ այն շարադրված է կրթված, բանիմաց ու խոհուն մի անձնավորության կողմից, որը շատ բան ինքն է տեսել կամ վստահելի ականատեսներից հավաստի տեղեկություններ հավաքել ու զետեղել իր գրքում։ Պատմության համար որպես սկզբնաղբյուր օգտագործվել են նաև հիշատակարաններ, ժամանակագրություններ և էջմիածնում պահվող կաթողիկոսական կոնդակներ։

Շարադրության մեջ հիմնական ուշադրությունը նվիրելով այն ժամանակ պարսիկների տիրապետության տակ գտնվող հայ ժողովրդի բուն հայրենիքի երկու երկրամասերին՝ Երևանի և Նախիջևանի խանություններին, Դավրիժեցին արժեքավոր տեղեկություններ է տալիս նաև հեռավոր հայկական գաղթավայրերի՝ Լվովի ու Նոր Ջուղայի հայության մասին, որտեղ հայ ժողովրդի հայրենազուրկ բեկորները իրենց գոյությունը կարողանում էին մի կերպ պահպանել՝ մշտապես ենթարկված լինելով քաղաքական, տնտեսական ու կրոնական բնույթի դաժան ճնշումների ու հալածանքների։

Դավրիժեցու Պատմությունը բաժանվում է 56 գլուխների, սկզբում ունի նաև փոքրիկ առաջաբան, իսկ վերջում՝ հիշատակարան։ Հետևելով հայ պատմագրության ավանդույթին, Դավրիժեցին նույնպես հիմնականում շարադրում է ժամանակաշրջան-

[89] Аракел Даврижеци, Книга истории, перевод с армянского А. Ханларян, Москва, 1973, էջ 17։

ջանի քաղաքական պատմությունը, պատմություն, որ այն ժամանակ ընթանում էր Արևելքի երկու հզոր, գիշատիչ ու արյունարբու տերությունների՝ Թուրքիայի ու Պարսկաստանի ամենօրյա պատերազմների ուղեկցությամբ և որից մեծապես տուժում էին, հայերից բացի, հարևան մյուս ժողովուրդները։ Հենց այս առիթով էլ հեղինակն անդրադառնում է նաև պատմության գլխավոր ու գործող անձնավորություններին՝ թուրքական սուլթաններին ու պարսկական շահերին, երբեմն ներկայացնելով նաև դրանց ծագումնաբանությունն ու համառոտ բնութագրերը։

Առաքել Դավրիժեցին իր գրքում մեծ տեղ է հատկացնում նաև հասարակական-քաղաքական դեպքերին։ Նա խոսում է ջալալիների ապստամբությունների, ասպատակությունների և արշավանքների մասին, այն մասին, թե ինչպիսի ողբերգական հետևանքներ էին ունենում այդ արշավանքները անզեն ու իրավազուրկ հայ ժողովրդի համար։ Անգնահատելի են հայ պատմիչի աշխատության այն գլուխները (9—12), որտեղ բավական մանրամասն կերպով շարադրվում են բախտակից վրաց ժողովրդի ծանր վիճակի և նրա մղած ազատագրական պայքարի դրվագները օտարերկրյա նվաճողների դեմ, առասպելական հերոս Գեորգի Սահակաձեի գլխավորությամբ։

Այդ ժամանակաշրջանի Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության համար բացառիկ արժեք ունեն Պատմության այն հատվածները, որտեղ հեղինակը խոսում է թուրքերի ու պարսիկների վարած հարկային քաղաքականության մասին, որ հատկապես հպատակ քրիստոնյա ժողովուրդների համար կրում էր բացահայտ կողոպուտի բնույթ։ Մասնագետները ճիշտ են նկատում, որ Առաքել Դավրիժեցու Պատմության գլխավոր հերոսը ժողովուրդն է։ Նա հավասար համակրանք է տածում նաև հրեաների, վրացիների ու մյուսների նկատմամբ, գովերգում ու գնահատում է նրանց ստեղծագործ աշխատանքը, հերոսական պայքարը։

Առաքել Դավրիժեցին իր մեծածավալ աշխատությունը գրել է գրաբար, բայց շատ հասկանալի ու մատչելի շարադրանքով։ Նա երբեմն գործածում է աշխարհաբար բառեր ու դարձվածքներ և ոճը դարձնում ավելի հետաքրքիր։ Դավրիժեցու խոսքի մեջ կա զորավոր հայրենասիրություն և կենդանի շունչ, իսկ Շահ Աբասի կողմից հայերի զանգվածային բռնագաղթի



տեսարանների նկարագրություններին, որ Դավրիժեցին շարադրել է գեղարվեստական մեծ շնչով, «... մեր պատմությանց մեջ քիչ կպատահենք Եղիշեի ժամանակից ի վեր»,— ասում է Մ. Աբեղյանը։ Դավրիժեցին, Մովսես Խորենացու օրինակով, իր գրքում խոշոր տեղ է հատկացնում պատմության ժամանակագրության հարցերին։ Նա գտնում է, որ յուրաքանչյուր պատմագիտական աշխատության հիմքը կազմում է ժամանակագրությունը և խստորեն հետևելով այդ սկզբունքին, ոչ միայն պահպանում է այն, այլև տալիս է շատ վստահելի ու ճշտված թվականներ։ Դավրիժեցու գիրքը, ինչ խոսք, ունի նաև թերություններ, ավելորդություններ, կրկնություններ և այլն։ Թերություններից գլխավորը, սակայն, նրա աշխարհայացքային սահմանափակությունն է, որը հատուկ էր այն ժամանակվա գրեթե բոլոր հեղինակներին։ Սրա մոտ էլ ստացվում է այնպես, որ հայ ժողովրդի դժբախտության պատճառը նրա գործած մեղքերն ու անհատ մարդկանց սխալ գործողություններն են։ Նա գրեթե անքննադատ ձևով է օգտագործում աղբյուրները և չի կարողանում դրանք համապատասխան ձևով մշակել ու դասակարգել։ Սակայն այս թերություններով հանդերձ, Առաքել Դավրիժեցին իր ժամանակակիցներից շատերից բարձր էր կանգնած որպես մտածող և նրա թողած գրական ժառանգությունը որպես սկզբնաղբյուր բարձր է գնահատվում Հայաստանի և հարևան ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար[90]։

**Զաքարիա Քանաքեռցի**

Զաքարիա Քանաքեռցին ծնվել է 1627 թվականին, Քանաքեռ գյուղում։ Հայրը՝ Մկրտիչը, ծառայում էր Կոտայքի գավառապետարանում որպես գրագիր։ Ծնողները տեսնելով ուսման նկատմամբ իրենց որդու ունեցած սերը՝ 13 տարեկան հասակում նրան տալիս են Երևանից ոչ հեռու գտնվող Հովհաննավանքի դպրոցը սովորելու, ուր և Զաքարիան անց է կացնում իր ամբողջ կյանքը՝ որպես հասարակ վանական։ Այստեղ, պատմիչ Առաքել Դավրիժեցու առաջնորդության տարիներին, Զաքարիա Քանաքեռցուն բախտ է վիճակվում դառնալու նաև նրա աշակերտը։

---

[90] Մանրամասն տե՛ս Լ. Դանեղյան, Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1978։

Հովհանավանքի և հայոց եկեղեցու գործերով Զաքարիա Քանաքեռցին առիթ է ունեցել լինելու Պարսկաստանի Ղազվին և Թուրքիայի Զմյուռնիա քաղաքներում, իսկ 1684 թ. նաև Կոստանդնուպոլսում։ Զաքարիա Քանաքեռցին, սակայն, այս մասին շատ հարևանցիորեն, ի միջի այլոց է խոսում, որի պատճառով այդ ճամփորդությունների մանրամասները մեզ հայտնի չեն։ Արտասահմանյան շրջագայություններից վերադառնալուց հետո, 1687 թվականին Հովհանավանքի առաջնորդ Սարգիս Կարբեցու հանձնարարությամբ Զաքարիան ձեռնամուխ է լինում գրելու վանքի պատմությունը։ Հենց սա էլ պատմիչի առաջին գիտական-ստեղծագործական աշխատանքն էր, որը նա սկսեց կատարել առաջացած հասակում։ Աշխատությունը գրելու համար Զաքարիան օգտագործել է առաջին հերթին Հովհանավանքի արխիվային փաստաթղթերը և այնտեղ պահվող զանազան ցուցակներ ու մատյաններ։ Չի բացառվում, որ պատմիչը դիմած լինի նաև առանձին մարդկանց բանավոր հուշերին։ Զաքարիայի հիշյալ աշխատությունը փոքրածավալ մի գործ է, կազմված 16 գլուխներից, որոնք ունեն իրենց առանձին վերնագրերը։ Հովհանավանքի պատմությունը սկսելուց առաջ, Զաքարիան մի շատ ընդհանուր ու համառոտ ակնարկ է անում այն մասին, թե ինչ պարագաներում և ինչ տարիքում է ինքը այդ գործը ձեռնարկել, հետո խնդրում է ընթերցողներին՝ ներողամիտ լինել սխալների համար և գնահատել իր աշխատանքը։ Այնուհետև նույն ձևով հեղինակը խոսում է հնում Հայաստանում վանքեր ու եկեղեցիներ կառուցելու մասին, ապա, անցնելով բուն նյութին, ներկայացնում է Հովհանավանքի կառուցման պատմությունը, հիշատակում նրա վերանորոգումները և այստեղ աթոռակալած առաջնորդներին, զանգատվում վանքի տնտեսական ծանր վիճակից և այլն։ Զաքարիա Քանաքեռցին, որպես գրագետ և կարդացած հոգևորական, շատ բարձր է գնահատել նաև վիմագիր արձանագրությունները և որքան որ կարողացել է, օգտագործել է դրանք իր աշխատության մեջ։ Հետաքրքիր է, որ հեղինակը շարադրանքի ընթացքում բերել է բավական թվով ճշտված և վերծանված արձանագրություններ, որոնք այսօր կարևոր նշանակություն ունեն մեզ հասած վթարված տեքստերը վերականգնելու համար։

Հովհանավանքի մասին Զաքարիա Քանաքեռցու գրած հիշ-



յալ աշխատությունը հետագայում մտցվում է հեղինակի Պատմության մեջ որպես նրա վերջին՝ երրորդ մասը։

Զաքարիա Քանաքեռցին իր երկրորդ աշխատությունը, որը կոչվում է «Պատմագրութիւն», ավարտել է 1699 թվականին՝ մահվանից մի քանի ամիս առաջ։ Այն բաժանված է երկու մասերի, որոնք կոչվում են հատորներ։ Հետագայում Հովհանավանքի պատմությունն էլ միացվելով, դառնում է նրա երրորդ հատորը։

Քանաքեռցին իր Պատմագրության առաջին հատորը գրելիս լայնորեն օգտվել է իր ուսուցիչ Առաքել Դավրիժեցու Պատմությունից։ Քանաքեռցին ծանոթ է Ագաթանգեղոսին և «Մեծն» Մովսես Խորենացուն, որոնց անունները հենց սկզբից հիշատակելուց հետո, շատ համառոտ անդրադառնում է պարսիկ ու հայ թագավորների հաջորդական թվարկությանը։ Հավատարիմ մնալով հայոց պատմությունը հնագույն ժամանակներից սկսելու հնում ընդունված կարգին, նա առաջին հատորի 28-րդ գլխից հետո է միայն անցնում իր ժամանակաշրջանի դեպքերին։

Թուրքերի ու պարսիկների կամայականությունների թատերաբեմ դարձած և արտաքին աշխարհից կտրված Հայաստանում, վանական դաստիարակության պայմաններում Զաքարիան չէր կարող պատմագիտական լայն աշխարհայացք ունենալ։ Նա շրջապատում տեղի ունեցող բոլոր գործողությունների հեղինակը աստծուն է համարում։ Պատերազմները, երաշտը, սովը, համաճարակները, հիվանդությունները, բոլոր աղետները անվերապահորեն տեղի են ունենում միայն և միայն աստծու կամքով ու հրամանով։ Հասկանալի է, սահմանափակ մտածողությամբ այդքան ամուր կաշկանդված անձնավորությունը չպետք է կարողանար բավարար չափով ընտրել, մշակել, դասակարգել և տեղին-տեղին օգտագործել եղած աղբյուրներն ու նյութերը կամ էլ դրանց նկատմամբ ցուցաբերեր գիտական-քննադատական մոտեցում։ Մ. Աբեղյանը միանգամայն իրավացի է, երբ ասում է, թե Զաքարիա Քանաքեռցին թեև կրթված մարդ է, բայց ունի հովվի կամ ուղտապանի միամտություն, որովհետև նա ամեն ինչի հավատում և անխտիր գրի է առնում։ Եվ որովհետև Զաքարիան շատ է վստահում իր կարդացած աղբյուրներին կամ լսած բանավոր պատմություններին, որոնք առանց որևէ փոփոխության վերարտադրում է իր գրքում, դրա համար էլ նրա «Պատմագրությունը» նման չէ

մինչև այժմ մեզ ծանոթ պատմագիտական երկերին։ Այն ավելի շատ պարսից մի քանի շահերի, Հայաստանում իշխող խաների, առանձին հասարակ մարդկանց կամ համագյուղացիների մասին լսած զրույցների հավաքածու է, որոնցից մի քանիսը նույնիսկ տարածված էին նաև հարևան երկրներում։ Կարծես ժամանակի ոգին ամբողջականացնելու համար Զաքարիա Քանաքեռցին չի մոռանում նաև, այսպես ասած, հրաշքները, դևերին, սրբերին, վիշապներին, որոնց մասին նույնպես գրում է իբրև ճշմարիտ իրողություններ։ Զաքարիայի հավաքած բոլոր այդ կարգի նյութերը ներկայացված են ժողովրդական ավանդույթներին ու պատումներին ընդգծված հարազատությամբ։ Հեղինակը այստեղ գրեթե դեր չունի, նրա գործը միայն հավաքելու և շարադրելու մեջ է եղել։ Դրա համար էլ այդ նյութերը շատ հարազատ են իրենց աղբյուրին և ունեն առանձնահատուկ արժեք հեղինակի ապրած ժամանակաշրջանի հայկական բանահյուսության ուսումնասիրության տեսակետից։ Զաքարիա Քանաքեռցին այս առումով փաստորեն երկրորդ հեղինակն է Մովսես Խորենացուց հետո։

Զաքարիա Քանաքեռցին թեև իր Պատմագրությունը շարադրել է գրաբար, սակայն տեղ-տեղ նա վարպետորեն անցնում է գրեթե ժամանակի խոսակցական լեզվին, գրում է շատ կենդանի, աշխույժ ու հասկանալի։ Զաքարիայի Պատմագրությունը բարձր է գնահատվում որպես պատմական սկզբնաղբյուր իր ժամանակաշրջանի ուսումնասիրության համար։ Այստեղ մենք հանդիպում ենք շատ արժեքավոր նյութերի, որոնք վերաբերում են Հայաստանի և հարևան երկրների սոցիալ-տնտեսական կյանքին, հասարակ, ճնշված ու հարստահարված աշխատավոր գյուղացիներին։ Հայ պատմագրության մեծ ընտանիքում ոչ ոք այնքան ուշադրություն չի դարձնում աշխատավոր զանգվածներին, որքան Զաքարիա Քանաքեռցին։ Ինչի մասին էլ որ նա խոսում է, միևնույն է, նրա ուշադրության կենտրոնում է հասարակ աշխատավորը[91]։

Զաքարիա Քանաքեռցու Պատմագրության լավագույն հատվածներից մեկը Շահ Աբասի կողմից 1605 թվականի հայերի

[91] Տե՛ս Закарий Канакерци, Хроника, перевод с армянского, предисловие и комментарии М. Дарбинян-Меликян, Москва, 1969, էջ 19։



բռնագաղթի նկարագրությունն է, որն աչքի է ընկնում գեղարվեստական վարպետությամբ ու պատկերավորությամբ։

Գրքի երկրորդ մասում արժեքավոր նյութեր կան գյուղական համայնքի, նրա իրավունքների, Երևանի խաների, նրանց կամայականությունների և պարսկական հարկային ծանր քաղաքականության մասին։ Զաքարիայի հաղորդումներից երևում է, որ պարսկական տիրապետության ժամանակ հարկահավաքության ընթացքում թույլ էին տրվում ամեն տեսակ կամայականություններ և ապօրինություններ, որ հարկերի տեսակներն ու չափերը երբեք հաստատուն չեն եղել և դրանց որոշելը կախված էր խանի անձնական հայեցողությունից։

Զաքարիան հայ ժողովրդի կեղեքիչներին՝ խաներին ու պարսկական մյուս բոլոր պաշտոնյաներին ներկայացնում է ամենառեալիստական գույներով։ Նրանք դաժան են, ընչաքաղց, արյունախում ու անմարդկային։ Խաները և նրանց պաշտոնյաները ժողովրդի պատուհասներն են, գողերի, մարդասպանների ու ավազակների ընկերակիցը։

Զաքարիայի Պատմագրության մեջ շատ արժեքավոր նյութեր կան նաև իրենց պաշտոնակիցների և շահերի հետ՝ Երևանի խաների փոխհարաբերությունների մասին։ Հետաքրքիր նյութեր կան նաև Էջմիածնի կաթողիկոսության ու հոգևորականության մասին, այն մասին, թե որքան ծանր էր հայոց հոգևոր կենտրոնի և հատկապես կաթողիկոսի վիճակը պարսիկների տիրապետության ժամանակ և այլն։

Հայաստանի տնտեսական կյանքի պատմության հարցերի ուսումնասիրության համար կարևոր են նաև պատմիչ Զաքարիայի հաղորդած տեղեկությունները հայ մեծատունների՝ առևտրավաշխառուական խավերի մասին, որոնց կենտրոնական դեմքը պարոն Այվազն էր, որ մեծ կապեր ուներ ինչպես տեղական իշխանավորների, այնպես էլ կաթողիկոսի և բարձրաստիճան հոգևորականության հետ և ամեն ինչ անում էր իր եկամուտները բազմապատկելու, շատացնելու համար։

Զաքարիա Քանաքեռցու Պատմագրությունը առաջին անգամ հրատարակվել է 1870 թվականին Վաղարշապատում, հեղինակի իսկ ձեռագրի արտատպությամբ։ 1876 թ. այն լույս է տեսել Պետերբուրգում ֆրանսերեն՝ արևելագետ Մ. Բրոսսեի թարգմանությամբ։ Ռուսերեն լավագույն թարգմանությունը հրատարակվել է Մոսկվայում 1969 թվականին։

## Զաքարիա Ագուլեցի

Հայաստանի տնտեսական ու մշակութային կյանքի քայքայման ու անկման ժամանակաշրջանի հեղինակ Զաքարիա Ագուլեցին ծնվել է Վասպուրականի Գողթն գավառի Ագուլիս գյուղաքաղաքում, 1630 թվականին։ Այդ մասին նա իր օրագրում կամ դավթարում գրում է. «Դարցեալ ես Զաքարիայ հարց ու փորցով իմացայ իմ հայր Աղամիրէն, մայր Սավգուլէն, որ թըվին ՌՀԹ ումն (1630) ես անարժան Զաքարիայ որ մօրէ ծնայ սուրբ Գէորգի կիրակի օրն...»։ Այս տողերը և նրանցում եղած տառասխալները ցույց են տալիս, որ Զաքարիան բավարար կրթություն չի ստացել։ Այդպես սխալներով են գրված նաև նրա դավթարի մյուս հատվածները։ Զաքարիա Ագուլեցու մահվան հավանական թվականը 1691-ն է։

Զաքարիա Ագուլեցու օրագրությունը շատ ուշ է հայտնաբերվել։ Նրա մասին առաջին տեղեկությունը հաղորդվել է «Ճռաքաղ» թերթում 1862 թվականին, իսկ դարի վերջին «Մըշակ»-ի խմբագիր Ալ. Քալանթարի ջանքերն այն հրատարակելու համար, ուղղակի ձախողվել են տպագրական ծախսերը վճարել չկարողանալու պատճառով։ Սակայն աշխատության բնագիրը, որ հեղինակի ինքնագիրն էր, և տպագրվածի մեկ օրինակը երջանիկ պատահականությամբ փրկվել են կորստից, որից և հետագայում կարողացել են օգտվել մի քանի հեղինակներ։ Խորհրդային իշխանության հաստատումից հետո, Ալ. Քալանթարի ժառանգը՝ Լ. Քալանթարը Զաքարիա Ագուլեցու ձեռագիրը հանձնեց Հայաստանի Լուսժողկոմատին։

Զաքարիա Ագուլեցու աշխատությունը ընդամենը 98 թերթից բաղկացած անկազմ ու փոքրածավալ մի տետր է, որի հրատարակությունը, փոքրիկ առաջաբանով, կատարել է Ս. Վ. Տեր-Ավետիսյանը (Երևան, 1938)։ Գրքին կցված են նաև ձեռագրի վերջում այլևայլ հեղինակների կատարած հավելագրությունները և հրատարակչի կազմած տեղանունների, անձնանունների ցանկերն ու ձեռագրի անհասկանալի բառերը բացատրող բառատետրը։

Զաքարիա Ագուլեցու գրքույկը պատմագիտական առումով մեծ գործ չէ, այն լոկ մի օրագրություն է, որի սկզբի մասերում հեղինակը, որքան որ կարողանում է, նկարագրում է իր անցած ճանապարհները, հիշատակում բնակավայրերը՝ քաղաքներն ու գյուղերը, տալիս նրանց հեռավորությունն իրարից։ Ագուլեցին,



ինչպես քիչ հետո կտեսնենք, այդ հարցերով սկսել է հետաքրքրվել իր ճամփորդությունների հենց սկզբից։ Նա այդ ժամանակ մեկիկ-մեկիկ հավաքել է իրեն հետաքրքրող տվյալները, ստուգել դրանք հարց ու փորձով «իմաստուն (այսինքն՝ գիտակ—Ս. Մ.-Բ.) մարդկանցից» ճշտել բոլորը, գրանցել դրանք, և հետո միայն շարադրել «այսմ դավտարս»։ Ահա թե ինչպես է նա նկարագրում իր կատարած աշխատանքը. «Դարցեալ ես Զաքարիա կամէցայ, ուր որ գնամ..., թէ գիւղ, թէ քաղաք, թէ ավեր ճանապարհ, ուր և հանդիբիցէ, զատիկ կամ վարդավառ կամ սուրբ խաչ կամ ջրաւրհնիք արարիցեմ կամ թէ ինչ գիւղ կամ քաղաք մտանիցեմ կամ թէ ելանիցեմ, գրեսցեմ։ Դարցեալ կամ ինչ կամ մանձիլն հարցանելով անունն՝ ոչ թէ մին մարդ, Գ (3) կամ Դ (4) մարդ կուհարցնեմ անունն՝ կամ քանի աղաջ (տարածության չափ—Ս. Մ.-Բ.) կայ կամ չկայ կամ մին աղաջյետ կամ թէ առաջ, ոչ թէ չափելով իմացայ, այլ իմաստուն մարդիկ հարցանելով։ Ոչ թէ մին անգամ գնալով այս գրեցի... ՌԼԶ ամի (1647) Ագուլաց դուրս գնացի մինչի ՌՃԺԳ (1664) յամն շուրջ գալով, գնալով, հարցանէլով, գրեցի ըստունք։ Գ (3), Դ (4) թղթի վերայ գրած էի, ոմն ըստուք, ոմն սխալ։ Ապա ՌՃԺԳ (1664) յամին կամիվն Աստուծոյ բէրի, նորոյգէցի այսմ դավտարս»[92]։ Հետո ավելացնում է, թե ինչ որ չի տեսել, ուր որ չի այցելել, ծով, ցամաք, գյուղ, կամ քաղաք, չի գրանցել։

Զաքարիա Ագուլեցու հաղորդումներն ընդգրկում են աշխարհագրական մի ընդարձակ տարածություն՝ Հայաստանից, Պարսկաստանից ու Թուրքիայից սկսած մինչև կենտրոնական ու արևմտյան Եվրոպայի երկրները։ Եվ որտեղ որ եղել է հեղինակը, ինչ նյութեր էլ հավաքել է, շարադրանքի ձևն ու ոճը չի փոխել։ Նա, ինչպես իր հայրենիքի, այնպես էլ օտար երկրների բնակավայրերն ու դրանց իրարից ունեցած հեռավորությունները նկարագրում է նույն համառոտ ձևով։ Զաքարիա Ագուլեցու գրառումների մեջ կարելի է գտնել մեծ մասամբ փոքր, տեղական նշանակություն ունեցող դեպքերի կարճ ու ամփոփ նկարագրություններ, որոնցով XVII դարի պատմության կարևոր իրադարձությունների մեջ հնարավոր է ճշտումներ ու լրացումներ կատարել։ Հեղինակը հետաքրքիր ու արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հատկապես Ագուլիսի հայու-

---

[92] «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», Երևան, 1938, էջ 5—6։

թյան ազգային սովորությունների ու կրոնական ծիսակատարությունների մասին։

Զաքարիա Ագուլեցու դավթարի վերջին էջը պարունակում է հեղինակի տոհմի՝ Քրդունց ընտանիքի ժամանակագրությունը։ Ագուլեցու օրագրությունը գրված է այն ժամանակվա խոսակցական լեզվով, որը գրաբարի ու Ջուղայի բարբառի խառնուրդն էր՝ իրեն հատուկ ուղղագրությամբ։

**Երեմիա Քյոմուրճյան**

Երեմիա Մարտիրոսի Քյոմուրճյանը (1637—1695), որ հայտնի է նաև Երեմիա Չելեպի, Երեմիա Դպիր և այլ անուններով, XVII դարի հայ մշակույթի, ազգային-հասարակական կյանքի ու գիտության նշանավոր գործիչներից է։ Ծնվել է Կոստանդնուպոլսում, քահանայի ընտանիքում։ Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրի Ս. Սարգիս եկեղեցու վարժարանում Հովհաննես քահանայի մոտ, այնուհետև աշակերտել է նշանավոր վարդապետներ Մարտիրոս Ղրիմեցուն և Եղիազար Այնթապցուն ու հմտացել գրչության արվեստի, մատենագիտության, երաժշտության բնագավառներում։ Քյոմուրճյանի մտավոր զարգացմանը մեծապես նպաստել է լեզուների իմացությունը։ Նա տիրապետել է հունարենին, լատիներենին, եբրայերենին, արաբերենին, պարսկերենին, գերմաներենին, ֆրանսերենին և թուրքերենին։ Ծառայել է Պոլսի Հայոց պատրիարքարանում իբրև ատենադպիր, ապա՝ խորհրդական։ Ճանապարհորդել է Մերձավոր Արևելքում, Արևելյան Եվրոպայում և Արևելյան Հայաստանում, ծանոթացել հայ գաղթավայրերի կյանքին։

Քյոմուրճյանի ստեղծագործություններն ընդգրկում են գիտության ամենաբազմազան բնագավառները։ Նա իր կրոնական և պատմագիտական երկերի մի զգալի մասը շարադրել է չափածո։ Երեմիա Քյոմուրճյանի «Պատմութիւն համառօտ Դճ տարւոյ օսմանցոց թագաւորացն» (Երևան, 1982) գիրքը, որ գրել է Հակոբ IV Ջուղայեցի կաթողիկոսի (1655—1680) պատվերով, նույնպես չափածո երկ է։ Աշխատությունը վերաբերում է օսմանյան սուլթանության 1299—1678 թվականների պատմությանը։ Այստեղ Քյոմուրճյանը հայ և թուրք հեղինակների գործերից բացի, մեծ չափով օգտագործել է նաև ժողովրդական ավանդությունները, առասպելները, առանձին մարդկանց հիշողություններն ու տեղեկությունները։ Քյոմուրճյանն այս գրքում շատ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում թուրքական պետության սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակի մասին, վերլուծում երկրի ներքին ու արտաքին քաղաքականության հարցերը, հարկահավաքության բիրտ ու վայրենի եղանակները, նվաճված ժողովուրդների ծանր վիճակը և բռնակալական լծի դեմ նրանց մղած ազատագրական պայքարի պատմությունը։ Նշված հարցերից շատերի ուսումնասիրության համար Քյոմուրճյանի այս երկը կարելի է համարել անմրցակից սկզբնաղբյուր։

Քյոմուրճյանի ուշագրավ ստեղծագործություններից մեկն էլ նրա «Օրագրութիւն»-ն է (Երուսաղեմ, 1939)։ Աշխատությունը հուշագրություններից և ինքնակենսագրական տեղեկություններից բացի, արժեքավոր նյութեր է պարունակում XVII դարի կեսերի Թուրքական սուլթանության մեջ ծավալված քաղաքական դեպքերի մասին։ Գրքում հեղինակը մեծ ուշադրություն է դարձրել Թուրքիայի հայկական գաղթավայրերի հասարակական, եկեղեցական գործերին, այլ ժողովուրդների կենցաղին, ծեսերին, կրոնական հավատալիքներին և այլ հարցերի։

Երեմիա Քյոմուրճյանը «Ստամպօլայ պատմութիւն» (Վիեննա, 1913—1939) եռահատոր չափածո երկում, «Աշխարհագրութիւն» (չի պահպանվել), «Համառօտ ստորագրութիւն Կ. Պոլսոյ նեղուցի», «Տօմարական գիտելիքներ», «Պատմութիւն հրկիզման Կ. Պոլսոյ» և մյուս աշխատություններում լայնորեն քննարկում ու դատապարտում է թուրքական իրականությունը, ցույց տալիս հայ և մյուս ժողովուրդների բռնադատված, անիրավահավասար վիճակը, խոսում Ասիայի, Աֆրիկայի ու Եվրոպայի երկրների և հատկապես Հայաստանի աշխարհագրության մասին, ճշտում հայկական որոշ վանքերի տեղադրությունը, վերլուծում հայկական և այլ տոմարներին վերաբերող խնդիրներ և այլն, և այլն։ Քյոմուրճյանը հորինել է ողբեր, պոեմներ, մշակել ժողովրդական երգեր, գրել է թուրքերեն տաղեր, թուրքերեն է թարգմանել «Նոր Կտակարանը», «Յայսմաւուրքը» և այլ գործեր։ Քյոմուրճյանը եռանդուն պայքար է ծավալել կաթոլիկության ու քաղկեդոնականության դեմ և ջերմորեն պաշտպանել հայոց լուսավորչական դավանանքը[93]։

---

[93] Հ. Սահակյան, Երեմիա Քյոմուրճյան, Երևան, 1964, Լ. Բաբայան Դրվագներ Հայաստանի XIV—XVIII դարերի պատմագրության, Երևան, 1984։

**Դավիթ Բեկի պատմություն**

XVIII դարի առաջին կեսի հայ ժողովրդի պատմության հերոսական դրվագները շարադրված են մի փոքրածավալ աշխատության մեջ, որը վերնագրված է՝ «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին, եւ պատերազմաց հայոցն Խափանու, որք եղեն ընդ դէմ Թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի Տեառն 1722, եւ Հայոց 1171»։ Վերնագրից հետո եկող տողերից երևում է, որ գիրքը գրել է տվել դեպքերին մասնակից, Սյունիքի Եկեղեցատան գյուղում ծնված Ստեփանոս Վրթանեսի Շահումյանը։ Ընդունված է ասել, որ Ստեփանոս Շահումյանը Դավիթ Բեկի աջակից ու ապստամբությանը սկզբից մինչև վերջ մասնակցած հերոսներից է, որը ապստամբության պարտությունից հետո զբաղվում էր առևտրով և հաճախ լինում էր արտասահմանում։ Եվ ահա, երբ Ստեփանոս Շահումյանը գտնվում էր Վենետիկում, պարզվում է, որ տեղի Մխիթարյան հայրերն արդեն գիտեին Դավիթ Բեկի հերոսապատումների մասին և արժանի հպարտությամբ էին վերաբերվում իրենց հայրենակիցների սխրագործություններին։ Եվ երբ այնտեղ հայտնի է դառնում Ս. Շահումյանի ով լինելը, նրա անձնավորության նկատմամբ անմիջապես հետաքրքրությունը մեծանում է և Վենետիկի Մխիթարյանների խնդրանքով Շահումյանը իր իմացածը պատմում է գրագետ վանականներին, իսկ նրանք էլ գրի են առնում պատմածը։ Հետո այդ գիրքը խմբագրում է միաբանության կրթված ու հայրենասեր անձնավորություններից մեկը՝ Մխիթար աբբայի աշակերտ Ղուկաս Սեբաստացի Ստեփանյանը[94]։

Դավիթ Բեկի պատմության գրառումը պետք է տեղի ունեցած լինի Սյունիքի ապստամբության պարտությունից հետո (1730 թ.) մինչև 1752 թվականը, որովհետև հայտնի է, որ Ղուկաս Ստեփանյանը մահացել է 1752 թ. Առինճ գյուղում։ Ուրեմն աշխատությունը նա կարող էր ավարտած լինել մինչև 1752 թվականը։

Դավիթ Բեկի Պատմության հեղինակը հեռու է պատմաբան կամ գրող լինելուց, և գիրքը գրված է շատ պարզունակ պատմողական ձևով։ Սակայն այդ սկզբնաղբյուրը, որքան թերություններ էլ որ ունենա, կարդացվում է մեծ հետաքրքրությամբ և օժտված է առանձնահատուկ հմայքով, որի մեջ մի պահ, կարծեք, նրա պակասություններն էլ դառնում են աննկատելի։ Բավական է ասել, որ այդ աշխատությունը ստեղծված է ոչ միայն ժամանակակցի, ոչ միայն ականատեսի, այլ Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական շարժման ամենաակտիվ մասնակցի ու գործչի կողմից։ Ուստի աշխատությունը արժանի է հատուկ ուշադրության և որպես սկզբնաղբյուր վայելում է մեծ վստահություն։

Դավիթ Բեկի պատմության մեջ մեկ առ մեկ ներկայացվում են ապստամբության հետ կապված բոլոր մանրամասնությունները, ապստամբության սկզբնավորումը, նրա ղեկավար կորիզը կազմող անձնավորությունները, ապստամբների հաղթական կռիվներն ու տված հերոսական ճակատամարտերը, ժողովրդական զանգվածների արդարացի ցասումը օտար նվաճողների դեմ և այլն։ Աշխատությունը շատ արժեքավոր նյութեր է պարունակում նաև Սյունիքի ներքին իրավիճակի, նրա ֆեոդալական մասնատվածության, առանձին ֆեոդալների ու մելիքների միջև եղած հակասությունների և թշնամանքի մասին, որոնք շատ ավելի սուր բնույթ են ստանում թուրքական զորքերի Սյունիք ներխուժելուց հետո։

Թուրքերի ահ ու սարսափի տակ, թուլանում, երերում, պառակտվում է Դավիթ Բեկի գլխավորած ապստամբության կորիզը և մեծահամբավ զորավարից հեռանում են նրա երբեմնի մոտիկ մարդիկ։ Ապստամբները իրենց փոքրաթիվ ուժերով պատսպարվելով Հալիձորի նշանավոր բերդում, մեծ զորավարի ղեկավարությամբ շարունակում են օրհասական պայքարը թշնամու դեմ։ Միայն զորավարական մեծ տաղանդ և անարգ թշնամու դեմ անհուն ատելություն ունեցող Դավիթ Բեկը կարող էր այդպիսի պայմաններում, ընդամենը մի քանի հարյուր քաջերի հետ, կռիվը շարունակել։ Սակայն այս կռիվը օրհասական չէր, կռիվ չէր միայն մեռնելուց առաջ մեռցնելու համար, այլ կռիվ էր աներևակայելի, անիրական թվացող հաղթանակի համար։ Եվ այդ հաղթանակը թշնամու մոտավորապես 30000-ոց բանակի դեմ, այնուամենայնիվ, ձեռք բերվեց։ 1727 թվականի ամռանը, մի խավար գիշեր, երբ Դավիթ Բեկի խիզախները անսպասելիորեն բաց անելով Հալիձորի դարպասները, շեշտակիորեն հարձակվեցին թշնամիների վրա, խուճապը պատեց

[94] Ս. Ճեմճեմյան, Հ. Ղուկաս Սեբաստացի (1709—1752) հեղինակ Դավիթ Բեկի Պատմության, տե՛ս «Բազմավեպ», 1972, № 4, էջ 491—501։

նրանց և թուրքերի պարտությունը դարձավ անխուսափելի։ Դավիթ Բեկի Հալիձորի մոտ տարած հաղթանակը շրջադարձային պահ եղավ ապստամբության համար։ Դրանից հետո առասպելական հերոսի շուրջը Սյունիքից և հարակից շրջաններից սկսեցին համախմբվել նորանոր ուժեր, որոնց հաղթական նոր կռիվների շնորհիվ շուտով երկրամասը ամբողջությամբ մաքրվեց թշնամուց և իշխանությունը անցավ Դավիթ Բեկին։

Գրքում այնուհետև պատմվում է Դավիթ Բեկի ու պարսկական կառավարության փոխհարաբերությունների մասին, նշվում, որ պարսիկները առայժմ համերաշխ էին Սյունիքի ապստամբների հետ և մի քիչ էլ պարտական, որովհետև նրանք թուրքերին հասցրած իրենց հարվածներով փաստորեն կասեցրին ոխերիմ հակառակորդի ներխուժումը Պարսկաստան, որն այդ օրերին աֆղանների հասցրած հարվածներից շատ էր թուլացել։

Ստեփանոս Շահումյանի գրքի շարադրանքն ավարտվում է 1730 թվականով, երբ Խնձորեսկ գյուղում սպանվում է 1728 թվականից (Դավիթ Բեկի մահվանից հետո) ապստամբության ղեկավարությունն ստանձնած Մխիթար Սպարապետը։ Գիրքը շարադրված է շատ պարզ, հասկանալի ու ժամանակի խոսակցական լեզվին մոտ գրաբարով։ «Պատմություն Դավիթ Բեկի» աշխատությունը հրատարակել է Ա. Գյուլամիրյանցը 1871 թվականին Վաղարշապատում։ Մ. Բրոսսեն իրականացրել է գրքի ֆրանսերեն թարգմանությունը (Պետերբուրգ, 1876), իսկ Ս. Արամյանը՝ ամբողջական գիտական հրատարությունը՝ «Դավիթ Բէկ կամ Պատմութիւն Ղափանցւոց» վերտառությամբ (Վենետիկ, 1978)։

**Աբրահամ Երևանցի**

XVIII դարի հայ պատմագրության շարքը լրացնում է Աբրահամ Երևանցին իր «Պատմութիւն պատերազմացն» վերնագիրը կրող փոքրածավալ աշխատությամբ, որն ընդգրկում է 1721—1736 թվականների դեպքերի պատմությունը։ Երևանցու ծննդյան, մահվան և ընդհանրապես կենսագրության մասին մեզ ոչինչ հայտնի չէ։ Հեղինակի հաղորդմամբ հոր անունը եղել է Հովհան, մոր անունը՝ Մարիամ։ Ունեցել է երկու քույր, վեց եղբայր, որոնց բոլորին էլ սպանել են թուրքերը։

Աբրահամ Երևանցու նշված աշխատության հիմնական ձեռագիրը պահպանվում է Վենետիկի Մխիթարյանների ձեռագրատանը, որից ժամանակին օգտվել է Ղ. Ալիշանը։ Այդ ձեռագրից օգտվել է նաև Լեոն՝ 1908 թվականին Վենետիկում եղած ժամանակ։ Հեղինակի հիշյալ պատմության մեկ այլ ընդօրինակությունն էլ հիմք է դարձել ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի պատմահնագիտական սեկտորի 1938 թվականի երևանյան հրատարակության համար, որն իրականացվել է Ս. Վ. Տեր-Ավետիսյանի խմբագրությամբ։ Մեկ տարի անց Երևանում այն լույս է տեսել ռուսերեն թարգմանությամբ։ Երկուսն էլ ունեն անձնանունների, տեղանունների և հատուկ նյութերի ցանկեր, որոնք հեշտացնում են ընթերցողների ծանոթությունը գրքի հետ։ 1977 թվականին Վենետիկում հրատարակվեց պատմիչի գիրքը ինքնագիր ձեռագրի հիման վրա, այն վերնագրված է «Պատմութիւն թագաւորի Պարսից»[95]։

Աբրահամ Երևանցին իր գիրքը բաժանել է յոթ գլուխների, որոնք ունեն համապատասխան վերնագրեր։ Առաջին գրքում հեղինակը պատմում է 1721—1723 թթ. պարսկա-աֆղանական և պարսկա-վրացական փոխհարաբերությունների մասին, որոնք զարգանում էին պարսիկների համար միանգամայն անբարենպաստ պայմաններում։ Հեղինակը, որ շատ լավ է տիրապետում գրաբարին, այսպես է նկարագրում Պարսկաստանի անկյալ վիճակն այն ժամանակ. «Յետ գումարելոյ աղվանից Մահմուտ սուլտանին ի վերայ արքային պարսից շահ սուլտան Հիւսէինին (յորժամ էառ զմեծ քաղաքն Շօշ զաթոռ թագաւորութեան նորա և սպան զնա և զորդիս նորա) յամին հազարերորդի հարիւրերորդի եօթանասներորդի հայկազեանս թուականի (1721), ի ժամանակի, յորժամ սասանեալ, դղրդեալ խռովեալ ծփիւր աշխարհն Պարսից, և իշխանք գաւառացն ի հերքել լայնածաւալ միապետութիւն նորա՝ հակառակ միմեանց յարուցեալ տագնապէին և զաշխարհն ամենայն հարուածովք սրոյ և գերութեան յաւեր ածել ձգէին»[96]։ Դրանից հետո պատմիչն իր ասելիքը կենտրոնացնելով Հայաստանի վրա, գրում է. «...տունս Հայոց, որ ըստ երևելի մասին ընդ պարսից տէրութեան գրա-

[95] Լ. Բաբայան, Աբահամ Երևանցու «Պատմութիւնը», տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», 1981, № 3։

[96] Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն. 1721—1736 թթ., Երևան, 1938, էջ 3։

ւեալ կայ, ի սակս բազմանալոյ անօրէնութեանցն զմեծամեծ պատուհաս ընդունէր։ Զի ոչ եթէ միայն առ ի ներքուստ վրդովմանց աշխարհին ի յընդանի գաւառակից պետաց հակառակ միմեանց յարուցելոց զհարուածս սրոյ և սովու կրէր, այլ և ի հազարացուց սահմանակից պետութենէ անտի և ի լակզի թաթարացն յարձակելոց զանհամար անձանց՝ արանց և կանանց, երիտասարդաց և կուսից, մանկանց և տղայոց առհասարակ՝ զչարաչար գերութիւն և զկոտորումն ընդունէր»[97]։

«Պատմութիւն պատերազմացն» աշխատության երկրորդ գլուխը վերնագրված է «Թէ որպիսի մարտիւ պատերազմի առին օսմանցիք զԵրեվան»։ Այս բաժինը հայկական սկզբնաղբյուրների մեջ նմանը չունի և այն ամենայն իրավամբ համարվում է Աբրահամ Երևանցու գրքի ամենագլխավոր հատվածը։ Երևանցին, որպես դեպքերին ժամանակակից անձնավորություն, մանրամասնորեն պատմում է աֆղաններով զբաղված Պարսկաստանի ծանր դրության և այն մասին, թե ինչպես Թուրքերն, օգտվելով առիթից, 1723 թվականի ձմռանը 75.000-անոց զորքով շարժվում են դեպի Արևելյան Հայաստան։ Թուրքական զորքերին առաջնորդում էր Աբդուլլա Քյոփրուլու փաշան, որը 1723 թվականի ձմռանը մնալով Էրզրումում, հաջորդ տարվա մարտին վերսկսում է արշավանքը Երևանի ուղղությամբ։ Երևանի պարսկական զորքերի հրամանատար Միհրալին իր գերակշիռ ուժերով փորձում է հակահարված տալ թշնամու առաջապահ գնդերին, սակայն, Եղվարդի մոտ ծանր պարտություն կրելով, հարկադրված է փախչում և պատսպարվում Երևանի բերդում։ Թուրքերն առաջին հաղթանակով ոգևորված, այժմ արդեն Աբդուլլա փաշայի առաջնորդությամբ շարժվում են Կարբի գյուղի վրա, որն այն ժամանակ մի խոշոր ու հայաշատ բնակավայր էր։ Կարբեցիները չստանալով Երևանի պարսկական զորքերի օգնությունը, ստիպված հպատակվում են Թուրքերին, որոնք հետո գրավում են նաև Վաղարշապատը և շարժվում Երևանի վրա։ Աբրահամ Երևանցու պատմածից պարզվում է, որ Երևանի համար ստեղծված շատ ծանր պայմանները հարկադրում են Միհրալուն միանալ հայերին և համատեղ կռվել քաղաքի պաշտպանության համար։ Եվ այսպես, Թուրքերի առաջին գրոհները հաջողությամբ ետ են մղվում, իսկ Աբդուլլա փաշան ահաբեկ-

[97] Նույնը, էջ 3--4։



ված, սուլթանից նոր համալրումներ է խնդրում։ Շուտով Երևանը պաշարող ուժերին է միանում ևս 10.000-անոց մի նոր բանակ։ Վախեցած պարսիկները այժմ իրենց հայ զինակիցներին թողնելով բախտի քմահաճույքին, փախչում ու ամրանում են Երևանի բերդում։ Այսպիսով քաղաքի պաշտպանությունը մընում է միայն հայերի հույսին, որոնք պատմիչի վկայությամբ Երևանի հերոսական պաշտպանության առաջին օրերին տվել էին միայն 2000 սպանված։ Երևանի պաշտպանության կազմակերպիչներն ու ղեկավարներն էին Հովհաննես Հունդիբեկյանը, Պողոս Քիչիբեկյանը, Կարճիկ Հովհաննեսն ու Դավիթ Միրզաջանյանը։ Դրությունը հերոս պաշտպանների համար ժամ առ ժամ ծանրանում էր, հարկավոր էր միավորել հնարավոր բոլոր ուժերը թշնամուն արժանի հակահարված տալու համար։ Այդ նպատակով գիշերը պաշտպանության գծին անմիջապես մոտ գտնվող Ս. Սարգիս եկեղեցում Գրիգոր վարդապետի նախաձեռնությամբ հրավիրվում է հատուկ խորհրդակցություն, որին մասնակցում էին Երևանի անվանի քաղաքացիները, այդ թվում նաև Կոնդ թաղամասում ապրող հայ բոշաների առաջնորդները, որոնք հայտնի էին որպես անձնուրաց ու քաջակորով մարդիկ։ Սրանցից Ղազար Բաբուրյանը արձագանքելով Գրիգոր վարդապետին, որը հակիրճ ներկայացրել էր Երևանի հայության ծանր ու անելանելի վիճակը, դիմում է նրան հետևյալ խոսքերով. «Վարդապետ, ահաւասիկ ես զերկուահարիւր քաջամարտիկ երիտասարդս ունիմ, որոց ամենեքեան ունին զրզենս և վարժք են սրոյ և հրացանաց արձակելոց։ Ըզնոսա ես ժողովեցից և նոքօք հանդերձ ոգւով չափ պատերազմեցայց»[98]։ Բաբուրյանին անմիջապես միանում են նաև նրա մյուս ընկերները, որոնք «...ամենեքեան միաբան ի միասին խորհուրդ արարեալ ժողովեցին զընտիր ընտիր երիտասարդս ի գիւղօրէիցն Երեվանայ և եղեն ինն հազար վառեալք ի պատերազմ ի Փարաքարայ, ի Գուգումբեթայ, ի Կաւակերտայ, ի յԱռընչոյ, ի յԱւանայ, ի Զագաւանայ, ի Զագայ և ի նորա գեղջէ, զի ամենայն այր կարող պատերազմի գիւղօրէիցս այսոցիկ եկեալ ժողովեալ կային յարձակաքաղաքն Երեվանայ։ Այլ և ի քաղաքէ անտի Երեվանայ ի թաղէն, որ Հին Երեվան կոչի, ժողովեցան բազում խումբք երիտասարդաց վառելոց ի պատերազմ, որոց

[98] Նույնը, էջ 16։

կառավարքն էին գոտէմարտիկ Նիկողայոսն, Մարիամին որդի Անտոնիոսն և Խաթունին որդի Բութիկն և տէր Մովսէսն։ Եւ ամենեցուն գումարն եղև ինն հազար չորս հարիւր քառասուն և երեք սպառազէն քաջ պատերազմողք, ամենեքեան վառեալք սուսերաւ և թվանկաւ»[99]։ Ինչպես տեսնում ենք, Երևանի պաշտպանությանը ակտիվորեն մասնակցում էին նաև քաղաքի շրջակայքի մի քանի հայաբնակ գյուղերի բնակիչներ, որոնք ուրիշ տեղ փախչել չկարողանալով, եկել ապաստանել էին Երևանում։ Քաղաքի պաշտպանության հիմնական հատվածը նրա հարավ-արևմտյան կողմն էր, Հրազդան գետի ձախափնյա բարձրադիր սարալանջը, որը առանձին թաղամաս էր և կոչվում էր Զորագյուղ։ Դրա համար էլ քաղաքի պաշտպանների հիմնական ուժերը դիրքավորվել էին այստեղ։ Սակայն հայ ռազմիկները վերահսկում էին նաև իրենց դիրքերի հեռավոր թևերին՝ աջից ու ձախից քաղաքը եզերող գետամերձ խիտ այգիները, որոնց կողմից, թուրքական ուժերը վախենալով, հարձակման առանձին գործողություններ չէին ձեռնարկում։ Երևանի պաշտպանների շարքերում տիրում էր զինվորական խիստ կարգապահություն։ Մարտական ուժերի յուրաքանչյուր գունդ աչալրջորեն պահպանում էր ճակատային գծի իրեն հանձնարարված հատվածը։ Թուրք հրոսակախմբերը, որոնք անընդհատ համալրվում էին նորանոր ուժերով, արժանի ջարդ ստացան Զորագյուղի և Կոնդի ուղղություններում ձեռնարկած հարձակումների ժամանակ։ Զորագյուղում միայն մեկօրյա կռիվներում նրանք կորցրեցին 6.000 զինվոր։ Կորուստները շատ էին նաև հայերի շարքերում։ Երևանի պաշտպանության օրհասական պահը սկսվեց 1724 թվականի հունիսի առաջին օրերից, երբ կատաղի և օրհասական կռիվներից հետո թուրքերն իրենց հազարապատիկ գերակշռությամբ հունիսի 7-ին կարողացան խորտակել հայերի պաշտպանությունն ու գրավել քաղաքը։ Այս հերոսական գոտեմարտի կենդանի պատկերն այսպես է նկարագրում Աբրահամ Երևանցին. «Եւ եղև ի վաղիւ անդր, որ օրն էր ուրբաթ, զօրքն օսմանցւոց ի չորս առաջս բաժանեալք մխեցան ի քաղաքն ի չորից կողմանց։ Եւ մարտ եղեալ յառաւօտէ, մինչև ցերեկոյ, սոքա՝ աստի, և նոքա՝ անտի, խառնեցան ընդ միմեանս հայքն և

[99] Նույնը, էջ 16—17։



օսմանցիքն. և այնչափ եղև հեղումն արեան, մինչև կարմրանալ Ջանգու գետոյն և երկրին, որ առ գետովն. և հոտ արեանց և դիականց կոտորելոցն զքաղաքն բովանդակ մինչև ի հեռաւոր տեղիս լցին։ Եւ առաւ քաղաքն յեօթներորդում աւուր ամսեանն յունիսի, յամին հազար հարիւր եօթանասներորդի երրորդի հայկազեանս թուականի (1724 թ.)։ Կոտորեցան հղօրքն հայոց ի սուր սուսերի և գետահեղձ եղեն բազումք ի նոցանէ։ Ի գերութիւն վարեցին օսմանցիքն զկանայս նոցա և զմանկունս և տարեալ լցին զնոսա ի բանակս իւրեանց և չար գործովք ապականեցին զնոսա»[100]։

Երևանը թեև գրավվեց թուրքերի կողմից, սակայն այդ հաղթանակը վայրագ թշնամու վրա շատ թանկ նստեց. թուրքերը Երևանի պատերի տակ կորցրեցին հազարավոր զինվորներ։ Ու թեև Երևանի պաշտպանները բոլորն էլ զոհվեցին անհավասար կռիվներում, բայց նրանք փառքով պսակեցին Երևանի պատմության այդ հերոսական էջն ու անմահացրին իրենց հիշատակը։ Երևանի համար մղվող մարտերում հայերի կրած ծանր պարտությունը և կենդանի մնացածների տառապանքները ժամանակի նախապաշարմունքներով սահմանափակված պատմիչը բացատրում է նրանով, որ՝ «...կարգաւորք և աշխարհականք առ հասարակ ի բաց թողեալ զուսումն աստուածային պատուիրանացն և այլ մասանց քրիստոնէական վարդապետութեան՝ զբարւոք ապրիլն ըստ մարմնոյ միայն հոգային»[101]։

«Պատմութիւն պատերազմացն» երկի հետագա փոքրածավալ գլուխներում Աբրահամ Երևանցին նկարագրում է թուրք-պարսկական կռիվները և ավարտում է իր խոսքը 7-րդ գլխով, որտեղ խոսում է պարսկական ուժերի միավորման և թուրքերի դեմ հաղթական կռիվներ մղող Նադիր Ղուլի շահի գործունեության մասին։ Գրքի այս բաժնում նոր ու արժեքավոր տեղեկություններ կան Վրաստանի մասին, իսկ ինչ վերաբերում է Նադիր Շահի և հայերի փոխհարաբերություններին, ապա դրանք շատ ավելի մանրամասն ու հանգամանորեն են նկարագրվում նույն ժամանակների հեղինակ Աբրահամ Կրետացու գրքում։

[100] Նույնը, էջ 21։
[101] Նույնը, էջ 21—22։

## Աբրահամ Կրետացի

Ուշ միջնադարի հայկական պատմագիտական սկզբնաղբյուրներից հայտնի է նաև Աբրահամ Կրետացու «Պատմությունը», որը կրում է «Տեառն Աբրահամու հայրապետին մերոյ Թեքիրտաղեցւոյ արարեալ պատմութիւն համառօտ յառաջի ժամանակն Նատր Շահին» խորագիրը։

Կրետացու կենսագրության, մանավանդ նրա գործունեության սկզբնական շրջանի մասին մանրամասնություններ հայտնի չեն։ Գիտենք միայն, որ ծնվել է Կրետե կղզու Կանդիա քաղաքում, որից և ստացել է Կրետացի մականունը։ Նրա մայրը հույն էր։ 1709 թվականին նա դառնում է Թրակիայի հայոց եկեղեցու առաջնորդ և հաստատվում Ռոդոստո կամ Թեքիրտաղ քաղաքում, ունենալով արդեն նաև եպիսկոպոսի աստիճան։ Մենք ոչինչ չգիտենք, թե ինչ դեր է կատարել Թրակիայի թեմը և նրա երկարամյա առաջնորդը հայոց եկեղեցու՝ կաթոլիկության հետ ունեցած վեճերի մեջ։ Սակայն ելնելով Աբրահամ Կրետացու առանձնահատուկ նվիրվածությունից և ջերմությունից էջմիածնի նկատմամբ, կարող ենք հաստատորեն ասել, որ նա այդ պայքարում իրեն դրսևորել է որպես կաթոլիկության հակառակորդ և ամեն կերպ պաշտպանել հայոց եկեղեցու և դավանանքի անկախությունն ու ինքնուրույնությունը։

1734 թ. Կրետացին մի խումբ ուխտավորների հետ ուղևորվում է էջմիածին և հարյուրօրյա դժվարին ու վտանգավոր ճամփորդությունից հետո, օգոստոսի 3-ին հասնում է հայոց հոգևոր կենտրոնը։ Նա նպատակադրվել էր էջմիածնից հետո այցելել նաև Տարոնի Գլակա վանքը։ Սակայն Կրետացու այդ մտադրության իրագործումը կաթողիկոս Աբրահամ II Խոշաբեցու (1730—1734) խնդրանքով հետաձգվում է հաջորդ տարվան, որի պատճառով նա հարկադրված էր հրաժարվել վերադարձի մտքից և առայժմ մնալ էջմիածնում՝ կաթողիկոսի մոտ։ Սա շատ ջերմ սիրով հենց սկզբից կապվել էր հեռվից եկած խելացի ու բանիմաց եպիսկոպոսի հետ և չէր ուզում բաժանվել նրանից։

1734 թ. օգոստոսի վերջերին Աբրահամ Կրետացին կաթողիկոսի հետ, մի խումբ հոգևորականների ուղեկցությամբ, իր առաջին շրջագայությունն է կատարում էջմիածնի մոտակայքի վանքերում, այցելում է Հովհաննավանք, Սաղմոսավանք, Մուղնի, լինում Օշականում, Փարպիում և շտապ հետ վերադառնում, որովհետև լուրեր էին պտտվում Նադիր Շահի մոտալուտ արշավանքների մասին։ Հոկտեմբերին Աբրահամ Կրետացին նոր ուղևորություն է կատարում դեպի Խորվիրապ, Ակոռի, Հավուց Թառ, Գառնի, Այրիվանք ու շտապ հետ վերադառնում էջմիածին, որտեղ ինչ-որ վտանգավոր հիվանդություն էր տարածվել և միաբանների ու բնակիչների մեջ կային շատ զոհեր։ Կրետացին կաթողիկոսին գտնում է անկողնում, հիվանդության ցավերի մեջ։ 1734 թ. նոյեմբերի լույս 11-ի գիշերը կաթողիկոսը վախճանվում է։ Այդ անհանգիստ ժամանակներում կաթողիկոսական աթոռը թափուր թողնել չէր կարելի։ Բոլոր միաբանների հայացքը այդ օրերին ուղղված էր դեպի Աբրահամ Կրետացին, որն էջմիածնում գտնվելու ընդամենը երեք ամիսների ընթացքում իր եռանդով, գիտելիքներով ու շրջահայացությամբ մեծ հարգանք էր ներշնչել շրջապատին։ Նոր կաթողիկոսի միակ ու հարմար թեկնածուն նրանց համար Աբրահամ եպիսկոպոսն էր։ Սակայն այլ էր Կրետացու վերաբերմունքը։ Նա կաթողիկոս դառնալու ցանկություն ամենևին չուներ և անկեղծորեն հրաժարվում է հայոց հոգևոր առաջնորդության լիազորություններն իր վրա վերցնելուց։ Միայն Երևանի այն ժամանակվա Թուրքական կառավարչի սպառնալիքից հետո Աբրահամը տվեց իր համաձայնությունը և 1734 թ. նոյեմբերի 14-ին ընտրվեց Հայոց կաթողիկոս։

Աբրահամ Կրետացու կաթողիկոս օծվելը զուգադիպում է քաղաքական նոր իրադարձություններին, որոնք բուռն թափով ծավալվում էին Պարսկաստանի և Թուրքիայի միջև արդեն 1735 թվականի գարնանից սկսած։

Իր «Պատմությունը» Աբրահամ Կրետացին շարադրել է հենց այդ դեպքերի ընթացքում։ Կրետացու փոքրածավալ աշխատությունը, որը փաստորեն նրա 1734—1736 թվականների հիշողությունների կամ օրագրությունների զրանցումն է, բաղկացած է 53 ոչ ընդարձակ գլուխներից։ Վերջում կցված է նաև կաթողիկոս Կրետացու Կոնդակը, որտեղ հեղինակը մատնանշում է, որ աշխատությունը գրել ու ավարտել է 1736 թվականի փետրվարի 20-ին, Մուղանի դաշտում։

Եթե Կրետացու Պատմությունը լոկ օրագրություն կամ հիշատակարան լիներ, ապա նրա գիտական արժեքը շատ բարձր չէր գնահատվի։ Հեղինակը այս աշխատության մեջ հիմնականում շարադրելով իր և պարսից սարսափազդու տիրակալ Նա-

դիր Շահի փոխհարաբերության պատմությունը, շատ հաճախ դուրս է գալիս այդ շրջանակներից ու շոշափում, վերլուծում է ժամանակաշրջանի կարևորագույն խնդիրները, որոնք հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար ունեն շատ բարձր արժեք։ Կրետացու Պատմությունը հավասարապես վերաբերելով նաև Ատրպատականի և Պարսկաստանի պատմությանը, ըստ արժանվույն է գնահատվում պատմագրության մեջ ընդհանրապես։

Աբրահամ Կրետացու խելամտությունն ու հեռատեսությունը երևացին պարսկա-թուրքական փոխհարաբերությունների սրման հենց սկզբում։ Կշռադատելով Մերձավոր Արևելքում երկու մրցակիցների ուժերը, նա կարողացավ կանխատեսել, որ առայժմ գերակշռությունը Նադիր Շահի կողմն է և անմիջապես ձեռնամուխ եղավ իր հարաբերությունները կարգավորելուն այդ նոր տիրակալի հետ։

Առաջին անգամ Աբրահամ Կրետացին Նադիրին հանդիպեց 1735 թվականի մայիսին Ապարանի մոտ, երբ նա պատրաստվում էր բուռն հարձակումով դուրս քշել թուրքերին Երևանից և Արարատյան դաշտից։ Հենց սկզբից հայոց կաթողիկոսը Պարսկաստանի ապագա շահի վրա թողեց դրական տպավորություն, որն այնուհետև նորանոր փոխայցելություններով է՛լ ավելի ամրապնդվեց ու այդպես էլ մնաց մինչև վերջ։ Նադիրը, որպես խորամանկ գործիչ, շատ բարձր էր գնահատում հայոց կաթողիկոսի դերն ու նշանակությունը իրեն ենթակա հայ ժողովրդին հպատակության մեջ պահելու համար, որը պարսից տիրակալին խիստ անհրաժեշտ էր մրցակից Թուրքիայի դեմ պատերազմը շարունակելու և հաղթանակի հասնելու համար։ Թեև չի բացառվում նաև անհատական մոտեցման պահը, որ Նադիրը կարող էր Կրետացուն հարգել որպես խելոք մարդու՝ անկախ կրոնական ու ազգային պատկանելությունից, գնահատել նրան կամ լսել նրա այս կամ այն խորհուրդը։ Ապարանի հանդիպումից հետո, ինչպես պատմում է հեղինակը, Նադիրը իր շքախմբով շուտով ինքն է փոխայցելության գնում էջմիածին։ Ամեն անգամ, Արևելքում ընդունված կարգի համաձայն, կողմերը փոխանակում էին նվերներ, հյուրասիրում իրար և այլն։ Աբրահամ Կրետացին այնպիսի դրական տպավորություն է թողնում Նադիրի վրա, մանավանդ վերջինիս Եղվարդի մոտ 1735 թ. հունիսի 19-ին թուրքերի դեմ տարած փայլուն հաղ-



թանակից հետո, որ հանդիպումները ավելի հաճախակի են դառնում։ Եղվարդի հաղթանակից և Կարսի ուղղությամբ ձեռնարկված պարսիկների հաջող արշավանքներից հետո, նույն թվի սեպտեմբերի 22-ին Երևանը կրկին անցավ պարսիկներին։ Իսկ այդ նշանակում էր, որ այսուհետև Արևելյան Հայաստանի բընակչությունը ենթարկվելու էր պարսիկներին և հայոց կաթողիկոսությունն ու էջմիածինը գտնվելու էին Նադիրի հովանու տակ։ Բնական է, որ քաղաքական այս նոր իրադրությունները թելադրելու էին կաթողիկոս Աբրահամ Կրետացուն ամրապնդել իր կապերը մեծ բռնակալի հետ՝ հանուն իր ժողովրդի և հոգևոր կենտրոնի շահերի։ Հենց այս դիտավորությամբ էլ Աբրահամ Կրետացին ամեն անգամ, երբ ստանում էր Նադիրի հրավերը իրեն այցելելու մասին, շտապում էր կատարել նրա ցանկությունը և առիթն օգտագործել նորանոր արտոնություններ ստանալու կամ իր ժողովրդի ցավերին դարման անելու համար։ Մեկ անգամ նա օգտվելով Նադիրի բարեհաճությունից, կարողանում է նախկինում խլված էջմիածնի կալվածքների մի մասը հետ ստանալ, մեկ ուրիշ անգամ ձեռք է բերում հատուկ հրաման, որով արգելվում էր պարսկական տեղական իշխանություններին էջմիածին այցելել և նրա գործերին խառնվել առանց շահի թույլտվության և այլն։ Կրետացու նմանօրինակ գործողությունները այն ժամանակվա բիրտ ու վայրենի վարչակարգի պայմաններում շատ մեծ նշանակություն ունեին և ինչ-որ չափով մեղմացնում էին հայ ժողովրդի անտանելի վիճակը։

Պատմության մի քանի գլուխներում Աբրահամ Կրետացին ամենայն մանրամասնությամբ նկարագրում է Մուղանի համաժողովը (ղուրուլթայ) և Նադիրի թագադրության հանդեսը, որը տեղի է ունենում մուսուլմանական զատկի՝ նովրուզ-բայրամի օրերին՝ 1736 թվականի գարնանը։ Հայոց կաթողիկոսի մասնակցությունը պարսիկների ամենաբարձր մակարդակի այս ժողովին ու կրոնական տոնին և նրա նկատմամբ շահի ու բարձրաստիճան պաշտոնյաների հատուկ ուշադրությունը ինքնըստինքյան է՛լ ավելի էին ամրապնդում Կրետացու իրավունքներն ու արտոնությունները, որոնք այլևս ոչ մի ստորադաս մեծավորի կողմից խախտվել չէին կարող, քանի Նադիրն էր կանգնած իշխանության գլուխ։

Այս աշխատության մեջ ուշագրավ են բոլոր այն հատվածները, որոնք վերաբերում են թագադրության ու բայրամի ծի-

սակատարություններին, պարսկական զորքերի դասավորությանը, ամայի տափաստանում ստեղծված ժամանակավոր բնակավայրին, պարսկական ֆեոդալական հիերարխիային, շահին ներկայանալու կարգ ու կանոնին և կաթողիկոսի՝ Նադիրին ամեն անգամ սեղանակից լինելու մանրամասնություններին և այլն, և այլն։

Ահա այն ամենը, ինչ կարելի է ասել Աբրահամ Կրետացու Պատմության մասին։ Կրետացին վախճանվել է 1737 թվականին։ Նրա աշխատության ինքնագիրը չի պահպանվել։ Մեզ են հասել միայն գրքի արտագրությունները, որոնցից մեկի հիման վրա այդ աշխատությունն առաջին անգամ հրատարակվել է Կալկաթայում 1796 թվականին։ Պատմության քննական բնագիրը՝ ռուսերեն թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով լույս է տեսել Երևանում 1973 թվականին, որն իրականացրել է Ն. Կ. Ղորղանյանը։ Մ. Բրոսսեն սույն երկը թարգմանել է ֆրանսերեն (Պետերբուրգ, 1876)։ Կրետացու գիրքը հատվածաբար 22—45-րդ գլուխները լույս է տեսել նաև պարսկերեն (Թեհրան, 1969)։.

**Սիմեոն Երևանցի**

Սիմեոն Երևանցին XVIII դարի հայ եկեղեցական-քաղաքական և գիտական ու մշակութային բնագավառի նշանավոր գործիչներից է։ Նա ծնվել է 1710 թվականին Երևանի Քաղաքամեջ թաղամասում։ Կրթությունը ստացել է էջմիածնում և որպես կաթողիկոսի նվիրակ ճանապարհորդել է Արևմտյան Հայաստանում, այցելել Հնդկաստանի և Երուսաղեմի հայոց հոգևոր կենտրոնները։ Սիմեոն Երևանցին 1763 թվականին ընտրվել է Հայոց կաթողիկոս և աթոռակալել մինչև 1780 թվականը։ Մահացել է հենց նույն թվականին ու թաղվել էջմիածնի Ս. Գայանե եկեղեցու գերեզմանոցում։

Սիմեոն Երևանցին թողել է գրական և գիտական հարուստ ու բազմաբնույթ ժառանգություն։ Մեծ տեղ տալով անցյալի հայ մտածողներին (Դավիթ Անհաղթ, Գրիգոր Տաթևացի և ուրիշներ), նա, որպես ֆեոդալիզմի գաղափարախոս, մերժում էր այն ժամանակ ողջ Եվրոպան բորբոքող նոր ու առաջադիմական ուսմունքները։ Նա թեև կողմնակից էր օտարների լծից հայ ժողովրդի ազատագրմանը. բայց զգույշ և անհամարձակ վերաբերմունք ուներ իր ժամանակներում լայնորեն ծավալվող ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ՝ հիմնա-



կանում վախենում էր մուսուլմանական տիրակալների վրեժխնդրություններից։ Դրա հետ մեկտեղ, նա ճիգ ու ջանք չէր խնայում իր ժողովրդի մեջ կրթություն ու լուսավորություն տարածելուն։ Նա էջմիածնում հիմնել էր տպարան (1771 թ.), ապա նաև թղթի գործարան (1776 թ.) և որքան որ պայմանները նեղում էին, զարկ էր տալիս տպագրական գործին ու լուսավորական շարժման տարածմանը հայ իրականության մեջ։

Սիմեոն Երևանցին, որպես հայրենասեր անձնավորություն, իր տաղերի մեջ ցույց է տվել Հայաստանի և հայ ժողովրդի տառապալից վիճակը օտար բռնակալների տիրապետության տակ։ Հեղինակը մի տաղում դիմելով Գրիգոր Լուսավորչին, բացականչում է.

Զարթիր զուարթուն անուն
Մինչ երբ ննջես դու ի քուն...

Այս կոչը Հայոց եկեղեցու հիմնադրին, փաստորեն կոչ էր ուղղված հայ ժողովրդին՝ քնից արթնանալու և ստրկական կապանքները ոչնչացնելու համար։ Նրա գործունեության մեջ կարևոր տեղ են գրավել նաև քաղաքական ձեռնարկումները։ Նրա ջանքերով էջմիածնի հոգևորականների անունից 1766 թվականին կաթողիկոսական մի հատուկ կոնդակ է հղվում Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա II-ին՝ Ռուսաստանի հայկական եկեղեցական թեմը կրկին էջմիածնին ենթարկելու խնդրանքով, որը 1749 թվականից, հակառակ մինչ այդ եղած կարգին, դրվել էր Գանձասարի հայոց կաթողիկոսության ենթակայության տակ։ Երկու տարի հետո, 1768 թվականին Եկատերինան հատուկ հրովարտակով վերականգնում է էջմիածնի իրավունքները և խոստանում իր նախորդների՝ հատկապես Պետրոս Մեծի օրինակով հովանավորել Ռուսաստանի հայությանն ու եկեղեցուն։ Այսպիսով, Սիմեոն Երևանցու ջանքերով փաստորեն ակտիվացան Հայոց եկեղեցու և ռուսական արքունիքի քաղաքական փոխհարաբերությունները, որոնք այնուհետև նույն հունով շարունակվեցին նաև հետագայում։

Սիմեոն Երևանցու ստեղծագործությունների մեջ մի առանձին տեղ է գրավում նրա «Ջամբոր»[102]։ Այս աշխատության հա-

[102] Անունը ֆրանսերեն cambre բառի աղավաղված ձևն է՝ Հռոմեական եկեղեցու պապական արխիվի Camero apostolica անվան նմանությամբ։

մար հեղինակը մեծ չափով օգտագործել ու գիտական վերլուծության է ենթարկել այն ժամանակ էջմիածնի վանքում պահվող արխիվային վավերագրերը և հայկական այլևայլ սկզբնաղբյուրներ, որոնց ավելացվել են նաև հեղինակի անձնական դիտարկումներով ձեռք բերված նյութերը։ Այս աշխատությամբ Սիմեոն Երևանցին ներկայացնելով Հայոց եկեղեցու ամբողջական պատմությունը, աշխատում է ամրապնդել էջմիածնի քաղաքական դիրքերը, բարձրացնել Հայոց եկեղեցու հեղինակությունը և ապահովել վանքի ու միաբանության տնտեսական դրությունը։

«Ջամբռը» ըստ էության բաժանվում է երեք մասի. ա) Հայոց եկեղեցու և նրա կենտրոն էջմիածնի պատմությունը (12 գլուխ), բ) էջմիածնի տնտեսական պատմությունը՝ ունեցվածքի ամբողջական ցուցակներով հանդերձ, գ) վերջին հինգ գլուխներում համառոտ ձևով վեր է լուծում էջմիածնի վանքում պահվող պարսկերեն ու թուրքերեն ֆերմաններն ու հրովարտակները։ Գրքի այսպիսի բովանդակությունն արդեն ցույց է տալիս, թե «Ջամբռը» որքան կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանի տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրության համար։

Սիմեոն Երևանցին գտնում է, որ պետականությունը կորցրած և օտար տիրապետողների մեջ բաժան-բաժան եղած Հայաստանի ու հայ ժողովրդի համար էջմիածինը եկեղեցական կենտրոն է, իսկ կաթողիկոսությունը՝ ողջ հայության հոգևոր իշխանավորը, իսկ հետո զարգացնում է այն միանգամայն ընդունելի տեսակետը, որ հայերի համար սեփական քաղաքական իշխանության բացակայության պայմաններում Հայոց կաթողիկոսությունը կատարում է նաև քաղաքական իշխանության դեր։ Հայկական եկեղեցին իր այդ դերը հաստատապես ստանձնած լինելով XVII դարի երկրորդ կեսերին, բարեհաջող շարունակեց նաև Սիմեոն Երևանցու ժամանակ ու նրանից հետո։ Շարունակելով Խաչատուր Կեչառացու, Ստեփանոս Օրբելյանի և Պաղտասար Դպիրի ավանդները, Սիմեոն Երևանցին իր երկերում նույնպես գտնում էր, որ ցաքուցրիվ եղած հայությունը պետք է համախմբվի էջմիածնի շուրջը, այսինքն՝ Մայր Հայրենիքում, որ էջմիածինը իբրև գորովագութ մայր, պետք է փայփայի իր զավակներին ու ապահովի նրանց միասնականությունը։



«Ջամբռի» 9-րդ գլխում հեղինակը խոսում է էջմիածնի կաթողիկոսության ներքին ծեսերի, ծիսակատարությունների, կաթողիկոսական ընտրությունների, նրանց կողմից օտար պաշտոնատար անձանց ընդունելության ու գրագրությունների կարգի և այլ հարցերի մասին։ «Ջամբռի» աղբյուրագիտական արժեքը բարձր է նաև նրա համար, որ հեղինակն այստեղ պատշաճ ուշադրություն է դարձրել հայկական մյուս նշանավոր կրոնական կենտրոններին՝ Գանձասարին, Աղթամարին, Կիլիկիայի պատրիարքություններին (գլ. 10—12) և այլն։ Այստեղ նրա ուշադրությունից չեն վրիպել նաև հայկական կրոնական միավորումների ու հոգևորականների միջև ծագած վեճերը, խռովությունները և Գանձակի, Ղարաբաղի ու Երևանի խաների քայքայիչ միջամտություններն այդ վեճերին։ «Ջամբռում» որոշակի տեղ են գրավում նաև էջմիածնի և մյուս վանքերի դրամական և նյութական եկամուտների մասին տված հետաքրքիր տեղեկությունները։

Սիմեոն Երևանցին ակտիվ պայքար է ծավալել հայկական եկեղեցական թեմերի միջև ծագած ներքին վեճերի, առանձին հոգևորականների պառակտիչ գործողությունների և Հռոմի կաթոլիկական եկեղեցու՝ հայերի կրոնական գործերին միջամտելու դեմ։ Նա ամեն ջանք գործադրում էր Հայոց եկեղեցու միավորման ու կենտրոնացման համար, որը կարող էր հուսալի երաշխիք լինել նաև հայ ժողովրդի հավաքականությունն ապահովելու գործին։ «Ջամբռում» որոշակի տեղ է հատկացված նաև ծավակրֆ և մուլք հողօգտագործման ձևերին, նրանց առ ու ծախին, նվիրատվությանը, կոռային աշխատանքին և այլն։ Հեղինակն այս աշխատության մեջ տեղեկություններ է հաղորդում Նադիր Շահի 1740-ական թվականներին անցկացրած բնակչության ու տնտեսությունների աշխարհագրից հետո հարկերի տեսակների ու նրանց չափերի բազմաթիվ անգամ ավելացման մասին։ Հարկահավաքության նոր ու ծանր եղանակներն սկսեցին կիրառվել աշխարհականներից բացի նաև էջմիածնի վանքի և հոգևոր մյուս հաստատությունների ու հատկապես սրանց հողային կալվածքների եկամուտների նկատմամբ։

«Ջամբռի» հաջողված հրատարակությունը կատարվել է Վաղարշապատում 1873 թվականին, ռուսերեն թարգմանել է Ստ. Մալխասյանցը (Մոսկվա, 1958)՝ Պ. Հարությունյանի ընդարձակ առաջաբանով ու ծանոթագրություններով։

## Խաչատուր Ջուղայեցի

Ֆեոդալական հարաբերությունների քայքայման և տնտեսական կյանքի անկման շրջանի վերջին հայ պատմիչը Խաչատուր Ջուղայեցին է։

Խաչատուր Սահակի Ջուղայեցու մասին նույնպես քիչ բան է հայտնի։ Նա ծնվել է Պարսկաստանի Նոր Ջուղա քաղաքում։ Հայտնի չեն նաև մեր հեղինակի ծննդյան ու մահվան թվականները։ Գիտենք, միայն, որ նա ապրել է Ղուկաս կաթողիկոսի (1780—1799) և Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի առաջնորդ Հակոբ արքեպիսկոպոսի (1788—1791) ժամանակաշրջանում, այսինքն՝ XVIII դարում։ Խաչատուր Ջուղայեցին վախճանվել է Բասրա քաղաքում, ուր նա գնացել էր որպես Նոր Ջուղայի վանքի նվիրակ, որտեղից հետո նույն նպատակներով պետք է գնար նաև Հնդկաստան։

Ճիշտ է, Ջուղայեցին բարձր կրթություն չի ստացել, բայց և անուսում էլ չի մնացել։ Իր ողջ գիտակից կյանքը կապելով Նոր Ջուղայի ամենախոշոր կրոնական ու մշակութային կենտրոն Ամենափրկիչ վանքի հետ, նա բոլոր հնարավորություններն ունեցել է յուրացնելու հայ մատենագրության ու աստվածաբանության նվաճումները, որը հաստատվում է նրա «Պատմութիւն պարսից» աշխատությամբ։ Դրա համար էլ հեղինակի կողմից սեփական անձի հասցեին գրքի սկզբի մասերում ասած ծանր խոսքերը՝ թե ինքը անկիրթ է, համալսարան չի ավարտել, չգիտի ճարտասանություն, տրամաբանություն և այլն, բացարձակ իմաստով չպետք է հասկանալ։ Դրանք մեր հեղինակներին հատուկ և ընդհանրացված ձևեր էին, որոնց միջոցով նրանք աշխատել են ընդգծել իրենց չափից ավելի համեստությունը։

Խաչատուր Ջուղայեցին գիրքը գրել է համաքաղաքացի Հարություն Իսահակյանի խնդրանքով, որին և հեղինակը գրքի սկզբում շնորհակալական խոսքեր է նվիրում։ Պարզվում է, որ Հարություն Իսահակյանի մոտ պարսից պատմություն գրելու մտահղացումը առաջացել է Միքայել Չամչյանի պատճառով, որը մի նամակով Իսահակյանից խնդրել էր իրեն ուղարկել պարսից թագավորների ցուցակը՝ ժամանակագրության հետ միասին։ Եվ քանի որ Խաչատուր Ջուղայեցու աշխատությունը պարունակում է հենց այդպիսի մի գործ և դրված է ժամանակագրության ձևով, ուրեմն Հարություն Իսահակյանը փաստորեն գրքի հեղինակին տված հանձնարարությամբ, կատարում էր



համբավավոր գիտնականի խնդրանքը։ Հայտնի է նաև, որ Ջուղայեցի Հարություն Իսահակյանը կրթված ու ճանաչված անձնավորություն էր, գրում էր արձակ ու չափածո գործեր, որոնց, անշուշտ, ծանոթ էր նաև Միքայել Չամչյանը։

Խաչատուր Ջուղայեցու «Պատմութիւն պարսիցը» ընդգրկում է պատմական շատ մեծ ժամանակաշրջան։ Այն սկսվում է մ. թ. ա. VI դարից և ավարտվում է 1779 թվականով՝ պարսից տիրակալ Քերիմ խանի մահով։ Բնական է, որ Ջուղայեցին այսպիսի մի աշխատանք գրելու և Միքայել Չամչյանին գոհացնելու համար չէր կարող սահմանափակվել միայն հայկական սկզբնաղբյուրներով։ Նա անպայման պետք է դիմեր նաև բուն՝ պարսկական սկզբնաղբյուրներին։ Հեղինակն այդպես էլ վարվում է։ Նա այդ մասին որոշակիորեն ասում է հետևյալը. «Սակայն կամելով ես ըղձակերտ տենչանօք գիտել և հմտանալ նա իսկ ի գրոց և ի մատենից պարսից... չոգայ առ գիտունս պարսից՝ առ ի որովք լրումն հանել ըղձաձկտութեան տենչանս իմ. և ստէպ հառաչանօք խնդրեցի յորոց ցուցանել ինձ զբաղձալին մտացս իմոց։ Եւ ըստ այնմ զոր խնդրէի՝ բերին առաջի իմ զմեծ մատեան մի կարի թաւարձի, որ իբր ըստ դիտման և ըստ կարծեաց մտաց նոցա՝ էր Սոփեր ճշմարտաճառ վիպագրութեան որոց նախնեաց, և ստոյգ զրուցատրութիւն յառաջնոց»[108]։ Բացի այդ, Ջուղայեցին իր գրքում հիշատակում է նաև Եվսեբիոս Կեսարացու ժամանակագրությունը և օտար այլ աղբյուրներ, որոնցից ինքը օգտվել է հավանաբար բնագրերի լեզուներով։ Խաչատուր Ջուղայեցին այս գիրքը համարում է իր աշխատության առաջին հատորը։ Նա ասում է, որ ինքը գրելու է նաև նրա երկրորդ հատորը, որը բնականաբար պետք է ընդգրկեր 1779 թվականից հետո ընկած ժամանակաշրջանը։ Սակայն հեղինակի մտադրությունը չի իրագործվում նրա մահվան պատճառով։

«Պատմութիւն պարսիցը» բաժանվում է երկու մասի։ Առաջին մասում տրվում է պարսից գահակալների համառոտ պատմությունը Կյուրոս I-ից սկսած մինչև Քերիմ խանը, իսկ երկրորդը ամբողջապես վերաբերում է Քերիմ խանի ժամանակաշրջանին, մինչև նրա մահը։ Պատմության առաջին մասում Ջու-

---

[108] Խաչատուր Ջուղայեցւոյ պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 21—22։

ղայեցին հատուկ ուշադրություն է նվիրում նաև Նոր Ջուղային և առանձնապես խոսում է Ամենափրկիչ վանքի առաջնորդների, նրանց կյանքի ու գործունեության մասին։ Ջուղայեցու գրքի այն հատվածները, որոնք վերաբերում են նրա հայրենի քաղաքին, դժբախտաբար, լայն հնարավորություններ չեն ընձեռում Նոր Ջուղայի պատմության խոր ուսումնասիրության համար։ Նրանք միայն օգնում են գաղթօջախին վերաբերող սահմանափակ թվով հարցերի լուսաբանմանը։ Ճիշտ հակառակը կարելի է ասել Պատմության մյուս հատվածների և հատկապես Պարսկաստանի պատմության վերջին ժամանակներին վերաբերող հատվածների մասին, որոնք շատ կարևոր ու արժեքավոր լրացումներ ու ճշտումներ են մտցնում պարսկական սկզբնաղբյուրների ցուցմունքների մեջ և պարսկագիտության համար ունեն առաջնակարգ նշանակություն։

Ջուղայեցու Պատմության ձեռագիրը պահպանվում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում, որից և կատարվել է նրա առաջին տպագրությունը Հնդկաստանի Մադրաս քաղաքում հրատարակվող «Ազդարար» թերթի 5—16 համարներում, 1795 թվականին։ Երկրորդ հրատարակությունը կատարվել է Բ. Աղավելյանցի միջոցով Վաղարշապատում՝ 1905 թվականին։

## 2. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար կարևոր ու արժեքավոր սկզբնաղբյուրներ են նաև եվրոպացի ճանապարհորդների ուղեգրությունները, որոնց մի զգալի մասը Հովհ. Հակոբյանի հայերեն թարգմանությամբ երկու հատորով լույս է տեսել Երևանում 1932 և 1934 թվականներին։

Ուղեգրությունների հեղինակները մեծ մասամբ Արևելք, այդ թվում նաև Հայաստան ու Կիլիկիա են եկել քաղաքական կամ կրոնական հատուկ հանձնարարություններով ու նպատակներով, դրա համար էլ նրանք բարձր շրջաններում վայելում էին որոշակի հարգանք։ Եվ եվրոպական պետությունների կամ Հռոմի պապի այդ պաշտոնատար անձինք են, որ XIII դարից ըսկըսած, տարբեր առիթներով, այցելելով Հայաստան ու Կիլիկիա, թողել են նաև իրենց համապատասխան հուշագրությունները նրանց մասին։



Ֆրանցիսկյան միաբանության անդամ Ուիլյամ Ռուբրուկը Հայաստան այցելած առաջին ճանապարհորդներից է։ Նա Ֆրանսիայի Լյուդովիկոս IX-ի արքունիքի աչքի ընկնող ու վստահելի անձնավորություններից էր, որը թագավորի հետ մասնակցել էր խաչակրաց արշավանքին և 1248 թվականին եկել Կիպրոս։

Ռուբրուկը իր ճանապարհորդությունը կատարել է 1253—1255 թվականներին։ Նա մոնղոլական մեծ խանի մոտ գնալիս, անցել է Հայաստանով, ուր հանդիպել է շատ հայ մարդկանց՝ հոգևորականների, առևտրականների։ Այդ մարդիկ, ըստ նրա, «գիտեին թուրքերեն և արաբերեն» ու հաճույքով թարգմանչի դեր էին կատարում իր համար Բաթու և Մանգու խաների մոտ։ Ռուբրուկը հատկապես զարմացած էր հայ վանական Սարգսի վրա, որն ազատ ելումուտ ուներ Մանգուի մոտ և Ֆրանսիայի ներկայացուցչին հաղորդում էր անհրաժեշտ տեղեկություններ։ Սարգիսը մեծ խանի արքունիքում կատարում էր նաև բժշկի պաշտոն։ Ռուբրուկը հիշատակում է նաև, որ Մանգուի մոտ անհամբեր սպասում էին Կիլիկիայի թագավոր Հեթում I-ի ժամանմանը։ Սակայն ֆրանսիացի ճանապարհորդը մինչ այդ պահը սպասել չի կարողանում և խանից միջոցներ է խնդրում մինչև «Հայոց թագավորի սահմանները հասնելը»։ Ճանապարհին Ռուբրուկը իմանում է, որ Հեթումն արդեն ուղևորվել է Մոնղոլիա։ Ռուբրուկի հիշատակություններից պարզվում է, որ նա անցել է Սիս—Կեսարիա—Կամախ—Անի—Երևան—Նախիջևան—Դերբենդ ուղեգծով, որի ընթացքում հետաքրքիր ու ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Հայաստանի քաղաքների, Արարատյան դաշտի և Արաքս ու Կուր գետերի մասին, թույլ տալով, իհարկե, նաև ոչ էական սխալներ ու անճշտություններ։

XIII դարի հռչակավոր ճանապարհորդ Մարկո Պոլոն վենետիկցի է։ 1298 թվականին, երբ Ադրիատիկ ծովում վենետիկյան նավատորմիղը շատ ծանր պարտություն կրեց ճենովացիներից, հաղթողների ձեռքն ընկած 7000 գերիների մեջ էր նաև Մարկո Պոլոն, որը Արևելքի մասին իր զարմանալի պատմություններով կարողացավ շահել ճենովացիների համակրանքը և ազատվել անխուսափելի մահվանից։ Նա բանտում եղած ժամանակ իր գլխով անցածը թելադրում է պիզացի Ռուստիչիանոյին, որը և գրի է առել նրա ողջ ուղեգրությունները ու փրկել կորստից։

Մարկո Պոլոն ծնվել է 1254 թ. Վենետիկում։ Հազիվ 17 տարեկան էր, երբ նրա հայրն ու հորեղբայրը հետները վերցնելով պատանի Մարկոյին, սկսում են իրենց երկրորդ ուղևորությունը դեպի Արևելք։ Վենետիկցի ճանապարհորդները Կիլիկիայի Այաս քաղաքով անցնում են Միջագետք և Պամիրի վրայով մըտնում Չինաստան։ Այստեղ երիտասարդ Մարկո Պոլոն արժանանալով մոնղոլ տիրակալի համակրանքին, նրա կողմից պաշտոն է ստանում և սկսում ազատորեն շրջագայել Չինաստանում։ Պոլոնների ճամփորդությունը տևում է 25 տարի։ Նրանք Վենետիկ վերադարձան միայն 1295 թվականին։

Մարկո Պոլոն ճենովացիների գերությունից ազատվելուց հետո ապրում է ազատության մեջ և մահանում 1324 կամ 1325 թվականին։ Նրա ուղեգրությունները արտակարգ ընդունելության են արժանացել ընթերցող հասարակայնության կողմից և XV դարից սկսած աշխարհի գրեթե բոլոր լեզուներով հրատարակվել են բազմաթիվ անգամ։ Մարկո Պոլոյի մասին տեղեկություններ են հաղորդում նաև չինական աղբյուրները։

Ինչպես արդեն ասվել է, Պոլոները իրենց ճանապարհորդությունը սկսել են Կիլիկիայի Այաս քաղաքից, 1271 թվականին։ Դրա համար էլ մեծ ճանապարհորդի առաջին տեղեկությունները վերաբերում են Այասին, որին նա անվանում է Լայաս։ Այասը նա համարում է մեծ և վաճառաշահ քաղաք։ «...Դուք պետք է իմանաք,—ասում է նա,—թե բոլոր համեմատեղենները և մետաքսյա ու արծաթյա կերպասները և ուրիշ արժեքավոր անոթները, որոնք գալիս են ներքին գավառներից, բերվում են այս քաղաքը։ Եվ Վենետիկի, Ջենովայի և ուրիշ երկրների վաճառականները այստեղ են գալիս՝ վաճառելու իրենց ապրանքները և կամ գնելու՝ ինչ որ իրենք պետք ունեն։ Եվ որևէ անձնավորություն, վաճառական կամ ուրիշ, որ պիտի ճամփորդե (Արևելքի) ներսերը, իր ճամփորդությունն սկսում է այս Լայաս քաղաքից»[104]։ Այասի առնչությամբ, Մարկո Պոլոն խոսում է նաև Կիլիկիայի մասին ու տալիս ընդհանուր տեղեկություններ, որ երկիրը խիտ է բնակեցված, ունի շատ քաղաքներ, գյուղեր, կլիման առողջարար չէ և այլն։ Ուղեգրությունների մեջ պատմվում է նաև Կեսարիա (ինքը գործածում է Կազարիա) քաղաքի ու «Մեծ Հայաստանի» ու նրա մյուս քաղաքների՝ Երզնկայի, Էրզրումի, Բաքերդի, Մուշի, ինչպես նաև Սևանա լճի, կղզու և եկեղեցիների մասին։

[104] Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 44։



XIV դարի վերջերում օսմանյան Թուրքերից եվրոպական բանակների կրած ծանր պարտությունը լուրջ տագնապ էր առաջացրել ամբողջ Եվրոպայում, որոնց առաջնորդները այն ժամանակ Թուրքերից ազատվելու հիմնական ուժը համարում էին Լենկթեմուրին և ձգտում մոտիկ հարաբերություններ ստեղծել նրա հետ։ Հենց այս դիտավորությամբ էլ Իսպանիայի թագավոր Հենրի III-ը իր սենեկապետ Ռույ Գոնցալեց դի Կլավիխոյին նշանակում է հատուկ պատվիրակության ղեկավար և ուղարկում Արևելք՝ Լենկթեմուրի մոտ։ Այս դեսպանությունը 1403 թ. դուրս գալով Կադիքսից և հաղթահարելով երկարատև ճամփորդության բոլոր դժվարությունները՝ Սամարքանդ հասավ միայն 15 ամիս հետո։

Մոնղոլիա ուղևորվելու ընթացքում Կլավիխոն անցավ նաև Հայաստանով։ Նա Տրապիզոնից շարունակելով ճանապարհը, եկավ Երզնկա, հետո Էրզրում, այստեղից էլ Բայազետ, Խոյ և Թավրիզ—Թեհրան ուղեգծով շարունակեց ընթացքը դեպի արևելք։ Սանոթանալով Հայաստանին և նրա շրջակա երկրամասերին՝ իսպանացի ճանապարհորդը պատմական արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Տրապիզոնի կայսրության մասին, հետո նկարագրում է Երզնկա, Սուրմալու, Իգդիր, Խոյ և այլ քաղաքները, ասելով, որ այդ քաղաքները առևտրական ու քաղաքական նշանավոր կենտրոններ են։ Քաղաքները նկարագրելիս, Կլավիխոն հատուկ ուշադրություն է դարձնում նրանց բնակչության ազգային կազմի վրա։ Նա նշում է, որ բոլոր այդ քաղաքների հիմնական բնակիչները հայերն են, որոնք ամենուրեք ունեն իրենց եկեղեցիներն ու հոգևոր պետերը։ Կլավիխոն հատկապես նշում է հայերի բարյացկամությունը եվրոպացի դեսպանների նկատմամբ, շեշտում նրանց հյուրասիրությունն ու մարդկայնությունը և պատրաստակամությունը՝ կատարելու հյուրերի ցանկությունները։

Եվրոպացի ճանապարհորդների ուղևորությունները դեպի Արևելք հետագայում ավելի հաճախակի են դառնում և այս ասպարեզում, կարծեք, առաջնությունը գտնվում էր վենետիկցիների ձեռքին, որոնցից հատկապես Հայաստանի ու հայերի մասին ուշագրավ տեղեկություններ են հաղորդում Կատերինո Զենոն, Ջոզեֆա Բարբարոն, Ամբրոսիո Կոնտարինին, Ջիովան

Մարիա Անջիոլելլոն, Վինչենցո դ՚Ալեսանդրին և մյուսները։ Այս հեղինակների տեղեկությունները հետաքրքիր են Հայաստանի պատմական աշխարհագրության և XV—XVI դարերի քաղաքական անցուդարձերի պատմության ուսումնասիրության համար։

XVI դարից սկսած, հիմնականում դարձյալ քաղաքական ու կրոնական նպատակներով, Արևելք են գործուղվում նաև անգլիական դեսպան-ճանապարհորդներ, որոնցից ուշագրավ են Անթոնի Ջենքինսոնի ուղեգրությունները։ Անգլիացի ճանապարհորդը թեև եղել է Հայաստանում, սակայն նա ավելի շատ իր ուշադրությունը կենտրոնացրել է թուրք-պարսկական փոխհարաբերությունների և Անդրկովկասի վրա, հարաբերություններ, որոնք, անտարակույս, կարևոր նշանակություն ունեին նաև Հայաստանի և հայերի համար։ Հայաստանի բնաշխարհի, նրա ճանապարհների ու մի քանի քաղաքների նկարագրություններին մենք հանդիպում ենք նաև XVI դարի անգլիացի ճանապարհորդ Ջոն Նիուբերիի մոտ։ Հիմնականում սրանք էին եվրոպացի այն ճանապարհորդները, որոնց ուղեգրությունները պարունակում են հետաքրքիր նյութեր նաև Հայաստանի ու հայ ժողովրդի մասին։

## 3. ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հայ ժողովրդի և Հայաստանի միջին դարերի պատմության ուսումնասիրության համար շատ օտար աղբյուրների շարքում կարևոր տեղ են գրավում նաև թուրքական պատմագրական սկզբնաղբյուրները, որոնք ասպարեզ են եկել թուրքական պետականության ձևավորումից համեմատաբար ուշ՝ XVI դարում։

XVI—XVIII դարերի թուրք պատմագիրները, տարեգիրներն ու ուղեգիրները մեծ մասամբ պաշտոնական անձինք էին, որոնց սուլթանները կամ արքունիքը հանձնարարում էին գրել պատմություն, և նրանք էլ հլու-հպատակ կատարում էին տրված հանձնարարությունները։ Այս դեպքում արդեն հենց սկզբից թուրք հեղինակները և նրանց գրելիք աշխատությունները դրվում էին շատ նեղ ու սահմանափակ շրջանակների մեջ, որից դուրս գալն ու ծավալվելը գրեթե անհնար էր։

Թուրք հեղինակները ոչ միայն սուլթանների, վեզիրների, փաշաների և պետության ռազմական ու քաղաքացիական ասպարեզի ուրիշ բարձրաստիճան պաշտոնյաների մանկլավիկներն էին, այլև իրենք էլ պատկանելով արտոնյալ խավերին, ոչ մի շահագրգռվածություն չունեին դուրս գալու տիրող դասակարգի շահերի ու հետաքրքրությունների սահմաններից։ Նրանք գրում ու ստեղծագործում էին միայն ու միայն իրենց դասակարգի մասին, իրենց դասակարգի համար։ Այս դեպքում արդեն թուրք հեղինակներից ավելորդ է սպասել, որ նրանք սուլթանների ու նրանց մերձավորների, այսպես ասած, սխրագործությունները փառաբանելու ժամանակ նեղություն կրեին խոսելու նաև ժողովրդական զանգվածների մասին, ինչ ազգության և ինչ կրոնի էլ որ նրանք պատկանելիս լինեին։ Եվ եթե թուրքական պաշտոնական պատմագրական երկերում բացակայում է ինքը՝ թուրք ժողովուրդը, ապա էլ ինչո՞ւ պետք է զարմանալ, որ այդ երկերի հեղինակները գրեթե ոչ մի ուշադրություն չեն դարձրել պետականությունից զրկված ու ստրկացված «անհավատ» հայերին։ Այդ հեղինակները, որպես սուլթանների ու վեզիրների գաղափարախոսներ, մինչև ուղն ու ծուծը վարակված լինելով կրոնական մոլեռանդությամբ, մեծագույն բավականությամբ ու հաճույքով նկարագրում են իրենց տերերի ու նրանց կամակատար ենիչերիների ջարդարարական ոհմակների գազանությունները, հազար-հազարավոր անմեղ հայերի, վրացիների, ռուսների կոտորածները, առևանգումները, կողոպուտն ու տակնուվրայությունները։

Սակայն միտումնավոր, թունոտ ու թշնամական լինելով հանդերձ, թուրքական պատմագիր-տարեգիրների տեղեկությունները կարևոր նշանակություն ունեն հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության և հենց ժամանակակից թուրքական պատմագրության անհեթեթությունները ժխտելու համար։ Պատմագրություն, որը հենց սկզբից իր սկզբունքն է դարձրել իրականությունը խեղաթյուրելը, կեղծիքն ու հերյուրանքը՝ ձգտելով հավատացնել, որ սուլթանական Թուրքիան եղել է ամենամարդասեր պետությունը, որի հովանու ներքո այլադավանները ապրել են ամենաբարեկեցիկ ու ապահով կյանքով։

Թուրքական աղբյուրները, որպես կանոն, մեծ մասամբ շարադրված են տարեգրությունների ձևով և մեկը մյուսի շարունակությունն են կազմում։ Թուրքերի մոտ պաշտոնական պատ-

մագիրները անվանվում էին «վակաա-նյուվիս»-ներ։ Թուրք «վակաա-նյուվիս»-ների գործերի պատմագիտական արժեքը գնահատելի է նրանով, որ նրանք որպես պաշտոնական հեղինակներ, մեծ հնարավորություն են ունեցել օգտագործելու արքունական արխիվները և պետական կարևորություն ունեցող փաստաթղթեր։ Սակայն թուրքական պատմագրությունը ունեցել է նաև ոչ պաշտոնական հեղինակներ, որոնք թեև որևէ մեկի կողմից գրելու հատուկ հանձնարարություններ չեն ստացել, ստեղծագործել են իրենց ցանկությամբ և միանգամայն անկախ ձևով, դարձյալ արտահայտել են «վակաա-նյուվիս»-ների ընդհանուր միտումները և հարազատ մնացել թուրքական պատմագրության վերևում ներկայացված թունոտ մտայնությանը։

Ուշ միջնադարի թուրքական պատմագրության առաջին ներկայացուցիչը Փեչևի-Իբրահիմն է, որն ապրել է XVI—XVII դարերում։ Նրա գիրքը, որ կոչվում է «Թարիխի-Փեչևի», բաղկացած է երկու հատորից և ընդգրկում է 1519—1638 թվականները։ Այս աշխատության ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ նրա հեղինակը բարձր խավերի շրջանում ճանաչված ու հեղինակավոր դեմք է եղել և անձամբ մասնակցել է օսմանցիների կազմակերպած մի շարք արշավանքներին։

Փեչևի «Թարիխը» բաժանվում է երկու մասի։ Նրա հիմնական հատվածը ընդգրկում է Թուրքիայի եվրոպական մասի կամ, ինչպես այն ժամանակ ընդունված էր ասել, Ռումելիի և այնտեղ տեղի ունեցող ավերիչ պատերազմների պատմությունը։ Երկրորդ հատվածում հեղինակը գրեթե ամբողջությամբ խոսում է Թուրքիայի ասիական երկրամասերի մասին՝ պատշաճ տեղ հատկացնելով թուրք-պարսկական պատերազմներին, որոնք հիմնականում ծավալվում էին Հայաստանի տարածքում։ Որպես դեպքերին անձամբ մասնակից ու ականատես հեղինակ, Փեչևին հաճախ դրանք նկարագրում է առանձնահատուկ մանրամասնություններով։

Փեչևի «Թարիխը» մեր առաջ բաց է անում 1530-ական թվականներից սկսված և ընդմիջումներով ու փոփոխական հաջողություններով մինչև XVII դարի առաջին քառորդը շարունակված պատերազմների հետևանքով ավերված ու կողոպտված Հայաստանի մռայլ պատկերը։ Հեղինակը, որպես թուրքական իշխանության երկրպագու, այդ ավերիչ պատերազմները ներկայացնում է իբրև թուրքերի նվիրական գործողություններ



ընդդեմ, այսպես ասած, բոլոր անհավատների՝ ներառյալ նաև պարսից շահը։ 1533—1535 թվականների կռիվների ժամանակ է, որ թուրքական զորքերը մեծ վեզիր Իբրահիմ փաշայի գլխավորությամբ գրավում ու ավերում են Վանը, Խլաթը և ուրիշ բնակավայրեր։ 1549 թ. թուրքերը վերագրավում են Վանը և հետո մտնելով Վրաստան, սկսում են տակնուվրա անել նաև նրա գավառներն ու քաղաքները։

Թուրքական պատմագրության հայտնի դեմքերից մեկը Քյաթիբ Չելեբին է, որը ծնվել է 1609 թվականին Ստամբուլում։ Նա Անատոլիայի զինվորական ստորաբաժանումներում վարել է հաշվապահի պաշտոն, մասնակցել Բաղդադի (1625 թ.), Էրզրումի (1626 թ.) և մի քանի այլ արշավանքների ու կռիվների։ Վերադառնալով Ստամբուլ, շարունակել է կրթությունը՝ հատուկ հետաքրքրություն ցուցաբերելով կրոնաիրավագիտական գիտությունների նկատմամբ։

1630-ական թվականներին Քյաթիբ Չելեբին օսմանյան բանակի հետ մասնակցել է թուրք-պարսկական պատերազմին, իսկ 1634 թվականին՝ Երևանի պաշարմանը։ Սրանից հետո վերադառնալով Ստամբուլ, ամբողջապես նվիրվում է գիտությանը։ Քյաթիբ Չելեբին առանձնահատուկ սեր ուներ ճշգրիտ գիտությունների հանդեպ՝ զբաղվում էր տրամաբանությամբ, տիեզերագիտությամբ, աստղագիտությամբ, աշխարհագրությամբ, քերականությամբ, մաթեմատիկայով և բժշկությամբ։ Որպես գիտուն ու բազմակողմանի զարգացած անձնավորություն, նա շուտով նշանակվում է բանակի ֆինանսական գրասենյակի խալիֆա և ստանում Հաջի Խալիֆա անունը։ Նա հանկարծամահ է եղել 1656 թվականին, չբոլորած հիսուն տարին։

Քյաթիբ Չելեբին ուներ բեղմնավոր գրիչ և իր կարճատև կյանքի ընթացքում ստեղծել է պատմագիտական, աշխարհագրական, հասարակագիտական և հանրագիտական բնույթի այնպիսի գործեր, որոնք այսօր էլ բարձր են գնահատում մասնագետները։ Այս հեղինակի առավելությունն այն է, որ նա շատ մեծ համարում ուներ Արևմուտքի գիտության ու մշակույթի նկատմամբ և ջանքեր էր գործադրում դրանք ներմուծել թուրքական իրականություն։

Քյաթիբ Չելեբին իր աշխարհայացքով և դեպքերի ու գործողությունների գնահատմամբ ոչնչով չի տարբերվում իրենից առաջ և հետո ապրած մյուս թուրք հեղինակներից։ Նա ամեն

ինչ գնահատում ու ներկայացնում է սուլթանական Թուրքիայի ռազմաքաղաքական շահերի տեսակետից։ Այդ է պատճառը, որ Քյաթիբ Չելեբիի համար նույնպես այն ամենը, ինչ ձեռնարկվում էր Թուրքիայի կողմից արդարացի էր, իսկ հակառակորդներինը՝ անարդարացի։ Սրանից էլ բխում է հեղինակի պատմագիտական շատ կարևորություն ունեցող հարցերի նրկատմամբ թեթևակի մոտեցումն ու մակերեսային բացատրությունը։ Պատմիչի այսպիսի նեղ ու կաղապարային մտածողության օրինակ կարող է լինել 1603—5 թվականների պարսկա-թուրքական պատերազմներին տված գնահատականը, պատերազմներ, որոնք նա հրամցնում է «խռովությունների ու ապըստամբությունների տարի» վերնագրի տակ և դեպքերի ողջ պատասխանատվությունը բարդում Շահ Աբասի վրա, որը որպես խոստումնազանց անձնավորություն, չէր կարողանում հանդուրժել օսմանյան պետության հաջողություններն ու սուլթանների փառքը։ Քյաթիբ Չելեբիի գնահատականներն ու ընդհանրացումները, իհարկե, անկողմնակալ հետազոտողին մոլորության մեջ գցել չեն կարող։ Մենք վերցնելով նրա ստեղծագործությունների վկայություններն ու տվյալները, դրանք օգտագործում ենք խիստ քննադատական եղանակով ու անում գիտական հետևություններ։

Քյաթիբ Չելեբիի աշխատություններից ուշադրության արժանի է մոտ 700 էջից բաղկացած «Աշխարհի հայելի» («Ջիհան նյումա») գիրքը, որտեղ նա օգտագործելով մուսուլմանական և արևմտաեվրոպական լեզուներով աղբյուրներ ու ատլասներ, նշում է աշխարհագրության, որպես գիտություն, կարևորությունը։ Քյաթիբ Չելեբիի առավելությունն այն է, որ նա արևելյան աղբյուրների հետ միասին օգտագործել է նաև եվրոպակաները։ Այս բոլորից հետո կասկած լինել չի կարող, որ «Աշխարհի հայելի»-ն կարևոր սկզբնաղբյուր է նաև Հայաստանի պատմական աշխարհագրության, և Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայկական երկրամասերի վարչատարածքային բաժանման, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի գլխավոր քաղաքների, ավանների, կարևոր գյուղերի, բերդերի, գետերի և լեռների ու ճանապարհների մասին տված տեղեկությունները, որոնք մեծ մասամբ ճիշտ են ու հավաստի, շատ տեղերում լրացնում են այլ աղբյուրներին։ Այստեղ Քյաթիբ Չելեբին հատուկ ուշադրություն է դարձնում Կարսի, Վանի, Հեքյարիի, Էրզրումի, Տրապիզոնի, Դիարբեքիրի, Սեբաստիայի (Սվասի), Մարաշի և Ադանայի էյալեթներին (վիլայեթներ, երկրամասեր) և Արմենիա երկրին ընդհանրապես։ Քյաթիբ Չելեբիի «Աշխարհի հայելի»-ն արժեքավոր է նաև նրանով, որ նրանում աշխարհագրության հետ միասին տրվում են նաև պատմական բնույթի տեղեկություններ։ Քյաթիբ Չելեբիի պատկերացմամբ Մեծ Արմենիան բաղկացած է Վանի և Էրզրումի, իսկ Փոքր Արմենիան՝ Ադանայի և Մարաշի էյալեթներից, որտեղ ապրում են հարկատու քրիստոնյաներ, իսկ խոսակցական լեզուները արաբերենը, թուրքերենը, հայերենն ու ֆարսին են։ Հեղինակը Հայաստանն ու հարակից շրջանները նկարագրում է որպես այդ վայրերում ճամփորդած և ականատես անձնավորություն։

Քյաթիբ Չելեբիի զուտ պատմագիտական բովանդակությամբ աշխատությունը կոչվում է «Ֆեզլեքե»։ Այն ընդգրկում է Թուրքիայի 1592—1654 թվականների պատմությունը։ Աշխատությունը գրելիս հեղինակն օգտագործել է իրենից առաջ ապրած մի քանի հեղինակների գործերը, որոնց անունները նա բարեխղճորեն հիշատակում է։ Գիրքը բաղկացած է երկու հատորից։ Եթե առաջին հատորը (1592—1621 թթ.) գրելիս նա հիմնականում օգտագործել է ուրիշների գործերը, ապա երկրորդը (1621—1654 թթ.)՝ միանգամայն ինքնուրույն աշխատություն է, որովհետև այդ ժամանակաշրջանի նկարագրած դեպքերից շատերին ինքն ականատես է կամ մասնակից։

«Ֆեզլեքե»-ն շարադրված է տարեգրության ձևով։ Այստեղ հեղինակը ներկայացնում է պատմական իրադարձություններից ամենակարևորները։ Հետաքրքիր են հատկապես ջալալիների ապստամբական շարժումներին և Թուրք-պարսկական պատերազմներին վերաբերող հատվածները։ Քյաթիբ Չելեբին նույնպես, մյուս բոլոր թուրք հեղինակների նման, ջալալիների շարժումն անվանում է ավերածությունների և անվերջ սպանությունների ավազակային շարժում ու արդարացնում թուրքական իշխանությունների ամենաարյունալի ձեռնարկումները նրանց դեմ, որոնք ավարտվում էին շարժման մասնակից տասնյակ հազարավոր մարդկանց զանգվածային կոտորածներով։ Հեղինակի շարադրանքից պարզվում է, որ ջալալիների շարժումն ընդգրկել է սուլթանական Թուրքիայի ողջ տարածքը։ Այս բոլորի հետ մեկտեղ, պատմիչը ոչինչ չի ասում շարժման առաջացման հիմնական պատճառների, մանավանդ նրա սո-

ցիալ-տնտեսական արմատների մասին։ Վերջին հանգամանքը խնամքով թաքցվում է նաև ժամանակակից թուրքական պաշտոնական պատմագրության կողմից։

«Ֆեզլեքե»-ն կարևոր սկզբնաղբյուր է նաև XVII դարի սկզբների պարսկա-թուրքական պատերազմների ժամանակաշրջանի Հայաստանի պատմության ուսումնասիրության համար։ Ինչպես այս պատերազմները, այնպես էլ ջալալիների շարժումը, քանի որ ընդգրկում էին նաև ողջ Հայաստանը, ուստի այդ իրադարձությունների աղետաբեր հետևանքների կրողները եղել են նաև հայերը։ Պատմիչը այստեղ նույնպես չի խորացել երկու հզոր տերությունների հակամարտությունների սոցիալ-քաղաքական էության մեջ և անտեսելով սրանցից յուրաքանչյուրի Արևելքում նոր նվաճումներ կատարելու և գերիշխանության հասնելու հիմնական նպատակները, պարսկա-թուրքական պատերազմները հանգեցնում է սունի թուրքերի և շիա պարսիկների զուտ կրոնադավանաբանական հակամարտության։ Քյաթիբ Չելեբին լռության է մատնում նաև ջալալիների ասպատակությունների և պարսկա-թուրքական պատերազմների պատճառով Հայաստանի անասելի ավերումը, կողոպուտը և ժողովրդի զանգվածային կոտորածը, բռնագաղթն ու անլուր տառապանքները։ Թուրք պատմիչին չեն հետաքրքրել ոչ միայն հայ, այլ նաև թուրք ու քուրդ աշխատավորների զրկանքներն ու անկյալ վիճակը։ Ընդհակառակը, Քյաթիբ Չելեբին, մյուս հեղինակների և պաշտոնական անձանց նման, մի առանձին բավականությամբ է խոսում թուրք ենիչերիների կամ պարսիկ ղզըլբաշիների գազանային վայրագությունների մասին ու դրանք ներկայացնում իբրև իսլամական բանակների սխրագործություններ ու պատերազմական հաջողություններ։

«Ֆեզլեքե»-ի հաջորդ հատվածներում առանձին մանրամասնություններով նկարագրվում են 1634 թվականի Երևանի համար մղվող կռիվները, Կարսի բերդի վերակառուցումը և այդ կռիվների հետ կապված այլ դեպքեր։

Իր գործունեությամբ և ստեղծագործությունների բնույթով Քյաթիբ Չելեբիին շատ նման է թուրքական մեկ այլ պատմիչ՝ Էվլիա Չելեբին, որը ծնվել է 1611 թվականին, Ստամբուլում։ Կրթությունը ստացել է հայրենի քաղաքում, հետո ծառայել Այա-Սոֆիայում, իսկ Մուրադ IV-ի ժամանակ հրավիրվել է



պալատ և դարձել սուլթանի զրուցակիցը։ Նրա հատուկ սերը դեպի երգն ու երաժշտությունը պայմանավորված էր բնատուր, գեղեցիկ ձայնով։ Նա առանձին հակում է ունեցել նաև գեղագրության, նկարչության, ճարտարապետության և երկրաչափության նկատմամբ, ծանոթ էր թուրք և պարսիկ բանաստեղծներին։

Էվլիա Չելեբին առանձնապես սիրում էր աշխարհագրությունն ու երկրագիտությունը և իր երկարամյա ճամփորդությունների ընթացքում կարողացել է բավականաչափ նյութեր հավաքել, որոնք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ժողովուրդների լեզվի, մշակույթի և սովորությունների ուսումնասիրության համար։ Նա այդ նյութերը հավաքել է իր բազմամյա շրջագայությունների ժամանակ, երբեմն-երբեմն կատարելով նաև պաշտոնական հանձնարարություններ (քարտուղար, տուրքեր հավաքող, խորհրդական և այլն)։ Հենց այս առիթով էլ, ինչպես ինքն է հիշատակում, է. Չելեբին իրավունք է ունեցել ազատորեն շրջագայելու և ծանոթանալու պատմական հուշարձաններից և հնություններից բացի, նաև ռազմական օբյեկտներին ու արխիվներին։ Նա տարբեր-տարբեր երկրների շարքում (Արաբիա, Եգիպտոս, Ռուսաստան, Լեհաստան և այլն), մի քանի անգամ էլ այցելել է Հայաստան։ Իր շատ ճանապարհորդելու համար էլ նրան անվանում են թուրքական Իբն-Բատուտա կամ «աշխարհաշրջիկ»։ Էվլիա Չելեբին մահացել է 1679 թվականին, 70 տարեկան հասակում։

Էվլիա Չելեբին թեև կրթված և շատ ման եկած անձնավորություն էր, բայց իր մտածողությամբ մոլեռանդ մուսուլման էր։ Դրա համար էլ նա իր գրքում ընդարձակ տեղ է հատկացնում հրաշագործություններին ու սնոտիապաշտություններին և ինքն էլ հավատում է դրանց։ Որպես Թուրքիայի ռազմաֆեոդալական վերնախավի շահերի պաշտպան, այս հեղինակը ևս արդարացնում է թուրքերի բոլոր ավազակային պատերազմներն ու արյունալի գործողությունները։

Էվլիա Չելեբիի «Ուղեգրությունները» («Սեյահեթնամե») բաղկացած են տասը ստվարածավալ հատորներից, որոնցից առանձին բաժիններ հետագայում հրատարակվել են անգլերեն ու հունգարերեն թարգմանություններով, իսկ հեղինակի մասին գրվել են շատ ուսումնասիրություններ և հոդվածներ։ Էվլիա Չելեբիի աշխատությունը հարուստ նյութեր է պարունակում ոչ

միայն ժողովուրդների պատմության, այլև նրանց լեզվի, ազգային սովորությունների և պատմական աշխարհագրության մասին, որոնց գիտական արժեքը չի կարելի թերագնահատել։

Այստեղ ավելորդ է մեկ առ մեկ թվարկել Հայաստանի բոլոր քաղաքները, բնակավայրերն ու գավառները, որտեղ անձամբ եղել է Էվլիա Չելեբին։ Այդ ամենը ընդհանրացնելով, առանց չափազանցության կարելի է ասել, որ այս հեղինակը եղել է ամբողջ Հայաստանում և ծանոթ է նրան այնպես, ինչպես գուցե օտար հեղինակներից և ոչ մեկը։ Հայաստանից բացի Էվլիա Չելեբին ճամփորդել է նաև Կիլիկիայում։ Հեղինակը իր շրջագայությունների ընթացքում միշտ էլ խուսափել է հապճեպությունից և ամեն տեղ, լինի քաղաք, թե գյուղ, եթե նա անհրաժեշտ է համարել, մնացել է երկար, ուսումնասիրել է բնակավայրն ու նրա շրջակայքը և կատարելով համապատասխան գրառումներ, հեռացել է այդտեղից, նույնը կրկնելու համար մեկ այլ վայրում։ Իր նշումների և գրառումների ընթացքում նա միշտ ուշադրություն է դարձրել բնակավայրերի ազգային կազմին, հիշատակել, թե տվյալ քաղաքի, ավանի կամ գյուղի բնակիչները ովքե՞ր են՝ մուսուլմաններ, թե հայ քրիստոնյաներ։ Վան քաղաքի, նրա պատմական հնությունների ու բերդի նկարագրությանը, օրինակ, Չելեբին հատկացրել է 27 ընդարձակ էջ։ Նույն ձևով նա խոսում է նաև Էջմիածնի մասին, նկարագրում է մեռոն եփելու ծիսակատարությունը, Աղթամարը, Վարագա վանքը, Մուշի Ս. Կարապետը, Էրզրում, Սեբաստիա, Դիարբեքիր քաղաքները և այլն։ Սակայն Էվլիա Չելեբին նույնպես, մյուսների նկատմամբ ունեցած իր առավելություններով հանդերձ, տառապում է թուրք հեղինակներին հատուկ միտումնավորությամբ, իր նկարագրությունների ու ընդհանրացումների ժամանակ մնում է որպես մնացած բոլոր ժողովուրդներին արհամարհող ու անտեսող հեղինակ։ Օրինակ, հայկական քաղաքների և հոգևոր կենտրոնների մասին նրա հաղորդումները թեև ընդարձակ են, բայց թերի են բովանդակության տեսակետից, որովհետև Էվլիա Չելեբին այդ բոլորի մասին խոսելիս այնպես է դուրս բերում, կարծես դրանք հայկական չեն և ոչ էլ քաղաքների ու վանքերի բնակիչները հայեր են։ Սա հեղինակի կրոնական ու ազգային խտրականությունն է, որը հատուկ է ոչ միայն միջնադարյան թուրք հեղինակներին, այլև այդ գիծը որպես ժառանգություն ստացած ու



չերմորեն պահպանող արդի թուրք պատմաբաններին, արվեստագետներին ու գրականագետներին։ Դրա համար էլ Էվլիա Չելեբիի և մյուս թուրք հեղինակների աշխատությունները պետք է օգտագործել միայն խիստ քննադատական մոտեցմամբ։

Թուրքական պատմագրական սկզբնաղբյուրները, իհարկե, միայն թվարկվածներով չեն ավարտվում։ Դրանց բոլորի համառոտ թե ընդարձակ տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին թարգմանել, ի մի հավաքել ու ծանոթագրել են Ա. Աֆրասյանը և Գ. Սանթուրջյանը։ Այդ աշխատանքը չորս գրքով լույս է տեսել Երևանում 1961—1972 թվականներին։ Քյաթիբ Չելեբիի նշված երկասիրությունների Հայաստանին և հայերին վերաբերող հատվածները ռուսերեն թարգմանել և առանձին գրքով հրատարակել է Ա. Հ. Փափազյանը (Երևան, 1973)։

## 4. ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը, որի արմատները գնում են խոր հնություն, XVII դարից սկսած նոր բովանդակություն և նոր նշանակություն է ստանում։

XVI դարում Հայաստանը նվաճվեց Թուրքիայի ու Պարսկաստանի կողմից և բաժանվեց երկուսի միջև։ Հայ ժողովրդի համար սկսվեցին ծանր ու մռայլ ժամանակներ։ Տնտեսական ու քաղաքական ամենաբիրտ ու վայրագ հալածանքների հետ, պարսիկներն ու թուրքերը գործադրում էին նաև հայերին բռնությամբ մահմեդականացնելու, էթնիկապես տարրալուծելու քաղաքականություն, որը ուղեկցվում էր հայությանը զանգվածաբար ոչնչացնելու ամենասարսռալի տեսարաններով ու եղանակներով։ Օտարների լուծը թոթափելու և վերստին ազատագրվելու համար հայ ժողովրդի մղած պայքարը, ինչպիսի ձեվեր ու ուժգնություն էլ որ ունենար, բավական չէր։ Այդ է պատճառը, որ ժողովրդի լավագույն զավակները չհուսահատվելով անհավասար պայքարում, փորձում էին ուղիներ գտնել ուրիշ տերություններից ռազմական օգնություն ստանալու համար։ Եվ քանի որ այդ նույն ժամանակներում հյուսիսում սկսել էր ձևավորվել ու հզորանալ ռուսական միասնական կենտրոնաց-

ված պետությունը, ուստի հայերի հայացքը, բնականաբար, ուղղվում էր նաև դեպի հյուսիս։

Ռուսական պետությունը արդեն XVI—XVII դարերում լայն հնարավորություններ ուներ ընդարձակելու իր առևտրական կապերը արտաքին աշխարհի հետ։ Այդ է պատճառը, որ «...ռուսական կառավարությունը, նույնիսկ իր կողմից անցկացվող մերկանտիլիզմի քաղաքականության պայմաններում, հովանավորում էր հայ առևտրականներին, նրանց տալով Ռուսաստանում ազատ առևտրի և Ռուսաստանի վրայով տրանզիտի իրավունք»[105]։

Մոսկվայի Հին ակտերի կենտրոնական պետական արխիվի (ЦГАДА) «Сношения России с Арменией» անունը կրող ֆոնդում պահպանվում են այդ խնդիրներին վերաբերող ուշագրավ փաստաթղթեր ու վավերագրեր, որոնցից մեկը վկայում է, որ 1626 թվականին Մոսկվա են ժամանել հայ առևտրականներ, որոնք վաճառելու համար բերել էին մեծ քանակությամբ արևելյան ապրանքներ։ Հաջորդ փաստաթղթերը, որոնք պատկանելիս են եղել ռուսական պրիկազներին, խոսում են Թուրքերի ճնշումից ու հետապնդումներից փախած հայերի մասին, որոնք եկել են Մոսկվա կամ ուրիշ քաղաքներ ու ծառայության մտել ռուսական իշխանությունների մոտ կամ ըզբաղվել արհեստներով ու առևտրով։ Կենտրոնական պետական արխիվի վավերագրերից մեկում պատմվում է նաև Նոր Ջուղայի հարուստ առևտրական Սահրադ Շահրիմանյանի որդու՝ Զաքարի 1660 թվականին Մոսկվա ժամանելու մասին։ Զաքարը փաստորեն գլխավորում էր Նոր Ջուղայի հայության պատգամավորությունը, որը ի նշան իր հայրենակիցների Ռուսաստանի նկատմամբ ունեցած սիրո ու համակրանքի՝ Ալեքսեյ Միխայլովիչ ցարին որպես նվեր բերել էր նշանավոր «Ադամանդե գահը»։ 1666 թ. Մոսկվա է ժամանում քառասուն հոգուց բաղկացած Գրիգոր Լուսիկովի պատգամավորությունը՝ հայ-ռուսական առևտրական կապերի ընդլայնման մասին բանակցելու համար։ Բանակցություններն ավարտվում են փոխադարձ պարտավորությունները պաշտոնապես վավերացնող 1667 թ. մայիսի 31-ին կնքված Հատուկ պայմանագրով։ Այս պայմանա-

[105] «Армяно-русские отношения в XVII веке». Сборник документов, Ереван, 1953, с. VI.



գրով Ռուսաստանը Նոր Ջուղայի հայ առևտրականներին ընձեռում էր ակնառու արտոնություններ և հնարավորություն տալիս նաև Ռուսաստանի վրայով առևտուր անելու Արևմտյան Եվրոպայի երկրների հետ։

Օգտվելով ռուսական իշխանությունների հովանավորող քաղաքականությունից՝ հայ առևտրականներն ու վաճառականները XVII դարի երկրորդ կեսերից սկսած Ռուսաստանում և Ռուսաստանի վրայով եվրոպական շատ երկրների հետ ծավալում են առևտրական լայն գործունեություն և նպաստում հայ-ռուսական տնտեսական, քաղաքական ու մշակութային կապերի հետագա ամրապնդմանը։ Նշված փաստաթղթերը անվերապահ կերպով ցույց են տալիս հայերի համար ստեղծված բարենպաստ պայմանները Ռուսաստանում և ընդգծում այն արմատական տարբերությունը, որ կար Ռուսաստանի և Թուրքիայի ու Պարսկաստանի միջև, որտեղ քրիստոնյաները ընդհանրապես և հայերը մասնավորապես զրկված էին անձի և գույքի ապահովության ամենատարրական իրավունքներից։

Այդ ժամանակաշրջանի հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող արխիվային վավերագրերի աղբյուրագիտական արժեքը, սակայն, չի սահմանափակվում միայն վերևում ասածներով։ Կարևոր է նշել, որ հայ-ռուսական առևտրական կապերի ընդլայնումն ու աշխուժացումը ստեղծում էին նպաստավոր պայմաններ երկու կողմերի միջև քննարկելու նաև քաղաքական բնույթի հարցեր։ Ռուսական իշխանությունների ցուցաբերած բարյացակամությունը հայերի նկատմամբ, վերջիններիս մոտ արդեն իսկ XVII դարում ամրապնդում էր Ռուսաստանից ռազմաքաղաքական օգնություն ստանալու հույսը և հայ ժողովրդի ներկայացուցիչներին մղում տվեալ համարձակ գործողությունների ոլորտը։ Այդ բանի լավագույն օրինակները կարող են լինել Գանձասարի հայոց կաթողիկոս Պետրոսի նամակը ուղղված Ալեքսեյ Միխայլովիչին և Գրիգոր Լուսիկովի ու լեհական դեսպանի դիվանագիտական գործունեությունները վերաբերող փաստաթղթերն ու հայոց կաթողիկոսի ուղերձը ռուսական արքունիքին։ Մոսկվայի կենտրոնական պետական արխիվի փաստաթղթերի աղբյուրագիտական արժեքը մեծ է նաև նրա համար, որ այդ նյութերը օգնում են լուսաբանելու հայերի ռուսական կողմնորոշման ծագումն ու զարգացումը և նոր լույս են սփռում Անդրկովկասի, Թուրքիայի ու Պարսկաստանի

այն ժամանակվա սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության վրա։

XVIII դարի առաջին երեսնամյակում Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության ակտիվացման հետ միասին Մերձավոր Արևելքում հայ-ռուսական քաղաքական կապերն ավելի գործնական բնույթ են ստանում։ Կենտրոնական պետական արխիվի և ռուսական արտաքին քաղաքականության արխիվի բազմաթիվ փաստաթղթեր վերաբերում են ինչպես այդ, այնպես էլ ամբողջ XVIII դարին։ Այստեղ պահպանվող փաստաթղթերը մասնագետները բաժանում են մի քանի թեմաների, որոնք հնարավորություն են տալիս ուսումնասիրողներին պարզաբանելու այդ ժամանակաշրջանի հայ-ռուսական տնտեսական ու քաղաքական փոխհարաբերությունների և հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի պատմության հարցերը։ Այստեղ հատկապես ուշադրություն են գրավում այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են XVII դ. վերջերի և XVIII դ. սկզբների հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման նշանավոր գործիչ Իսրայել Օրուն։ Միայն այդ փաստաթղթերի քննական ուսումնասիրության շնորհիվ է հնարավոր լինում ամբողջացնել Իսրայել Օրու քաղաքական գործունեության պատմությունը[106]։

XVII դարի հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող փաստաթղթերում ուշագրավ տեղեկություններ են հաղորդվում հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ 1677 թ. էջմիածնում գումարված ժողովի և նրա մասնակիցների՝ հայ հոգևոր ու աշխարհիկ ղեկավարների մասին։ Ժողովը, ինչպես երևում է աղբյուրներից, որոշում է կապեր հաստատել այդ ժամանակ պարսիկների դեմ ապստամբած Քարթլիի թագավոր Գեորգի II-ի և Կախեթի թագավոր Արչիլի հետ, համատեղ օգնություն խնդրել Մոսկովյան պետությունից, Հռոմի պապից և եվրոպական շահագրգռված տեսություններից։ Ռուսական արխիվների համապատասխան ֆոնդերում առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Իսրայել Օրու ռուսաստանյան գործունեությունը լուսաբանող նյութերը, որոնց մեջ առանձնապես կարևոր են 1701 թվականին Օրու ձեռքով

[106] Տե՛ս «Армяно-русские отношения в первой трети XVIII века», т. II, ч. I, էջ XV։



Պյոտր I-ին ներկայացված Կապանի մելիքների խնդրագիրը, որի մեջ զարգացվում էր այն միտքը, թե օտարների լծից Հայաստանի ազատագրության նախաձեռնողը պետք է լինի Ռուսաստանը, ինչպես նաև Օրու կազմած ու Դեսպանական պրիկազին ներկայացված ռուսական արշավանքի ու նրա հետ կապված մանրամասնությունների ծրագիրը։

Վերը նշված և այլ փաստաթղթերի հիման վրա Օրու՝ Ռուսաստանում ծավալած քաղաքական գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Օրին ձգտում էր «...հայերի ազատագրական պայքարի ազգային սահմանափակվածությունը դուրս բերել փակուղուց» և պայքարի մեջ միավորել պարսիկների լծի տակ կեղեքվող վրացիների ու մյուսների ռազմական ուժերը[107]։ Ռուսական արխիվային փաստաթղթերի մի մասն էլ վերաբերում է Պյոտր I-ի անձնական ներկայացուցիչ Իվան Կարապետի գործունեությանը Ղարաբաղում։ Իվան Կարապետը նույնպես շարունակում էր Իսրայել Օրու քաղաքական գիծը և ձգտում էր հայ ազատագրական շարժման մեջ միավորել Անդրկովկասի ժողովուրդների ռազմաքաղաքական ուժերը։

Ռուսական արխիվային ֆոնդերում զգալի թիվ են կազմում նաև այն փաստաթղթերը, որոնք պատմում են XVIII դարի առաջին տասնամյակներում պաշտպանական նպատակներով հայերի կազմակերպած Մեծ ու Փոքր սղնախների գործունեության, հայերի ու վրացիների ռազմական ուժերի միավորման և միասնական գործողություններ նախապատրաստող ծրագրերի մասին։ Քաղաքական այս անցուդարձի մեջ իր կարևոր դերն էր կատարում Ռուսաստանը՝ հանձին Պյոտր I-ի ներկայացուցիչ Իվան Կարապետի։ Փաստաթղթերի ուսումնասիրությունից երևում է, որ Ղարաբաղի հայ մելիքներն ու առաջնորդները հայրենասիրական խոր զգացմունքներով տոգորված՝ պատրաստ էին ամեն ինչ անելու իրենց ժողովրդին կեղեքիչներից ազատագրելու համար։ Ռուսական իշխանություններին ուղարկած իր զեկուցագրերի մեջ Իվան Կարապետը ընդգծում էր նաև այն կարևոր հանգամանքը, որ Ղարաբաղի մելիքները միասնական չեն և ամեն առիթ օգտագործում են իրար վրա հարձակվելու, կողոպտում են հարևան գյուղերը, որ ոչ ոք նրանց ընդհանուր ղեկավարություն ցույց չի տալիս և ոչ ոք նրանցից այդպիսի

[107] Նույնը, էջ XXIII։

ղեկավար ունենալու անհրաժեշտություն առայժմ չի զգում։ Սակայն նույնիսկ այդպիսի պայմաններում Ղարաբաղի և շրջակա երկրամասերի հայերը, անհրաժեշտության դեպքում, զենքը ձեռքներին ոտքի էին ելնում ընդհանուր թշնամու դեմ։

XVIII դարի երկրորդ կեսում Ռուսաստանի երկու հաղթական պատերազմները Թուրքիայի դեմ (1768—1774 թթ. և 1787—1791 թթ.) ոչ միայն ամրապնդեցին Ռուսական կայսրության դիրքերը Սև ծովի շրջանում, այլև նկատելիորեն բարձրացրին նրա միջազգային հեղինակությունը։ Օգտվելով հաջողություններից, Ռուսաստանը ձգտում էր շուտափույթ լուծել նաև Կասպից ծովի շրջաններում գերիշխանություն հաստատելու հարցը, որպեսզի կարողանա Հնդկաստանի հետ կատարվող տարանցիկ առևտրում կենտրոնական տեղ գրավել։ Հենց այդ նպատակներով էլ XVIII դարի 80-ական թվականներին ռուսական կառավարության շրջանակներում արդեն մշակվում էր պարսկական արշավանքի մանրամասն ծրագիրը, որի մեջ կարևոր տեղ էր հատկացվում Հայաստանին ու Անդրկովկասին։ Ռուսաստանը նախատեսում էր հաղթանակից հետո ստեղծել իրեն ենթակա հայկական և վրացական պետություններ, որոնք դառնալու էին ամուր ու հուսալի հենակետեր Թուրքիայի դեմ հետագայում մղվելիք պայքարի ժամանակ և նպաստելու էին Ռուսաստանի ազդեցության ուժեղացմանը ամբողջ Կովկասում։ Ավելորդ է մանրամասնել, թե ինչպիսի վառ հույսեր էին կապում հայերն ու վրացիները ռուսական արշավանքի հաջողությունների հետ։

Ռուսաստանի կողմից նախապատրաստվող պարսկական արշավանքի ղեկավարությունը հանձնարարված էր հռչակավոր զորավար Ա. Սուվորովին, որը 1770 թ. սկզբներին մի քանի հանդիպումներ է ունենում Ռուսաստանի հայոց եկեղեցու առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի և մեծահարուստ Հովհաննես Լազարյանի հետ։ Սուվորովը և այդ հարցը նախապատրաստող Գ. Պոտյոմկինն ու Ի. Գորիչը իրենց հայ զրուցակիցներից մանրամասն տեղեկություններ են ստանում Պարսկաստանի ներքին վիճակի, Անդրկովկասի քաղաքների, նրանց հեռավորության, հայերի ու նրանց թշնամիների ռազմական ուժերի հարաբերության, Էջմիածնի, Ղարաբաղի մելիքների, Վրաստանի և այլնի մասին։ Այդ հանդիպումների ժամանակ Ա. Սուվորովը և մյուս պաշտոնատար անձինք Հ. Արղությանին



և Հ. Լազարյանին խոստանում էին հաղթանակից հետո վերականգնել հայկական պետականությունը։ Ահա այս հիշարժան իրադարձությունների մանրամասնությունները արտացոլված են Մոսկվայի Կենտրոնական պետական ռազմապատմական արխիվի բազմաթիվ փաստաթղթերում ու վավերագրերում։ Այստեղ պահպանվում են Հ. Արղությանի ու Հ. Լազարյանի նամակներն ու բացատրագրերը ռուսական իշխանությունների ու պաշտոնյաների անունով, Ա. Սուվորովի նամակները ուղղված Ղարաբաղի հայ մելիքներին, 1782 թվականի նոյեմբերի 4-ին արդեն Գեորգիևսկ ժամանած գեներալ Պ. Պոտյոմկինի գրագրությունները Ղարաբաղի մելիքների ու Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու հետ և այլն։

Հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող արժեքավոր նյութեր պահպանվում են նաև Երևանի Մատենադարանում, Երևանի, Թիֆլիսի, Մոսկվայի, Պետերբուրգի և այլ արխիվներում, որոնց մի զգալի մասը հրատարակվել է առանձին ժողովածուներում կամ ուսումնասիրվել ու մեկնաբանվել տվյալ խնդիրներով հետաքրքրվող մասնագետների աշխատություններում և հոդվածներում։

Հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող արխիվային վավերագրերի լավագույն և գիտական հրատարակություններից են Կ. Էզովի կազմած «Сношение Петра Великого с армянским народом» (СПб, 1898) վերնագրով ժողովածուն, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ հրատարակած «Армяно-русские отношения в XVII веке» (Ереван, 1953), «Армяно-русские отношения в первой трети XVIII века», т. II, ч. I (Ереван, 1964), т. II, ч. II (Ереван, 1967), «Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века», т. III (Ереван, 1978) փաստաթղթերի ժողովածուները։

## 5. ՊԱՐՍԿԵՐԵՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

Հայաստանի միջին դարերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմության մասին շատ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի պարսկերեն արխիվային վավերագրերը, որոնք վերաբերում են XIV—XIX դարերին։ Այդ վավերագրերի գիտական ուսումնասիրության առաջին փորձը դեռևս կատարել

է կաթողիկոս Սիմեոն Երևանցին (1763—1780) իր «Ջամբռ» աշխատության մեջ։ Սակայն հեղինակն օգտագործել է միայն Էջմիածնի և Արարատյան դաշտի մի քանի հոգևոր կենտրոնների հավաքածուները։

Սիմեոն Երևանցուց հետո այդ ֆոնդը զգալիորեն համալրվել է այլևայլ տեղերից բերված նոր նյութերով, որոնցից ամենակարևորները հայերեն և ռուսերեն թարգմանություններով, բնագիր տեքստերի հետ միասին, հրատարակել է Հ. Փափազյանը՝ ընդարձակ առաջաբանով և մանրամասն ծանոթագրություններով[108]։

Պարսկական այս վավերագրերը հիմնականում վերաբերում են Արևելյան Հայաստանի վանքերին ու հոգևոր կենտրոններին, որտեղ և ժամանակի ընթացքում նրանք պահվել են։ Հետագայում այդ փաստաթղթերը կենտրոնացվել են Էջմիածնի արխիվում, իսկ հետո դարձել Երևանի Մատենադարանի սեփականությունը։ Այդ վավերագրերի մեջ շատ են հատկապես Գանձասարի, Տաթևի, Ագուլիսի, Ս. Թովմա, Մակուի Ս. Թադեոս առաքյալի վանքերից և այլ վայրերից բերվածները։

Մատենադարանի պարսկերեն վավերագրերը բաժանվում են երեք խմբի. առաջին խումբը ներկայացնում են շահական հրովարտակներն ու հրամանագրերը (ֆերմաններ, հոքմեր), տեղական խաների ու բարձրաստիճան իշխանավորների տված հրամանագրերը և մուսուլմանական հոգևոր առաջնորդների կայացրած վճիռները։ Երկրորդ խմբի մեջ մտնում են պարսկական իշխանությունների գրասենյակային արձանագրությունները, որոնք հիմնականում վերաբերում են հողի և այլ ունեցվածքի վաճառքին, նվիրատվություններին, վարձակալմանը և այլն։ Երրորդ խումբը ներկայացնում են այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են առանձին մարդկանց ժառանգական վեճերին, գյուղական համայնքների սահմանային և ջրօգտագործման շուրջը ծագած տարաձայնություններին։ Վերջին երկու խմբերին պատկանող փաստաթղթերը շատ կարևոր սկզբնաղբյուրներ են հատկապես այն ժամանակվա տնտեսական և ագրարային հարցերի ուսումնասիրության համար։ Ոռոգման, ջրաբաշխման և ջրօգտագործման հարցերին վերաբերող փաստաթղթերի մանրազնին ուսումնասիրությունը բացահայտում է սեփականատիրական իրավունքի առավել հետաքրքիր կողմերը և հնարավորություն տալիս մասնագետներին՝ անելու գիտական կարևոր հետևություններ։ Այն ժամանակ, երբ առանձին անհատը, իսկ տիրող դասակարգի ներկայացուցիչները առանց բացառության, օգտվում էր հողի նկատմամբ սեփականատիրական իրավունքից, ջրի նկատմամբ նույնանման իրավունքը հաճախ խախտվում էր, և ջուրը հանդես էր գալիս նույնիսկ որպես համայնքի սեփականություն։

Պարսկական վավերագրերի մի մասը վերաբերում է գյուղական համայնքների ներքին կազմակերպությանը, տիրող դասակարգի ներկայացուցիչների՝ մելիքների, տանուտերերի, քահանաների և չքավոր ու շահագործվող գյուղացիության փոխհարաբերություններին, սոցիալական անհավասարությանն ու ներքին պայքարին։

Հայաստանի, Անդրկովկասի, ինչպես նաև Իրանի XV—XIX դարերի ագրարային հարաբերությունների ուսումնասիրության համար բացառիկ արժեք են ներկայացնում 2—2,5 մ երկարություն և 20—30 սմ լայնություն ունեցող այն համախոսականները, որոնք կնքվել կամ ստորագրվել են գյուղերի տարեց ու հեղինակավոր մարդկանց կողմից՝ հաստատելու կամ ժխտելու համար այսինչ հանդամասի որևէ գյուղի պատկանելու կամ չպատկանելու հանգամանքը։

Ֆեոդալական հարաբերությունների ու նրա սոցիալ-դասակարգային բնույթը ուսումնասիրելու համար, իհարկե, առավել արժեքավոր փաստաթղթերը թագավորական կամ շահական հրովարտակներն ու ֆերմաններն են, որոնց մեծ մասը պահպանվել է բնագրերով, իսկ մի մասն էլ նոտարական պատճեններով։ Մատենադարանի ֆոնդում պահպանվող այդ բնույթի ամենահին փաստաթուղթը 1449 թ. կարակոյունլու սուլթան Ջահանշահի կողմից Տաթևի վանահայր Շմավոն վարդապետ Անգեղակոթցուն տրված հրովարտակն է, իսկ վերջինը վերաբերում է 1848 թվականին, որը տրվել է Արդաբիլի և Խալխալի շրջանների ճանապարհների պետական վերահսկիչ Կարապետ խանին։

Մատենադարանում մեծ թիվ են կազմում XVII դարի հրո-

---

[108] Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 1 (ԺԵ—ԺԶ դդ.), Երևան, 1956, պրակ 2 (1601—1650 թթ.), Երևան, 1959։ «Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը», պրակ 1 (ԺԴ—ԺԶ դդ.), Երևան, 1969։

վարտակները (շուրջ 200 հատ), որոնք վերաբերում են հայոց կաթողիկոսների և մյուս կրոնական կենտրոնների իրավունքների վերահաստատմանը նոր գահակալների կողմից։ Փաստաթղթերից շատերը ակնառու կերպով վերաբերում են հայերի ձեռքից հողերի անօրինական զավթումներին, ավելորդ և սահմանված չափից ավելի պահանջվող հարկերին ու տիրողների գործադրած ամենաբազմապիսի բռնություններին Հայաստանում։ Նշված փաստաթղթերը հնարավորություն են տալիս որոշելու պարսկական տիրապետության ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում գործադրվող հարկային համակարգը, հարկերը և նրանց տեսակներն ու չափերը։ Պարսկական հրովարտակները զգալի չափով օգնում են նաև կարակոյունլու և աղկոյունլու թուրքմենական վաչկատուն ցեղերի տիրապետության ժամանակաշրջանի ուսումնասիրությանը, պարզաբանում հայոց եկեղեցու ու եկեղեցական դասի, այսպես ասած, ապահովության և այդ արտոնության մեծ մասամբ ձևական լինելու հանգամանքները։

Հայաստանի պատմական աշխարհագրության համար կարևոր են նաև շահերի կողմից հաստատված վանքապատկան գյուղերի ցուցակները։ Նրանք զգալի նյութեր են տալիս հարկային, սոցիալական և վարչական շատ տերմինների ստուգաբանության, մեկնաբանության և բացատրության համար։

## 6. XVIII ԴԱՐԻ ՄԱԴՐԱՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Հնդկաստանի տարածքում հաստատված հայ արհեստավորներն ու վաճառականները XVI դարից սկսած իրենց ձեռներեցությամբ ու եռանդով մեծ համակրանք էին վայելում հընդիկ ժողովրդի մոտ։ Այլազգի մյուս վաճառականների մեջ միայն հայերին էր թույլատրված ազատ երթևեկել Հնդկաստանում և զբաղվել առևտրական գործարքներով։

Հայերի հոսքը Հնդկաստան ավելի հաճախակի դարձավ Շահ Աբասի Հայաստանից կատարած բռնագաղթից հետո (1604—1605 թթ.)։ Այդ ժամանակ Պարսկաստան քշված հայերից շատերն սկսեցին անցնել Հնդկաստան և հաստատվել այնտեղ արդեն վաղուց գոյություն ունեցող հայկական գաղթօջախներում։



XV—XVIII դարերում Ագրայի, Սուրաթի, Մադրասի, Բոմբեյի և Կալկաթայի հայ խոշոր առևտրականներն ու վաճառականները որոշակի երանգ էին հաղորդում Հնդկաստանի տընտեսության զարգացմանը։ Հայերի եռանդուն գործունեությունը մեծ վստահություն և հարգանք էր առաջացրել նրանց նկատմամբ նաև կառավարական բարձր շրջաններում և քիչ չէին այն դեպքերը, երբ խելացի ու ձեռներեց շատ հայեր առաջ էին քաշվում պետական ու ռազմական բարձր պաշտոններում։

XVII դարում, երբ սկսում է մեծանալ նաև եվրոպացի առևտրականների գործունեությունը Հնդկաստանում, նրանք մեծ չափով օգտվում են հայերի բարյացակամ վերաբերմունքից։ Սակայն երկու կողմերի, այսպես ասած, հաշտ ու խաղաղ փոխհարաբերությունները երկար չէին կարող շարունակվել։ Հնդկաստանում եվրոպացիների դիրքերի ամրապնդումն արդեն ավելորդ էին դարձնում հայերի հետ համագործակցելու նախկին մտայնությունը և առևտրական պարզ մրցակցության մոլուցքը ոչ միայն բացառում էր կողմերի խաղաղ գոյակցությունը, այլև եվրոպացիների կողքին հայերի առկայությունը դարձնում անհանդուրժելի ու վնասակար։ Այս երևույթը, որ աստիճանաբար ընդունում էր բացահայտ թշնամական կերպարանք, Հնդկաստանի հայ առևտրականների համար կործանարար եղավ։ Հնդկաստանում գործող եվրոպական առևտրականների թիկունքում այդ ժամանակ կանգնած էին իրենց պետությունների զորքերն ու նավատորմիղները, որոնք ցանկացած պահերին հաջողությամբ էին լուծում հայերի հետ ունեցած բարդ հարաբերությունները հօգուտ իրենց։ Այս գործոնները, առևտրականներից ու արհեստավորներից բացի, խիստ բացասաբար էին անդրադառնում նաև հնդկահայ գաղթօջախների մանր ձեռնարկատերերի ու ցածր խավերի վրա։ Եվրոպացիների և հատկապես անգլիացիների ճնշմամբ հայերից շատերը քաշվում և բնակություն էին հաստատում երկրի այն վայրերում, ուր դեռևս չէին թափանցել օտարերկրացիները և ինքնըստինքյան սկսում էին մասնակցել հնդիկ ժողովրդի արդարացի պայքարին ընդդեմ գաղութարարների։

Եվ այսպես, XVIII դարում Հնդկաստանի դրամական և նյութական հսկայական միջոցներ ունեցող հայ առևտրական բուրժուազիայի շրջաններում ծնունդ է առնում ու ձևավորվում սեփական հայրենիքում անկախ պետություն ստեղծելու գա-

գափարը, որի պրոպագանդումը կայուն հիմքերի վրա դրվեց գարի երկրորդ կեսերին՝ հարուստ վաճառական Շահամիր Շահամիրյանի նախաձեռնությամբ Մադրասի քաղաքական խմբակի ստեղծմամբ։ 1771 թվականին նույն Շահամիրյանի միջոցներով այդտեղ հիմնադրված հայկական տպարանում սկսում են հրատարակվել մի քանի աշխատություններ, որոնք պետք է կրթեին Թուրքիայի և Պարսկաստանի գաժան տիրապետության տակ տառապող հայ երիտասարդությանը, բորբոքեին նրա մեջ հայրենասիրական ու ազատատենչ գաղափարներ և նախապատրաստեին մղվելիք ապագա պայքարը հայրենիքի ազատագրության համար և այնտեղ հասարակական ու քաղաքական նոր կարգեր հաստատելը։ Մադրասի հայրենասերներին մեծապես ոգևորել էին Դավիթ Բեկի հերոսական ապստամբություններն ու ազատագրական պայքարի մեծ բովից անցած ու այժմ Հնդկաստան վերադարձած իրենց հայրենակից Հովսեփ Էմինի գործունեությունը։

Այս տեսակետից հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ուսումնասիրության համար կարևորագույն սկզբնաղբյուր է 1773 թվականին Մադրասի տպարանում լույս տեսած խմբակի անդամ Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի յորդորակ» գիրքը։ Գրքի հեղինակի մասին մեզ շատ բան հայտնի չէ։ Հայտնի չեն, օրինակ, նրա ծննդյան և մահվան թվականները, ինչ միջավայրից լինելը և այլն։ Ենթադրում են, որ Մ. Բաղրամյանը արցախեցի է, Հովսեփ Էմինի ազգականը։ Կրթությունը ստացել է Նոր Ջուղայում, հետո ապրել Ռուսաստանում։ 1762—67 թվականներին Կովկասում համագործակցել է Հովսեփ Էմինին, իսկ 1768-ին բնակություն հաստատելով Մադրասում, ընդգրկվել է Շահամիր Շահամիրյանի խմբակի մեջ, զբաղվել ուսուցչությամբ և այլն։

Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի յորդորակ»-ը մինչ այդ հայ պատմագրությանը ծանոթ մյուս սկզբնաղբյուրներից տարբերվում է իր քաղաքական և ծրագրային խոր բովանդակությամբ։ Այս գիրքը գրվել ու հրատարակվել էր ամենալուրջ նպատակադրվածությամբ։ Հեղինակը նրանում էքսկուրսիաներ է կատարում դեպի Հայաստան անցյալի պատմությունը, ընթերցողին ծանոթացնում նրա հատկապես անկախության ժամանակաշրջանների հերոսական դրվագներին և անհատ ռազմական ու քաղաքական գործիչների սխրանքներին, հետո նկարագրելով թուրք-պարսկական դաժան ու արյունալի տիրապետությունը, հայության տնտեսական ու քաղաքական անտանելի վիճակը, կոչ է անում նրան անցյալի ազգային հերոսների օրինակով ոտքի ելնել և զենքը ձեռքին, կռվով նվաճել ազատությունը։ Ինչպես տեսնում ենք, այս գաղափարները բոլորովին նոր և պայքարի ակտիվ գործողություններ ծավալելու գաղափարներ էին, որպիսիք մինչ այդ հայտնի ուշ միջնադարյան աղբյուրներում բացակայում են։

«Նոր տետրակի» արծարծած մյուս կարևորագույն հարցը ապագա ազատագրված Հայաստանի քաղաքական կարգերի բնույթի որոշման հարցն էր։ Այստեղ Բաղրամյանը կատարում է մի նոր ու համարձակ քայլ։ Նա գտնում էր, որ Հայաստանի իշխանությունը չպետք է տրվի անհատ մարդու ձեռքը, որովհետև այդ անհատը երկրի կառավարման բարդ խնդիրներում կարող է շփոթվել ու սխալներ թույլ տալ, որոնց հետևանքները, ինչպես անցյալում, ծանր կանդրադառնան ժողովրդի և պետության վրա։ Եվ որպեսզի այդ սխալները չծագեն, Բաղրամյանն առաջարկում էր սահմանափակել միանձնյա իշխանավորի իրավունքները, այսինքն ստեղծել սահմանադրական միապետական կարգեր։

Գրքում առաջ քաշված դրույթներից ուշադրության արժանի է նաև այն, որ Բաղրամյանը Հայաստանի ազատագրության գործը ամենից առաջ համարում էր հայ ժողովրդի սեփական գործը։ Սակայն պարսկա-թուրքական լծի դեմ մղվելիք պայքարում նա մեծ տեղ էր հատկացնում նաև հայ-վրացական համագործակցությանը և Ռուսաստանի օգնությանը, որն այն ժամանակվա պայմաններում միանգամայն իրական էր։ Բաղրամյանը զինված պայքարի մեջ կարևոր տեղ էր տալիս Ղարաբաղի և Սյունիքի մելիքներին, կոչ էր անում նրանց միավորվել, հուսադրող նամակներ և անգամ զենք էր ուղարկում հայրենասեր անձանց և այլն։ Դրան հակառակ «Նոր տետրակը» չէր ընդունում քրիստոնյա տերությունների օգնությամբ ազատագրվելու հնարավորությունը, որովհետև այդ օգնությունը նա գործնական չէր համարում։ Հենց սրանից էլ բխում էր հեղինակի հատուկ մոտեցումը հանդեպ հայոց եկեղեցին և հոգևորականությունը։ Բաղրամյանը գտնում էր, որ նորի, տվյալ դեպքում նոր հասարակարգի ստեղծման ճանապարհին հայ իրակա-

նության մեջ եկեղեցին կատարում է բացասական դեր։ Դա արտահայտվում էր նաև նրանով, որ եկեղեցին մինչ այժմ Հայաստանի ազատագրությունը կապում էր միայն և միայն արտաքին օգնության և օտար տերությունների միջամտության հետ։ Այդ էր պատճառը, որ «Նոր տետրակի» հեղինակը առաջարկում էր եկեղեցին պետությունից և դպրոցը եկեղեցուց անջատել։ Եկեղեցու հանդեպ նմանօրինակ դիրքորոշման պատճառը նաև այն էր, որ եկեղեցին ոչ միայն սկզբունքորեն դեմ էր մարտական վճռական գործողություններ ծավալելուն, այլև ամեն կերպ աշխատում էր խափանել նման «անզգույշ» քայլերը։ Դրա համար էլ պատահական չէ, որ այն ժամանակվա կաթողիկոս Սիմեոն Երևանցին խիստ թշնամաբար ընդունեց Բաղրամյանի գիրքը և Մադրասի խմբակի գործունեությունը։ Կաթողիկոսը անմիջապես բանադրեց Մովսես Բաղրամյանին ու կարգադրեց ոչնչացնել նրա աշխատությունը։ Նա պահանջեց նաև ցրել Մադրասի խմբակը և սպառնաց նույնը անել նաև նրա մյուս անդամների նկատմամբ։ Սակայն այդ միջոցառումներն ի վիճակի չէին խանգարելու «Նոր տետրակի» թարմ ու հայրենասիրական շնչի տարածումը հայկական իրականության մեջ։ Գրքի մասսայականացմանն օգնում էր նաև նրա իր ժամանակի խոսակցական, պարզ, հասկանալի ու մատչելի հայերենով գրված լինելը։ Բաղրամյանի գիրքը մեծ ազդեցություն ունեցավ հայ հասարակական-քաղաքական գաղափարախոսության վրա նաև հետագայում։ Այն որոշ կրճատումներով թարգմանվեց ու հրատարակվեց նաև ռուսերեն Պետերբուրգում 1786 թվականին։ Հայերից բացի գրքի բաժանորդներ են եղել նաև ռուս մարդիկ, այդ թվում նշանավոր զորավարներ Ա. Սուվորովը և Մ. Կուտուզովը։

«Նոր տետրակ որ կոչի յորդորակ»-ը խոշոր երևույթ դարձավ հայ իրականության համար և իր ժամանակին որոշակի դեր խաղաց հասարակական-քաղաքական մտքի զարգացման և ազատագրական գաղափարների մշակման ասպարեզում։ Այն փաստորեն արտահայտում էր ոչ միայն գրքի հեղինակի, այլև Մադրասի խմբակի մյուս անդամների ու հայ ժողովրդի ձգտումներն ու իղձերը։ «Նոր տետրակում» արծարծված դրույթները հիմք հանդիսացան նոր, ավելի առաջադիմական գաղափարների ձևավորման համար մեկ այլ աշխատության՝ «Որոգայթ փառաց»-ի մեջ։



«Որոգայթ փառաց»-ը հրատարակվել է Մադրասում 1788—89 թվականներին։ Նրա հեղինակը, ինչպես մասնագետներն են գտնում, թեև Շահամիր Շահամիրյանն էր, սակայն գիրքը հրատարակվել էր նրա որդու՝ Հակոբ Շահամիրյանի անունով։

«Որոգայթ փառաց»-ի ընդարձակ առաջաբանում հեղինակը նույնպես մերժում է միանձնյա իշխանության գաղափարը, ցույց տալիս նրա արատավոր կողմերը և առաջ անցնելով Մ. Բաղրամյանից, ազատագրված Հայաստանում նախատեսում է հաստատել բուրժուադեմոկրատական կարգեր։ Այստեղ Շահամիրյանը որոշակիորեն դնում էր աշխարհիկ ու հոգևոր դասերի արտոնությունների և առանձնաշնորհումների, սոցիալական անհավասարության, մեկի կախումը մյուսից վերացնելու խնդիրը և կոչ էր անում իր հայրենակիցներին ոտքի ելնել, կռվել ստրկության դեմ և պայքարով նվաճել ազատությունը։ «Որոգայթ փառաց»-ի առաջաբանում շատ ընդգծված ձևով է ներկայացվում մարդու ազատության և բոլորի՝ օրենքի առաջ հավասար լինելու գաղափարը։

«Որոգայթ փառաց»-ի հիմնական բաժինը նրա եզրափակիչ մասն է, որը պարունակում է 521 հոդված։ Այն փաստորեն սահմանադրության նախագիծ էր, որը մշակվելուց ու հաստատվելուց հետո ստանալու էր օրենքի ուժ և գործադրվելու էր Հայկական նորաստեղծ հանրապետության շրջանակներում։

Այս բաժնում հստակորեն ձևակերպված են բուրժուական հանրապետության պետական կառուցվածքի հարցերը, թվարկված են կառավարման մարմինները, տրված են նրանց ստեղծման կարգն ու գործունեության շրջանակները։ Հայաստանում գերագույն բարձրագույն օրգանը պետք է լիներ պառլամենտը՝ «Հայոց տունը», որի անդամների ընտրությունը կատարվելու էր երկաստիճան ձևով, առանց ցենզի։ «Հայոց տան» ընտրված անդամներն իրենց միջից ընտրելու էին նախագահ, որը օրենքների ճշգրիտ կատարմանը հսկող գլխավոր պատասխանատու անձն էր լինելու, զորքերի գլխավոր հրամանատարը, պատերազմ հայտարարողն ու հաշտություն կնքողը։ Սահմանադրության նախագծում որոշ արտոնյալ վիճակ էր նախատեսվում հայ մելիքների համար։ Նրանք կարող էին ստանալ ղեկավար պաշտոններ։ Վրաց Հերակլ II թագավորին, որպես Բագրատունի, Հայաստանի ազատագրության գործում շահագրգռելու համար, հատուկ հոդվածներով հնարավոր էին համարում «Հա-

յոց տան» նախագահությունը ցմահ ու ժառանգական իրավունքով հանձնել Բագրատունիների կամ ավելի հին հայկական թագավորական տոհմերի ժառանգորդին, եթե այդպիսին լինի։ Սակայն օրինականությունների խախտումների դեպքում այս անձնավորությունը նույնպես կարող էր հեռացվել պաշտոնից և նրա փոխարեն նշանակվել մեկ ուրիշը։

Գրքում մշակված ու տրված են նաև արդարադատության, պետության, նրա եկամուտների, զինված ուժերի կազմակերպման, գիտության, կրթության տարածման և, ի վերջո եկեղեցին պետությունից և դպրոցը եկեղեցուց անջատելու հարցերը։

Հայաստանի հանրապետության շրջանակներում թեև պետական կրոնը համարվելու էր հայկական լուսավորչական դավանանքը, մյուս կրոնները չէին հալածվելու։ Սակայն հավասար իրավունքներ սահմանելով հանդերձ բոլոր քաղաքացիների համար, առանց ազգային ու կրոնական խտրականության, արվում էր նաև որոշ վերապահություն, այն է բոլոր կարևոր պաշտոնները վարելու էին հայերը, նրանք օգտվելու էին նաև հողի սեփականատիրական իրավունքից։ Այնինչ, այլադավանները դրանցից զրկվում էին և ունենալու էին միայն հողի վարձակալման իրավունք։ Այս վերջինը կարծեք ինչ-որ ձևով արդարացված էր։ Չէ որ հայը դարեր շարունակ հենց այլադավանության պատճառով էր ընկել ստրկական վիճակի մեջ և այդ վիճակը սերնդե սերունդ հայ մարդու մեջ բորբոքել էր վրիժառության արդարացի զգացմունքներ և, այժմ, երբ հայն էր իր երկրի տերը, նա այսպես թե այնպես կրոնական ու ազգային խտրականությունից միանգամից չէր կարող ազատագրվել և, թեկուզ մեղմ, բայց, պետք է այն արտահայտվեր։

«Որոգայթ փառաց»-ում դեմոկրատական սկզբունքներով էին լուծված նաև արդարադատության հարցերը, ինչպես՝ մեղադրյալի դատապաշտպան ունենալու իրավունքը և այլն։ Կրթությունը դառնում էր պարտադիր բոլորի համար, առանց սեռի խտրականության։ Կարգավորված էին ընտանեկան հարցերը և այլն։ Սրանք են «Որոգայթ փառաց»-ի այն գլխավոր դրույթները, որոնց ֆոնի վրա ընդգծվում էր ստեղծվելիք հայկական հանրապետության բուրժուական պատկերը։

«Որոգայթ փառաց»-ի պատմագրական արժեքն ամենից առաջ կայանում է նրանում, որ այն բացահայտում է նրա հեղինակի գիտելիքների հարստությունն ու լայնախոհությունը,



գիտելիքներ, որոնք, անշուշտ, ձեռք էին բերվել ոչ միայն Հայաստան աշխարհի ու հնդկահայության վիճակի նեղ շրջանակներում անձնական ընկալման մտահղացումով, այլև ավելի լայն, այն ժամանակ աշխարհում ծավալված հասարակական-քաղաքական բնույթի առաջադիմական ու հետադիմական գաղափարախոսություններին խորապես ծանոթ լինելու և ճիշտ կողմնորոշվելու ու դրանց մեջ առաջադիմականը, բուրժուադեմոկրատականն ընտրել կարողանալով։

Մադրասի հայրենասերների աշխատություններից ուշադրության արժանի են նաև «Տետրակ որ կոչի նշաւակ վասն կառավարելոյ ինչս սրբոց և առանց կտակ ննջեցելոց» գիրքը, որը նույնպես Շահամիր Շահամիրյանի գրչին էր պատկանում (1783) և «Աշխարհացոյց Հայաստանեայց» քարտեզը (Վենետիկ, 1778)։ Այս երկուսն էլ կրում են «Նոր տետրակի» և «Որոգայթ փառաց»-ի գաղափարական ազդեցությունը։

«Տետրակ որ կոչի նշանավակ»-ը վերաբերում է Մադրասի գաղթօջախի ներքին կառավարմանը, նրա կարգ ու կանոնին։ Հեղինակն իր այս աշխատության մեջ Մադրասը և հայկական մյուս գաղթօջախները կարծեք դիտում է որպես իր ժողովրդի փշրված բեկորների ժամանակավոր հանգրվաններ և մեծ կրքոտությամբ առաջ է քաշում հայերի հայրենադարձության խնդիրը ու համոզված է, որ երբ Հայաստանը ազատագրվի, նրա ցրված որդիները ցնծությամբ կվերադառնան իրենց մոր՝ հայրենիքի գիրկը։

Հնդկահայերի վերևում թվարկած հրատարակությունների գրքագրական ու գաղափարախոսական բարձր արժեքը նշելու հետ միասին, պետք է ասել նաև այն, որ դրանք մեծ մասամբ ռոմանտիկ ու իդեալիստական բնույթ ունեին, որովհետև այնտեղ գծված չափանիշներն ամենևին չէին համապատասխանում Հայաստանի սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացման իրական վիճակին և ազատագրված Հայաստանում դրանց գործնական կիրառությունը հնարավոր չէր։

## 7. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ, ՄԵՆՐ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

Հայկական սկզբնաղբյուրների մեջ իրենց հատուկ տեղն ունեն նաև ձեռագրերի հիշատակարանները, որոնք թողնվել են

գրիչների, պատվիրատուների, նորոգողների, կազմողների կամ ձեռագրերը նկարազարդողների՝ ծաղկողների կողմից ավարտված գրքի վերջում կամ առանձին հատվածներից հետո և անգամ լուսանցքներում։

Ձեռագրերի ընդհանուր բովանդակության հետ կապ չունեցող նման արձանագրումներից ավելի սեղմ ու համառոտները ընդունված է անվանել հիշատակագրություններ, իսկ համեմատաբար ընդարձակները, որոնք մեծ մասամբ թողնվում էին ձեռագրերի վերջում, կոչվում են հիշատակարաններ։

Հիշատակարանները հիմնականում պատմում են տվյալ ձեռագրի ստեղծման կամ արտագրության ընթացքում տեղի ունեցած քաղաքական անցուդարձերի, սովի, համաճարակի, երկրաշարժի, երաշտի, թշնամիների հարձակումների, ավերածությունների, կոտորածների, գերեվարության, կողոպուտի մասին։ Այստեղ գրիչները իրենց մասին հաղորդում են նաև կենսագրական տեղեկություններ, նշում արտագրվող ձեռագրի վերնագիրը, արտադրության վայրը (Երզնկա, Կարին, Մեծոփա վանք, Ապրակունյաց Ս. Կարապետ, Դրազարկ և այլն), թվականը, տալիս են տվյալ վայրի հոգևոր ու աշխարհիկ տերերի անունները, խոսում իրենց ընկերակիցների, նրանց ստեղծագործությունների, անգամ բնավորության գծերի մասին և այլն։

Հիշատակարանները պատմագիտական մյուս սկզբնաղբյուրներից տարբերվում են նախ նրանով, որ գրված լինելով դեպքերին անմիջապես ժամանակակից ու ականատես գրիչների կողմից, միանգամայն վստահելի են և գրեթե զերծ սխալներից ու անճշտություններից։ Հիշատակարանների հեղինակները մեծ մասամբ ստորին խավերից դուրս եկած չարքաշ մարդիկ էին կամ ցածր աստիճան ունեցող հոգևորականներ, որոնք ստեղծագործում էին մշտական կարիքի ու զրկանքների պայմաններում։ Դրա համար էլ նրանք, մոտ լինելով աշխատավորական խավերին, հիշատակարաններում երբեմն հաղորդում են սոցիալական ու պատմագիտական բնույթի այնպիսի տեղեկություններ, որոնք այլ կարգի սկզբնաղբյուրներում կա՛մ բացակայում են, կա՛մ քիչ են արտացոլվում։ Այնուհետև, հակառակ միջնադարյան հայ պաշտոնական պատմագրության ներկայացուցիչների, որոնք արտահայտում էին տիրող աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների շահերը, հիշատակարանների



հեղինակները, որպես դեմոկրատական խավերից ելած անձնավորություններ, պատմական դեպքերն ու իրադարձությունները կարծեք, ավելի անաչառ ձևով են ներկայացնում ու գնահատում։

Նշված բարեմասնությունների հետ միասին հիշատակարաններն ունեն նաև բացասական կողմեր ու թերություններ։ Նրանցում հեղինակները ժամանակի կրոնական մտայնության ազդեցությամբ իրենց գործը ավարտելու համար անընդհատ փառք են տալիս սուրբ երրորդությանը, դրվատում ձեռագրի պատվիրատուին, հիշատակում գործի հետ ոչ մի առնչություն չունեցող նրա մոտիկ և նույնիսկ հեռավոր բարեկամներին և հետո միայն որոշ տեղեկություններ հաղորդում իրենց մասին, ներկայանալով որպես «տգետ», «անիմաստ», «մեղապարտ», «անարհեստ» անձնավորություններ։ Այս բոլորից հետո հիշատակագիր գրիչը անդրադառնում է պատմության համար արժեքավոր խնդիրներին և շարադրում դրանք հիմնականում ըստանդարտներից ազատ ու անկաշկանդ ձևով՝ այնպես, ինչպես ինքն է ընկալում, ինչպես ինքն է հասկանում։

Հիշատակարանների հեղինակների թերություններից մեկն էլ այն է, որ նրանք իրենց աշխարհայացքով մեծ մասամբ կղզիացած անձնավորություններ լինելով, չեն կարողացել խորանալ պատմական իրադարձությունների մեջ, գտնել նրանց ներքին կապն ու պատճառները կամ վերլուծել դրանք ըստ էության։ Այս բոլորի փոխարեն գրիչները բավարարվում են ասելով, որ ամեն ինչ կատարվում է «վասն ծովացեալ մեղաց մերոց»։

Նշված թերությունները որքան նկատելի ու ակնառու լինեն, այնուամենայնիվ, չեն կարող նսեմացնել հայկական ձեռագրերի հիշատակարանների մշակութային ու գիտական արժեքը։ Հիշատակարանները միշտ էլ մնում են որպես պատմագիտական առաջնակարգ սկզբնաղբյուրներ և բարձր են գնահատվում։ Դրա լավագույն ապացույցը հիշատակարանների ամբողջական ու բազմահատոր հրատարակություններն են, որ արդեն մի քանի տասնամյակ մեծ հաջողությամբ ու ոգևորությամբ իրականացնում են հայ պատմագրության ու բանասիրության անվանի ներկայացուցիչները[109]։

---

109 Գ. Հովսեփյան, Հիշատակարանք, ձեռագրաց, հատ. Ա, Անթիլիաս,

Հայկական ձեռագրերի հիշատակարանների գիտական արժեքը մեծանում է հատկապես այնպիսի ժամանակաշրջանների պատմության ուսումնասիրության համար, որոնց մասին այլ աղբյուրներ կամ չկան, կամ էլ եղածները աղքատիկ են։

Օտար բռնակալների ծանր հարկահավաքության մասին պատկերացում կարող են տալ, օրինակ, 1318 թ. մի հիշատակագրի հետևյալ տողերը։ «Գարունն առին զհարկն և աշունն ղանն (Ղարբանդա) մեռաւ։ Եւ այլ եկին, ոմն անուն Աղլաղու, Սինթամուր և Հասանթամուր ՌԴՃ (1300) մարդով և կրկին հարկ առին՝ յոյժ անչափ, և ոչ ոք ընդդիմացաւ նոցա»[110]։ Շատ են նաև ժողովրդի ծանր վիճակի, կողոպուտի, երկրի տնտեսության քայքայման ու անկման մասին տեղեկությունները։ Սարգիս գրիչը, խոսելով օտար զավթիչների 30000-անոց բանակի Հայաստան ներխուժելու մասին, ասում է հետևյալը. «Բազում գաւառս գ(ե)ռեցին և աւերելով կործանեցին, և զինչս արդիւնաց զամենայնն յափշտակեցին, և զամենեսեան զքրիստոնեայք կողոպուտ արարին, մերկ և բոկ, և ոչ թողին և ոչ մի ինչ ի վերայ անձանց քրիստոնէից, այլ զանասունս տաւարաց ջոկս ջոկս առեալ տարան՝ ոչխարաց և զեզանց, զկովուց և զցլոց և զերիվարաց, և զհանդերձս ի յանձնէ, մերկացուցին և մերկս արարին ի տեսիլս խայտառակաց... այնպէս արարին, որ շունք ի սովոյ սատակէին, քանզի զխորս ամբարաց հացից հանէին...»։

Ձեռագրերի հիշատակարանները հսկայական նյութեր են պարունակում նաև թշնամական փոթորիկներից փրկված հայ գաղթականների գաղթի ուղիների, նրանց նոր վայրերում հաստատվելու և գաղթօջախների պատմության մասին։ Այնտեղ

---

1951։ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե—ԺԲ դարեր», կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1988։ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար», կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984։ «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950։ «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Մասն Առաջին (1401—1450), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955։ Մասն Երկրորդ (1451—1480), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958։ Մասն Երրորդ (1481—1500), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967։ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար», հ. Ա (1601—1620), կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, հ. Բ (1621—1640), կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978, հ. Գ (1641—1660), կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1984։

[110] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 138։



խոսվում է ամենադաժան պայմաններում իրենց գոյությունը մի կերպ պահպանող հայ գրչության կենտրոնների և նրանց մշակութային գործունեության մասին։ Հիշատակարանները առաջնակարգ աղբյուր են նաև հայոց լեզվի ու բանահյուսության ուսումնասիրության համար։ Այնտեղ խոսվում է վանքերի սեփականատիրական իրավունքների, արհեստների, արհեստավորների, նրանց արտադրանքի տեսակների, առևտրի և այլների մասին։ Հիշատակարանները շատ են օգնում նաև Հայաստանի պատմական աշխարհագրության ուսումնասիրությանը, հետևելու մեր երկրի վարչական բաժանման ընթացքին, շատ բնակավայրերի անհետանալուն և մնացածների անունների անընդհատ փոփոխվելուն։

XII—XIII դարերում հայ-վրացական համատեղ պայքարի շնորհիվ Հայաստանի՝ օտարների լծից ազատագրված հյուսիս-արևելյան երկրամասերում կրկին սկսեցին զարգանալ գիտությունն ու մշակույթը։ Վերակենդանացավ տնտեսությունը։ Սակայն ընդհանուր այդ զարթոնքը շուտով նվաղեց, դալկացավ ու կանգ առավ, երբ Հայաստանը դարձավ մոնղոլների, թուրքթաթարների, պարսիկների և ամեն տեսակ բախտախնդիր ու շարագործ հրոսակախմբերի տակնուվրայությունների թատերաբեմ։ Քաղաքական անկայուն և տնտեսական միանգամայն անապահով վիճակը զգալիորեն արգելակում էր նաև գիտության ու մշակույթի զարգացումը։ Եվ եթե այդ ժամանակ գտնվում էին մարդիկ, որոնք փորձում էին ստեղծագործել, ապա նրանց գրածները այլևս չէին հասնում իրենց նախորդների աշխատությունների մակարդակին, հետ էին մնում նրանցից։ Դրա համար էլ XIV—XVI դարերում հայ պատմագրությունը արտահայտվում էր հիմնականում ժամանակագրությունների ձևով, որովհետև այդ դարերի հեղինակները չկարողանալով ընկալել արագորեն փոփոխվող քաղաքական կարգերը և սոցիալ-տնտեսական հարաբերությունները, ի վիճակի չէին ըմբռնելու և հասկանալու նրանց ներքին պատճառներն ու երկար խորհելու դրանց մասին։ Նրանք պարզապես ժամանակ չունեին այդ բոլորը շարադրելու ընդարձակ ու ամբողջական ձևով։ Դրա համար էլ հիշյալ ժամանակաշրջանի պատմիչները հազիվ կարողանում էին հասցնել պատմությունը շարադրել ժամանակագրության ձևով, այն էլ ընդգրկելով ոչ թե մեծ, համահայկական շրջանակներ, այլ բավարարվում էին մեծ մա-

սամբ իրենց երկրամասի կամ գավառի, երբեմն նաև առանձին քաղաքի ու բնակավայրի սահմաններով։ Ավելորդ է հիշեցնել, որ XIV—XVIII դարերի պատմագիտական այս ստեղծագործությունների մեջ ևս բացակայում են դեպքերի խոր վերլուծությունը, ներքին կապակցությունը, հեղինակային ընդհանրացումները և այլն։ Սակայն այս բոլոր թերությունները չեն նսեմացնում մանր ժամանակագրությունների արժեքը որպես սկզբնաղբյուր, որովհետև այսօր մեզ ավելի շատ հետաքրքրում են նրանցում եղած հում նյութերը, քան հեղինակների տեսակետները, կարծիքներն ու եզրակացությունները։ Ժամանակագրությունների մեջ նյութը ոչ միայն շատ է, այլև բազմազան։ Մանր ժամանակագրությունների պարունակած թվականները մեծ չափով օգնում են որոշելու և հաստատելու կարևոր պատմական իրադարձությունների, հոգևոր ու աշխարհիկ իշխանավորների ծննդյան, մահվան կամ պաշտոնավարելու ժամանակը, ճշտելու պատմական անցուդարձերը և նրանց հետ կապված մանրամասնությունները, որոնք այլ կարգի աղբյուրներում բացակայում են։

Հայկական ձեռագրերում պահպանված ժամանակագրությունները չեն սահմանափակվում միայն Հայաստանի ու հայերի մասին հաղորդումներով։ Դրանց մեջ շատ են նաև հարևան (Վրաստան, Պարսկաստան, Թուրքիա և այլն) և նույնիսկ հեռավոր երկրներին (Հնդկաստան) ու ժողովուրդներին վերաբերող ժամանակագրությունները։ Դրա համար էլ հայկական ժամանակագրությունների արժեքը դուրս է գալիս զուտ հայագիտական նշանակության սահմաններից։

Հայերեն մանր ժամանակագրությունները գիտական բարձր մակարդակով հրատարակել է Վ. Հակոբյանը[111]։

Հայաստանի և հայ ժողովրդի միջին դարերի պատմության ուսումնասիրության համար անգնահատելի նշանակություն ունեն նաև արխիվային վավերագրերը, որոնք ցրված են աշխարհի տարբեր գրադարաններում, թանգարաններում կամ գտնվում են անհատ մարդկանց ձեռքին։

---

[111] Տե՛ս Մանր ժամանակագրություններ (XIII—XVIII դդ.), հ. 1, Երևան, 1951, հ. 2, Երևան, 1956։



XV—XVIII դարերի հայերեն արխիվային վավերագրերի ամենամեծ հավաքածուն պահվում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնում։ Արխիվային բաժնի վավերագրերի մեջ բավական թիվ են կազմում նաև ռուսերեն, պարսկերեն, թուրքերեն, վրացերեն և ասորերեն լեզուներով գրված փաստաթղթերը։ Երևանի Մատենադարանի արխիվային բաժինը այսօր ունի շուրջ 100 000 վավերագրեր, որոնք անսպառ նյութեր են պարունակում ոչ միայն Հայաստանի ու հայ ժողովրդի, այլև ուրիշ երկրների և ժողովուրդների պատմության ու մշակույթի ամենատարբեր հարցերի մասին։

Հայաստանի XV—XVIII դարերի քաղաքական պատմության ուսումնասիրության համար շատ կարևոր նշանակություն ունեն, օրինակ, պարսից շահերի, թուրքական սուլթանների, ռուսական ցարերի հրամանները, ֆերմանները, ուղերձները ու հրովարտակները, Ղարաբաղի հայ մելիքների քաղաքական ու դիվանագիտական բնույթի փաստաթղթերը, նամակները, ուղերձները, խնդրագրերը։ Էջմիածնի և երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում նրա խաղացած դերը լավագույն ձևով է արտացոլվում կաթողիկոսական կոնդակների, հրովարտակների և հայոց հոգևոր կենտրոններին ու մյուս եկեղեցական հաստատություններին օտար տիրակալների կողմից պարբերաբար տրված ամենաբազմազան բովանդակություն ունեցող փաստաթղթերում, իսկ բազմաթիվ ճորտագրերը, կալվածագրերը, ելևմտից մատյանները մեծ հնարավորություն են տալիս երկրի սոցիալ-տնտեսական հարաբերությունների լուսաբանման համար։ Մատենադարանի արխիվային բաժնում շատ են նաև հայ և օտարազգի գրողների, գիտնականների, արվեստագետների, եկեղեցական ու քաղաքական գործիչների անհատական արխիվները։

Երևանի Մատենադարանում խորհրդային իշխանության տարիներին ինչպես ձեռագրերի, այնպես էլ արխիվային վավերագրերի մշակման, պահպանման, ուսումնասիրության և հրատարակության համար ստեղծվել էին բոլոր անհրաժեշտ պայմանները, որոնց շնորհիվ արխիվային փաստաթղթերը պարբերաբար հրատարակվելով դառնում էին գիտական լայն հասարակայնության սեփականությունը։ Այս իմաստով հատ-

կապես կարևոր պետք է համարել «Դիվան Հայոց պատմության» մատենաշարի հրատարակությունը, որով շրջանառության մեջ են դրվել XVIII դարի երկրորդ կեսի Հայոց պատմության վերաբերյալ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվող դիվանական բազմաթիվ վավերագրեր[112],

[112] «Դիվան Հայոց պատմության» նոր շարքի առաջին գիրքը նվիրված է Վանքս Կարնեցուն։ Տե՛ս Ղուկաս Կարնեցի (բնագրեր), հ. Ա (1780—1785), աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, Երևան, 1984;

## ՑԱՆԿ

### ՀԱՆԶՆԱՐԱՐՎՈՂ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ


Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն*, գիրք 1, Երևան, 1944, գիրք 2, Երևան, 1946

Աբրահամ Կրետացի, *Պատմություն*, քննական բնագիր, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ն. Ղորղանյանի, Երևան, 1973

Ա. Աբրահամյան, *Անանիա Շիրակացու մատենագրությունը*, Երևան, 1944,

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ, հ. 3, Վենետիկ, 1805

Ս. Ավետյան, *Հնագույն հայկական թարգմանությունները*, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 1, 1973

Լ. Խաչեղյան, *Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր*, Երևան, 1978

Խավիթ Անհաղթ, *Երկեր*, Երևան, 1980

Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Նալբանդյանի, Երևան, 1964

Ողիշե, *Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին*, Երևան, 1957, 1989

*Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին*, թարգմանություն թուրքերեն բնագրից, հ. Ա, կազմեց՝ Ա. Սաֆրաստյան, Երևան, 1961

Հ. Ժամկոչյան, Ա. Աբրահամյան, Ս. Մելիք-Բախշյան, Ս. Պողոսյան, *Հայ ժողովրդի պատմություն*, Երևան, 1975

*ԺԴ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950

*Պանոնագիրք հայոց*, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964

Պիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց*, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961

*Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա*, հ. 1, Երևան, 1981

*Հայ ժողովրդի պատմություն*, հ. 1, 2, 3, 4, Երևան, 1971, 1984, 1976, 1972, ՀԽՍՀ ԳԱ հրատարակություն

*Հայ մշակույթի նշանավոր գործիչները*, Երևան, 1976

Հերոդոտոս, *Պատմություն ինը գրքից*, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986

*Մանր ժամանակագրություններ*, հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1951

Մխիթար Գոշ, *Գիրք դատաստանի*, աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի, Երևան, 1975

Մովսես Խորենացի, *Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, Երևան, 1981, 1985*
Ստեփանոս Օրբելյան, *Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986*
Ստրաբոն, *քաղեց և թարգմանեց Հ. Անառյան, Երևան, 1940*
Լ. Տեր-Պետրոսյան, *Հայ հին թարգմանական գրականություն, Երևան, 1984*
Փավստոս Բուզանդ, *Հայոց պատմություն, Երևան, 1968, 1985*
Քսենոփոն, *թարգմանությունը՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970*
Ղազար Փարպեցի, *Հայոց պատմություն, Երևան, 1982*
Ագաթանգեղոս, *Հայոց պատմություն, Երևան, 1983*
Թովմա Արծրունի, *Պատմություն տանն Արծրունյաց, Երևան, 1985*
Եղիշե, *Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1989*
Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրություն, Երևան, 1991*
Եզնիկ Կողբացի, *Եղծ Աղանդոց, Երևան, 1994*
Հովհաննես Դրասխանակերտցի, *Հայոց պատմություն, 1996*
*«Դաւիթ Բէկ կամ Պատմութիւն Ղափանցւոց», Երևան, 1992*
*«Նոր տետրակ որ կոչի յորդորակ», Երևան, 1991*

# ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբաս շահ 159
Աբդուլ-Ֆիդա 213
Աբդուլլա Քյոփրալու՝ փաշա 262
Աբեղյան Մ. 56, 58, 61, 62, 71, 98, 100, 144, 165, 249, 251
Աբրահամ II Խոշաբեցի կաթողիկոս 266
Աբրահամ Երևանցի 260—262, 264, 265
Աբրահամ Կրետացի 265—270
Աբրահամյան Ա. Ա. 201
Աբրահամյան Ա. Գ. 51, 99, 101, 132, 217
Աբու-Յուսուֆ իբն-Իբրահիմ՝ ալ-Անսարի՝ օրենսգետ 110, 209, 210
Աբուսեթ 154
Ագաթանգեղոս 58—60, 63, 83, 94, 101, 104, 121, 157, 172, 180, 196, 251
Ագբլյան Սերոբե 189
Ադադ 17
Ադամ՝ Աստվածաշնչյան 104, 171, 185
Ադոնց Ն. 61
Աթանաս Աղեքսանդրացի՝ եկեղեցական մեկնիչ 114
Ալ-Մավերդի 210
Ալ-Յակուբի 211, 212
Ալեքսանդր Մակեդոնացի 96, 157
Ալեքսեյ Միխայլովիչ՝ ցար 290, 291
Ալիշան Ղևոնդ 216, 261
Ալփ-Ասլան՝ սուլթան 161
Ախշահրսարտ՝ Նեկփառի հայրը 48
Ակինյան Ն. 71, 73
Ահուրամազդա 26
Աղամիր՝ Զաքարիա Ագուլեցու հայրը 254
Աղան Արծրունի 79
Աղավելյանց Բ. 276
Աղլաղու՝ հարկահավաք 308
Ամբրոսիո Կոնտարինի 279
Ամմիանոս Մարկելինոս 138, 139
Այվազ՝ առևտրական 253
Անակ 59
Անահիտ՝ աստվածուհի 35
Անանիա Մոկացի 102
Անանիա Նարեկացի կաթողիկոս 155
Անանիա Շիրակացի 118, 131—137, 157
Անանուն (V դ.՝ պատմիչ) 118
Անանուն (VII դ.) 22
Անանուն Արծրունի 155
Անանուն Ջրուցագիր (կարծեցյալ Շապուհ Բագրատունի) 143—145
Անդրեասյան Հ. 177
Անթապյան Փ. 148, 175, 177
Անտոնիոս՝ եգիպտական զորավար 40, 43, 46, 264
Անուշ Վռամ՝ Զվիկ իշխանի քույրը 79
Աշչուր աստված 15, 16
Աշոտ Բագրատունի՝ իշխան 144
Աշոտ I Բագրատունի 143, 144, 149, 158, 159, 204
Աշոտ II Բագրատունի 148, 159
Աշոտ II Երկաթ 147, 150
Աշոտ III 159
Աշուշա՝ բդեշխ 78, 79
Ապիոն 38
Ապոլոն՝ աստված 50
Առաքել Դավրիժեցի 245—249, 251
Առաքելյան Բ. 51, 52
Առաքելյան Վ. 102, 105
Ասիա՝ թագավոր 17
Ասքանազյան (ազգ) 55
Ավգերյան Մ. 117, 192

Ավդալբեկյան Մ. 178
Ավետիս կաթողիկոս 244
Ավչյան Ս. Ա. 234
Ատրվշնասպ՝ մարզպան 86
Աբա Գեղեցիկ 95
Աբախա՝ զորավար 27
Աբամ՝ Հայկի ծոռը 16, 22, 96
Արամ (Արամու) 16, 17
Աբամայիս՝ Հայկի որդին 22
Աբամյան Ս. 260
Աբգիշար I (Աբգիշարեն Մինուտորգի) 18, 19
Աբգիշար II (Աբգիշարեն Ռուսայորգի)՝ Ռուսա I-ի որդին 20
Աբեղյան Ս. 119, 128, 131, 228, 232
Աբիստակես Լաստիվերցի 161—165, 180
Աբիսաթիրես Աթենացի 114
Աբիստոտել 128—130, 142, 188, 227
Աբծրունիներ 78, 144, 146, 152—154, 195
Աբղուիյան Հովսեփ արքեպիսկոպոս 294, 295
Աբմեն (Արտավազդ II) 46
Աբմենոս՝ արքունավորդ 36
Աբշակ II 66—68, 70, 85, 139
Աբշակունիներ 40, 47, 58, 65, 66, 70, 75, 84, 85, 96, 97, 108, 158
Աբշավիր՝ Գաարիկ 202
Աբշիլ՝ Կախեթի թագավոր 292
Արտաշես I (Երվանդական Բարի) 32, 35, 48—50, 97
Արտաշես Սասանյան 59
Արտաշեսյաններ 50, 96
Արտավազդ II 38, 40, 42, 43, 46, 47, 97
Արտաքսերքսես II Մնեմոն՝ Աքեմենյան թագավոր 29
Արտեմիս աստվածուհի 50
Արտոքմես՝ զորավար 28
Ափասիոս 118
Աքեմենյաններ 49

Բաբայան Լ. 257, 261
Բաբգեն Ա. Ութմսեցի կաթողիկոս 80
Բաբուրյան Ղազար 263
Բագրատունիներ 106, 112, 146, 149, 151, 152, 155, 162, 195, 223, 303, 304
Բաթու խան 277
Բալաձորի 210, 211
Բաղրամյան Մովսես 300—303
Բաչունոյոն՝ մոնղոլ հրամանատար 187
Բասամյանց Խ. 220
Բարդածան՝ պատմիչ 94
Բարզանես՝ եգիպտական թագավոր 33
Բարթիկյան Հ. 142, 143, 167, 171, 205, 207, 208
Բարխուդարյան Ս. 234
Բարսեղ I (Վասիլ)՝ կայսր 203, 204
Բարսեղ Կեսարացի՝ մեկնիչ 114, 179
Բել՝ առասպելյան 22, 95, 108
Բելիսարիոս 140
Բերոսոս՝ բաբելոնցի պատմիչ 38, 39, 94
Բյուզանդացի Ն. 61
Բոլոտնովա Ա. 49
Բորիսով Ա. 48
Բրոսսե Մ. 155, 173, 188, 201, 235, 253, 260, 270
Բրբիշո կաթողիկոս 85
Բուքիկ 264
Բուղա՝ արաբ զորավար 154
Բուք տե՛ս Գրիգոր Գարանագցի

Գագիկ I 159
Գագիկ II Բագրատունի 223
Գագիկ Արծրունի թագավոր (իշխան) 147—150, 152, 153
Գալիլեյ 134
Գալստյան Ա. 221
Գայլ Վահան 100
Գամիկ՝ Հայկի որդին 22
Գելցեր Հ. 61
Գեորգի III՝ Քարթլիի թագավոր 181, 292

Գեորգիոս Կեդրենոս 205
Գեորգիոս Վանական 203, 206
Գեորգ Դպիր Գալատացի 117
Գեորգ Սկևռացի 173
Գյուլամիրյանց Ա. 260
Գյուտ I կաթողիկոս 86, 92
Գոյան Գ. 50
Գոբիլ Ի. 294
Գրիգոր՝ վարդապետ 263
Գրիգոր Ակներցի 183—186
Գրիգոր Անավարզեցի կաթողիկոս 200
Գրիգոր Աստվածաբան 114
Գրիգոր Դարանաղցի (Կամախեցի) 240—245
Գրիգոր-Դեբեն Արծրունի իշխան 145
Գրիգոր-Դերենիկ իշխան 152, 153
Գրիգոր Երեց 170
Գրիգոր Լուսավորիչ 59—61, 97, 99, 121, 148, 158, 174, 179, 271
Գրիգոր Լուսիկով 290
Գրիգոր Կամախեցի տե՛ս Գրիգոր Դարանաղցի
Գրիգոր Մագիստրոս 118, 155, 156, 223—226
Գրիգոր Նյուսացի 119
Գրիգոր Պահլավունի մագիստրոս 222
Գրիգոր Տաթևացի 227, 229—233, 238, 270
Գրիգոր Տղա կաթողիկոս 171
Գրիգորիս՝ Գրիգոր Դարանաղցու հայրը 241
Գրիգորյան Վ. 312
Գույուկ խան 187

Դադարշիզ՝ Բաբելոնի հայ զորավար 26
Դանեղյան Լ. 249
Դանիել՝ ասորի եպիսկոպոս 120, 173
Դարեհ I Վշտասպ՝ Աքեմենյան արքա 25, 26, 28
Դավիթ՝ Մովսես Խորենացու և Եղիշեի դասընկերը 72
Դավիթ Ալավկա Բրդի 216, 217, 219
Դավիթ Անհաղթ 118, 136—138, 225, 226, 270
Դավիթ Բեկ 258—260
Դավիթ կաթողիկոս 244
Դավիթ Կյուրոպաղատ՝ իշխան 161
Դարբինյան-Մելիքյան Մ. 144, 255
Դաուսեթ Զ. 217
Դեղեյան Ժ. 190
Դելիլ Ֆ. 25
Դերեն Արծրունի՝ իշխան 145
Դիոդորոս Սիկիլիացի 32, 33
Դիոն Կասիոս Կոկեանոս՝ պատմիչ 43, 44, 46, 47
Դիոնիսիոս Թրակացի 98, 117, 175, 225
Դյակոնով Ի. Մ. 21
Դյուլորիեն Է. 177
Դոմիտիանոս՝ կայսր 38

Եզեկիել մարգարե 25
Եզնիկ Կողբացի 54, 113, 115, 123—126, 129
Եկատերինա II 271
Եղիազար Այնթապցի 255, 258
Եղիշե 71—78, 85, 104, 105, 109, 118, 124, 126, 129, 153, 154, 157, 172, 180, 196, 249
Եպիփան Կիպրացի 114
Եսայի մարգարե 24
Եսայի Նչեցի 227
Եվտիփրոն 118
Երասխ՝ Հայկի որդին 22
Երեմիա դպիր՝ տե՛ս Քյամուրճյան Երեմիա
Երեմիա մարգարե 24
Երեմիա Չելեպի՝ տե՛ս Քյամուրճյան Երեմիա
Երվանդ վերջին 50
Երվանդական 48
Երվանդյաններ 50, 96
Երվանդուններ 48
Եվկլիդես 225
Եվսեբիոս Կեսարացի՝ պատմագիր 116, 117, 153, 157, 172, 271

Ֆիրմ Ասորի՝ եկեղեցական մեկնիչ 114

Զամինյան Ա. 73
Զարեհ՝ Արտաշես թագավորի հայրը 48, 49
Զաքար՝ ցարի պատգամավոր 390
Զաքարիա Ագուլեցի 254—256
Զաքարիա Քանաքեռցի 249—253
Զաքարյան Զաքարե 218
Զաքարյան Իվանե աթաբեկ 218
Զաքարյաններ 181, 198, 235
Զենոբ Գլակ 64, 99—101, 196
Զենոն Կատերինո կայսր 97, 279
Զոհրաբյան Հ. 24

Էգրոս՝ Թորգոմի որդին 23
Էդով Կ. 295
Էմին Հովսեփ 300
Էմին Մկրտիչ 61, 177
Էմպեդոկլես 125
Էվլիա Չելեբի 286—289

Թամար թագուհի 181
Թեոդորա՝ Մամիկոնյան՝ կայսրուհի 202
Թեոն Ալեքսանդրացի 118
Թեոփանես Խոստովանող 167, 203, 206
Թովմա Արծրունի 97, 131—155, 180
Թովմա Մեծոփեցի 226, 238—240
Թորգոմ՝ հայերի և կովկասյան ցեղերի նախահայրը 23
Թորոսյան Խ. 220
Թուքխալիսա III թագավոր 14
Թուքկուլթի-Նինուրտա I՝ Սալմանասար I-ի որդին 16

Ժամկոչյան Հ. 313

Իբն Բատուտա 287
Իբն-Խորդադբե 212
Իբրահիմ փաշա 283
Ինճիճյան Ղ. 61
Իշոխ քահանա 185
Իշպիլե Բատուորդի 20
Իսահակյան Հ. 274, 275
Իսրայել Օրի 292, 293
Իվան Կարապետ՝ ցարի անձնական ներկայացուցիչը Ղարաբաղում 293
Իվանե իշխան 218, 226

Լազարյան Հովհ. 294, 295
Լեհման-Հաուպտ Կ. Ֆ. 52
Լենկթեմուր 230, 239, 279
Լեո 261
Լիսիցյան Ս. 51
Լյուդովիկոս IX 277
Լուկուլլոս՝ հռոմեական զորավար 39, 42, 43, 45, 46
Լևոն II Ռուբինյան 186
Լևոն III Ռուբինյան 200

Խաթուն 264
Խալդ՝ աստված 19
Խանլարյան Ա. 246
Խաչատուր Կեչառեցի 272
Խաչատուր Ջուղայեցի 274—276
Խաչատրյան Ա. Ա. 237
Խալիկյան Լ. Ս. 308
Խոսրով՝ Տրդատի հայրը 58, 85
Խուկաննաս՝ Հայաստանի թագավոր 14

Կամսարականներ 78—80
Կանանյանց Ստ. 58, 61
Կարագյոզյան Հ. Հ. 19
Կարախանյան Ս. Գ. 234
Կարապետ խան՝ վերահսկիչ 297
Կարճիկ Հովհաննես 263
Կեսար 225
Կիկերոն 225
Կիրակոս Գանձակեցի (Արևելցի, Գետիկցի) 102, 177—183, 186, 216
Կլավիխո 279
Կլեոպատրա թագուհի 46, 47
Կլեոպատրա Սելենե՝ Սելևկյան թագուհի 38
Կղեմեոս V պապ 191
Կյուլեսերյան Բ. 73
Կյուրեղ Աղեքսանդրացի՝ մեկնիչ 114
Կյուրոս՝ պարսից արքա 31
Կյուրոս I 275
Կյուրոս կրտսեր՝ Արտաքսերքսես II-ի եղբայրը 29
Կոռնելիոս Տակիտոս՝ պատմիչ 40
Կոստանդին II կաթողիկոս 193, 200
Կոստանդին Սիրանածին 203—205
Կոնստանտին պայլ՝ սպարապետ 186
Կոստանդին կայսր 139
Կոստանդին V կայսր 107
Կոստանյանց Կ. 216, 226
Կովկաս՝ Թորգոմի որդին 23
Կորբուլոն՝ զորավար 41, 52
Կորյուն 54—59, 63, 113, 121, 153
Կրպաստ 43, 46
Կրկյաշարյան Ս. Մ. 28, 31, 33, 35, 37, 45
Կտեսիաս՝ պատմիչ 33
Կուլվարդ՝ Դարանաղցու մայրը 241
Կուտուզով Մ. 302

Հազկերտ II 77
Հակոբ արքեպիսկոպոս 274
Հակոբ IV Ջուղայեցի կաթողիկոս 246, 252, 256
Հակոբյան Հովհ. 276, 278
Հակոբյան Վ. 215, 308, 310
Համմուրաբ՝ Բաբելոնի թագավոր 13
Հայկ (Հաոս) Թորգոմի որդին 22, 23, 95, 96, 108
Հաննիբալ 35
Հաշի խալիֆա տե՛ս Քյաթիբ Չելեբի
Հասան-Թամուր՝ հարկահավաք 308
Հարուն-ալ-Ռաշիդ 111, 209
Հարությունյան Ն. Վ. 21
Հարությունյան Պ. 273
Հարությունյան Ս. 98
Հեթում I 173, 186—188, 277
Հեթում Պատմիչ Կոռիկոսցի 190—192
Հեթումյաններ 186, 191
Հենրի III Իսպանիայի թագավոր 279
Հերակլ՝ կայսր 99, 106
Հերակլ II՝ վրաց թագավոր 303
Հերոդոտոս 27, 28, 94, 143, 153
Հիպոլիտոս 114
Հիսուս տե՛ս Քրիստոս
Հյուսեին՝ սուլթան 261
Հովիանոս՝ կայսր 139
Հովհան՝ Աբրահամ Երևանցու հայրը 260
Հովհան եպիսկոպոս 71
Հովհան Մամիկոնյան 99, 101
Հովհան Մանդակունի կաթողիկոս 80
Հովհան Ոսկեբերան 114, 179
Հովհան Որոտնեցի 226—231
Հովհան Օձնեցի կաթողիկոս 179, 214
Հովհաննես՝ Անանիա Շիրակացու հայրը 131
Հովհաննես՝ քահանա 256
Հովհաննես Դրասխանակերտցի (Գառնեցի կամ Դվնեցի) 143, 146—151, 157, 172, 180
Հովհաննես Երզնկացի 173
Հովհաննես Իմաստասեր 118, 173, 216
Հովհաննես Կոզեռն 169
Հովհաննես V կաթողիկոս տե՛ս Հովհ. Դրասխանակերտցի
Հովհաննես Սկիլիցես 205—208
Հովհաննես Տավուշեցի 218
Հովհաննիսյան Ա. 308
Հովհաննիսյան Գ. 42
Հովսեպոս Եբրայեցի (Հովսեպոս Փլավիոս) 37—40, 94
Հովսեփյան Գ. 307
Հռոմի պապ 191, 227
Հուլավու ղան 174
Հունդիբեկյան Հովհ. 262
Հուստինիանոս II կայսր 141, 142

Ջվիկ իշխան 79

Ղազար Փարպեցի 64, 78—88, 124, 157, 172, 180, 196
Ղարբանդու ղան 308
Ղևոնդ Ալիշան տե՛ս Ալիշան Ղ.

Ղևոնդ Պատմագիր 54, 102, 109—113, 157, 180, 196
Ղորղանյան Ն. Կ. 270
Ղուկաս կաթողիկոս 274
Ղուկաս Կարնեցի 295

Ճեմճեմյան Ս. 258,

Մաթևոսյան Ա. Ս. 308
Մալխասյանց Ստ. 61—63, 88, 273
Մակեդոնացի Ալ. տե՛ս Ալեքսանդր Մակեդոնացի
Մահմուդ՝ սուլթան 261
Մաղաքիա՝ արեղա 184
Մամբրե՝ Մովսես Խորենացու զաս-ընկերը 72
Մամիկոնյան Դավիթ՝ երեց 74
Մամիկոնյան Թեոդորա տե՛ս Թեոդորա Մամիկոնյան
Մամիկոնյան Համազասպ 80
Մամիկոնյան Հովհան 64, 99—101
Մամիկոնյան Մանվել 70
Մամիկոնյան Մուշեղ 71
Մամիկոնյան Վահան՝ սպարապետ 78—83, 86, 87
Մամիկոնյան Վարդ՝ զորավար 202
Մամիկոնյան Վարդան տե՛ս Վարդան Մամիկոնյան
Մամիկոնյաններ 65, 69, 71, 78, 99, 112, 195
Մայ Ա. 172
Մանանդյան Հ. 25, 27, 42, 49—51
Մանգու դան 188, 277
Մանեթոս՝ պատմիչ 94
Մանուչ՝ աստվածաբան 225
Մաշտոց I Եղվարդեցի կաթողիկոս 146
Մառ Ն. 235
Մատթեոս Ուռհայեցի 165—171, 176, 180, 189
Մար Աբաս Կատինա 94
Մարիամ 264
Մարիամ՝ Աբրահամ Երևանցու մայրը 260
Մարկո Պոլո 192, 277, 278



Մարտիրոս Ղրիմեցի՝ վարդապետ 256
Մարքս Կ. 30
Մեթոդիոս Օլիմպիացի 114
Մեթրոդորոս Սկեպսացի՝ փիլիսոփա 37
Մելիք-Բախշյան Ստ. 184, 313
Մելիք-Օհանջանյան Կ. 178, 183
Մելիքիշվիլի Գ. Ա. 21
Մելիքսեդեկ կաթողիկոս 244
Մելիքսեթ-Բեկ Լ. 235, 244
Մենեաս՝ Տրդատ I-ի մերձավոր 51
Մենուա թագավոր 19
Մեսրոպ Մաշտոց 24, 54—57, 63, 72, 82, 85, 88, 89, 91, 97, 105, 113, 115, 120—124, 126, 129
Մերուժան՝ զորավար 71
Միլդերմանս Ժ. 177
Միխայել Ասորի 184, 189
Միհրալի՝ զորավար 262
Միհրան՝ զորավար 100, 108
Միհրդատ՝ զորավար 39, 46
Միհրդատ VI Եվպատոր իշխան 45
Մինոս 118
Մինուա Իշպուինորդի 20
Միրիջանյան Դավիթ 263
Մխիթար արքա 258
Մխիթար Այրիվանեցի 216
Մխիթար Անեցի 102
Մխիթար Գոշ 102, 173, 178, 218—220, 222
Մխիթար Սպարապետ 216, 260
Մխիթարյաններ 258, 260
Մկրտիչ՝ Զաքարիա Քանաքեռցու հայրը 249
Մոմզեն Թ. 52
Մովսան՝ Թորգոմի որդին 23
Մովսես 264
Մովսես մարգարե 38
Մովսես Խորենացի (Պատմահայր) 21, 22, 48—51, 64, 65, 72, 88, 90—98, 104, 105, 111, 118, 126, 129, 135, 137, 148, 153, 157, 158, 172, 180, 249, 251, 252

Մովսես Կաղանկատվացի (Դասխուրանցի) 102—105, 180, 182
Մռավիա 111
Մուհամեդ 110, 145
Մուհամեդ էլ-Մեհդի՝ խալիֆ 209
Մուհամեդ ալ-Մութազ-Բիլլահ խալիֆ 210
Մուրադ IV սուլթան 286
Մուրադյան Գ. 235
Մուրսիլիս II՝ խեթական թագավոր 14

Յակուտ ալ-Համավի 213
Յասոն՝ արգոնավորդ 36
Յուզբաշյան Կ. 161, 165
Յուսուֆ ամիրա 147, 154

Նաբուգոդոնոսոր 24
Նադիր շահ 265—270
Նադիր Ղուլի շահ 265
Նալբանդյան Գ. Մ. 26, 313
Նալբանդյան Հ. Թ. 213
Նալբանդյան Մ. 82
Ներրովթ՝ Բաբելոնի թագավոր 23
Նեկփա՝ հայ պաշտոնյա 48
Նեմեսիոս Եմեսացի 119
Ներոն 40, 41, 47, 52
Ներսես III Տայեցի 107
Ներսես Մեծ կաթողիկոս 61, 65, 66
Ներսես Մշեցի 173
Նիկողայոս 264
Նինոս՝ պարսից թագավոր 33
Նիուբերի Ջոն 280
Նշանյան Մ. 243
Նոյ (Նոքոս) նահապետ 38, 39, 104
Նուրիջանյան Թովմա Վանանդեցի 98

Շաթ 103
Շահ Աբաս 248, 252, 284, 298
Շահ Ռուհ 239
Շահամիրյան Հակոբ 303
Շահամիրյան Շահամիր 300, 303, 305
Շահնազարյանց Կ. 201

Շահրիմանյան Սահրաթ՝ առևտրական 290
Շահումյան Ստեփանոս Վրթանեսի 258, 260
Շամիրամ (Սեմիրամիս) 34, 95
Շամուել կաթողիկոս 85
Շանիձե Ա. 235
Շապուհ՝ պարսից արքա 67, 70, 71
Շապուհ Բագրատունի 109, 143, 144, 148, 157, 172, 180
Շարա՝ Հայկի որդին 22
Շմավոն Անգեղակոթցի՝ վարդապետ 297

Ողյումպ՝ քուրմ 94

Չամչյան Մ. 61, 216, 274, 275
Չինգիզ-խան 185

Պաղտասար Դպիր 272
Պահլավունի իշխան 223
Պահլավունիներ 222
Պապ թագավոր 68, 69, 139, 140
Պապովյան Ա. 220
Պարթամասիր՝ թագավոր 52
Պարթև Արշակունի 47
Պարթևներ 108
Պարույր Սկայորդի՝ թագավոր 96
Պետոս՝ զորավար 41
Պետրոս կաթողիկոս 291
Պետրոս Սիկիլիացի 202
Պերոզ՝ արքա 86, 87, 108
Պերպերյան Հ. 176
Պլատոն 118, 126, 127, 129
Պլինիոս Ավագ՝ պատմիչ 36, 37
Պլուտարքոս՝ պատմիչ 41—43
Պյոտր I (Պետրոս Մեծ) 271, 293, 295
Պոլիբիոս՝ պատմիչ 31, 32, 37
Պոլիենոս՝ պատմիչ 47
Պոլիկրատես 94
Պողարյան Ն. 186
Պողոսյան Ս. 313
Պոմպեոս 38, 46
Պոտյոմկին Գ. 294

Գոտյոմկին Գ. 295
Գորփյուր 227, 231
Գորփյուր Փյունիկացի 118, 127, 130
Գոդոմեոս 135
Գոդոմեոսյաններ 157
Գրոգոպիոս Կեսարացի 140—143

Ջալալ էդ-Դին 198
Ջահանշահ՝ սուլթան 297
Ջանփոլադյան Հ. Մ. 234
Ջենքինսոն Անթոնի 280
Ջիուլան Մարիա Անջիոլելլա 280
Ջոզեֆա Բարբարո 279
Ջվանշիր Մեծ իշխան 103, 105

Ռուբինյաններ 186
Ռուբրուկ Ուիլյամ 277
Ռուլ Գոնցալես դի Կլավիխոյ 279
Ռուսա I 20
Ռուտիլիանո 277

Սալլուստիոս 224
Սալմանասար I 15, 16
Սալմանասար III 16, 17
Սահակ Բագրատունի 86, 92, 93
Սահակ Պարթև 24, 56, 72, 82, 85, 88, 89, 91, 97, 113, 115, 120, 123, 124, 158, 179
Սահակաձե Գեորգի 248
Սահակյան Հ. 257
Սամուել Անեցի 143, 171, 172, 176, 180, 189, 199
Սանթուրջյան Գ. 289
Սասանյաններ 84, 85, 87, 97
Սավդուլ՝ Զաքարե Ագուլեցու մայրը 254
Սարգուր II 18
Սարգիս՝ վանական, բժիշկ 277
Սարգիս I Սևանեցի կաթողիկոս 156
Սարգիս Գրիչ 308
Սարգիս Կարբեցի՝ վանքի առաջնորդ 250
Սարգիսյան Բ. 216
Սարգիսյան Ն. 235
Սարյան Մ. 50
Սաֆրասյան Ա. 289
Սեբեոս 102, 106—109, 157, 172, 180
Սելևկյաններ 108
Սեմիրամիս տե՛ս Շամիրամ
Սեն-Մարտեն Ա. 61
Սերոբ Ագբլյան տե՛ս Ագբլյան Սերոբ
Սիմեոն Երևանցի կաթողիկոս 270—273, 296, 302
Սինթամուր՝ հարկահավաք 208
Սմբատ իշխան 100
Սմբատ I Բագրատունի 143, 145, 146, 149, 159, 204
Սմբատ II Բագրատունի 159
Սմբատ Հեթումյան (Լամբրոնի) տե՛ս Սմբատ Սպարապետ Գունդստաբլ
Սմբատ Սպարապետ Գունդստաբլ 170, 186—190, 220—222
Սմբատ Օրբելյան 193
Սմիռնով Ֆ. 49
Սոկրատ 118
Սոկրատես 29
Սոսնիկյան Գ. 41
Սոփեր 275
Սվետոնիոս Տրանկվիլ՝ հռոմեացի պատմիչ 47
Ստեփանյան Ղուկաս Սեբաստացի
Ստեփանոս՝ Ակների վանքի առաջնորդ 185
Ստեփանոս կաթողիկոս 220
Ստեփանոս Բյուզանդացի 203
Ստեփանոս Սյունեցի 119
Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ (Ասողիկ) 143, 155—160, 172, 180
Ստեփանոս Օրբելյան 193—201, 216, 272
Սուրբարոն 35, 36, 142
Սրապիոն՝ վարդապետ 241, 242
Սուպպիլուլիումաս՝ խեթական թագավոր 14
Սուվորով Ա. 294, 295, 302
Սուրեն՝ զինվորական 100
Սուրմակ Արծկեցի կաթողիկոս 85
Սուքիասյան Ա. 222

Վախթանգ 100
Վախթանգ՝ Հաթերքի իշխան 218
Վահագն՝ առասպելի հերոս 95
Վահան՝ իշխան 99
Վահրամ Պահլավունի՝ զորավար 223
Վահրիճ 120
Վաղարշ՝ պարսից արքա 87
Վաղարշ I Արշակունի 47
Վաղարշակ տե՛ս Տրդատ I
Վաղես՝ կայսր 139
Վանական վարդապետ 102, 178, 180, 183
Վասակ Մամիկոնյան՝ սպարապետ 67, 70
Վասակ Պահլավունի 223
Վասակ Սյունեցի՝ մարզպան 76, 77
Վասիլ (Բասեղ I)՝ կայսր 204
Վարդան՝ Մեսրոպ Մաշտոցի հայրը 120
Վարդան՝ վարդապետ 183
Վարդան Արևելցի 156, 173—177, 179, 183, 185, 216
Վարդան Բարձրաբերդցի 177
Վարդան Մամիկոնյան 71, 72, 76—78
Վարդանանք 71, 73—75, 78, 85, 86
Վարդանյան Վ. 155
Վասմիսա՝ զորավար 27
Վեսպասիանոս՝ կայսր 38
Վինչենցո դ'Ալեքսանդրի 280
Վիրո կաթողիկոս 103
Վռամշապուհ թագավոր 120

Տաթար 185
Տակիտոս 41, 138
Տաշյան Հ. 61, 216
Տարասյիճ՝ Ստ. Օրբելյանի հայրը 193, 199
Տեր-Ավետիսյան Ս. Վ. 254, 261
Տեր-Ղևոնդյան Ա. 61
Տեր-Մինասյան Ե. 78
Տեր-Միքելյան Ա. 172
Տեր-Մկրտչյան Գ. 58, 61, 88, 144
Տեր-Մովսիսյան Մ. 144
Տեր-Պետրոսյան Լ. 114
Տեր-Պողոսյան Գր. 73
Տերենտիոս՝ զորահրամանատար 139
Տիգրան՝ արքայազն (Տիգրան Մեծի որդին) 31
Տիգրան (Բ) Մեծ 36—39, 42, 43, 45, 97
Տիմեոս 118
Տիտոս՝ կայսր 38
Տիրացյան Գ. 49
Տյուքիկոս՝ գիտնական 131, 132
Տորք Անգեղ 95
Տրայանոս՝ հռոմեացի զորավար 139, 140
Տրայանոս՝ կայսր 51, 52
Տրդատ I Արշակունի (Վաղարշակ) 32, 38, 41, 47, 51, 97, 196
Տրդատ III Արշակունի 51, 58, 59, 61, 97, 158
Տրդատ Ճարտարապետ 159, 160
Տրեներ Կ. 48, 51, 52

Ուլուբաբյան Բ. 88
Ուխտանես 100, 102, 143, 180, 196
Ուրոս՝ Նոյի ժառանգորդ 39

Փառանձեմ թագուհի 67, 68
Փառնոս՝ Մեդիայի թագավոր 33
Փավստոս Բուզանդ 61—71, 82—84, 94, 104, 143, 157, 172, 180
Փափազյան Ա. Հ. 289
Փափազյան Հ. 296
Փեշեի-Իբրահիմ 282
Փերիխանյան Ա. 48
Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոս 245, 246
Փիլոն Երբայեցի 73, 118, 227
Փոտ պատրիարք 202, 203

Քալանթար Ալ. 254
Քալանթար Լ. 254
Քարթլոս՝ Թորգոմի որդին 33
Քերիմ խան 275
Քիլիբեկյան Պողոս 263
Քյաթիբ Չելեբի 283—286, 289

Քյոմուրճյան Երեմիա 256, 257
Քոլանջյան Ս. 157
Քսենոփոն 29—31
Քրիստոս 56, 169, 185

Օլիմպիա՝ հայոց թագուհի 139
Օլիմպիոդորոս կրտսեր 127
Օկտավիանոս Օգոստոս 40
Օշին սպարապետ 191
Օրբելի Հ. Ա. 234
Օրբելյաններ 193, 195, 226
Օրի Իսրայել տե՛ս Իսրայել Օրի

## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ագրա, ավան, 299
Ագուլիս, գյուղաքաղաք, 254, 255, 296
Ադանա, քաղաք, 285
Ադդուրու լեռներ 16
Ադրիանապոլիս, քաղաք, 205
Ադրիատիկ ծով 277
Ազա, երկիր, 21
Ազոխ, գյուղ, 8
Ազոխի քարանձավ (Ղարաբաղում) 8
Աթենք, քաղաք, 27, 30, 91, 127
Ալեքսանդրապոլ, քաղաք, 226
Ալեքսանդրիա, քաղաք, 41, 46, 72, 89, 90, 127, 128
Ալիս, գետ, 15, 20
Ականց անապատ, տե՛ս Ակներ
Ակիլիսենե, տե՛ս Եկեղյաց գավառ
Ակներ, վանք, 183, 184, 185
Ակռոի, վանք, 267
Աղթամար, եկեղեցի, կղզի, 273, 288
Աղի, գյուղ, 238
Աղձնիք, աշխարհ, 27
Աղստև, գետ, 218
Աղվանք, երկիր, 57, 102—105, 183, 210, 239
Ամասիա, քաղաք, 34
Ս. Ամենափրկիչ, վանք, 274, 276
Ամիդ, քաղաք, 80, 81, 121
Ամստերդամ, քաղաք, 98, 246
Այա-Սոֆիա, տաճար, 286
Այաս, քաղաք, 278
Այրարատ աշխարհ 78, 123, 131, 242
Այրարատյան թագավորություն 25
Այրիվանք 267
Անահիտի սրբավայր 35
Աննանիա, գյուղ, 131
Ս. Անդրեա, վանք, 173
Անդրկովկաս 25, 176, 181, 280, 291, 294, 297
Անթիլիաս, քաղաք, 307
Անի, քաղաք, 4, 14, 156, 159, 164, 171, 223, 234, 235, 277
Անկարա, քաղաք, 171, 177
Անհուշ բերդ 67
Անտիոք 138, 220, 221
Անտիտավրոս, լեռնաշղթա, 15
Աշտարակ, քաղաք, 78
Աշշուր, քաղաք, 16, 17
Աշուրի պետություն 13
Ապահունիք, գավառ, 204
Ապարան, ավան, 52, 268
Ապրակունիս, գյուղ, 227, 230
Ապրակունյաց Ս. Կարապետ, վանք, 306
Առաջավոր Ասիա 25
Առաքելոց կամ Ղազարու վանք 81
Առինճ, գյուղ, 258, 263
Ասիա 28, 33, 136, 257
Ասորեստան, երկիր, 24
Ասորիք, երկիր, 39, 89, 110
Ասորիք, գյուղ Տարոնում, 100
Ասպինձայի շրջան 230
Ս. Աստվածածին, վանք, 241
Ավան, գյուղ, 263
Ավարայր, դաշտ, 55, 72, 76, 77, 79
Ատրպատական, երկիր, 34, 147, 268
Արաբական խալիֆայություն 105, 107, 110, 159, 208—213
Արաբիա, երկիր, 287
Արագած, լեռ, 11
Արագածոտն, գավառ և մարզ, 10, 78, 121
Արածանի, գետ, 9, 46
Արարատի երկիր 22, 25

Արարատ, լեռ, 5
Արարատի մարզ 51
Արարատյան դաշտ 9, 11, 21, 35, 38, 268, 277, 296
Արարատյան թագավորություն 5, 17, 18, 20, 21, 24, 25
Արարատյան հովիտ, տե՛ս Արարատյան դաշտ
Արաքս, գետ, 22, 29, 35, 277
Արաքսի դաշտ, տե՛ս Արարատյան դաշտ
Արգիշթիխինելե, քաղաք-ամրոց, 29
Արզարբիլի շրջան 297
Արեգունի, բլուր, 8
Արևելյան Եվրոպա 256
Արևելյան Հայաստան 28, 57, 84, 184, 256, 262, 269, 296, 298
Արևելյան Վրաստան 86
Արևմտյան Եվրոպա 291
Արևմտյան Հայաստան 57, 141, 144, 205, 241, 242, 245, 270, 284
Արևմտյան Տիգրիս 15
Արծն, քաղաք, 161, 163
Արճեշ, քաղաք, 230, 239
Արճիշ, քաղաք, տե՛ս Արճեշ
Արմավիր, քաղաք, 19, 22, 49, 50
Արմենիի—Արմինի—Արմինա, երկիր, տե՛ս Արմենիա—Հայաստան
Արմենիա, երկիր, 15, 22, 25, 31, 33, 36, 285
Արմինա, երկիր, 25, 26, տե՛ս նաև Արմենիա և Հայաստան
Արտաշատ, քաղաք, 35, 43, 46, 50, 51, 52, 59, 76, 123
Արտենի լեռ 8
Արցախ, աշխարհ, 8, 10, 103, 105, 234, 273, 293—295, 311
Աստխարա, գավառ, 27
Աքեմենյան Պարսկաստան 28
Աֆրիկա 34, 140, 257

Բաբելոն 13, 22—27, 29, 34
Բաբերդ, քաղաք, 241, 242, 279
Բագրևանդ, գավառ, 92, 124
Բազել, քաղաք, 205
Բալկանյան թերակղզի 14
Բաղդադ 209, 283
Բայազետ, քաղաք, 279
Բասեն, գավառ, 239
Բատոր, քաղաք, 101
Բասրա, քաղաք, 274
Ս. Բարդուղիմեոս, վանք, 5
«Բարձր երկիր», տե՛ս Հայաստան-Ազգի
Բարձր Հայք, աշխարհ, 14, 161, 241
Բեհովթիա, երկրամաս, 41
Բեռլին 171
Բիանիլե, տե՛ս Բիայնիլի
Բիայնիլի, երկիր, 18, 19
Բիթաուրգա (այժմ՝ Բիթաուրգ), բնակավայր, 14
Բիսեթուն, ժայռ, 26, 27
Բյուզանդական կայսրություն 110, 115, 136, 140, 141, 149, 168, 207
Բյուզանդիա 54, 62, 79, 86, 105, 107, 115, 123, 159, 162, 163, 168, 190, 192, 202—207
Բոմբեյ, քաղաք, 299

Ս. Գայանե, վանք, եկեղեցի, 246, 270
Գանձակ, քաղաք, 216, 218, 273
Գանձասար, վանք, 271, 273, 291, 296
Գառնի, տաճար, 22, 48, 50, 95, 267
Գառնի, բերդ-ամրոց, 51
Գեղամա լեռներ 11
Գեղարքունիք 234
Գեորգիևակ, ամրոց, 295
Գետիկ, վանք, 218
Գիլուրա, գյուղ, 20
Գլակա, վանք, 99, 266
Գլաձոր, վանք, 194, 226, 227, 233
Գողթն, գավառ, 120, 254
Գոշ, գյուղ, 218
Գորիսի շրջան 234
Ս. Գրիգոր, եկեղեցի, 107
Գուգարք, աշխարհ, 12, 147, 152
Գուգումբեթ, գյուղ, 263
Ս. Գևորգ, վանք, 227

Դայանեի, երկիր, 17
Դավրեժ, քաղաք, տե՛ս Թավրիզ
Դարանաղի, գավառ, 14, 240
Դերբենդ, քաղաք, 277
Դերջան, գավառ, 147
Դիարբեքիր, քաղաք, 285, 288
Դիլիջան, քաղաք, 218
Դոխովկա ստանիցա 52
Դվին, քաղաք, 4, 86, 107, 146, 147
Դրազարկ, ամրոց, 306
Դրմախանակերտ, գյուղ, 146

Եգիպտոս 27, 32, 38, 40, 43, 49, 89, 130, 157, 211, 241, 242, 287
Եգեսիա, քաղաք, 57, 89, 121, 123, 166
Եկեղյաց գավառ 35
Եկեղեաց, գյուղ, 258
Եզիշեի այր 72
Եղվարդ, ավան, 146, 262, 268, 269
Եվրոպա 28, 40, 136, 165, 214, 255, 257, 270, 279
Եվքսինյան Պոնտոս 140
Երասխ, գետ, տե՛ս Արաքս գետ
Երևան (Էրեբունի, Երեբունի), քաղաք, 5, 14, 19, 26, 28, 31, 33, 38, 49, 55, 58, 61—63, 71, 75, 78, 88, 99, 101, 102, 106, 107, 109, 112, 114, 117, 124, 130—132, 134, 137, 142—145, 148, 151, 155, 165, 167, 171, 177, 178, 183, 190, 199, 201, 205, 207, 208, 213, 215, 219—222, 234, 235, 237, 238, 247, 249, 253—257, 261—265, 267—270, 273, 276—278, 283, 286, 289, 290, 295, 296, 310—312
Երևանի բերդ 262
Երզնկա, քաղաք, 279, 306
Երզնկայի շրջան 14
Երնջակ, գավառ, 227
Երնջակի Ս. Գևորգ, վանք, 227
Երվանդաշատ, քաղաք, 50
Երուսաղեմ 37, 52, 89, 171, 173, 184, 186, 241—244, 257, 270
Եփեսոս, քաղաք, 89, 123
Եփրատ, գետ, 15—17, 34, 52

Զանգու, գետ, 265
Զինգուն, երկրամաս, 16
Զմյուռնիա, քաղաք, 250
Զոդ, ավան, 11
Զուղա, ավան, 27

Էլամ, երկիր, 26
Էնզի, երկիր, 17
Էջմիածին, քաղաք, 52, 80, 88, 89, 120, 121, 144, 166, 171, 172, 188, 235, 238, 242, 244, 245—247, 253, 260, 262, 266—273, 275, 276, 288, 292, 294, 296, 311
Էրեբունի, քաղաք-ամրոց, տե՛ս Երևան—Էրեբունի
Էրզրում, քաղաք, 239, 262, 279, 283—285, 288

Ս. Թադեոս Առաքյալի վանք 296
Թալին, քաղաքատիպ ավան, 8, 9
Թավրիզ, քաղաք, 174, 245, 279
Թեհրան, քաղաք, 270, 279
Թեղուտ, գյուղ, 48
Թեյշեբաինի, քաղաք-ամրոց, 21
Թեոդոսուպոլիս, քաղաք, տե՛ս Կարին
Թեքիրտաղ, քաղաք, 266, տե՛ս Ռոդոստո
Թիֆլիս (Թբիլիսի), քաղաք, 61, 88, 98, 150, 151, 197, 201, 240, 295
Թմկաբերդ, քաղաք-ամրոց, 230
Թմոգվի, գյուղ, 230
Ս. Թովմա, վանք, 296
Թրակիա, երկրամաս, 266
Թուրքիա, 242, 243, 248, 250, 255, 257, 267, 268, 281, 282, 284, 285, 287, 289, 291, 294, 300, 310

Իգդիր, քաղաք, 279
Իկոնիա, երկիր, 187
Իշխանասար, լեռ Զանգեզուրի համակարգում, 48
Իշպիլե Բատուորդու այգի 20
Իշխանի շրջան 48, 234
Իսպանիա 279
Իստիտինա, քաղաք, 14
Իտալիա 91, 140
Իրան 25, 297

Լազրեան, գյուղ, 81
Լալլի, երկիր, տե՛ս Մելիդու
Լամբրոն, բերդ, 186
Լայաս, քաղաք, տե՛ս Այաս
Լաստիվերտ, գյուղ, 161
Լեհաստան 242, 287
Լիբիա (Աֆրիկա իմաստով) 136
Լվով 246, 247
Լոռխա, երկիր, 16
Լուվեն, քաղաք, 217

Խալիլա, երկիր, 16
Խաչեն, գավառ, 218
Խարբերդ, քաղաք, 52
Խալխալ, շրջան, 297
Խեթական պետություն 14, 15
Խիմմե, երկիր, 16
Խլաթ, քաղաք, 283
Խնձորեսկ, գյուղ, 260
Խոյ, քաղաք, 279
Խորանաշատ, վանք, 173, 178
Խորեզմ, երկիր, 198
Խորոնք, գյուղ, 88
Խորվիրապ, վանք, 60, 173, 174, 267

Ծամնդավ, քաղաք, 208
Ծիծեռնակաբերդ, բլուր, 208
Ծղուկ, գավառ, 226
Ծնանառէի Ս. Աստվածածին վանք 241
Ծոփք, աշխարհ, 32

Կադիքս, քաղաք, 279
Կաթողիկե եկեղեցի 80
Կալկաթա 270, 299
Կախեթ, երկրամաս, 292
Կաղանկատուք, գյուղ, 102
Կամախ, քաղաք, 240, 277
Կամրջաձոր, վանք, 159
Կայենաբերդ 173
Կայեն, գավառ, 218
Կանդիա, քաղաք, 266
Կանուվարա, քաղաք, 14
Կապան 234, 293, տե՛ս Ղափան
Կասպից ծով 23, 29, 35, 294
Կավակերտ, գյուղ, 263
Կարակորում, քաղաք, 187
Ս. Կարապետ, վանք, 99, 230, 288, 306
Կարբի, գյուղ, 262
Կարին (Թեոդոսուպոլիս), քաղաք, 10, 131, 204, 306
Կարս, քաղաք, 8, 235, 242, 269, 284, 286
Կեշառույք, վանք, 224
Կեսարիա (Կաղարիա), քաղաք, 59, 116, 140, 277, 278
Կիլիկիա 29, 45, 139, 166, 172, 173, 176, 178, 180, 183—194, 198, 200, 208, 218, 220—222, 231, 238, 244, 273, 276—278, 288
Կիլիկյան հայկական թագավորություն 186, 194, 200, 222
Կիպրոս, կղզի, 191, 277
Կիրովաբաղ, տե՛ս Գանձակ (Հին Փառիսոս)
Կոլխիդա, երկիր, 36
Կողբ, ավան, 123
Կոնդ, թաղամաս, 263, 264
Կոստանդնուպոլիս, քաղաք, 54, 91, 123, 127, 131, 141, 147, 155, 159, 160, 168, 207, 223, 225, 242—244, 250, 256
Կովանք, գյուղ, 52
Կովկաս 294, 300
Կովկասյան լեռներ 23
Կոտայք, գավառ, 10, 249



Կորճայք «աշխարհ» 27
Կրետե, կղզի, 266
Կումմախա (Կամախ), երկիր, քաղաք, 14
Կուր, գետ, 87, 239, 277

Հադրութի շրջան ԼՂՀ-ում 8
Հաթերք, գյուղ, 218
Հալիկառնաս, քաղաք, 27
Հալիձոր, բերդ, 259, 260
Հալիս, տե՛ս Ալիս գետ
Հալլուս, տե՛ս Ալիս գետ
Հաղպատ, վանք, 159, 173, 216, 235
Հայասա-Ազզի երկիր, ցեղային միություն, 13, 14
Հայաստան 5, 8—11, 14, 15, 18, 19, 22, 24, 25, 27—42, 47, 49—60, 64, 67, 74—76, 79, 82, 84—89, 93—97, 99, 101, 104—110, 112, 119, 120, 123, 124, 126—130, 132, 133, 139, 141, 145, 147, 149—155, 158, 159, 161, 162, 164, 168, 169, 171, 174, 176—181, 183, 185, 194, 196—198, 200, 201, 204, 206—207, 209—214, 217—220, 222, 224—226, 230, 231, 233—239, 243, 244, 248, 250—255, 257, 261, 271, 272, 276, 277, 279, 280, 282, 284—289, 294, 295, 297, 298, 300, 302—305, 308—310
Հայաստանի Հանրապետություն 19
Հայկական լեռնաշխարհ 8, 9, 11—13, 15, 17, 21, 23, 31
Հայկական լեռներ 34, 38
Հայկական բարձրավանդակ 25
Հայոց Արևելից կողմանք, աշխարհ, 102—106, 147, 182, 220
Հայոց թագավորություն 35
Հայք, աշխարհ, 22
Հավուց Թառ, վանք, 224, 267
Հարավային բլուրներ, Արտենի լեռան համակարգում, 8
Հարժիս, գյուղ, 197
Հարք, դաշտ, 22
Հացիկ կամ Հացեկաց, գյուղ, 120
Հեքյարի, գավառ, 284
Հյուսիսային Կովկաս 52
Հյուսիսային Միջագետք 208
Հնդկաստան 49, 211, 270, 274, 276, 294, 298—300, 310
Հոռոմոս, վանք, 159
Հովհանավանք 249, 250, 251, 266
Հռանդեա, վայր, 41, 47, 52
Հռոմ, քաղաք, 32, 37, 38, 40—45, 47, 52, 58, 64, 84, 105, 138, 172, 191, 194, 224, 227, 273, 292
Հռոմեական կայսրություն 37, 42, 43, 44, 138
Հռոմկլա, բերդ, 200
Հրազդան, գետ, 8, 264
Հուլավյան պետություն 198
Հունաստան 32, 34, 43, 54, 93, 245

Զագ, գյուղ, 263
Զագավան, գյուղ, 263
Զորագյուղ, թաղամաս, 264

Ղազվին, քաղաք, 250
Ղարաբաղ, տե՛ս Արցախ աշխարհ
Ղափան, քաղաք, 234
Ղափանի շրջան 234
Ղրիմ 242

Ճակատք, գավառ, 123
Ճապաղջուր, գավառ, 239
Ճարմանդայի դաշտ (Կուրի ափին) 87, 93

Մադրաս, քաղաք, 276, 298—300, 302, 303, 305
Մալաթիա, քաղաք, 8
Մակուի Ս. Թադեոս Առաքյալի վանք, տե՛ս Ս. Թադեոս Առաքյալի վանք
Մայր Հայաստան, տե՛ս Հայաստան

Մաշգեն, երկիր, 16
Մարաշ, քաղաք, 285
Մարաստան (Մեդիա), երկիր, 26, 31, 33, 34, 139
Մարմարա ծով 242
Մելիդու (Լալլա), երկիր, 17
Մեծամոր, գետ, 11
Մեծ Արմենիա («Մեծ Հայաստան») 278, 285
Մեծ Զաբ, գետ, 15
Մեծ Հայք 32, 78, 136, 155, 190, 192, 208, 216, 238
Մեծոփա վանք 238, 306
Մեծ Սղնախ 293
Մերձավոր Արևելք 4, 30, 108, 128, 190, 194, 256, 268, 292
Միլան, քաղաք, 172
Միջագետք 29, 36, 57, 120, 121, 123, 140, 223, 278
Միջերկրական ծով 128
Մինանի, թագավորություն, 13
Մոկաց աշխարհ 72
Մանդղիա 188, 277, 279
Մասկովյան պետություն 292
Մոսկվա, քաղաք, 131, 161, 165, 177, 183, 188, 201, 246, 247, 252, 253, 273, 290, 291, 295
Մուղանի դաշտ 267, 269
Մուղնի, վանք, 266
Մուշ, քաղաք, 81, 278, 288
Մուրհա, գյուղ Տարոնում, 100

Նախրի, երկիր, 16, 17
Նախիջևան, քաղաք, 9, 10, 247, 277
Նարեկ, վանք, 159
Նեզոս, գետ, 90, 130
Ներգին, գյուղ, 127
Ներսեհապատ, գյուղ, 87
Նիլիպախրի, երկիր, 16
Նիկիա, քաղաք, 43, 44, 123
Ս. Նշան, վանք, 73
Նոյեմբերյան, բնակավայր, 9
Նորավանք 193, 194, 199
Նոր Գետիկ, վանք, 173, 178, 218
Նոր Ջուղա, քաղաք Պարսկաստանում, 247, 274, 276, 290, 291, 300
Նվարսակ, գյուղ, 79, 87

Շենգավիթ, ավան, 10
Շիրակ, գավառ, 22, 79, 131, 234
Շիրակավան, գյուղ, 121
Շող, քաղաք, 261

Ոստան, գավառ, 73

Չաղար կամ Չարահան Ս. Նշան, վանք, 73
Չինաստան 277
Չորրորդ Հայք 131

Պակտիկե, երկրամաս, 28
Պաղեստին 24, 110, 116, 140
Պամիր, լեռներ, 278
Պարսից աշխարհ, տե՛ս Պարսկաստան
Պարսկաստան 28, 64, 65, 67, 70, 76, 77, 79, 84, 87, 100, 105, 107, 110, 136, 159, 211, 245, 248, 250, 255, 260, 261, 262, 267, 268, 274, 276, 289, 291, 294, 298, 300, 310
Պարտավ, քաղաք, 106
Պետերբուրգ, քաղաք, 70, 71, 82, 111, 112, 155, 160, 173, 183, 201, 247, 253, 260, 270, 295, 302
Կ. Պոլիս, քաղաք, 202, 242—244, 256
Պոնտական ծով 23, 28
Պոնտոս, երկիր, 34
Պտղոմայիս, քաղաք, 38, 39

Ջենովա, քաղաք, 278
Ջուղա 256

Ռշտունյաց գավառ 72
Ռոդոստո կամ Թեքիրտաղ, քաղաք, 242, 243, 266
Ռումելի, երկրամաս, 282
Ռուսական դայրություն 293, 294
Ռուսական պետություն 290
Ռուսաստան 271, 287, 290, 293, 294, 300

Սալուլա, երկիր, 16
Սաղմոսավանք 242, 266
Սամարղանդ, քաղաք, 279
Սամոսատ, քաղաք, 113, 121
Սանահին, վանք, 159, 235
Սասանյան Պարսկաստան 65, 85, 124
Սասուն, երկրամաս, 239
Սատանի դար, բլուր, 8
Ս. Սարգիս, եկեղեցի, 256, 263
Սեբաստիա (Սվաս), քաղաք, 239, 285, 288
Սեպուհ, լեռ, 241
Սեֆյան Իրան 249
Սևանա կղզի 146
Սևանա լիճ 12, 47, 48, 279
Սև լեռ (Կիլիկիայում) 218
Սև ծով 27, 29, 294
Սիենոպ, քաղաք, 131
Սիկ, քաղաք, 178, 200, 277
Սիսիանի շրջան 234
Սյունիք, աշխարհ, 12, 79, 80, 151, 193—198, 226, 227, 230, 239, 258—260, 301
Սյունիքի մարզ ՀՀ-ում 226
Ս. Սոֆիայի տաճար 160
Սպեր, գավառ, 35, 36, 144
Սպիտակ, քաղաք, 48
Սվաս, 285, տե՛ս Սեբաստիա
Ստամբուլ, քաղաք, 283, 286
Ս. Ստեփանոս, վանք, 241
Սուխնե, երկիր, 17
Սուրաթ, քաղաք, 299
Սուրմալու, քաղաք, 239, 279

Վահանաշեն, գյուղ, 241
Վաղադեի, տե՛ս Վաղուդի գյուղ
Վաղարշապատ, քաղաք, տե՛ս Էջմիածին
Վաղուդի, գյուղ, 226
Վայոց ձոր, գավառ, 194, 234
Վան, քաղաք, 10, 15, 18, 20, 47, 95, 283—285, 288
Վանի քարաժայռ 18
Վանա լիճ 9, 11, 16, 73
Վասպուրական, աշխարհ, 5, 144, 145, 147—149, 151, 152, 168, 208, 223, 238, 254
Վարագա վանք 288
Վենետիկ, քաղաք, 24, 25, 117, 177, 188, 192, 258, 260, 261, 278, 305
Վերին Մարաստան, տե՛ս Վասպուրական աշխարհ
Վիեննա, քաղաք, 257
Վրաստան 57, 79, 183, 190, 210, 230, 265, 283, 294, 310
Վքսցական թագավորություն 180, 235

Տաթև, վանք, 193, 196—198, 296, 297
Տաթևի համալսարան 226, 227, 230, 231, 233
Ճեմլեկի, գյուղ, 197
Տայք, աշխարհ, 161
Տանձուտաձոր, վայր, 218
Տավրոսյան լեռնաշղթա 34
Տավուշ, գավառ, բերդ, 173, 178
Տարոն, գավառ, 88, 99, 100, 120, 127, 147, 155, 204, 223, 266
Տարսոն, քաղաք, 139
Տեկորի տաճար 234
Տեվրիկ, քաղաք, 202
Տիգրա, բերդ, 27
Տիգրանակերտ, քաղաք, 42, 43, 45, 52
Տիգրիս, գետ, 16
Տիզբոն, քաղաք, 86
Տրապիզոն, քաղաք, 131, 242, 279, 285
Տուրուբերան, աշխարհ, 88, 120, 155
Տփղիս, քաղաք, 58, 83, 90, 201, տե՛ս նաև Թիֆլիս

Ծողունի, բնակավայր, 197
Ծուրաբերդ, բնակավայր, 197
Ծուրտավ, քաղաք-ամրոց, 79

Ուատկուն, երկիր, 16
Ույամա, բերդ, 27
Ուռհա, քաղաք, տե՛ս Եդեսիա
Ուտիք, աշխարհ, 103, 105, 216
Ուրաշտու, երկիր, տե՛ս Ուրարտու
Ուրարտու, երկիր, 15, 17, 26, տ՛ս նաև Արմենիա և Հայաստան
Ուրմիա, լիճ, 19
Ուրուատրի, երկիր, տե՛ս Ուրարտու

Փառիսոս, գավառ, 173, տե՛ս Գանձակ
Փարաքար, գյուղ, 263
Փարիզ 151, 171, 176, 177, 188, 190, 201, 239
Փարպի, գյուղ, 78, 266
Փարպիի Ձոր 81
Փարս, երկիր, 26
Փոքր Ասիա 14, 27, 49, 50
Փոքր Արմենիա 285
Փոքր Հայք 14, 32, 84, 208
Փոքր Սղնախ 293
Փոքր Վեդի, գյուղ, 51
Փոյուգիա, երկիր, 27
Ս. Փրկիչ, եկեղեցի, 243

Քաղաքամեջ Թաղամաս Երևանում 270
Քանաքեռ, ավան, 249
Քաչբերունիք, գավառ, 238
Քարթլի 292
Քարքե, լեռ, 100
Քեսրիկ, գյուղ, 52
Քերմանաշահ, քաղաք, 25
Քերոնեա, քաղաք, 41
Քյուլթափա, գյուղ Նախիջևանում, 9
Քոբայր, գյուղ, 235

Օշական, գյուղ, 57, 121, 268
Օսմանյան կայսրություն 242, 284
Օսրոենե, երկիր, 36

Ֆրանսիա 277

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ . . . . . 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Նախնադարյան-համայնական հասարակության պատմության սկզբնաղբյուրներ . . . . . 8

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Սարկատիրական ժամանակաշրջանի սկզբնաղբյուրներ . . . . 13
1. Խեթական սկզբնաղբյուրներ . . . . . 13
2. Ասորեստանյան սկզբնաղբյուրներ . . . . . 15
3. Արարատյան թագավորության (ուրարտական) սկզբնաղբյուրներ . . . . . 17
4. Հայկական և վրացական առասպելները հայ ժողովրդի ծագման մասին, հայկական թագավորությունների հիշատակությունն Աստվածաշնչում . . . . . 21
5. Դարեհ Վշտասպի Բիսեթունի արձանագրությունը . . . 25
6. Հունական և հռոմեական սկզբնաղբյուրներ . . . . 27
7. Արամեերեն, լատիներեն և հունարեն վիմագիր արձանագրություններ . . . . . 47

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Ֆեոդալիզմի ժամանակաշրջանի սկզբնաղբյուրներ . . . . 54
Ա. Վաղ ֆեոդալիզմի շրջան . . . . . 54
1. Հայկական պատմագրական սկզբնաղբյուրներ . . . . 54
Կորյուն . . . . . 54
Ագաթանգեղոս . . . . . 58
Փավստոս Բուզանդ . . . . . 61
Եղիշե . . . . . 71
Ղազար Փարպեցի . . . . . 78
Մովսես Խորենացի . . . . . 88
Զենոբ Գլակ և Հովհան Մամիկոնյան . . . . . 99
Մովսես Կաղանկատվացի . . . . . 101
Սեբեոս . . . . . 106
Ղևոնդ պատմագիր . . . . . 109
2. Հայկական թարգմանական գրականություն . . . . 112
3. Փիլիսոփայական և ճշգրիտ գիտություններին վերաբերող սկզբնաղբյուրներ . . . . . 119
Մեսրոպ Մաշտոց . . . . . 120

— Եզնիկ Կողբացի . . . . . 123
— Դավիթ Անհաղթ . . . . . 126
Անանիա Շիրակացի . . . . . 131
— 4. Բյուզանդական սկզբնաղբյուրներ . . . . . 138
Բ. Զարգացած ֆեոդալիզմի շրջան . . . . . 143
1. Հայկական պատմագրական սկզբնաղբյուրներ . . . . . 143
Անանուն Զրուցագիր (Կարնեցյալ Շապուհ Բագրատունի) . . . . . 143
— Հովհաննես Դրասխանակերտցի . . . . . 146
Թովմա Արծրունի . . . . . 151
Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ . . . . . 155
Արիստակես Լաստիվերտցի . . . . . 161
Մատթեոս Ուռհայեցի . . . . . 165
Սամուել Անեցի . . . . . 171
Վարդան Արևելցի . . . . . 173
Կիրակոս Գանձակեցի . . . . . 177
— Գրիգոր Ակներցի . . . . . 183
— Սմբատ Սպարապետ . . . . . 186
— Հեթում պատմիչ . . . . . 190
— Ստեփանոս Օրբելյան . . . . . 193
— 2. Բյուզանդական սկզբնաղբյուրներ . . . . . 201
— 3. Արաբական սկզբնաղբյուրներ . . . . . 208
— 4. Հայկական եկեղեցական կանոններ և իրավագիտական սկզբնաղբյուրներ . . . . . 213
5. Հայկական փիլիսոփայական սկզբնաղբյուրներ . . . . . 222
6. Վիմագիր արձանագրություններ . . . . . 233
Գ. Ֆեոդալական հարաբերությունների և տնտեսական կյանքի ընդհանուր շրջանի սկզբնաղբյուրներ . . . . . 237
1. Հայկական պատմագրական սկզբնաղբյուրներ . . . . . 237
Թովմա Մեծոփեցի . . . . . 237
Գրիգոր Դարանաղցի . . . . . 240
— Առաքել Դավրիժեցի . . . . . 245
— Զաքարիա Քանաքեռցի . . . . . 249
Զաքարիա Ագուլեցի . . . . . 254
Երեմիա Քյոմուրճյան . . . . . 256
— Դավիթ Բեկի պատմություն . . . . . 258
— Աբրահամ Երևանցի . . . . . 260
— Աբրահամ Կրետացի . . . . . 266
Սիմեոն Երևանցի . . . . . 270
Եսայատուր Ջուղայեցի . . . . . 274
2. Եվրոպական ճանապարհորդների ուղեգրություններ . . . . . 276
— 3. Թուրքական պատմագրական սկզբնաղբյուրներ . . . . . 280
4. Հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող արխիվային սկզբնաղբյուրներ . . . . . 289
5. Պարսկերեն արխիվային վավերագրեր . . . . . 295



— 6. XVIII դարի Մադրասի հրատարակությունների աղբյուրագիտական արժեքը . . . . . 298
7. Հիշատակարաններ, մասնավոր ժամանակագրություններ և արխիվային վավերագրեր . . . . . 305
Ցանկ հանձնարարվող սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների . . . . . 313
Անձնանուններ . . . . . 315
Տեղանուններ . . . . . 325

Մեր հարգելի գործընկեր
16.04.2003 թ.

ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ ՍՏԵՓԱՆ ՏԻԳՐԱՆԻ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## Հնագույն ժամանակներից մինչև XVIII դարի վերջը

*ԵՎ ՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ*

*Հրատարակության է ներկայացրել համալսարանի*
*Հայոց պատմության ամբիոնը*

*Հրատարակչության խմբագիր՝ Լ. Գ. Մանուկյան*
*Տեխնիկական խմբագիր՝ Հ. Ա. Հովասափյան*
*Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Յավրյան*

*Հանձնված է շարվածքի 14. 10. 1996 թ.։ Ստորագրված է տպագրության 02. 12. 1996 թ.։ Տպագրական 10,5 մամուլ=17,62 պայմ. մամուլի։ Հրատարակչական 16,8 մամուլ։ Չափսը՝ 84×108 1/32, թուղթ № 2։ Տպագրությունը «Բարձր»։ Պատվեր 116, տպաքանակ 500։ Գինը պայմանագրային։*
*Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Ա. Մանուկյան, թիվ 1։*

*Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փ. թիվ 52։*